Ч. Н. Ремиттер

ГЕЗ-ФГ4-Е9 ПЭ
ДЕЛЕГРАФНО-ЗОНДЕЛЬНЫЙ
ОПОРЕЛЗОЙ
ЦЕЗИРОЛО-ЗОНГЛОГ

9/47.925/ 2693
Բ-26
Բայբուրդյան Վ.Ա.
Հայ - բրդավան
հարաբերությունները....
Եր. 1989. 9.2n20կ.
Հոդվածներ
Շնորհ 27.04.21թ

9(47.925)
Բ-26

Վ. Ա. ԲԱՅԲՈՒՐԴՅԱՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

2693

ԵՐԵՎԱՆ „ՀԱՅԱՍՏԱՆ" 1989

ՀԱՅ ԳԻՏ. ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԱՐՎԵՍՏԱՎՈՐԱԿԱՆ ԲԱՆԱՍԻՐԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԳՄԴ 63.3 (2Հ) 5
Բ 260

Տպագրության է երաշխավորել ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության ինստիտուտի գիտական խորհուրդը

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Գ. ԻՆՃԻԿՅԱՆ

Բայբուրդյան Վ. Ա.

Բ 260 *Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում XIX դարում և XX դարի սկզբին /խմբ. Հ. Գ. Ինճիկյան.— Եր.: Հայաստան, 1989.— 358 էջ:*

Աշխատությունում քննարկվում է Օսմանյան կայսրության լծի տակ գտնված երկու դրացի ժողովուրդների՝ հայերի և քրդերի հարաբերությունները սոցիալ-տնտեսական և քաղաքական տեսանկյուններից:

Ցույց է տրվում, որ Օսմանյան կայսրությունը, որը հետևողականորեն վարում էր հայ ժողովրդի հակաթուրքական ազատագրական շարժումները խեղդելու քաղաքականություն, ձգտում էր տարանջատել հայ և քուրդ ժողովուրդներին, նրանց միշտ բորբոքել ազգային և կրոնական թշնամանք և միմյանց դեմ հանել: Այդ քաղաքականությունը ողբերգական հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի համար, մանավանդ այն պատճառով, որ 1915 թ. մեծ եղեռնը կազմակերպելիս թուրքական տիրապետող շրջանները կարողացան լայնորեն օգտագործել քրդական ավատական վերնախավին և քուրդ ժողովրդի ստվարաթիվ զանգվածներին:

Արևմտահայության ցեղասպանությունն իրականացնելուց հետո, երբ Արևմտյան Հայաստանն ամբողջապես հայաթափ եղավ, երիտթուրքական կառավարությունը, հետագայում նաև հանրապետական Թուրքիան, որդեգրեցին քրդահալած քաղաքականություն, որը շարունակվում է մինչև օրս:

Աշխատությունում ծավալուն տեղ է հատկացված նաև հայ և քուրդ ժողովուրդների բարեկամական կապերի բացահայտմանը:

Նախատեսվում է պատմաբանների և ընթերցող լայն շրջանների համար:

Բ $\frac{0508020918}{701\ (01)-89}$ 50—88 ԳՄԴ 63.3(2Հ) 5 + 63.3(0) 53

ISBN 5-540-00051—X

© Բայբուրդյան Վ. Ա., 1989

Նվիրում եմ
վաղամեռիկ եղբոր՝
Սարգիս Բայբուրդյանի
անմոռաց հիշատակին

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ և քուրդ ժողովուրդների պատմական կապերն ու առնչությունները դարերի պատմություն ունեն։

Բնական է, որ ապրելով մերձավոր հարևանությամբ, համարյա միևնույն աշխարհագրական միջավայրում, այս երկու դրացի ժողովուրդների պատմական զարգացման ընթացքում առկա էին լինելու բազմաթիվ ընդհանրություններ։ Նախ, երկու ժողովուրդներն էլ զուրկ էին պետականությունից և կրել էին միևնույն օտար լուծը՝ արաբական, սելջուկյան, մոնղոլական, բյուզանդական, պարսկական, թուրքական։ Այնուհետև, գտնվելով համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական-քարավանային ճանապարհների հանգուցակետում և ունենալով առաջնակարգ ռազմաստրատեգիական դիրք, Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը դարեր շարունակ տևականորեն ու պարբերաբար գտնվել են ավերիչ արշավանքների, ասպատակությունների, մեծ ու փոքր պատերազմների ու քաղաքական զանազան վայրիվերումների հորձանուտում, տալով ահռելի քանակությամբ մարդկային զոհեր և կրելով նյութական և հոգևոր արժեքների խոշոր կորուստներ։ Բացի այդ, բնակվելով միևնույն կուլտուր-պատմական միջավայրում իրենց սոցիալ-տնտեսական ու հատկապես մշակութային զարգացման մեջ ևս հայ և քուրդ ժողովուրդները ունեցել են բազմաթիվ ընդհանրություններ և փոխազդեցություններ, որոնց ակնառու վկայությունն է, օրինակ, նրանց հարուստ ժողովրդական բանահյուսությունը։

Ինչպես հայտնի է XVI դ. սկզբում Օսմանյան կայսրությունը համարյա միաժամանակ նվաճեց Արևմտյան Հայաստանը և Քրդստանը, որոնք հայտարարվեցին Արևելյան վիլայեթներ (Վիլայաթի շարքիե), վերածվելով օսմանյան պետության գաղութային տիրույթների, որ հետագայում երկու ժողովուրդների համար էլ ողբերգական հետևանքներ ունեցավ։ XVI—XVII դարերում առանձին դադարներով ավելի քան երկու հարյուր տարի տևած Թուրք-իրանական պատերազմների ընթացքում, օրորվելով Մերձավոր և Միջին արևելքի երկու հզոր և ծավալապաշտական անզուսպ ձգտումներ ունեցող պետությունների՝ Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի քաղաքական հակամարտության ալիքների վրա, հայ և քուրդ ժողովուրդները հսկայական զոհեր տվեցին, որովհետև այդ պատերազմների թատերաբեմն էին հանդիսանում հիմնականում Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը։

Օսմանյան պետության տիրապետության տակ հայ և քուրդ ժողովուրդները կողք կողքի ապրեցին ավելի քան հինգ հարյուրամյակ։ Առանց վերապահության կարելի է ասել, որ այդ ժամանակաշրջանը երկու ժողովուրդների պատմության ամենամռայլ ու դժնդակ շրջանն էր։ Հայտնի է, որ դարեր շարունակ բռնատիրական վարչակարգ ունեցող Օսմանյան կայսրության քաղաքականության անկյունաքարը եղել է իր տարածքում բնակվող ժողովուրդների հրահրումը միմյանց դեմ։ Հատկապես վախենալով երկրի ծայր արևելքում բնակվող նվաճված ժողովուրդների միավորման և օսմանյան լծի դեմ համատեղ պայքար մղելու հնարավորության վտանգից, XVI դարից սկսած, ընդհուպ մինչև իր կործանումը՝ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտը, հայ և քուրդ ժողովուրդների նկատմամբ Օսմանյան կայսրությունը վարել է «բաժանիր, որ տիրես» քաղաքականությունը, նպատակ ունենալով այդ երկու ժողովուրդներին հանել միմյանց դեմ։ Հայտնի է նաև, որ Օսմանյան կայսրությունում դարեր շարունակ ազգային հարցը լուծելու միակ ձևը եղել է ժողովուրդների ազգային հավաքականությունների ֆիզիկական բնաջնջումը։ Թուրքական կառավարությունը հայերի և քրդերի նկատմամբ հարատևորեն վարել է նաև բռնի համաձուլման, ազգային դիմահեղման քաղաքականություն։ Ընդ որում, եթե հայ ժողովրդի նկատմամբ

այդ քաղաքականության իրագործման ամենատարածված եղանակը եղել է շարդը, որը պարբերաբար կիրառվել է Օսմանյան կայսրության գոյության ամբողջ ընթացքում, ապա քրդերի նկատմամբ առավելապես գործադրվել է նրանց որպես թնդանոթի միս օգտագործելու քաղաքականությունը, դարեր շարունակ նրանց մաշեցնելով իր մղած զավթողական անվերջ պատերազմներում։

Թուրքական տիրապետող շրջանները քուրդ ժողովրդի մեջ մշտապես աշխատել են մեռցնել ազգային ինքնագիտակցության զգացումը և, մահմեդականությունն օգտագործելով որպես լծակ, փորձել են քրդերին դարձնել զուտ մահմեդական մի համայնք։ Այդ նպատակով մշտապես պրոպագանդվել է թուրքերի և քրդերի ցեղակցության վերաբերյալ կեղծ և հակագիտական տեսություն։

Օսմանյան պետական դեմքերը եռանդուն ջանքեր են գործադրել նաև կասեցնելու քուրդ ժողովրդի դասակարգային ու ազգային ինքնագիտակցության ձևավորման, ինչպես նաև նրա քաղաքական համախմբման ընթացքը։ Հանրահայտ իրողություն է, որ առհասարակ կրոնական-աստվածապետական սկզբունքներով առաջնորդվող, բռնապետության վրա խարբսխված, ավատական կարգեր ունեցող և հետամնաց Օսմանյան կայսրությունն ամեն կերպ աշխատում էր արգելակել իր տարածքում բնակվող ոչ թուրք ժողովուրդների սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային զարգացումը, նրանց դատապարտելով անկման, բնականոն աճի կասեցման, հոգևոր ընդունակությունների սահմանափակման և այլն։ Եվ այդ հոռի ու այլանդակ քաղաքականության արդյունքները իրենց ցայտուն դրսևորումն են ունեցել Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, կասեցնելով հայ և քուրդ ժողովուրդների զարգացումն ու առաջընթացը։

Ճշմարտությունը պահանջում է նշել նաև, որ թուրքական լծի դեմ հայ և քուրդ ժողովուրդների ազատագրական շարժումները հիմնականում ընթացել են միմյանցից անջատ ուղիներով։ Դրա պատճառները բազմաթիվ ու բազմազան են։

Բեռլինի կոնգրեսից հետո, երբ հայկական հարցը դարձավ միջազգային դիվանագիտության խնդիր, Մերձավոր արևելքի քաղաքական կյանքի անդաստանում կարևոր նշանակություն ձեռք բերեց նաև քրդական հարցը։ Այնուհետև այդ

երկու հարցերը հանդես եկան սերտ միասնության ու փոխկապակցության մեջ։ Իմպերիալիստական պետությունների գաղութային քաղաքականությունը Մերձավոր արևելքում նպաստեց հայկական և քրդական հարցերի էլ ավելի սրմանը։

Այս շրջանում, երբ Օսմանյան կայսրության գլխին կախված էր փլուզման ու տրոհման սպառնալիքը, երբ սուլթանները իրար հետևից կորցնում էին իրենց աֆրիկյան ու եվրոպական գաղութային տիրույթները, հայ և քուրդ ժողովուրդների միջև արհեստականորեն հակամարտություն ու թշնամանք հրահրելու թուրքական դավադրական զինանոցը համալրվում էր նորանոր զենքերով։ Օսմանյան պետությունը եռանդուն աշխատում էր քրդական տարրի օգնությամբ հայ ազգային-ազատագրական շարժմանը հակակշիռ ստեղծել և, երկու ժողովուրդների քաղաքական ձգտումները հակադրելով միմյանց, կանխել նրանցից սպասվող վտանգը և ոչնչացնել նրանց մոտ օսմանյան լծից ազատագրվելու և իրենց ազգային պետությունները ստեղծելու երազանքները։

Դժբախտաբար թուրքական կառավարող շրջաններին հաջողվեց իրենց այս նենգ մտահղացումներն իրագործելու համար օգտագործել քուրդ ավատատիրական վերնախավի մի մասին։ Նրանց տրամադրության տակ գտնվող զինված աշիրեթները և տխրահռչակ համիդիե գնդերը որպես գործիք ծառայեցին հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները ջախջախելու համար։

Ի դեպ, թուրք և քուրդ ավատատերերի դասակարգային շահերը պահանջում էին նաև թույլ չտալ, որ արևմտահայության ազգային-ազատագրական ու սոցիալական շարժումները միաձուլվեն քրդական աշխատավորական զանգվածների սոցիալական ու քաղաքական պայքարի հետ։

Անցյալ դարի 80-ական թվականներից սկսած քուրդ ժողովրդի շրջանից ավելի ու ավելի շատ գործիչներ սկսեցին կռահել թուրքական կառավարության նենգ նպատակները։ Նրանց շրջանում ավելի լայնորեն էր տարածվում հայ-քրդական համագործակցության կենսական անհրաժեշտության գաղափարը։

Օսմանյան կայսրությունում հայ-քրդական հարաբերությունների պատմության ուսումնասիրումն ունի ինչպես գիտական, այնպես էլ քաղաքական կարևորություն ու հրատապություն։ Բացի այդ, այս երկու ժողովուրդների պատմական զար-

գացման զուգահեռ ուսումնասիրությունը կարող է նպաստել նրանց պատմության մի շարք հարցերի նորովի լուսաբանմանը։

Հավակնություն չունենալով այս աշխատությամբ սպառիչ պատասխան տալ Օսմանյան կայսրությունում հայ-քրդական հարաբերությունների պատմության բոլոր հանգուցային հարցերին, մենք մեր առջև նպատակ ենք դրել կանգ առնել այդ հարաբերությունները լուսաբանող կարևորագույն հանգամանքների վրա, հարցի առավել բազմակողմանի քննությունը թողնելով հետագա ուսումնասիրողներին։

Այս աշխատությունը գրելու շարժառիթներից է նաև այն, որ թուրքական պատմագրությունը ջանք չի խնայում կեղծելու և ծուռ հայելու մեջ ներկայացնելու Օսմանյան կայսրության տիրապետության տակ գտնված ժողովուրդների պատմությունը։ Իսկ խորհրդային գիտությունն իր պարտքն է համարում բուրժուական պատմագրության այդ կեղծարարությունները մերկացնել և սատար լինել ժողովուրդների բարեկամության մեծ գործին։

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Միջին դարերում բուն Հայկական լեռնաշխարհում քրդեր գոյություն չեն ունեցել։ Նշված տարածքում քրդական էթնիկական տարրի առկայության մասին տեղեկություններ չկան ինչպես հայկական, այնպես էլ օտար աղբյուրներում։

Բացառված չէ սակայն, որ VII դարում, արաբական արշավանքների շրջանում, արաբների նոր կրոնը՝ մահմեդականությունը ընդունած քրդական առաջին ցեղերը, արշավող բանակների հետ մուտք գործած լինեն Արևմտյան Հայաստան, հաստատվելով նրա հարավային շրջաններում։

XI—XIII դարերում սելջուկյան և մոնղոլական արշավանքների ժամանակ քրդական ավագանու մի մասը, ծառայության մեջ մտնելով նրանց մոտ, Վանա լճի և Արևելյան Եփրատի ավազաններում հողային տիրություններ ստացավ, փորձելով գրավված այդ հողերում ստեղծել ցեղային անկախ կամ կիսանկախ միավորումներ։ Սակայն դրանից հետո ևս, ընդհուպ մինչև XVI դարի սկիզբը, Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական էթնոսի զանգվածային առկայության մասին տեղեկություններ չկան։

Իսկ Քրդստան բառը առաջին անգամ երևան է եկել հենց սելջուկների տիրապետության շրջանում՝ XII դարում։ Գրական աղբյուրներում դրան կարելի է հանդիպել նաև ավելի ուշ՝ XIV դարում Համդուլլա Մոստոֆի Ղազվինիի «Նուզհաթ ալ Քուլուբ» աշխատության մեջ (294, էջ 72)։ Հետագայում քրդերը դաշնակցել են նաև ղարա-կոյունլու թուրքմեն տիրակալների հետ։ Այդ է պատճառը, որ թուրքմենական մեկ այլ հարստություն, որը հայտնի էր աղ-կոյունլու անունով, և որին հաջող-

վել էր «թափանցել Քրդստանի ուղիղ սիրտը» (445), փորձում էր վերջ տալ քրդական այն բոլոր իշխանապետությունների գոյությանը, որոնք ծառայություններ էին մատուցում իրենց ախոյան ղարա-կոյունլուներին։ Հատկապես աղ-կոյունլու Ուզուն Հասանի (1453—1477) քաղաքական իղձերից մեկը քրդական ազդեցիկ տներն ու ցեղերին արմատախիլ անելն էր (380, էջ 221)։ Անօրինակ դաժանությամբ հաշվեհարդար տեսնելով, օրինակ, իր հետ դաշնակցելուց հրաժարված Բաղեշի քուրդ էմիրի հետ, Ուզուն Հասանը միաժամանակ հովանավորում ու իրավունքներ էր շնորհում Թերջիլի քուրդ բեկերին և մահմուդի ու դումբուլի ցեղի էմիրներին, որոնք իրենց հպատակությունն էին հայտնել և հավատարմորեն ծառայում էին նրան։

Ինչպես հայտնի է XVI դարի սկզբին Իրանի քաղաքական անդաստանում հանդես եկավ սեֆյանների պետությունը, որը կազմավորվել էր ղզլբաշական (կարմրագլուխների) ցեղերից և Սեֆևիյե միաբանության ավատական-հոգևոր վերնախավից։

Իրանի քրդերը, որոնք անընդմեջ ու անզիջում պայքար էին մղել աղ-կոյունլուների դեմ (380, էջ 221։ 429), և ատելությամբ էին լցված նրանց տիրապետության նկատմամբ, սկզբունական շրջանում գոհ էին, որ սեֆյան հարստության հիմնադիր շահ Իսմայիլ I-ի (1502—1524) ճնշման տակ խարխլվում է նրանց պետությունը (403, էջ 121)։ Սակայն հենց սկզբից քրդերի հույսերը սեֆյանների նկատմամբ հօդս ցնդեցին։ Նախ շահ Իսմայիլը բռնությամբ իսլամի սունիի աղանդը դավանող քրդերին պարտադրեց Իրանում պետական կրոն հռչակված մեկ այլ աղանդ՝ շիականությունը։ Նրա կրոնական անհանդուրժողականությունը և դաժանությունը առաջ բերեցին քրդերի անզուսպ ատելությունը դեպի շահը։ Պարսիկ պատմաբան Ռաշիդ Յասեմին նշում է, որ նա «քրդական բնակչություն ունեցող ողջ երկիրը ցանկանում էր հանձնել իր դրածոներին» (498), փորձում էր վերացնել քրդական ցեղային ավագանուն, աշխատում էր քրդական անկախ իշխանությունները վարչականորեն ենթարկել որոշ փոփոխությունների, և վերջապես, ձգտում էր համաձուլել ցեղերին և նրանց վերածել հլու ղզլբաշների։ Այս բոլորի հետևանքն այն եղավ, որ քրդերը համակվեցին շահ Իսմայիլին դիմադրելու անկոտրում վճռականությամբ (400, էջ 58—59)։ Սակայն դա չարյաց փոքրագույնն էր։ Ամենա-

վտանգավորն այն էր, որ թե՛ Իրանի և թե՛ Թուրքիայի քրդերը սկսեցին հակվել դեպի Օսմանյան կայսրությունը, հանձինս նրա պաշտպանություն փնտրելով շահ Իսմայիլի հալածանքներից։ Իրանի տիրակալին հատկապես անհանգստացնում էր քրդերի դավանակցությունը Թուրք-սուննիների հետ։ Հիմնականում հենց դրանով պետք է բացատրել շահ Իսմայիլի հակակրանքը. ավելին, թշնամանքը սուննի քրդերի և առհասարակ բոլոր ոչ շիա մահմեդականների նկատմամբ։

Մնունդ առնելուց հետո սեֆյան պետությունը Մերձավոր արևելքում և Անդրկովկասում քաղաքական առաջնության համար մղվող պայքարում անմիջապես դարձավ ռազմաավատական Օսմանյան կայսրության հիմնական ախոյանը։

Հենվելով ղզլբաշական և իրանական ավատական դասի այն շրջանների վրա, որոնք շահագրգռված էին ուժեղ ու կենտրոնացված իշխանություն ստեղծել և իրենց քաղաքական ազդեցությունը բոլոր Իրանի սահմաններից դուրս տարածել, շահ Իսմայիլը ձեռնամուխ եղավ Օսմանյան կայսրության նկատմամբ ծավալապաշտական քաղաքականության իրականացմանը։

Այնուամենայնիվ քրդերի նկատմամբ շահ Իսմայիլի թշնամանքի հիմքում ընկած կրոնաքաղաքական գործոնը հիմնականը չէր։ Առավել լուրջն ու կարևորն այն էր, որ աշիրեթները ցանկանում էին պահպանել իրենց ներքին անկախությունը, որը հակասում էր շահի կենտրոնացված պետություն ստեղծելու ձգտումներին։ Այդ էր պատճառը, որ երբ խոյում շահ Իսմայիլին ներկայացան քրդական տասնմեկ առաջնորդներ, նա հրամայեց նրանց բանտ գցել, իսկ նրանց պատկանող հողերը հանձնել ղզլբաշ երևելիներին։

Թուրքիան չհապաղեց օգտվել սեֆյանների նկատմամբ քրդերի թշնամական տրամադրություններից։ Դեռևս XIV դարի վերջին տասնամյակներին օսմանյան սուլթանները հնազանդեցրել էին նախկինում իրենց ինքնուրույնությունը պահպանող Փոքր Ասիայի բեյլիքները։

1453 թ. Կոստանդնուպոլիսը գրավելուց հետո դեպի արևելք առաջխաղացումը, այսինքն՝ դեպի Արևմտյան Հայաստան և Քրդստան, Թուրք օսմանների համար դարձել էր կենսական անհրաժեշտություն։ Դրանով պետք է բացատրել սեֆյան պետության կազմավորման փաստը օսմանյան Թուրքիայի կողմից անսքող թշնամանքով ընդունելը, հանձինս որի նա

տեսնում էր մի ուժ, որը ոչ միայն կաշկանդելու էր իր հարձակողական եռանդը, այլև լուրջ արգելք կարող էր հանդիսանալ դեպի Արևելք կայսրության ծավալման ճանապարհին։ Առավել ևս, որ արդեն այդ դարաշրջանում Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը այլևս սուլթանների միակ բաղձանքը չէին։ Հայտնի է, որ XVI դարի սկզբներին Թուրքերը ձգտում էին տիրել Կասպից ծովի ափերին և միավորվել իրենց դաշնակից և սեֆյան պետության թշնամի ուզբեկական խաների հետ. մանավանդ որ 1507 թ. Մուհամմեդ Շեյբանի խանը գրավել էր Խորասանի մեծագույն մասը և փառասիրաբար ձգտում էր նվաճել ողջ Իրանը։ Սակայն սուլթանների համար ամենավտանգավորն այն էր, որ երիտասարդ և ուժեղ իրանական նորաստեղծ պետությունը, որը զինվորական և դիվանագիտական աներկբա շնորհներով օժտված առաջնորդ ուներ, դրսևորում էր նվաճողական բուռն ձգտումներ բուն Օսմանյան կայսրության տիրապետությունների նկատմամբ։

Երկու հարևանների թշնամական հարաբերությունների գլխավոր պատճառներից մեկը Հայաստանն էր, շնորհիվ իր կարևորագույն ռազմաստրատեգիական դիրքի։ «Օսմանյան պետությունն անկարող էր թողնել Հայկական բարձրավանդակը Պարսկաստանի ձեռքին,— գրում է Լեոն,— որովհետև այդ կնշանակեր արգելել Թուրքերի շարժումները Միջագետքի և Սիրիայի շրջաններում և մշտական վտանգի մեջ պահել նույնիսկ բնիկ օսմանյան հայրենիք Փոքր Ասիան և Միջերկրական ու Սև ծովերի ափերը» (68, էջ 171)։

Պատահական չէ, որ 1507 թ. նախահարձակ լինելով Թուրքերի վրա, շահ Իսմայիլը գրավեց համարյա ողջ Արևմտյան Հայաստանը Սև ծովի և Փոքր Ասիայի ուղղությամբ, առաջ շարժվելով մինչև Բաբերդ (Բայբուրդ) և Երզնկա (Էրզինջան)։ Իրանի առավել նշանակալից հաջողությունը 1508 թ. Արաբական Իրաքի նվաճումն էր Բաղդադ քաղաքով, որը միջազգային քարավանային առևտրի կարևորագույն հանգույցներից մեկն էր։ Շահ Իսմայիլը միանգամայն պարզորոշ դրսևորում էր իր նվիրական իղձը՝ Թուրքիային դուրս մղել Արևելքի ու Արևմուտքի միջև առևտրի միջնորդ լինելու դերից և դառնալ ողջ լևանտյան առևտրի միանձնյա տեր։

Սեֆյանները Թուրք օսմանների նկատմամբ իրենց նվաճողական քաղաքականությունն իրագործում էին «պատերազմ

հանուն հավատի» նշանաբանի ներքո, որը մեծ արձագանք էր գտնում սուլթանների կենտրոնաձիգ քաղաքականությունից դժգոհ Անատոլիայի Թուրք բնակչության մի մասի և հատկապես շիա դավանանքի հետևորդ թուրքմենական ցեղերի մոտ։ Օսմանցիները վախենում էին, որ շիականությունը էլ ավելի կտարածվի կայսրությունում, վտանգի տակ դնելով նրա գոյությունը։ Այդ երկյուղը բնավ անտեղի չէր։ Շահ Իսմայիլի ռազմական հաջողությունները սկսել էին խլրտումներ առաջ բերել Փոքր Ասիայի շիա դավանանքի բազմահազար հետևորդների շրջանում, որոնք որոշակի հույսեր էին կապում Իրանի նոր տիրակալի զենքի հաջողության հետ։ Շահը իր դերվիշ գործակալների միջոցով կրոնական քարոզչություն տանելով Փոքր Ասիայում, դրա մեջ տեսնում էր իր ախոյանին հարվածելու ազդու միջոցներից մեկը։ Այդ քարոզչության ազդեցության ներքո ամենուրեք ստեղծվում էին ռազմաշունչ ոգով տոգորված ղզլբաշական գաղտնի կազմակերպություններ, սուլթանից դժգոհ բոլոր տարրերը համախմբվում էին շիա գաղափարախոսության շուրջ և այլն։ Այս ամենը Թուրքերի համար դարձավ ռեալ և վտանգավոր, հատկապես այն բանից հետո, երբ 1511 թ. Փոքր Ասիայում բռնկվեց քոչվորների և գյուղացիության հզոր ապստամբություն շիա դավանանքի տարածման և շահ Իսմայիլին աջակցելու նշանաբանի ներքո։ Թեև շահը և ղզլբաշ ավատատերերը չպաշտպանեցին այդ շարժումը, վախենալով նրա մասնակիցների կողմից առաջ քաշված սոցիալական հավասարության պահանջներից, որը և հնարավորություն տվեց Թուրքերին շարժումը խեղդել արյան մեջ (259, էջ 575), սակայն դրանից հետո ևս չէր բացառվում, որ սեֆյանները քաղաքական նպատակներով կօգտագործեն շիա գաղափարախոսությունը և նրա հետևորդներին։

Սուլթան Սելիմ I Յավուզի (ահեղ, արյունարբու) (1512—1520) գահակալության տարիներին օսմանյան պետության ռազմական հզորությունն աճում էր։ Թուրքական բանակը արդեն զինված էր հրազենով ու հրետանիով և իր կենտրոնացվածությամբ ու մարտունակությամբ նմանը չուներ ոչ միայն ասիական մայր ցամաքում, այլև Եվրոպայում։

Օսմանյան գահը ժառանգած նոր սուլթանը իր նվաճողական քաղաքականությունը առաջին հերթին ծավալեց Առաջա-

վոր Ասիայում։ Նա ծրագրել էր սեֆյանների պետությունը նվաճելուց հետո գրավել միջերկրածովյան ավազանի երկրները և իր տիրապետությանը ենթարկել նույնիսկ Հնդկաստանը (477, էջ 47)։ Նրա լայնահուն քաղաքական հաշիվների մեջ էր մտնում (ի հակակշիռ շիա Իրանի) միասնական ուղղափառ (սուննի) մահմեդական աշխարհի ստեղծումը։ Այդ պատճառով Սելիմ I-ը սեֆյանների դեմ իր պայքարի լոզունգ դարձրեց ուղղափառ իսլամի պաշտպանությունը «հերետիկոս» հորջորջված շիաների դեմ։ Այսպիսով, սուլթան Սելիմի տիրապետության շրջանում Օսմանյան կայսրությունում ստեղծվեց Իրանի հետ պատերազմների կրոնական վարկած, «ղզլբաշների կողմից ոտնահարված և սրբապղծված հավատի վերականգնման» անվան տակ (497, էջ 328)։ Իրականում Մերձավոր ու Միջին արևելքի այս երկու հզորագույն ռազմաավատական և աստվածապետական պետությունները հետապնդում էին միանգամայն գործնական շահեր։ Օսմանյան կայսրությունը մասնավորապես ձգտում էր զավթել Իրանական Ատրպատականը, վերջ տալ սեֆյանների հավակնություններին Արևմտյան Հայաստանի և Քրդստանի նկատմամբ, նվաճել Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը, Պարսից ծոցի առափնյա շրջանները և արաբական հողերը, հաստատվել Մերձկասպյան նահանգներում և այնտեղից միավորվել դաշնակից ուզբեկական խաների հետ, միաժամանակ տիրանալով Շիրվանի և Գիլյանի մետաքսին։

Ե՛վ Օսմանյան Թուրքիայի, և՛ Սեֆյան Իրանի ավատական վերնախավերը նվաճված երկրները թալանելու և շահագործելու հետ մեկտեղ որպես իրենց հարստացման էական աղբյուր դիտում էին միջազգային տարանցիկ առևտրից գանձվող մաքսատուրքերը, և նրանց պայքարի հիմնական նպատակներից մեկը նաև համաշխարհային նշանակություն ունեցող առևտրական քարավանային ճանապարհների վրա գերիշխանությունն իրենց ձեռքը վերցնելն էր։ Բացի այդ, Թուրքիայի կառավարող վերնախավը իրեն համակած սոցիալական, տնտեսական ու քաղաքական ճգնաժամից ելք էր որոնում Իրանի դեմ հաղթական պատերազմի մեջ։

Սուլթան Սելիմ Յավուզը, որը հղացել էր «մեկ պետություն, մեկ ազգ և մեկ կրոն» գաղափարը, նախապատրաստվող պատերազմը կրոնական ֆանատիկոսության հունով տանելու և միաժամանակ իր թիկունքն ապահովելու և անակնկալ ապրս-

տամբությունները բացառելու նպատակով նախապես դաժան հաշվեհարդար տեսավ Անատոլիայում սոցիալական շարժումների մասնակիցների հետ, անխնա սրի քաշելով ավելի քան քառասուն հազար շիաների (451, էջ 450)։

Թուրք-իրանական հակամարտությունը անխուսափելիորեն իր շրջապտույտի մեջ առավ մի շարք ժողովուրդների, նրանց բաժանելով տարբեր ճակատների և դատապարտելով այդուհետև արյուն թափել հանուն Թուրքիայի կամ Իրանի շահերի։ Պատերազմի նախապատրաստվող կողմերը մեծ եռանդով աշխատում էին կողմնակիցներ հավաքել ռազմական ընդհարումների հավանական թատերաբեմի ժողովուրդների, հատկապես նրանց տիրող խավերի շրջանից։ Ընդ որում, Ատրպատականի ավատական ավագանին և մահմեդական հոգևորականությունը հանդես էր գալիս ոչ միատարր ճակատով։

Ատրպատականի մահմեդական վերնախավը հարում էր շիականությանը և սեֆյան կողմնորոշում ուներ, մինչդեռ Շիրվանի և Շաքիի ավատատերերի մի մասը դավանելով սուննիականություն, պատրաստ էր Թուրքերի հետ համատեղ մարտնչել ղզլբաշների դեմ։ Ինչ վերաբերում է Ղարաբաղի և Նախիջևանի հայ ավատատերերին, ինչպես և հայ հոգևորականության մեծ մասին, ապա նրանք սեֆյաններին գերադասում էին Թուրք-օսմաններից։ Ի դեպ, սեֆյան կողմնորոշում ուներ նաև հայ և ազերի Թուրքերի վաճառականական դասը (303, էջ 263)։

Թուրքական տիրապետող շրջանները առավել կարևոր նշանակություն էին տալիս քրդական ռազմաշունչ ցեղերին իրենց կողմը ներգրավելուն։ Հաջողության գրավական էին հանդիսանալու երկու կարևոր հանգամանքներ. նախ այն, որ շահ Իսմայիլի քրդահալած քաղաքականությունը քրդերի շրջանում տեղիք էր տվել մեծ դժգոհության և ապա՝ քրդերի մեծագույն մասը դավանակից էր Թուրքերին։

Նախապատրաստվելով պատերազմի, սուլթան Սելիմն աշխատում էր օգտագործել սեֆյանների նկատմամբ քրդերի այդ դժգոհությունը։ Քանի որ քրդական ցեղերի զգալի մասը գտնվում էր շահի հպատակության ներքո, Թուրքական քաղաքականության նպատակը դարձավ նրանց ներգրավումը իրենց կողմը։ Սուլթանը առատ խոստումներ էր տալիս քրդերին իրենց վաղեմի իրավունքներն ու սովորույթները ամբող-

շությամբ պահպանելու և նոր արտոնություններ ու շնորհներ տալու վերաբերյալ։ Այս քաղաքականության արդյունքը այն եղավ, որ քրդերը թե՛ կրոնական և թե՛ քաղաքական նկատառումներով արդեն պատրաստ էին առաջիկա պատերազմում օգնելու սուլթանին (469, էջ 40)։ Շահ Իսմայիլը փորձեց կանխել այդ իր համար անցանկալի դեպքերի ընթացքը ոչ թե քրդերի նկատմամբ իր քաղաքականությունը վերանայելու ու վերակառուցելու ճանապարհով, այլ զենքի սպառնալիքով։

Այսպես, տեղեկանալով, որ Բիթլիսի ազդեցիկ քուրդ էմիր Շարաֆ խանը մտադիր է առաջիկա պատերազմի ընթացքում հանդես գալ Թուրքիայի կողմից, նա 1511—1512 թթ. հարձակվեց էմիրի վրա, որը, սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, միանգամայն հակառակ արդյունք տվեց, ընդ որում՝ համաքրդական մասշտաբով։

1514 թ. հավատի պաշտպանության կեղծ նշանաբանի ներքո սուլթան Սելիմ Յավուզը պատերազմ սանձազերծեց «հերձվածող և խալամը ապականող» (501, էջ 379—381) շահ Իսմայիլի դեմ։ Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ օգոստոսի 22-ին Չալդրանի դաշտավայրում, որտեղ սուլթանը, իր տրամադրության տակ ունենալով ուժեղ հրետանի, ջախջախեց ղզլբաշական զորքերին (448)։ Շահ Իսմայիլը ստիպված դիմեց մաղապուրծ փախուստի, թշնամուն թողնելով իր գահը, հարեմը և գանձարանը (382, էջ 67—68)։ Օսմանյան բանակը սրընթաց արշավով գրավեց Թավրիզը։ Սակայն կայսրությունում սկսված ենիչերիների հուզումները ստիպեցին Սելիմին շտապ նահանջել Փոքր Ասիա։

Չալդրանի դաշտավայրում ձեռք բերած հաղթանակը Օսմանյան կայսրության համար կարևոր քաղաքական նշանակություն ունեցավ, հատկապես քրդերի մեծամասնությանը ներգրավելու առումով։ Ճակատամարտում մի շարք քուրդ իշխանապետեր, օժանդակելով օսմանյան զենքի հաջողությանը, նպաստեցին Թուրքերի հաղթանակին։ Նրանք իրենց թափած արյամբ ապացուցեցին, որ այսուհետև պատրաստ են համագործակցել Օսմանյան կայսրության հետ։ Ճակատամարտից անմիջապես հետո թվով 25 քրդական ազդեցիկ առաջնորդներ, ինչպես օրինակ Մալեք շահը, Հիսն Քայֆայի էմիրը, Մեյաֆարեքինի Ահմեդ բեյը, Սասունի Մուհամմեդ բեյը, Ագիլի Ղասըմ բեյը, Բալուի Ջամշիդ բեյը և ուրիշներ, որոնք նախկինում չեզոք

էին, անցան Թուրքերի կողմը (386, էջ 95)։ Սակայն քրդական առաջնորդներից ոմանք հրաժարվեցին Թուրքերի դաշնակիցը լինել և մասնակցել Չալդրանի ճակատամարտին։ Դրանցից էր, օրինակ, Զուլքադարի տիրակալ Ալա-ուդ-Դոուլեն։ Նրան պատժելու նպատակով սուլթան Սելիմ Յավուզը հրամայեց զորավարներ Սինան փաշային՝ 10 հազար հեծելազորով և Շահսուվար օղլի Ալի բեկին՝ 3 հազար ենիչերիներով ներխուժել Զուլքադարյան բեյլիք և պատժել նրա անհնազանդ տիրակալին։ Թուրանդաղ լեռան ստորոտում Ալա-ուդ-Դոուլեի 30 հազարանոց բանակը ճակատամարտի մեջ մտավ Թուրքերի հետ և դաժան պարտություն կրեց։ Ինքը՝ Ալա-ուդ-Դոուլեն, իր երկու որդիների հետ գերեվարվեց։ Սուլթան Սելիմը հրամայեց հարթունիս բռնագրավել Ալա-ուդ-Դոուլեի տիրույթները և դրանց կառավարիչ նշանակեց Շահսուվար օղլի Ալի բեկին։

Քրդական հարցում զարգացնելով իր քաղաքական գիծը, սուլթանը որոշեց լիովին վարձահատույց լինել այն քուրդ առաջնորդներին, որոնք Չալդրանի ճակատամարտում զորավիգ էին եղել օսմանյան զենքի հաջողությանը։ Նա հանձնարարեց Բաղեշի քրդական տիրող իշխանական տան այն ժամանակվա ներկայացուցչին՝ Իդրիս Բիթլիսցուն, որը նախկինում ծառայության մեջ էր եղել աղ-կոյունլուների առաջնորդի մոտ և պետական-վարչական գործեր վարելու բավականաչափ փորձ ուներ և որը Չալդրանի ճակատամարտի նախօրյակին համոզել էր մի շարք քուրդ ցեղապետերի միանալ օսմանյան բանակին, իսկ ճակատամարտի ժամանակ քրդական զորամիավորումների գլուխ անցած միացել էր սուլթանի դեպի Իրան արշավող բանակին, քրդերի շրջանում տանել Թուրքամետ քաղաքականություն։ «Յետ այնորիկ եկն յարքայէ պատուէր հրամանի առ Իտրիս բարեկարգել զաշխարհն ըստ իւրոմն զգօնութեան, և ընդ հրամանին հասին ևս պարգևք քսան և հինգ հազար ոսկւոյ, հինգհարիւր պատմուճանաց, և եօթնևտասն դրօշուց՝ առ ի բաշխելոյ յիշխանս քրդաց։ Եւ Իտրիս յիննևտասնն գաւառաց աշխարհին միջագետաց զմետասանն ևեթ յաւել ի նահանգս օսմանեան պետութեան, իսկ զամուրս լեռնական վայրացն եթող ի մէն մի պետս քրդաց ազատս» (13, էջ 320)։

Սուլթան Սելիմ Յավուզը մտադիր էր նախ քուրդ զանգվածներին ներգրավել Թուրքական պետության վարչական հա-

մակարգի մեջ և ապա, որ ամենակարևորն էր, Թուրքիայի սահմանում հանձինս քրդերի Իրանի դեմ ստեղծել մի կենդանի պատնեշ։

Բացի դրանից նա ձգտում էր Արևմտյան Հայաստանի տարածքի «քրդականացման» ճանապարհով ողջ Արևելյան Անատոլիայում կայսրության համար ապահովել կայուն հենարան հանձինս դավանակից էթնիկական մի նոր խմբի, որին կարելի կլիներ օգտագործել նաև երկրամասի բնակչության ճնշող մեծամասնությունը կազմող հայ ժողովրդի դեմ։

Իդրիս Բիթլիսցին, որը քրդական անկախ իշխանապետությունների ստեղծման ջերմ կողմնակից էր և հույսեր էր փայփայում այդ գաղափարը սուլթան Սելիմի օգնությամբ իրականացնել, մեծ եռանդով գործի անցավ։ Նրան նույնիսկ հաջողվեց սեֆյանների դաշնակից մոտ քսան քուրդ ցեղապետերի համոզել անցնելու Թուրքերի կողմը, որոնք գաղթեցին Տիգրանակերտի (Դիարբեքիր) շրջան և բնակություն հաստատեցին այնտեղ (95)։ Նիսիբինից մինչև Դերսիմ ընկած լայնածավալ հողատարածությունները Իդրիս Բիթլիսցին միավորեց Դիարբեքիրի նահանգ անունով և բաժանեց 19 սանջակների կամ ռազմաավատական միավորների։ Դրանցից ութը ժառանգման իրավունքով նա տվեց քրդական բեյերին։ Բացի այդ, քրդական առաջնորդները Տիգրիսի ակունքների մոտ ստացան հինգ փոքր հողակտորներ, որպես մասնավոր սեփականություն։ Չբավարարվելով դրանով, նա մի քանի քրդական ցեղեր վերաբնակեցրեց Էրզրումի շրջանում, դրանով իսկ սկիզբ դնելով երկրի այդ մասում քրդերի բնակեցմանը (217, էջ 65)։ Իդրիս Բիթլիսցու միջոցով սուլթանը իր նոր հպատակներին առատաձեռնորեն շնորհում էր հողատիրական արտոնություններ (որպես յուրթլուկներ և օջաքլիքներ), անկախության ֆիրմաններ և այլն։

Սելիմ Յավուզը ճանաչեց Զմշկածագի, Բալու-Ճապաղջրի, Մուֆարդինի, Խիզանի, Բաղեշի և այլ գավառների քուրդ իշխանապետությունների ինքնավարությունը։ 1514—1515 թթ. նա Իդրիսի միջնորդությամբ քուրդ էմիրների ու բեկլարբեկերի հետ զինական դաշինք կնքեց, որտեղ ասվում էր.

1. Սույն դաշնագիրը ստորագրող բոլոր իշխանապետությունները (էմիրաթներ) պահպանում են իրենց անկախությունը և իրենց տիրույթները։

2693

2. Դրանք ժառանգաբար անցնում են հորից որդուն։ Սուլթանը կայսերական ֆիրմանով վավերացնում է հաջորդի օրինականությունը։

3. Քրդերը պարտավորվում են մասնակցել Օսմանյան կայսրության մղած բոլոր պատերազմներին։

4. Կայսրությունը պարտավորվում է քրդական իշխանապետությունները պաշտպանել արտաքին հարձակումներից։

5. Քրդերը պետք է ավանդական կրոնական նվերներ մատուցեն խալիֆայությանը, իսկ սուլթանական գանձարանին մուծեն հարկեր և տուրքեր (473, էջ 27)։

Վերոհիշյալ դաշնագիրը առաջին հերթին ստորագրեցին քրդական այն 23 առավել ազդեցիկ ցեղերի առաջնորդները, որոնց ցեղերը բերվել և բնակեցվել էին Ջեզիրեյի, Հեքիարիի (Աղբակ), Սղերդի, Դիարբեքիրի, Բալուի, Գենչի, Ճապաղջրի և Հազոյի (հարավային Սասուն) մեջ և որոնք բացառապես սունիի մահմեդականներ էին։ Իսկ Իդրիս Բիթլիսցուն Սելիմը նշանակեց Հայաստանում ստեղծված քրդական հյուրյումեթությունների գերագույն տիրակալ։ Դիարբեքիրի վիլայեթը, օրինակ, բաժանվեց 21 սանջակների, որոնցից 8-ը հռչակվեցին քրդական հյուրյումեթություններ, որոնք այսուհետև գրեթե չէին ենթարկվելու Դիարբեքիրի թուրք փաշային (82,էջ 398)։

Չալդրանի ճակատամարտի արդյունքները և թուրք-քրդական վերոհիշյալ դաշինքի կնքումը հետագայում ճակատագրական եղան քուրդ ժողովրդի համար։

Նախ այդ ճակատամարտի հետևանքով տեղի ունեցավ Քրդստանի[1] առաջին բաժանումը։ Նրա մի հատվածը ընկավ Օսմանյան կայսրության տիրապետության տակ, իսկ մյուսը մնաց Սեֆյան Իրանի թևարկության ներքո։ Այսպիսով, առաջին անգամ քրդերն ընկան թուրք օսմանների գերիշխանության տակ։ Լեոյի արտահայտությամբ «այսպես վերջացավ Քրդստանի և քրդության կցումը օսմանյան պետությանը» (68, էջ 175)։ Հիրավի, դա քուրդ ժողովրդի պատմության մեջ անօրինակ երևույթ էր այն առումով, որ դարեր շարունակ ցեղային անկախ կյանքով ապրող այդ ժողովուրդը առանց արյուն թափելու, խաղաղ ճանապարհով, իր ուսերի վրա էր վերցնում օտարի լուծը։

Քուրդ պատմաբան Ամին Զաքին ոչ առանց զարմանքի նշում է, որ Քրդստանը, որը չէր հնազանդվում ոչ մի իշխանու-

թյան, Օսմանյան կայսրության կողմից նվաճվեց առանց փոքր իսկ ջանքեր գործադրելու (494, էջ 175)։

Քանի որ քուրդ իշխանապետերի մեծամասնությունը Օսմանյան կայսրության դաշնակիցը դարձավ, այսուհետև վերջինս քրդական ցեղերի ռազմական ուժը մշտապես օգտագործեց իր մղած պատերազմներում՝ ինչպես ասիական մայր ցամաքում, այնպես էլ Աֆրիկայում և Եվրոպայում։ Քրդերը այդ պահից սկսած հինգ դար շարունակ պետք է պարբերաբար արյուն թափեին հանուն օսմանյան սուլթանների շահերի (473, էջ 277—278)։ «Լինելով Իրանի կամ Թուրքիայի վասալները,— գրում է ռուս քրդագետ Վ. Նիկիտինը,— նրանք վատնում էին իրենց ուժերը հանուն ուրիշների շահերի։ Նրանց կարելի է համեմատել միայն շիաների դեմ պայքարող մոլի սուննիների հետ։ Քուրդ գրող և հայրենասեր Հուսեին Հուզնին իր «Gontchéye-behâr» («Գարնանային կոկոն») հետազոտության մեջ ափսոսանք է հայտնում իր հայրենակիցների նկատմամբ խալիֆի շարաբաստիկ ազդեցության առթիվ, գտնելով, որ քրդերի պատմությունը տուժել է դրանից» (294, էջ 268)։

Թուրքերի հետ քրդական իշխանապետերի քաղաքական շահերի միահյուսումը և դավանակցությունը ունեցավ այն հետևանքը, որ նրանց մեծամասնության մոտ սկսեց ձևավորվել թուրքական կողմնորոշում։

Օսմանյան կառավարող շրջանները ամեն կերպ խթանում էին քաղաքական այդ հակումը, գլխավորապես քրդական առաջնորդների շահախնդրություններին զարկ տալու միջոցով։ Այսպես օրինակ, այն իշխանապետերն ու ավատատերերը, որոնց Քրդստանում և Արևմտյան Հայաստանում սեֆյանները հեռացրել ու զրկել էին իրենց տիրույթներից, թուրքերի օգնությամբ վերստին վերականգնեցին իրենց իրավունքները, ստանալով նաև ժառանգական ու դինաստիական լայն առանձնաշնորհներ։ Ինչ վերաբերում է համեմատաբար մանր, երկրորդական ցեղապետերին, նրանք ըստ էության վերածվեցին օսմանյան ծառայության մեջ գտնվող զինվորական դասի, որոնք իրենց ծառայության դիմաց, երկրում գոյություն ունեցող ռազմաավատական կարգի համաձայն, ձեռք բերեցին հողատիրական արտոնություններ։

Ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում ստեղծվեցին քրդական մեծ ու փոքր իշխանություններ՝ ֆյուֆյումաքներ,

«օշաքլրքներ, յուրդլուքներ և էքրադ բեյլիքներ: Ղ. Ինճիճյանը հետևյալ կերպ է մեկնաբանում հյուրքյումաթի էությունը. «Հյուրքյումաթը է այն երկիր՝ որ սեփհական ստացուած է տոհմի ինչ եւ տեարք նորա են իշխանք, որ պայազատ եւ յորդւոց յորդի ի նոյն տոհմէ ըստ ժառանգութեան նման իշխանութեանց՝ որք գտանին ի Գերմանիա, եւ այլ կողմանս Եւրոպիոյ։ Բազում գտանին այսպիսի իշխանութիւնք յԱնատոլու ի մէջ քրդաց, ի փաշայութեան Տիարպեքիրու, Վանայ, եւ Պաղտատու, յորոց եւ ոմանք երբեմն, երբեմն ապստամբին ի փաշայից և մարտ մղեն ընդ նոսա» (65, էջ 97)։

Նույն հեղինակը յուրդլուքների և օշաքլրքների էությունը բացահայտում է հետևյալ կերպ. «Երկիր որոյ հաս կարգեալ է կամ բոլորովին և կամ ըստ մասին ի ոճիկ օճագին այս զորոց՝ որք պահապանք են ի սահմանագլուխ քաղաքիս» (65, էջ 97)։ Սրանք նույնպես ամբողջական շրջաններ էին, որոնք ժառանգականության իրավունքով տրվում էին քուրդ ավատատերերին։ «Հաճախ նպատակ ունենալով ապահովել պետական սահմանը, յուրդլուքն ու օշաքլրքը տրվում էին պետական սահմանում գտնվող տերիտորիայից» (56, էջ 69)։

Շարաֆ խան Բիթլիսին համապարփակ գաղափար է տալիս, թե ինչպիսի հսկայական իշխանություն ունեին զինված շոկատներ ունեցող աշիրեթապետերը. «Նրանք չնայած չէին հավակնում սուլթանական տիտղոսին, սակայն իրավունք ունեին մզկիթներում իրենց անուններով խութբե (աղոթք։— Վ. Բ.) կարդալ տալ և սեփական դրամ հատել» (380, էջ 85—86)։ Հայկական աղբյուրներում ևս այդ ցեղապետ-իշխանապետերը հորջորջվում էին «տեարք ընտանեաց և տանց և գեօղից և անդաստանաց» (107, էջ 397)։

Անշուշտ սեֆյանները չէին կարող անտարբերությամբ նայել օսմանյան պետության հետ քրդերի համագործակցության ուժեղացմանը, դրա մեջ տեսնելով մեծագույն վտանգ Իրանի համար։ Այդ պատճառով շահ Իսմայիլը հրամայեց իր Կարախան անունով զորավարներից մեկին շարժվել Դիարբեքիրի վրա և գրավել այդ քաղաքը։ Քրդերը Իդրիս Բիթլիսցու գլխավորությամբ ավելի քան մեկ տարի դիմադրեցին Դիարբեքիրը պաշարած իրանական զորքերին (425, էջ 225)։ 1516 թ. սկզբին թուրքական բանակը Բլյբլը Մուհամմեդ փաշայի գլխավորությամբ օգնության հասավ պաշարվածներին և Քոչ Հիսարի

մոտ տեղի ունեցած ճակատամարտում Թուրք-քրդական միացյալ ուժերը ջախջախիչ հարված հասցրին իրանական զորքերին։ Շահ Իսմայիլի կրած այս երկրորդ ջախջախիչ պարտությունից հետո սեֆյանները հսկայական տարածքային կորուստ ունեցան, թշնամուն զիջելով մի երկրամաս, որն իր մեջ ներառում էր Խարբերդից ու Բաղեշից մինչև Ռաքքա, Մարդին և Մոսուլ ընկած հողերը (497, էջ 323)։ Կողմերի միջև կնքված զինադադարով Իրանը ճանաչում էր Դիարբեքիրի, Բայբուրդի, Էրզինջանի, Էրզրումի (118, էջ 511), Զուլքադարյան Բեյլիքի և հյուսիսային Իրաքի անցումը Թուրքիային։ Ընդ որում, Մծբինը, Դարան, Մուֆարղինը, Դիարբեքիրը և Սինջարը օսմանցիները դրեցին Իդրիս Բիթլիսցու կառավարման ներքո։

Այս իրադարձությունները քրդերի համար հեռուն գնացող հետևանքներ ունեցան։ «Հայաստանի համարյա ամբողջ քրդությունը մղվում էր մի համառ պատերազմի Պարսկաստանի դեմ» (68, էջ 174)։ Այլ կերպ ասած, քրդերը դառնում էին Թուրքերի դաշնակիցը ոչ միայն կայսրության սահմանները պաշտպանելու, այլև Մերձավոր արևելքում նրանց ռազմական նվաճողականությունը ծավալելու գործում։

Ի վերջո Թուրքերը կարողացան կոտրել Սեֆյան Իրանի հարձակողական թափը։ Սելիմ I-ի ժամանակաշրջանից մինչև XVII դարի 30-ական թվականների վերջը, այսինքն՝ մինչև Մուրադ IV-ի կառավարման շրջանը, փոքրիկ դադարներով շարունակվող պատերազմների ընթացքում քրդերը անընկճելի բերդերի շղթա էին ստեղծել Իրանի դեմ։ Ավելին, շնորհիվ դաշնակից քրդական ցեղերի զենքի աջակցության, Օսմանյան կայսրությունը կարողացավ նվաճել Միջագետքի արաբական հողերը, իսկ ամենակարևորը՝ պահպանել իր տիրապետությունը Արևմտյան Հայաստանում։

Չալդրանի ճակատամարտից անմիջապես հետո սկսվեց Արևմտյան Հայաստանի նվաճումը և նրա միացումը Օսմանյան կայսրությանը։ Սկիզբ դրվեց հայ ժողովրդին ստրկացնելու ու կողոպտելու, նրան իր դարավոր հայրենիքից վտարելու, ֆիզիկապես ոչնչացնելու աղետալի դարաշրջանը։ XVI դարի սկզբներից սկսած Օսմանյան Թուրքիան Արևմտյան Հայաստանում իր քաղաքականության անկյունաքարը դարձրեց հայ-քրդական հակամարտության սրումը, ինչպես նաև դավանակից քրդերի

օգնությամբ հայ ժողովրդին ճնշելը։ Այդ առթիվ գերմանացի հետազոտող Էռնստ Լոմանը գրում է, որ զինված քուրդ ցեղերի օգնությամբ թուրքերը մտադիր էին «սանձահարել հայ քրիստոնյաներին» (116, էջ 92)։ Այդ փաստը հաստատում է նաև քուրդ պատմաբան Նուրի Դերսիմին. «Սուլթան Սելիմ Յավուզը,— գրում է նա,— աշխատում էր քրդերին հրահրել հայերի դեմ» (411, էջ 22—23)։

Այսպիսով, ինչպես կտեսնենք հետագայում, սուլթան Սելիմ Յավուզից սկսած մինչև օսմանյան հարստության վերջին սուլթանը՝ Մեհմեդ IV Վահիեդդինը, Թուրքիայի «արևելյան» քաղաքականության հիմնական խնդիրներից մեկն է եղել աշիրեթների զինված ուժերի օգնությամբ նվաճված երկրների այլակրոն ժողովուրդների ազատագրական ոգորումների կանխումն ու սրատումը։ Թուրքական կառավարող շրջանները երազում էին «քրդականացնել ողջ հայկական ռեգիոնը» (217, էջ 15)։ Այդ նպատակով սուլթանը ոչ միայն հայկական նահանգների նահանգապետեր էր նշանակում քրդական ցեղերի առաջնորդներին, այլև առատաձեռնորեն հայկական հողերը պարգևում էր քուրդ ցեղապետերին, դրանք դարձնելով ժառանգական տիրույթներ։ Բնական է, որ քոչվոր ցեղերը, հետևելով իրենց առաջնորդներին, գալիս և հաստատվում էին Հայաստանում։

Քաղաքական այս նկատառումները թուրքական կառավարությանը մղում էին խրախուսել քրդական ցեղերի բնակեցումը Արևմտյան Հայաստանի տարածքում։ Այդ առթիվ անգլիացի Հ. Լինչը նկատում է. «...Այդ ժողովրդի (քրդերի։— Վ. Բ.) նշանակալից գաղութները, ըստ երևույթին, զբաղեցրին Հայաստանում իրենց ներկա վայրերը, շնորհիվ թուրքական կառավարության պետական քաղաքականության վճռական գործողության» (276, էջ 541)։

Սուլթանի խրախուսմամբ Իդրիս Բիթլիսցին նախ սկսեց Տավրոսյան լեռների հարավում և Հյուսիսային Միջագետքում տեղաբաշխված քուրդ քոչվոր ցեղերին զանգվածորեն տեղափոխել Արևմտյան Հայաստան, նրանց բնակեցնելով հարուստ արոտավայրեր ունեցող Կարինի, Վասպուրականի, Կարսի և այլ շրջաններում։ Նորեկ այս ցեղերի առաջնորդները ավատատիրոջ իրավունքով զավթեցին հայկական հողերը։ Իր հերթին կառավարությունը ևս տեղահանում էր հայերին և ազատված հողերը նվիրում քուրդ ցեղապետերին։ Բացի դրանից քուրդ

ցեղապետերը ուղղակի զենքի ուժով զգալի տարածությամբ հողեր զավթեցին։ Հատկապես մեծ քանակությամբ հայեր տեղահանվեցին Իրանի սահմանամերձ շրջաններից՝ Մասիսի արևելյան լանջերից, Բայազետից, Դիադինից, Ալաշկերտից, Վանա լճից հյուսիս ընկած գավառներից և Օսմանյան կայսրության արևելյան սահմանների հսկողությունն ուժեղացնելու նպատակով այդ վայրերում բնակեցվեցին քրդական ցեղեր (82, էջ 414)։ Սրանք Արևմտյան Հայաստան էին ներխուժում հիմնականում Դիարբեքիրի, Մոսուլի, Հաքյարիի (կամ հայկական Աղբակի) և Իրանի (գլխավորապես Սոուջբուլաղի) կողմից (217, էջ 72)։

XVI դարի վերջին թուրքերը բազմաթիվ քրդական ցեղեր բնակեցրին նաև Անդրկովկասում. «Արարատյան դաշտի, Շարուրի, Սյունիքի ու Արցախի միջև սեպ կազմելու և տեղի հայ բնակչությանը քաղաքականապես հաշմելու մտադրությամբ» (89, էջ 88)։ Քուրդ աշիրեթապետերը, զավթելով հայկական հողերը, իրենց հռչակում էին այդ շրջանների իրավատեր։ Այս ամենի հետևանքով սկսվեց հայ ժողովրդի հոծ զանգվածների արտագաղթը հայրենիքից այլ երկրներ, մասնավորապես հարևան Իրան (293, էջ 89)։

Այսպիսով, XVI դարի սկզբներից քրդական ցեղերի էթնիկական ներխուժումը ընդգրկեց ամբողջ Արևմտյան Հայաստանը։ Հենց այդ ժամանակաշրջանից սկսած եկվոր քրդական տարրը Արևմտյան Հայաստանի տարածքում ձեռք բերեց զգալի տեսակարար կշիռ։

«Անտեղյակ մարդիկ, երկրի (իմա՝ Արևմտյան Հայաստանի։— Վ. Բ.) պատահական այցելուները և գլխավորապես տարբեր երկրների քաղաքական գործակալները գտնում էին, որ Հայաստանը անհիշելի ժամանակներից բնակեցված էր քրդերով։ Դա ամենևին էլ այդպես չէ»,— իրավացիորեն գրում է Ն. Ադոնցը (217, էջ 42—43)։

«Բացառությամբ Վանի և Բիթլիսի կառավարող դինաստիաների, որոնք սերում են Լենկթեմուրից, մնացած բոլոր քրդական տիրույթները Եփրատի և Տիգրեսի ակունքների վերոհիշյալ շրջաններում սերում են XV դարի վերջի և XVI դ. սկզբի պարսկա-թուրքական պատերազմների ժամանակվանից։ Ինչ վերաբերում է Վանի և Բիթլիսի կառավարող դինաս-

տիաններին, ապա կարելի է ասել, որ նրանց քրդական ծագումը վիճելի է» (217, էջ 66)։

Հայաբնակ շրջաններում քրդերի բնակեցումը հիմք դրեց Հայկական լեռնաշխարհում ազգային կազմի փոփոխությանը և Հայաստանը կորցրեց իր բնակչության միատարրությունը։

Առհասարակ Արևմտյան Հայաստանում օսմանյան ողջ տիրապետության շրջանում, XVI դարից մինչև XX դարը, այսինքն՝ մինչև կայսրության փլուզումը, թուրքական կառավարությունները հետևողականորեն և մեծագույն նպատակասլացությամբ ձգտել են բռնի կերպով փոփոխության ենթարկել Արևմտյան Հայաստանի ազգային կազմը։

Ըստ Շարաֆ խան Բիթլիսիի հաղորդած տեղեկությունների, միայն Վանի էյալեթում, զբաղեցնելով լայնատարած շրջաններ, հաստատվել էին հետևյալ քրդական ցեղերը. սեմիրան (կամ նեմիրան), մահմուդի, դումբուլի, փաղուքի։ Հարավային Հայաստանում հաստատված նրա հիշատակած ցեղերն են հաքյարի, բելիլան, բիլբասի, կավալիսի, քիսանի (քեսյանի), շեքքաքի և այլն (403, էջ 169—172)։ Այստեղ հատկապես իրենց դիրքով ու ազդեցությամբ աչքի էին ընկնում Բաղեշի խաները՝ ռուզակի ցեղից, որոնց պետական-պաշտոնական վավերագրերում մեծարում էին «վեհաշուք խան», «ինքնակալ իշխան», «աշխարհիկ ու հոգևոր տեր» և այլ անվանումներով (89, էջ 280)։

Մի շարք վայրերում նույնիսկ քրդական կիսանկախ իշխանություններ հաստատվեցին. Բաղեշի, Խոշաբի, Ջուլամերիկի, Խիզանի, Սպարկերտի, Մոկսի, Շիրվանի, Հզուի և այլ էմիրությունները, «որոնք օսմանյան ֆեոդալական սիստեմի մասն էին կազմում և լիովին լրացնում էին պետական հարկահանության, փաշաների, ենիչերիների, սիփահիների պակաս թողածը» (15, էջ 67)։

Արևմտյան Հայաստանում թուրքական կառավարության քաղաքականության առանձնահատկություններից մեկը նաև այն էր, որ նա աշխատում էր այնտեղ ապահովել «քրդական ազնվականության առաջնությունը և տիրապետող դիրքը» (445, էջ 1206)։ Օսմանյան տիրապետությունը «դալիս էր ավելի ևս հաստատելու և ամրապնդելու քրդական իրականությունը Հայաստանում» (68, էջ 176)։

Հայ-քրդական հարաբերությունների նկատմամբ թուրքական կառավարող շրջանների քաղաքականությունը այս շրջա-

նից սկսած խարսխվեց մահմեդականներին քրիստոնյաների նկատմամբ առավելություն տալու օսմանյան հայտնի սկզբունքի վրա, որը հայ ժողովրդի վիճակը ավելի ծանրացրեց։

Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ, որտեղ քուրդ և թրքախոս քոչվորական ցեղերի տեսակարար կշիռը հետզհետե մեծանում էր, ենթարկվեցին նոմադիզացման (քոչվորականացման)։ Իսկ դա իր հետ բերեց առևտրի, արհեստների և առհասարակ տնտեսական կյանքի անկում։ «Ուժեղացնելով քրդական համայնքը Հայաստանում, արաբականը՝ Սիրիայում և թուրքականը՝ Անատոլիայում, օսմանյան կառավարությունը գիտակցաբար իրականացնում էր մահմեդականների գերազանցության սկզբունքը քրիստոնյաների նկատմամբ» (217, էջ 43)։

Այսպիսով, ստացվել էր մի այնպիսի վիճակ, երբ «հետամնաց հովվական ցեղերը գրավում էին» քաղաքական կառուցվածքի վերին հարկերը, իսկ զարգացած գյուղատնտեսություն և արդյունաբերություն ունեցող բնակչությունը ստիպված էր քարշ տալ իր գոյությունը «նկուղներում»։ «Նման վիճակը կարող էր գոյություն ունենալ միայն բարբարոսության և դաժան կառավարիչների գոյության պայմաններում։ Օտտոմանների քաղաքականությունը առաջնորդվում էր այդ երկընտրանքով և ուղղված էր դեպի քրիստոնյա բնակչության մշտական թուլացմանը» (217, էջ 43)։

XVI դարից սկսած Արևմտյան Հայաստանում հայերը փաստորեն դարձել էին քրդական ցեղապետ-ավատատերերի հպատակներ, թեև իրավական տեսակետից գտնվում էին օսմանյան գերիշխանության ներքո։ Թուրքական վարչական իշխանությունը տարածվում էր մինչև Արևմտյան Հայաստանի սահմանները։ Դրանից այն կողմ հայության բախտը թողնված էր քուրդ իշխանապետերին։ «Հայկական նահանգները, եթե զինվորական և պետական տեսակետով Օսմանյան կայսրության դրոշին տակ էին, իրական կյանքով ենթակա էին քրդական իշխանապետությանց» (127, էջ 107)։

XVI—XVII դարերում Արևմտյան Հայաստանի մշակվող հողատարածությունների և արոտավայրերի զգալի մասը արդեն գտնվում էին քրդական ցեղապետերի ձեռքում։ Նրանք այդ հողերին տիրում էին սեփականատիրական իրավունքով։ Դրանք ենթակա չէին ոչ հաշվառման և ոչ էլ վերաբաշխման։ Նրանց եկամուտները չէին մտցվում պետական հարկացուցակների

մեջ։ Նրանցում չկային օսմանյան պաշտոնյաներ և սուլթանական զորքեր։ Այդ բոլոր պարտականությունները կատարում էին իրենք, քուրդ ավատատերերը, հենվելով իրենց զինված ուժերի վրա (215, էջ 93)։

Արևմտյան Հայաստանում հայ ավատական դասը, որպես այդպիսին, աստիճանաբար դադարում էր գոյություն ունենալուց։ Ստեղծված պայմաններում հայկական նախկին ավատատերերի շառավիղներին վիճակված էր դառնալ կամ հոգևորական, վաճառական-խոջա, ամիրա-սեղանավոր (սարաֆ), շորպաճի և կամ մահմեդականություն ընդունելու ճանապարհով հարմարվել նոր պայմաններին։ Շատերը չհամակերպվելով իրենց վիճակին գերադասում էին տարագրվել հայրենի բնաշխարհից։ Հայ ժողովրդի ապազգայնացող ավատատերերի տեղը դարձյալ գրավում էին գլխավորապես քրդական ցեղապետերը։ Իրենց ձեռքում որոշ հողային տիրույթներ կարողացան պահպանել միայն հայ եկեղեցին ու վանքերը, հին ֆեոդալական տների մնացորդները և գյուղական համայնքների հարուստ խավերը (56, էջ 65, 69)։

Արևմտյան Հայաստանում հայ ավատական փոքր իշխանությունները պահպանում էին իրենց գոյությունը միայն երկրի հարավային լեռնագավառների անմատչելի մասերում՝ Զեյթունում, Սասունում, Սավուրում, Խյանում, Ճապաղջրում, Խնուսում, Մոկսում, Շատախում, Դիարբեքիրի հյուսիսային լեռնային շրջաններում և այլն (65, էջ 158, 161, 200)։

Մ. Կ. Զուլալյանը իր արժեքավոր ուսումնասիրության մեջ նշում է, որ հայկական այդ իշխանությունները, որոնք ընդգրկում էին ոչ մեծ տարածք, կարողանում էին պահել իրենց գոյությունը և հարատևել օսմանյան պետության թուլացման ու քուրդ բեկերի անվերջ հակակառավարական ապստամբությունների շնորհիվ։ «Չի բացառվում նույնիսկ այն հանգամանքը,— գրում է նա,— որ տեղ-տեղ քուրդ բեկերը ձգտում էին օգտագործել հայկական իշխանությունների ռազմական ուժը կառավարության դեմ» (55, էջ 189)։ Հայկական այս կիսանկախ շրջանների բնակչությունը կարողանում էր պահպանել իր անկախությունը դրացի քուրդ աշիրեթների հետ համագործակցելու շնորհիվ և օսմանյան պետությանը հարկ չէր վճարում։ «Ազատությունը, սակայն, շատ թանկ էր նստում լեռնականներին։ Նրանք կտրված էին մնում ամբողջ աշխարհից, պիտի լինեն

զգույշ և կասկածամիտ, մշտապես զինված և իրենց ամբողջ ուշադրությունն իրենց զենքին ու կռվին տված» (68, էջ 148)։

Ինչ վերաբերում է մնացած հայությանը, ապա օսմանյան վարչության, ինչպես նաև քուրդ ցեղապետ-աշիրեթապետերի ենթարկողական քաղաքականության նկատմամբ նրանց դիմադրության ամեն մի փորձ զենքի օգնությամբ ճնշվում էր։ Ե՛վ թուրքական պետության, և՛ քրդական ցեղապետ-իշխանապետերի քաղաքականության անկյունաքարը հայերի նկատմամբ հանդիսանում էր կամ նրանց զանգվածային համաձուլումը, կամ աստիճանական մաշեցումն ու ոչնչացումը (388, էջ 43)։

Հայ ժողովրդի համար հատկապես ծանր հետևանքներ ունեցան XVI—XVII դարերի թուրք-իրանական անընդհատ և ավերիչ պատերազմները։ «Հայաստանի համար այդ պատերազմներն անհամեմատ ավելի ծանր էին ու կործանիչ, քան սելջուկների, մոնղոլների ու թուրքմենների ջարդերը, ավարառությունները ու ավերումները» (89, էջ 89)։ Հայ ժողովրդի հետ միասին քուրդ ժողովուրդը ևս օրորվում էր թուրք-իրանական հակամարտության ալիքների մեջ։ Այդ պատերազմներն ուղեկցվում էին հայ և քուրդ բնակչության զանգվածային ջարդերով, կողոպուտներով ու գերեվարումներով։

Հայ ժողովրդի դրությունը ծանրանում էր ոչ միայն թուրք-պարսկական պատերազմների հետևանքով։ «Հայաստանում անմեռ էր մնում հին ավերիչ ուժը, որը պակաս ավերիչ չէր քան արտաքին ահեղ հարվածները։ Այդ ավերիչ ուժը ներկայացնում էին ներքին պատերազմները, որոնք բորբոքվում էին ավատական իշխողների միջև ու դժոխք էին դարձնում երկրի այս կամ այն մասը։ Մի ժամանակ այս տխուր դերը կատարում էին հայ նախարարներն իրենց տոհմային-կալվածական վեճերով, որոնք հաճախ հանգում էին գավառական կատաղի պատերազմների։ Հետո, երբ նախարարներն անհետացան, նրանց այս դերը հանդես էին բերում նրանց հաջորդած, գուցե հենց մասամբ նրանցից էլ առաջացած քուրդ տիրողները։ Ցեղերը կռվում էին իրար հետ, իսկ նրանց պատերազմների ամբողջ ծանրությունն ու դառնությունը հայ ժողովրդի վրա էր ընկնում» (68, էջ 189)։

Սուլթան Սուլեյման I Կանունիի (օրենսդիր) (1520—1566) տիրապետության շրջանում նկատվում է քրդերի նկատմամբ թուրքական քաղաքականության կենտրոնացվածության ուժե-

ղացում։ Այդ երևույթը սկսեց դրսևորվել դեռևս Սելիմ I-ի կենդանության օրոք։

Քրդական իշխանություններին մեծ արտոնություններ և իրավունքներ տալու արդյունքը եղավ նրանց կենտրոնախույս ձգտումների ուժեղացումը։ Անկախ էմիրաթները ստեղծեցին իրենց բանակը, արքունիքը և խուսափում էին կենտրոնական կառավարությանը հարկեր վճարելուց և այլն։ Երբ սուլթան Սելիմը փորձեց ընդառաջելով թուրքական վարչության ներկայացուցիչների՝ փաշաների պահանջներին, սահմանափակել քրդական ավագանու եկամուտները հօգուտ տերության, ծայր առան արյունահեղ բախումներ, որոնց ժամանակ բռնությունների ու կողոպուտների նշավակ էր դառնում դարձյալ հայ և քուրդ ռայա բնակչությունը։ Սուլթան Սելիմը փորձեց մանրացնել խոշոր իշխանապետությունները, դրանք մանր սանջակների բաժանելու միջոցով, հույս ունենալով այդ ճանապարհով փոքր-ինչ նվազեցնել էմիրների կենտրոնախույս ձգտումները և լիակատար անկախության համար նրանց չդադարող պայքարը (380, էջ 53)։ Այսպես, Դիարբեքիրը բաժանվեց 19 սանջակների, որոնցից 11-ը ուղղակի կապվեցին Բ. Դռան հետ, իսկ մնացածները մանրացվելով վերածվեցին կամ կիսանկախ ժառանգական էֆրաթ նյուֆուսաթների (օրինակ, էկիլը, Բարուն, Ջեզիրեն, Հազոն և Գենջը) և կամ էֆրաթ բեյլիֆների ու օջաֆլըֆների, ինչպես Աթախը, Թերջիլը, Միհրանին, Խուլբը, Ճապաղչուրը, Ջերմուկը, Սաղմանը և Բերդակը։ Վան էյալեթի մեջ մտան Հեքիարիի, Բիթլիսի, Խոշաբի (Մահմուդիե) հյուքումաթները և Բերկրիի օջաքլըքը (97, էջ 186, 204)։

XVII դարի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբին վկայում է, որ ողջ Արևմտյան Հայաստանում, Մալաթիայից սկսած մինչև Բայազետ, նման վարչական սիստեմ արդեն կար (302, էջ 32)։

Արևմտյան Հայաստանում և Քրդստանում կային մոտ 400 քուրդ ազատ կառավարիչներ (աշարաթ-ռեյիս կամ աշարաթ-բեկ), որոնք պարտավոր էին այսպես կոչված սանջակ բեյերի հրամանատարությամբ մասնակցել պատերազմներին։ Խաղաղ ժամանակ աշարաթ ռեյիսները չէին ենթարկվում սանջակ բեյերին և միանգամայն անկախ էին, սակայն նրանք չունեին իրենց դրոշներն ու շեփորները։ Այդ կառավարիչները կրում էին էմիրի տիտղոս (318, էջ 102։ 288, էջ 108)։

Արևմտյան Հայաստանում և Քրդստանում վարչական նոր միավորի արմատավորմամբ թուրքական իշխող շրջանները նպատակ ունեին խարխլել կիսանկախ քուրդ իշխանապետությունների հիմքերը և վերջ տալ քրդական էմիրների անջատողականությանը։

Քրդական էմիրների ու ցեղապետերի իշխանության հիմքերը խարխլելու նպատակով սուլթան Սելիմ I-ը աշխատում էր նաև հին, ժառանգական ազնվականությունը փոխարինել նոր, զինվորական ազնվականությամբ, որը կախման մեջ լիներ սուլթանից և, հետևաբար, հավատարմորեն ծառայեր նրան։ Այդ պատճառով սուլթանը լավագույն հողակտորները որպես թիմար կամ զեամեթ առատորեն բաշխում էր քուրդ ավատատերերին։ Այդ նույն նպատակին հասնելու ձևերից մեկն էր նաև քրդական էմիրների ու ցեղապետերի միջև՝ մի կողմից, և իր դրածոների միջև մյուս կողմից, տոհմացեղային թշնամանքի բորբոքումը և պատերազմների հրահրումը, որի ընթացքում թուրքական զորքերը օգնում էին ջախջախել սուլթանի դրածոների հակառակորդներին։

Սուլթան Սելիմ Յավուզի այս քաղաքականությունը նախանձելի հետևողականությամբ շարունակեց Սուլեյման I Կանունին (1520—1566)։ Դա անմիջապես իր արձագանքներն ունեցավ քրդական շրջաններում, առաջ բերելով աշիրեթների դժգոհությունը։ Առանձին քուրդ առաջնորդներ նույնիսկ իրենց հայացքն ուղղեցին դեպի սեֆյանները, նրանց հետ համագործակցության եզրեր փնտրելով։ Այդպես վարվեց, օրինակ, թուրքերից հուսախաբ եղած Բիթլիսի ազդեցիկ էմիր Շարաֆ խանը, որը խզեց իր կապերը թուրքերի հետ և անցավ շահ Թահմասպ I-ի (1524—1576) կողմը (382, էջ 108—110)։

Քրդերի այս տրամադրություններից փորձեց օգտվել սեֆյան Շահ Աբբաս I-ը (1587—1629), որը հետևողականորեն ուղիներ էր որոնում թուրքական առաջխաղացումը դեպի Արևելք կասեցնելու համար։ Բանակը վերակառուցելու հետ մեկտեղ, հետևելով թուրքերի օրինակին, նա աշխատում էր Իրանի արևմտյան սահմաններում իր պետության հետ կապել այն քրդերին, որոնք սեֆյաններին դերադասում էին օսմանցիներից։ Քրդական այդ ցեղերը կոչված էին սահմանները պահպանել թուրքերից։ Հենց այդ քաղաքականության հետևանքով Օսմանյան կայսրության հետ Իրանի սահմանակից շրջաններում

ծնունդ առավ Սարդար Մուքրիի կիսանկախ ավատական իշխանությունը, Սոուջբուլաղ կենտրոնով։ Հիշյալ իշխանության բնակչությունը, որը գլխավորապես բաղկացած էր Մուքրի քրդերից, մտավ բաբան (կամ սորան) ցեղի խոշոր միավորման մեջ։ Ճիշտ է, թեև Սարդար Մուքրիի իշխանությունը ըստ էության միանգամայն անկախ էր և միայն ձևականորեն էր մըտնում Սեֆյան Իրանի կազմի մեջ (232, էջ 182), սակայն այն կարևոր դեր էր խաղում թուրքական ոտնձգություններից սահմանները պաշտպանելու գործում։ Օսմանցիների տիրապետությունից դժգոհ Սալմաստի քուրդ բեկ Ղազին Շահ Աբբասի վերոհիշյալ՝ երկրի հյուսիսային սահմանները պաշտպանելու քաղաքականությունն իրագործելիս նրա գործակիցն էր (417, էջ 202)։

Թուրքիայի տիրապետության տակ գտնվող մի շարք քուրդ ցեղապետեր, որոնց մի մասը հարել էր ջալալիների շարժմանը, Շահ Աբբասին առաջարկեցին իրենց ծառայությունները թուրքերի դեմ պատերազմելու համար (36, էջ 15)։ Պատահական չէ, որ իրանական բանակի հրամանատարներից Ամիրգունա խանը եռանդուն գործունեություն էր ծավալել Արարատյան երկրին սահմանակից քրդական աշիրեթապետերին հրապուրելու և նրանց Շահ Աբբասի իշխանությանը ենթարկելու համար։ Արշավանք կազմակերպելով դեպի Վան և Արծկե, նա այնտեղից իր հետ Իրան բերեց առավել ազդեցիկ քրդական աշիրեթների առաջնորդներին, որոնք ընդունելով շահի գերիշխանությունը (89, էջ 102—103), իրենց ցեղերին տրամադրեցին Օսմանյան կայսրության դեմ։

Մասնավորապես Ամիրգունա խանի ջանքերի շնորհիվ քրդական հաքյարի, մահմուդի, դունբուլի և այլ խոշոր ցեղերի աշիրեթապետերը եկան Երևան և հպատակություն հայտնեցին շահին (141, էջ 30)։

Առաքել Դավրիժեցին հաղորդում է, որ Արևելյան Հայաստանի բազմաթիվ քուրդ, հայ և վրացի մեծավորների քաղաքական համակրանքը նույնպես սեֆյանների կողմն էր (36, էջ 16)։ Այդ էր պատճառը, որ Շահ Աբբասը հետևողականորեն կիրառում էր նրանց սիրաշահելու քաղաքականություն։ Թերևս այդ նույն քաղաքականության բաղկացուցիչ մասն էր Ղարաբաղի մելիքությունների առանձնաշնորհումները շահի կողմից։ «Սեֆյանները XVI դարում գրավելով Արևելյան Հայաստանը

սկզբնական շրջանում ոչ միայն անտեսեցին հայկական իշխանությունների՝ մելիքությունների ուժերը, այլև մեծ հարված հասցրին նրանց» (82, էջ 387—388)։ Սակայն Շահ Աբբասը վերստին վերականգնեց հայկական մելիքությունների ներքին ինքնավարությունը։ 1605 թ. Թուրքերի դեմ պատերազմում պարտություն կրելով և Արևելյան Հայաստանից տեղահան անելով ու Իրանի խորքերը քշելով հազարավոր հայերի, Աբբաս I-ը միաժամանակ Հայաստանի մի շարք շրջաններ հանձնեց հայ մելիքների կառավարմանը (36, էջ 96), բարյացակամորեն վերաբերվելով Թուրքիային սահմանակից Արևելյան Հայաստանի հայ բնակչությանը (51, էջ 45) և այլն։

Միանգամայն ակնհայտ էր, որ ընդօրինակելով օսմանյան սուլթանների Իրանի դեմ քրդական ցեղերին որպես սահմանների պաշտպան օգտագործելու քաղաքականությանը, շահը հանձինս հայերի և իր կողմնակից քրդերի աշխատում էր Թուրքական առաջխաղացման դեմ պատվար ստեղծել։

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ այդ քաղաքականությունը լիովին արդարացնում է իրեն։ Աղբյուրների վկայությամբ այդ շրջանում մի շարք վայրերում տեղի ունեցան հայերի և քրդերի համատեղ ելույթներ օսմանյան լծի դեմ։ Այսպես, Շարաֆ խան Բիթլիսիի վկայությամբ 1595—1596 թթ. Սասունի էմիրաթի Հազո բնակավայրում հակաթուրքական ապստամբություն բռնկվեց, որին մասնակցում էին մահմեդականները և «անհավատները», այսինքն՝ քրդերը և հայերը (380, էջ 63)։ Արևմտյան Հայաստանի տարածքում 1608—1610 թթ. Ջանփոլադ օղլու գլխավորությամբ սուլթանական իշխանության դեմ ծայր առավ ապստամբ չալալիների մի նոր շարժում, «որը հայտնի չափով արտահայտում էր նաև ինքնագլխության ձգտող քուրդ ցեղապետերի, ինչպես նաև Սիրիայի ու Լիբանանի արաբ բնակչության ազատաբաղձ տրամադրությունները» (89, էջ 111—112)։

Շահ Աբբաս I-ի գահակալության վերջին շրջանում սեֆյանները թափանցեցին Քրդստանի խորքերը, հասնելով մինչև Մարդին։ Այդ պատճառով նրա մահից անմիջապես հետո՝ 1629 թ., Օսմանյան կայսրությունը ձեռնամուխ եղավ հակահարձակման, նպատակ ունենալով հետ նվաճել կորցրած հողերը։ Նախ Թուրքական զորքերի հրամանատար Խոսրով փաշան շարժվեց դեպի Բաղդադ։ Նրան այդ արշավանքում օգնում

էին Ամադիայի, Հազոյի, Էքիլի, Դերճիլի, Բալուի, Արղնիի, Խարբերդի, Սորանի և Բաշիլանի քուրդ առաջնորդները։ Իսկ սեֆյաններին օժանդակում էր Արդալանի քրդությունը Ահմեդ խան Արդալանի գլխավորությամբ։ Կատաղի մարտերով շարժվելով առաջ, Խոսրով փաշան հասավ մինչև Սեննե և մտավ Համադան։ Ի պատասխան դրա, 1631 թ. իրանական զորավար Թահմազկուլի խանը արշավեց դեպի Արևմտյան Հայաստան, ձգտելով գլխավորապես պատժել քրդական այն ցեղերին, որոնք կատարելով օսմանցիների հրահանգը, անընդհատ ասպատակում էին Արարատյան երկրի սահմանամերձ շրջանները։ Ընդ որում, «Թահմազկուլի խանի արշավանքների ընթացքում այնքան չտուժեցին քրդական աշիրեթները, որոնք փակվում էին Արճեշի, Արծկեի, Խլաթի և այլ բերդերում, որքան հայ գյուղական բնակչությունը, որոնց այս անգամ ղզլբաշները քշում, տանում էին Արարատյան նահանգի ամայացած գյուղերում բնակեցնելու» (89, էջ 105—106)։

1638 թ. սուլթան Մուրադ IV-ը վերջնականապես գրավեց Բաղդադը, որից հետո 1639 թ. մայիսի 17-ին կնքված Քասրե-Շիրինի պայմանագրով Քրդստանը վերջնականապես բաժանվեց Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև (384, էջ 29—37)։ Նույնպիսի ճակատագրի արժանացավ նաև Հայաստանը. նրա արևմտյան մասն անցնում էր Թուրքիային, իսկ Արարատյան նահանգը մնում էր Իրանի կազմում։ Այս երկրամասի բաժանումը չբավարարեց հակառակորդների քաղաքական ձգտումները և նրանց միջև տևական վեճերի պատճառ դարձավ, որն ի վիճակի չէր լուծելու ոչ մի սահմանային հանձնաժողով ու պայմանական համաձայնագիր, որոնք լավագույն դեպքում կարող էին բերել միայն ժամանակավոր դադար (226, էջ 3—4)։

Փոքր Ասիան ամբողջությամբ նվաճելուց հետո Թուրքերն ընդարձակ երկրամասերն անվանեցին նվաճված ժողովուրդների անուններով։ Այսպես, Հայկական բարձրավանդակի կենտրոնական մասը կոչվեց Էրմենիստան, որի կազմի մեջ իրենց շրջակա տարածքով մտնում էին Էրզրումը (Կարինը), Կարսը և Վանը ու Դիարբեքիրի մի շարք գավառներ։ Ի դեպ, մինչև սուլթան Մահմուդ II-ի տիրապետությունը (1808—1839), Էրզրումի փաշալիքը կոչվում էր նաև Էրմենիստանի Բեքիր (Մեծ Հա-

յաստան) (469, էջ 47)։ Իսկ Քրդստանի մեջ մտնում էր Դիարբեքիրի շրջանի մի մասը, Շեհրիզորը և Մոսուլը (97, էջ 198)։

Արևելքից Իրանից սպառնացող վտանգը վերանալուց և կողմերի միջև սահմանային գիծը պայմանագրային կարգով վավերացվելուց հետո Օսմանյան կայսրությունը իր առջև խնդիր դրեց երկրի արևելյան շրջաններում քրդական իշխանապետությունների հսկողության տակ գտնվող հողերում իր անվանական տիրապետությունը դարձնել իրական։ Հենակետ ծառայեցնելով Էրզրումը, Դիարբեքիրը, Մոսուլը և Բաղդադը Օսմանյան կայսրությունը փորձեց Քրդստանի և Արևմտյան Հայաստանի խորընկած շրջաններում տեղակայել զորքեր և հաստատել վարչական կառավարում։ Այդ նպատակով XVII դարի 30-ական թվականների վերջերից սուլթանները պարբերաբար արշավանքներ էին կազմակերպում դեպի վերոհիշյալ շրջանները։ Այսպես, 1639 թ. Դիարբեքիրի նահանգապետ Մալաք Ահմեդ փաշան մեծ արշավանք ձեռնարկեց Սինջարի եզիդիների դեմ։ Այնուհետև նա այդ շրջանի քրդական ցեղապետերին առանձին-առանձին շախշախեց։ Քիչ ավելի ուշ, 1655 թ. նա իր զենքն ուղղեց Վանի շրջանի քրդերի դեմ։ Իսկ հետագայում Օսմանյան կայսրությունը իր նահանգական կուսակալների միջոցով սահմանափակեց ու կրճատեց քրդական իշխանապետությունների սահմանները, ցրեց կենտրոնացված ուժերը, շլատեց դրանք, օգտագործելով ինչպես խոշոր ռազմական ուժեր, այնպես էլ հրահրելով միջցեղային երկպառակություններ։

Թուրքական այդ արշավանքները մեծ հարված հասցրին քրդերին, առաջին անգամ զգացնել տալով օսմանյան լծի ողջ ծանրությունը։ Հիրավի, այս դեպքերով սկսվեց Թուրք-քրդական հակամարտության առաջին շրջանը։ «1639 թվականից հետո քրդական կյանքը փոթորկում էր։ Թուրքական լուծը դառնում էր անտանելի և Թուրքը՝ ատելի ռումի» (128, էջ 69—70)։

Քրդերի պատմության այդ ծանր ժամանակահատվածի՝ XVII դարի իրադարձությունների արձագանքները քուրդ ժողովրդի հոգում դիպուկ է արտահայտել քուրդ բանաստեղծ Ահմեդ Խանին իր մի բանաստեղծության մեջ, ուր անսքող երևում է քրդերի ատելությունը դեպի Թուրքերը. «Ինձ զարմացնում է,— գրում է Ահմեդ Խանին,— այն ճակատագիրը, որը աստծու կողմից սահմանվել է քրդերի համար... Թուրքերը և պարսիկները շրջապատված են քրդական պատերով... Ամեն անգամ,

երբ արաբները և թուրքերը սկսում են շարժվել, հենց քրդերն են խեղդվում արյան մեջ»։

Սակայն քուրդ ժողովրդի՝ իր հայրենիքը ազատագրված տեսնելու բաղձանքով հանդերձ այդ ժամանակաշրջանի քրդական շարժումները քաղաքական լուրջ բնույթ չունեին։ Միջազգային ու միջավատական ներհակություններից պառակտված քուրդ ժողովուրդը ի վիճակի չէր համախմբելու իր ուժերը Օսմանյան կայսրության դեմ համաքրդական շարժում ծավալելու համար։ Այդ գործում որոշակի դեր էր խաղում նաև քրդերի կրոնական տարանջատվածությունը։ XVI—XVII դարերի թուրք-իրանական պատերազմների շրջանում սուննի քրդերը օսմանյան թուրքիայի հետ էին, իսկ շիաները՝ Իրանի։

Քրդերի նկատմամբ օսմանյան կենտրոնացված իշխանության բռունցքն ավելի ուժեղացավ և հետևողական ու նպատակասլաց դարձավ 1683 թ. Վիեննայի մոտ թուրքերի պարտությունից հետո։ Սուլթան Սուլեյմանը Դիարբեքիրում մի բարձրաստիճան զինվորական կարգեց, որը պետք է քրդական առաջնորդների ու Կոստանդնուպոլսի միջև միջնորդի դեր խաղար (294, էջ 279)։ XVIII դարի սկզբին դեպի Օսմանյան կայսրություն եվրոպական տերությունների գրոհը համընկավ այդ պետության տնտեսական ու քաղաքական ներքին ճգնաժամի հետ։ Դրա հետևանքով կայսրության ողջ տարածքում բացահայտորեն դրսևորվեցին կենտրոնախույս ձգտումներ։ Այդ երևույթը հատկապես լայն ծավալ ընդունեց սուլթան Ահմեդ III-ի (1703—1730 թթ.) կառավարման շրջանում։ Երկրի ներքին անկայուն վիճակի ամենացայտուն դրսևորումները կայսրության տարածքում բռնկած բազմաթիվ ապստամբություններն ու խռովությունները եղան։ Դա նկատելի էր նաև քրդերի շրջանում։ Այսպես, 1702 թ. գարնանը Բեբե (Բաբա) Սուլեյմանի գլխավորությամբ ապստամբեցին Շահրիզորի քրդերը (426, էջ 59)։ Այդ նույն թվականին քրդական ապստամբական շարժումներ տեղի ունեցան նաև Վան-Վասպուրականի շրջանում (55, էջ 79։ 106, էջ 362), որոնք շուտով դուրս եկան Օսմանյան կայսրության սահմաններից և ծավալվեցին նաև իրանական քրդերի շրջանում։ 1719 թ. ապստամբներին նույնիսկ հաջողվեց գրավել Համադանը։ Այս հեղհեղուկ քաղաքական իրադրության պայմաններում հայ ժողովրդի վիճակը ավելի բարդացավ, քանի որ նա իր վրա կրում էր ինչպես օսման-

յան պետության, այնպես էլ տեղական քուրդ ավատատերերի լուծը։

XVIII դարի սկզբին քրդական ցեղերն արդեն տարածվել էին Արևմտյան Հայաստանի համարյա բոլոր շրջաններում (64, էջ 51)։ Արևմտյան Հայաստանում և նրա հարևան Քրդստանում ու հարակից շրջաններում կային քրդական հինգ մեծ իշխանություններ՝ Բիթլիսը, Հեքիարին, Ամադիան, Ջեզիրեն և Բայազետը։ Դրանց գրաված տարածքը վարչական տեսակետից ձևականորեն մտնում էր համանուն վիլայեթների մեջ, սակայն իրականում դրանք վիլայեթների փաշաներից անկախ իշխանություններ էին (82, էջ 398)։

Բուն Արևմտյան Հայաստանը այն ժամանակ բաժանված էր հետևյալ վիլայեթների՝ Վանի, Էրզրումի, Կարսի, Դիարբեքիրի և Սվասի (Սեբաստիայի)։ Այդ վիլայեթների տարածքներում առկա էին նաև քրդական ինքնավար իշխանություններ՝ հյուրումեթություններ։ Վիլայեթի սահմաններում ամբողջ իշխանությունը գտնվում էր կուսակալ փաշայի ձեռքում։ Հայաբնակ վիլայեթների մեծ մասում կուսակալը սանջակների կառավարիչներ էր նշանակում քրդական ցեղապետերից, որոնց իրավունքը գերազանցապես ժառանգական էր (82, էջ 394)։

Չնայած հայ ժողովուրդը գտնվում էր կրկնակի լծի տակ, սակայն XVIII դարում քրդական իշխանությունները դեռևս բավականաչափ ուժեղ չէին, որպեսզի կարողանային միանգամայն ինքնագլուխ լինել ու իրենց շրջանների բացարձակ տերերը դառնալ։ Արևմտյան Հայաստանը կողոպտող ու ճնշող գլխավոր ուժը թուրքական պետությունն էր, որը կեղեքում էր թե՛ հայ, և թե՛ քուրդ աշխատավոր զանգվածներին։

Այս հանգամանքները հաշվի առնելով որոշ հայ գործիչներ հարազատ ժողովրդի թուրքական լծից ազատագրվելու միակ ուղին տեսնում էին նույն լծի տակ տառապող հարևան ժողովուրդների հետ միավորվելու մեջ։ Նույն կարծիքին էին օսմանյան տիրապետությունից դժգոհ որոշ քուրդ ցեղապետեր։ XVIII դարի 40—60-ական թվականներին հայ-քրդակ ն դաշինք կնքելու մի փորձ կատարվեց Տարոնի շրջանում։ Այդ գավառի տերը քուրդ իշխանապետ Ալադդին (Ալայեդդին) բեկն էր, որը հաճախ ըմբոստանում էր օսմանյան տիրապետության դեմ և թույլ չէր տալիս, որ Էրզրումի թուրքական փաշան ոտընձգություններ անի Մուշի փաշայության ենթակա շրջաններում։

Տեղում պետական իշխանությունը ներկայացնողը քուրդ իշխանապետի տունն էր, որտեղ կենտրոնանում էին շրջակա բնակչությունից գանձված տուրքերը։ Սասունի և Մուշի քրդական իշխանապետությունները տեղի հայ բնակչությանը հովանավորում և պաշտպանում էին քոչվոր քրդերից, խրախուսում էին արհեստներն ու առևտուրը և այլն։ Մինչև XVIII դարի սկիզբը Տարոնի հայ բնակչությունը տուժում էր քրդական աշիրեթների անիշխանական ընդհարումներից և քրդական այն ցեղերի ասպատակություններից, որոնք Իրանի սահմաններից և Կորդվաց լեռներից եկել և բնակություն էին հաստատել հայկական գավառներում, սակայն դրանից հետո, օգտվելով Ալադդին բեկի բարյացակամ վերաբերմունքից, Տարոնի հալածված ժողովուրդը վերադարձավ հայրենի վայրերը և որոշ ժամանակ համեմատաբար ապահով վիճակում էր։

Ալադդին բեկի հակաթուրքական տրամադրությունները և հայերի նկատմամբ նրա բարյացակամ վերաբերմունքը հիմք տվեց արևմտահայ ազատագրական շարժման գործիչներին ենթադրելու, որ հայ ազատագրական շարժումը միավորվելով քրդական, ինչպես նաև տեղի այլ ժողովուրդների շարժման հետ և դրսից օգնություն ստանալով կազատագրվի օսմանյան լծից։

Այս գաղափարի շատագովը դարձավ Մուշի ս. Կարապետ վանքի վանահայր Հովնան եպիսկոպոսը։ Ինչպես հայտնի է, նրանից անկախ այդ նույն գաղափարը փայփայում էր նաև հայ ազատագրական շարժման կարկառուն գործիչներից մեկը՝ Հովսեփ Էմինը։ Վերջինիս ծրագիրը՝ Անգլիայի օգնությամբ ազատագրել Արևմտյան Հայաստանը, ավարտվեց ձախողմամբ։ Դա միանգամայն օրինաչափ էր, որովհետև «...ոչ մի անգլիական պետական գործիչ չէր կարող շահագրգռված լինել Թուրքիայի, Իրանի և Կովկասի սահմանագծի վրա անկախ հայկական պետություն ստեղծելու պլանները խրախուսելու մեջ, քանի որ դա կհանգեցներ միայն անգլիացիների մրցակիցների՝ հայ վաճառականների դիրքերի ուժեղացմանը, որոնք, մանավանդ, սերտորեն կապված էին Ռուսաստանի հետ և առանդուն կերպով նպաստում էին դեպի Արևելք ռուսական քաղաքական և տնտեսական նվաճողականությանը, որն արդեն XVIII դարի երկրորդ կեսին սկսել էր լրջորեն անհանգստացնել անգլիական կառավարող շրջաններին» (258, էջ 54—55)։ Հիասթափվելով

անգլիացիներից, Հովսեփ Էմինը ծրագրում է «...ոտքի հանելու հայերը, վրացիները, քյուրտերը և ասորիները ընդդեմ Օսմանեան կայսրության, ազատագրելու համար Հայաստանը, Վրաստանը, Քյուրտիստանը» (92, էջ 5)։

Հովսեփ Էմինի այս ծրագրի մասին առավել հարուստ տվյալներ կան հենց իր կենսագրության մեջ (92, էջ 5, 479)։ Այդ աղբյուրից տեղեկանում ենք, որ շարժումը Տարոնում սկիզբ է առել XVIII դարի 40-ական թվականներից, երբ 1747 թ. Էրզրումի սերասկեր Իբրահիմ փաշան պատերազմ սկսեց Մուշի տիրակալ Ալադդին բեկի դեմ, որը շարունակվեց ընդհուպ մինչև 1780 թ.։

Հովսեփ Էմինի և Հովնան եպիսկոպոսի գործունեությունից երևում է, որ նրանք քաջ ծանոթ էին ժամանակաշրջանի քաղաքական կացությանը և ապստամբության համար պահը միանգամայն նպաստավոր էին համարում։ Օսմանյան կայսրությունը շարունակում էր ապրել քայքայման և նահանջի պրոցես։ Այնտեղ արդեն տեղի էին ունեցել ներքին ապստամբություններ։ Արթնացել էին բալկանյան ժողովուրդները։ Թուրքիայի ներսում մի շարք կուսակալներ դրսևորում էին անջատողական ձգտումներ և նրանցից շատերը իրենց համար կարողացել էին ստեղծել միանգամայն անկախ վիճակ, չենթարկվելով կենտրոնական կառավարությանը։ Ենիչերիների բանակը քայքայվում և այլասերվում էր, ապրում սուր ճգնաժամ, ողջ երկրով մեկ տարածելով անիշխանություն։ XVIII դարի հայազգի հեղինակ Մուրաջյան դ՝ Օսսոնը իր «Պատկերներ Օտտոմանյան կայսրության» աշխատությունում բազմաթիվ փաստեր է բերում այն մասին, որ երկրի մի շարք շրջաններ նույնիսկ ձևականորեն չէին մտնում էյալեթների կազմի մեջ և չէին ենթարկվում տեղական փաշաներին։ Նա տվյալներ է բերում Արևմտյան Հայաստանի՝ և Քրդստանի տարածքում բազմաթիվ քրդական անկախ իշխանապետությունների մասին, որոնք ազատ էին կենտրոնական կառավարության հսկողությունից և կառավարվում էին ժառանգական իշխանապետերի կողմից (475, էջ 298—299)։ Թուրքական կառավարությունը ստիպված էր լռելյայն համաձայնել քրդական ժառանգական խոշոր տիրույթների ստեղծման փաստի հետ (55, էջ 177)։

Հովնան եպիսկոպոսը հատկապես «Ալատինի տան մեջ տեսած էր այն ոյժը, որ օր մը պիտի կարենար թօթափել թըր-

քական տիրապետությունը, որմէ ետք հայկական ազատագրությունը կը դառնար տեղական խնդիր մը՝ քիւրտ ցեղապետներուն հետ կարգադրուելիք» (127, էջ 127)։

Հովնան եպիսկոպոսը կարողացավ Կոստանդնուպոլսից հատուկ ֆիրման ստանալ, որով Ալադդին բեկը Մուշում ամրոց կառուցելու իրավունք ստացավ և ինքն էլ միջոցներ հատկացրեց շինարարության համար։ Հովնանը, ինչպես գրում էին նրան բանադրող հայ հոգևորականները. «Ըզկեանս վանիցն կեղեքէր և անխնայ տայր պիղծ բռնավորին տեղւոյն Մահուտ բեկ կոչեցելոյն, որով զորանայր պիղծն և բազմիցս ապստամբիւր ի Թագաւորէն Օսմանցոց։ Ուստի՝ և յամենայնում ամի ելանէր յարքունուստ հրաման ի վերայ փաշային ի վերայ. Կարնոյ փաշային և այլոց, գնալ զորու ի վերայ նորա և զգլուխն հատանել և զբերդն աւերել» (258, էջ 154)։

Հովնան եպիսկոպոսը միջոցներ էր ձեռնարկում, որպեսզի Ալադդին բեկի ընտանիքի անդամներից ոմանք փաշայության իրավունք ստանան Դիարբեքիրում և Վանում, որպեսզի այդ շրջանի քրդերը ևս մասնակցեն ապագա ազատագրական շարժմանը։ Եզիդիներին և ասորիներին ևս միացյալ ճակատի մեջ ներգրավելու նպատակով նա գործակալներ ուղարկեց նաև Վանի արևելյան շրջանները՝ Խոյ-Սալմաստի կողմերը և այլուր (127, էջ 137)։

Հովնան եպիսկոպոսը կարողացավ իր շուրջը համախմբել նաև մի շարք ազդեցիկ հայերի՝ Կոստանդնուպոլսում, Զմյուռնիայում, Կեսարիայում, Թոքաթում, Էրզրումում, Դիարբեքիրում և Վանում (479, էջ 236)։

Հատկանշական է, որ տեղյակ լինելով հայերի հետ Ալադդին բեկի կապերի մասին, նրան թուլացնելու միտումով Էրզրումի և Բայազետի փաշաները 1747 թ., երբ Ալադդինը ապստամբեց կառավարության դեմ, շարժումը ճնշելու ժամանակ հրամայեցին հրդեհել Մուշի գավառի հայաշատ գյուղերը (72, էջ 734)։

Հայաստանն ազատագրելու իրենց գաղափարը իրագործելու ճանապարհին Հովսեփ Էմինը և Հովնան եպիսկոպոսը մեծ հույսեր էին կապում Վրաստանի Հերակլ Թագավորի հետ։ Ընդ որում, նրանք այն կարծիքին էին, որ եթե Վրաստանը իր ձեռքը վերցնի Արևմտյան Հայաստանում հակաթուրքական շարժման ղեկավարությունը, ապա նրա այդ քայլը կարժանանա ռուսա-

կան կայսրության քաջալերությանը, մանավանդ որ այդ շրջանում ռուս-թուրքական հարաբերություններն աննախընթաց կերպով սրվել էին և իրադարձությունները տանում էին դեպի այդ երկու պետությունների միջև անխուսափելի բախում։

Իր այդ ծրագիրն իրագործելու համար Հովսեփ Էմինը մեկնեց Վրաստան և ծառայության անցավ Հերակլ թագավորի մոտ։ Տարոնից Հովնան եպիսկոպոսը Էմինի մոտ ուղարկեց իր մարդկանց և 600 ոսկեդրամ, որպեսզի Էմինը համոզի Հերակլ թագավորին շարժվել դեպի Թուրքիա։ Էմինին հասցեագրված իր 1763 թ. նամակում Հովնան եպիսկոպոսը գրում էր. «Թուրքերն այն չեն, ինչ որ էին հարյուր տարի առաջ։ Նրանք ամեն ինչ պիտի լքեն առանց կռվելու։ Եվ որովհետև նրանց քաղաքները ամրացված չեն, դրանց գրավումը շատ հեշտ պիտի լինի... Իբրև կռվողներ դուք կունենաք 40 000 հոգի, որոնք կմիանան ձեզ վեց օրվա ընթացքում։ Ասորիներն ու եզիդի քրդերը նույնպես պատրաստ են միանալու մեզ» (479, էջ 235)։

Հերակլին համոզելու նպատակով Էմինը կարդում է Հովնան եպիսկոպոսի նամակի այն մասը, որտեղ շարադրված էր առաջիկա ռազմական գործողությունների ծրագիրը. «...40 հազար հայեր Բայազետում կմիանան ձեզ. այստեղից երեք օրվա ընթացքում կանցնեք Էրզրում և նրա հարակից շրջանները՝ Բասեն, Սասուն, Բիթլիս, այդ վայրերում դուք կունենաք ևս 12 000 հետևակ, ընդ որում մինչ այն, քան Թուրքերը կկարողանան շարժել իրենց ուժերը։ Մշո հայերից 10 000 հեծելազոր ևս կմիանան ձեզ...» (479, էջ 228)։

Իհարկե այս թվերը չափազանցված էին։ Հովնան եպիսկոպոսը պարզապես փորձում էր համոզել Հերակլին, որ ռազմարշավը դեպի Թուրքիա անվերապահորեն կավարտվի հաջողությամբ։ Էմինը իր հերթին Հերակլին հորդորում էր վերցնել վեց հազարանոց հեծելազոր և տասը հազարանոց հետևակ և շարժվել դեպի Բայազետ։ Սակայն Հերակլ թագավորը երկար տատանումներից հետո հրաժարվեց այդ ծրագրին մասնակցություն ունենալուց։

Մեկնաբանելով դրա պատճառները, ակադեմիկոս Ա. Ռ. Հովհաննիսյանը գրում է, որ Հերակլը «...ընդունակ չէր հրապուրվելու Էմինի քաղաքական ծրագրով։ Դեռևս հզոր Օտտոմանյան կայսրությունից Հերակլը ինքը այն ժամանակ վախե-

նում էր և բնավ չէր մտածում նրա հետ մտնել պատերազմի մեջ հանուն հայկական հողերի ազատագրման» (258, էջ 129)։

Օսմանյան կառավարությունը, որը տեղյակ էր հայ-քուրդ-ասորական ապստամբության այս ծրագրին, դործի ձախողումից հետո 1766 թ. բանակ ուղարկեց Մուշի Մահսուդ բեկի դեմ որպես ըմբոստի։ Թուրքական պատժիչ զորքերին հրամայվեց քանդել Ալադդին բեկի տան բոլոր ամրոցները և կտրել Մահսուդ բեկի գլուխը։ Արշավանքի թիրախներից մեկն էլ սուրբ Կարապետ վանքի եպիսկոպոսն էր։ Թուրքական բանակի մի սպա մեկնեց Մուշ, որպեսզի ըստ Կոստանդնուպոլսից տրված հրամանի ձերբակալի Հովնան եպիսկոպոսին և տանի մայրաքաղաք։ Սակայն վերջինիս հաջողվեց խուսափել ձերբակալումից և փախչել Բալու (127, էջ 155)։

Ինչպես տեսնում ենք, XVIII դարի երկրորդ կեսին Օսմանյան կայսրությունում վերստին սկսված սուր քաղաքական, տնտեսական և սոցիալական ճգնաժամն իր արձագանքներն ունեցավ ոչ միայն կայսրության համեմատաբար զարդացած եվրոպական նահանգներում, այլև արևելյան շրջանների ամենախուլ անկյուններում։ Թեև այդ պետությունը չէր նպաստում իր տարածքում բնակվող ժողովուրդների տնտեսական ու մշակութային մերձեցմանը, ավելին, ամեն կերպ խոչընդոտում էր այդ պրոցեսին, արգելքներ հարուցելով ճնշված ժողովուրդների զարդացման ճանապարհին, սակայն, արնուհանդերձ, իրենց ազատագրության պայքարի ընթացքում այդ ժողովուրդները ատելի օսմանյան լծի դեմ համատեղ հանդես գալու փորձեր էին կատարում։ Մերձավոր արևելքում ստեղծված միջազգային իրադրությունը ևս որոշակիորեն նպաստում էր այդ երևույթին։ Ռուսաստանը քայլ առ քայլ շարժվում էր դեպի հարավ, իրեն միացնելով Ազովը, Ենիկալեն, Կերչն ու Կինբուրնը։ 1774 թ. Քյուչուկ-Կայնարջիի դաշինքով հաղթական Ռուսական կայսրությունը Թուրքիային և Իրանին կանգնեցրեց Մերձավոր արևելքի հետ կապված հարցերի լուծման ժամանակ այսուհետև իր մասնակցությունը պարտադրելու փաստի առջև։

Արևելքում Ռուսաստանի քաղաքական դիրքի ամրապնդումը բնականաբար մեծ հույսեր ներշնչեց Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդներին՝ նրանց մղելով ազատագրական պայքարի։

Հայտնի է, օրինակ, որ 1768—1774 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծայր էին առել ինքնուրույնության ձգտող քրդերի հակակառավարական ելույթներ (459, էջ 107—109, 187, 272)։ 1777 թ. ապստամբեցին Դիարբեքիրի նահանգի Միհրանի սանջակի քրդերը, որոնց միացավ նաև տեղի հայ բնակչությունը։ Կառավարությունը ապստամբների դեմ ուղարկեց երեսուն հազարանոց մի բանակ՝ Ուզուն Աբդուլլա փաշայի գլխավորությամբ, որը, սակայն, շրջապատվելով հայ-քրդական զինյալ ուժերի կողմից, համարյա գլխովին ջախջախվեց (64, էջ 185, 223, 245)։

XVIII դարի վերջին Արևմտյան Հայաստանի հարավային շրջաններում բռնկվեց քրդական մեկ այլ խոշոր ապստամբություն, նախկինում կաթոլիկ իտալացի մի կրոնավորի գլխավորությամբ, որը հետագայում դարձել էր աշխարհական և ընդունել շեյխ Օղլու Օսլո անունը։ Նա իր առջև նպատակ էր դրել զավթել ամբողջ Փոքր Ասիան (434, էջ 317—318։ 7, էջ 430)։ 1785 թ. Հեքիարիում իրեն հռչակելով մահդի (մահմեդական մարգարե։— Վ. Բ.), նա իր շուրջը համախմբեց քրդական խոշոր զանգվածների և նրանց գլուխ անցած Արևմտյան Հայաստանում զավթեց լայնածավալ տարածք։ Իրեն հորջորջելով Մանսուր (հաղթական), նա ավերեց ամբողջ Փոքր Ասիան։ Օսմանյան կառավարությանը մեծ դժվարությամբ հաջողվեց ճնշել այդ հուժկու ապստամբությունը (431, էջ 1101։ 8, էջ 305—306)։

Այսպիսով, 1787—1791 թթ. ռուս-թուրքական պատերազմում կրած ծանր պարտությունը, Ֆրանսիական բուրժուական մեծ հեղափոխությունից հետո եվրոպական տերությունների ճնշումը և նրանց գաղութային քաղաքականության ուժեղացումը, «արևելյան հարցի» սրումը և այլ գործոններ, էլ ավելի ճգնաժամային դարձրեցին բազմազգ Օսմանյան կայսրության վիճակը։ Թուրքիան XVIII դարի 90-ական թվականներին իր պատմության նոր շրջանը թևակոխեց նաև ներքին հակասություններից ծվատված։

XIX դարի սկզբին քրդերը ցրված էին Իրանից մինչև Փոքր Ասիայի խորքերը և հարավում՝ մինչև Միջագետք, սակայն չունեին տարածքային որևէ ընդհանրություն։ Այդ հսկա տարածքում նրանք ապրում էին ցեղերով, որոնց մեծ մասը միավորված էր ցեղային միություններ՝ աշիրեթների մեջ։ Գո-

յություն ունեին նաև բազմաթիվ թաիֆեներ, որոնք պահպանում էին իրենց գոյությունը, չմտնելով ցեղային միավորումների մեջ։ Ցեղը կառուցվում էր հիմնականում արյունակցական կապերի հիմքի վրա, թեև դա միշտ չէ, որ պարտադիր էր։

Ընդհուպ մինչև XIX դարի վերջը քրդերի ճնշող մեծամասնությունը քոչվորներ կամ կիսաքոչվորներ էին, որոնք գլխավորապես զբաղվում էին անասնապահությամբ, մասնավորապես ոչխարաբուծությամբ (169։ 288, էջ 6)։ Սակայն առկա էր նաև հողագործությամբ զբաղվող նստակյաց բնակչություն, որը կոչվում էր ռայա կամ ռայաթ[2]։ Սրանք գլխավորապես զբաղվում էին երկրագործությամբ, հատիկային կուլտուրաների մշակմամբ, բանջարաբուծությամբ, ինչպես նաև արոտավայրային անասնապահությամբ։

Նստակյաց քրդերը, համարյա առանց բացառության, ենթարկվում էին քոչվոր ցեղերին, որոնք նաև քրդական հասարակության արտոնյալ մասն էին։ Բացի այդ նստակյաց քուրդ բնակչությունը պարտավոր էր ծառայել ցեղերի առաջնորդներին, մտնելով նրանց զինված ջոկատների մեջ (474, էջ 430—431)։

Քոչվոր քրդերի մեծամասնությունը սովորաբար մտնում էր այս կամ այն ցեղային միավորման մեջ։ Մի շարք ցեղերի առաջնորդներ իրենց տիրապետության տակ միավորում էին բազմաթիվ ցեղերի։ Արոտավայրերի համար ցեղերի միջև մղվող անընդհատ պայքարի, ավատական այս կամ այն տան տիրապետությունը ռազմական ճանապարհով մյուսների վրա տարածելու ձգտումը, արյան վրիժառությունը և այլ ներքին գործոններ առաջ էին բերում ցեղերի հաճախակի տրոհում ու քայքայում և ստեղծվում էին ցեղային նոր միավորումներ։ Յուրաքանչյուր աշիրեթում կար ցեղային ազնվականություն (թոռուններ), որի ավագ անդամը ճանաչվում էր աշիրեթապետ և իր ցեղակից հպատակների նկատմամբ ուներ համարյա անսահմանափակ իշխանություն։ «Ցեղի առաջնորդը հանդիսանում էր իսկական նահապետական բռնակալ... նա ըստ իր հայեցողության տնօրինում էր ցեղի ցանկացած անդամի սեփականությունն ու կյանքը» (294, էջ 193)։

Ցեղապետերի ուժը և հզորությունը նրանց զինված ջոկատներն էին (ղուլամները), որոնք կազմված էին ցեղի շարքային անդամներից։ Ցեղերի ռազմատենչությունը պայմանա-

վորված էր քոչվորական կենցաղի ծանր պայմաններով, տոհմացեղային կացութաձևի առանձնահատկություններով։ Քրդերը միշտ զինված էին և համախմբված իրենց ցեղային առաջնորդների շուրջը (291, էջ 72)։ Սակայն ցեղերի շարքային անդամները ցեղապետերից կիսաճորտական կախվածության վիճակում էին և անվերապահորեն ենթարկվում էին նրանց։ Սակայն հարկ է նշել, որ շարքային քրդերի համար այդ ճորտական վիճակը «նշանակալիորեն մեղմանում էր ազգակցական զգացման և ցեղային շահերի ընդհանրության գիտակցության շնորհիվ» (304, էջ 140)։

Հողագործ քրդերը քրդական հասարակության ամենաընչազուրկ մասն էին կազմում (294, էջ 198)։ Նրանք ենթարկվում էին կրկնակի շահագործման, ինչպես իրենց աշխարհիկ և հոգևոր վերնախավի, այնպես էլ օսմանյան կառավարության կողմից։ Ընդ որում, ռայաները իրենց սոցիալ-տնտեսական դիրքով ավելի մեծ կախման մեջ էին կառավարությունից, քան աշիրեթային քրդերը։

Քրդերի սոցիալ-տնտեսական և ռազմաքաղաքական կյանքում կարևորագույն դերը պատկանում էր քոչվոր քրդերին։

Ռուս զինվորական Ա. Կարցովը նշում է. «Քրդստանի ճակատագրում ռայաթները դժվար թե կարողանան խաղալ որևէ դեր. վճռական ձայնը միշտ պատկանելու է քոչվորական և կիսաքոչվորական աշիրեթների ավագանուն» (267, էջ 22—23)։ «Քոչվոր ցեղերի առաջնորդներն իրենց տրամադրության տակ ունեին ուժեղ ջոկատներ, որոնց վրա հենվելով իրականացվում էր նստակյաց բնակչության արտատնտեսական հարկադրանքը։ Հենց նրանք էլ պաշտպանում էին վերջիններին այլ ցեղերի հարձակումներից և ավազակային ասպատակություններ էին կատարում ուրիշների տիրույթների նկատմամբ» (288, էջ 58—59)։

XIX դարի սկզբին Արևմտյան Հայաստանի տարածքում ապրող քրդական ցեղերի մեծ մասը դեռևս գտնվում էր տոհմացեղային, նահապետական հարաբերությունների աստիճանում։ Ընդ որում, հասարակական զարգացման այդ մակարդակի վրա էին գտնվում ոչ միայն քոչվորական ու կիսաքոչվորական ցեղերը, այլև նստակյաց բնակչության զգալի մասը։ Նշված շրջանում նկատվող երևույթներից մեկը այն էր, որ քոչվոր ցեղերի մի մասը անցնում էր նստակեցության։ Ընդ որում,

անցումը քոչվորական կյանքից նստակեցության տեղի էր ունենում միջանկյալ, կիսաքոչվորական փուլն անցնելու միջոցով (294, էջ 201)։

Իր տիրապետության հիմքերը պահպանելու համար քրդական ցեղային վերնախավը շահագրգռված էր ցեղերի միջև պահպանել տոհմացեղային հարաբերությունները, «որովհետև տոհմացեղային կապերի առկայությունը երաշխիք էր հանդիսանում նրանց ռազմական, հետևաբար նաև տնտեսական գերիշխանության պահպանման համար շրջակա շրջանների խաղաղ բնակչության նկատմամբ» (248, էջ 30)։

Անհրաժեշտ է նշել, որ քրդերի մոտ ցեղային միության առկայությունը ոչ միայն այդ ժողովրդի մոտ գոյություն ունեցող սոցիալ-տնտեսական հարաբերությունների հետևանք էր, այլև Օսմանյան կայսրության թույլ կենտրոնացվածության։ Դա նկատի ունի Ա. Մ. Կոլյուբակինը նշելով, որ «քրդերի ցեղային կառուցվածքի գլխավոր հենարանը հանդիսանում է հենց իր՝ կառավարության թուլությունը» (269, էջ 75—76)։

Զափազանց լայն էին քրդական ցեղային վերնախավի առանձնաշնորհումների ու իրավասությունների շրջանակները։ «Թեև քրդերը Թուրքիայի և Պարսկաստանի հպատակ են համարվում,— գրում է Հ. Առաքելյանը,— բայց ժողովրդի կառավարությունը ազնվական դասի ձեռքում է։ Յուրաքանչյուր ցեղապետ իր ցեղի տերն է և ինքնիշխան կառավարիչը, դատավորը։ Ցեղապետերն իրանք ուղղակի վճարում են տերությանը մի որոշ հարկ, այնուհետև ժողովրդի ներքին գործերի կարգադրությունը, դատավորությունը իրան, աղային է վերաբերում. յուրաքանչյուր աղա (աղայությունը ժառանգական է) կամ ցեղապետ հավաքում էր իր գավառի հարկերը, տուրքերը, որոշում է նրանց քանակությունը, չափը, և հետո ինքը վճարում է տերությանը որոշ հարկ մի մասը փողով, մի մասը բերքով» (17, էջ 150)։

Բազմազան էր նաև քրդերի կրոնական դավանանքը։ Նրանց հիմնական զանգվածը դավանում էր ուղղափառ իսլամ՝ սուննիականություն։ Սակայն նրանցից շատերը հետևելով սուննիզմի շաֆիական աղանդին, դավանաբանական առումով որոշակի տարաձայնություններ ունեին սուննիզմի խանիֆիթական աղանդին պատկանող Թուրքերի հետ։ Կրոնական այդ տարաձայնությունները որպես կանոն ընդունում էին քաղաքական

նրանգ, տեղիք տալով քրդական զանգվածների և Թուրքական պետականության միջև լուրջ բարդություններին։ «Հանրահայտ փաստ է,— գրում է Վ. Ֆ. Մինորսկին,— որ հենց այդպիսի մանրուքները կարող են առաջ բերել անհաշտ պառակտումներ» (290, էջ 21)։

Բնակվելով դավանակից մահմեդական Թուրքերի զանգվածի մեջ, սուննի քրդերը անխուսափելիորեն տոգորվելու էին մահմեդական ֆանատիկոսության զգացումներով, որովհետև «...ասիական Թուրքիան, չնայած իր բնակչության փոքրաթվությանը, այնուամենայնիվ կազմում է Թուրքական ազգին պատկանող ֆանատիկոս-մահմեդականների չափազանց համախմբված մի զանգված...» (147, էջ 5)։

Չպետք է մոռանալ, որ Օսմանյան կայսրությունում ոչ թե ազգը, այլ կրոնն էր քաղաքականության հիմնական գործոնը։

Քրդերի մեջ որոշ տոկոս էին կազմում նաև մահմեդական կրոնի շիա աղանդի հետևորդները, որոնք գլխավորապես բնակվում էին իրանական Քրդստանում։ Ի դեպ, շիա և սուննի քրդերի միջև ևս տակա էին լուրջ տարաձայնություններ, որոնք չէին սահմանափակվում լոկ կրոնադավանաբանական տարաձայնություններով, այլ հաճախ դառնում էին անհաշտ թշնամանքի պատճառ։

Կային նաև եզիդականություն դավանող քրդեր, որոնց անվանում էին նաև շեմսիե։ Եզիդականության ծագման արմատները առ այսօր գիտության համար որոշակի չեն։ Այդ առթիվ գոյություն ունեն տարբեր, հաճախ ծայրահեղ կարծիքներ։ Գիտնականները մերթ այն կապում են հուդայականության, մերթ հին իրանական հավատալիքների, մերթ զրադաշտականության հետ, ոմանք եզիդներին վերագրում են արաբական ծագում, ոմանք պարսկական և այլն։ XIX դարի հայ որոշ հեղինակներ եզիդներին համարում էին հայկական եկեղեցուց տրոհված հերետիկոսներ։ Այս իսկ տեսակետից առավել առեղծվածային է եզիդների դավանանքը, որը պարուրված է խորհրդավորության մշուշով։ Գիտությունն այդ մասին իր տրամադրության տակ դեռևս սպառիչ տվյալներ չունի։ Դա պայմանավորված է նրանով, որ եզիդները հարատևորեն կողմնակի աչքից թաքցրել են իրենց դավանանքի ծեսերն ու խորհուրդները։

Գիտության մեջ հայտնվել են նաև կարծիքներ այն մասին, որ եզիդները առնչություն չունեն քրդերի հետ, որ նրանք կազմում են միանգամայն առանձին ժողովուրդ։ Եզիդական համայնքը հիմնված էր կաստայական-աստվածաբանական սկզբունքի վրա և նրան բնորոշ էր ինքնամփոփությունն ու մեկուսացվածությունը, ինչպես նաև կաստայական կենսաձևը։

Եզիդական համայնքը խիստ սակավաթիվ էր, սակայն նույնպես ցրված էր մեծ տարածության վրա։ Եզիդի քրդերը բնակվում էին գլխավորապես Մփշագետքի դաշտերից հյուսիս Սինջարի լեռներում, Մոսուլում, Հաքյարիում, բայց հանդիպում էին նաև այլ վայրերում, մասնավորապես Վանի և Էրզրումի բարձրավանդակների վրա, Իրանում, իսկ ավելի ուշ հայտնվեցին նաև Անդրկովկասում (126, էջ 38—39։ 227)։ Եզիդների դավանանքին հետևող քրդերի նկատմամբ մահմեդական քրդերը վերաբերվում էին անհաշտ թշնամանքով։ «Քուրդ մահմեդականների ատելությունը եզիդների նկատմամբ,— գրում էր Ա. Մ. Կոլյուբակինը,— արդարև ապշեցուցիչ է։ Քրիստոնյաների նկատմամբ հանդուրժողաբար վերաբերվող հայդերանլի, ջելալի, զիլանլի, հասանանլի, միլանլի, թողուրի և այլ ցեղերը խորապես ատում և արհամարհում են եզիդներին, նրանց համարելով իրենց ոխերիմ թշնամիները և միշտ պատրաստ լինելով հասցնել նրանց որևէ վնաս» (269, էջ 84)։ Մահմեդական քրդերի մի կողմից, և եզիդի քրդերի միջև մյուս կողմից, գոյություն ունեցող ատելությունն էր գլխավոր պատճառներից մեկը, որ վերջիններս ունեին առանձնահատուկ հարաբերություններ հայերի հետ, հաճախ նրանց հետ համատեղ հանդես գալով մահմեդական քրդերի հարստահարությունների ու բռնությունների դեմ։

Առհասարակ պետք է նշել, որ հայ-քրդական հարաբերություններում կրոնի դերը մեծ է եղել։ Մահմեդական կրոնը, որի մեջ դարերի ընթացքում ամփոփվել է մահմեդական աշխարհի համարյա ամբողջ մտավոր-բարոյական կյանքը, որը մահմեդականներին խստորեն բաժանում է ամբողջ երկրագնդի այլակրոն տարրերից և քարոզում է պայքարել անհավատ գյավուրների դեմ մինչև նրանց լրիվ ոչնչացումը կամ ենթարկեցումը, չէր կարող չունենալ իր խոշոր ներգործությունը մանավանդ մի ժողովրդի վրա, որն ապրում էր դեռ հովվական կյանքով, նահապետական-ցեղային զարգացման մակարդակի վրա։

Իսլամը «անհավատներին դնում է օրենքից դուրս և ստեղծում է անընդմեջ թշնամության վիճակ մահմեդականների ու անհավատների միջև» (148, էջ 167)։ Իսլամի կողմից հավատացյալների և անհավատների միջև խստիվ սահմանազատման անցկացումը ֆրանսիացի պատմաբան Պոլ Ժանտիզոնի արտահայտությամբ վերջին հաշվով ունենում էր այն հետևանքը, որ «անհավատները» երբեք չէին կարող դառնալ քաղաքացիներ բառի լրիվ իմաստով։ Նրանք մնում էին որպես ստրուկներ (421, էջ 203)։ Անդրադառնալով մահմեդականների իրավական դրությանը Կ. Մարքսը նշում է. «Ինչպիսի սոցիալական վիճակ էլ նա ունենար, պատկանում էր արտոնյալ կրոնին ու աղգությանը, միայն նա՛ իրավունք ուներ զենք կրելու, և ամենաբարձր դիրք ունեցող քրիստոնյան պարտավոր էր հանդիպելիս ճանապարհը զիջել հասարակության ցածր խավին պատկանող մահմեդականին» (147, էջ 6)։

Ե՛վ օսմանյան կառավարության, և՛ քրդական ցեղային վերնախավի կողմից իսլամը օգտագործվում էր հայ ազգաբնակչության նկատմամբ իրենց տիրապետությունը պահպանելու և ամրապնդելու համար։

XIX դարի սկզբին քրդական ցեղերի տնտեսությունը հիմնականում բնամթերային էր։ Ճիշտ է, որոշ շրջաններում նրանց արտադրանքը սկսել էր արդեն ձեռք բերել նաև ապրանքային բնույթ (գորգագործություն, բրդյա գործվածքների արտադրություն, տեղական հումքի վաճառք և այլն) (300), սակայն, այնուամենայնիվ, գերակշռողը բնամթերային քոչվորական տնտեսությունն էր։ Իսկ այդ պայմաններում քրդական ցեղերը ի վիճակի չէին առանց եկամուտների հավելյալ աղբյուրների ապահովել իրենց սննդամթերքով և գոյության համար անհրաժեշտ այլ միջոցներով։

Քրդական ավատական վերնախավը՝ աղաները, բեկերը և այլն կազմում էին քրդական հասարակության պորտաբույծ-պարազիտային մասը. աշխատանքը խորթ էր նրանց համար։ Նրանք բնավ չէին զբաղվում հանրօգուտ որևէ գործով. ո՛չ հողագործությամբ, ո՛չ առևտրով և ո՛չ էլ արհեստներով (327, էջ 13)։

Այսպիսով, քրդական վերնախավի հարստացման աղբյուրը նրա ձեռքում կենտրոնացված հողերն ու անասուններն էին, հպատակ ցեղերի շահագործումը, պատերազմները, ավարառու-

թյունը, նստակյաց հողագործ բնակչության շահագործումն ու կողոպուտը։ «Այդ երևույթը,— գրում է Մ. Ս. Լազարևը,— բնորոշ է Ասիայի մյուս ժողովուրդների համար ևս (և ոչ միայն Ասիայի), որոնք գտնվում էին հասարակական զարգացման այն նույն աստիճանի վրա, ինչ քրդերը (օրինակ արաբ-բեդվինները, աֆղաններին, թուրքմենները)։ Սակայն քանի որ քրդերն ապրում էին նստակյաց բնակչության հետ խառն, նրանց մոտ (ի հակադրություն, ասենք, Արաբիայի բեդվինների) ավելի մեծ տարածում գտան ոչ թե միջցեղային բախումները, այլ խաղաղ գյուղացիների կողոպուտը» (273, էջ 37—38)։ Իսկ նստակյաց խաղաղ բնակչության մեծ մասն այն ժամանակ «բաղկացած էր հայկական և նեստորական դավանանք ունեցող քրիստոնյաներից, որոնք ըստ անգլիական հյուպատոս Թեյլորի վկայության, որն այդ վայրերն էր այցելել 1860 թ., հանդիսանում էին երկրի միակ աշխատող և արտադրող ուժը» (294, էջ 221)։

Բացի ավարից ու կողոպուտից, քրդական ցեղային ավազակու հայ հողագործ բնակչության շահագործման ձևերից մեկը հարկագանձումներն էին։ Որպես կանոն Արևմտյան Հայաստանում հողային հարկի (աշար) գանձման իրավունքը հիմնականում պատկանում էր քրդական ավատատերերին։ Բացի պետական հարկերից, քուրդ հարկահավաքները բռնի կերպով հայերից գանձում էին նաև այլ կամայական հարկեր։ Քուրդ ավատատերը գյուղացուն հատկացնում էր նաև դրամ կամ ցորեն, հետագայում նրանից բազմապատիկ հետ գանձելու պայմանով։ Այդ համակարգը կոչվում էր սելեմ կամ սելեֆ, որը քրդական բեյերին հսկայական եկամուտներ էր բերում։ Դրամը հատկացնող ավատատերը կոչվում էր սելեֆդար։ Հայ, քուրդ կամ ասորի ռայան ավատատիրոջից ստանալով դրամ, սերմ, քարշող անասուններ և այլն սկզբում դառնում էր մարաբա, որը կիսաճորտական վիճակ էր, իսկ երբ կորցնում էր իր հողակտորը, պարզապես դառնում էր ճորտ, պահպանելով սակայն անձնական ազատությունը։ Սակայն մարաբայությունը տարբեր վայրերում, նայած տեղական պայմաններին, ավանդույթներին և այլն տարբեր էր։ Ավելին, մարաբայության պայմանները ըստ ժամանակի, տեղի և ավատատիրոջ հեղհեղուկ տրամադրության կարող էր ռայայի համար կտրուկ փոփոխության ենթարկվել։ Կային մարաբաներ, որոնք մշակում էին

բեկի հողը, դառնալով նրա «մարդը», ճորտը։ Իսկ կային նաև մարաբաներ, որոնք ունեին իրենց երկրագործական գործիքները, քարշող անասունները և այլն, և վարելով ու ցանելով բեկի հողերը աշար (տասանորդ) էին վճարում պետությանը, իսկ բեկին նրա հասանելիք հարկը՝ նոգաանը։ Այս տիպի մարաբան ևս պարտավոր էր իր ընտանիքով հանդերձ բեկի կամ աղայի համար կատարել տնային կամ դաշտային աշխատանքներ, առանց որևէ վարձատրության (97, էջ 302)։

Այսպիսով, ըստ էության, մարաբաները ոչ պաշտոնական ճորտեր էին, առանց որևէ իրավունքի և զուրկ պետության հովանավորությունից։

Անառարկելի է, որ Արևմտյան Հայաստանում առկա էին ճորտատիրական կարգերը, ընդ որում միջնադարին բնորոշ ամենածանր ձևով։ Արտառոցն այն էր տակայն, որ թուրքական իշխանություններն աշխատում էին անփոփոխ վիճակում թողնել քուրդ ավատատերերի և հայ գյուղացիության միջև եղած հարաբերությունները, որովհետև քրդական ավատատերերի գյուղացիությունից կողոպտած դրամի մի մասը զարտուղի ճանապարհով մտնում էր նրանց գրպանը։

Աշիրեթապետի համար, որը հսկայական հողատարածություններ ուներ, սակայն չգիտեր և չէր էլ ցանկանում զբաղվել երկրագործությամբ, հայ հողագործը հարստության անսպառ աղբյուր էր. «Քիւրտը որս էր անում կամ կռիւ, իսկ հայը նրա համար հաց էր վաստակում, տան ծառայութիւն էր անում ձրիաբար, աղայի տան ամէն պէտքերը հոգում անվարձ, աղայի համար գնում էր Վան կամ Կարանի (պարոկական սահմանագլուխ։— Վ. Բ.) գնումներ անելու, նրա համար սուրհանդակութիւն էր անում, տօն օրերին աղային նուէրներ էր տանում և այլն և այլն» (47, էջ 26)։

Արևմտյան Հայաստանում կառավարական տուրքերը սովորաբար գանձվում էին հայ գյուղացիներից, մինչդեռ գոչանը (ստացագիր) տրվում էր տվյալ շրջանի բեկի կամ աղայի անունով (48, էջ 374)։ Գերմանացի ճանապարհորդ Մյուլլեր Սիմոնիսի վկայությամբ, Բոհթանում քրդական աղաները հայ գյուղացիներից բնամթերային հարկերն այնպիսի չափերով էին գանձում, որ նրանք ստիպված էին լինում միայն փախուստով փրկվել (449, էջ 237)։ Կոռավճարից (օլամ կամ անգարիա) և բնամթերային հարկից բացի հայերը պարտավոր էին քրդական

ավատատերերին և կառավարությանը մուծել նաև դրամական հարկ։

Վերջին հաշվով մարաբայության սիստեմը հանգեցնում էր գյուղացիության հողազրկմանը։ Բացի այդ, թուրքական օրենսդրության մեջ գոյություն ուներ մի հոդված, ըստ որի, եթե մեկը տասը տարուց ավելի տիրեր որևէ կալվածքի, այն դառնում էր նրա սեփականությունը։ Այդ օրենքի համաձայն քրդական քոչվորական ցեղերի ավագանին աստիճանաբար ձեռք էր բերում հայ բնակչությանը պատկանող հողերը, արոտատեղերը և այլն։

Քրդական ավատատերերից հայ գյուղացիության ճորտային կախվածությունը կոչվում էր «քյաֆիրություն»[4] կամ «խաֆիրություն», որը Ռ. Բեկգուլյանցը բնորոշում է որպես «կամայականություն ու բռնություն», քրդական բեկերի կողմից իրագործվող անարդարացի հարկագանձում (225, էջ 74)։ «Հայերի և քրդական շեյխերի միջև ստեղծված հողային հարաբերությունները,— շարունակում է Ռ. Բեկգուլյանցը,— հիշեցնում են միջնադարյան ավատական կոմսերի ու բարոնների հարաբերությունները իրենց հողերի վրա ապրող գյուղացիների նկատմամբ»։ Այնուհետև նա նշում է, որ Արևմտյան Հայաստանում քրդական բեկերը պինդ կառչել են խաֆիրության իրավունքից և ոչ մի կերպ չեն ցանկանում զրկվել նրանից (225, էջ 75—76)։

Բացի վերը նշված տնտեսական շահագործման ձևերից, գոյություն ունեին նաև նստակյաց հողագործ բնակչությանը շահագործելու բազմապիսի այլ ձևեր։ Դրանցից էր, օրինակ, այսպես կոչված ղշլաղայությունը, որը, ինչպես և նախնական խաֆիրությունը, ավատական հարաբերությունների պարզունակ ձև էր (83, էջ 73)։ Խ. Աբովյանը ղշլաղայությունը բնութագրում է հետևյալ կերպ. «Խոտառատ լեռներից և հովիտներից իջներուց հետո, նրանք (քրդական ցեղերը։— Վ. Բ.) իրենց անհամար ոչխարների և եղջերավոր անասունների հոտերը ձմռան խիստ և երկարատև ամիսներին պատսպարում էին հայերի մոտ, առանց որևէ վարձատրության։ Դրա համար էլ սրանք ստիպված էին տարվա պատշաճ եղանակին անչափ կեր ու ձմեռվա պաշար պատրաստ պահելու, որպեսզի ազատ մնային նրանց զարհուրելի վրեժխնդրությունից։ Ո՛չ մի օրենք, ո՛չ մի իշխանություն չէր կարող պաշտպանել սրանց այդ ճնշու-

մից։ Ամենաթեթև դիմադրությունը հատուցվում էր ամենավայրագ դաժանությամբ» (2, էջ 248)։

«Ամբողջ ամիսներ ապրելով հայկական գյուղերում,— գրում է Ա. Մ. Կոլյուբակինը,— և նրանց վրա դնելով բազմապիսի հարկեր ու տուրքեր, նրանք (քրդերը։— Վ. Բ.) պատրաստ էին ամեն մի հարմար դեպքում կողոպտել գյուղացիներին, քշել տանել անասունների հոտը, այրել խոտը, անասուններին արածեցնելով փչացնել դաշտերը և այլն» (269, էջ 133)։

Ղշլաղայությունից բացի գոյություն ունեին արտատնտեսական հարկադրանքի այլ ձևեր ևս։ Հայ մարաբաները պարտավոր էին ձրի աշխատել բեկերի համար, զանազան ծառայություններ մատուցել, նրանց ապրանքները և վրանները ձրի տեղափոխել, որսորդության գնալու ժամանակ նրանց տրամադրել ձիեր և տղամարդիկ։ Այս կամ այն բեկի աղալըխի սահմաններում մնող գյուղերից հարսնացու վերցնողը պարտավոր էր բեկին վճարել բաճ (փրկագին)։

Որպես խաֆիրության տուրք աշիրեթապետերը հայերից նույնիսկ հագուստի կտոր էին պահանջում, ավելին, ստիպում էին վճարել նաև կարելու վարձը (406, էջ 193)։ Ոչ մի ռայաթ, առավել ևս հայ, իրավունք չուներ բեկին կամ աղային ներկայանալ առանց նվերի։ «Գերի տեր խաֆիրներ՝ երբ մանչ ծնանելու լինին, հանձնյուր ճորտի տունեն ոչխարով և գառամբ աչք լուսի պիտի երթան, աղայի զգեստացու պիտի տանին, այնինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մեջ կգտնվին։ Երբ պատանեկության հասնի, զենք պիտի պատրաստեն անոր։ Կին առելու ատենը՝ ղալան (պաշլըխ) պիտի տան հարսնացուի ծնողաց և հարսանյաց պիտույքը պիտի պատրաստեն։ Եթե մեռանիլ պատահի՝ ոչխար, յուղ, պանիր և այլն տանելով կը մխիթարին զխաֆիրները։ Բայց ընդհանուր ազգության նախատինք այն կետն է, որ նախապետազն հայոց պարկեշտության առագաստի հարսներ և սրբության քողի ներքև սնած աղջիկներ՝ այսօր հոլանի եղած խաֆիրներու տան մեջ իբրև հարճ օրերով ձավարը, կորկոտը շինելու, լաթը լվանալու և կարկատելու ապասարկություն կընեն՝ լոին արտասուք։ Եվ անոնց կըլկըլի արտերը քախնելու շաբաթներով կաշխատին մերկ անձամբ և բոկ ոտամբ, արևակեզ և փշահար եղած՝ «զիրենց կանաչ արևը կողբան, զիրենց եավար աստղը կանիծանին»։ Քրիստոս պատարագող քահա-

նայի սրբագործ ձեռքը մատուցված պատարագուցի լումանե-
րեն՝ խաֆիրներու բաժին պիտի հանվի։ Մանավանդ քահանա
չգտնված գյուղերը պատարագի երթացող քահանայն՝ յուր ըն-
դունած նվերներեն իբրև սոսկ արտոնություն պատարագի բա-
ժին պիտի տա անոնց։

Հայերու ոմանց կիները՝ եթե ամուլ լինին կամ մանչ զա-
վակ չծնանին, խաֆիրները բռնի երկրորդ կին մը առնել կու-
տան, որպեսզի զավակ յարուցանելով տարեկան տուրքը տալու
յաջորդեն» (108, 1872, № 1239)։

Գոյություն ուներ նաև սուրեան կամ հաշտության գին
հարկատեսակը, որը քուրդ բեկերի կողմից գանձվում էր հայե-
րի հետ հաշտ ապրելու համար (114, 1889 թ., № 4—5, էջ 442)։
Քուրդ ավատատերերի կողմից լայնորեն կիրառվող կամայա-
կան հարկերից մեկն էլ այսպես կոչված գյավուրի հարկն էր,
որը նույնիսկ ստիպված էին վճարել հայ հոգևորականները
(499, էջ 112)։ Այս հարկատեսակի իրականացման արդարաց-
նող հիմքն այն էր, որ հայերը «անհավատ», «գյավուր» են։

Հայ գյուղացիությանը կողոպտելու ձևերից մեկն էր նաև
նրանց ուրիշ բեկերից «պաշտպանելու» համար հարկ հավա-
քելը։ Առհասարակ նստակյաց բնակչությունը և առաջին հեր-
թին, իհարկե, հայերը քոչվորների ավերիչ հարձակումներից
իրենց ապահովելու համար աշիրեթապետերին վճարում էին
հատուկ հարկ։ Ընդ որում, աղաներն իրենց մարաբա հայերին,
որոնց անվանում էին ֆելլա[5], պաշտպանում էին այլ ցեղերի
հարձակումներից ու թալանից իբրև իրենց գույքը, ստացված-
քը։ «Եւ երբ քիւրտ աղա մը յարձակէր ուրիշ քիւրտի մը հայուն
վրայ, այդ միւս քիւրտն ալ՝ իբր փոխ վրէժ, կը յարձակէր դի-
մացինին հայուն վրայ, այնպէս որ՝ երկու կողմեն տուժողը
միշտ հայը կըլլար» (29, էջ 9)։ Աշիրեթական արյունախանձ
ցեղերի միջև կռիվների ժամանակ հայերը պարտավոր էին
կռվողներին անգամ սնունդ մատակարարել, հակառակ դեպ-
քում նրանք չէին կարող խուսափել կողմերի վրիժառությունից
(97, էջ 9)։

Այսպիսով, իրավունք չունենալով ինքնապաշտպանության
համար զենք կրել, հայ գյուղացիությունը կամա թե ակամա
պետք է ընկներ այս կամ այն քրդական առաջնորդի «հովանա-
վորության» տակ, նրան վճարեր «բարեկամության հարկ»,
իսկ դրամ չունենալու դեպքում՝ հանձներ նույնիսկ իր հողա-

կտորը, այդ ճանապարհով փորձելով ձեռք բերել անձնական ապահովություն։ Բացի այդ, յուրաքանչյուր հայ ընտանիք պարտավոր էր իրեն պաշտպան ընտրել որևէ մզկիթ կամ թեքքե, նրան վճարելով յուրաքանչյուր բերքի տասանորդը (47, էջ 25—26)։

Ավելորդ չէ նշել, որ Օսմանյան կայսրությունում բնակվող բոլոր քրիստոնյա ժողովուրդներից միայն հայերի վրա էր դրված քոչվոր քրդերին ձրի ձմեռային ապաստան տալու պարտավորությունը (486, էջ 108)։

Հաճախ քուրդ աղաները իբրև իրենց ինչքը, ստացվածքը իրար էին վաճառում կամ նվիրում իրենց մարաբա ճորտ հայերին։ «Պէկերը՝ ստացուածքին տէրը ըլլալով, ինքզինքին տէրը կը նկատէին նաև իրենց «մարապա»-ներու կեանքին։ Ուզած ատենին կրնային ծախել, փոխանակել կամ սպանել։ Բացարձակ ազատութիւն ունեին ընելու այն, ինչ որ կը կամենային» (48, էջ 370)։

Աշիրեթական քրդերի մոտ օրենք դարձած սովորույթ էր նաև հայ աղջիկների առևանգումը։ Որոշ վայրերում քրդական ավատատերերը սահմանել էին նույնիսկ առաջին գիշերվա իրավունք (96)։ Շարիաթի օրենքների համաձայն ամեն մի բարձրաստիճան պաշտոնյա կամ մահմեդական ճանապարհորդ իրավունք ուներ ապաստանել քրիստոնյաների բնակարաններում, որոնք պարտավոր էին երեք օր պահել «հյուրին», կերակրել նրան ու նրա ուղեկիցներին, խնամել նրանց ձիերին և այլն։ Արևմտյան Հայաստանում Թուրք և քուրդ կալվածատերերը, ցեղապետերը, շեյխերը, բեկերը, զինվորական ու ոստիկանական աստիճանավորները չէին խորշում օգտվել այս օրենքից։ Նրանք գյուղերում թույլ էին տալիս կամայականություններ, բռնաբարում էին կանանց, իրենց հետ տանում աղջիկներին, բռնությամբ քշում անասուններին, գողանում կամ վերցնում էին թանկարժեք իրեր և այլն (55, էջ 60)։

Ցեղապետերը իրենց զոլամների հրոսակախմբերով ասպատակելով հայկական գյուղերը, հարյուրավոր տղաների ու աղջիկների գերում էին և վաճառում Էրզրումի և մյուս քաղաքների շուկաներում (97, էջ 258)։ Դա իսկական ստրկավաճառություն էր։ Առհասարակ հայտնի է, որ Օսմանյան կայսրությունում XIX դարում առկա էր ստրկավաճառությունը, բազմաթիվ վայրերում կային ստրկավաճառանոցներ կամ եսիր

բազարներ։ Խորհրդային քրդագետ Մ. Ս. Լազարևը նշում է, որ Արևմտյան Հայաստանում տիրապետող ֆեոդալաճորտատիրական կացութաձևի պայմաններում կային նաև ոչ մեծ քանակությամբ ստրուկներ (273, էջ 41)։ Այդ հանգամանքը հատուկ շեշտում է նաև Ա. Ս. Համբարյանը. «XX դարի սկզբին,— գրում է նա,— Թուրքիայում և Արևմտյան Հայաստանում դեռ գոյատևում էր քաղաքակիրթ աշխարհին ամոթաբեր ստրկությունը։ Շահագործելով գլխավորապես տնային աշխատանքներում, տիրապետող վերնախավը շարունակում էր վաճառել ստրուկներին, դարձնելով դա հարստության աղբյուր։ 1909 թ. երիտթուրքերը հատուկ օրենք հրապարակեցին ստրկության վերացման մասին, բայց այն չկիրառվեց կյանքում» (84, էջ 83—84)։

Ռուս արևելագետ Վ. Նիկիտինը դիտել է. «Քրիստոնյաներին քրդական առաջնորդները անվանում էին զիր խուրլի, այսինքն դեղինով (ոսկով) գնված։ Այդ արտահայտությունը չափազանց ճշգրիտ է, քանի որ նրանք գնվում և վաճառվում էին իբրև անասուններ» (294, էջ 221)։

Հատկանշական է, որ կեղեքող քրդական վերնախավի համար շատ անգամ ազգությունը ոչ մի նշանակություն չուներ։ «Քուրդ աղան խղճի նույն հանգստությամբ կեղեքում, տանջում է հայի հետ միաժամանակ նաև իրեն ցեղակից ու հավատակից քրդին»,— գրել է հայ իրականության մեջ քրդական հարցի լավագույն գիտակներից մեկը՝ Ա-Դոն (3, էջ 278)։ Պատահական չէ, որ քուրդ մարարաների մասին ասում էին՝ «հայից հայը քուրդ մարարան է», նշելով, թե ինչ աստիճանի շահագործման, զրկանքների ու արհամարհանքի էր ենթարկվում նա։ Պատահական չէր նաև այն, որ հայ և քուրդ հողագործները (ռայաները) ապրում էին հաշտ ու խաղաղ հարևանությամբ և նրանց միջև թշնամանք չկար (405, էջ 245)։

Քրդական աղաների ու բեկերի կողմից հարստահարվում էին գլխավորապես նստակյաց ռայա քրդերը։ Սակայն շարքային աշիրեթային քրդերը ևս զերծ չէին մնում դրանից։ Թուրքական աստիճանավոր Խուրշիդ էֆենդին այդ առթիվ գրում է. «...Բեյերը թաֆֆեներից իրենց օգտին հավաքում են զանազան գումարներ, ինչպես օրինակ տուժեր տարբեր արարքների համար և ընդհանրապես զանազան պատրվակներով իրենց ժողովրդից կորզում են հարկեր։ Իրենց բեյերի նկատմամբ

որևէ թաֆֆեի անհնազանդության կամ խռովության դեպքում նա նրա դեմ է շարժվում ուրիշ թաֆֆեի հետ և եթե հաղթում է խռովարարներին, ապա նրանց ունեցվածքը կողոպուտի է տալիս ու հափշտակում, և դրա համար ոչ ոքի կողմից չի ենթարկվում ոչ պատասխանատվության և ոչ պատժի» (332, էջ 219)։

Հայերի կողմից դպրոց կամ եկեղեցի հիմնելը քրդական վերնախավն ու թուրքական կառավարությունը դիտում էին որպես ըմբոստ քայլ (մուստաշուղ)։ Թեև առանձին վայրերում կային աղաներ, որոնք աշխատում էին հայ եկեղեցին ևս օգտագործել իրենց շահերի համար։ Նրանք «կուզեն, որ իրենց գիւղին մէջ եկեղէցի և քահանայ գտնուի, որպէսզի սէր, միութիւն և հնազանդութիւն քարոզէ իշխանավորներու հանդէպ» (48, էջ 361)։

Այսպիսով, քրդական ավատատերերի հայ ժողովրդի վրա դրված ծանր լուծը կասեցնում էր ինչպես նրա տնտեսական, այնպես էլ մշակութային զարգացումը։

Այդ միտքը ակադեմիկոս Վ. Բարտոլդի մոտ ստացել է հետևյալ ձևակերպումը. «Քրդերը, չնայած իրենց անառարկելի բնատուր ընդունակություններին, մնացին որպես ելուզակային ժողովուրդ, հաճախ հանդես գալով մշակույթի թշնամու դերում, հատկապես Հայաստանում» (224, էջ 240)։ Սա, անշուշտ, մի փաստ էր, որի մեղքը գլխավորապես ընկնում էր օսմանյան պետության և քրդական ֆեոդալիզմի ուսերին։ «Քրդական ֆեոդալիզմը,— գրում է Վ. Նիկիտինը,— քայքայում էր երկրի բարեկեցությունը, քանի որ այն պահպանում էր տնտեսության բնամթերային ձևերը, որոնք նպաստում էին արտատնտեսական հարկադրանքի սիստեմին. նա խանգարում էր ներքին շուկայի զարգացմանը, որը անհրաժեշտություն էր դարձել անասնապահությունը հողագործությունից անջատվելու կապակցությամբ. նա քայքայում էր քոչվորների տնտեսությունը, նրան զրկելով աշխատող ձեռքերից, որոնք ներգրավվում էին բանակի մեջ. նա քայքայում էր նաև նստակյաց բնակչության տնտեսական կյանքը, որը քարշ էր տալիս խղճուկ գոյություն, մշտական սարսափի մեջ գտնվելով ավատատերերի ավազակային ասպատակությունների նկատմամբ. միաժամանակ նա արգելակում էր նաև քոչվորների անցումը նստակեցության,

քանի որ միշտ զգում էր նրանց կարիքը որպես զինված ուժի» (294, էջ 226—227)։

Արևմտյան Հայաստանում քրդական ավատատիրության տիրապետության հիմքը այնուամենայնիվ նստակյաց բնակչությունն էր և առաջին հերթին այդ բնակչության մեծամասնությունը կազմող հայերը, որոնց վրա հատուկ ուժգնությամբ էր ծանրացած ավատատեր-ցեղապետերի լուծը։

Ա. Մ. Կոլյուբակինը նշել է. «Կիսանստակյաց քուրդը... ինքը շահագրգռված է իր երկրամասի արտադրողականության և հողագործի բարեկեցության հարցում, մինչդեռ քոչվորը հանդիսանում է իսկական վայրենի և միանգամայն անտարբեր տեղական շահերի նկատմամբ. նրա ողջ շահագրգռությունը կենտրոնանում է լեռնային արոտավայրերի վրա և նրան բնավ հետաքրքիր չէ, թե երկրամասում կա՞ արդյոք հողագործ բնակչություն, ի՞նչ է նա արտադրում, ի՞նչ քանակությամբ և այլն։ Կարիք զգալով երկրագործական արտադրության ապրանքների, նա գիտի, որ եթե ոչ մեկ վայրում, ապա մյուսում, նա կգտնի իր սահմանափակ պահանջները բավարարող ամեն անհրաժեշտ բան» (269, էջ 132)։

Դրան պետք է ավելացնել նաև, որ կիսաթափառական-խաշնարած կենցաղին հատուկ տնտեսական կյանքի ցածր մակարդակը (էքստենսիվ անասնապահություն) և սահմանափակ արտադրությունը քրդական աշիրեթներին իրենց գոյությունը պահպանելու հնարավորություն չէր ապահովում։ Իրենց համար կենսական նշանակություն ունեցող մթերքների զգալի մասը և կենցաղային ապրանքները նրանք ստիպված էին ձեռք բերել աշիրեթային կազմակերպությունից դուրս, ուրիշ ժողովուրդներից և գլխավորապես հայերից, որոնց ձեռքում էր կենտրոնացված Արևմտյան Հայաստանի երկրագործական և արհեստագործական արտադրության հիմնական մասը։

Քրդական աշիրեթները իրենց անհրաժեշտ հացի մոտ 60%-ը ձեռք էին բերում հայերից։ Եվ դա այն դեպքում, երբ իրենց տրամադրության տակ ունեին հսկայական հողատարածություններ (269, էջ 93—94)։

Այդ երևույթը առավել ցայտուն դրսևորվում էր հատկապես առևտրի և արդյունաբերության բնագավառում։ Թուրք պատմաբան Սադի Քոչաշը նշում է, որ ողջ Օսմանյան կայս-

թյունում հայերը արհեստների բազմաթիվ բնագավառներում համարյա մրցակիցներ չունեին (439, էջ 68)։

Այս բոլորից հետևում է, որ քրդական ցեղերը չէին կարող շահագրգռվածություն չդրսևորել հայ բնակչության արտադրողական գործունեության նկատմամբ։ Սա բանալի կարող է հանդիսանալ բացատրելու համար առաջին հայացքից անհասկանալի թվացող այն հարցը, թե ինչու հայերի նկատմամբ քրդական տարբեր ցեղերի վերաբերմունքի խնդրում նկատվում էր մեծ բազմազանություն։ Այդ առթիվ գրականության մեջ մենք հանդիպում ենք վերին աստիճանի ուշագրավ փաստերի։ Այսպես, շիբրանլի ցեղի քրդերը ավելի թշնամաբար էին տրամադրված դեպի հայերը, քան նրանց հարևան հասանանլի և սիփհանլի ցեղերը, իսկ ոչ մեծ մամիկան (մամիկանլի) աշիրեթը Մուշի սանջակում հայտնի էր իր բարյացկամությամբ հանդեպ հայերը և նույնիսկ այդ ցեղը հայերին գերադասում էր այլ աշիրեթների քրդերից։ Կամ Վանի վիլայեթի հյուսիսային մասում բնակվող լևի ցեղը հայերի նկատմամբ աչքի էր ընկնում ավելի արդար վերաբերմունքով, քան նրա հարևան հայդերանլի ցեղը։ Ընդ որում, հայդերանլի խոշոր աշիրեթի թոռուն կոչված ճյուղը ավելի անհանդուրժող էր հայերի նկատմամբ, քան մնացած հայդերանցիները, իսկ Վանի վիլայեթի Աբաղայի հովտի հայդերանլի քրդերը ավելի բարյացկամ էին հանդեպ հայերը, քան մնացած հայդերանցիները և այլն (269, էջ 83—84)։ Կամ. «Տավրոսի լեռներում կողոպուտներն ու բռնությունները հայերի նկատմամբ պատահում էին ավելի հաճախ, սակայն դրանց մեղավորը մեծ մասամբ ոչ թե տեղական քրդերն են, այլ եկվորները, որոնք իրենց անասունների հոտերը այդ վայրերն են քշում հարավային Քրդստանից» (269, էջ 90—91)։

Ընդհանրացնելով վերևում ասվածը պետք է նշել, որ եթե մի կողմից մրցակցային պայքարում քրդական աշիրեթները ներկայացնում էին իրար թույլ տարր, մյուս կողմից՝ շնորհիվ իրենց տրամադրության տակ եղած ռազմական կազմակերպության, նրանք ձեռք էին բերում իշխող դիրք և իրենց անհրաժեշտ մթերքներն ու պիտույքները հայթայթելու համար չէին գտնում այլ միջոց, քան կողոպուտը, որը կազմում էր «քրդական արդյունաբերության» անհրաժեշտ և «բնական» մասը։

Անտարակույս այս հանգամանքը մեծապես կասեցնում էր

քուրդ ժողովրդի տնտեսական և մշակութային առաջադիմությունը և պատահական չէ, որ XIX դարի սկզբին իր զարգացման շավղում այդ ժողովրդի մեծ մասը հաղիվ էր բարձրացել մինչև նահապետական-ցեղական կացութաձևի։ Իրավացի է Մ. Ս. Լազարևը, երբ նշում է, որ քրդերը «XIX դարի սկզբին իրենց զարգացմամբ հետ էին մնացել նույն ժամանակաշրջանում հարևանության մեջ ապրող Թուրքերի, արաբների, պարսիկների, հայերի, ադրբեջանցիների և մի շարք ժողովուրդների համեմատ» (273, էջ 29)։

Ցեղային կազմակերպությունը նաև լուրջ արգելք էր ազգային գաղափարների ծննդի, համաքրդական հայրենասիրության և քրդերի՝ որպես ժողովուրդ ձևավորելու պրոցեսի համար։ Ցեղակիցը և այլացեղը նրանց համար համանիշ էին բարեկամ և թշնամի իմաստներին։

Օսմանյան կայսրությունում հայ-քրդական հարաբերությունների հարցը ոչ թե ազգային, այլ, ըստ էության, սոցիալ-տնտեսական բնույթի հարց էր։ Հայտնի է, որ միևնույն երկրում երկու տնտեսական կացութաձևերի՝ նստակյաց և քոչվորական, առկայությունը իր մեջ կրում էր որոշակի հակասություններ և կոնֆլիկտային իրադրություն, թեև չէր բացառում նաև նրանց սերտ տնտեսական փոխկապակցությունը (328, էջ 176)։

Այդ էր պատճառը, որ միևնույն երկրում անմիջական հարևանությամբ բնակվող երկու ժողովուրդների՝ հայերի ու քրդերի համակեցությունը և նրանց փոխհարաբերությունները XIX դարի սկզբին շարունակում էր մնալ խիստ բարդ ու դժվարին։

Վ. Ֆ. Մինորսկին նշում էր, որ «կյանքը առավել պակաս ռազմաշունչ տարրերի հետ (ադրբեջանական Թյուրք-շիիթների և հայերի) անկասկած երես է տալիս քրդերին։ Ստեղծվում է երկու բարոյականություն. մեկը նրանց համար, ովքեր հարվածին կարող են պատասխանել հարվածով, իսկ մյուսը նրանց համար, որոնց Թույլությունը միայն գայթակղեցնում է դեպի հեշտ բռնությունն ու ավարը։ «Միայն մանր շահերից վեր կանգնած ամուր պետական իշխանությունն է ի վիճակի հավասարակշռելու և կարգավորելու հարաբերությունները քրդերի ու մյուս ժողովուրդների միջև, սակայն... Թուրքիայում քրդերը սիստեմատիկորեն նեղում են հայերին, իսկ այդ կոպիտ

քաղաքական քսությունը անպատիժ հարստացման հեռանկարի հետ հանդիսանում էր մի գայթակղություն, որի առջև չէին կարող դիմանալ նաև շատ ավելի քաղաքակրթված բազմաթիվ ժողովուրդներ» (290, էջ 39)։

XIX դարում քրդական ավատատերերի կողմից հայ գյուղացիության շահագործումը, հարստահարությունները և բռնությունները օսմանյան կառավարությունը ոչ միայն չէր կանխում, այլև, հակառակը, խրախուսում էր, որովհետև այդ ավատատերերի հայերի հաշվին դիզած հարստության մի մասը զարտուղի ճանապարհներով անցնում էր թուրքական իշխանություններին։ Մյուս կողմից այդ դիրքորոշումը հետապնդում էր նաև քաղաքական նպատակ։ Անտարակույս, քրդական ավատատերերի լուծը և նրանց բռնություններն անշրջանցելի էին ստեղծում երկու հարևան ժողովուրդների միջև, նպաստելով նրանց փոխադարձ հարաբերությունների լարվածությանը։ Իսկ դա թուրքական կառավարության համար երաշխիք էր Արևմտյան Հայաստանում խաղաղ վիճակ պահպանելու համար։ Քրդական աշիրեթապետերի հայերին սարսափի մեջ պահելը, թալանը, կեղեքումներն ու հարստահարությունները ձեռնտու էին օսմանյան պետությանը, որովհետև այն զրկում էր հայ ժողովրդին համախմբվելու, դիմադրելու կարողությունից։ Այդ պատճառով թուրքական իշխանությունները խրախուսում էին աշիրեթապետերի ավերող տենչը։

Այն հանգամանքը, որ հայերի ձեռքում էր կենտրոնացված առևտուրը, դրամական միջոցները և այլն ու նորածին հայկական բուրժուազիան աստիճանաբար եռանդուն գործունեություն էր ծավալում, նույնպես օգտագործվում էր թուրքական կառավարող շրջանների կողմից հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանք սերմանելու և եղածը խորացնելու համար։ Օսմանյան կառավարության նահանգական ներկայացուցիչները որպես կանոն չէին միջամտում միջցեղային կռիվներին, պատճառաբանելով, թե իրենք «անզոր» են։ Մինչդեռ փաստերը վկայում են, որ նրանք ոչ միայն շահագրգռված էին, այլ շատ հաճախ իրենք էին հրահրում արյունոտ բախումներ թշնամական աշիրեթների միջև, հետապնդելով քրդերի փոխադարձ ոչնչացման և թեղերի թուլացման նպատակ։ Այդ քսմնելի քաղաքա-

կանությունը սուլթանների կողմից դիտվում էր նաև որպես լավագույն միջոց քրդական կիսանկախ և անկախ իշխանապետերի նկատմամբ իրենց անվանական տիրապետությունը իրական դարձնելու համար (251, էջ 200։ 310, էջ 68)։

Նման քաղաքականությունը անխուսափելիորեն կասեցնում էր ցրված ու տարանջատված քրդական ցեղերի միավորումը, միաժամանակ ծանր հարված հասցնելով «Քրդստանի առանց այն էլ թույլ զարգացած արտադրողական ուժերին, նրա տնտեսությանը» (331, էջ 38)։

Թուրքական վարչությունը աշխատում էր քրդական զանգվածների մոտ հայերին ներկայացնել որպես տգրուկներ, շահագործողներ։ Մինչդեռ հայտնի է, որ աշխատավոր քրդերին կողոպտում էր «ոչ այնքան հայկական բուրժուազիան, որքան հենց իրենց բեյերն ու խաները, չհաշված թուրքական և պարսկական վարչությունը» (273, էջ 46)։

«Ազգի առաջնորդները», հատկապես Կոստանդնուպոլսի պատրիարքարանը, հիանալի գիտակցում էին, թե ինչ հրաբխի վրա է նստած արևմտահայությունը և այդ պատճառով կոչ էին անում լինել հնազանդ և չգրգռել մահմեդական մոլեռանդ ամբոխի կրքերը (121, էջ 91—92)։

XIX դարի սկզբին Արևմտյան Հայաստանը և թուրքական Քրդստանը բաժանված էին ութ փաշալիքների, որոնց նկատմամբ մինչև 40-ական թվականների վերջը սուլթանի իշխանությունը պարզապես անվանական էր։ Դրանք փաստորեն կառավարում էին առանձին քրդական իշխանապետեր, որոնց կախվածությունը կենտրոնական կառավարությունից արտահայտվում էր միայն նրանով, որ նրանք ամեն տարի սուլթանի գանձարանն էին մուծում որոշակի հարկ։ Ընդ որում, «այն շրջաններում, որտեղ տարածված էր տեղի տիրակալ-ֆեոդալների բացարձակ իշխանությունը, գոյություն ունեին իրենց իրավական նորմերը, կառավարման օրենքները, հարկային սիստեմը։ Այնտեղ, ուր թուրքական իշխանությունը դեռևս ուժ ուներ, այն միահյուսվում էր տեղական ավատատերերի ինքնավարության հետ, իրավական և սոցիալ-տնտեսական հարաբերությունները ձեռք էին բերում չափազանց բազմազան և խայտաբղետ երանգավորում։ Յուրաքանչյուր շրջան, նայած իր տիրակալի քմահաճույքին, ուներ իր օրենքներն ու կարգերը» (248, էջ 32)։

Այսպես, Բայազետի Բալյուզ փաշայի ավատական տունը իր տիրապետության տակ գտնվող շրջանը կառավարում էր ժառանգական իրավունքով, որպես միանգամայն ինքնիշխան տիրակալ, նույնիսկ հարկեր չմուծելով սուլթանական կառավարությանը։ Բաղեշի շրջանը ևս քրդական խոշոր իշխանապետություն էր, որի սահմանները տարածվում էին մինչև Վան ու Դիարբեքիր։ Նրա մեջ մտնում էին բուն Բաղեշի, Մուշի, Սասունի, Զրտրգանի, Խիզանի և մի շարք այլ շրջաններ (64, էջ 52—53)։ Բաղեշի շրջանում ընդհուպ մինչև 1849 թ. կառավարում էր քուրդ ավատատեր Շերիֆ բեյը, որն իր անկախությունը պահպանելու համար անընդհատ զինված պայքար էր մղում Թուրքական իշխանությունների դեմ (276, էջ 191—192)։ «Այս պէյը ոչ Թուրքիոյ սուլթանը կը ճանչնար և ոչ ալ Պարսից շահը։ Երկուքն ալ հավասարապէս զայն կը փաղաքշէին, քաղաքին ռազմագիտական դիրքին պատճառով, որը կը գտնուէր Հալէպի և Դաւրէժի հաղորդակցութեանց գծին վրայ» (127, էջ 79—80)։

Իր տրամադրության տակ ունենալով հսկայական քանակությամբ զինված մարդիկ, Շերեֆների տոհմը աշխատում էր ընդլայնել իր հողային տիրույթները։ Նրանց այդ անանձնական ձգտումին հագուրդ կարող էին տալ միայն հայերի հողերն ու ունեցվածքը, որոնք բռնագրավվում ու մթացվում էին էմիրի կալվածքներին (294, էջ 247)։

Վանի փաշալիքում գլխավոր քրդական իշխանապետությունը Հեքիարիի (Աղբակ) իշխանությունն էր, որը կառավարում էր Ջուլամերիկում նստող էմիրը։ Նա նույնպես չէր ճանաչում Թուրքերի գերակայությունը և բարեկամական հարաբերությունների մեջ էր Իրանի հետ (150, էջ 7)։ Այս իշխանությունը կարողացել էր իր տիրապետությունը հաստատել նաև հարևան Շատախի նկատմամբ (37, էջ 144—145)։ Թեև փաշայության կենտրոնում նստում էր Բ. Դռան ներկայացուցիչը՝ փաշան, սակայն նրա իշխանությունը զուտ ձևական էր, որովհետև իրական իշխանությունը կենտրոնացված էր քրդական էմիրի ձեռքում։ Մինչև Թանզիմաթն ընկած շրջանը քաղաքի կառավարմանը մասնակցում էին նաև հայ ամիրաները, որոնք կոչվում էին ճոճա, շորբաջի կամ օճիքեր (98, էջ 57։ 47, էջ 28)։

Ամենամեծ և ամենաուժեղ քրդական իշխանապետություններից մեկը Ջեզիրեն էր, որը մտնում էր Դիարբեքիրի էյալեթի մեջ և կառավարվում էր Բադրխանների հզոր ընտանիքի կողմից, որը ձգտում էր իր շուրջը համախմբել քրդական մնացած իշխանապետություններին, իրեն միացնել Վասպուրականի նահանգը, Տարոնն ու Բիթլիսը և այդ հսկա տարածքի վրա ստեղծել Օսմանյան կայսրությունից միանգամայն անջատ անկախ Քրդստան։

Թուրքական տիրապետությունը բնավ չէր ճանաչում նաև Դերսիմի[6] իշխանությունը։

Այսպիսով, համարյա ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում ցրված էին քրդական մեծ ու փոքր անկախ իշխանապետություններ, որոնք հրաժարվում էին ենթարկվել թուրքական թևարկությանը։

Հատկանշական է, որ քրդական ցեղերի ու ցեղային միությունների նկատմամբ ևս ռեալ իշխանությունը պատկանում էր ոչ թե Բ. Դռանը, այլ խոշոր և ուժեղագույն ցեղերի առաջնորդներին։

Եվ այսպես, XIX դարի սկզբին քրդական իշխանապետությունների իրավասության ներքո գտնվող շրջաններում հայ ժողովուրդը գտնվում էր քրդական ավատական վերնախավի լծի տակ։ Միայն առանձին շրջաններում դեռ շարունակում էին իրենց գոյությունը պահպանել հայկական կիսանկախ իշխանությունները։ Դրանք սովորաբար գտնվում էին լեռնային անմատչելի վայրերում, որտեղ թուրքական վարչությունը և քրդական ֆեոդալները ի վիճակի չէին հաստատել իրենց հսկողությունը։ «Միայն մնացած էին մի քանի լեռներ,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— որոնց վրայ հայ մարդիկ զէնքի ուժով կը պահպանէին իրենց ազատութիւնը։ Այսպէս, քանի մը լեռնային փոքրիկ զաւառներու մէջ պահուած էին հայկական կիսանկախութիւններ» (7, էջ 85)։

Այդպիսի իշխանապետություններից առավել աչքի ընկնողները գտնվում էին Սասունում, Վասպուրականի նահանգի մեջ մտնող Շատախում և Մոքսում, Բայազետի փաշայության մեջ գտնվող Սավուր վայրում, Իսյանում, Խնուսում, Ջեյթունում, Դիարբեքիրի նահանգում, Դերսիմում, Մուշի շրջանի մեջ մտնող Ճապաղջրում, Էրզրումի փաշայության մեջ մտնող Տուժիկում, Մանազկերտում և այլն։

Օսմանյան կառավարության ենթարկողական փորձերին դիմադրելու համար հայկական այս իշխանությունները ստիպված էին դաշնակցել հարևան քրդական իշխանապետությունների հետ։ Այս «...մի քանի գաւառներու հայերը, իբրեւ քաջ եւ պատերազմասէր լեռնականներ՝ ազատութիւնը կը պահէին քիւրտերուն հետ միացած»,— գրում է Ա. Ալպոյաճյանը (7, էջ 85)։

Լեռնային Հայաստանի անմատչելի բարձունքներում գոյություն ունեցող այս կիսանկախ և անկախ համայնքները, որոնք կառավարվում էին ռազմական դեմոկրատիայի սկզբունքներով (98, էջ 67), հարևան քրդական ցեղերի հետ գտել էին զինական դաշնակցության մի ձև, որի շնորհիվ և՛ քրդերը, և՛ հայերը կարողանում էին պաշտպանել իրենց ազատությունը։ «Ըստ երևույթին նման վարչակարգեր կամ կոնֆեդերացիայի նույնատիպ ակտեր են գոյություն ունեցել հայկական մյուս անկախ իշխանությունների մեջ ևս, քանի որ ամենուրեք առանց բացառության հայերն ու քրդերը խառն էին բնակվում և օսմանյան հզորությանը դիմադրվում միասնաբար, իրար հետ վարվում բարեկամաբար, փբրև զենքի հավասարազոր եղբայրներ, պաշտպանում երկու ժողովրդին հավասարապես թանկ ազատությունն ու անկախությունը» (98, էջ 78)։

Հայկական իշխանապետությունների առաջնորդները՝ մելիքները, իշխանները իրենց երկրամասերի իսկական տերերն էին. նրանց ձեռքում էր կենտրոնացած ողջ ռազմական և վարչական իշխանությունը, ատյանը (64, էջ 163)։ Եվ նույնիսկ նրանց մի մասը սեփական դրամ էր կտրում։ Այսպես, Դերսիմում, Միրաքյան իշխանության իշխաններից Միրոն հայկական տառերով և հայ թագավորների պատկերներով սեփական դրամ էր հատում (73)։

Հայ-քրդական հարաբերությունների մեջ առավել բարդ իրավիճակ էր ստեղծվել հողային հարաբերությունների հարցում։ Ինչպես հայտնի է, XIX դարի սկզբին հողօգտագործման ռազմաավատական համակարգը, որը բնորոշ էր Օսմանյան կայսրությանը, արդեն սպառել էր իրեն։ Քուրդ առաջնորդները, որոնք ժամանակին սուլթաններից հողատարածություններ էին ստացել ռազմական ծառայության, թուրք-իրանական սահմանը պաշտպանելու և այլ ծառայությունների դիմաց, այդ հողերը դարձրել էին ժառանգական՝ հյուրյումեթներ, օջաքլրքներ,

յուրդլուքներ, դառնալով դրանց ինքնիշխան դերեբեյեր։ Սուլթանը այլևս ի վիճակի չէր սեփական կամքով տնօրինելու քրդական ցեղային ավագանու տրամադրության տակ գտնվող պետական հողերի վերաբաժանման գործը։ Հյուրումեթների, օջաքլիքների և յուրդլուքների նկատմամբ պետական հեղինակությունը դարձել էր լոկ ձևական։ Ողջ Օսմանյան կայսրությունում կենտրոնախույս ձգտումների ուժեղացման պայմաններում քրդական ձորապետ-դերեբեյերի կենտրոնական կառավարությունից լրիվ անջատվելու և սեփական երկրամասի տեր ու տնօրեն լինելու ցանկությունը հասել էր աննախընթաց չափերի։

Պ. Ի. Ավերյանովը գրել է. «Քրդերը հասցրին նշանակալից չափով ազատվել Պարսկաստանի և հատկապես Թուրքիայի իշխանությունից և XIX դարի սկզբին Քրդստանի (Արևմտյան Հայաստանի։— Վ. Բ.) նշանակալից մասը փաստորեն օգտվում էր համարյա լրիվ անկախությունից, աննշան հարկերը և ռազմական միավորումները հատկացվում էին Թուրքիայի և Պարսկաստանի կառավարություններին միայն ուժի ճնշման ներքո» (150, էջ 3)։

Նման պարագաներում, երբ Թուրքական իշխանությունը դեռ իր ամբողջ ուժով հաստատված չէր Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, Բ. Դուրը ստիպված էր դիմել խուսանավելու քաղաքականությանը։ Նա «ստիպյալ կհաստատեր ու կքաշալերեր այն իշխանությունը, որ զորեղ կներկայանար, թեկուզ նա ապստամբեր, հաղթեր ու սպաներ իր ներկայացուցիչներին անգամ» (116, էջ 70)։

Ամենուրեք թափով շարունակվում էր քրդական դերեբեյերի կողմից հայերի հողերի բռնագրավումները։ Դերսիմի, Չարսանջակի, Խարբերդի, Բալուի, Արաբկիրի, Ակնի, Մալաթիայի, Դիարբեքիրի և այլ վայրերի «...հայերըն ըլ իրենց մէջ թախսիմ (բաժանում։— Վ. Բ.) էրած էին. ինչու օր ամենքս ըլ անոնց եսիր (դերի) էանք։ Հիքիմաթ (կառավարություն) չի կար... աս տեղաց հիքիմաթն ըլ իրենք էին ու թագաւորն ըլ։ ...էրկրի հողերը, ջրերը, տները, մալերն ու միլքերը պիթունն ըլ տարապակիներումն էր։ Տարապակին թէ օր ուզէր՝ մեզի կը պէյէր (պահեր), թէ օր չուզէր՝ չէր պէյէր ինչպէս հիմա ըլ. թէ օր ուզէր՝ կը մորթէր, թէ օր չուզէր՝ չէր մորթեր։ ...Հայերս տարին տասներկու ամիս՝ օլուկով ու ճուճուկով կը բանէանք,

կդատէանք մինակ անոնց համար։ Շատ հեղու (անգամ) կըլլեր օր, ե/բ/բ մէկ տարապակին մէկալ տարապակուն դէմ տուշմանութէն ունենար՝ մեզ-էրկու կո/ղմի պակերուն հայէրս-դիմաց դէմ կկայնըցընէին ու մէկմէկու դէմ ծեծիվ (կռիվ) էնել կուտային. հազկէ օր (մինչև որ) մէկ կո/ղմինը աղկէկ մի շարդուէր ու ալթ ըլլէր (հաղթվեր)։ Ե/բ/բ որ հայերուս մէջ աղկէկ հարս մի, աշխին (աղջիկ) մի, եա՝ (կամ) կըյրիճ տղայ մի օր տեսնային՝ եա՝ /ս/պաննել, եա՝ տաճկցնել պիտի տային... վար հասըլի (վերջապես), մենք պիթունս ըլ անոնց համար կապրէանք ու կաճէանք... մէկ խօսքով-մեղա՜յ, մեղա՜յ-մեր ասուաղն (աստված) անոնք էին» (16, էջ 51)։

Հիրավի, դերեբեյերի սանձարձակութիւնները, շահատակութիւնները, բռնութիւններն ու կամայականութիւնները չափ ու սահման չունեին. նրանք ստիպում էին հայ գյուղացիներին նստել դաշտի փոսերի մեջ, որպեսզի իրենք նրանց գլխի վրայով «ջիրիթ» խաղան։ Նույնիսկ հայերի տներում նրանց հացը ձրիաբար ճաշակելու համար պահանջում էին դիշ քիրասի (ատամների վարձ) (16, էջ 52—53)։

«Արարատ» ամսագիրը գրում էր, որ դերեբեյությունների շրջանում «իւրաքանչիւր գաւառաց կը տիրեր մի քիւրդ պէյ կամ շեյխ, որոյ ոչմահմետական բնակիչները իրենց հայերը կանուանեին։ Յարքունուստ կանոնաւոր տուրք հաւաքողներ չկային, իրենք բէգերը ըստ հաճոյս կստանային հասարակութիւնից, որից չնչին մաս մը ժամանակ առ ժամանակ հազիւ կը մտնէր կառավարութեան սնտուկը, մնացեալն իրենք կը կլանէին։

...Յայտնի աւարառութիւնք անպակաս էին, ամեն մի բէգի ասպատակներ կը շրջէին ոչ իւր, այլ մի ուրիշ գաւառի հայերը կողոպտելու, որ յաճախ այս պատճառաւ գաւառապետաց մէջ կռիւք կծագէին, որի հետևանքը այն կլինէր, որ յաղթանակ տանող պէյը՝ յաղթողի աշխարհը տակն ու վրայ կանէր, լիապես գոհանալով նորա հայերի կողոպուտով» (20, էջ 153։ 1889 թ., № 3)։

Անգլիացի Ջոն Մակդոնալդ Քինները, որը 1812 թ. ճանապարհորդել է Արևմտյան Հայաստանում, վկայում է, որ «Հայաստանի մեծ մասը ենթարկվում է ուժեղ փաշաների (իմա՝ քուրդ։— Վ. Բ.), որոնք անվանական կերպով էին միայն կապված Բ. Դռան հետ և արհամարհում էին նրա հրահանգները»։ Որ «հայերը հպատակ են մասամբ Թուրքերի և մասամբ քուրդ

բեկերի, սակայն հավասարապես ճնշվում էին այդ երկուսի կողմից էլ...» (437, էջ 143)։

Սոցիալական և ազգային ճնշումներից, հարստահարություններից ու կողոպուտից փրկվելու համար դերեբեյությունների շրջանում ևս ծայր է առնում արևմտահայության արտագաղթը հայրենիքից, որը ժամանակ առ ժամանակ ընդունում է զանգվածային բնույթ. «...Զուանէ գօտի մեջքունք կապած բոկ և հետի իրենց թշուառ ընտանեաց ձեռքէն բռնած յերկրէ յերկիր կածէին, յԱյրարատ, Արտազ, ի Կեսարիա, ի Ջիտտա և ի Հիճազ...» (20, 1889, № 3, էջ 37)։

Հայտնի է, որ XVI դարից սկսած արևմտահայության համար Թուրքական լծից փրկվելու միակ ելքը հայրենիքից գաղթելն էր։ Հայությունը զանգվածորեն մաշվում ու դուրս էր մղվում իր բնօրրանից։ Այդ առթիվ Լեոն բերում է հետևյալ տվյալները. Բաղեշն ուներ 25 հազար տուն ազգաբնակություն, որ սպառվելով և ուրիշ տեղեր փախչելով, դառավ 500 տուն։ Պատերազմները սպառել էին նաև Մուշի հայ ազգաբնակությունը, որ առաջ մեծամասնությունն էր կազմում քաղաքում, իսկ XIX դարի սկզբին խիստ կրճատվել էր (69, էջ 388—389)։ Ազգաբնակչության նվազման միևնույն իրականությունն էր տիրում Մանազկերտի և Բուլանխի շրջաններում։ «Այդտեղ կային 360-ից ավելի գյուղեր, մեծագույն մասամբ հայաբնակ, բայց դարի վերջերում ազգաբնակությունն այնքան ջնջվել էր, որ հազիվ 20 հատ գյուղ էին մնացել։ Իսկ Բասեն գավառի ազգաբնակությունը բնաջնջումից ազատվելու միակ միջոցն այն էր դարձրել, որ իր գյուղերը շարժական դրության մեջ էր պահում, անընդհատ փոխելով նրանց մի տեղից մյուս տեղը և այսպիսով խույս տալով քրդական և Թուրքական կեղեքումների մշտական վայրեր դառնալու դժբախտությունից» (69, էջ 389)։

Այսպիսով, դերեբեյությունների տիրապետության շրջանում հայ-քրդական հարաբերությունները գտնվում էին ծայրահեղ լարված վիճակում։ Այստեղ ազգային և սոցիալական ճնշումներն ընթանում էին կողք կողքի, լրացնելով մեկը մյուսին։ Հենց այս շրջանից սկսած հողային հարցը դարձավ ազգային հարցի անբաժան, բաղկացուցիչ մասը։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

XIX ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻ ՔՐԴԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

XVII—XVIII դարերում տնտեսական ու ռազմաքաղաքական ճգնաժամ ապրող Օսմանյան կայսրությունը թուրք պատմաբանների իսկ գնահատմամբ XIX դարի սկզբին թևակոխեց իր մայմայման և կործանման շրջանը (477, էջ 188)։ 1792—1798 թթ. սուլթան Սելիմ III-ի մտահղացած բարեփոխումները, որոնք հայտնի են նիզամի ջեդիդ (նոր կարգ) անունով, ոչինչ չտվեցին երկրին, բացի նոր հարկերից և ի վերջո ձախողման մատնվեցին։

Կ. Մարքսն ու Ֆ. Էնգելսը XIX դարի առաջին կեսի Օսմանյան կայսրությունը բնորոշել են որպես «ֆեոդալիզմի ամենացածր ու բարբարոսական աստիճանի վրա գտնվող երկիր» (147, էջ 374)։ Իր ժամանակին ծնունդ առնելով որպես «միջնադարի միակ իսկական ռազմական պետություն» (148, էջ 61), Օսմանյան կայսրությունն ընկավ փակուղու մեջ, երբ այստեղ ծայր առավ ռազմաբենային համակարգի քայքայում և անհնար դարձավ կայսրության գոյության պահպանումը թալանչիական պատերազմների և նոր տարածքային զավթումների միջոցով (289, էջ 32—33)։ Թուրքիան մուտք գործեց XIX դար որպես տնտեսապես ու քաղաքականապես հետամնաց, ավատական-կրոնական վարչակարգ ունեցող մի երկիր։

Ճգնաժամն ու անկումը անխուսափելիորեն իրենց հետ բերում էին կայսրության ճնշված ժողովուրդների կենտրոնախույս ձգտումների արագ զարգացում և թուրքական բռնատիրական լծի դեմ ազատագրական շարժումների հարաճուն վերելք։ Այդ պրոցեսն արագանում էր համընդհանուր տնտեսական քայքայման և նահանգներում կենտրոնական իշխանության դիրքերի

թուլացման հետևանքով։ XVIII դ. վերջին և XIX դ. սկզբին ողջ Օսմանյան կայսրությունում տեղի էին ունենում նահանգական փաշաների անջատվողական ելույթներ, անիշխանությունն ու կամայականությունները, ինչպես նաև ելուզակությունը հասել էին աննախընթաց չափերի։

Փոքր Ասիայում անջատվողական ավատատերերի մեջ աչքի էին ընկնում նաև քրդական ինքնիշխան ձորապետ-դերեբեյները։

Թուրքական տիրապետող շրջանները փորձում էին մեղմել ռազմաավատական համակարգի ճգնաժամը՝ առաջին հերթին ճնշված ժողովուրդների շահագործումն ուժեղացնելու հաշվին։ Քաղաքական այս գիծը օսմանյան պետությանը մղում էր երկրի արևելյան շրջաններում իր անվանական տիրապետությունը դարձնել իրական։ Դա կենսական ու անհետաձգելի մի խնդիր էր, որովհետև կառավարությանը միայն ուժի օգնությամբ էր հաջողվում Արևմտյան Հայաստանում ու Քրդստանում ինքնիշխան ձորապետ-դերեբեյերից գանձել աննշան քանակությամբ հարկեր և նրանցից ստանալ զինված ջոկատներ (150, էջ 7)։ «Օտտոմանյան կայսրությունը,— գրում էր Թուրքիայում ռազմական ծառայության մեջ գտնվող պրուսական սպա Հելմուտ ֆոն Մոլտկե ավագը,— ինչպես հայտնի է, ընդգրկում է լայնատարած երկրներ, որոնց նկատմամբ սակայն իրականում Բ. Դուռը չունի ոչ մի ազդեցություն և անկասկած փադիշահին դեռևս սպասում են մեծ նվաճումներ իր սեփական պետության սահմաններում» (299, էջ 60)։ Խոսելով կառավարության և քրդական իշխանապետությունների փոխհարաբերությունների մասին, նա նշում էր. «Բ. Դռանը երբեք չի հաջողվել այս լեռներում ժառանգական իշխանությունը գետին տապալել... Քրդական ավագանին մեծ իշխանություն ունի իր հպատակների վրա, նրանք գժտվում են միմյանց հետ, վիճարկում են Բ. Դռան իշխանությունը, հրաժարվում են հարկերից, չեն հանդուրժում ոչ մի զինակոչություն և իրենց վերջին ապաստանը գտնում են բարձր լեռների ամրոցներում» (447, էջ 267)։

Սուլթանական կառավարությունը ուղղակի անզոր էր դերեբեյությունները ենթարկել իր իշխանությանը։ Օսմանյան կայսրության պաշտոնական փաստաթղթերից մեկում ասվում էր. «Գեներալ նահանգապետերից ոմանք, այսպես կոչված դերեբեյերի աջակցությամբ, ի չարը գործադրելով իրենց իշ-

խանությունը և գործելով բռնությամբ, ձեռք էին բերում հպատակների ունեցվածքը և արյունով էին ողողում նահանգները։ Մինչդեռ գերագույն իշխանությունը, այդպիսի հանդգնության վկան, ի վիճակի չէ սանձահարելու այդ անկարգությունները» (329, էջ V—VI)։

Կառավարության կողմից քրդական դերեբեյերի դեմ պայքարելու միակ հնարավոր ձևը նրանց մոտ վարձու մարդասպան ուղարկելն էր։ Հաճախ էր պատահում, որ այս կամ այն խռովարար դերեբեյը ճաշելուց հետո անմիջապես մեռնում էր, կամ առավոտյան նրան գտնում էին դաշույնը կրծքի մեջ խրված (329, էջ VIII)։

Սակայն պայքարի այդ ձևը ավելի շուտ վկայում էր կենտրոնական իշխանության թուլության մասին։ Երկրի արևելյան շրջաններում պետության կենտրոնացման խնդիրը դժվարանում էր ոչ միայն կենտրոնից այդ նահանգների աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական մեկուսացվածությամբ, այլև այն պատճառով, որ այնտեղ զգալի տեսակարար կշիռ էին կազմում վաչկատուն ցեղերը, որոնց քոչվորական կենցաղը մեծապես արգելակում էր պետությանը նրանց վրա հսկողություն սահմանել։ «...Ցեղերի նկատմամբ հսկողության սահմանումը,— նշում էին եվրոպացի դիտորդները,— եղել և մնում է կենտրոնական կառավարության համար մշտական պրոբլեմ» (385, էջ 13)։

Երկրի Արևելքում խռովությունների ու երկպառակությունների մշտական աղբյուր էին հատկապես քրդական աշիրեթային ցեղերը, որոնք արգելակում էին կենտրոնացված պետության կազմավորման ընթացքը։

Անշուշտ Թուրքիայի առավել հեռատես պետական գործիչները հասկանում էին, թե ինչ վտանգներ է դա պարունակում պետության հետագա ճակատագրի համար։ Հենց այդ գործիչների ճնշման ներքո XIX դարի առաջին տասնամյակներին օսմանյան կառավարությունը փորձեց երկրի կենտրոնացման քաղաքականությունը զենքի օգնությամբ իրականացնել, որը, սակայն, ինչպես ողջ կայսրության տարածքում, այնպես էլ հատկապես արևելյան շրջաններում, հանդիպեց կատաղի դիմադրության։ Միանգամայն ակներև դարձավ, որ քրդական դերեբեյությունները լի են վճռականությամբ՝ արյան գնով պաշտպանելու իրենց անկախ վիճակը։ 1806 թ. սկսված ռուս-

Թուրքական պատերազմը, որն Օսմանյան կայսրությանը դրեց դժվարին վիճակի մեջ, էլ ավելի ոգևորեց դերբեյերին և անջատողական ձգտումներ ունեցող ավատատերերին։

Առաջինը 1806 թ. ապստամբեց Սուլեյմանիեյի բաբան քրդական ցեղի առաջնորդ Աբդուրրահման փաշան, որը ոչնչացրեց իր դեմ ուղարկված սուլթանի զորամասերը։ Հավակնություններ ունենալով Սուլեյմանիեյի նկատմամբ, Իրանը քաջալերում էր քրդական այս շարժումը, ընդհուպ մինչև Թուրքիայի հետ պատերազմի մեջ մտնելու վճռականությամբ (466, 487)։ Թուրքերի վիճակը ավելի էր բարդանում մանավանդ այն պատճառով, որ նրանք ստիպված էին միաժամանակ պայքար մղել արաբական երկրներում ծավալված վահաբիթական շարժման դեմ։

Այնուհանդերձ ուժերի մեծ լարումով Թուրքական բանակին հաջողվեց ջախջախել Աբդուրրահման փաշայի վտանգավոր շարժումը։ Սակայն այս ապստամբությանը հետևեց 1815 թ. Վանի և Բայազետի փաշայությունների քրդերի ապստամբությունները, որոնց միացան նաև Իրանի քրդական ցեղերը։ Այս շարժումը հակակառավարական բնույթից բացի ուներ նաև սոցիալական երանգավորում (294, էջ 285)։

Թեև Էրզրումի գինվորական հրամանատարությանը հաջողվեց ճնշել այն, սակայն 1818, 1820 և 1822 թթ. հետևեցին քրդական հակակառավարական նոր ելույթներ։

Օսմանյան կայսրության կառավարող շրջաններում երկրում արմատական վերափոխություններ անցկացնելու և կենտրոնաձիգ պետություն ստեղծելու գաղափարը ավելի ու ավելի շատ կողմնակիցներ էր գտնում։ Դրանում շահագրգռված էին առևտրավաշխառուական միջավայրից դուրս եկած նոր հողատերերը, առևտրականները, արդյունաբերական գործունեությամբ զբաղվող բուրժուական տարրերը, հարստահարվող գյուղացիությունը. ահա սրանք էլ դառնալու էին պետության հենարանը նոր վերափոխություններ կատարելու ճանապարհին (298, էջ 19—21)։

Կառավարությունը մտադիր էր ոչնչացնել հատկապես դերբեյությունները, վերջ տալ քրդական իշխանապետությունների ավատական առանձնաշնորհումներին և նրանց կողմից հարուցվող անիշխանությանը։

Այս շարժման առանդուն ու վճռական նախահայրը եղավ

Մեհմեդ Ռեշիդ փաշան, որի նպատակն էր ստեղծել բուրժուական Թուրքիա։ Այդ գաղափարը ոգևորեց նաև սուլթան Մահմուդ II-ին և նրա շուրջ գտնվող մի շարք պետական դեմքերի, որոնց կարծիքով կայսրությունը տագնապալի վիճակից դուրս բերելու միակ ելքը պետական-վարչական համակարգի վերափոխումն էր։ Իզուր չէ, որ թուրքական պետական դեմքերից մեկը՝ Խալիլ փաշան ասել է. «Եթե չշտապենք մեր պետությունը եվրոպականացնել, ստիպված պիտի լինենք վերադառնալու Ասիա» (62, էջ 75)։

Մոլեռանդ պահպանողական թուրք և քուրդ տարրերը սվիններով վրա ընդունեցին այդ ծրագրերը, որոնք նրանց կարծիքով դալիս էին իրենց զրկելու տիրելու և կառավարելու իրավունքներից։ Նրանք հատկապես չէին ցանկանում զիջել, որպեսզի քրիստոնյաներին չտրվեին մահմեդականներին հավասար իրավունքներ։ Այդ պատճառով Մահմուդ II -ին նրանք մականվանեցին «գյավուր Մահմուդ»։

Մինչդեռ արևմտահայությունը, որի ծոցում արդեն նկատվում էին բուրժուական հարաբերությունների զարգացման առաջին սաղմերը, անվերապահորեն նեցուկ էր դառնալու կառավարող շրջանների վերանորոգչական այդ ծրագրերին։

Մահմուդ II-ը շտապում էր օգտվել երկրի քրիստոնյա բնակչության այդ տրամադրություններից։ 1826 թ. ենիչերիների օջախների և նրանց հոգևոր կազմակերպության՝ մահմեդական բեքթաշի միաբանության ջախջախումից և ենիչերիական ու սիփահի գնդերի ոչնչացումից հետո Մահմուդ II-ի հաջորդ քայլը պետության կենտրոնախույս ու անհնազանդ ուժերի ջախջախումը եղավ։

Իրականացնելով երկրի կենտրոնացման քաղաքականությունը, սուլթանը հնազանդեցրեց հզոր Յանինի, Վիդինի, Բաղդադի փաշաներին, իր իշխանությանը ենթարկեց Ալբանիան, ջախջախիչ հարված հասցրեց Արաբական թերակղզում ծավալված վահաբիթական շարժմանը, որից հետո հերթը հասավ քրդական դերեբեյություններին։ Դա օրակարգի հրատապ խնդիր էր նաև այն պատճառով, որ դերեբեյերն արդեն բացեիբաց հրաժարվում էին հարկատու լինել կառավարությանը և նրան զինվորներ հատկացնել. նրանցից շատերի մոտ բացահայտորեն դրսևորվում էին նաև լրիվ անկախություն ձեռք բերելու ձգտումներ։ «1828—1829 թթ. ռուս-թուրքական պատե-

բազմից հետո,— գրում է Պ. Ի. Ավերյանովը,— որը վերջնականապես գցեց Թուրքիայի հեղինակությունը Փոքր Ասիայում, քրդերի նշանակալից մասը միանգամայն դուրս եկավ Թուրքական կառավարության իշխանությունից» (150, էջ 80)։

Սակայն միջազգային և ներքին բնույթի մի շարք բարդություններ (1821—1823 թթ. Թուրք-իրանական պատերազմը, 1821—1829 թթ. հույն ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, 1828—1829 թթ. ռուս-Թուրքական պատերազմը, ապստամբությունները Ալբանիայում և Սիրիայում, առաջին Թուրք-եգիպտական ընդհարումը, 1830 թ. Ֆրանսիայի կողմից Ալժիրի զավթումը, նույն թվականին Սերբիայի ինքնավարության ձեռք բերումը և այլն) միաժամանակ հետաձգեցին Մահմուդ II-ի մտահղացման շուտափույթ իրականացումը։

Կանխազգալով, որ կառավարությունը պատրաստվում է վերջ տալ իրենց ինքնուրույնությանը, քրդական ցեղապետերը բացահայտորեն սկսեցին հանդես գալ սուլթանի դեմ։ Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1828—1829 թթ. ռուս-Թուրքական պատերազմի շրջանում։ Ռևանդուզի, Բոհթանի, Բեհբեհանի և Հաքյարիի իշխանությունները հրաժարվեցին մասնակցել պատերազմին։ Իսկ Բայազետի Բալյուլ փաշան նույնիսկ կապի մեջ մտավ ռուսական ռազմական իշխանությունների հետ (306, էջ 220—221)։ Շուտով նրա օրինակին հետևեց նաև Մուշի էմին փաշան։

Ի դեպ, գեներալ Պասկևիչը, որին քաջ հայտնի էին այդ ցեղապետերի տրամադրությունները, իր կառավարությունից թույլտվություն ստացավ 100 հազար ոսկի ծախսել նրանց ընծաներ բաժանելու նպատակով (39, էջ 67)։ Պատերազմի ժամանակ քրդական ապստամբությունների առանձին օջախները ի վերջո միաձուլվեցին և բռնկեց մի հսկայական ապստամբության բոց (327)։ Առանձին վայրերում այդ շարժումների հակակառավարական ուղղվածությունը զուգորդվում էր հակաֆեոդալական բնույթի հետ։ Այսպես, 1828—1829 թթ. պատերազմի ժամանակ իրենց քուրդ և Թուրք տերերի դեմ ապստամբեցին ռայա քրդերը։ Լևոն Մեսրոպը այն գնահատում է որպես «դասակարգային առաջին շարժումը Մերձավոր արևելքի բոլոր ժողովուրդների մեջ» (111, էջ 70)։

Քուրդ և Թուրք ավատատերերը կառավարության աջակցությամբ արյան մեջ խեղդեցին այս շարժումը։

Օսմանյան կայսրության համար հատկապես վտանգավոր էր Ռևանդուզի լեռնային շրջանում սկսված քրդերի հակակառավարական հուժկու շարժումը, այդ շրջանի միր (կառավարիչ) Ահմեդ փաշայի գլխավորությամբ։ Վերջինս բացահայտորեն ձգտում էր Քրդստան ստեղծել, որն ընդգրկելու էր ողջ իրաքյան Քրդստանը և իրանական քրդաբնակ հողերի մի մասը։ Նա դարձավ Բաղդադի քյոլեմենների առաջնորդ Դավուդ փաշայի դաշնակիցը, որը նույնպես փորձում էր ազատվել սուլթանական կառավարությունից, կապեր հաստատեց Իրանի, որն ուշիուշով հետևում էր այդ շարժմանը, և բուն Թուրքիայում կառավարության նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող գործիչներ Մուհամմեդ փաշա Ինջե Բայրաքթարի և Մուստաֆա Ռաշիդ փաշա Դիփլոմաթլուի հետ։

Սիրիայի եգիպտացի կառավարիչ Իբրահիմ փաշայի գաղտնի գործակալները, իրենց հերթին, եռանդուն աշխատանք էին կատարում ապստամբների շրջանում, նրանց մոտ «հույսեր բորբոքելով Թուրքիայից լրիվ անջատվելու վերաբերյալ» (216, էջ 432)։

Կայսրության արևելյան շրջանները ըստ էության դուրս էին եկել սուլթանի տիրապետությունից։ Ահմեդ փաշայի հրամանատարության տակ էին անցել հսկայական երկրամասեր, որոնք տարածվում էին Տիգրիսի ափերից մինչև իրանական Ատրպատականի քրդաբնակ շրջանները, ընդգրկելով այնպիսի կարևոր ռազմատնտեսական հանգույցներ, ինչպիսիք էին Նիսիբինը (Մծբին), Մարդինը, Մոսուլն ու Սուլեյմանիեն (462, էջ 23—24)։

Քանի դեռ շարունակվում էր 1831—1832 թթ. թուրք-եգիպտական ընդհարումը, Մահմուդ II-ը չէր համարձակվում վճռականորեն ձեռնամուխ լինել քրդերին ընկճելու գործին։ Սակայն 1833 թ. մայիսի 9-ին Քյութահյայում թուրք-եգիպտական հաշտություն կնքվելուց և այդ նույն թվականի հուլիսի 8-ին Ռուսաստանի հետ Ունքյար-Իսկելեսիի դաշնագիրը ստորագրելուց հետո, Օսմանյան կայսրության համար ստեղծվեցին միանգամայն բարենպաստ պայմաններ «արևելյան» գործերով զբաղվելու համար։ Հենց այս շրջանում Մահմուդ II-ը որոշեց վերջ տալ քուրդ դերեբեյերի ինքնիշխանությանը (290, էջ 9)։ Դա օրակարգի հրատապ հարց էր նաև այն պատճառով, որ 1834 թ. հրապարակված հատուկ ֆիրմանով (հրամանագիր։— Վ. Բ.)

սուլթանը վերացնում էր հողատիրության ռազմաավատական համակարգը։ Սակայն այդ օրենքի իրականացումը տարածքային առումով սահմանափակվում էր միայն կենտրոնական Անատոլիայով։ Դրանից այն կողմ, այսինքն Արևմտյան Հայաստանում, Քրդստանում, արաբական երկրներում, ինչպես նաև կայսրության եվրոպական շրջաններում ամեն ինչ մնում էր նախկինի պես, որովհետև կառավարության ձեռքն անզոր էր հասնելու ծայրամասային անհանգիստ շրջանները (315, էջ 25)։ Հետևաբար, սուլթանին մնում էր իր հրամանը հիշյալ շրջանների ավատատերերին պարտադրել միմիայն զենքի ուժով։

1833 թ. Մահմուդ II-ը Արևմտյան Հայաստան ուղարկեց մի ուժեղ բանակ, որը ռազմերթի դուրս եկավ երկու ուղղություններով։ Առաջինը Սրվատի նահանգապետ Մեհմեդ Ռեշիդ փաշայի գլխավորությամբ դեպի Սեբաստիա և Արաբկիր, երկրորդը՝ կայսերական թիկնապահ Սամիհ փաշայի հրամանատարությամբ դեպի Էրզինջան և Էրզրում՝ Վասպուրականի վրայով։ Սրանց էին միանալու նաև Բաղդադի կառավարիչ Ալի Ռիզայի և Մոսուլի վալի Մուհամմեդ փաշայի ուղարկած օժանդակ զորքերը (458, հ. 1, էջ 273—374)։

1834 թ. ամռանը 40 հազարանոց բանակի գլուխ անցած Ռեշիդ փաշան ռազմական գործողություններ ծավալեց քրդական դերեբեյերի դեմ։ Անցնելով Խարբերդի և Մալաթիայի շրջանից դեպի Դիարբեքիր, նա հիմնականում ուշադրությունը կենտրոնացրեց Դիարբեքիրի դաշտի Բըշերիկ-Սլիվան, Խարզանի, Սասունի և Ջեզիրեյի շրջանների վրա։ Այդ վայրերում ծավալվեցին արյունալի և համառ մարտեր։

Ռևանդուզի միր Ահմեդ փաշան, որն օսմանյան կառավարության առավել վտանգավոր հակառակորդներից էր, պարտություն կրեց և ձերբակալվելով ուղարկվեց Կ. Պոլիս՝ սուլթանի դատաստանին (469, էջ 53)։ Թուրքական բանակի հրամանատարությունը պատժիչ գործողություններ էր իրականացնում ոչ միայն պետական իշխանությանը չենթարկվող և ինքնագլխության ձգտող դերեբեյերի, այլև քուրդ զանգվածների նկատմամբ, որոնք հարկերի ծանրության պատճառով ամեն մի հարմար առիթի դեպքում ընդվզում էին օսմանյան վարչության սանձարձակ բռնությունների ու կամայականությունների դեմ։

Հելմուտ Ֆոն Մոլտկեն, որը որպես ռազմական հրահանգիչ մասնակցում էր օսմանյան բանակի արշավին, թվարկում է այդ բանակի անգթությունների մի ամբողջ շարան. «Քրդերի հնազանդեցումը,— վկայում է նա,— իրականացվում է հազարավոր անմեղ մարդկանց, այդ թվում նաև կանանց ու երեխաների ոչնչացման ու տանջահարումների թուրքական ավանդական ոճով, քրդերով բնակեցված ամբողջ շրջանների ավերածություններով ու հրկիզումներով» (447, էջ 275—276)։

Շարժվելով առաջ, թուրքական բանակն իր հետևում թողնում էր միայն ավերակներ։ «Հազարավոր անմեղ կյանքեր ոչնչացան, հազարավոր գյուղեր ավերվեցին։ Սակայն, չնայած դրան, քրդերը բնավ չէին ընկճվում։ Մինչև որ մի լավ վարչություն չստեղծվի նրանց համար,— եզրակացնում է Մոլտկեն,— այս ամենը դատապարտված է լոկ անցողական ազդեցություն ունենալու» (447, էջ 277)։

Խոսելով կառավարության նկատմամբ քրդական զանգվածների դժգոհության պատճառների մասին Մոլտկեն գրում էր. «Քրդերը տրտնջում են գլխավորապես երկու բանի վրա, հարկերի և զինապարտության։ Այդ դժգոհության իսկական պատճառը կայանում է ոչ թե նրանում, որ հարկերը չափազանց մեծ են (sic!), այլ նրանում, որ դրանք կամայական են... Քրդստանում զինակոչիկների հավաքումը դառնում է իշխանությունների գիշատիչ ասպատակություն տեղական բնակչության նկատմամբ։ Որոշ գյուղերում բոլորովին չեն մնացել աշխատանքի ունակ երիտասարդ տղամարդիկ. միայն նա, ով անձամբ մասնակցել է մարդկանց նման որսին և տեսել է զինակոչիկներին ետ ոլորված ձեռքերով, հայացքներում զսպված կատաղությամբ, կհասկանա, թե ինչ աստիճանի է կառավարությունը... իր դեմ հանել այդ ողջ ժողովրդին» (292, էջ 72—73)։

Մոլտկեն հաղորդում է, որ ոչ մի քուրդ երկու տարուց ավելի չէր կարողանում դիմանալ ռազմական ծառայությանը։ Նա կամ հիվանդանում ու մեռնում էր և կամ դիմում դասալքության (447, էջ 386—387)։

Այսպիսով, օսմանյան կառավարության կողմից քրդական դերբեյությունների հնազանդեցումը ուղեկցվում էր ժողովրդական զանգվածների նկատմամբ անլուր հալածանքների քաղաքականությամբ, որի նպատակն էր նրանց դարձնել թուրք

պետականության հարկատուն և ներգրավել կառավարության կողմից ծրագրված կանոնավոր բանակի շարքերը։ Հենց դրանով կարելի է բացատրել այն կորովի ու զանգվածային դիմադրությունը, որ քուրդ ժողովուրդը ցույց տվեց թուրքական զորքերին։

Մոլտկեի տվյալներով լեռնային շրջաններում քրդական նույնիսկ ամենափոքր ու աննշան ամրոցի գրավումը տևում էր 30—40 օր։ Նա քրդերի դիմադրությունը նույնիսկ անվանել է «ժողովրդական պատերազմ» (292, էջ 65)։

Թուրքական բանակը առանձնակի կատաղի դիմադրության հանդիպեց Դերսիմում, Երզնկայի և Կամախի շրջաններում, Ջեզիրեյում, Խարնի և Խասոյի շրջաններում, Սասուն-Մոթկանի ստորոտում, Բիթլիսի հարավային շրջաններում և այլն։ Ընդորում, պարտվածների նկատմամբ սուլթանի բանակը վերաբերվում էր անողոք դաժանությամբ։ Զինվորներն անխնա հրդեհի ճարակ էին դարձնում քրդաբնակ գյուղերը, սվինահար անելով այնտեղ մնացած խաղաղ ռայա քրդերին։ Ճնշելով Սինջարի և Վերանշեհրի եզիդիներին, Ռաշիդ փաշան հրամայեց սրի քաշել ողջ միհրանի ցեղը (469, էջ 51)։ Այդ դեպքերի մասին Հելմուտ Ֆոն Մոլտկեն գրում է. «Արյունոտ վերքերով տղամարդիկ ու կանայք, կրծքի, ինչպես նաև տարբեր հասակի երեխաները, կտրված գլուխներն ու ականջները, այդ բոլորը կիտվում էր մի տեղ և դրանց բերողներին վճարվում էր 50-ից մինչև 100 պիաստր... Քրդերի լուռ տառապանքը և կանանց արցունքոտ հուսահատությունը իսկապես իրենցից ներկայացնում էին սրտաճմլիկ տեսարաններ» (292, էջ 65)։

Թուրքական բանակի այս արյունախում գործողություններին քրդերը պատասխանում էին վրիժառության պատերազմով։ «Երկու ճամբարներն իրարու դէմ վայրագ ատելութեամբ կը կռուէին։ Քիւրտերը իրենց ձեռքը ինկած թուրքերը ողջ-ողջ կերէին, բայց նախ մէյ մը անոնց աչքը փորելէ և եղունգները քաշել հանելէ յետոյ։ Թուրքերն ալ, իրենց ճանկը ինկած քիւրտերուց ցիցի կը զարնէին» (105)։

Հատկանշական է, որ առհասարակ գազանաբար վարվելով ռայաթ քրդերի նկատմամբ, թուրքական հրամանատարությունը միանգամայն այլ քաղաքականություն էր վարում ցեղային վերնախավի, խոշոր ցեղապետերի, աղաների ու բեկերի նկատմամբ, բավարարվելով նրանց ժամանակավոր մեկուսացումով։

նրանց ենթակա ցեղերին չախչախելուց, զինաթափելուց և թուրքական իշխանություններին ենթարկելուց հետո այդ ցեղապետերը ոչ միայն ազատ էին արձակվում, այլև վերստին ստանում էին իրենց նախկին աստիճանները և իրենցից բռնագրաված շարժական ու անշարժ գույքը։

Բռնագրավելով նույնիսկ քրդական օջաքլիքները հօգուտ գանձարանի, Մահմուդ II-ը նրանց նախկին տերերին նշանակում էր թոշակ, որը ժառանգաբար անցնելու էր նաև տվյալ ավատատիրոջ սերունդներին (428, էջ 74)։

Նման քաղաքականությունը կարելի է բացատրել նրանով, որ օսմանյան կառավարությունը, որը շահագրգռված էր օգտագործել քրդերի ռազմական ուժը, չէր ցանկանում իրենից ամբողջապես վանել ավատական-ցեղային ազնվականությանը։ Կ. Մարքսը գրում է. «Փոքր Ասիան և Հայաստանը այն շտեմարաններն են, որոնք մշտապես նյութ էին մատակարարում թուրքական բանակներին, սկսած նրանցից, որոնք կանգնած էին Վիեննայի պարիսպների տակ, և վերջացրած նրանցով, որոնք չախչախվեցին Կուլեչի մոտ» (147, էջ 373)։ Անտարակույս, ի թիվս այլ ժողովուրդների, Կ. Մարքսը նկատի ունի նաև ռազմաշունչ քրդական ցեղերին, որոնք հատկապես արևելքում Ռուսաստանի և Իրանի դեմ մղված պատերազմներում բազմիցս խաղացել էին չափազանց կարևոր դեր։

Եվ այսպես, Ռեշիդ փաշայի Արևմտյան Հայաստանը և Քրդստանը հրով ու սրով վերանվաճելու տարիներին, դերբեյական տիրապետության շրջանում հայ ժողովուրդը տնքում էր քրդական ցեղապետ-ավատատերերի լծի ծանրության տակ (144, էջ 12)։ Նա ստիպված էր անմռունչ ենթարկվել իր ճակատագրին, որովհետև ամեն մի ըմբոստ քայլ պատժվում էր ահավոր դաժանությամբ։ Սակայն մեզ հասած մասնակի ու կցկտուր վկայություններից իսկ մենք տեղեկանում ենք, որ հայ ժողովուրդը այնուհանդերձ քուրդ դերբեյ-ավատապետերի լծից ազատվելու փորձեր է արել։ Այսպես, Պիեռ Ամիդե Ժոբերը հաղորդում է, որ Խնուսի շրջանի հայկական մի գյուղի բնակչությունը գլխովին զինված է եղել և անընդհատ ընդհարման մեջ է գտնվել քրդերի հետ (432, էջ 118։ 259)։

Տեղեկություններ կան նաև, որ XIX դ. սկզբներին Մշո դաշտի երեք գյուղեր՝ Ավրանը, Ալադինը և Կեմիկը ապստամբել են քուրդ ավատապետերի դեմ, որոնք անտանելի լուծ

էին դրել այդ գյուղերի վրա։ Տեղի ունեցած ընդհարման ժամանակ ընդվզման ղեկավարները նահատակվել են և քուրդ ցեղապետերը ավերել ու ամայացրել են մի քանի հայկական գյուղեր։

Տարոնում դերեբեյերի կամայականությունների դեմ ծավալված պայքարի ղեկավարներն էին ավրանցի Ալեքսանը, ալադինցի Ոսմուրշատը, Տարոնի հոգևոր առաջնորդ, եպիսկոպոս Պետրոս Ավրանցին և ուրիշներ։ Սրանց պայքարի հետևանքով Տարոնի դաշտում ղշլաղայությունը մասամբ վերացավ և տեղի բնակչության վիճակը որոշ չափով մեղմացավ (128, էջ 64)։

Քրդական ավատատիրական լծի դեմ իրենց պայքարում միացյալ ճակատով հանդես գալու համար հայերը փնտրել են նաև դաշնակիցներ։ Այսպես, եզիդները, որոնք հավատարիմ էին մնացել իրենց կրոնին և նույնպես հարստահարվում ու հալածանքների էին ենթարկվում աշիրեթային քրդերի ու քուրդ ավատատեր-ցեղապետերի կողմից, իրենց հերթին ձգտում էին մերձենալ բախտակից հայերին, որոնց հարևանությամբ ապրում էին Արևմտյան Հայաստանի բազմաթիվ վայրերում։ 1820—1821 թթ. Սղերդում նույնիսկ ստեղծվեց հայ-եզիդական մի միություն քրդական դերեբեյերի հալածանքներից ու կամայականություններից պաշտպանվելու համար։ Հայերի ղեկավարն էր եղել Տեր Պողոս անունով մի քահանա, որը եզիդների շրջանում հայտնի է եղել Քեչե Պոլե կամ Քեշիշ Պոլո անունով, իսկ եզիդների առաջնորդն էր շեյխ Միրզեքը (միրզա աղա)[7]։ Առանձին վայրերում հայ-եզիդական ուժերին հաջողվել է պարտության մատնել քրդական աշիրեթներին և մասնավորապես Բոհթանի տեր միր Մեհմետ ամիրային։ Խ. Աբովյանի հաղորդած տեղեկությունների համաձայն 1828 թ. Ռադովան բերդի մոտակայքում, Մոսուլից ոչ հեռու, Միրզա աղան և Պողոս քահանան, յուրաքանչյուրն իր համայնքով հարձակվել են թուրքերից ու աշիրեթային քրդերից բաղկացած երեսուն հազարանոց բանակի վրա և իրենց փոքրիկ զորամասով գրեթե ոչնչացրել ամբողջ բանակը (2, էջ 260)։

Աշիրեթների և թուրքերի վրիժառությունից խուսափելու համար դաշնակիցները ամրացել են Սինջարի լեռնանցքներում և շարունակել համատեղ դիմադրությունը։ Այդ մասին «Հնոց և նորոցում» կարդում ենք. «Իբրև զգետս զայրացյալ, հավուրա

զարնայնո, այնպես հորդան տվյալ մարական բանակին հառաջնին ավարառությամբ, հրրձգությամբ և սպանությամբ, զոր տեսյալ Միրզրբ և մեծամեծք հայոց և եզիդացն՝ ժողվեցան միաբանեցին հնարս հայթայթել զդեմ առնուլ ահագին և անխուսափելի վտանգին կորստական» (132, էջ 173—174)։

Քեշն Պոլոն դիմել է իր զինակիցներին. «Չէ այս կռիվ սովորական վասն մարմնավոր փառաց և իշխանության կամ վրիժու, այլ ընդ ազատության անձանց գան ու զհավատս մեր բառնալ հանել ի մենջ. և քանզի եթե խույս տանք՝ սատակիմք, եթե զդիմի հարկանիմք՝ մեռանիմք, բայց և մեռուցանեմք, և զանուն քաջության անձանց ժառանգեմք. հապա անհապաղ, արիք ընդդեմ, ի ճակատ, և կանայք ու մանկտին մեր քաջալերս կարդասցեն մեզ, և ի մենջ ուսցին զօրինակ քաջության ապրելո, հաղթելո կամ կռվելո և մեռանելո» (132, էջ 173—174)։

Սակայն անգեն հայ խաղաղ գյուղացիությունը ի վիճակի չէր սեփական ուժերով ազատագրվելու քրդական դերեբեյերի և թուրքական պետականության կրկնակի լծից։ Դա է պատճառը, որ հայ ժողովուրդը իր այդ մղձավանջային վիճակից դուրս գալու ելքը փնտրում էր դրսից օգնության մեջ, իր ազատագրության հույսը կապելով Ռուսաստանի հետ։ Վերջինիս միջամտությունը իր ճակատագրին դիտվում էր որպես եզակի միջոց ազատագրվելու իրեն շնչահեղձ անող իրականությունից։ 1828—1829 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ, երբ «դարերով ճնշված հայերի ոգին կենդանություն ստացավ լավագույն ապագայի հույսերով» (306, էջ 291), արևմտահայերի բռնած դիրքը գործնականորեն ապացուցեց, որ հանձինս Ռուսաստանի հայ ժողովուրդը տեսնում էր իր միակ ազատարարին։

Չնայած նրան, որ պատերազմի տարիներին քրդական ցեղերի շրջանում բռնկել էին հակակառավարական ապստամբություններ, օսմանյան կառավարությանը հաջողվեց Ռուսաստանի դեմ պատերազմի մեջ ներգրավել մի շարք քրդական ցեղերի (306, էջ 221—223, 236)։

Լյուդովիկ դը Քոնթանսոնը գրում է, որ քրդերը «մինչև հիմա կուզեն իրենց անկախությունը ձեռք բերել, երբ ատենը գայ տուրք վճարելու և զինուոր տալու, բայց սուլթանին հաւա-

տարիմ հպատակները կը դառնան, երբ քրիստոնեայ գիւղերուն վրայ ճնշում ի գործ դրուի» (144, էջ 19)։

Պատերազմի ընթացքում հայ ժողովուրդը կրկին ենթարկվեց հալածանքների ինչպես սուլթանական կառավարության, այնպես էլ քրդական ավատատերերի կողմից։ Ռուսական զորքերից պարտված քրդական աշիրեթները և թուրքական բանակն ու նրան հետևող բաշիբոզուկները իրենց մաղձը թափում էին հայ ազգաբնակչության վրա, թալանելով հայկական գյուղերը և կոտորելով բնակչությանը։

Ռուսական բանակների արագ առաջխաղացումը քրդական ավատատերերի մոտ ծնում էր այն մտայնությունը, որ իրենց տիրապետության տակ եղած երկրամասերը այլևս երբեք չպետք է մնան իրենց ձեռքում, որ դրանք այսուհետև անցնելու են Ռուսաստանին։ Դա նրանց մոտ առաջ էր բերում ամեն ինչ քանդելու, ավերելու ձգտում։ Այդ ավատատերերը «հայ ժողովուրդը այլևս իրենց ապրանքը չէին նկատեր և հետևաբար հայ գյուղացիութեան պահպանումը, գոնէ ֆեոդալական շահախնդրութեամբ, քիւրտ իշխանապետերու մտահոգութենէն իսպառ կը բացակայեր» (127, էջ 196)։

Ականատեսի վկայությամբ, պատերազմի օրերին «յառաջացան գունդ գունդ աւազակաց խմբեր, որք որպէս մորեխ ցրուելով հայ գիւղօրէից մէջն ու նոցա սահմանները՝ Բագրևանդայ, Կարնոյ, Տարօնոյ, Սալնոձորոյ, Վասպուրականի և ի մասնաւոր տեղիս ինչ պարսկահայոց զրկեցին յամենայն ընչից և ստացուածոց, առևանգեցին զգեղատեսիլ հարսունս ու աղջկունս, զոմանս գերի վարեցին յանդարձ օտարութիւն, անմեղ սպանելոց արիւնով ներկեցին նոցա յարդածածուկ խրճիթներն ու ծաղկաւետ դաշտերն։

...Ոչ միայն վրանաբնակ քիւրդքն առնէին զայս ամենայն, այլ նաև նոցա առաջնորդ տեղական պէյերն ու փաշաներն իսկ» (20, 1889 թ. № 5, էջ 272)։

Պատերազմից հետո, վախենալով թուրքական կառավարության վրիժառությունից Ռուսաստանի նկատմամբ արևմտահայության բռնած համակիր դիրքի համար, հայության մի ստվար զանգված դիմեց արտագաղթի դեպի Կովկաս։ Դրա հետևանքով Արևմտյան Հայաստանի մի շարք շրջաններ ուղղակի հայաթափ եղան ու ամայացան։

Երկիրը դառնում էր ավերակ։ Գյուղատնտեսությունը, արհեստագործությունը, առևտուրը, որոնք առանց այն էլ տուժել էին պատերազմի հետևանքով, հայերի արտագաղթի պատճառով ապրեցին աննախընթաց չափերի հասնող անկում։ Դա չէր կարող չանհանգստացնել կառավարող շրջաններին, որոնք հայությանը դիտում էին որպես շինարար և տուրք վճարող տարրի։ Կառավարությանը անհանգստացնում էր նաև այն, որ հայերի տեղը զբաղեցնում են վաչկատուն քրդերը, որոնք ձեռք բերելով նոր հողեր, կարող են ուժեղանալ և դրսևորել անկախության ձգտումներ։ Բացի այդ, օսմանյան վարչությունը չէր կարող հույս ունենալ, որ այդ վաչկատուն ցեղերից կկարողանա գանձարանի համար ապահովել կայուն եկամուտներ, առավել ևս հավաքագրել զինակոչիկներ։

Հենց այս նկատառումներն էլ ստիպում էին կառավարությանը Ռեշիդ փաշայի կողմից քրդական դերբեյությունները չախչախելու շրջանում արևմտահայության նկատմամբ վարել առանձնահատուկ քաղաքականություն, որի նպատակն էր որոշ սիրաշահումների միջոցով շահել նրանց աջակցությունը դերբեյությունները ընկճելու գործում և խթանել հայերի առևտրական-տնտեսական գործունեությունը ի շահ դատարկ գանձարանի։

Ռեշիդ փաշան, օրինակ, ծրագրել էր առանձին շրջաններում վերջ տալ հայերի և քրդերի համատեղ բնակությանը և ստեղծել միատարր հայ բնակչություն ունեցող նահանգներ, որտեղ, ազատված լինելով քուրդ դերբեյերի հարստահարություններից, հայ բնակչությունը կարող էր զարկ տալ արհեստներին, առևտրին, գյուղատնտեսությանը և այդպիսով գանձարանի համար եկամուտի կայուն աղբյուր դառնալ։ Հնարավոր է, որ այդ ծրագիրը նպատակ ուներ նաև միատարր հայ հավաքականությանը անհրաժեշտության դեպքում հակադրել ինքնագլխության ձգտող քուրդ ավատատերերին։

Ռեշիդ փաշան Խարբերդի հայ բնակչությանը առաջարկեց տեղափոխվել Դիարբեքիր, խոստանալով, որ այդ շրջանի քուրդ բնակչությանը մինչև վերջին մարդը կտեղափոխի Դերսիմ և Զարսանջակ։ Նա նույնիսկ խոստանում էր հայերին գենք բաժանել, ստեղծել հայկական ոստիկանություն, Դիարբեքիրում նշանակել ազգությամբ հայ փաշա և այլն։ Սակայն հայերը խնդրեցին իրենց թողնել հարազատ վայրերում։

Սրա համար քրդերը նրան անվանեցին «գյավուր փաշա», ասելով, որ «ասի կէավուռա, ու կէավուռներուն թագաւորութիւն տի կայնըցնա» (16, էջ 53—55)։

Ի դեպ, հազարավոր քրդերի ոչնչացնելուց հետո, Ռեշիդ փաշան աշիրեթական քրդերի զգալի զանգվածների ստիպեց «նստակյաց կյանք վարել և հարկ վճարել պետությանը» (16 էջ 53)։

Ինչ վերաբերում է արևմտահայության դիրքորոշմանը դեպի թուրքական կառավարությունն ու քուրդ դերեբեյները, ապա այն միատեսակ չէր։ Այն գավառների հայերը, որոնք ապրում էին լեռնային շրջաններում և ունեին ազատ համայնքներ, զինված էին, զերծ էին քրդական աղալարների լծից, հարկատու չէին թուրքական կառավարությանը, նրանք ևս շատ վայրերում քրդերի հետ համատեղ և նրանց հետ կողք կողքի զենքով հանդես եկան օսմանյան կառավարության դեմ, որը, ինչպես և քրդերին, փորձում էր զրկել անկախությունից, հնազանդեցնել պետական իշխանությանը և դարձնել հարկատու։

Ռեշիդ փաշայի զորքերին հատկապես կատաղի դիմադրություն ցույց տվեց Սասունի, Խարբերդի, Շատախի, Մոկսի, Խնուսի և մի շարք այլ շրջանների հայ լեռնական բնակչությունը։ Առանձին վայրերում քուրդ-հայկական միացյալ ջոկատները թուրքական զորքերի դեմ կռվում էին համատեղ։ Այսպես, Լիջի և Ներջիքի շրջանում միացյալ քուրդ-հայկական զորամասերը Հաջի Զիլալ աղայի հրամանատարությամբ հերոսական դիմադրություն ցույց տվեցին թուրքական զորքերին (397, էջ 356—358)։

Սակայն հայ ռայաթ գյուղացիությունը, ասել է արևմտահայության մեծամասնությունը, քաղաքային բնակչությունը, արհեստավորները, առևտրականները և այլն, որոնք առանձին ծանրությամբ էին իրենց վրա զգում քրդական ինքնիշխան ավատատերերի ճմռող լուծը, որոնց համար իսպառ գոյություն չուներ ոչ միայն գույքի ու կայքի, այլև կյանքի ապահովություն, հակված էին պաշտպանելու թուրքական կառավարության քաղաքականությունը դերեբեյերին հնազանդեցնելու ուղղությամբ։ Օսմանյան վարչությունը համարելով նվազագույն չարիք, ակնկալելով, որ կենտրոնացված պետության առկայությունը ի վիճակի կլինի ստեղծել քիչ թե շատ կայուն իրավական իշխանություն, որն ընդունակ կլինի հայ ժողովուր-

դին հարաբերական խաղաղություն և ապահովություն տալ, կնվազեցնի քրդական ավատատերերի կողմից գործադրվող հարստահարություններն ու կամայականությունները, հայ բնակչության վերոհիշյալ հատվածը համակրանքով էր վերաբերվում Ռեշիդ փաշայի քաղաքականությանը։

Դրա պատճառը թերևս նաև այն էր, որ քուրդ դերեբեյների լուծը արևմտահայերի համար հանդիսանում էր ոչ միայն անմիջական լուծ, այլև տնտեսական ու ֆիզիկական գերություն, ոչ մի օրենքով չսահմանափակվող, կամայական ու քմահաճ մի բռնատիրություն։ Պ. Ա. Չիխաչևը գրում էր, որ «բազմաթիվ քրդական ցեղեր միամիտ մոլորության մեջ են գցում կառավարությանը, թե իբր իրենք հանդիսանում են օսմանյան հպատակներ։ Այդպիսի ցեղերը կոչվում են «հնազանդ քրդեր»։ Նրանք իսկապես վճարում են որոշ հարկեր, սակայն թուրքական բանակին չեն տրամադրում և ոչ մի զինվոր։ Բայց դրա փոխարեն նրանք հարյուրապատիկ չափով վերադարձնում են իրենց կողմից վճարված հարկը, ըստ իրենց հայեցողության այն գանձելով լեռներում կամ նրանց մերձակայքում և նույնիսկ Եփրատ գետի հովտում էրզրում և էրզինջան քաղաքների միջև գտնվող բոլոր գյուղերից։ Այդպիսի, այսպես ասած, օրինական ձևով կատարվող շորթումներից, որոնք տեղի են ունենում տեղական թուրքական իշխանությունների աչքի առջև և նրանց գիտությամբ, առանձնապես տուժում են հայկական գյուղերը» (379, էջ 35)։

Եթե հայ գյուղացիությանը նման ձևով հարստահարում էին այսպես կոչված «հնազանդ քրդերը», ապա պարզ է, թե ինչպիսի կամայականությունների և շահագործման էր ենթարկվում նա կառավարությանը անհնազանդ, անսահմանափակ իրավունքներ ու իշխանություն ունեցող ցեղապետ-ավատատերերի կողմից։

Արևմտահայության մեծամասնությունը ոչ միայն հույսեր էր տածում Ռեշիդ փաշայի քաղաքականության նկատմամբ, այլև շատ վայրերում եռանդուն աջակցություն էր ցույց տալիս նրան։

Ի դեպ, այդ գիծը ոչ միայն պաշտպանվում, այլև որոշակի առումով ընթացք էր տրվում Կոնստանդնուպոլսի հայ բարձրաստիճան հոգևորականության և բուրժուականացող տարրերի

կողմից, որոնք մեծապես շահագրգռված էին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու համար։

Հայ ժողովրդի նման դիրքորոշումը էլ ավելի սրեց հայ-քրդական հարաբերությունները։ Դերեբեյերը իրենց մաղձը թափեցին հայ խաղաղ բնակչության վրա։ Իսկապես, «Հայաստանի քրդահպատակ շերտընդմեջ քրդերով բնակեցված շրջանները երբևէ նման ավերածության ու տնտեսական քայքայման չէին ենթարկվել։ Երկու սրի արանք ընկած հայ ժողովուրդը մաշվում էր թե՛ տնտեսապես, թե՛ ֆիզիկապես» (98, էջ 233)։

1837 թ. Ռեշիդ փաշայի անակնկալ ու հանելուկային մահից հետո քրդերի հնազանդեցման գործի շարունակումը հանձնարարվեց Մեհմեդ Հաֆըզ և Օսման փաշաներին (458, հ. 2-րդ, էջ 112։ 307)։ Սրանք իրենց դաժանությամբ գերազանցեցին Ռեշիդ փաշային։ «Երբ քրդերը մեղմանում են,— գրում է Մոլտկեն,— Հաֆըզ փաշան սաստկացնում է իր խստությունը. Իմ տված խորհուրդները այդ ուղղությամբ նրա վրա ազդեցություն չեն ունենում»։ Նրա գործելու մեթոդներն էին քրդերի զանգվածային շարդերը, իրենց բնակության վայրերից բռնի տարագրությունը դեպի կայսրության ծայրամասային շրջաններ, ունեզրկումը, քրդական գյուղերի հրկիզումը և այլն։

Հաֆըզ և Օսման փաշաների 80 հազարանոց բանակը հրով և սրով անցավ հսկայական տարածք ունեցող երկրամասերով։ Նա ջախջախեց Անտիտավրոսյան լեռներում, Ջեզիրեյում, Դիարբեքիրում, Մալաթիայում և այլ բազմաթիվ շրջաններում ծվարած անկախ քրդական աշիրեթներին, նրանցից շատերին ստիպեց անցնել նստակեցության, օսմանյան գանձարանին վճարել տուրքեր և այլն։

Թուրքական բանակը առանձնակի դաժանությամբ վարվեց Սինջարի եզիդիների հետ։ Սրանք, որ «սերունդից սերունդ ապրում էին ինքնավար հասարակապետությամբ իրենց ժայռերի ամրոցներում, մեծ մասամբ ջնջուեցան 1838-ին։ Սուխ տուին քարայրներին, ուր նրանց մեծ մասը ապաստանած էր, կանանց ծախեցին իբրև ստրուկ և ցեղի թշուառ մնացորդները ստիպուեցան տէր ճանաչել մուսուլմաններին» (126, էջ 39)։

Մոլտկեն հաղորդում է, որ թուրքական զինվորները քրդերին բանակ զինակոչելու համար նրանց շներով էին որսում, խտրություն չդնելով ո՛չ առողջների, ո՛չ հիվանդների, ո՛չ տա-

բեցների և ոչ պատանիների միջև, նրանց կապկում ու տանում էին ճամբարները, որտեղ հսկում էին ինչպես գերիների։

«Առաջին իսկ հնարավորության դեպքում քրդերը փախչում էին և Հաֆըզ փաշան յուրաքանչյուր փախստական դասալիքին որսացողին վճարում էր 200—250 պիաստր» (447, էջ 381—387)։

Սակայն, չնայած այս գազանություններին, այնուամենայնիվ Հաֆըզ փաշային չհաջողվեց վերջնականապես ընկճել ու ճզմել քրդական աշիրեթներին։

Վերջիններս ապաստանեցին անառիկ լեռներում, շարունակելով դիմադրությունը։ Առանձին վայրերում (օրինակ Սասունում և այլն) թուրքական բանակը հանդիպում էր հայ և քուրդ բնակչության համատեղ դիմադրությանը (418, էջ 356—358)։

Քրդական դերեբեյերի ու առանձին ցեղերի դիմադրությունը ընթանում էր միմյանցից անջատ. ցեղային-ավատական կարգերի հետևանքով նրանց մոտ միանգամայն բացակայում էր համազգային շահերի գիտակցությունը։ Շատ ցեղեր ընդհանուր ոչինչ չունեին միմյանց հետ, նրանց չէր միացնում որևէ հասարակական կապ։ Ամեն մի ցեղ առանձնացած էր և ապրում էր իր նեղ, սահմանափակ կյանքով։ Յուրաքանչյուր աշիրեթ պաշտպանում էր իր տիրապետության տակ գտնվող շրջանը, իր կյանքն ու գույքը, անհրաժեշտության դեպքում ոչ միայն օգնության ձեռք չմեկնելով հարևան ցեղերին, այլև շատ հաճախ թուրքական սրի շեշտակի հարվածից խուսափելու համար թույլ տալով, որ օսմանյան բանակը անարգել շարժվի իրենց հողերով, որպեսզի հարվածը հասցվի ուրիշներին։ «Զորավոր գրեթե բոլոր ցեղերը թշնամի էին թրքական պետության և իրենց փաշայության սահմաններում վրա կը կռվեին օսմանյան զորքերուն դեմ։ Սակայն անոնք դուրս չէին գար իրենց սահմաններեն և օգնության չէին հասներ կյանքի ու մահվան կռվի բռնվող ուրիշ քրդական փաշայության մը» (128, էջ 91)։

1839 թ., երբ Հաֆըզ և Օսման փաշաների բանակները ոտնատակ էին տալիս Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը, Եգիպտոսը Օսմանյան կայսրության համար քաղաքական նոր բարդություններ ստեղծեց։ Եգիպտոսի Փաշա Մուհամմեդ Ալին և նրա որդի՝ Սիրիայի կառավարիչ Իբրահիմ փաշան սուլթան Մահմուդ II-ին սպառնում էին նոր պատերազմով։ Թուրքական

կառավարությանը մեծապես մտահոգում էր Եգիպտոսի հետ առաջիկա ռազմական բախման ընթացքում Թիկունքի կայունության հարցը։ Թեև Հաֆրզ փաշային հաջողվեց հիմնականում ճնշել քրդական դերբեյերին, բայց նա համոզված չէր, որ քրդերը, որոնք կազմում էին իր կորպուսի ռազմական գործողության շրջանի բնակչության կեսից ավելին, կրկին չեն ապստամբի, երբ թուրքերը մարտի մեջ մտնեն եգիպտացիների հետ (297, էջ 30)։

Այդ մտահոգությունն էր պատճառը, որ Հաֆրզ փաշայի մոտ միտք հղացավ հայերին ընդգրկել թուրքական բանակի շարքերը։ Պետք է խոստովանել, որ աստվածաբանական սկզբունքների վրա խարսխված մահմեդական Թուրքիայի համար դա վերին աստիճանի համարձակ ծրագիր էր։ Հաֆրզ փաշայի մտահղացմամբ հայերին պետք է ցրեին թուրքական բանակի մեջ այն հաշվով, որ յուրաքանչյուր քսան զինվորներից մեկը լիներ հայ։ Իր հերթին Հաֆրզ փաշայի ռազմական խորհրդական Հելմուտ Ֆոն Մոլտկեն, որը հայերին համարում էր fաջ և կարգապահ մի ժողովուրդ (447, էջ 389), առաջարկում էր յուրաքանչյուր գնդի չորրորդ գումարտակը կազմել բացառապես հայերից և այդ գումարտակի հրամանատար նշանակել միայն հայ մարդու։ Սակայն, հասկանալի է, որ այս առաջարկությունը կառավարությունը չէր կարող ընդունել, որովհետև կստեղծվեին միատարր հայկական զորամասեր, որոնց գոյությունը կարող էր սպառնալիք դառնալ կայսրության անվտանգության համար, մանավանդ որ հատկապես վերջին ռուս-թուրքական պատերազմից հետո օսմանյան կառավարող շրջանները հայերին տեսել էին դիտել որպես անբարեհույս, Ռուսաստանին համակիր տարրի։ Հելմուտ Ֆոն Մոլտկեն հենց սկզբից կասկածեց վերոհիշյալ ծրագրի իրագործման հնարավորությանը, որովհետև այն նրա կարծիքով «վիրավորանք կհասցներ թուրքերի նախապաշարմունքներին, որոնք իրենց կույր անբարտավանությամբ չեն ցանկանում տեսնել, թե որքան զառամյալ է դարձել իրենց վարչակարգը» (447, էջ 389)։

Իսկապես, չկենսագործվեց նաև Հաֆրզ փաշայի առաջարկած տարբերակը, որովհետև կառավարությունը հավանություն չտվեց քրիստոնյա բնակչությանը ռազմական ծառայության մեջ ընդգրկելու այդ ծրագրին, այն համարելով վտանգա-

վոր և օսմանյան պետականության սկզբունքներին հակասող մի ձեռնարկ։

Հիշյալ ծրագրի իրագործման անհրաժեշտությունը վերանում էր նաև այն պատճառով, որ հենց այդ ժամանակ թուրքական կառավարությունը որոշել էր իր feոդական քաղաքականության մեջ կատարել որոշակի շրջադարձ։ «Սուլթան Մահմուտը ուլեմաներէ կազմուած ժողով մը կը ղրկէ Հայաստան և Քիւրդիստան, կը գծէ ամէն մէկ տէրէպէյիի իշխանութեան սահմանը ու կրճանչնա այդ իշխանութիւնները իրաւասու՝ ամէն մէկը իր սահմանին մեջ։ Տէրէպէյական իշխանութիւնները այսպիսով է, որ կունենան իրենց անկախութեան ֆիրմանները» (116, էջ 64)։ Կառավարության որդեգրած քաղաքական այս գիծը թերևս պատճառաբանվում էր նրանով, որ 1839 թ. քրդական դերեբեյերի հնազանդեցման գործը հասնում էր իր ավարտին։ Դերեբեյական իշխանությանը փոխարինելու էր գալիս թուրքական վարչությունը։

Բնութագրելով Արևմտյան Հայաստանում ստեղծված նոր իրավիճակը Ի. Բերեզինը գրում էր. «Երկրում ծնված և մեծացած առաջնորդների նահապետական կառավարմանը փոխարինելու եկան Ստամբուլի գիշատիչ սատրապները, որպեսզի իրենց պաշտոնի կապալային վարձը վերադարձնեն հնարավորին չափ կարճ ժամկետում» (228, էջ 397)։

Առաջվա պես հարկերի ամբողջ ծանրությունը համարյա բացառապես ընկավ հայ բնակչության վրա (269, էջ 66—67)։ Իսպառ հոգս ցնդեցին նաև հայ ժողովրդի փայփայած հույսերը՝ ազատագրվել քրդական աղալարների շահագործումից ու բռնություններից։ Ջախջախված դերեբեյերին փոխարինելու էին գալիս արդեն ֆեոդալականացած կամ ֆեոդալականացման ճանապարհին գտնվող քուրդ ցեղապետ-աշիրեթապետերը, աղաներն ու բեկերը։ Այսպիսով, օսմանյան կառավարության կամքով արևմտահայությունը կրկին թողնվեց նախկին վիճակին։

Մահմուդ II-ի իրականացրած նոր քաղաքականությունը Հաֆըզ փաշային հնարավորություն տվեց իր բանակի մեջ ընդգրկել զգալի քանակությամբ քուրդ զինվորների։ Համալրելով այն, թուրքական զորքերի հրամանատարը շարժվեց դեպի Եփրատ, դիրքավորվելով Նիսիբինի (Մծբին) մոտ, որտեղ տե-

ղի ունեցավ թուրք-եգիպտական երկրորդ պատերազմի վճռական ճակատամարտը։

1839 թ. հուլիսի 24-ի այդ արյունալի ճակատամարտում Հաֆըզ փաշայի բանակը ջախջախիչ պարտություն կրեց Սիրիայի եգիպտական կառավարիչ Իբրահիմ փաշայի կողմից։ Ճակատամարտի դաշտը առաջինը լքեցին քրդերը (465, էջ 1911։ 435, էջ 191)։ Մոլտկեն պատմում է, որ նրանք սկսեցին կրակել իրենց իսկ հրամանատարների և թուրք զինվորների վրա, կողոպտել ռազմական գույքը։ Բազմաթիվ զինվորներ նետեցին զենքը և մեկնեցին իրենց գյուղերը։ Մեծ քանակությամբ քուրդ զինվորներ լքելով դիրքերը անցան թշնամու կողմը, զենքը ուղղելով օսմանյան բանակի դեմ։ Հաֆըզ փաշայի ջախջախված բանակի նահանջող մնացորդներին Այնթաբից հյուսիս ընկած լեռներում ոչնչացրեցին քրդերը, բեդվինները և թուրքմենները (383, էջ 346—348)։

Մծբինի ճակատամարտում քրդական զինվորների վերոհիշյալ վարքագիծը օսմանյան կառավարության նկատմամբ քրդական զանգվածների տրամադրությունների ցայտուն արտահայտությունն էր։

Հիշյալ ճակատամարտում թուրքական բանակի կրած ջախջախիչ պարտությունը լրջորեն թուլացրեց Օսմանյան կայսրությանը, վտանգի տակ դնելով նույնիսկ նրա գոյությունը։

Այս պարագաներում քրդական վերնախավի մոտ իրենց նախկին դիրքերը վերականգնելու հույսեր ծնվեցին։ Դերեբեյերը նոր շունչ ու ոգի առան և Քրդստանի ու Արևմտյան Հայաստանի տարածքում քրդությունը կրկին սկսեց փոթորկել։ Վերստին ապստամբություն բռնկվեց Սուլեյմանիեյի շրջանում։ Ապստամբներին օգնելու միտումով 1842 թ. իրանական բանակը սրընթաց անցավ սահմանը և ներխուժեց Միջագետք։ Թուրք-իրանական պատերազմը դարձավ համարյա անխուսափելի այն բանից հետո, երբ Բաղդադի կուսակալ Ալի Ռիզա փաշան և նրա տեղակալ Մուհամմեդ Նաջիբ փաշան 1843 թ. սկզբին շիաների սրբազան քաղաք Քարբալայի բնակչության զարհուրելի կոտորած կազմակերպեցին, անգթորեն սրի քաշելով 15-ից 18 հազար պարսկահպատակ շիաների (487, էջ 335—338)։

Ի պատասխան դրա, իրանական զորքերը ներխուժեցին Բայազետի շրջան, նպատակ ունենալով ոտքի հանել քրդերին և

Թուրք կառավարության դեմ օգտագործել նրանց մոտ կուտակված դյուրավառ նյութը։ Թեև գործը հարթվեց Ռուսաստանի և Անգլիայի վճռական միջամտության շնորհիվ (500, էջ 39), սակայն Սուլեյմանիեյի ապստամբությունը վկայում էր, որ քրդերը դեռ վերջնականապես նվաճված չեն։ Միայն Իբրահիմ փաշայից ոչ վաղուց կրած ջախջախիչ պարտությունը հետ կանգնեցրեց Թուրքերին ապստամբ քրդերի նկատմամբ նոր խստություններ կիրառելուց։

1839 թ. նոյեմբերի 3-ին հրապարակվեց Գյուլհանեի հաթթը-շերիֆը, որը թանզիմաթի բարենորոգումների ծրագրի հիմքը դարձավ։ Նրա հեղինակ Մուստաֆա Ռեշիդ փաշան ենթադրում էր վերևից իրականացվող բարեփոխումների ճանապարհով վերակառուցել և ուժեղացնել օսմանյան պետությունը։

Այդ ծրագրի բաղկացուցիչ մասերն էին կազմում երկրի կենտրոնախույս ուժերի սահմանափակումը և պայքարը պետության հսկողությունից դուրս գտնվող հողատերերի և քուրդ դերեբեյերի դեմ, այսինքն Արևմտյան Հայաստանում և Քրդստանում պետության կողմից իրական իշխանության ձեռք բերումը։ Թուրք կառավարող վերնախավի XIX դարի 40-ական թվականներին իրականացրած բարենորոգումները նաև «նպատակ ունեին պետական-վարչական համակարգի ամրապնդման միջոցով պահպանել Թուրքական տիրապետությունը իրենց կողմից նվաճված ժողովուրդների նկատմամբ» (330, էջ 14)։

Արևմտյան Հայաստանի նահանգներում Բ. Դուռը հաթթը-շերիֆի դրույթները փորձեց իրագործել 1842 թվականից։ Սակայն ինչպես ողջ կայսրությունում, այնպես էլ այստեղ, այդ բարենորոգումները կամ մնացին թղթի վրա և կամ էական փոփոխություններ չմտցրին ինչպես տնտեսական կյանքում, այնպես էլ ազգային հարաբերությունների մեջ։ Այսպես, թեև ճորտատիրությանը պաշտոնապես վերջ տրվեց, սակայն այն ոչ միայն պահպանվեց, այլև որոշ դեպքերում ստացավ ավելի արտառոց ու այլանդակ ձևեր։ Նոր կալվածատիրական կարգի համաձայն բեկերին և աղաներին պատկանող հողերը հռչակվում էին միրի (պետական), սակայն կիսանկախ աշիրեթների ձեռքում գտնվող հայ գյուղերը մնացին նախկինի պես ստրկական վիճակում, տուրք վճարելով և՛ քուրդ կալվածատիրոջը, և՛ պետությանը (47, էջ 26)։

Քրդական ճորտատիրական մարաբայական սիստեմը ըստ էության թողնվեց անփոփոխ, որովհետև թեև երեկվա հողազուրկ գյուղացին՝ մարաբան դառնում էր իբր ազատ հողագործ, սակայն իրականում մնում էր ճորտ։ Թանզիմաթի հողային այս բարեփոխությունից օգտվեցին միայն թուրք և քուրդ կալվածատերերը, ցեղապետերը, վաշխառուները (քուրդ, թուրք, հայ և այլն), ավելի տաժանակիր դարձնելով գյուղացիության կյանքի պայմանները։ Մի շարք վայրերում իր գոյությունը պահպանեց նաև խաֆիրության ճորտական սիստեմը։

Այս բոլորը վկայում էր այն մասին, որ Թանզիմաթի ռեֆորմների օգնությամբ ձգտելով նախկին քուրդ դերեբեյերին պահել իր հսկողության տակ, սուլթանական կառավարությունը աշխատում էր ոչ միայն խուսափել նրանց հետ հարաբերությունների լարվածությունից, այլև շարունակում էր համաձայնության եզրեր փնտրելու քաղաքականությունը, այդ բանը անելով գլխավորապես հայերի հաշվին։

Այդ քաղաքականության մեջ զարմանալի ոչինչ չկար, որովհետև այն ամբողջապես բխում էր թեոկրատիկ-աստվածապետական սկզբունքներով առաջնորդվող օսմանյան պետականության բուն էությունից։ «Հնարավո՞ր էր արդյոք ղուրանի առջև հավասարեցնել ուղղադավանի և գյավուրի, մահմեդականի և ռայայի իրավունքները,— հարց է տալիս Կ. Մարքսը և պատասխանում,— դա անպայման կնշանակեր իրապես ղուրանը փոխարինել նոր քաղաքացիական օրենսգրքով, այլ կերպ ասած, դա կնշանակեր խորտակել թուրքական հասարակության համակարգը և նրա փլատակների վրա ստեղծել իրերի նոր վիճակ» (74)։

Թուրքական կառավարությունը բնավ շահագրգռված չէր նաև բուն քրդական հասարակության կառուցվածքի մեջ փոփոխություններ մտցնելու։ Քրդերի «...ավանդական առաջնորդների ժառանգաբար անցնող իշխանությունը սասանվել էր, սակայն միաժամանակ ոչ մի լուրջ բան չէր ձեռնարկվել, որպեսզի այն փոխարինվեր մեկ այլ իշխանությամբ, որն ի վիճակի լիներ այդ ժողովրդին ներգրավել նորմալ պետական կառուցվածքի ոլորտի մեջ» (294, էջ 280)։

Խոսելով Գյուլհանեի հաթթը-շերիֆի ունեցած հետևանքների մասին, խորհրդային պատմաբան Լ. Վակսը գրում է. «Դրանից հետո թուրքական ֆեոդալիզմը իր նախնական ձևով

սկսեց իշնել թատերաբեմից, նահանգների մեծ մասում իր տեղը դիջելով խոշոր և միջին կալվածատիրական հողատիրությանը։ Բացառություն էին կազմում այնպիսի ծայրամասերը, ինչպես օրինակ Քուրդիստանը, որտեղ տիրապետող հողային հարաբերությունները ըստ էության վերաբերում են ոչ թե զուտ ֆեոդալական, այլ ցեղային տիպին» (231, էջ 39)։

Դյուլհանեի հաթթը-շերիֆի վերափոխությունները ի վիճակի չեղան դույզն-ինչ բարեփոխելու կայսրության ասիական նահանգներում տիրող դրությունը և արմատապես դիպչելու բուրդ ավատական դասի շահերին։ Իսկ ազդեցիկ ու խոշոր ցեղապետերը սվինների վրա ընդունեցին հաթթը-շերիֆը և որոշ վայրերում նույնիսկ թույլ չտվեցին, որ թուրքական վարչության ներկայացուցիչները ոտք դնեն իրենց տիրապետած շրջանները և ձեռնամուխ լինեն կայսերական հրովարտակի դրույթների իրականացմանը։ Թանզիմաթի «գործադրութեան դեմ էին բոլոր բռնակալները, որոնք Հայաստանի անմատույց լեռներուն վրայ որջացած էին» (7, էջ 458)։ Քրդական ցեղապետերը հատկապես չէին կարողանում համակերպվել այն մտքի հետ, որ իրենք զրկվում են դարավոր սովորությամբ հայ և քուրդ ռայաթներից գանձվող հարկերից, որ այդ խոշոր եկամուտները այսուհետև անցնելու են պետությանը։

Այս բոլորի անխուսափելի հետևանքը արևմտահայ աշխատավոր զանգվածների և քրդական ավատական վերնախավի միջև հարաբերությունների նոր սրումը եղավ, որովհետև եթե հայ ժողովուրդը որոշակի հույսեր էր տածում թանզիմաթի վերափոխությունների նկատմամբ, ապա քրդական վերնախավը դրա մեջ տեսնում էր օսմանյան նոր ոտնձգություն իր իրավունքների հանդեպ և իր զայրույթը թափում հայերի գլխին։ Տիրապետող ավատական քրդական դասի և հայ հողագործ բնակչության փոխհարաբերությունների պատկերը Լեոն ներկայացնում է հետևյալ կերպ. «Իր կալվածական ճորտատիրական արտոնությունները պաշտպանելու համար, քուրդ բեկը ուժ էր գործադրում, բայց ոչ թե կառավարության դեմ՝ որի հանդեպ նա ազատ էր, այլ այն անզեն ու անլեզու մշակի դեմ, որ երեկ նրա ճորտն էր, իսկ այսօր՝ թափոսի սիստեմով, դարձել էր ազատ հողագործ. հարկադրում էր հայ գյուղացուն, որ նա՝ անտեսելով նոր օրենքը, շարունակի իր նախկին ճորտային կացությունը, իսկ, հակառակ դեպքում, դուրս վտարի նրան

թափուի դիրքով ստացած հողից՝ զենքի ուժով կամ այլ ազդու միջոցներով— ահա ինչ տեսակ հարաբերություններ էր այժմ ստեղծվում քուրդ կալվածատիրոջ և հայ գյուղացու միջև» (70, էջ 39—40)։ Եվ այնուհետև. «Այս շատ վտանգավոր հանգամանքի մեջ թույլ և անզոր հայը կարող էր պահպանել պետական վարձակալ հողագործի դիրքը միայն մի միջոցով, այն է՝ եթե թուրք կառավարությունը՝ իր սեփական օրենքի կիրառությունն ապահովելու համար, հողագործի կողմը պահպաներ՝ նրա կատաղած նախկին տիրոջ դեմ։ Բայց այսպիսի պաշտպանություն չեր տեսնում... Դուրս էր գալիս, որ նա չէր ազատվել, այլ ընկել էր երկու կրակի մեջ, մինչդեռ, մի կողմից՝ քուրդ կալվածատերն իրենն էր համարում հայի մշակած հողը և պահանջում էր, որ այդ հողի վրա հաստատվեն նախկին կալվածատիրական իրավունքները, մյուս կողմից՝ կառավարությունը նույն այդ հողը համարում էր իրենը, և պահանջում էր վարձագինը։ Այսպիսով, երկու կեղեքիչները դաշտում կանգնած էին՝ գյուղական մի հատ արօրի վրա» (70, էջ 40)։

Եվ այսպես, թանզիմաթի իրականացման փորձերը Արևմտյան Հայաստանում էլ ավելի էին շիկացնում մթնոլորտը։ Ավատական կարգերի պայմաններում քրդական վերնախավի հետ հայ գյուղացիության համակեցությունը ուղղակի դառնում էր անտանելի։ Արտահայտելով այս տրամադրությունները, Տարոնի առաջնորդ եպիսկոպոս Պետրոս Ավրանցին քուրդ Ալադին փաշային ուղղակի հայտարարում է. «Կամ դուք պիտի հեռանաք այս երկրեն և կամ մենք։ Այլևս իրարու հետ չենք կըրնար ապրիլ...» (127, էջ 518)։

Նախկինի պես օսմանյան կառավարությունը քրդական աշիրեթապետերի նկատմամբ վարում էր ոչ միատեսակ քաղաքականություն. նրանք, ովքեր այս կամ այն չափով դրսևորում էին հավատարմություն կառավարության նկատմամբ, արժանանում էին Բ. Դռան սիրաշահումներին, ստանում էին պետական-վարչական պաշտոններ և այլն։ Այդ ճանապարհով ինչ-որ չափով փոխհատուցվում էր թիմարական հողատիրության նոր օրենքների համաձայն նրանցից գրավված հողերի վնասը։ Կարճ ասած, օսմանյան կառավարությունը արհեստականորեն ուժեղացնում էր աշիրեթապետերի (առավելապես ոչ ազդեցիկ, երկրորդական) մի մասին, և ընդհակառակն, աշխատում էր թուլացնել ազդեցիկ առաջնորդներին, որը և բնակա-

նարար չէր կարող պատճառ չհանդիսանալ նրանց շրջանում կառավարության դեմ անհաշտ ատելության առաջացման։ Պատահական չէ, որ առանձին ավատատերեր սկսեցին քրդական ավազակու դժգոհությունից օգտվելու փորձեր կատարել, ձգտելով ցեղերին միավորել իրենց տիրապետության ներքո, դուրս գալ կառավարության հսկողությունից և դառնալ իրենց շրջանների ինքնիշխան կառավարիչներ։ Նման ավատատերերի մեջ աչքի ընկնող դեմքերից մեկը Ջեզիրե-Բոհթանի տիրակալ Բադրխանն էր, որը «հմուտ կերպով օգտագործեց համընդհանուր դժգոհությունը Թուրքական բռնատիրության նկատմամբ» (331, էջ 54)։

Բադրխան բեյը Ջեզիրեյի և Բոհթանի մեծ էմիրների շառավիղն էր, որոնք յոթերորդ կամ ութերորդ դարից սկսած անկախ էին։ XIX դարի սկզբներին այդ ընտանիքին ենթակա էր նաև Դիարբեքիրի, Սղերդի և Բիթլիսի քուրդ բնակչությունը։ 1821 թվականից Բոհթանի ժառանգական իրավունքն անցավ Բադրխանին։ Վերջինս թեև 30-ական թվականներին մասնակցել էր քրդական շարժումներին, սակայն այն ժամանակ դեռևս չուներ այնպիսի ազդեցություն ու կշիռ, որպեսզի համարձակորեն կարողանար ձեռնամուխ լինել իր մտահղացած ծրագրերի իրագործմանը։ Սակայն 40-ական թվականների սկզբին, Ֆերուհխան Բարունակ բեյի վկայությամբ, նա արդեն իր տրամադրության տակ խոշոր զինված ջոկատներ ուներ, որոնց վրա հենվելով հրաժարվում էր կառավարությանը հարկեր վճարել և զինակոչիկներ տրամադրել (146, էջ 62)։

Բադրխանի իշխանության ներքո գտնվող քրդական ցեղերը պատրաստ էին արձագանքել կառավարության դեմ ապըստամբելու կոչին նաև այն պատճառով, որ 1843 թ. Թուրքական բանակի վերակառուցման մասին հրապարակված սուլթանական ֆիրմանը նախկին անկանոն հավաքագրումը փոխարինել էր կանոնավոր զինահավաքագրմամբ (329, էջ 99)։

1843 թ. Բադրխանը բացահայտորեն ապստամբեց կառավարության դեմ, նպատակ ունենալով իր տիրապետության ներքո միավորել քրդական ցեղերին և ստեղծել Օսմանյան կայսրությունից անկախ մեծ ու ընդարձակ մի Քրդստան (7, էջ 457)։ Ֆրանսիացի հետազոտող Էլիզե Ռեկլյուն գրում է, որ «այն լեռնադաշտերը, ուր քրդերը խմբված են հոծ ցեղերով, մասնավորապես Մեծ Զաբի ավազանը, նրանք կազմում են այն

աստիճանի մի ուժեղ ժողովուրդ, որ ունեն Թուրքերի և պարսիկների դեմ ազատ պետություն կազմելու փառասիրություն» (464, էջ 342)։ Այդ նույն կարծիքին է նաև եվրոպական մեկ այլ հետազոտող՝ Մյուլլեր Սիմոնիսը, որը նշում է, որ Բադրխանի գլխավորությամբ սկսված այս շարժումն ուներ քրդական պետություն ստեղծելու հավակնություններ (450, էջ 373)։

Բադրխանը իր ծրագիրն իրականացնելու համար իրար նեսից սկսեց իրեն ենթարկել մանր բեկերին ու նվաճել նրանց տիրույթները։ Ովքեր չէին համաձայնվում նրա դաշնակիցը լինել, դաժանորեն պատժվում էին։ Նախ նա ձեռնամուխ եղավ Բոհթանի քրդական իշխանությունների հնազանդեցմանը։ Ուժի սպառնալիքի ներքո շուտով նրան հարեցին նաև Ջեզիրեյի, Զախոյի, Ամադիայի և Հեքյարիի առավել ազդեցիկ ցեղապետերը։ 1843 թ. նա հարձակվեց Հեքյարիի մեջ մտնող Թիարի լեռնագավառի ասորական համայնքի վրա, որը համառորեն չէր ցանկանում ճանաչել Բադրխանի դաշնակից Հեքիարիի էմիր Նուրուլլա բեկի գերագայությունը և դիմադրում էր նրան։

Դեռևս 30-ական թվականներին ամերիկյան բողոքական միսիոներները Թիարի գավառում կենտրոն էին ստեղծել, նեստորական ասորիներին դավանափոխ անելու նպատակով։ Անմիջապես լուրեր տարածվեցին, որ ֆրանկները մտադիր են ողջ Քրդստանում քրիստոնեություն տարածել։ Բադրխանը, որը վաղուց առանձնահատուկ հետաքրքրություն էր դրսևորում հարուստ ասորիների նկատմամբ, «իսլամի պաշտպանության» պատրվակի տակ հարձակվեց Թիարիի վրա (267, էջ 16—17)։ Ասորիները ստիպված էին բողոք ներկայացնել Մոսուլի փաշա Մուհամմեդ Ինջե-Բայրաքթարին, որն էլ ավելի սրեց քրդերի թշնամանքը (216, էջ 448—449)։

Գրավելով ասորական համայնքի միջնաբերդը՝ Ջուլամերիկը, Բադրխանը և Նուրուլլա բեկը սրի քաշեցին 10—12 հազար ասորիների։

Հենրի Լեյարդը ցնցող փաստերով նկարագրելով ասորի բնակչության չարդը, գրում է, որ նրանք «բոլորը սառնասրտորեն սպանվեցին» (442, էջ 24, 127, 134—135, 169։ 443, էջ 106—108)։

Բադրխանը շատերին ստիպեց դավանափոխ լինել և ընդունել մահմեդականություն, շատերին գերեվարելով վաճառքի հանեց ստրկավաճառանոցներում, իսկ մի մասին էլ բռնի ստի-

պեց մտնել իր բանակի շարքերը (251, էջ 1—56, 191—210)։ «Առաջնորդվելով կրոնական փաստարկներով,— գրում է Վ. Նիկիտինը,— Բադրխանը աշխատում էր իրականացնել համաձուլման քաղաքականություն։ Նա իրեն համարում էր թուրքական տիրապետությունից ազատագրված շրջանների հոգևոր առաջնորդ» (294, էջ 288)։

Սուլթանական կառավարությունը քաջալերում էր Բադրխանի վայրագ գործողությունները ասորական բնակչության նկատմամբ, հույս ունենալով, որ ռազմաշունչ ասորիները չեն ընկճվի և այսպիսով կսկսվի տեղական մի անվերջանալի պատերազմ, որը կթուլացնի երկու կողմերն էլ։ Այդ նույն քաղաքականությունից ելնելով, Բ. Դուռը Բադրխանի կողմնակիցներին հրահրում էր նաև հայերի ու եզիդիների դեմ։ Ի դեպ, այդ ուղղությամբ հատկապես եռանդուն գործունեություն ծավալեց Մոսուլի Մուհամմեդ (Քերեթլի) փաշան (267, էջ 17)։

Ասորիների հետ հաշվեհարդար տեսնելուց հետո Բադրխանը իր զենքը ուղղեց Մոկսի քուրդ էմիր Աբդալ խանի դեմ։ Վերջինս իրեն դաշնակից ունենալով Մոկսի հայ բնակչությանը, ամրացավ իր բերդերում և համառ դիմադրություն ցույց տվեց։ Սակայն Բադրխանի գերազանցող ուժերի ճնշման ներքո տեղի տվեց և ստիպված էր դառնալ նրա դաշնակիցը։

Այնուհետև նրա կողմն անցան բազմաթիվ ցեղապետեր. Դավաշի բեյ խան-Մահմուդը, Խիզանի Դերվիշ և Խալիտ բեկերը, Մոսուլի շեյխ Մահմուդը, Զախոյի շեյխ Յուսուֆը, Շատախի ցեղապետերը և այլն։ «Պետէրխաններու ընդարձակ իշխանությունը, իրեն հնազանդեցուցած էր Վանէն մինչև Բաղէշ տարածուած երկրները եւ անոնց մէջ գոյութիւն ունեցող բոլոր քուրտ փոքրիկ իշխանութիւնները» (7, էջ 457)։ Բադրխանի ազդեցությունը տարածվեց նույնիսկ Մոսուլի, Դիարբեքիրի, Մեհարադի և Ուրմիայի վրա։

Ուժի ճնշման ներքո ստեղծված քրդական ցեղապետերի «սրբազան դաշինքի» մեջ մտան ոչ միայն Օսմանյան կայսրության քրդերը, այլև Իրանի խոշոր քուրդ կառավարիչներից մեկը՝ Արդալանի վալին (248, էջ 128)։

Սուլթանական կառավարությունը ուղղակի խուճապի էր մատնվել։ Բ. Դուռը պարզորոշ տեսնում էր, որ Բադրխանի գլխավորությամբ ծավալված շարժումը լոկ առաջնություն ձեռք բերելու համար սովորական միջցեղային պայքար չէ, այլ իրե-

նից ներկայացնում է քաղաքական լուրջ սպառնալիք։ Մանավանդ որ այդ շարժման ազդեցության ներքո Սղերդից դեպի արևմուտք ընկած շրջաններում ևս քրդական զանգվածները լցվում էին հակաթուրքական տրամադրություններով և ակնհայտորեն պատրաստվում էին վրեժ լուծել ընդամենը մի քանի տարի առաջ Հաֆրզ փաշայի կատարած գազանային արարքների համար։ Բացի այդ, քրդական միացյալ ուժերը մի շարք շրջաններում հարվածներ էին հասցնում թուրքական կանոնավոր բանակին, ստիպելով հետ քաշվել այդ շրջաններից։

Սուլթանական կառավարությունը որոշեց նախ փորձել իր զինանոցում եղած և բազմիցս հաջողությամբ փորձարկված զենքը՝ զանազան դավերի միջոցով քրդական ուժերը պառակտել։

Համոզվելով, որ տվյալ դեպքում այն անօգուտ է և առհասարակ Բադրխանի վրա ազդելու սովորական մեթոդները արդյունք չեն տալիս, սուլթան Աբդուլ Մեջիդը 1845 թ. հրամայեց բանակ ուղարկել ապստամբների դեմ առանձին-առանձին ջախջախելու նրանց։ Սակայն քրդերի միացյալ ուժերը Վանում պարտության մատնեցին թուրքական զորքերին և քաղաքի կառավարիչ նշանակեցին Բադրխանի զինակիցներից մեկին՝ Խան-Մահմուդին (472, էջ 451)։

1846 թ. հաղթանակներով արբեցած Բադրխանը որոշեց իրեն ենթարկել նաև Հեքյարիի նեստորական ասորիներով բնակեցված Թխոմա գավառը (153)։

Ասորիների դեմ Բադրխանին հատկապես հրահրում էր Աբդուլ-Ազիզ անունով քրդական ֆանատիկոս շեյխերից մեկը (234, էջ 116)։

Բադրխանի անգթությունը և դաժանությունը այստեղ հասավ իր գագաթնակետին։ Նա հրամայեց բոլորին անխտիր սրի քաշել, չխնայելով ո՛չ ծերերին, ո՛չ մանուկներին (433։ 489)։ Ասորիների հոգևոր առաջնորդ Մար-Շիմունը դիմեց ռուսական կառավարությանը, օգնություն աղերսելով։ Պետերբուրգի կառավարողների գութը շարժելու համար նա կտրեց կոտորված ասորիների ականջները և ուղարկեց ռուսական մայրաքաղաք (47, էջ 22)։ Ասորիները թախանձագին օգնություն էին խնդրում նաև Մոսուլում անգլիական հյուպատոս Ն. Ռասսամից (281, էջ 155—156)։ Իր անձը փրկելու համար Մար-Շիմունը ստիպված փախավ Ուրմիա (472, էջ 156)։

Մինչ եվրոպական տերությունները, ինչպես միշտ, իրենց մամուլում և դիվանագիտության միջոցով «զայրույթով» դատապարտում էին Բադրխանի բարբարոսությունները անպաշտպան ասորիների նկատմամբ, առանց ձեռնարկելու սակայն գործուն միջոցներ, նորահայտ տիրակալը հասցրեց կազմակերպել նաև Մոսուլի վիլայեթի եզիդ քրդերի կոտորած, որոնք չէին ցանկանում մասնակցել իր ծրագրերին։

Բադրխանի այդ արկածախնդրությունները ջլատում էին քրդական զանգվածների ուժերը, թուլացնում նրանց և, ամենակարևորը, շեղում հակաթուրքական պայքարից։ Ի դեպ, գաղտնապես թելադրելով ու հրահրելով այդ ջարդերը, սուլթանական կառավարությունը նեստորական ասորիների և եզիդների կոտորածների մեղադրանքը ամբողջապես բարդեց Բադրխանի վրա, նրա դեմ բորբոքելով բոլոր տուժվածների անհաշտ ատելությունը, և այսպիսով թուլացնելով քուրդ, հայ, եզիդ, ասորի բոլոր տարրերը (102)։

Հաշվեհարդար տեսնելով անհնազանդ ուժերի հետ, «սրբազան դաշինք» կնքած քրդական առաջնորդները պայմանավորվեցին գրաված հողերը բաժանելու վերաբերյալ։ Այսպես, Խան-Մահմուդին պետք է անցներ Ոստանը, Գավաշը, Շատախը, Մոկսը, Հայոց ձորը, Նորդուզը, Նուրուլլա բեկին՝ Ջուլամերիկի շրջանը, Աղբակը և Իրանական Քրդստանի հողերի մի մասը, Խան-Մահմուդի եղբայր Աբդալ խանը ստանալու էր Խոշաբը, Մուստաֆա Բեկը՝ Վանը, իսկ Բիթլիսի իշխանությունը նախկինի պես մնալու էր նրա ժառանգական տիրակալ Շերիֆ բեկին և այլն։

Օսմանյան կայսրությունից անկախ «մեծ Քրդստանի» իրենց մտահղացած ծրագիրն իրականացնելու միտումով 1847 թ. Բադրխանի կողմնակիցները ձեռնամուխ եղան նոր նվաճումների (414, էջ 42), հատկապես նպատակ ունենալով ծավալվել դեպի Դիարբեքիրի կողմը։ Ընդ որում, քաջ գիտակցելով, որ դժվար է առանց դրսի օգնության իրականացնել այդ ծրագիրը, առավել ևս պահպանել ստեղծվելիք քրդական բեյլիքի գոյությունը Օսմանյան կայսրության հարվածներից, Բադրխանը որոշեց օգտվել իրանական կառավարության աջակցությունից և նույնիսկ ընդունել Իրանի հովանավորությունը (469, էջ 56)։

Դա պայմանավորված էր նաև նրանով, որ եվրոպական

տերությունները և առաջին հերթին Անգլիան և Ռուսաստանը, թշնամաբար էին տրամադրված Բաղրխանի ծրագրերի նկատմամբ, որովհետև դրանք կարող էին խախտել մերձավորարևելյան հավասարակշռությունը և հարված հասցնել իրենց առևտրական շահերին։ Հետևաբար որևէ պետության, տվյալ դեպքում Իրանի, հովանավորության, ընդունումը կենսական անհրաժեշտություն էր Բաղրխանի շարժման համար։

Այդ նույն ժամանակ լեռնային շրջաններում տեղավորված հայկական կիսանկախ համայնքները, որոնք ցանկանում էին պահպանել իրենց վաղեմի իրավունքները, որի պատճառով և դիմադրում էին օսմանյան վարչության արմատավորմանը իրենց շրջաններում, հանդես եկան որպես Բաղրխանի կողմնակիցներ, նրան տրամադրելով զգալի թվով մարտիկներ։ Դրանցից էին օրինակ, Դըհի հայերը։ Հայկական այս շրջանը, որն ընկնում էր Բոհթանի սահմանների մեջ, հենց սկզբից պաշտպանեց Բաղրխանի շարժումը։ Նրա բանակի մեջ մտավ նաև Շատախի, Մոկսի և մի շարք այլ լեռնային շրջանների հայկական ազատ համայնքների բնակչությունը։ Բոհթանի էմիրը կազմակերպեց նույնիսկ հայ-քրդական մի խառը բանակ, որը կոչված էր նեցուկ հանդիսանալու նրա լայնահուն քաղաքական ծրագրերին։ Ընդ որում, Բաղրխանը փորձում էր ստեղծել ոչ միայն աշխարհիկական, այլև քաղաքական մի միություն, որի մեջ պետք է մտնեին ինչպես քրդական իշխանապետությունները, այնպես էլ հայկական կիսանկախ համայնքները։ Վերջիններիս իր կողմը գրավելու համար Բաղրխանը խոստացավ, որ Օսմանյան կայսրությունից անկախություն ձեռք բերելուց հետո ինքը հայերին կթողնի հայաբնակ վայրերը, որպեսզի նրանք քրիստոնյա Ռուսաստանի հովանավորության ներքո ստեղծեն անկախ Հայաստան (7, 458)։ Նա աշխատում էր օգտվել նաև Վանի հայ քաղաքային բուրժուազիայի նյութական և բարոյական օգնությունից, խոստանալով, որ եթե ինքը հաղթանակ տանի և անկախ Քրդստանի ծրագիրը իրականություն դառնա, ինքը հայերին կտա «կառավարության տնտեսական բաժնի մատակարարությունը» (7, 458։ 102, էջ 152—153)։ Մասնավորապես նա ծրագրում էր հայերի օգնությամբ իր ապագա իշխանության մեջ ստեղծել զինագործարաններ, կազմակերպել կանոնավոր նավագնացություն Վանա լճի վրա և այլն։ Բաղրխանը խոստանում էր նաև հայերին ընդգրկել իր բանակի շարքերը և նրանց շնորհել բարձր զինվորական կոչումներ (116, էջ 86)։

Գայթակղությունը իսկապես չափազանց մեծ էր։ Հայ բնակչությունից գտնվեցին մարդիկ, որոնք հարեցին Բաղրխանին, դառնալով զինվորներ, քաղաքական խորհրդականներ, զենք հայթայթողներ, բանակը ֆինանսավորողներ և այլն։ Այս-

պես, մեր (իշխան Մարտո, Մարտիրոս) Բաշկալեցին դարձավ Բադրխանի բանակի զորավար, Ստեփան Մանողլյանը՝ Աստղ մականունով, Հովհաննես Չալկատրյանը և ուրիշները դարձան Բոհթանի էմիրի խորհրդականները և այլն (7, էջ 458)։

Ինչ վերաբերում է հայ արհեստավորական և առևտրական դասին, ապա նա հետաքրքրություն հանդես չբերեց Բադրխանի խոստումների նկատմամբ, որոնք ոչնչով երաշխավորված չէին։ Դա բացատրվում է նրանով, որ այդ դասը «պետք ուներ հանգիստ ու խաղաղ բարգավաճման, և երբեք չէր դիմի նման վտանգավոր և անորոշ քայլերի» (116, էջ 88), մանավանդ որ Բադրխանն աշխատում էր հայ առևտրականներին և արհեստավորներին ներգրավել իր կողմը ոչ թե նրանց իրապես շահագրգռելու ճանապարհով, այլ բռնի ուժի, հարկադրման միջոցով։ Երկրի կենտրոնացումը իրագործելու, ֆեոդալական անջատվողականությունը ոչնչացնելու և վարչությունը կարգավորելու քաղաքականությանն արդեն ձեռնամուխ էր եղել կենտրոնական կառավարությունը, որը միանգամայն համընկնում էր Օսմանյան կայսրության այլազգի բուրժուազիայի շահերին։ Պետք է նկատի ունենալ նաև, որ Բադրխանի շարժումը ուղեկցվում էր գյուղերի քայքայմամբ, հողագործության, արհեստների և առևտրի անկմամբ։ Դա արգելակում էր արտադրողական ուժերի զարգացումը, խափանում ներքին առևտրական կապերը, այլ կերպ ասած, ուղղակի վնաս էր հասցնում արհեստավորական և առևտրական դասին։

Բադրխանի շարժման նկատմամբ բարյացակամ վերաբերմունքի հիմքեր չուներ նաև հայ հողագործ դասը։ Նա վերջինիս վերաբերվում էր ինչպես ճորտերի։ «Այս քուրդ-թրքական պատերազմի մէջ հայ ռայեա գիւղացիութիւնը պարտաւորուած էր կանգնելու քրդութեան հետ որպէս ճորտ, ինչպէս յաճախ կը պատահէին միջցեղային քրդական ընդհարումներու ատեն, երբ հայ թէ քուրդ եղբայրասպան արիւնայեղութիւններու կենթարկուէին ակամայ» (116, էջ 88)։

Բազմաթիվ փաստեր կան այն մասին, որ բռնի ուժի ճընշման ներքո հայ գյուղացիությանը ստիպում էին մասնակցել միջցեղային կռիվներին, հաճախ նույնիսկ իրենց եղբայրակիցների դեմ (97, էջ 249)։ Այսպես, երբ Բադրխանը շարժվեց Մոկսի Աբդալ բեյի վրա, հակառակորդ զորքերի կազմում հարկադրաբար կռվում էին նաև հայերը՝ մի մասը հարձակվողի, մյուսը՝

պաշտպանվողի դերում։ «Հայերը,— նշում է Հակոբ Շահպազյանը,— դերբեյական այս կռիվների մեջ մեծ վնասներ կը կրեին, թողնելով արհեստ ու հողագործություն, և մտնելով ասպատակի կամ ասպատակության ենթակա դրության մեջ՝ բռնի» (116, էջ 81)։

Հայ գյուղացիության վիճակի բարդությունը կայանում էր նաև նրանում, որ Բադրխանի բանակի մեջ գտնվելու պատճառով նա ենթարկվում էր նաև թուրքական իշխանությունների հալածանքներին։

Բոհթանի էմիրն իր հերթին ամենադաժան պատիժների էր ենթարկում այն հայ գյուղացիներին, որոնք խուսափում էին ծառայել իրեն։ «Ֆըլա եղածին կձգէին ձեռաց երկու թաթերու վրայ ու դարձնելով չորքոտանի անասուն, յարդով լեցուն էշի գլխին անցնելիք տոպրակը կկախէին անոր գլխէն, ու ամուր կապելէն յետոյ, երկաթէ մեխերով անոր կը խթէին... կը տանջէին, ֆըլան հարուածներ կրելով շունչը կը կըտրուեր տոպրակին մէջ ու կըմեռնէր» (116, էջ 109)։

Ճիշտ է, Բադրխանը իր թևարկության ներքո գտնվող շրջաններում աշխատում էր թույլ չտալ, որպեսզի ամեն ոք ինքնագլուխ կողոպտի ու կոտորի, սակայն միևնույն ժամանակ աշխատավոր գյուղացիության և քաղաքային չքավորության նկատմամբ սահմանել էր հարկատոսի չափազանց ծանր պայմաններ։ Նա ստիպում էր հայ և քուրդ հողագործ ազգաբնակչությանը հարկեր մուծելուց բացի կատարել ձրի հարկադրական աշխատանք. կառուցել ամրություններ ու ճանապարհներ, պատրաստել զենք ու զինամթերք և այլն։

Այնուամենայնիվ, Բադրխանի շարժումը ոչ միայն հայերի, այլև տեղացի մյուս ժողովուրդների՝ հատկապես ասորիների մոտ առաջ բերեց սարսափի, արհավիրքի զգացումներ։

Այս պայմաններում հայ գյուղացիությունը և քաղաքային բնակչությունն ի վերջո թուրքական վարչությանը սկսեցին գերադասել Բադրխանի քմահաճ իշխանությունից։ Տվյալ դեպքում թուրքական պետականությունը հանդիսանում էր «կարգի ներկայացուցիչը անկարգության մեջ» (149, էջ 411)։ Իրավացի է Հ. Ղազարյանը, երբ գրում է. «Բեդր-խանի սահմանած վարչակառավարչական ձևը, հարկապահանջության չափերն ու գանձման եղանակները, հպատակ այլազգիների նկատմամբ ունեցած վերաբերմունքն ավելի վատթար էին ու սոսկալի, քան

թուրքական պետությանն ու նրա պաշտոնյաներինը։ Այդ էր հիմնական պատճառը, որ պետականությունից զրկված հայ ազգաբնակչությունը, ինչպես նաև ասորիները՝ չարիքներից փոքրագույնն ընտրելով, գերադասում էին սուլթանների հպատակությունը, քան Բեդր-խանի անսահմանափակ բռնապետությունը» (98, էջ 59)։

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը և անձամբ Մատթեոս Զուհաճյան պատրիարքը[8], քաղաքների առաջնորդարանները ու առևտրականները, արհեստավորները և ուրիշներ կառավարությանն ուղղված իրենց բողոքագրերում աղերսում ու պահանջում էին սանձահարել ապստամբ քրդական ավատատերերին ու վերջ տալ նրանց կամայականություններին։

Սուլթանին ուղղված իր բողոքագրերից մեկում Մատթեոս պատրիարքը գրում էր. «...անողորմ եւ ապստամբ ազգն Մարաց ունելով ի գլուխ իւրեանց զխան Մահմուտ եւ զՊէտէրխան պէյ, հարստահարէին զբնակիչս Վանայ և Տարօնոյ եւ շրջակայ գիւղօրէիցն, կողոպտէին զվանօրայս և զեկեղեցիս, կեղեքէին եւ սպանանէին» (123, էջ 321)։ Պատրիարքը զգուշացնում էր Բ. Դռանը, որ «բնակիչք Վանայ ոչ կարելով այլեւս տոկալ անրմբեր տառապանաց՝ զոր հասուցանեն Մարք ի վերայ նոցա, որոշեալ են ի միջի իւրեանց խոյս տալ ընտանեօք հանդերձ եւ գաղթել ի Ռուսաստան» (123, էջ 322)։

Իհարկե չափազանցություն է Ա. Պերպերյանի այն տեսակետը, ըստ որի թուրքական կառավարությունը Բադրխանի դեմ պատժիչ բանակ ուղարկեց հայոց պատրիարքի բողոքի հիման վրա։ Պարզապես կառավարության համար նման քայլ ձեռնարկելու ժամանակը վաղուց հասունացել էր։ Բադրխանի շարժումը ուղղակի հանկարծակիի էր բերել սուլթանական կառավարությանը, որի աչքի առջև քրդական այդ առաջնորդը մեկը մյուսի հետևից իրեն հնազանդեցնելով մեծ ու փոքր ավատատերերին՝ նրանց տիրույթները միացնում էր իր տիրապետություններին, նպատակ ունենալով ստեղծել «միապաղաղ մի քրդական իշխանություն» (116, էջ 81)։

Սուլթանական կառավարության տագնապը մեծանում էր մանավանդ այն պատճառով, որ կարճ ժամանակամիջոցի ընթացքում Բադրխանը և նրա դաշնակիցները արդեն դարձել էին Քրդստանի և Հայաստանի իրական տերը։ Իսկ դա քաղաքական մի վտանգ էր, որի հետ Բ. Դուռը չէր կարող լրջորեն հաշվի չնստել։

Հարկ է նշել նաև, որ Օսմանյան կայսրության միջազգային դրությունը ևս տվյալ պահին միանգամայն բարենպաստ էր քրդական հարցով զբաղվելու համար։ Թուրք-եգիպտական ընդհարումը հօգուտ սուլթանական կառավարության հարթվելուց հետո, վերջինս հնարավորություն էր ստացել ուշքի գալ Իբրահիմ փաշայի հարվածներից և կարողացել էր նշանակալիորեն համալրել իր բանակը։

Մյուս կողմից սուլթան Աբդուլ Մեջիդի վրա ճնշում էին գործադրում անգլիացիները, պահանջելով արագացնել Բադրիխանի շարժման ջախջախումը։ Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Ստրատֆորդ Ռեդկլիֆը (հայտնի է նաև Ստրատֆորդ Քաննինգ անունով), որն իր պաշտոնավարության ընթացքում դիվանագիտական և քաղաքական դավերի մի բարդ ցանց հյուսեց Ռուսաստանի և Ֆրանսիայի դեմ, խիստ անհանգստացած էր, որ Պետերբուրգը կարող էր օգտագործել Բադրխանի շարժումը Օսմանյան կայսրությունից քաղաքական զիջումներ ստանալու համար։ Բրիտանական կառավարությանը մեծապես անհանգստացնում էր նաև Ռուսաստանի առևտրատնտեսական ներթափանցման վտանգը դեպի Մերձավոր արևելքի շուկաները, որը լուրջ հարված կարող էր հասցնել անգլիական գործարար աշխարհի շահերին։

Ֆ. Էնգելսը նշում է, որ XIX դարի երկրորդ քառորդից սկսած «Տրապիզոնի առևտուրը նույնպես դառնում է չափազանց լուրջ քաղաքական պրոբլեմ, քանի որ նա հանդիսանում է ներքին Ասիայում Ռուսաստանի և Անգլիայի շահերի նոր բախումների աղբյուր։ Ռուսաստանի և Անգլիայի միջև առևտրական ճակատամարտի ասպարեզը Հինդոսից տեղափոխվել է Տրապիզոն» (147, էջ 383)։

«Կ. Պոլիսը և հատկապես ասիական Թուրքիայում գտնվող Տրապիզոնը,— շարունակում է Ֆ. Էնգելսը,— հանդիսանում էին ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Պարսկաստանի և Թուրքեստանի քարավանային առևտրի գլխավոր շուկաները։ Եվ այդ առևտուրն արագորեն աճում է։ ...Իր դիրքի շնորհիվ Տրապիզոնն ավելի է համակերպված այդ առևտրին, քան որևէ այլ կետ։ Նրա հետևախորքի վրա գտնվում է հայկական բարձրավանդակը, որն ավելի մատչելի է, քան սիրիական տափաստանները և բավականաչափ մոտ է գտնվում Բաղդադին, Շիրազին ու Թեհրանին։

Վերջինս տարանցիկ շուկայի դեր է կատարում Խիվայից ու Բուխարայից եկած քարավանների համար։ Մանչեստրի բորսայում կարելի է ակնհայտորեն տեսնել, թե որքան ուժեղ է զարգանում այդ առևտուրը և Սև ծովի առևտուրն առհասարակ...» (147, էջ 384)։

Տրապիզոնում և Էրզրումում անգլիացիներն արդեն հասցրել էին բաց անել բրիտանական առևտրական ընկերությունների մշտական ներկայացուցչություններ (402, էջ 357—359։ 468, էջ 3—4), փորձում էին մերձավորարևելյան ողջ առևտրի մենաշնորհը վերցնել իրենց ձեռքը և դուրս մղել Ռուսաստանին։

Թուրքական կառավարող շրջանները կասկածներ ունեին նաև, որ Իրանը ևս կարող է փորձել օգտվել Բաղդխանի ծավալած շարժումից։ Նրանց չէր կարող հայտնի չլինել, որ իր ապագա իշխանությունը Թուրքական պետության հարվածներից պաշտպանելու համար Բաղդխանը որոշել էր ապավինել Իրանի պաշտպանությանը։ Նա նույնիսկ Մելիքզադյան ազգանունով մի պարսկաստանցի հայի միջոցով, որի եղբայրը շահի պալատականներից էր, հովանավորության խնդրանքով դիմել էր Իրանի կառավարությանը (116, էջ 86, 88)։ Հետևաբար Իրանը հավանական է, որ օգտվեր այդ նպաստավոր առիթից Թուրքիայի հետ ունեցած իր հողային վեճերը հօգուտ իրեն լուծելու համար։

Այսպիսով, Բաղդխանի շարժման ջախջախումը Թուրքական ղեկավար շրջանների կողմից դիտվում էր որպես մի քայլ, որն անհրաժեշտ էր ապահովելու կայսրության սահմանների անձեռնմխելիությունը իրանական, ինչպես նաև ռուսական վտանգից։

Վերջապես, Բ. Դուռը կենսականորեն շահագրգռված էր հայկական ու քրդական նահանգներում հաստատել Թուրքական վարչություն ու դատարաններ՝ այդ նահանգների իրական տերը դառնալու համար։

Իր համար ներքին և միջազգային-քաղաքական բնույթի անցանկալի բարդություններից խուսափելու համար սուլթանական կառավարությունը սկզբում աշխատում էր Բաղդխանի շարժման պրոբլեմը լուծել խաղաղ ճանապարհով, փորձելով համոզել նրան հետ կանգնելու իր բռնած ընթացքից (495, էջ 144)։ Մերժումն ստանալուց հետո կառավարությունը որոշեց դիմել զենքի։ 1846 թ. մի խոշոր բանակ դրվեց մարշալ Օսման

փաշայի հրամանատարության ներքո, որին հրաման տրվեց գրոհել Բադրխանի ուժերի վրա։

Թուրքական կառավարությունը որոշեց հայերին ներգրավել այդ ձեռնարկի մեջ, որովհետև նա քրդերին հնազանդեցնելու և քրդական հոծ զանգվածներ ունեցող նահանգներում ամրապնդվելու համար տեղական օժանդակ ուժերի աջակցության կարիք էր զգում։ Սուլթանը մտադիր էր նախ՝ օգտագործել հայերին բանակում որպես կռվողների և ապա, որ ամենակարևորն էր, խորացնել հայ-քրդական հակամարտությունը և երկու հարևան ժողովուրդների միջև սերմանել մի այնպիսի թշնամանք, որը նրանց միշտ պահեր առճակատման վիճակում։

Առաջնորդվելով այս նկատառումներով, Օսման փաշան սկսեց անխտիր զինվորագրել տեղական հայ բնակչությունը և ներգրավել իր բանակի շարքերը (7, էջ 458)։ Այնուհետև կառավարությունը Բադրխանի դեմ ձեռնարկված արշավանքին աշխատում էր տալ այնպիսի երանգ, որ իբր այն կազմակերպվել է միայն հայերի իրավունքների պաշտպանության համար։ Կոստանդնուպոլսում հրատարակվող «Լրո գիր մեծի տերությանն օսմանյան» հայերեն թերթը, որն իրականում կառավարական ձայնափող էր, մեծ քանակությամբ հաղորդագրություններ ու հրովարտակներ էր տպագրում, տպավորություն ստեղծելու համար, թե իբր Բադրխանի և մյուս քուրդ ցեղապետերի ապստամբությունը ճնշելու նպատակն է «հարստահարությանը ենթակա եղող խել մը բնակիչները ու հպատակները հանգստացնելը» (100, էջ 68)։

Այսպիսով, օսմանյան կառավարությունը իր նպատակները վարագուրում էր շողշողուն խոստումներ տալով հայ ժողովրդին և իր ձեռնարկելիք քայլերը ներկայացնելով որպես մեծ շնորհ, որ «բարեխնամ» կառավարությունը անում է հայության համար։

Սուլթանական կառավարությունը միաժամանակ միանգամայն պարզորոշ հասկացնում էր հայերին, որ եթե նրանք իր հետ չլինեն, իր թշնամին կդառնան և նույնպես կարժանանան յաթաղանի շեշտակի հարվածին, որը պատրաստվում էր իջեցնել «անհնազանդ» քրդերի գլխին։

Մատթեոս պատրիարքը տեղեկություններ ուներ, որ Բադրխանի բանակում զգալի քանակությամբ հայեր կան և ահաբեկված ապագա վտանգի սարսափից, «հավատարմության

հավատիք» տալու համար ոչ միայն հորդորող կոնդակներ էր ցրում, այլև կոչ էր անում իր ժողովրդին օժանդակություն ցույց տալ օսմանյան «ազատարար» բանակին, «որ պիտի գար ոչնչացնելու քրդական իշխանապետությունները և ազատագրելու հայ ժողովուրդը»։

Դիմելով Դիարբեքիրի, Բիթլիսի, Բալուի, Էրզրումի և Վանի առաջնորդներին պատրիարքը հորդորում էր, որ «ժողովուրդք իւրեանց ելցեն ի վրէժխնդրութիւն այնչափ տառապանացն՝ զորս կրեցին մինչեւ ցարդ, յամենայնի օգնական լիցին եւ ծառայեսցեն արքունի բանակին եւ զհաւատարմութիւն իւրեանց ցուցցեն իրօք առաջի արքայի» (123, էջ 322)։

Բացառված չէ, որ Մատթեոս պատրիարքի այս կոնդակները գրված լինեն Թուրքական կառավարության թելադրանքով, կամ նրան հաճոյանալու նպատակով։ Սակայն կասկած չի հարուցում, որ դրանցում պատրիարքն արտահայտում էր արևմտահայության որոշ խավերի տրամադրությունները։

Որոշելով քրդերին ջախջախել առանձին-առանձին, Օսման փաշան իր բանակը բաժանեց երեք մասի և շարժվեց տարբեր ուղղություններով, դեպի Վան, Էրզրում, Խարբերդ և Մոսուլ։ Նախ օսմանյան բանակը մտավ Մոկս, ջախջախեց Արդալ խանին, գերեվարեց նրան և աքսորեց Հոռոդոս կղզի։ Վան-կուլինեբրի ղեկավար Քյոռ Մուստաֆա փաշան, վախենալով Թուրքական բանակի հրամանատարի վրեժխնդրությունից, կամովին զենքը ցած դրեց և հանձնվեց նրան (123, էջ 322)։

Որոշելով պատժել հայերին, որոնք հրաժարվում էին իր ջոկատների կազմում կռվել Թուրքական բանակի դեմ, Խան Մահմուդը պաշարեց Այգեստանը։ Հայերը դիմադրեցին քաջությամբ և Թուրքական բանակի մոտենալուց հետո անցնելով հակահարձակման, ձերբակալեցին ահեղ ցեղապետին և հանձնեցին Օսման փաշային։ Վերջինս սրի քաշեց պարտվածներին, իսկ Խան Մահմուդին աքսորեց Սիլիստրե (123, էջ 322)։

Այնուհետև Թուրքական բանակը շարժվեց դեպի իր գլխավոր նպատակակետը՝ Ջեզիրե, որի Բոհթան գավառում ամրացել էր Բադրխանը։ Առաջին իսկ բախման ժամանակ Օսման փաշայի բանակը լուրջ պարտություն կրեց, որը թուլացրեց նրա զորքերի հարձակողական թափը։ Կռիվները շարունակվեցին, հաջողություն բերելով մերթ մեկ, մերթ մյուս կողմին։ Օսման փաշան նույնպես որոշեց Թուրքական դարավոր դավադրական

զինանոցից հանել բազմիցս փորձված զենքերից մեկը՝ ցեղապետերի միջև փոխադարձ թշնամանք բորբոքելու և կաշառքով ու բարձր դիրքերի խոստումներով Բաղրխանի դաշնակիցների մեջ դավաճաններ գտնելու քաղաքականությունը։ Այս փորձը իր պտուղները տվեց։ Օսման փաշային հոչողվեց դավաճանության մղել Բաղրխանի եղբոր որդուն՝ Եզդանշիրին, որին հանձնարարված էր իր ջոկատով պաշտպանել ապստամբների դիրքերը ռազմաճակատի ձախ թևում։ Վերջինիս դավաճանության հետևանքով թշնամու առջև բացվեց Բոհթանի ճանապարհը (24, 1847 թ. 5 սեպտ., № 293)։ Եզդանշիրի օրինակին հետևեց նաև ազդեցիկ ցեղապետերից մեկը՝ Միրզա բեյը, որը տիրում էր Մշո դաշտի Չխուրի շրջանում, տարածելով իր ազդեցությունը մինչև Բիթլիս։

Այս դեպքերից հետո թուրքական զորքերի հաջողությունները արագորեն զարգացան։ Բաղրխանը թեև համառ դիմադրություն էր ցույց տալիս, սակայն նրա կողմնակիցները լքեցին իրեն ու աստիճանաբար ցրվեցին։

Ի դեպ, Բոհթանի էմիրին հնազանդեցնելու գործում ևս թուրքական զորքերին եռանդուն աջակցություն ցույց տվեցին շրջակա բնակավայրերի հայերը և եզիդները։ Այդ առիթով Ավետիս Պերպերյանը հաղորդում է. «Ժողովեցան հայք Վասպուրական աշխարհին, եւ մարտ եղեալ յարձակեցան ի վերայ Ճեզիրէ նահանգին, ուր որջացեալ ամրացեալ կային յանառիկ վայրս գլխաւորք բարբարոսաց, եւ այնչափ ի նեղ արկին զպէտէրխան պեյ նոցա, մինչեւ յոգիս լինել նմա ապաստան, եւ յուսահատեալ յանձնեաց զինքն սպարապետ Օսման-փաշային հանդերձ իւրով զգերդաստանաւն» (123, էջ 321—322)։

Քրդական էմիրը[9] և նրա ձերբակալած ցեղապետերը աքսորվեցին Կրետե կղզի[10]։ Ապստամբության բազմաթիվ մասնակիցներ փախան Իրան և Անդրկովկաս, շատերը քաշվեցին անառիկ լեռները (24, 25 հուլիսի, 1847 թ., № 290)։ Ստեփան Մանողլյանը և Հովհաննես Չալկատրյանը ևս Բաղրխանի հետ գերի ընկան և աքսորվեցին նախ Կեսարիա, իսկ ապա Կապան Մատեն (10, էջ 154)։

Քրդերի հետ համատեղ թուրքական բանակին ուժգին դիմադրություն ցույց տվեցին Դրհի և Բոհթանի շրջանի հայկական կիսանկախ համայնքները։ Պարտությունից հետո Օսման

փաշայի հալածանքներից խուսափելու համար այդ շրջանների բազմաթիվ հայեր ստիպված էին դիմել արտագաղթի։

Բոհթանում ձեռք բերած հաղթանակից հետո Օսման փաշան իր բանակը բաժանեց մի քանի զորասյուների և ներխուժեց Արևմտյան Հայաստանի և Քրդստանի այն բոլոր վայրերը, որոնք ունեին անկախ կամ կիսանկախ վիճակ և չէին ենթարկվում օսմանյան թևարկությանը։ 1848—1849 թթ. ընթացքում թուրքական բանակը ընկճեց Խոշաբի, Մուշի, Բիթլիսի իշխանապետությունները, ձերբակալեց տեղական քուրդ իշխանապետերին և նշված վայրերի կառավարիչ նշանակեց Բ. Դուան թուրք պաշտոնյաների (472, էջ 374)։ Այնուհետև մի զորամաս ուղարկվեց Բայազետ-Ալաշկերտի շրջանը, որտեղ վերջ տրվեց շրջանի քուրդ տիրակալ Բալյուլ փաշայի իշխանությանը։ 1849 թ. Գյոզլյուքլու Ռաշիդ փաշան ճնշեց Հաքյարիի քրդերի վերջին դիմադրությունը և վերջնականապես նվաճեց այդ ապստամբ ու ըմբոստ շրջանը։ Թուրքական բանակը քանդեց Մշո Զաուրմե բերդը, Մոկաց բերդը, Բոհթանի, Բիթլիսի, Գյավաշի, Խնուսի և Բայազետի բերդերը, իսկ նրանց տիրակալ ցեղապետերին աքսորեց Արաբական թերակղզի և այլ վայրեր, հեռու պահելու համար քրդական զանգվածներից և հակաթուրքական շարժման օջախներից։

Քրդերին թուլացնելու նպատակով կատարվեցին նաև վարչական վերափոխություններ։ Դեռևս 1847 թ. վերջին մի շարք քրդաբնակ վայրեր միավորվեցին և դրվեցին նախկին վեզիր Էսադ Մուխլիս փաշայի կառավարչության ներքո (248, էջ 149)։

Այնուհետև քրդական ցեղապետ-ավատատերերի լենային տիրույթները վերածվեցին թուրքական վարչական միավորումների, որոնցում ցեղապետերը պահպանում էին միայն անվանական ինքնավարություն (294, էջ 279)։

Քրդերի նկատմամբ իր տիրապետությունը ամրապնդելու և ապագայում հակակառավարական ելույթները եթե ոչ խսպառ վերացնելու, ապա գոնե ինչ-որ չափով նվազեցնելու նպատակով օսմանյան կառավարությունը իր համար միջազգային-քաղաքական կարևոր նշանակություն ունեցող մի քայլ արեց։ Քանի որ Իրանը իր քաղաքական նպատակներից ելնելով Թուրքիայի քրդերին անընդհատ հրահրում էր հակակառավարական ելույթների և քանի դեռ այդ հարցում շահական կառավարության հետ չէր կայացվել որևէ համաձայնություն, Կ. Պոլիսը

քրդերին ի վիճակի չէր լինի պահել հանգիստ վիճակում (500, էջ 44—48)։

Այդ պատճառով թուրքական դիվանագիտությունը պնդեց, որ 1847 թ. մայիսի 19-ին (հիջրեթի 1246 թ.) Էրզրումում կնքված թուրք-իրանական պայմանագրի մեջ քրդական հարցի վերաբերյալ հատուկ կետ մտցվի։ Ըստ այդ կետի, շահական կառավարությունը պարտավորվում էր թույլ չտալ Իրանի սահմանամերձ շրջաններում տեղավորված քրդական ցեղերի հարձակումները թուրքական տարածքի վրա և չհրահրել նրանց օսմանյան կառավարության դեմ։ Պայմանագրում նշվում էր նաև, որ այն ցեղերը, որոնց հպատակության հարցը վիճելի էր, «մեկ անգամ ընդմիշտ» պետք է որոշեին այն և ընտրեին իրենց համար բնակության վայր կամ Իրանում, կամ Թուրքիայում (283, էջ 631, 638։ 407, էջ 2—4)։

Սուլթանական կառավարությունը Բաղդխանի դեմ տարած հաղթանակը այնքան կարևոր էր համարում, որ այդ առթիվ նույնիսկ հատուկ կրծքանշան սահմանեց (248, էջ 149)։ Ցընծության մեջ էր նաև Կոստանդնուպոլսի հայությունը։ Մատթեոս պատրիարքի հրամանով հայկական բոլոր եկեղեցիներում երգում էին «Ցնծացեք առ աստված, օգնական է մեզ»։ Սուլթան Աբդուլ Մեջիդը իր ներքինապետ Թեյֆուր աղայի միջոցով շնորհակալություն հայտնեց Մատթեոս պատրիարքին «հայության համակիր դիրքի համար»։ Պատրիարքն անմիջապես «կայսերական մեծ շնորհն» ազգասիրական ջերմ զեղումներով ավետեց իր ժողովրդին, միաժամանակ բուռն հավատիացումներ անելով, որ «հայի երկիրը, դրախտավայր Հայաստանը կրկին պիտի ծաղկի ու բարգավաճի» (123, էջ 323)։

Պատրիարքը կոնդակ հղեց Օսմանյան կայսրության բոլոր ծայրերում ապրող հայերին, որտեղ նա հորդորում էր շնորհակալ և բարեմաղթող լինել արքայի և «իւրոյ մեծազօր տէրութեան, և տօն ցնծութեան կատարել վասն ազատութեան ազգիս հայոց ի բռնութենէ անողորմ բարբարոսաց»։ Ավետելով, որ «ազատեցավ Հայաստան աշխարհը աս դառն վիճակեն, աս անտանելի գերութենեն», նա հույս էր հայտնում, որ այսուհետև հայերի համար սկսվելու են նոր ժամանակներ, «տոն ազատության», որ Հայաստանը «այսուհետև կը նորոգի, կը պայծառանայ, և իւր առաջին սքանչելի տեսիլը եւ գեղեցկութիւնը կստանայ» (123, էջ 324—325)։

Մայրաքաղաքի հայկական պաշտոնաթերթ «Լրո գիրը» երկարակեցության մաղթանքներ էր ձոնում մեծափառ սուլթանին՝ հայերին քրդերի ասպատակություններից ազատելու, նրանց գլխին կախված վտանգը վերացնելու, հանցագործներին «շղթայակապ» Պոլիս բերելու համար։ Շնորհակալության այդ խոսքերը երկինք էին հանում Թուրքական «բարեխնամ» կառավարության հոգատարությունը (100, էջ 70)։ Իսկ Կոստանդնուպոլսի պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստանը» գրում էր. «Ժամանակ մը մեր Ասիայեն միշտ ցավալի լուրեր կ՚առնեինք. զանազան քյուրդ ցեղերուն գործած անգութ շարությունները կլսեինք. կողոպտել, քանդել, կործանել, գերել, սպանել, վերջապես... ապստամբ ժողովրդե մը ինչ անօրենություններ կսպասվի նե՝ անոնց ամենը։ Մեր ողորմելի Հայաստանին թշվառությունը որին երեսեն է, թե որ անոնց երեսեն չէ նե, Հայաստանին այն զվարճալի դաշտերուն երեսը ով՚ տխրեցուց, ո՚վ ծածկեց անոնց երեսը սգո կտավով. քյուրդերուն ապստամբությունը և անկախությունը չէ՞ մի... վեհափառ և գթած արքայն իր բոլոր երկրին երջանկությունը ցանկալով այս ապերջանիկ երկրին ալ պետք եղած հոգը տանելու սկսեց մեկ երկու տարիե ի վեր» (86, 1849 թ., № 160)։

Թերթը նույնպես լավատեսորեն էր տրամադրված, և նույնիսկ պնդում էր, թե իբր Արևմտյան Հայաստանում սարսափը և բռնատիրությունը այլևս վերացել է և ամենուրեք «բարերար օրենքների»՝ Թանզիմաթի շնորհիվ իշխում է խաղաղությունը։ Սակայն հետագա դեպքերը վկայեցին, որ հայերի սպասելիքները չարդարացան։ Նախ, Արևմտյան Հայաստանի հայ բնակչության և քուրդ ավատատերերի հարաբերությունների հարցում ըստ էության դրական իմաստով ոչ մի նշանակալից փոփոխություն տեղի չունեցավ։ Այնուհետև, կառավարությունը, հակառակ իր շռայլ խոստումների, ոչինչ չարեց արևմտահայության վիճակը որոշ չափով թեթևացնելու և քրդական ավատատերերի կամայականությունները սանձահարելու կամ որոշակի սահմանների մեջ դնելու ուղղությամբ։ Նախկինում Բադրիխանի տիրապետության տակ գտնվող հայերի վիճակը էլ ավելի բարդացավ ու վատթարացավ, որովհետև առաջվա պես նա պետք է գոհացներ քուրդ ավատատերերին, նրանց հատկացնելով ավանդական հարկերը, իսկ մյուս կողմից Թուրքական կառավարությանը պետք է վճարեր բոլոր տեսակի ուղղակի և անուղղակի տուրքերը։

Օսման փաշայի բանակի անլուր գազանությունների հետևանքով քրդերի մեջ բավական տևական ժամանակ սարսափ էր տիրում։ Սակայն «Թուրքական կառավարության արյունոտ հաշվեհարդարը 1843—1846 թթ. թեև կոտրեց քրդերին, բայց միևնույն ժամանակ այն ծայրահեղորեն գազազեցրեց նրանց Թուրքերի դեմ» (150, էջ 82)։ Այդ կապակցությամբ Բաֆֆին, որը հայ իրականության մեջ քրդական հարցի և հայ-քրդական հարաբերությունների լավագույն գիտակներից մեկն էր, նկատում է, որ Բադրխանի շարժումը ճնշելու ժամանակ քրդերի նկատմամբ Թուրքերի գործադրած դաժանությունները առաջ բերեցին «մի սաստիկ թշնամություն դեպի Թուրք կառավարությունը մասնավորապես և դեպի առհասարակ Թուրքերն ընդհանրապես... Այդ ատելությունը դեպի Թուրքերը առիթ տվեց քրդերին ավելի մոտենալ հայերին և ավելի մտերմանալ նրանց հետ» (139, էջ 110—111)։

Թուրքական կառավարության նկատմամբ քրդերի տածած ատելությունը կարող էր տեղիք տալ նոր պոռթկման, որովհետև «Պէտէրխանի գաղափարը տակավին ատեն մը կենդանի մնաց իր ցեղին մէջ» (10, էջ 154)։ Այս մտավախությունը ստիպեց կառավարությանը ոչ միայն դադարեցնել պատժիչ բանակներ ուղարկել քրդերի դեմ, այլև ապստամբ ցեղապետերի նկատմամբ վարել մեղմ քաղաքականություն։ Առաջինը այդ քաղաքականությունը կիրառվեց Բադրխանի նկատմամբ։ Կոստանդնուպոլիս տարագրելու ճանապարհին նրան տարան Դիարբեքիր. այստեղ նա քաղաքի կուսակալի կողմից արժանացավ մեծ հյուրին վայել հարգանքի։ Ըստ երևույթին հենց կուսակալի հրամանով քաղաքային բերդի հրապարակում դրվեց Բադրխանի փայտաշեն խամաճիկ արձանը, որը լցված էր վառոդով և իր աչքի առջև «իր առանցքին վրա քանի մը շրջադարձիկ շարժումե ետք ահեղ որոտումով կը պայթեր։ Քիչ մը հեռուն, հանդիսատեսներեն ձայն կը բարձրանար, հանցավորը հանցանքը քավեց» (113, էջ 17)։

Թուրքական կառավարության կամքով քրդական ապստամբության առաջնորդը այսպես կրեց իր պատիժը։ Ի դեպ, Բադրխանն ինքը սկզբում զարմացած ու ապշած էր կառավարության այս վերաբերմունքից։ Կոստանդնուպոլսի «Հայտարար լրագրում» տպագրվեց նրա շնորհակալական նամակը՝ ուղղված իր նկատմամբ «հայրական» հոգատարություն դրսևո-

ցած սուլթանին։ Նամակում նա խոստովանում է, որ «...կմտածեի, եթե բռնվելու ըլլամ, իզմե շատ գանձ կպահանջեն, ի վերա այսր ամենայնի այն կողմերու բնակիչներուն հույս ըրածին չափ իմ քովս այնքան ստակ չկա. ապա քովս ստակ չգտածնուն պես՝ զիս կտանին բանտը կդնեն ու կնեղեն, անանկ որ խմելու մը ջուրով ու քիչ մը հացով կյանքս բանտին մեջ անցունել կուտան։

Այս մտածությունները ընելով՝ առաջքի դրվածքներուն վրա կերթայի, սակայն հովանավորությամբ ինքնակալին՝ անձի ու ստացվածքի վրայոր ազատություն կա եղեր. ես՝ մեկ խմելու ջուրի վրա մտածելն իքեն, ապաստան եղած օրս Ճեղիրեի մեջ մնացած ստացվածքս ու կալվածքս վավերական մուրհակով... գրելու համար՝ իմ կողմանե փոխանորդ դնելնին տեսածիս պես՝ ապշեցա մնացի, և ահա՝ զիս մայրաքաղաքս բերին, աստված նորին վեհափառությանը երկար կյանք պարգևե, անանկ մեկ տեղ մը դրին, որ իմ նախնիքս տեսած չէ, և անոնցմե մեկը իր երազին մեջը անգամ ասանկ տեղ մը նըստած չէ, փառք բարերարին՝ մեզի նստեցուցին ու ասանկ պատիվ ալ ցույց կուտան։ Մենք ասիկա տեսնելով ու մեր ըրած պակասությունը մտածելով՝ մեր անձին հանդիմանություն կընենք կոր» (90, 1847 թ., № 51)։

Թուրքերի համար քրդական այս ահարկու առաջնորդի մանկական անմիջականությամբ կատարված խոստովանության մեջ կարևորը վերջին նախադասությունն էր։ Թուրքական կառավարությունը հույս ուներ քրդերի մոտ մեռցնել «Բադրխանի դաղափարը»։

Կառավարությունը Բադրխանի ժառանգորդներին թողեց նրա բոլոր կալվածքները, նրա որդուն վերցրեց զինվորական ծառայության՝ նույնիսկ փաշայի տիտղոս շնորհեց։ Կառավարությունը չպատժեց նաև ասորիների ջարդի կազմակերպիչներից մեկին՝ Հաքյարիի նախկին էմիր Նուրուլլա բեկին (հայկական աղբյուրներում՝ Հուր ալլահ)։ Հակառակը, նրան բարձր վարչական պաշտոն տվեց (97, էջ 250)։

Այս շրջանում սուլթանի քրդական քաղաքականության էությունը ոչ միայն հանգում էր նրան, որ ըմբոստ դիրք ունեցող ցեղապետերը տիրաշահումների ճանապարհով պահվեն հնազանդ վիճակում, այլ նաև նրան, որ խոշոր իշխանությունները մանրացվեն ու թուլացվեն, իսկ հին ցեղապետերի փո-

խարեն առաջ քաշվեն նորերը, որոնք իրենց բարձրացումով պարտական լինեին սուլթանին։ «Շարք մը շրջաններ, որոնք մեկ զորավոր ցեղապետի կենթարկվեին, բաժանվեցան քանի մը ցեղապետներու միջև, որոնք իրենց նոր իրավունքներից ոգևորված, մեկը մյուսին դեմ կը լարվեին։ Այս լարված դավադրական ցանցը իրական շահ մը կապահովեր Թրքական կառավարութեան, որ ինքզինքը սկսած էր ապահով զգալ քրդական նոր բռնկումներեն» (128, էջ 97)։

Հայ ժողովուրդը տեսնում էր, որ սուլթանի կողմից քուրդ ավատապետ-ցեղապետերի դեմ ձեռնարկված միջոցառումները մնում են կիսատ։ Նա կռահում էր, թե կառավարությունը որտեղից է սկսել և որտեղ պիտի վերջացնի։ Թե՛ Կ. Պոլսի հայ հոգևոր և քաղաքական գործիչների և թե՛ նահանգների հայության հույսերն ու խանդավառությունները հօդս ցնդեցին և կասկածը Թուրքական վարչության նկատմամբ համակեց անխտիր բոլորին, հուսախաբ անելով նույնիսկ ամենալավատեսներին։

Միանգամայն ակնհայտ էր, որ հայ բնակչության նկատմամբ քրդական ավատական վերնախավի գործադրած հարբստահարություններն անհրաժեշտ էին Թուրքական կառավարությանը Արևմտյան Հայաստանում ազգային շարժումները խեղդելու համար։ Պատահական չէ, որ թեև ընդհատաբար, սակայն պարբերական կանոնավորությամբ շարունակվում էին քրդական ավատատերերի ասպատակություններն ու հարստահարությունները «հայտնապես հովանավորված պետական ներքին դիվանագիտութեենեն» (35, էջ 15)։

Բադրխանի շարժման ճնշումից հետո նրա արհավիրքները ճաշակած հայության համար կարճ ժամանակ պահանջվեց համոզվելու, որ քրդական «վարչությանը» փոխարինելու եկած Թուրքական պետության լուծը, մանավանդ հարկապահանջության կազմակերպված սիստեմը, օսմանյան դատարանը, ոստիկանությունը և առհասարակ ողջ վարչական ապարատը նույնքան դաժան են, բռնակալ ու կեղեքիչ։

Թեև Օսման փաշան Արևմտյան Հայաստանի քրդական դերեբեյերին Էմիլ Դիլոնի արտահայտությամբ «մահացու հարված» հասցրեց, իսկ սուլթանը 1849 թ. չեղյալ հայտարարեց այն բոլոր արտոնություններն ու իրավունքները, որոնցից

օգտվում էին դերեբեյերը, այնուամենայնիվ այդ բոլորը չթեթևացրին հայ ժողովրդի վիճակը։

Որոշ վայրերում հայ ճորտ գյուղացիները նույնիսկ հողեր ձեռք բերեցին (թափուի սիստեմով), սակայն շուտով զրկվեցին դրանցից, որովհետև «Թուրքական և քրդական բեյերն ու աղաները, որոնք միանգամայն ազատ էին իրենց գործողություններում, կրկին զավթում էին այդ հողերը իրենց իսկ նախկին ճորտ գյուղացիներից և կրկին վեր էին ածում նրանց իրենց ճորտերի» (315, էջ 45—46)։ Ընդ որում, հայ գյուղացիությունը, ինչպես և քուրդ ռայան, ոչ մի պաշտպանություն չէին գտնում երկրի վարչական և դատական հիմնարկներում։ Ավելին, 50-ական թթ. իրագործված թուրքական վարչական վերափոխումները դույզն ինչ չափով չէին թեթևացնում հայ գյուղացիության վիճակը։ Այսպես, թեև 1850 թ. քրիստոնյաների համար սահմանված գլխահարկը՝ խարաջը, վերացվեց, սակայն անմիջապես դրա փոխարեն մտցվեց մի նոր հարկատեսակ՝ բեդել-ի ասկերի, որը գանձվելու էր ոչ մահմեդականներին ռազմական ծառայությունից ազատ թողնելու դիմաց։ Թեև կառավարությունը այս «բարեփոխումը» փորձում էր ներկայացնել որպես բարիք իր քրիստոնյա հպատակների համար, որպես ազատում նրանց հոգին տոչորող վիրավորական հարկատեսակից, որը վճարվում էր գլուխը ուսերի վրա պահելու իրավունք ձեռք բերելու համար, սակայն իրականում նոր հարկատեսակը իր ծանրությամբ գերազանցում էր նախորդին և ոչ պակաս վիրավորական էր «գյավուր» հորջորջված քրիստոնյաների համար։

Այնուհետև, թեև ձորապետ-դերեբեյերը հրապարակից վերացան, սակայն նրանց փոխարինելու եկան բազմաթիվ մանր ցեղապետեր, որոնք իրենց փոքր շրջաններում դառնում էին ավելի ահարկու և ավելի կողոպտիչ։ Այդ ցեղապետերը անկախ էին մեկը մյուսից, դա հնարավորություն էր տալիս կառավարությանը նրանց միջև երկպառակություններ հրահրել և ցանկացած դեպքում հեշտությամբ հաշվեհարդար տեսնել նրանց հետ։ «Եթե այդ ցեղապետերից մեկն ու մեկը իր ժողովրդի շրջանում ձեռք բերեր համբավ և իշխանություն, ապա աշխատում են նրան հեռացնել, գցել և ոչնչացնել, երբեմն նրան դարձնում են փաշա, առատորեն շնորհներ են անում նրան, կանչում են Կոստանդնուպոլիս, նրան տալիս են հարեմ

և նա կորչում է պերճանքի ու մոռացության մեջ։ Եթե չրավարարվի դրանով, կիրառում են ավելի կտրուկ միջոցներ» (277, էջ 146)։

Քանի որ քրդական խոշոր ցեղապետերի հզորությունը խորտակված էր, մանր ցեղապետերի հետ միաժամանակ նրանց փոխարինելու եկան հոգևորականները՝ շեյխերը և սեյիդները[11]։ Սրանք թեև մինչև դերբեյությունների ջախջախումը ևս ունեին խոշոր ազդեցություն քուրդ-մահմեդական զանգվածների վրա, սակայն այն ամբողջապես ի սպաս էին դնում ուժեղ և ազդեցիկ ցեղապետերին։ Սակայն 1848 թ. դեպքերից հետո «քրտությունը ճկունությունը ունեցավ իր կորսնցուցած քաղաքական և զինվորական իշխանության տեղ առաջ քաշել կրոնական տարրը, որ չէր սահմանափակվեր մեկ ցեղապետության սահմաններում մեջ» (128, էջ 125)։ Այսուհետև շեյխերը իրենց անձի մեջ միավորում էին իրենց ցեղի գերագույնի հոգևոր և աշխարհիկ պարտավորությունները։ Նրանք ունեին հսկայական հեղինակություն, որը դուրս էր գալիս տեղական սահմաններից և տարածվում էր Մերձավոր ու Միջին արևելքի բոլոր քրդաբնակ շրջանների վրա։ Շեյխերը կրոնական առաջնորդներ էին, և որպես այդպիսիք նրանցից շատերը ղեկավարում էին տարբեր դերվիշական միաբանություններ[12]։ Շեյխերի իրավասության մեջ էր մտնում սովորույթներին ու ավանդույթներին հսկելը, իրենց ցեղի անդամների միջև վեճերի քննարկումը, հարևան ցեղերին պատերազմ հայտարարելը, նրանք հանդես էին գալիս որպես միջնորդներ իրենց ցեղի և կառավարության միջև, իրենք էին հավաքում և իշխանություններին հանձնում հարկերը, իրավունք ունեին պատժել ցեղի անհնազանդ անդամներին ընդհուպ մինչև նրանց գույքի բռնագրավումը և այլն։

Շեյխերի պաշտոնը ժառանգական էր և այն պահելու ու առհասարակ իրենց իշխանությունը անսասան դարձնելու համար բազմաթիվ շեյխեր հայտարարում էին, որ Օմայան և Աբասյան դինաստիաների առաջին խալիֆները իրենց նախնիներն են եղել (304, էջ 140—141)։

Շեյխերից ոմանք այնքան մեծ հեղինակություն և ազդեցություն ձեռք բերեցին, որ ողջ քրդությունը ենթարկվում էր նրանց։ Այսպիսով, նրանք հետզհետե բռնեցին խոշոր իշխանապետերի տեղը, ձեռք բերելով մեծ ազդեցություն նաև տըն-

տեսական ու քաղաքական կյանքում և շատ հաճախ երկրորդ պլան մղելով աշխարհիկ ավատատերերին, քանի որ շեյխն իր անձի մեջ միավորում էր աշխարհիկ և հոգևոր ավատատիրոջը, որը կրկնապատկում էր նրա ուժն ու ազդեցությունը։ Նրա իշխանության հարատևության երաշխիք էր տիտղոսի ժառանգաբար անցնելը։ Շեյխերի հզորության աղբյուր էր նրանց հարստությունը։ Նրանց էին պատկանում հազարավոր անասուններ, լավագույն արոտավայրերը և այլն։ Շեյխերն իրենց ունեցվածքը բազմապատկելու համար որպես կանոն միջոցների մեջ խտրություն չէին դնում, քաջ գիտակցելով, որ ուժի և իշխանության համար նյութական գործոնը զորավոր է բարոյականից։ Քուրդ ժողովրդի պատմության լավատեղյակ Վ. Նիկիտինը գրում է. «Նախկին ժամանակներում շեյխերը, որոնք իսկն ասած, հանդիսանում էին դերվիշական միաբանությունների պետեր, բավարարվում էին լոկ հոգևոր իշխանությամբ և ապրում էին ի հաշիվ իրենց հետևորդների ու երկրպագուների նվիրատվությունների։ Աստիճանաբար հարստանալով, ձեռք բերելով հողեր, մեծացնելով իրենց հետևորդների շրջանակը, նրանք ներքաշվեցին աշխարհիկ գործերի շրջապտույտի մեջ և սկսեցին իրենց ձեռքը վերցնել նաև աշխարհիկ իշխանությունը, իրենց տրամադրության տակ ունենալով խոշոր միջոցներ և բազմաթիվ զինված ծառաներ» (321, էջ 81)։ Իսկապես, շեյխերը հաճախ խոշոր ցեղապետության իրավունք էին ձեռք բերում նաև ուժով, որովհետև որպես մուրշիդներ, նրանք իրենց տրամադրության տակ հազարավոր զինված մարդիկ ունեին (մյուրիդներ)։

Խոշոր ցեղապետերը գործարքի մեջ էին մտնում շեյխերի հետ, որպեսզի հենվելով նրանց հսկայական ազդեցության վրա, կարողանան ամրապնդել իրենց դիրքերը աշխատավոր քրդերի շրջանում։ Ի դեպ, Թուրքական իշխանություններն աշխատում էին շահել նորաբուս շեյխերի համակրանքը, որովհետև նրանց հետ մեծ հույսեր էին կապում որպես Արևմտյան Հայաստանում և Քրդստանում իրենց նոր սոցիալական հենարանի։ Օսմանյան կառավարող շրջանները, օգտագործելով այն հանգամանքը, որ սուլթանը միաժամանակ հանդիսանում էր համայն մահմեդականների հոգևոր առաջնորդը՝ խալիֆը, քրդական դերվիշական միաբանությունների, շեյխերի ու սեյիդների օգնությամբ աշխատում էին քրդական զանգվածներին

պահել Թուրք պետականության գաղափարական-քաղաքական ազդեցության ներքո։ Պատահական չէ, որ օսմանյան սուլթանները բարձր պատիվների էին արժանացնում նրանց. իսկ մեկի դերվիշական միաբանության ղեկավարին շնորհված էր սուլթանի գոտուն խալիֆ Օմարի սուրը կապելու արարողության պատիվը (240, էջ 31)։

Բաղդխանի շարժման ճնշումից հետո քրդական ցեղերը թշնամությամբ լցվեցին հայերի դեմ, նրանց (բացառությամբ լեռնական զինված համայնքների) դիտելով որպես թուրքասերների։ Քուրդ աղալարները հայության վրա սկսեցին նայել որպես ուրիշին պատկանող կողոպուտի ենթակա զանգվածի, մինչդեռ առաջներում, ըստ քրդերի մոտ ընդունված կարգի, յուրաքանչյուր ցեղապետ պարտավոր էր «պաշտպանել» իր իշխանապետության շրջաններում բնակվող հայ ռայաթներին ուրիշ ցեղերի ու ցեղախմբերի հարձակումներից։

Խորհրդային քրդագետ Մ. Ս. Լազարևը շատ դիպուկ է գնահատել XIX դարի առաջին կեսի քրդական շարժումները. «...այդ շարժումները գլխավորող ուժերը հետապնդում էին ըստ էության հետադիմական նպատակներ. վաղուց իրեն սպառած տոհմացեղային կարգերի հավերժացում, իրենց բացարձակ իշխանության պահպանում Քրդստանի և հարակից շրջանների քոչվոր և նստակյաց բնակչության վրա։ Առավել ևս, որ քրդական ավատատերերին խորթ էր համաժողովրդական շահեր հասկացողությունը, նրանք հակում էին դրսևորում համաձայնության մեջ մտնելու իշխանությունների և օտարերկրյա տերությունների հետ, ընդհուպ մինչև ընդհանուր գործին, համաժողովրդական շահերին դավաճանելը, հեշտությամբ տեղի էին տալիս կաշառքներին և հավատ էին ընծայում խոստումներին» (273, էջ 50)։

Այդ նույն տեսակետն է հայտնում նաև խորհրդային պատմաբան Մ. Պոգորելովը։ Նրա կարծիքով քրդերի շրջանում գոյություն ունեցող «ցեղային կացութաձևը, ժողովրդական զանգվածների աղքատությունն ու տգիտությունը չեն ստեղծում անհրաժեշտ պայմաններ քրդական բնակչության լայն շրջաններում ուժեղ ազգային շարժման զարգացման համար, և Թուրքական կառավարության դեմ՝ բոլոր ապստամբությունները, ըստ էության, հանդիսանում էին լոկ առաջնորդների ապըստամբություններ, որոնք հետապնդում էին ոչ թե միասնական

ազգային Քրդստանի ստեղծման գաղափարը, այլ իրենց անձնական շահերի պաշտպանությունը, որոնք սպառնալիքի տակ էին դրվում Թուրքական կառավարության կողմից։ Այդ ապըստամբությունները միանգամայն հատկանշական էին այն առումով, որ ցույց էին տալիս քրդական զանգվածների պատրաստակամությունը՝ գնալու իրենց առաջնորդների հետևից ամենավտանգավոր պայքարի, որն անձամբ նրանց ոչինչ չէր կարող տալ և նույնիսկ հակասում էր նրանց շահերին» (304, էջ 142)։

Իր պատմական զարգացման ընթացքում քուրդ ժողովուրդը միշտ ըմբոստ է եղել օտար տիրապետության դեմ։ Սակայն ատելով ու մերժելով ամեն տեսակ օտար լուծ, նա միաժամանակ կուրորեն ենթարկվել է ցեղապետական իշխանությանը։

Այդ պատճառով քուրդ ժողովրդի անկախության զգացումը կենտրոնացած է մնացել տվյալ ցեղի անկախության գաղափարի մեջ և ամբողջ ժողովրդի հավաքական անկախությունը ոչ միայն մտահոգության առարկա չի եղել, այլև նույնիսկ չի գիտակցվել։ Սրանում է հենց թաքնված քուրդ ժողովրդի քաղաքական զարգացման առեղծվածը։ «...Ծայրահեղ անկախության զգացումը դարերի ընթացքում քաղաքական ձև չի ստացել և բուրտերը չեն մղված ազգային պետություն մը կերտելու և հավաքական հայրենիքի մեջ փնտրելու իրենց ապահովությունն ու անկախությունը» (128, էջ 67)։

Այդ նույն միտքը Ա. Կարցևի մոտ ստացել է հետևյալ ձևակերպումը. «Զնայած քրդերին բնորոշ սիրուն դեպի ազատությունը և իրենց ազգության որոշ գիտակցմանը, որը նրանց հնարավորություն է տվել պահպանելու իրենց լեզուն և սովորույթները, նրանք երբեք չէին կարող ստեղծել կայուն պետություն և նույնիսկ երբեք չեն ձգտել դրան։ Քրդի հայրենասիրությունը դուրս չէր գալիս իր ցեղի (աշիրեթի) սահմաններից և եթե պատահում էր, որ մի քանի ցեղեր միավորվում էին ընդհանուր գործողության համար, առաջին իսկ անհաջողությունները ոչնչացնում էին նման դաշինքը» (267, էջ 13)։ Հենց այդ նկատի ունի Վ. Նիկիտինը, երբ նշում է. «Եթե Քրդստանը վերջ չտա իր պատմության ցեղային էտապին, նա երբեք ի վիճակի չի լինի դառնալու ազգային պետություն» (294, էջ 236)։

Գլխավորապես վերոհիշյալ պատճառների հետևանքով ամբողջ XIX դարի ընթացքում միևնույն տարածքում ապրող ժողովուրդների (հայ, քուրդ, ասորի և այլն) ազատագրական ոգորումները Թուրքական լծի դեմ հիմնականում ընթանում էին իրարից անջատ, տարբեր ուղիներով, երբեք չխաչաձևվելով պատմական զարգացման որևէ փուլում, որը կարողանար հանգեցնել այդ ժողովուրդների ջանքերի միավորմանը օսմանյան բռնատիրական լծի դեմ նրանց մղած պայքարում։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

ԹԱՆԶԻՄԱԹԻ ԵՐԿՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՓՈՒԼԸ

1853 թ. Արևելյան կամ Ղրիմի պատերազմը բռնկելուց հետո և՛ Թուրքիայի, և՛ Ռուսաստանի համար պատերազմի թատերաբեմում գտնվող ժողովուրդների քաղաքական դիրքորոշման հարցը բնականաբար ձեռք բերեց առաջնակարգ կարևորություն։ Թուրքական կառավարող շրջանները հատկապես մեծ հույսեր էին կապում արևելյան ճակատում Ռուսաստանի դեմ քրդերի ռազմական ուժը շարժման մեջ դնելու հետ։ Պատահական չէ, որ պատերազմը սկսվելուն պես սուլթանը քրդերին կոչ արեց զենքի դիմել հանուն իսլամի պաշտպանության։ Սակայն սրբազան պատերազմի այդ կոչը լայն արձագանք չգտավ ցեղային վերնախավի, առավել ևս քուրդ զանգվածների շրջանում։

Բացառությամբ Ռուսաստանի սահմանակից շրջաններում բնակվող մի շարք ցեղերի (հայդերանլի, զիլան, սիփքի, ջեմալդինլի, ջունուքի, միլյանլի, բեզիքի և այլն), ինչպես նաև առանձին քուրդ ավատատերերի, որոնք իրենց դիրքով պարտական էին օսմանյան կառավարությանը և իրենց բախտը կապել էին նրա հետ, մնացած ցեղերը կամ բացահայտ խուսափում էին պատերազմական գործողություններին մասնակցելուց և կամ սպառնալիքների ճնշման ներքո մեկնելով ռազմաճակատ, առաջին իսկ հնարավորության դեպքում դիմում էին փախուստի կամ զենքն ուղղում թուրքական զորքերի դեմ։ Մի շարք շրջաններում ծայր առան քրդական հակակառավարական շարժումներ։ Հատկապես ուժգին խլրտումներ սկսվեցին անհնազանդ Դերսիմում (48, էջ 90)։

Քրդական վերնախավը դժգոհում էր, որ թուրքական բանակի առկայությունը քրդաբնակ շրջաններում սահմանափակում է իր ինքնուրույնությունը։ Տրտնջում էին նաև քուրդ զանգվածները, որոնց ստիպում էին զինակոչիկներ տալ բանակի համար և հարկերը կանոնավոր մուծել։ Ընդ որում, թուրքական հարկահավաքներին մշտապես ուղեկցող կառավարական զորքն ամենուրեք թույլ էր տալիս կամայականություններ և բռնություններ (469, էջ 61)։

Քրդական վերնախավի և քուրդ զանգվածների դժգոհությունը փորձեց օգտագործել Եզդանշիրը, որը 1840-ական թվականներին Բադրխանի ապստամբության ժամանակ Բ. Դոանը մատուցած ծառայությունների դիմաց նշանակվել էր «Քրդստանի կառավարչի» պաշտոնում։ Սակայն շուտով Եզդանշիրը սկսեց գաղտնապես իր շուրջը համախմբել կառավարությունից դժգոհ քրդական տարրերին՝ հարմար պահին ապստամբելու նպատակով։

1854 թ. հուլիսի 17-ին Ջինգիլ լճի շրջանում թուրքական բանակի պարտությունը և Բայազետի անկումը աննախընթաց չափերով ուժեղացրեցին քուրդ զինվորների դասալքությունը և դժգոհությունը կառավարության նկատմամբ (277, էջ 128—130)։ Սրանք գալիս էին համալրելու Եզդանշիրի շուրջը համախմբվող դժգոհ տարրերին։

Քրդական առաջնորդը տեղեկություններ ուներ, որ ռուսական հատուկ կորպուսի հրամանատարությունը ձեռնամուխ է եղել օսմանյան տիրապետության նկատմամբ թշնամաբար տրամադրված Փոքր Ասիայի բնակչության, այդ թվում նաև քրդերի ապստամբության խոշոր պլանի մշակմանը։ Իսկապես, ցարական ռազմական մինիստրությունը մշակել էր Անդրկովկասից Բայազետի և Վանա լճի վրայով դեպի Քրդստան և Տիգրիսի հովիտը ներխուժելու պլան, որի վերջնական նպատակն էր դուրս գալ դեպի Պարսից ծոց, հսկողություն սահմանել այդ վայրերով կատարվող առևտրի վրա և հատկապես հարված հասցնել Ռուսաստանի ախոյան Անգլիային՝ «չափավորելով նրա լկտի պահանջները» (256, էջ 360—361)։

Այդ պլանի կարևոր կետերից մեկն էր նաև Թուրքիային քրդական հեծելազորից զրկելը։ Ռուսաստանը ենթադրում էր Արևմտյան Հայաստանի և Քրդստանի գրավումից հետո այդ երկրամասերում կառավարիչ նշանակել «տեղական ժողովուրդ-

ների ընտրությամբ, բայց Ռուսաստանի հսկողության ներքո» (333)։

Բնական է, որ Ռուսաստանի այս քաղաքական ծրագրերը ոգևորեցին Եզդանշիրին։ Վերջինս հանդես եկավ Թուրքական լուծը թոթափելու վերաբերյալ հատուկ կոչով, որը հատկապես մեծ արձագանք գտավ Ջեզիրեում, Հաքյարիում և այլ վայրերում։ Այդ կոչին արձագանքեցին նաև Արևմտյան Հայաստանի և Քրդստանի հայերը և ասորիները։ Եզդանշիրը ավելորդ էր համարում Թուրքական իշխանությունների ներկայությունը Արևմտյան Հայաստանում և Քրդստանում, քանի որ այդ երկրամասերում Թուրք բնակչությունը կազմում էր չնչին տոկոս և ազգաբնակչության հիմնական զանգվածը բաղկացած էր հայերից և քրդերից (275, էջ 2)։

1854 թ. դեկտեմբերին Եզդանշիրի գլխավորությամբ բռնկվեց քրդերի բացահայտ և զանգվածային ապստամբություն օսմանյան կառավարության դեմ։ Ողջ Քրդստանն ու Արևմտյան Հայաստանը ալեկոծվեց։ Ապստամբությունն ընդգրկեց Վանից մինչև Բաղդադ հասնող հսկայական տարածքը (290, էջ 9)։

Ռուսների դեմ կռվող Թուրքական գործող բանակի թիկունքում բռնկած այս ապստամբությունը լուրջ անհանգստություն պատճառեց Թուրքական կառավարությանը, մանավանդ որ Եզդանշիրը փորձեր էր անում կապեր հաստատել ռուսական զորքերի հրամանատարության, մասնավորապես երևանյան ջոկատի հետ, առաջարկելով համատեղ հարված հասցնել Էրզրումում կանգնած Թուրքական բանակին (277, էջ 257)։ Այդ անհանգստությունը կրկնապատկվեց քրդերի ու ասորիների միավորվելու փորձեր անելու հետևանքով։ Կան այդ իրողությունը հաստատող բազմաթիվ փաստեր։ Այսպես օրինակ, 1855 թ. Արդեբիլի արքեպիսկոպոս Իսահակ Սաթունյանցին հայտնում են, որ Հեքյարիի գավառի հայ, քուրդ և ասորի բնակիչները ռուսական զորքերի առաջխաղացման դեպքում պատրաստ են համատեղ հանդես գալու կառավարության դեմ։ Նույն թվականի մայիսին ասորիների մարշիմուն Աբրահամը ռուսական զորքերի կովկասյան գործող կորպուսի հրամանատար գեներալ Վ. Բեյբութովին գրած նամակում հայտնում էր, որ հայերը և քրդերը պատրաստ են միանալու ռուսական զորքերին (115, էջ 289)։

Հաստատելով այդ փաստը Պ. Ի. Ավերյանովը գրում է, որ քրդերի և քրիստոնյաների միջև գոյություն ուներ զարմանալի միասնություն ուղղված ընդհանուր թշնամու՝ Թուրքերի դեմ (150, էջ 155)։

1855 թ. Թուրքական կառավարությունը անգլիացիների օգնությամբ, որոնք վախենում էին, որ Ռուսաստանը կօգտվի Եզդանշիրի շարժումից և սրընթաց առաջ կշարժվի դեպի Փոքր Ասիայի խորքերը (356), ջախջախեց քրդական այդ ապստամբությունը։

Այսպիսով, Եզդանշիրի ապստամբությունը, որն իր թափով և մասշտաբներով գերազանցում էր հակաթուրքական նախորդ բոլոր շարժումներին, նույնպես ավարտվեց անհաջողությամբ։

Անդրադառնալով այդ ապստամբության արդյունքներին, ռուսական սպա Մ. Լիխուտինը գրում է. «Օսմանների տիրապետության և նրանց փաշաների կառավարման նկատմամբ համընդհանուր դժգոհությունը սպասում է միայն հնարավորության, մի կայծի, ինչպես ցույց տվեց Եզդանշիրի ապստամբությունը, որպեսզի բռնկի և դառնա անհանգչելի հրդեհ»։ «Դժգոհությունը չի վերացած,— շարունակում է նա,— ժողովուրդը և նրա զգացումները Թուրքերի նկատմամբ մնացին նույնը, ինչ նախկինում և թեև այլևս Եզդանշիրը չկա, սակայն նրա փոխարեն կարող են հանդես գալ տասնյակ նոր ղեկավարներ» (277, էջ 260)։

Նախորդ քրդական շարժումների համեմատ այս ապստամբության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ «քրիստոնյաների նկատմամբ անկարգություններ տեղի չունեցան, այլ ընդհակառակը, Քրդստանում բնակվող նեստորականները և նույնիսկ հույները, մտան ապստամբների դրոշի տակ» (290, էջ 9)։ Բացառությամբ առանձին ցեղապետերի (օրինակ, Ալաշկերտի շրջանում գործող Բահլուլ փաշայի որդի Մահմադ բեկի), որոնց կաշառել էին Թուրքական իշխանությունները և հանձնարարություն տվել թույլ չտալ, որ հայերը կապեր հաստատեն ռուսական զորքերի հետ, Եզդանշիրի շարժմանը մասնակցող քուրդ ավատատերերը հայերի նկատմամբ բռնել էին չեզոք դիրք (38, էջ 45—48)։

Այս բոլորը չէր կարող չանհանգստացնել Թուրքական կառավարությանը։ Վերջինս Ղրիմի պատերազմից հետո իր քրդական քաղաքականության մեջ բավականին կտրուկ շրջադարձ

կատարեց։ Այդ մասին ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը գրում է. «Մինչև 1860-ական թվականները Արևելյան փաշայությունների հետ կապված հիմնական հարցը, որ զբաղեցնում էր թուրքական կառավարությանը, քուրդ ժողովրդի անկախ և կիսանկախ դրությունը վերացնելու հարցն էր։ «...Քրդական ցեղերի հետ կապված այն հարցերը, որոնք խիստ մտահոգում էին թուրքական կառավարությանը XIX դարի առաջին կեսին, նույն լրջությամբ այլևս գոյություն չունեին դարի երկրորդ կեսին։ Քանի դեռ չէին ճնշվել քրդական շարժումները, սուլթանական կառավարությունը հատուկ և ակտիվ քաղաքականություն չէր վարում արևմտահայերի նկատմամբ։ Ընդհակառակը, նա երբեմն փորձում էր սիրաշահել ու օգտագործել նրանց։ ...Սակայն դրությունը փոխվում է 1850-ական թվականներից հետո։ Ճնշելով, թեկուզ և ժամանակավորապես, քրդական խոշոր շարժումները, սուլթանական կառավարությունն իր հարվածներն ուղղում էր արևմտահայության դեմ, որին այժմ նա դիտում էր որպես իր վտանգավոր թշնամիներից մեկի» (115, էջ 80—81)։

Լեոն քրդական հարցում թուրքական քաղաքականության շրջադարձի պատճառները փորձում է բացատրել հետևյալ կերպ. «Օսմանյան կառավարությունը,— գրում է նա,— փոխանակ պատժող ու ճնշող հանդիսանալու, ինչպես եղել էր մինչ այդ, ընդգրկում էր սիրաշահել-գրավելու քաղաքականությունը և այդպիսով ոչ միայն անվնաս դարձնելու այդ ռազմիկ տարրը, այլև պատերազմի դեպքում իր կողմն ունենալու համար։ Իսկ սիրաշահելու ամենալավ միջոցներից մեկն էր՝ թույլ տալ քրդերին, որ շահագործեն հայ երկրագործ ժողովրդին, ինչպես իրենք կկամենան։

Կառավարության համար, զուտ ռազմական նպատակներով ցանկալի էր, որ քրդերը պահպանեն իրենց հին ցեղային-զինվորական կազմակերպությունը, և որովհետև թանզիմաթը քանդում էր այդ կազմակերպության հիմքերը՝ մի հանգամանք, որ պիտի չափազանց թուլացներ նրա պատերազմական արժեքը, ուստի քուրդ կալվածատիրությունն ուժեղացվում էր ի հաշիվ հայ կալվածատիրության՝ մինչ այն աստիճան, որ թանզիմաթի ներգործությունն իրապես չքանում էր, թեև արտաքուստ պահում էր իր տառը» (70, էջ 41)։

Սակայն դա բոլորը չէր։ Ղրիմի պատերազմի ժամանակ վերստին բացահայտորեն դրսևորվեց Ռուսաստանի նկատմամբ հայ ժողովրդի քաղաքական անվերապահ դիրքորոշումը։ Եզդանշիրի ապստամբության ժամանակ պարզվեց նաև, որ առանձին քուրդ գործիչների շրջանում ևս Ռուսաստանի հետ կապեր հաստատելու որոշակի հակումներ են նկատվում։ Ստամբուլն այդ վտանգավոր երևույթները արմատախիլ անելու ամենագործուն միջոցը համարում էր հայ-քրդական հարաբերությունների սրումը՝ մեկ ժողովրդին մյուսի դեմ հանելու միջոցով։

Թուրքական կառավարությանը հայտնի էր նաև, որ հայ ժողովրդի շրջանում ազգային զգացումների և ազգային վերածննդի գաղափարները վերելք են ապրում։ Օսմանյան բռնապետության դեմ ազգային-ազատագրական շարժում ծավալելու գաղափարը, դուրս գալով հայ առաջադեմ գործիչների շրջաններից, ավելի ու ավելի էր համակում ժողովրդական զանգվածներին։

Իր նոր քաղաքականությունն իրագործելու ճանապարհին Թուրքիան եվրոպական պետությունների կողմից դիմադրություն չէր սպասում, որովհետև Ղրիմի պատերազմը համոզել էր նրան, որ Օսմանյան կայսրության ամբողջականությունն ու անկախությունը էական նշանակություն ունեն Եվրոպայի քաղաքական հավասարակշռության համար, հետևաբար հայ ժողովրդի նկատմամբ կառավարության որդեգրած հալածանքների քաղաքականությունը չի հանդիպի եվրոպական դիվանագիտության եռանդուն հակազդեցությանը (280, էջ 191—192)։

Ելնելով վերոհիշյալ նկատառումներից, սուլթանական կառավարությունը հրամայեց իր նահանգապետերին և զինվորական ներկայացուցիչներին այսուհետև քրդերի դեմ գործել ոչ թե զենքով, այլ ուրիշ միջոցներով, գլխավորապես համոզելու ճանապարհով և ոչ մի դեպքում չգրգռել նրանց (154)։ Իշխանությունները քուրդ ցեղապետերին հասկացրեցին, որ այսուհետև իրենց արարքները հայերի նկատմամբ չեն դիտվելու որպես հակապետական գործողություններ։ Հայերին լուրջ վտանգ էր սպառնում։

Թուրքական կառավարության այս թշնամական քաղաքականության պատճառներից մեկը, ֆրանսիացի Լյուդովիկ դը Քոնթանսոնի կարծիքով այն էր, որ Թուրքերը վախենում էին,

թե հայերի միջոցով եվրոպական առաջադեմ գաղափարները կտարածվեն Թուրքիայում։ «Մի՞թե հայերի անվիճելի մտավոր ընդունակությունները չբորբոքեցին Թուրքերի անվստահությունը նրանց նկատմամբ, որոնք վախենում էին, որ ազատության, հավասարության, իրավունքի և օրինականության գաղափարները... հեշտությամբ կարող էին թափանցել իրենց մեջ... Հենց այդ պատճառները Թուրքերին բերեցին այն մտքին, որ հայերի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել արևելյան նվաճողների հին դասական սիստեմը, այսինքն բնակչության կոտորածը, որի սոսկ գոյությունը սպառնալիք է հանդիսանում նրանց համար։ Եվ Թուրքերը առանց տատանվելու XIX դ. և XX դարի սկզբին հարություն տվեցին այդ սիստեմին» (270, էջ 23—24)։

Այնուհետև բացահայտելով հայ ժողովրդին ճնշելու, նրա սոցիալ-տնտեսական, քաղաքական ու մշակութային առաջընթացը արգելակելու Թուրքական քաղաքականության ներքին դրդապատճառները Լյուդովիկ դը Քոնթանսոնը գրում էր. «Եթե երկրում Թագավորեր հանգստությունն ու անձի և գույքի անձեռնմխելիության վստահությունը, մենք կդառնայինք հայ ժողովրդի իսկական վերածնդի վկաները» (270, էջ 21)։

Ձևակերպելով ազգայնական ծրագրերով հանդես եկած Թուրքական վերնախավի որդեգրած գիծը հալածված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ճնշելու ուղղությամբ, օսմանյան դիվանագիտության խոշոր դեմքերից մեկը՝ Ֆուադ Մեհմեդ փաշան սուլթան Աբդուլ Ազիզի անունով գրած իր քաղաքական կտակի մեջ ազդարարում էր, որ «Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է»։ «Մասնավորապես հայերը հակում ունեն դեպի ոտնձգություն և խելացի կլինի նրանց եռանդը չափավորել, ասպարեզ տալով միայն նրանց, ովքեր պարկեշտորեն կընդունեն մեր կայսրության միասնավոր սկզբունքը» (25)։

1856 թ. փետրվարին Անգլիայի և Ֆրանսիայի դրդմամբ սուլթանական կառավարությունը հրապարակեց իր բարեփոխությունների նոր ծրագիրը՝ հաթթը-հումայունը, որը հանդիսավոր խոստումներ էր տալիս օրենքի առջև քրիստոնյաների իրավունքները մահմեդականների իրավունքների հետ հավասարեցնելու, քրիստոնյաներին զինվորական ծառայության մեջ ներգրավելու մասին և այլն։ Հաթթը-հումայունը խանդավառ

հույսեր արթնացրեց արևմտահայության շրջանում։ Հայերը սպասում էին, որ թանզիմաթի այս նոր փուլը հիմնավորապես կբարելավի իրենց վիճակը։ Կարճ ժամանակ պահանջվեց այդ խանդավառ հույսերի փլուզման համար։ Նախ, թեև խոսքով հաթթը-հումայունը վերաբերում էր օսմանյան բոլոր հպատակներին, սակայն ասիական Թուրքիայի ներքին գավառները դուրս էին մնում սուլթանական այդ «շնորհներից»։ «...Այդ տխրահռչակ հրամանագիրը,— գրում էր ռուս գիտնական-ճանապարհորդ Պ. Ա. Չիխաչևը, որը 1859 թ. այցելել էր Արևմտյան Հայաստան,— ավելի հայտնի է Եվրոպայում, քան երկրում, որտեղ նա պետք է բաց աներ նոր դարաշրջան» (379, էջ 61)։

Այս ծրագրի նպատակներից մեկն էր նոր մեթոդներով ոչ թուրք ժողովուրդների վերելք ապրող ազգային-ազատագրական շարժման ձախողումը։ Թուրքական սահմանադրության հայր հորջորջված Ահմեդ Միդհատ փաշան գտնում էր, որ «առաջին հերթին ոչ թե բռնի միջոցները, այլ բարեփոխումները առավել լրիվ կերպով պատասխանում են կայսրության մեջ ազգային-ազատագրական շարժումը ճնշելու խնդրին» (330, էջ 20)։

Պետք է նշել նաև, որ XIX դարի 50—60-ական թվականներից հետո Օսմանյան կայսրության ընդգրկումը համաշխարհային կապիտալիստական շուկայի մեջ հանգեցրեց առևտրականների ու արդյունաբերողների հարստության կուտակմանը, իսկ բուրժուազիայի հարստացումը, որի մեջ խոշոր տեսակարար կշիռ ուներ հայ բուրժուազիան, առաջ բերեց թուրքական կառավարող դասի ոչ միայն անվստահությունը, այլև հալածանքները, որովհետև վերջինս խիստ անհանգստացած էր ճնշված ժողովուրդների շրջանում նկատվող կենտրոնախույս ձգտումներից (252, էջ 113)։ Այդ երևույթը նույնպես նպաստեց հայ-քրդական հարաբերությունների սրմանը։ «Աստիճանաբար,— գրում է Վ. Ա. Գորդլևսկին,— երկրի կյանքի նյարդն անցավ հայերին, իսկ հայերի տերերը՝ քրդերը և թուրքերը, անսպասելիորեն ընկան պարտապանի վիճակի մեջ իրենց ոչ վաղուցվա ճորտերից։ Այսպիսով տնտեսական պայմանների հիմքի վրա ստեղծվեց թյուրիմացությունների նոր աղբյուր, հայերի և քրդերի միջև չարացածությունը բորբոքվելու համար» (243, էջ 127)։ Անդրադառնալով այդ հարցին քուրդ պատմաբան Քեմալ Մազհար Ահմեդը նշում է, որ առհասարակ երկու հարևան ժողովուրդներին թշնամացնող պատճառներից մեկն էլ

«հայ ժողովրդի համեմատաբար բարձր զարգացման մակարդակն էր»։ Տվյալ շրջանում այս կարևոր հանգամանքին ավելացան նաև արևմտահայ իրականության մեջ տեղի ունեցող սոցիալ-տնտեսական բնույթի նոր և լուրջ տեղաշարժերը։ Հայ բուրժուազիան, որն արդեն ներգրավվել էր կապիտալիստական շուկայի մեջ, ձեռք բերեց զգալի տնտեսական կշիռ։ Բուռն առաջընթաց էր ապրում նաև տեղի հայ արհեստավորական բուրժուազիան, որի վկայությունն էր Արևմտյան Հայաստանում և Քրդստանում XIX դարի կեսերից արհեստագործական արտադրության հիմնական մասի կենտրոնացումը հայերի ձեռքում։ Քրդական ավագանին, հողատերերը և գյուղացիները, գյուղատնտեսական գործիքներ և արհեստագործական արտադրության այլ իրեր ձեռք բերելու համար դիմում էին հայ արհեստավորներին։ Տնտեսական այս գործոնները ամբողջությամբ վերցրած այն հետևանքն ունեցան, որ հայ հասարակությունն ապրեց զգալի առաջընթաց, քրդական հասարակության համեմատաբար ներփակ բնույթի համեմատությամբ (49, էջ 34)։

Իհարկե, առաջին հայացքից թվում է, թե հայերի առևտուրը և զարգացած արհեստագործությունը մի կողմից՝ և քրդական անասնապահությունն ու հողագործությունը մյուս կողմից, պետք է լրացնեին միմյանց և փոխադարձաբար նպաստեին մեկը մյուսի զարգացմանը, սակայն Օսմանյան կայսրությունում առկա սոցիալական ու քաղաքական արտառոց սիստեմի պայմաններում դա բացառվում էր։

Անդրադառնալով Թուրքիայում տեղի ունեցած քաղաքական բնույթի տեղաշարժերին Ռընե Պինոնը նշում է, որ թանզիմաթի այս էտապից «Թուրքիան դուրս էր գալիս ավելի մահմեդական, ավելի ասիական, ճիշտն ասած զինվորապես ավելի ուժեղ, բայց և քրիստոնյա ազգաբնակությունները ճնշելու ավելի տրամադիր» (49, 1906 թ. № 8, էջ 8)։

Բաֆֆին ևս, առարկելով բոլոր նրանց, ովքեր հաթթը-հումայունի հրապարակումից հետո ենթադրում էին, որ Օսմանյան կայսրությունը բռնել է եվրոպականացման ուղին և մտել քաղաքակիրթ ժողովուրդների շարքը, գրում էր. «Ո՛չ, Տաճկաստանի բարբարոսությունները ծածկող, նրա երևակայական հառաջադիմությունը հռչակող անձնական հաշիվներով կուրացած մարդիկ հայտնում են, թե այժմ Տաճկաստանը բավական բա-

բեկարգված է և քրիստոնյա հպատակների դրությունը այժմ համեմատաբար շատ լավ է, քան թե առաջ, և նրանք համարյա կատարյալ ազատություն են վայելում և այլն... Այս բոլորը դատարկ խոսքեր են։ Տաճկաստանը առաջ է գնացել միայն մեկ բանի մեջ, այն է՝ իր արտաքին կերպարանքը պաճուճել է որպես մի եվրոպական տերություն, իսկ սրտով, հոգով ու գործով մնացել է միշտ մոնղոլ, նույն բնավորությամբ, որպիսին էր նա երբեմն Թուրանի անապատներում» (112, 1878 թ., № 146)։

Իրավացի էր նաև Էմիլ Դիլոնը, որը 1847—1891 թթ. շրջանը անվանում է Օսմանյան կայսրության կողմից Արևմտյան Հայաստանի խայտառակ կառավարման շրջան (250, էջ 6)։

Այսպիսով, Թանզիմաթի բարենորոգչական շարժումը, որն ընդունվել էր «ի նպաստ քրիստոնյա և մահմեդական բնակչության բարօրության» պիտակի ներքո, ոչ միայն չնպաստեց արևմտահայության վիճակի բարելավմանը, այլ էլ ավելի վատթարացրեց այն, արհեստականորեն սրելով հայ-քրդական հարաբերությունները, որովհետև հաթթը-հումայունը դիտելով միայն քրիստոնյաների, և մասնավորապես, հայերի համար սահմանված, քրդերը ավելի գրգռվեցին հայ ազգաբնակչության դեմ (114, 1895 թ., № 2, էջ 262)։

Թուրքական կառավարությունը միտումնավոր բորբոքում էր քրդերի այդ տրամադրությունները. նախ, նա աքսորավայրերից հետ վերադարձրեց և իրավունքներ շնորհեց այն բոլոր ցեղապետերին, որոնց ընդամենը մի քանի տարի առաջ դիտում էր որպես իր ոխերիմ թշնամիների։ Այսպես, օրինակ, Մշո դաշտից արտաքսված Միրզա բեյը իր տղաներ Մուսա, Ռասըմ, Նհո և Ջազը բեյերի հետ վերադարձավ և օգտվելով Թուրքական հովանավորությունից, աշխատեց իր տիրապետության տակ վերցնել շրջակայքի հայ գյուղերը (127, էջ 524)։

Նման փաստերը բազմաթիվ էին։ Ամենուրեք ծայր առավ նաև քրդական շեյխերի ու ցեղապետերի կողմից հայերին պատկանող հողերի բռնագրավումներ, որոնք վավերացվում էին պետության կողմից սուտ վկաների վկայություններով կամ կեղծ փաստաթղթեր (թափու, գոչան) ներկայացնելու միջոցով (97, էջ 302)։

Այդ գործը հեշտանում էր նրանով, որ քրդական բեկերն ու աղաները իրենց տրամադրության տակ զինված ջոկատներ

ունեին, մինչդեռ հայերը լրիվ անզեն էին, որովհետև Օսմանյան կայսրությունում առկա քաղաքական-վարչական սիստեմը ոչ մահմեդականներին խստիվ արգելում էր զենք կրել։

Տիրահռչակ շեյխ Ջալալեդդինի հայրը՝ շեյխ Սաբաթուլլահը դեմքը ծածկեց քողով, հայտարարելով, որ քրիստոնյաներին տեսնելը սրբապղծություն է։ Կրոնական մոլեռանդությունը դարձնելով վարագույր, նա սկսեց անխնա բռնագրավել հայերին պատկանող հողերը։ Նրա բռնագրավումների հետևանքով Խիզանի և նրա շրջանների բնակչությունը ստիպված այդ վայրերից գաղթեց (116, էջ 89—90)։ Սա ցույց էր տալիս, որ այսուհետև հայ գյուղացուն կողոպտելու և հարստահարելու համար լայնորեն օգտագործվելու էր նաև կրոնական այլամերժության ու իսլամական մոլեռանդության թույնը։

Խույթ-Բռնաշեն գավառներում քրդական ցեղապետերը սկսեցին հայերի գյուղերն ու արտերը վաճառել միմյանց։ «Առնողը կուգայ գիւղը կը նստի ուզած հայն կը թողու, չուզածն դուրս կը վռնտէ» (38, էջ 63)։

Օսմանյան կառավարությունը նույնիսկ Իրանի քրդերին դրդում էր տեղափոխվել Արևմտյան Հայաստան և զավթել հայերի հողերը։ Կրկին իր իրավունքների մեջ մտավ խաֆիրության համակարգը։

Արևմտյան Հայաստանի բոլոր գավառներում կամայականությունները ու հարստահարությունները, բռնությունները, սպանությունները, հրկիզումները, առևանգումները և այլն ընդհանուր աղետի բնույթ ստացան[13] և դարձան սովորական երևույթ։

«Հայաստանում,— գրում է Պ. Ա. Ջիխաշվը,— քրդերը կողոպտում և ամեն կերպ լկտիաբար կեղեքում են բնակչությանը. դա օրեցօր գնալով աճում է։ Նրանց կողոպուտներին նպաստում է ոչ միայն տեղական իշխանությունների անզորությունը, ...այլ հաճախ դրանց խրախուսումը այդ նույն իշխանությունների կողմից» (379, էջ 64)։

1864 թ. Մշո դաշտի գյուղացիները գրում էին, որ քուրդ բեկերը «կրակէն աւելի կը լափեն իրենց բոլորտիքի խեղճ հայոց կենդանութիւնը, վասն զի սերմը արտէն, խոփն ու շղթան երկրագործէն, մանգաղը հնձողէն, կինը յառնեն անխնայ կը յափշտակեն. ասոնց բարբարոսութիւնը՝ դառնաշունչ հողմէ մը աւելի ցրուեց մեր դաշտեցի հայերը՝ աշխարհի չորս կողմը»։

Այդ բռնություններն ու կողոպուտները լրացվում էին Թուրքական հարկապահանջությամբ, որից ազատվելու համար գյուղացիները ստիպված էին լինում «գիշերանց կրցածնուն չափ բառնալ ու երթալ, տեղերնին աւերակ թողլով» (38, էջ 59—61)։

Արևմտյան Հայաստանում առկա դարձավ մի այլ օրինաչափություն։ Թուրքական բոլոր այն պաշտոնատար անձինք, որոնք այս կամ այն չափով դիպչում էին քրդական վերնախավի շահերին, կարճ ժամանակ անց հաճախ ստիպված էին լինում պաշտոնաթող լինել։ Այսպես, 1869 թ. քրդական աշիրեթների գործած բռնությունների դեմ հայերի բողոքների պատճառով Բ. Դուռը Կարնո վալի Իսմայիլ փաշային հրամայեց բռնել և աքսորել այդ աշիրեթների էլ-աղասի կամ թոռուն ցեղապետերին։ Միայն Մշո գավառից հարյուրի չափ թոռուններ ձերբակալվեցին և աքսորվեցին եվրոպական Թուրքիա և այլուր։ Սակայն շուտով Իսմայիլ փաշան պաշտոնանկ եղավ և աքսորված թոռունները կրկին հետ վերադարձան, անշուշտ վրեժխնդրության ոգով այրված (5, էջ 186)։

1875 թ. Մշո քուրդ աղաներին, որոնք հայտնի էին հայ բնակչության նկատմամբ իրենց գործած բռնություններով, Ահմեդ Մուխթար փաշան Էրզրումում բանտարկում է։

Սակայն նրա պաշտոնանկությունից հետո սրանք ևս ազատ են արձակվում (5, էջ 186)։ 1867 թ. Էրզրումի վալի Խայրեդդին փաշան մեծ վեզիրին ուղղված տեղեկագրում կառավարության համաձայնությունն էր հարցնում քրդական աղալարների խժդժություններից հայերին պաշտպանելու վերաբերյալ։ Մասնավորապես նա առաջարկում էր այդ նպատակով Վան, Մուշ, Թիֆլիս և այլուր ուղարկել լրացուցիչ զորքեր։ Ընդ որում, թուրք պաշտոնյան իր առաջարկը պատճառաբանում էր նրանով, որ հայերը սպառնում են թողնել և հեռանալ երկրից, մինչդեռ դրանից կվնասվի պետությունը և արքունի գանձարանը։ Մեծ վեզիրը, սակայն, չպատասխանեց այս տեղեկագրին։ Եվ երբ փաշան վերստին կրկնեց իր առաջարկը, մայրաքաղաքից ստացավ հետևյալ պատասխանը. «Դուք պետական քաղաքականության մեջ խառնվելու չեք, և իրերը նկատելու եք այդպիսի տեսակետով։ Իսկ հայոց, բա՜րի ճանապարհ, թե որ կուզեն գաղթել. երկիրը կրնամ մարդացունել չերքեզներով և այլովք» (85, 1890 թ., 1—15 դեկտեմբերի, էջ 5)։

Շատ հաճախ հայ բնակչությանը այս կամ այն վայրից դուրս մղելու համար կառավարությունը բռնի կերպով այդ վայրերն էր տեղափոխում քրդական վաչկատուն ցեղերին։ Այսպես, Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» թերթը գրում էր. «1869 թ. Իսմայիլ փաշան Մշո, Պատեքանի, Բագրանի, Աշեկոտանի և Փինճիօարի (իմա՝ Սինջարի։— Վ. Բ.) լեռներեն 5—6000 քուրդ ընտանիքներ (վրանաբնակ) քշեց մինչև Տիգրիսի եզերքները, այնտեղ բնակեցնելու համար։ Այդ քրդերը պատուհաս եղան այդ կողմերը բնակվող հայերի համար։ Նրանք հարձակվեցին 30-ից ավելի գյուղերի վրա և ավարի տալով ու սպանություններով ստիպեցին բնակիչներին, որ փախչեն գնան և իրենք տիրացան այդ գյուղերին» (85, 1890 թ., 1—15 դեկտեմբերի, էջ 5)։

Ընդ որում, քանի որ Սինջարի եզիդիները դիմադրել էին ծագումով քուրդ Իսմայիլ Հաքքը փաշայի այս բռնի տեղահանումների քաղաքականությանը, նա հրամայել էր երեխաներից սկսած մինչև 70 տարեկան ծերերը բռնի թլպատել և դնել մահմեդական շեյխերի հսկողության տակ (85, 1890 թ., 1—15 դեկտեմբերի, էջ 5)։

Պ. Ա. Զիխաշևը գրում էր, որ ըստ տրամաբանության, ինչպես նաև կառավարության կողմից հրապարակված նոր կարգի, նախկին դերեբեյերը պետք է պետությանը վերադարձնեին հայերից բռնագրված իրենց հողերը, իսկ վերջիններս իրենց պետք է ազատ համարեին դերեբեյերի նկատմամբ ունեցած պարտավորություններից և համարեին, որ այսուհետև իրենք կախում ունեն միայն կառավարությունից, որին անհրաժեշտ է վճարել տասանորդի հարկը, ինչպես նաև հենց նոր մտցրած հարկերը։ Իսկապես, ինը տարվա ընթացքում հայերը օգտվում էին դերեբեյերից գրավված հողերից, երբ հանկարծ այդ երբեմնի հզոր ցեղապետերի ժառանգները, որոնք այժմ կրում էին համեստ և ոչինչ չնշանակող «աղա» տիտղոսը, հայերից և ասորիներից պահանջեցին նախկին հողային վարձակալության վճարը, կարծես թե թանզիմաթով հռչակված նոր կարգը բնավ գոյություն չէր ունեցել։

Մեծ վեզիր Ռեշիդ փաշայի օգնությամբ, որն արդարացի էր համարում այդ պահանջները, նրանք կառավարությունից ստացան մի ֆիրման, ըստ որի հայերը ենթակա էին հարկման և հետևաբար պետք է աղաներին վճարեին ինը տարվա

համար ապառքները։ Պ. Ա. Չիխաչևը դա անվանում է «ուղղակի անհավատալի ֆիրման» և նկարագրում է, թե ինչպես այդ ապառքները հավաքելիս փայտերով ծեծում էին ռայաթ գյուղացիներին, նրանց նետում բանտերը և ունեցած գույքը բռնագրավում։ «Հալածական, ինչպես վայրի գազաններ, այդ թշվառները կառավարության մոտ իզուր փնտրում էին արդարություն» (379, էջ 68—69)։

Ուրեմն հայերի նկատմամբ քրդական ավատատերերի գործադրած բռնությունների քաղաքականության թելերը տանում էին Ստամբուլ, և նա էր Արևմտյան Հայաստանում ուղղություն տալիս հայ բնակչության նկատմամբ իրագործվող հարստահարություններին։ Ժամանակակից ֆրանսիացի պատմաբան Իվ Տերնոնը նշում է, որ XIX դարի 50—60-ական թթ. Թուրքական կառավարող շրջանների մոտ արդեն հասունացել էր «հայերից ազատվելու գաղափարը» (478, էջ 52—53)։ Իսկ հայությունը իզուր թուրքական վարչությունից ամեն տեսակ անզուսպ տարրերի դեմ խիստ միջոցառումների էր սպասում։ Ընդ որում, ամեն մի քայլ, որին դիմում էր հայ ժողովուրդը, իր տարրական իրավունքները պաշտպանելու համար, հատկապես նրա բողոքներն ու դիմումները կառավարությանը առաջ էին բերում քրդական վերնախավի թշնամությունը։ «Նույն Ստամբուլում,— գրում է Պ. Ա. Չիխաչևը,— Անգլիայի, Ռուսաստանի Ավստրիայի դեսպանները հայերի բողոքներին պատասխանում էին քար անտարբերությամբ», «...գերադասելով լուռ մնալ այն բանսարկությունների և սոփեստությունների նկատմամբ, որոնք առաջ էին քաշվում հին կարգի փաստաբանների կողմից հոգուտ դերեբեյերի ժառանգորդների» (379, էջ 68—69)։

Իրավացի էր ռուսական բանակի գեներալ Մ. Լիխուտինը, գտնելով, որ եվրոպական երկրների կողմից նորագույն զենքի ներմուծումը Արևմտյան Հայաստան էլ ավելի է բարդացնում այնտեղ տիրող վիճակը, որովհետև այն սովորաբար անցնում է քրդերի ձեռքը և նրանց տրամադրում «...իրենց խաղաղ հարևաններին քայքայելու և ոչնչացնելու նոր միջոցներ» (277, էջ 153)։ Ցարական գաղութային քաղաքականության ջատագով այս գեներալի կարծիքով Ռուսաստանի խնդիրն է, ի տարբերություն արևմուտքի տերությունների, հովանավորել հայերին ու քրդերին, և դրանով իսկ թուլացնել թուրքական կառավարությանը. «...ձեռք բերելով նրանց նվիրվածությունը,— շեշ-

տում էր գեներալը,— մենք ձեռք կբերենք նաև նրանց երկրամասի հարստությունները, հանձինս նրանց ստեղծելով նոր թշնամիներ Թուրքական կառավարության համար կամ ծայրահեղ դեպքում նրան զրկելով իր ուժի որոշ աղբյուրներից» (277, էջ 184)։

Աղետներից ազատվելու համար արևմտահայությունը զանգվածորեն գաղթում էր մի գավառից մյուսը։ Շատերը բռնում էին երկրից հեռանալու ուղին, շատերն էլ դրությունից ելք գտնելու հույսով թրքանում էին։ Վավերագրերից մեկում կարդում ենք, որ փրկության ուղիներ որոնելու համար Մշո դաշտի մի շարք գյուղերի բնակիչներ որոշում են ժողով գումարել։ «Մենք ըսինք ժողովին,— ասվում է վավերագրում,— թե մեր ժողովրդի փրկության համար մեկ միջոց կա, թրքությունը ընդունենք 40—50 տարի կամ քիչ մը ավելի, թերևս այս երկիրը ուրիշ պետության մը ձեռքը կանցնի, մենք ալ կազատինք ու կը դառնանք հայության» (127, էջ 198—199)։

Փաստերը վկայում են, որ արևմտահայության զգալի զանգվածներ իսլամն ընդունել են բռնի հարկադրանքով։ Հայտնի է նաև, որ կրոնական հալածանքների հետևանքով Արևմտյան Հայաստանի քրդական հոծ զանգվածներ ունեցող շրջաններում բազմաթիվ հայեր քրդացել են և դարձել քրդախոս (113, էջ 3)։

Հատկանշական է, որ սուլթանական կառավարությունը վարում էր նաև քուրդ զանգվածների թրքացման քաղաքականություն։ Կոստանդնուպոլսում դա դիտվում էր որպես պետական առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիր։ Նպատակը պարզ էր՝ քուրդ զանգվածներին դարձնելով զուտ մահմեդական մի համայնք, զրկել նրան ազգային գիտակցությունից, որի արթնացումը թեև դեռևս տարտամ, սակայն դարի 60—70-ական թվականներից արդեն զգացնել էր տալիս իրեն։ Առհասարակ օսմանյան կառավարությունը դարեր ի վեր ձգտել է քրդերի մեջ սպանել ազգային նախանձախնդրության ոգին։ «Որոշ չափով հաջողել է նրան այդ բանը. նա կրոնի նշանակությունը քանի մը անգամ բարձրացրել է ցեղականեն. այնպես որ հաճախ մահմեդական քուրդը կանգիտանա իր ցեղային պարտականությունները հօգուտ մահմեդականութեան» (117, էջ 43—44)։

Սուլթանական կառավարության վերոհիշյալ քաղաքականության պտուղները երկար սպասեցնել չտվեցին. մի շարք շրջաններում (Մուշի, Բիթլիսի) և այլուր բնակվող քուրդ ազգաբնակչությունը սկսեց արագորեն թուրքանալ (127, էջ 196)։

Արդ, շատերի համար միանգամայն պարզ էր, որ հայ-քրդական հարաբերությունների լարվածության մեջ թուրքական կառավարությունը խաղում էր վերին աստիճանի նենգ դեր։ Նշելով, որ հենց այդ կառավարության մեղքով Արևմտյան Հայաստանը և Քրդստանը տևապես դառնալու են տարբեր էթնիկական խմբերի միջև մշտական թշնամանքի ասպարեզ, Մ. Լիխուտինը հայտնում է հետևյալ միտքը. «Ժողովուրդների, լեզուների և կրոնների այդպիսի բազմազանության և խառնուրդի պայմաններում, որը հանդիպում է այստեղ, և թշնամական հարաբերությունների համընդհանուր լարվածության առկայությամբ, չի կարելի սպասել, որ կարգն ու հանգստությունը այստեղ կարողանան հաստատվել ինքնաբերաբար... Ասիական Թուրքիայում անհրաժեշտ է նոր հզոր իշխանություն, որովհետև դասային հարաբերությունների հեղաշրջումը, այսինքն տարբեր ժողովուրդների հարաբերությունները, նրանց հավասարեցումը արդարության սկզբունքի վրա, դժվարին գործ է, որին թուրքական իշխանությունը ընդունակ չէ իր բնույթով և ներկա թուլության պատճառով» (277, էջ 271)։

Ցարական գաղութային քաղաքականության այդ ռազմական գործչի կարծիքով, միայն Ռուսաստանն է ընդունակ լուծելու այդ կնճռոտ խնդիրը։ «Պատերազմի ընթացքում,— շարունակում է նա,— մենք տեսանք նման անկարգությունների հեշտությունն ու հնարավորությունը, ինչպես և հայերի ջարդը քրդերի կողմից դեռևս ոչ մեծ չափերով. իսկ երբ դիտում ես այդ տարածությունները, որոնք բնակեցված են այնպիսի ժողովուրդներով, որոնք պատրաստ են ալեկոծվելու և ոչնչացնելու մեկը մյուսին, ապա զգում ես եվրոպացիների (իմա՝ ռուսների։— Վ. Բ.) արագ, գործնական և իշխող ազդեցության անհրաժեշտությունը, որը կլուսավորեր կամ կճզմեր այդ վտանգավոր ժողովուրդներին, կանխելու համար մեծագույն դժբախտությունները» (277, էջ 270)։

Հայ ժողովուրդը, ինչպես և Օսմանյան կայսրության մյուս ճնշված ժողովուրդները իրենց համար ստեղծված անելանելի վիճակից ելք էին որոնում։ Միակ հնարավոր տրամաբանական

ելքը հանդիսանալու էր և հանդիսացավ զինված պայքարը։ Թուրքական պետականության դաժան ռազմաավատական ճնշման դեմ կայսրության քրիստոնյա բնակչության պոռթկումները ստացան ազգային-ազատագրական պայքարի ձև։

1850—60-ական թվականներին ողջ կայսրությունում սկսվեց հակասուլթանական ազգային-ազատագրական շարժման մի ալիք։ 1858 թ., օրինակ, ապստամբություններ տեղի ունեցան Չեռնոգորիայում և Սերբիայում, 1861 թ. Հերցոգովինայում և Բուլղարիայում, 1862 թ. կրկին ապստամբեց Չեռնոգորիան։

Ապստամբությունների այդ ալիքը իր հորձանուտի մեջ վերցրեց նաև արևմտահայությանը։ 1862 թ. ապստամբեց հերոսական Զեյթունը, նույն թվականին Վանի բնակչությունն ընդհարվեց ոստիկանության և թուրք վերնախավի հետ։ Ընդորում քաղաքի բնակչության այդ ելույթին միացան նաև շրջանի հայ և քուրդ գյուղացիները։ Ակադեմիկոս Մ. Գ. Ներսիսյանը գտնում է, որ «անգամ կարելի է ասել, որ նշված զինված ելույթը հայ և քուրդ ժողովուրդների միացյալ պայքարն էր թյուրքական բռնակալության դեմ» (115, էջ 123)։ 1863 թ. զանգվածային հուզումներ տեղի ունեցան Մշո հայ բնակչության շրջանում (446, էջ 174)։

1865 թ. հուզումների ալիքը տարածվեց Չարսանջակի գավառում և այլուր։ Արևմտյան Հայաստանում ծավալվող ազգային-ազատագրական շարժումները միահյուսվում էին սոցիալական պայքարի հետ՝ թուրք, քուրդ հարստահարիչների դեմ։ Հատկանշական է, որ դասակարգային պայքարի ընթացքում ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում մահմեդական (թուրք և քուրդ) և քրիստոնյա գյուղացիների համատեղ ելույթներ իշխանությունների և ֆեոդալական հետադիմության դեմ։ Մահմեդական աշխատավոր գյուղացիությունը համակրանքով էր վերաբերվում հայ գյուղացիության սոցիալական պայքարին և նույնիսկ շահագրգռված էր, որպեսզի հաղթանակը լինի հայ գյուղացիության կողմը, որովհետև դա անխուսափելիորեն թեթևացնելու էր նաև մահմեդական գյուղացիության վիճակը (257, էջ 86)։

Շատ հաճախ հայերն ու քրդերը համատեղ էին հանդես գալիս կառավարության դեմ։ Այսպես, 1864 թ., երբ վերջինս փորձեց Սասունում տեղավորել զորք, վարչություն և ոստիկա-

նություն, հարաբերական ինքնուրույնություն ունեցող և անհանդիստ այդ լեռնային շրջանը կառավարության հսկողության տակ դնելու նպատակով, հայերն ու քրդերը միացյալ ուժով դիմադրեցին թուրքական զորքերին (114, էջ 124)։

Ազգային-ազատագրական և սոցիալական այս շարժումները և հատկապես Զեյթունի հերոսական ապստամբությունը ստիպեցին օսմանյան կառավարությանը 1863 թ. ընդունել հայոց Ազգային սահմանադրությունը, որը, սակայն, սուլթանի կողմից հաստատվեց ավելի քան մեկ տասնամյակ հետո, 1874 թ. մայիսին։

Ազգային սահմանադրությունը պոլսահայության կողմից ընդունվեց մեծ խանդավառությամբ։

Այս ցնծության պատճառն այն էր, որ սահմանադրությունը ընկալվում էր իբրև ներքին վարչական ինքնավարության իրավունք։ Պոլսահայ բուրժուազիայի՝ ամիրաների և սարաֆների շրջանում, որը ձգտում էր իր ձեռքում կենտրոնացնել հայ եկեղեցական-ազգային գործերը, ժողովրդական լուսավորությունը և հայության գաղափարական ղեկավարությունը, իսկ ազգային հիմնարկությունները ծառայեցնել որպես հարստացման աղբյուր, այդ սահմանադրությանը վերագրվում էր խոշոր քաղաքական նշանակություն։

Թուրքական կառավարությունը չէր զլանում աջակցություն ցույց տալ հայ բուրժուազիային իր այդ նպատակին հասնելու համար, որովհետև նա սահմանադրությունը դիտում էր որպես հայ աշխատավորներին «թուրքական պետականությանը ենթարկելու մի միջոց» (230, մաս 1, էջ 23)։ Այդ սահմանադրությունը, որը 1857 թ. Բ. Դուռը մերժել էր «պետության մեջ չի կարող պետություն լինել» պատճառաբանությամբ, այժմ քաջալերում էր։ Դա իսկապես մի վարպետ խաղ էր։ Կառավարությունը «շոյում» էր հայերի ինքնասիրությունը, իր վրա չվերցնելով որևէ ռեալ պարտավորություն։ Նա հույսեր էր փայփայում, որ այդ սահմանադրության միջոցով կկարողանա հայ ժողովրդին շեղել ազատագրական պայքարից, կամլացնի այդ շարժումը, արգելք կհանդիսանա արևմտահայության մերձեցմանը Ռուսաստանին։

Թուրքական պետական դեմքերի մեջ կային նաև մարդիկ, որոնք ուղղակի զրոյի էին հավասարեցնում այդ սահմանադրության նշանակությունը։ Այսպես, եպարքոս Ալի փաշայի

բացատրությամբ դա «քառակուսի անիվն էր», որ կարող էր հաճախ ճռնչալ միայն։ «Այս կանոնադրությունը,— ասել է նա,— պիտի փայփայեր ժողովրդի հույսերը, երգել պիտի սորվեցներ անոնց, և ա՛յնչափ միայն» (35, էջ 50)։

Ազգային սահմանադրությունը անվանելով «մանկական խաղալիք», որը խորամանկ դայակը տալիս է երեխայի ձեռքը, որ նա հանգիստ մնա, նրանով զբաղվի և չարություն չանի, Բաֆֆին գրում էր. «Եվ Կ. Պոլսի տղայամիտ էֆենտիներն շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին իրենց ողորմելի պատրանքը» (139, էջ 87)։

Հարցը միայն այն չէր, որ ազգային սահմանադրությամբ հայ ժողովուրդը քաղաքացիական իրավունքներ չստացավ (77, էջ 37) և խոստացված ինքնավարությունը մնաց թղթի վրա, այլ այն, որ պոլսահայության ուրախության մեջ բուն Արևմտյան Հայաստանը բաժին չուներ։ Նախ, Ազգային ժողովի մեջ ընտրվեցին մարդիկ, որոնք, ապրելով մայրաքաղաքում, ոչ մի հարաբերություն չունեին գավառահայության հետ և հետևաբար երբեք չէին կարող հանդիսանալ Արևմտյան Հայաստանի բնակչության և՛ վիճակի, և՛ բաղձանքների իսկական արտահայտիչը։

Երբ Արևմտյան Հայաստանի վիճակից ոչ մի գաղափար չունեցող Կոստանդնուպոլսի հայ ամիրաները, սարաֆները և հոգևորականները իրենց ջերմ մաղթանքներն էին հղում «սիրուն հայրենիքին», որպեսզի նա իր «լացը փոխե ի պար», Հայաստանի բնակչությունը հեծծում էր թուրք կաշառակեր-պաշտոնյաների, քուրդ աղաների ու բեկերի և տարբեր ազգերի, այդ թվում նաև հայ անգութ վաշխառուների ճնշման տակ։ Հակոբ Պարոնյանը շատ դիպուկ բնորոշելով այդ իրավիճակը, գրում էր. «Խեղճերն անդին կը հարստահարվին կը հալածվին, մենք ասկից սահմանադրական հրահանգ կը ղրկենք անոնց...» (122, էջ 37)։

Ազգային սահմանադրության միակ շոշափելի օգուտը արևմտահայ իրականության մեջ այն էր, որ այն որոշակիորեն նպաստեց ազգային զգացումների վերելքին, զարկ տվեց կրթական, մշակութային կյանքին։

Սակայն այդ սահմանադրությունը միաժամանակ գալիս էր խորացնելու հայ-քրդական հակամարտությունը։ Քրդերին

հատկապես գրգռում էր այն, որ նահանգներում ընտրված հայ առաջնորդները, որոնց իրավասության շրջանակը իրականում սահմանափակվում էր լոկ կրոնական ու կրթական բնագավառներում, քրդերի աչքին երևում էին որպես Թուրքական վալիի և մութեսարիֆի կողքին հայոց նահանգապետ կամ գավառապետ։

Ազգային սահմանադրության միջոցով սուլթանական կառավարությունը ձգտում էր ոչ միայն սրել հակասությունները հայերի և քրդերի միջև, այլև ուժեղացնել կառավարության իշխանությունը արևմտահայության նկատմամբ։ Դրա հաստատումը մենք գտնում ենք Ջեմալ փաշայի հետևյալ ձևակերպման մեջ. Ազգային սահմանադրության հրապարակումից հետո «քրդերի ստրկացուցիչ լծի փոխարեն նրանք (հայերը։— Վ. Բ.) հնարավորություն ստացան լավագույն հարաբերությունների մեջ ապրել Թուրքերի և Թուրքական կառավարության հետ...» (249, էջ 199)։

Սակայն այդ քաղաքականությունը որոշ նշանակություն ունեցավ միայն քաղաքային բնակչության համար, որտեղ Թուրքերը և Թուրքական պաշտոնեությունը պարզապես լրացնում էին քրդական ավատատերերի պակասը։ Մինչդեռ գյուղական վայրերում դրությունը մնաց նախկինի պես անփոփոխ։ Այդ առթիվ Մուշի շրջանից Կոստանդնուպոլսի «Ազգային կենտրոնական վարչությանը» ուղղված աղերսագիր-բողոքի մեջ կարդում ենք. «Դուք արդեն գիտեք զմեզ շարշարող բարբարոս քրդերը։ Մեր մալ ու մուլքին, նաև մեր կեանքին վնասող նոքա են։ Բայց մենք առաւել քան զանոնք քանի տարիէ ուրիշ տեղէրէն վիշտեր, զրկանքներ կը կրենք... Քրդերու վնաս ի քաղաք պետութեան կը բողոքենք։ Բայց քաղաքէն ընդունած վնասը որի՞ բողոքենք» (21, 1863 թ. № 2)։

Ավելի առաջ տաներով իր այս քաղաքականությունը 1867 թ. սուլթանական կառավարությունը հրապարակում է «Վիլայեթների վարչության մասին օրենքը», ըստ որի Դիարբեքիրը, Մուշը, Վանը, Բիթլիսը, Հաքյարին և Ջեզիրեն միավորվում էին մեկ վարչական միավորի մեջ և ստանում Քրդստան անվանումը։ Վարչատարածքային այդ վերաձևման նպատակն էր քրիստոնյա ու մահմեդական ազգաբնակչության տեղաբաշխման հետ այնպես խաղալ, որ վերոհիշյալ նահանգներում

հայ աղգաբնակչությունը ոչ մի տեղ մեծամասնություն չկազմեր (419, էջ 30)։

Այդ քայլը հայերի մեջ առաջ բերեց ուժգին բողոքներ (271, էջ 236—241)։ Թեև կառավարությունը անցանկալի բարդություններից խուսափելու համար վերանայեց իր որոշումը՝ Վանի և Մուշի շրջանները միացնելով Էրզրումի վիլայեթին, (282, էջ 3—6), սակայն ինքնին արդեն կառավարության կատարած վարչական այդ բաժանումը խիստ հատկանշական էր, և նրա իմաստը միանգամայն ճիշտ էր ընկալվել արևմտահայության կողմից։

Կառավարության ձեռնարկած այս միջոցառումները վկայում էին նաև այն մասին, որ նա մտադիր էր Արևմտյան Հայաստանի և Քրդստանի նկատմամբ իր իշխանությունը դարձնել ավելի տիրական ու ազդու և ապահովել այդ շրջանների հանգստությունը, բացառելով ամեն տեսակի հակակառավարական ելույթներ։ Այդ նպատակով Բ. Դուռը իր նոր կազմակերպած վարչական միավորի՝ «Քրդստանի» վալի նշանակեց Իսմայիլ Հաքքը փաշային, որը կառավարության վերոհիշյալ քաղաքականության համոզված ջատագովն էր։ «Արևելյան պատերազմի ավարտից քսան տարի անց,— այդ առթիվ գրում էր Պ. Ի. Ավերյանովը,— Թուրքական կառավարությունը ձգտում էր դաժան միջոցառումներով իր իշխանությունն ու ազդեցությունը հաստատել Քրդստանի ամենահեռավոր և անհնազանդ մասերում։ Քրդերի շրջանում Թուրքական իշխանությունը հաստատելու գլխավոր գործիքը Իսմայիլ Հաքքը փաշան էր, ծնունդով քուրդ, Կարսի փաշալըքից, մինչև ֆանատիկոսության աստիճանի նվիրված Թուրքական սուլթանին» (150, էջ 159)։

Սակայն Հաքքը փաշային հանձնարարված գործը գլուխ բերելը այնքան էլ հեշտ չէր, մանավանդ որ քրդական աշիրեթները գլխովին զինված էին, իսկ կառավարությունը մտադիր չէր զինաթափել նրանց։ Երբ 1870-ական թվականների սկզբին Բ. Դռան առանձին գործիչներ, այդ թվում նույնիսկ սուլթան Աբդուլ Մեջիդը հարց բարձրացրեցին քրդերին զինաթափ անելու մասին, մեծ վեզիր Ալի փաշան հայտարարեց. «Պետք չէ, քրդերը միշտ պատրաստ զորք են մեզ համար» (139, էջ 98)։

Բացի այդ, առանձին շրջանների քուրդ զանգվածները, անտեսելով կառավարության սպառնալիքները, ոչ միայն չէին ճանաչում Թուրքական վարչությանը, այլև ընդվզում էին նրա

դեմ։ Թուրքական իշխանությունները ոչ մի կերպ չէին կարողանում նաև իրենց ենթարկել անհնազանդ Դերսիմի շրջանը։ 1875 թ. օգոստոսին Դերսիմի բնակչությունը հաշվեհարդար տեսավ այն քուրդ բեյերի հետ, որոնք կառավարության պաշտոնյաներ էին (150, էջ 72, 160)։

Իրենց անհնազանդությամբ աչքի էին ընկնում նաև քերքյանլի, խսիանլի, շամդիլի, քչուրի, ոժգոթանլի, հասարլի, փիրոզլի, փեննեքքենարլի և բազմաթիվ այլ քրդական ցեղեր։ Սուլթանական կառավարության փորձերը ստիպելու քուրդ ցեղապետերին, որպեսզի նրանք հայերից գանձված տուրքերը հանձնեն կառավարությանը, որպես կանոն մնում էին անարդյունք։ Այդ հողի վրա նույնիսկ 1870 թ. քրդերի և կառավարական զորքերի միջև արյունալի բախումներ տեղի ունեցան։

Սակայն, չնայած այս բոլորին, առաջվա պես օսմանյան կառավարությունը, վերջին հաշվով, քուրդ ավատատերերին հայ գյուղացիությանը հարստահարելու ազատություն էր տալիս։ Այդ է պատճառը, որ կողոպուտը, անօրինական հարկապահանջությունը, հարստահարությունները և այլն 60—70-ական թվականներին հասան աննախընթաց չափերի։

Արևմտահայությունը իր անելանելի վիճակից ելք էր որոնում բողոքների միջոցով, որին դիմում էին անխտիր բոլորը։ Բողոքի հանրագրությունները իրար հետևից տեղում էին մայրաքաղաք։ Այդ «թաքրիրներում» պահանջվում էր նաև բարեփոխություններ իրականացնել։ Թուրքական բյուրոկրատիան այդ թաքրիրների դեմ օգտագործում էր «խթիլամի» (քննություն, ստուգում) զենքը։ Դա գործը ձգձգելու կամ մոռացության մատնելու մի ձև էր։ Իսկ կառավարության գավառական իշխանություններին ուղղված հրամանները կամ «ազդու» միջոցներ, որոնք Բաֆֆու արտահայտությամբ «Բ. Դուռը շռայլորեն դուրս էր տալիս իր խաբեության գործարանից» տեղերում մնում էին անգործադրելի ու անհետևանք։

1869 թ. ստանձնելով Կոստանդնուպոլսի պատրիարքի պաշտոնը, Խրիմյան Հայրիկը իր հետ մայրաքաղաք տարավ հարստահարությունների վերաբերյալ բազմաթիվ փաստեր և դրանց վրա հիմնվելով կազմեց իր նշանավոր «Գավառական հարստահարությունների տեղեկագիրը», որտեղ հինգ հարյուրից ավելի արյունոտ դեպքերի նկարագրություն կար։ Հատուկ հանձնաժողովը, որը վերոհիշյալ «Տեղեկագիրը» ներկայացրեց

Ազգային ժողովին, միջոցներ առաջարկեց քրդական ցեղերի կողմից հայերի հարստահարությունները սահմանափակելու ուղղությամբ։ Մասնավորապես առաջարկվում էր զինաթափ անել քրդերին և կամ զենք կրելու իրավունք տալ նաև քրիստոնյա ժողովուրդներին, առավել աչքի ընկնող հարստահարիչ ցեղապետերին աքսորել Ռումելի և այլն (128, էջ 135—136)։ Միանգամայն ակներև է, որ նման առաջարկներ անողները իսպառ տեղյակ չէին Թուրքական կառավարության հետին նպատակներին։ Երբ Ազգային ժողովը 1872 թ. փետրվարին տեղեկագիրը ներկայացրեց կառավարությանը, վերջինս ձևացրեց, թե լրջորեն քննելու է այն։ Հայերից և մահմեդականներից բաղկացած մի խառը հանձնաժողով մեկնեց Հայաստան, տեղում բողոքները քննելու համար։ Տեղեկագրի բովանդակությունը հաստատվեց։ Կառավարությունը խոստացավ մի լիազոր հանձնաժողովի հանձնել հանցավորներին պատժելու և առաջարկված պայմանները իրականացնելու գործը, բայց ամեն ինչ մնաց լոկ խոստում։

Կոստանդնուպոլսում մեծ վեզիր Ալի փաշայի մոտ իր առաջին այցելության օրը Խրիմյան Հայրիկը նրան ներկայացնելով կայսրության արևելյան նահանգներում տիրող վիճակը, նույն կրքով խոսում էր և՛ հայ, և՛ քուրդ աշխատավոր բնակչության դառն ու ծանր վիճակի մասին (8, էջ 1111)։ Քիչ ավելի ուշ, 1876 թ. Խրիմյանի գրած «Մրագիր բարենորոգմանցում» (որը տպագրվեց միայն 1909 թ.) ևս նա կառավարությանն էր ներկայացնում իր խորհրդածություններն ու կարծիքները քրդերի վիճակի և նրանց կյանքի պայմանների բարելավման մասին։

Սակայն վերոհիշյալ հարցերի կապակցությամբ ևս կրկին ի հայտ է գալիս ազգային երկվությունը, դիրքերի և շահերի հակադրությունը։

Կոստանդնուպոլսում «Ազգային ժողովը» և «Կենտրոնական վարչությունը» փոթորկվում էր «իրարամերժ կարծիքներից»։ Ոմանք ժխտում էին բողոքների նպատակահարմարությունը, առարկելով թե «Հայաստանի մեջ որ՛ շուկայ, որ՛ վաճառատուն որ մտնէք, պիտի տեսնէք, որ բոլոր խանութներուն մէջ հայեր են նստած, առեւտուր ընողը հայն է... Երբ գիւղ մը մտնէք, աքլորի եւ կոչնակի ձայն առնուք, ուր մարգագետին, ծառեր եւ պարտէզներ ձեր աչքին առջեւ տարածուին, ուր աղ-

շրկունք աղբիւրներէ շուր բերեն, մէկ խօսքով ընկերականութիւն նշմարէք այդ գիւղին մէջ, գիտցեք որ հայուն է այդ գիւղը. ընդհակառակն, երբ գիւղ մը մտնէք, ուր ոչ պարտէզ կայ, ոչ ծառ, լուռ, ամայի և շոր, գիտցէք որ տաճիկին է այդ գիւղը» (135, էջ 65)։

Ի վերջո Խրիմյանի աննահանջ դիրքը և նրա պատրիարքությունը Ազգային ժողովի ուսերի վրա դարձավ մի ծանր բեռ, և պատահական չէ, որ այն զբաղեցնելուց ընդամենը չորս տարի հետո՝ 1873 թ. նա ազատվեց այդ պաշտոնից, դառնացած հայտարարելով. «Զիս նաւապետ կոչեցիք ալեկոծեալ նաւուն եւ նաւն ինձ յանձնելէ ետեւ ամէնքնիդ ալ փախչելով, զիս միայն թողուցիք. կը նայիմ չորս կողմս, բայց նաւաստի մը չեմ գտներ» (135, էջ 50)։

Ջ. Կիրակոսյանը իրավացիորեն նշում է, որ «թեև հարըստահարությունների դեմ բողոքներն ազգային երանգ էին ստանում, բայց իրականում ակնբախ էր նրանց սոցիալ-դասակարգային էությունը» (77, էջ 50)։ Այդ է վկայում նաև այն փաստը, որ առանձին վայրերում հայ և քուրդ շահագործող դասակարգերի միջև ստեղծվում էր աշխատավոր ժողովրդին շահագործելու և կողոպտելու դաշինք։ Այսպես օրինակ, 60-ական թթ. Վանի հայոց առաջնորդ Պողոս Վարդապետ Մելիքյանը գաղտնի համագործակցելով Վասպուրականի շրջանի քուրդ ցեղապետերի ու ավատատերերի հետ, կողոպտեց ու թալանեց ոչ միայն քրդերին և ասորիներին, այլև հարազատ ժողովրդին։ Բաֆֆին «Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վրա» հոդվածում գրում է. «Յուզբաշի Ալի աղան, Զազա էոմերը, Շեմակի Տրպոն, Պաշկալայի Քոռ էոմերը, բոլորը հպատակում են նորան։ Նորտուզա Տրպազ աղան, որ Հոգվոց վանքը թալանեց, Շատախու Գյուլ-Մեհմեդը, որ տեղային եկեղեցիները կողոպտեց և յուր անասունների գոմերը դարձուց, Մոկաց երկրի Ավդալ բեկը՝ այն հազարավոր հայերի արյունը թափող խան Մահմուդի եղբայրը և Մաքուրցվոց Մեհմետ Ալի աղան, որ Սաթմանից եկեղեցին պղծեց՝ բոլորը Պողոս վարդապետի ամենահավատարիմ բարեկամներն են դառնում։ ...Այդ բոլոր չարագործները գաղտնի կապեր են կցում Պողոս հայրսուրբի հետ և նորանից կախումն ունեն» (138, էջ 71)։

Պողոս վարդապետը կապ ուներ նաև Վանի փաշայի հետ և այդ կեղտոտ եոյակը անխնա թալանի ու հարստահարու-

թյուններին էր ենթարկում թե՛ հայ, թե՛ քուրդ գյուղացիությանը, խտրություն չդնելով միջոցների մեջ. «Մի հայոց եկեղեցի պղծել տվող Մեհմետ Ալին ազատելու համար Պողոսը կառավարության ատյանի մեջ վկայում է, թե չարագործն անչափահաս մանուկ լինելով, ազատ է պատժվելուց, մինչդեռ նա ահագին մորուք ուներ» (138, էջ 72)։

XIX դ. 70-ական թվականներին հայ ժողովրդին սպառնացող ահեղ վտանգի պայմաններում սուլթանական կառավարության մտահղացած հայադավ միտումներին հակազդելու նպատակով հայ մտավորականությունը սկսում է ուղիներ որոնել։ Բողոքների և հանրագրությունների թղթե զենքին դիմելուց բացի առանձին գործիչներ դեռևս 50-ական թվականներից հանգում են այն համոզման, որ քանի քրդերի մոտ տիրում են ցեղապետական կարգերը, քանի այդ ժողովուրդը գտնվում է հետամնացության ու խավարի մեջ, զուրկ գիր ու գրականությունից, մտավոր ու մշակութային կյանքից, արևմտահայության գլխին միշտ էլ կախված կլինի դամոկլյան սուրը, որը անհրաժեշտության դեպքում կօգտագործվի թուրքական կառավարության կողմից։

Հայտնի է, որ առանձին հայ գործիչներ դրությունից դուրս գալու ելքը փնտրում էին քրդերի շրջանում լուսավորություն տարածելու մեջ։ Հայ մտավորականներից Մկրտիչ Տիգրանյանը առաջիններից էր, որ 1850 թ. շրջեց Արևմտյան Հայաստանի քրդաբնակ շրջանները, նպատակ ունենալով քուրդ երեխաների համար դպրոցներ կազմակերպել և այլն։ Դեռևս 1841 թ. նա կազմեց «Կանոնք բարեկարգութեան Քյուրտիստանի և Հայաստանի վանօրեից և վիճակաց նոցին» (88) ծրագրային աշխատությունը, որտեղ շարադրում էր իր տեսակետները քուրդ մատաղ սերնդի շրջանում լուսավորություն տարածելու համար, իսկ 1860 թ. հայկական տառերի հիման վրա կազմում է «Այբբենարան քրդերեն և հայերեն» (11) դասագիրքը և այլն։ Նրա ջանքերով նույն թվականին Կոստանդնուպոլսում կազմակերպվեց «Բարեկարգութիւն արեւելեան» ընկերությունը, որի գործուն անդամներից էին նաև ազատագրական գաղափարներով տոգորված արևմտահայ առաջադեմ մտավորական, «Մեղուի» խմբագիր Հարություն Սվաճյանը, Մ. Մոմջյանը և ուրիշներ։ Հիշյալ ընկերության ջանքերով կազմվեց և հրատարակվեց հայատառ քրդերեն մի դասագիրք «Լապտեր լուսատու»

վերնագրով (66), որը մեծ դժվարություններով տարածվեց քրդարնակ շրջաններում (119, էջ 14—15)։

Ի միջի այլոց, «Բարեկարգութիւն արեւելեան» ընկերության նպատակն էր նաև բարեկամական հարաբերություններ հաստատել քրդական շրջանների հետ (115, էջ 290)։

Պոլսահայ բուրժուազիան մեծ հետաքրքրությամբ վերաբերվեց հայ մտավորականության վերոհիշյալ գործունեությանն ու ջանքերին։ Այսպես, տեղեկանալով, որ քրդերեն կազմված է «Լապտեր լուսատու» դասագիրքը, հայ մի քանի երևելի մեծատուններ՝ Մկրտիչ Մութաֆյանը, Վարդան Վարդանյանը, Հովհաննես Հակոբջանյանը, Գրիգոր Բագրատունյանը և ուրիշներ դրամական նվիրատվություն արեցին գրքի տպագրությունը գլուխ բերելու համար (52, էջ 9)։

Մկրտիչ Տիգրանյանի գաղափարներն ու մտահղացումները հետագայում շարունակեցին հայ մտավորականության ներկայացուցիչները, չնայած միշտ էլ հանդիպում էին օսմանյան կառավարության դիմադրությանն ու խափանիչ քայլերին։ Շատերն էլ ենթադրում էին, որ չարիքների աղբյուրը քրդերի քոչվորական կենցաղն է և գտնում էին, որ նրանց նստակեցության անցնելու դեպքում բնական ձևով արմատախիլ կլինեն այն բոլոր խոչընդոտները, որոնք առկա են հայ-քրդական հարաբերությունների ասպարեզում։ Այսպես, օրինակ, Գարեգին Սրվանձտյանցը 1869 թ. առաջարկում էր քուրդ ռազմական ավագանուն կտրել ժողովրդից, իսկ ժողովրդին սովորեցնել նստակյաց կյանքի։ «Փշրելու է ատոնց ձեռքի մահացու նիզակը, փոխարենը արդարավաստակ մաճը դնելու է անոնց ափի մեջ, կործանելու է այն սև-սև վրանները, որոնցմով լեռե լեռ կշրջին գայլերու երամի պէս և հաստատելու է զիրենք գեղերու մեջ, գերաններու տակ, իջեցնելու է զանոնք այն ամեհի նժույգներեն և եզ վարել տալու է» (81, էջ 123)։

Տեղեկություններ կան, որ քիչ ավելի ուշ՝ 70-ական թվականներին, Դիարբեքիրի հայ արքեպիսկոպոսը հատուկ ուշադրություն էր դարձնում այն քրդերի վրա, որոնք նոր-նոր անցել էին նստակեցության։ Նա համբերատար նրանց սովորեցնում էր վարել հողը, օգտվել գյուղատնտեսական գործիքներից, ցանել դաշտերը, հավաքել բերքը և այլն (469, էջ 61—62)։ Նման փաստերը բազմաթիվ են։ Խրիմյան Հայրիկը, օրինակ, կապեր է հաստատում քուրդ բեկերի, աղաների հետ,

աշխատում է նրանց համոզել, որ թողնեն վաշկատուն կենցաղը, հրաժարվեն սրից ու հրացանից և կապվեն հողին։ Նա խոստանում է քրդական գյուղերում դպրոցներ բաց անել, նրանց հայ ուսուցիչներ ուղարկել, ստեղծել քրդերեն այբուբեն, մի խոսքով քուրդ ժողովրդի զարգացումը նոր հիմքերի վրա դնել։ Քուրդ ազդեցիկ ցեղապետերի հետ խոսում է այն մասին, որ հայ և քուրդ ժողովուրդները ունեն միևնույն շահը և միևնույն թշնամին՝ սուլթանական կառավարությունը, որ հայ-քրդական գործակցությունը երկուսի համար էլ կլինի ազատագրության երաշխիք (34, էջ 43—44)։

Մ. Խրիմյանի կարծիքով քուրդ ժողովրդի հասարակական-տնտեսական վիճակը անհրաժեշտ էր փոխել, որ նա դառնա նստակյաց, անցնի հողագործության։ Նա առաջարկում էր քրդական հասարակությունից անջատել, մեկուսացնել նրա փշխող վերնախավը, որով կազատագրվի նաև քուրդ աշխատավորությունը, որը նույնպես ենթակա է «թոռուններին» հարստահարություններին (34, էջ 194—196։ 75, էջ 858—859)։ Մ. Խրիմյանը հավատացած էր, որ միայն այս ձևով կարելի է լուծել հայ-քրդական հարաբերությունների կնճիռը։

Անտարակույս Մ. Խրիմյանի այս անկեղծ մղումները իրական հող չունեին և թուրքական իրականության պայմաններում լոկ անիրագործելի երազանքներ էին։ Մ. Խրիմյանը անշուշտ կռահում էր, թե ինչպիսի դեր է խաղում թուրք կառավարությունը հայ-քրդական հարաբերությունների բնագավառում։

Իր «Բարենորոգմանց ծրագրում» նա քուրդ ժողովրդի հետամնացության ու խավարի մեջ մնալու, ինչպես նաև հայերին հարստահարելու պատճառը փնտրում է թուրքական քաղաքականության մեջ և այդ քաղաքականությանը ներկայացնում է իր մեղադրականը։ «...Ճշմարտութեամբ պետք է այս եզրակացութիւն հանեմք,— գրում է նա,— թէ քիւրտերուն բազմադիմի հարստահարութիւնը՝ իրենց վայրենութենէն ու զօրութենէն չէ այնչափ, որչափ տեղական կառավարութեանց անփոյթ եւ ապիկար դրութենէն, եւ մերթ եւս նոցա նպատակաւոր թոյլտուութենէն, որպէս զի առիթ ունենան մեծամեծ կաշառակերութեամբ, այսինքն, ոչխարով, իւղով, պանրով, նժոյգ ձիերով, գեղեցիկ գորգերով եւ ոսկւով իսկ տուժել զքիւրտն»։ «Շատ ճիշտ է,— շարունակում է նա,— թէ որ այնպէս դատենք, թե քիւրտերը կերպով մը շարժական և շահատու կալուածներ

եղած են տեղական կառավարութեան ձեռքը» (75, էջ 854)։ Այնուհետև. «Քիւրտերու ազատ եւ անսանձ կեանքը տեղական կառավարութեանց համար շահաբերութեան մշտնջենաւոր կալուած մըն է եւ նոցա յոռի նպատակն այն է, որ այդ կալուածը յարատեւէ...» (75, էջ 855)։

Արևմտահայ առաջադեմ գործիչներ Մ. Մամուրյանը, Հ. Սվաճյանը, Գ. Չիլինկիրյանը և ուրիշներ գտնում էին, որ անհրաժեշտ է քուրդ ժողովրդին պարզաբանել նրա նկատմամբ թուրքական կառավարության կեղծ սիրաշահումների իսկական պատճառները (119, էջ 16—17), և նախապատրաստել նրան հայ ժողովրդի հետ համատեղ թուրքական ատելի լծի դեմ հանդես գալու համար։

Միևնույն ժամանակ գաղտնի խորհրդակցություններում հատ ու կենտ մարդիկ խոսում էին զենք ունենալու և անձամբ ինքնապաշտպանություն կազմակերպելու մասին։ Այդ գաղափարի կողմնակիցների վրա չափազանց մեծ ազդեցություն էին թողել հայ ժողովրդի ազատագրական շարժումներն ու ելույթները Զեյթունում, Վանում, Մուշում, Զարսանջակում և այլն։

Օսմանյան կառավարությունում ամենուրեք ցրված հայությանը խրիմյանը կոչ էր անում վերադառնալ Արևմտյան Հայաստան և զենք վերցնել իրենց ինչքն ու պատիվը պաշտպանելու համար (112, 1878, № 152)։ Այդ նույն գաղափարը նա զարգացնում էր նաև Վանի շուկայի հրկիզման առթիվ գրված իր «Վանգոյժում»։

Ազգային-ազատագրական գաղափարների քարոզով հանդես եկան արևելահայ ու արևմտահայ մտավորականության համարյա բոլոր լավագույն ներկայացուցիչները՝ Մ. Նալբանդյանը, Մ. Մամուրյանը, Ս. Շահազիզը, Պ. Դուրյանը, Հ. Պարոնյանը, Մ. Պեշիկթաշլյանը, Ռ. Պատկանյանը, Ռաֆֆին և ուրիշներ։

Զենքի պահանջին արձագանքեցին նաև արևմտահայ լիբերալ-բուրժուազիայի առանձին ներկայացուցիչներ։ 1863 թ. Հռոմից Խրիմյան Հայրիկին ուղարկած նամակում Գաբրիել Նորատունկյանը գրում էր. «Հայաստանի սոսկալի ողբերգության տեսարանների առաջն առնելու համար պետք է մի մասնաժողով կազմել ազգի արտաքին գործերը վարելու համար և տևական հեղափոխական գործունեությամբ աշխատել Հայաստանի շղթաները խորտակել» (38, էջ 55—58)։

Գ. Նորատունկյանը գտնում էր, որ պետք չէ քրդերի դեմ անընդհատ բողոքել։ Նրա կարծիքով անհրաժեշտ էր նրանց հետ համաձայնության եզրեր գտնել։ Գ. Սրվանձտյանին գրած նամակում նա շեշտում է. «...այն համոզումը ունիմ, որ լավ քաղաքականություն չեմք ըլլար անդադար քրթաց դեմ գանգատելով ու զմեզ շարունակ անոնց հարաբերութենեն հեռու պահելով։ Քրթերը մարմին մը կը կազմեն ցեղով և զենքով, հայքս ալ ազգով և լոյսով. պետք է որ իրարու հետ բաղխելե առաջ իմաստասիրեմք այն օգուտները, որ կարելի է քաղել նոցա հաղորդակցութենեն ու միաբանութենե։ Եվրոպական իրավագիտությունը կը պատվե նախ զենք ի ձեռին ունեցողը, ապա լուսավորյալը» (38, էջ 55—58)։

Գ. Նորատունկյանը Գ. Սրվանձտյանին նույնիսկ առաջարկում էր այդ իմաստով գործիչ դառնալ ամբողջ քրդության մեջ։ «Հայոց համար ամենակարևոր խնդիր կնկատեմ քուրդերու հետ ծանոթանալու և հարաբերություն հաստատելու միջոցները գտնելն և մտերմաբար ձեր մասնավոր ուշադրության ենթարկելով այս գաղափարս, կհարցնեմ թե արդյոք լավագույն և օգտակար չըլլար, եթե սուրբ հայրիկ զձեզ յուր կողմե անոնց մեջ ղրկե մի անգամ առաքելության և ձեր աշխատությամբ մի տեղեկագիր դուրս ելնե քրդաց վիճակագրության»,— գրում էր Գ. Նորատունկյանը (38, էջ 55—58)։

Արևմտահայ ամբողջ վերնախավը հիմնովին դեմ էր հեղափոխական շարժումներին։ «Այլ կերպ էր վարվում «ազգի երևելիների» մեծամասնությունը՝ Կ. Պոլսի էֆենդիները, կոմպրադոր վաճառականներն ու բանկիրները։ Ապատամբության, ըմբոստության ոգին օտար էր փափուկ կյանք վարող մարդկանց, որոնք շարունակում էին հավատարիմ մնալ աղերսագրերի, խնդրագրերի տակտիկային և դրա մեջ էին տեսնում փրկության ուղին։ Նրանք դեմ էին պայքարի բալկանյան մեթոդներին, սարսափում էին զինված ելույթներից և իրենց գործողություններով հայկական կյանքի սուր անկյունները բթացնելու, ամեն ինչ չափավորության հունով տանելու համար էին գործում» (77, էջ 53)։

Չնայած այս մտայնությանը, բուն երկրում բնակվող հայությունը խոսքից անցավ գործի։ Այսպես, 1872 թ. Վանում հիմնվեց «Միություն ի փրկություն» առաջին գաղտնի կազմա-

կերպությունը, որը որպես պայքարի միջոց ընտրեց զինված ապստամբությունը։

Այս բոլորն անշուշտ չէր կարող վրիպել սուլթանական կառավարության կասկածամիտ հայացքից։ Հայերի ըմբոստացման տրամադրություններին թուրքական իշխանությունները պատասխանեցին կամ ուղղակի հետապնդումներով, կամ քրդական վերնախավի կրքերը հայության դեմ էլ ավելի բորբոքելով։ 60-ական թվականների վերջից և 70-ական թվականների սկզբից «հակահայկականությունն ավելի ու ավելի որոշակիորեն դառնում էր պետական քաղաքականություն» (77, էջ 45)։ Այդ մտայնության ամենացայտուն արտահայտություններից մեկը Սեբաստիայի փոխկուսակալի հետևյալ հայտարարությունն է. «Բնիկները (հայերը։— Վ. Բ.) ուզեն կենան, չուզեն դժոխքին տակը երթան» (8, էջ 1115)։

1870 թվականից սկսած տեղի ունեցան հայ-քրդական մի շարք ընդհարումներ, որոնց պատճառները թեև առաջվա պես գլխավորապես սոցիալական էին, սակայն իրենց խորքում ունեին նաև քաղաքական նշանակություն և օսմանյան կառավարության հակահայ գրգռիչ քաղաքականության արդյունքն էին։

ԳԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 1877—1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԵՎ ՇԵՅԽ ՕՍԵՅԴՈՒԼԱՅԻ ՇԱՐԺՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

XIX դարի 70-ական թվականների սկզբին Օսմանյան կայսրությունում կրկին ծայր առավ սուր տնտեսական ճգնաժամ։ Թանզիմաթի մակերեսային բարեփոխումներն ի վիճակի չեղան հաղթահարելու Օսմանյան կայսրության կիսաավատական, իսկ առանձին տեղերում նաև ավատական կարգերը և ճանապարհ հարթելու երկրի արտադրողական ուժերի զարգացման համար։

Կառավարությունը շարունակում էր աչք փակել նահանգներում գործող նոր բյուրոկրատիայի հրեշավոր չարաշահումների և կամայականությունների նկատմամբ, հույս ունենալով այդ ճանապարհով միջոցներ հայթայթել դատարկ գանձարանի համար։

Տնտեսական փլուզումը իր հետ բերեց նաև քաղաքական ճգնաժամ։ Բալկաններում՝ Բոսնիայում, Հերցոգովինայում և Բուլղարիայում բռնկվեցին հուժկու ազգային-ազատագրական շարժումներ, որոնք միջազգային արձագանքներ ստացան, քանի որ շոշափում էին մեծ պետությունների շահերը։

Օսմանյան կայսրության համար առանձնապես սպառնալից էր Ռուսաստանի դիրքը, որն օգտագործելով 1870 թ. ֆրանս-պրուսական պատերազմի հետևանքով իր համար ստեղծված բարենպաստ միջազգային իրադրությունը, հայտարարեց, որ այսուհետև հրաժարվում է իրեն կաշկանդող 1856 թ. Փարիզի դաշնագրից և Սև ծովում վերականգնելու է իր ռազմական նավատորմը։

Թուրքիայում գոյություն ունեցող քաղաքական ճգնաժամն ի վերջո հանգեցրեց ներքին պայթյունի, որի հետևանքով

1876 թ. մայիսի 30-ին շեյխ-ուլ-իսլամի ֆիրմանով սուլթան Աբդուլ Ազիզը գահընկեց արվեց, արժանանալով օսմանյան դինաստիայի բազմաթիվ միապետների ճակատագրին՝ սպանվեց։

Թեև «նոր օսմանները» գահ բարձրացրին Մուրադ V-ին և տենդորեն փորձում էին բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով կայսրությունը դուրս բերել ճգնաժամից, սակայն իրադարձությունները զարգացան բացառիկ աննպաստ, դառնալով ուղղակի սպառնալից։ Թուրքիայի և սլավոնական ժողովուրդների միջև կոնֆլիկտը հասավ իր գագաթնակետին, իսկ Ռուսաստանը բարձրաձայն հայտարարում էր, որ ինքը չի կարող անտարբեր մնալ դավանակից և արյունակից սլավոն եղբայրների ճակատագրի նկատմամբ։

Ահա այս պայմաններում խելագար հայտարարված սուլթան Մուրադ V-ի փոխարեն գահ բարձրացավ նրա եղբայրը՝ Աբդուլ Համիդ II-ը, կայսրության ճնշված ժողովուրդների դահիճը։ 1876 թ. դեկտեմբերի 11-ին (23-ին) ազդարարված սահմանադրության հռչակած ազգերի իրավահավասարության մասին խոստումներն այդ սահմանադրության «հայր» հորջորջված Միդհատ փաշայի և նրա անգլիացի «ուսուցիչների» ենթադրությամբ ծառայելու էին որպես զրահ ռուսական սպառնալիքների ու հավակնությունների դեմ։

Այդ սահմանադրությունը կայսրության բոլոր ժողովուրդներին հայտարարում էր օսմանցիներ և հատուկ կետ ուներ այն մասին, որ երկրի տարածքում որևէ տեղ ապստամբության նշաններ դրսևորվելու դեպքում կառավարությունն իրավունք ունի ռազմական դրություն հայտարարելու։

Այսպիսով, Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի հույսերը հօդս ցնդեցին մեծապետական-շովինիզմի և շարիաթի հիմքի վրա կառուցված սահմանադրության հռչակմամբ։

Հայ գործիչներից շատերի կարծիքով սահմանադրությունը XIX դարի Թուրքիայի պայմաններում անբնական ու կեղծ մի օրենք էր, որն ի վիճակի չէր գործնականորեն իրագործվելու։ Այն եվրոպական դիվանագիտության դեմ սարքված մի խաղ էր, միևնույն ժամանակ մի ծուղակ երկրի այն տարրերի դեմ, որոնց միշտ խեթ հայացքով է նայել օսմանյան քաղաքականությունը։ Նրանք գտնում էին, որ մասնավորապես հայ ժո-

ղովուրդը պետք է զգուշանա նրա պարտադրող փայփայանքներից (35, էջ 78)։

Կարծես ի հաստատումն այս նախազգուշացումների, սահմանադրության պաշտոնական հրապարակման հետ գրեթե միաժամանակ 1876 թ. դեկտեմբերի սկզբներին մի ահռելի հրդեհ հրո ճարակ դարձրեց Վանի ամբողջ շուկան, ոչնչացնելով տեղի հայության տնտեսական դիրքն ու հարստությունը։ Ազգայնականության թույնով վարակված թուրքական նորահայտ բուրժուազիան գալիս էր հիշեցնելու իր գոյության մասին։ Նա իր այդ արարքով, և առհասարակ արևմտահայերի իր իսկ հրահրած հարստահարությունների ալիքով, նպատակ ուներ տնտեսական քայքայման ենթարկել հայ ժողովրդին և հաղթահարել նրա թեև տակավին երիտասարդ, բայց և առողջ, նյութական հիմքերի վրա կանգնած և գործունեության մեծագույն ավյունով լի բուրժուազիայի մրցակցությունը։

Այդ օրերին Մ. Խրիմյանը գրեց. «Թուրքաստանի վերանորոգող սահմանադրության տոնին անշուշտ մի զոհ պետք էր և այդ փառավոր զոհ դուն մատուցիր, ժողովուրդ հայոց» (35, էջ 82)։ Նա գրեց իր «Վանգոյժը»,[14] ավետելով, որ գույժը համակել է բովանդակ արևմտահայությանը։

Վանի հրդեհի հանցավորների անպատիժ մնալը անշուշտ քաջալերիչ էր Բիթլիսի, Մուշի, Մոտկանի և այլ վայրերի քրդական ցեղապետերի համար, որոնք նույնիսկ ձմեռվա պայմաններում սկսել էին իրենց թալանի գործը։ Թուրքական կառավարությունը դա համարում էր Վանի «օպերացիայի» եզրափակիչ էտապը։

Շուտով սահմանադրական Թուրքիայի գազանային հաշվեհարդարի հերթական զոհերը լինելու էին բալկանյան ժողովուրդները, մասնավորապես Բոսնիայի, Հերցոգովինայի և Բուլղարիայի «ապստամբ» հայտարարված բնակչությունը։

Ռուսաստանը որոշեց անհապաղ հանդես գալ իր «եղբայրսլավոններին» պաշտպանելու համար և 1877 թ. ապրիլի 4-ին պատերազմ հայտարարեց Թուրքիային։

Արևմտահայությունը լցվեց փրկության նոր հույսերով։ Ռուսական դիվանագիտությունը, որին քաջ հայտնի էին հայ ժողովրդի տրամադրությունները, աշխատում էր բորբոքել այդ հույսերը, հայությանը ներշնչելով, որ հասել է փրկության ժա-

մը և հզոր Ռուսաստանը կգա իրենց ազատելու ատելի օսմանյան լծից։

Արևմտյան Հայաստանում ռուսական այս քարոզչությունը ուժ էր ստանում նաև սահմանի այն կողմից, ռուսահայ հրատարակություններից։ Հայտնի է, որ դարերի ընթացքում թուրքական պետականությունը քրիստոնյա պետությունների, մասնավորապես Ռուսաստանի դեմ մղած իր բազում պատերազմների ժամանակ առիթն օգտագործում էր կայսրության քրիստոնյա տարրի դեմ անվստահություն ու կասկածամտություն սերմանելու, նրանց դավաճանության մեջ մեղադրելու համար։ Մասնավորապես արևմտահայությունը դիտվում էր որպես Ռուսաստանի դաշնակից և նրա հետ վարվում էին ինչպես թշնամիների։ Թուրքական բանակները Ռուսաստանի դեմ ռազմական գործողություններ վարելուն զուգընթաց ավերիչ ասպատակություններ էին անում Արևմտյան Հայաստանում, միաժամանակ կայսրության մահմեդական բնակչության շրջանում հայերի նկատմամբ հրահրելով կրոնական ու ցեղային ատելություն։

Սուլթանական կառավարությունը մեծ հույսեր էր կապում պատերազմում քրդերի մասնակցության հետ։ Պատերազմի նախօրյակին Բ. Դուռը արդեն բավական խոշոր հաջողություններ էր ձեռք բերել իր քրդական քաղաքականության բնագավառում։ Նստակյաց քուրդ բնակչության զգալի մասը կառավարությանը վճարում էր հարկեր, հատկացնում էր զինակոչիկներ և այլն։ Թեև կային դեռ ամբողջ շրջաններ, օրինակ, Հաքյարիի, Դերսիմի, Գենջի, Սղերդի, Մոսուլի և այլն, որտեղ «բնակչությունը համարյա չէր ճանաչում թուրքերի իշխանությունը և աստիճանավորները ամբողջ տարին չէին համարձակվում դուրս գալ իրենց նստավայրերից, որոնք պահպանվում էին ժանդարմերայի և զորքերի կողմից» (269, էջ 67)։

Պատերազմն սկսվելուն պես սուլթանական կառավարությունը հատուկ կոչով դիմեց քրդական ցեղային ավագանուն և կրոնական առաջնորդներին, հորդորելով նրանց դիմել ջիհադի՝ սրբազան պատերազմում իսլամը պաշտպանելու համար։ Բազմաթիվ քրդական առաջնորդներ ջոկատներ կազմելով շարժվեցին դեպի Ալաշկերտ-Բայազետի ճակատը՝ օսմանյան բանակին միանալու համար։ Սուլթանի կոչին արձագանքեցին նաև շեյխեր Օբեյդուլլան, Սերեդլի Համզան, Մուսուլ Մեհմեդը,

Խիզանի շեյխ Ջալալեդդինը, Եփրատի շրջանի շեյխ Նախշաբանդին, Սասունի շեյխ Դուդարին, Խալիֆե Ֆելմի էֆենդին, Խիրութալի Մեհմեդ աղան և ուրիշներ (150, էջ 326)։ Սրանք մեծ եռանդով սկսեցին ջոկատներ կազմել, որոնք արևմտահայության համար պատուհաս դարձան։ Կառավարությունն աշխատում էր ամեն կերպ հրահրել քրդական զանգվածների կրոնական մոլեռանդությունը և աշիրեթների կողոպուտի բնազդը, դրանք դիտելով որպես կարևոր գործոններ՝ պատերազմի շրջանում քրդերին իրենց կողմը պահելու և նրանց ռազմական ուժը օգտագործելու համար։ Լայնորեն կիրառվում էր նաև ցեղային առաջնորդներին կաշառելու և սպառնալու միջոցը։

Սակայն քուրդ վերնախավը՝ աշիրեթապետերը, շեյխերը, բեկերը և աղաները, արձագանքեց կառավարության կոչին առաջնորդվելով ոչ միայն և ոչ այնքան մահմեդական համերաշխության կամ ֆանատիկոսության զգացումներով, որքան նյութական շահեր հետապնդելով։ «Մահմեդական քուրդն իր պարտքն էր համարում կատարելու օսմանյան պետության կարգադրությունները թե՛ պատերազմի պայմաններում և թե՛ խաղաղ ժամանակ, քանի որ դրանց իրագործումն իրեն նաև լայն հնարավորություններ էր ընձեռում վերցնելու, հափշտակելու, թալանելու՝ ստանալու «իր բաժինը» (63, էջ 106)։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունները բռնի կերպով տեղահանում էին սահմանամերձ շրջանների հայ բնակչությանը դեպի Անատոլիայի խորքերը, որն ուղեկցվում էր տարագրվողների զանգվածային ոչնչացմամբ։ Սակայն մեծ պետությունների առջև մաքուր ձեռքերով երևալու համար կառավարությունը ջանում էր հայերի նկատմամբ հալածանքները քողարկել տեղական մահմեդական բնակչության կրոնական անհանդուրժողականության ու ֆանատիկոսության պատճառաբանություններով, այդ նպատակով օգտագործելով հատկապես քրդերին։ Օրինակ, թուրքական բանակի զորահրամանատար, մուշիր (մարշալ) Մուխտար փաշան, որը հայերի նկատմամբ գործադրվող վայրագությունների գլխավոր կազմակերպիչն էր, դրանց պատասխանատվությունը բարդում էր բացառապես քրդերի վրա, նպատակ ունենալով սրել հայ-քրդական հարաբերությունները և նպաստել երկու հարևան ժողովուրդների փոխադարձ ոչնչացմանը (124, էջ 145)։

Թուրքական հրամանատարությունը հատկապես աշխատում էր քրդական ջոկատներն ուղղել հայկական այն գյուղերի դեմ, որոնք խանդավառությամբ էին դիմավորել ռուսական դրոշը։ Մ. Դ. Ռոլեն-Ժեկմենը գրում է, որ «Մոսուլի, Տիգրանակերտի, Բիթլիսի և Վանի շրջաններից ռուսական զորքին ընդառաջ շարժվող քրդական անկանոն հրոսակախմբերը հրի ու սրի, կողոպուտի էին մատնում հայկական գյուղերը։ Դրա հետևանքով միայն Բայազետի և Ալաշկերտի գավառներում 30 հազար մարդ սպանվեց» (312, էջ 58)։ «Քրդական այդ հրոսակների գործողությունները անարդյունք լինելով մեր բանակի նկատմամբ,— գրում է պատերազմին մասնակից ռուս զինվորականներից մեկը,— միևնույն ժամանակ բուն Թուրքիայի սահմաններում նրանք միանգամայն արդյունավետ էին հայ բնակչության դեմ պայքարելու համար։ Այդ հրոսակները... իրենցից ներկայացնում էին ավազակների հսկայական խմբեր, որոնց համար առավել ձեռնտու գործողությունների օբյեկտ էր հանդիսանում հայ խաղաղ բնակչությունը» (245, էջ 2)։

Հայդերանցի քրդերի առաջնորդ շեյխ Ջալալեդդինը բովանդակ Վասպուրական նահանգի, Բասենի և Բագրևանդի գավառների և Մշո դաշտի մեջ հազարավոր անզեն հայեր կոտորեց և թալանեց նրանց գյուղերը։ Իր գազանային խժդժություններով աչքի ընկավ նաև քյոռ Հյուսեին փաշան։ Ընդ որում, նա կողոպտում և թալանում էր ոչ միայն հայ բնակչությանը, այլև ախոյան քրդական աշիրեթներին (շալալցիներ, զիբթանցիներ, թորթոփցիներ և այլն) (19, էջ 4)։

Ոչ բոլոր քրդերն էին, սակայն, որ արձագանքեցին «սրբազան պատերազմի» կոչին։ Մի շարք ցեղեր ոչ միայն հրաժարվեցին մասնակցել պատերազմին, այլև հարկեր մուծել, և հարձակումներ կազմակերպեցին թուրքական ռազմական և վարչական ատիճանավորների վրա։

Թուրքական գործող բանակի թիկունքում ապստամբեց նաև Դերսիմի ղզլբաշ բնակչությունը։ Դերսիմցիները հայտարարեցին, որ իրենք հրաժարվում են կառավարությանը հարկեր վճարել և զինակոչիկներ տրամադրել (48, էջ 91—93)։ Իշխանությունների համար այս ապստամբությունը ձեռք բերեց խիստ վտանգավոր բնույթ, մանավանդ որ շրջակա վայրերի հայ լեռնականները միացան ապստամբներին և դերսիմցիների

հետ համատեղ կատաղի մարտեր սկսեցին թուրքական զորքերի դեմ (16, էջ 221—222)։ Դերսիմի անմատչելի լեռների վրա ստեղծված այս զինակցությունը օսմանյան կառավարության համար դարձավ իսկական պատուհաս։ Այն ճնշելու համար չորրորդ բանակի հրամանատար Դերվիշ փաշան հարկադրեց Բաբերդի, Երզնկայի, Կամախի, Ակնի և Արաբկիրի հայ բնակչությանը ստորագրել մի հանրագիր, թե իբր դերսիմցիները հարստահարում են տեղական քրիստոնյա բնակչությանը և որ նրանց զսպելու համար հայերը պետք է աջակցեն կառավարական բանակին։

Կառավարության դեմ ըմբոստացած քրդերի հետ հայերի համագործակցության դեպքեր տեղի ունեցան նաև Վանի շրջանում։ Իրենց այդ ըմբոստ վարքագծի համար նրանք ենթարկվեցին դաժան հալածանքների, իսկ նրանց ղեկավար Ավոն թուրքական զինվորական իշխանությունների կողմից կախաղան բարձրացվեց (101, էջ 148)։

Գիտակցելով, որ հայկական տարրը օգտակար է իրենց որպես հողագործներ, արհեստավորներ ու վաճառականներ, մի շարք քրդական ցեղեր ոչ միայն չարձագանքեցին կառավարության կոչին հայերին հալածանքների ենթարկելու վերաբերյալ, այլև զենքով պաշտպանեցին նրանց ուրիշ ցեղերի հարձակումներից։ Այսպես, երբ Մոսուլի վիլայեթի քրդերը ռազմաճակատ մեկնելու ճանապարհին անցնելով Վանի նահանգով, փորձեցին կողոպտել ու ավերել հայկական բնակավայրերը, տեղի քրդական ցեղերը եռանդուն կերպով պաշտպանեցին իրենց հարևան հայերին (269, էջ 82)։ Նման դեպքեր տեղի ունեցան նաև Կարսի և Բայազետի փաշալիքներում և այլուր։ Սակայն նման օրինակները, ինչպես նաև հայ և քուրդ գյուղացիության տարբերային ելույթները լայն տարածում չգտան և այդ պատճառով կառավարությանը հեշտությամբ հաջողվեց ճնշել դրանք։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ քրդական ցեղապետերի հայ ժողովրդի նկատմամբ գործադրած բռնություններն ու նախճիրները 1853—1856 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակաշրջանի համեմատությամբ հեռուն գնացող հետևանքներ ունեցան։ Դրա պատճառն այն էր, որ 70-ական թվականներին հայ ժողովուրդն ապրում էր ազգի համախմբման պրոցես և նրա մոտ արդեն հասունացել էին ազգային զգացումները, ազատ ապրելու, մարդկային տարրական

իրավունքներից օգտվելու, ազգային արժանապատվությունը պահպանելու և օսմանյան լուծը թոթափելու բուռն ձգտումը։ «Բալկանյան ժողովուրդների հակաթուրքական ազգային-ազատագրական այդ բուռն պայքարի պայմաններում, նրա որոշակի ազդեցության տակ վերելք ապրեց հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը, խորացավ նրա ինքնաճանաչման, սոցիալ-քաղաքական իրավունքներ նվաճելու, պետականություն ստեղծելու պրոցեսը։ Արևելյան ճգնաժամը էլ ավելի խթանեց հայ ժողովրդի ազգային ինքնագիտակցությունը։ Թուրքական բռնակալության ծանր լուծը թոթափելու, սոցիալական, կրոնական վայրենի հետապնդումներից ազատվելու, ազգային միավորման նպատակով կատարվող ճիգերը թևակոխեցին մի նոր փուլ։ Հայրենիքի գաղափարն սկսում էր դառնալ համազգային, ընդգրկում ժողովրդի տարբեր դասակարգերին՝ աշխատավոր գյուղացիությանը, բուրժուազիայի տարբեր շերտերին, մտավորականությանը» (77, էջ 30—31)։

Արևելահայերը ևս սկսեցին դրսևորել աճող հետաքրքրություն Արևմտյան Հայաստանում ապրող իրենց եղբայրների նկատմամբ։ Սկսվեց շարժում դեպի «երկիր»։ Հայ մտավորականներից շատերը մեկնեցին Թուրքիա, որպեսզի մոտիկից շփվեն արևմտահայ հատվածի հետ։

Արևմտյան Հայաստանում հասունանում էր թուրքական բռնապետությանը զինված դիմադրություն ցույց տալու գաղափարը։ Բուն երկրում գնալով լայն թափ էր ստանում ժողովրդական վրիժառուների՝ հայդուկների շարժումը։ Ստեղծվում էին նաև գաղտնի կազմակերպություններ, որոնց նպատակը զինված պայքարն էր թուրքական բռնապետության դեմ։ Վասպուրականում, օրինակ, կազմակերպվեց «Սև խաչ» անունով գաղտնի կազմակերպություն, որն իր առջև խնդիր էր դնում «տարածել ինքնապաշտպանության ոգին, հայ մարդը տեր դարձնել իր իրավունքներուն, և իբրև մարդ ապրելու վարժությունը տալ» (101, էջ 51)։

Բնական է, որ այս պայմաններում քրդական ցեղապետերի խժդժություններ բոթը արևմտահայության կողմից ընկալվելու էր ոչ այնպես, ինչպես առաջ։ Այժմ դրանք ցնցելու էին ողջ հայությանը, դիպչելով նրա ազգային զգացումներին։ Ներսես Վարժապետյան պատրիարքը բողոքներ ներկայացրեց Բ. Դռանը, շեյխ-ուլ-իսլամին և անձամբ սուլթան Աբդուլ Համիդ II-ին,

պահանջելով զսպել արևմտահայության նկատմամբ բռնություններ գործադրող քուրդ ցեղապետերին և աշիրեթներին։

Մեծ վեզիր Միդհատ փաշան խոստացավ մի քանի հայաշատ գավառներում հայ կուսակալներ նշանակել, որպեսզի վերացվեն հայերի «երջանկության խոչընդոտները» (77, էջ 30—31)։ Իսկ սուլթանը, Ելտզ Քյոշկում ընդունելով հայոց պատրիարքին, ասաց. «Ես, որ մրջյունի մը վրա կոխել կը խղճամ, այսչափ արյունահեղություններ տեսնելուս հույժ կը ցավիմ. բայց աստված գիտե, որ այս պատերազմին համար ես չեմ պատասխանատուն»։ Այնուհետև նա պատրիարքին պարգևատրեց Օսմանիե առաջին աստիճանի շքանշանով և դրանով ծածկեց շեյխ Ջելալեդդինի ու մյուս չարդարարների զոհերի գերեզմանը (35, էջ 82—83)։

Մինչ Կոստանդնուպոլսի հայ երեսփոխանները և ազգային մյուս գործիչները որոշում կընդունեին շնորհակալության ուղերձ ներկայացնելու սուլթանին իր «հայասիրական» զգացումների համար, Մ. Խրիմյանը հայտարարեց. «Ոչխարներու ոսկորներեն մանյակ շինեցին և հովիվին վիզեն կախեցին», միաժամանակ ավելացնելով, որ «թեպետ և քյուրտ շեյխերն էին, որ իրենց ցեղը մղեցին արյան ու ավարի, բայց պետության նենգամիտ քաղաքականությունն էր, որ սարքեց ոճիրը։ Քյուրտը... համակերպեցավ պետական կարգախոսին, վասն զի իր ցեղային բնազդները պիտի գոհացում գտնեին այդ կերպով» (35, էջ 84)։

Սուլթանական կառավարության համար հայ ժողովրդի ազգային զգացումների վերելքը և մանավանդ ռուսասիրական ձգտումների ուժեղացումը ընդունեց սպառնալից բնույթ նաև այն պատճառով, որ Բալկաններում ազգային-ազատագրական բուռն շարժումների հետևանքով կայսրության կազմում եվրոպական Թուրքիայի մնալու հարցը դրվում էր մեծ հարցականի տակ։ Դա ստիպում էր կառավարությանը իր ապագան փնտրել Փոքր Ասիայում։

Առհասարակ սուլթան Աբդուլ Համիդ II-ի քաղաքականության անկյունաքարը կարելի է համարել Օսմանյան կայսրության ատիկան տիրապետությունների պահպանումը։ Համոզվելով, որ վաղ թե ուշ իրենք կորցնելու են Բալկանները, թուրքական կառավարող շրջանները գիտակցում էին, որ իրենց վերջին ապաստանը լինելու է Ասիան և այդ պատճառով «իրենց

ասիական տիրույթների պաշտպանության համար նրանք չէին խնայում ոչ դրամ և ոչ այլ միջոցներ» (268, էջ VI)։

Արդուլ Համիդը հասկանում էր, որ ասիական Թուրքիայում քաղաքականապես առավել հասունացած ժողովուրդը հայերն են, որոնք արդեն ազգային-ազատագրական շարժումը ղեկավարելու ընդունակ բուրժուազիա ունեն։ Արևմտյան Հայաստան այցելած Ֆր. Գրինը նշում էր, որ հայերը «սիրում են իրենց հայրենիքը և կոչված են աշքի ընկնող դեր խաղալու Արևմտյան Ասիայի բարոյական և նյութական վերածնության գործում» (305, էջ 312)։ Առհասարակ հայ բուրժուազիայի աճը և նրա տնտեսական դիրքերի ամրապնդումը Թուրքական կառավարության համար չափազանց անցանկալի էր։ «Եվրոպայի և Պարսկաստանի հետ ողջ ընդարձակ առևտուրը և Քրդստանի (իմա՝ Արևմտյան Հայաստանի։— Վ. Բ.) համարյա ողջ ներքին առևտուրը և արդյունաբերությունը վաղուց ի վեր գտնվում են քաղաքաբնակ հայերի ձեռքում,— հայտնում է Ա. Մ. Կոլյուբակինը։— Այդ բնագավառում նրանք մրցակիցներ չունեն... Սակայն հարուստ հայերը չէին բավարարվում առևտրով և արդյունաբերությամբ, այլ մշտապես ձգտում էին ձեռք բերել խոշոր հողային սեփականություն, իրենց ձեռքը վերցնել երկրի տնտեսության մնացած, էլ ավելի կարևոր բնագավառները՝ հողագործությունն ու անասնապահությունը։ Այդ ճանապարհին նրանք անմիջականորեն բախվում էին մահմեդական բնակչության ամենակենսական շահերի հետ, այդ իսկ պատճառով բնական է, որ հանդիպում էին որոշ հակահարվածի վերջինիս, իսկ երբեմն նաև վարչության կողմից» (269, էջ 115)։

Թուրքերի համար չէր կարող գաղտնիք լինել նաև այն հանգամանքը, որ հայ բուրժուազիան հույսեր է փայփայում, որ ժամանակի ընթացքում, զարգացման բնականոն ճանապարհով, կամ մեծ պետությունների օգնությամբ, իրեն կհաջողվի տիրանալ Արևմտյան Հայաստանի առևտրի շուկային (257, էջ 157)։

Ամենաարտառոցն այն էր, որ այսպիսի զարգացած բուրժուազիա ունեցող ժողովուրդը միաժամանակ երկրի արևելքում առավել կեղեքված և սոցիալական ու ազգային ճնշման ենթակա տարրն էր։ Հետևաբար առաջին հերթին ասիական տիրապետություններին հենց այս ժողովրդից էլ պետք էր վտանգ սպասվեր։ Թեև կառավարությունը փորձում էր Արևմտյան Հա-

յաստանում ամեն գնով պահպանել ու հավերժացնել ավատական հարաբերությունները և կասեցնել հայկական բուրժուազիայի զարգացումը, սակայն կյանքը ցույց տվեց, որ այդ քաղաքականությունն ի վիճակի չի ցանկալի արդյունքներ տալու։ Սուլթանական կառավարությանը մեծապես անհանգստացնում էր նաև այն, որ չնայած իր գործադրած եռանդուն ջանքերին (հայ բնակչության տեղահանությունները մի նահանգից մյուսը, նրան ձուլելու ու թուրքացնելու ձգտումները, հայերի ազգային ոգու ոչնչացման փորձերը, միատարր մահմեդական բնակչություն ստեղծելու քայլերը և այլն) հայկական նահանգները շարունակում էին պահել իրենց ազգային դեմքը (217, էջ 52)։

Այս հանգամանքներում թուրքական կառավարող վերնախավի կարծիքով քրդերը այն ուժն էին, որոնք կարող էին օգնել կառավարությանը Արևմտյան Հայաստանը կայսրության կազմում պահելու համար։ Հետևաբար, այսուհետև հայ և քուրդ ժողովուրդների միջև թշնամանքի բորբոքումը դարձավ թուրքական պետականության ասիական քաղաքականության հիմնաքարը։ Դրանով թուրքերը հույս ունեին նաև կանխել քուրդ ժողովրդի կողմից գալիք վտանգները։

Ելնելով այս նպատակներից, թուրքական պրոպագանդան աշխատում էր համոզել քրդերին, որ հայերը նրանց թշնամիներն են, որովհետև ցանկանում են եվրոպական պետությունների օգնությամբ ինքնուրույն պետություն ստեղծել, Քրդստանը դարձնել Հայաստան և քրդերին իրենց ենթարկել, որ «երեկվա ռայան ցանկանում է երկրի տերը դառնալ և ազատ քրդերին ռայա դարձնել» և այլն (109, էջ 191։ 136, էջ 84)։ Թուրքերն աշխատում էին քրդերին ներշնչել նաև, որ եթե Ռուսաստանը տիրի հայկական գավառներին «քրիստոնյա հայությունն է, որ առաջնություն պիտի ստանար» (128, էջ 137—138)։ Երկու հարևան ժողովուրդների միջև անհաշտ ատելություն և հակամարտություններ բորբոքելու գործուն ձևերից էր նաև հողային հարցի սրումը, որը գնալով ընդունում էր քաղաքական բնույթ, ինչպես նաև կրոնական հակասությունների բորբոքումը։ «Կրոնական երկպառակություններին ուժ տալը,— գրում էր Բաֆֆին,— և նրանց միջոցով... զանազան ցեղերի մեջ անմիաբանություն և անհաշտություն պահպանելը՝ դա մի ժառանգական քաղաքագիտություն է, որ սեփականել է իրան մոնգոլական Թուրքիան Բյուզանդիայի գահի հետ» (139, էջ 20)։

Սուլթանական կառավարությունը և մահմեդական հոգևորականությունը սուլթան-խալիֆի և շեյխ-ուլ-իսլամի գլխավորությամբ առաջնակարգ կարևորություն էին տալիս քրդական ցանգվածների շրջանում կրոնի դերի ուժեղացմանը, որովհետև մահմեդական կրոնի նշանակության թուլացումը կարող էր հանգեցնել կառավարության և քրդերի միջև կապերի թուլացմանը։

Պանիսլամիզմի գաղափարախոսությունն իրենց զենքը դարձրած սուլթանական կառավարող շրջանները մահմեդականների կրոնական զգացումները շահագործելուց և նրանց հայերի դեմ բորբոքելուց բացի, ավելի ուժգին սկսեցին խրախուսել քրդական այն շեյխերին և ցեղային առաջնորդներին, որոնք արևմտահայության ազգային իղձերը դիտում էին որպես իրենց անձնական շահերին սպառնացող վտանգ։

Ստամբուլում մշակված այս քաղաքականության հետևանքով ողջ Արևմտյան Հայաստանում սկսվեցին հայերի ջարդեր, որոնք իրականացվում էին ինչպես կառավարական զորքերի, այնպես էլ քրդական ցեղապետերի զինված ջոկատների կողմից։ Ալաշկերտի, Բայազետի, Վասպուրականի շրջաններում, Մուշում, Էրզրումում և հոծ բնակչություն ունեցող այլ շրջաններում տեղի ունեցած հայկական ջարդերի հետ միաժամանակ շարունակվում էր նաև հայերի տեղահանության քաղաքականությունը, իսկ դատարկված շրջանները բնակեցվում էին քրդական ցեղերով։

Բայազետի և Ալաշկերտի մնացած հայությունը ստիպված էր դաղթել Իրան՝ մասնավորապես Մակուի խանություն։

Արևմտյան Հայաստանում ջարդերի ալիքը ընդունել էր այնպիսի լայն թափ, որ 1877 թ. մարտի 19-ին օսմանյան խորհրդարանի բացման արարողության ժամանակ քրիստոնյա պատգամավորներն իրենց ելույթներում խոսում էին ջարդերին թուրքական նահանգական պաշտոնյաների մեղսակցության մասին (108, 1887 թ., էջ 1885)։

Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները ջախջախելու գործը հեշտացնելու նպատակով սուլթան Աբդուլ Համիդը 1878 թ. փետրվարի 26-ին ցրեց պառլամենտը և արգելեց սահմանադրությունը, հայտարարելով. «Ես սխալած եմ իմ հօրս՝ Ապտիլ Մէճիտի նմանիլ ուզելով, որ կը ցանկար բարեկարգել՝ համո-

զելով և ազատական հաստատություններ մտցնելով։ Ուստի ես պիտի հետևիմ իմ պապի՝ սուլթան Մահմուտի օրինակին։ Ես ալ անոր նման կը տեսնեմ, որ աստուծոյ ինձ յանձնած ժողովուրդները միայն բիրտ ոյժի միջոցով կարելի է քալեցնել» (47, էջ 110)։

Միդհատյան սահմանադրության արգելումից հետո անմիջապես վերացվեցին նաև կառավարության հայերին տրված աննշան «իրավունքները»։ Արդարև, հայ ժողովուրդը հայտնըվեց անդունդ գահավիժող մարդու վիճակում։

Սակայն պատերազմում Ռուսաստանի հաղթանակը և 1878 թ. մարտի 3-ին ստորագրված Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածը նոր հույսեր արթնացրեց արևմտահայության մեջ։ Ռուսական դիվանագիտության ճնշման ներքո ընդունված այդ հոդվածում ասվում էր. «Նկատի առնելով այն, որ ռուսական զորքերի դուրս բերումը նրանց կողմից գրաված Հայաստանի՝ Թուրքիային վերադարձվելիք վայրերից կարող է այնտեղ առիթ տալ բախումների և բարդությունների, որոնք երկու պետությունների բարի հարաբերությունների վրա կունենան վնասակար ազդեցություն, Բարձր Դուռը պարտավորվում է անհապաղ կենսագործել հայաբնակ մարզերի տեղական կարիքներից հարուցվող բարելավումներ և բարենորոգումներ և զերծ պահել հայերի անվտանգությունը քրդերից և չերքեզներից» (87, էջ 92)։

Չնայած իր վրա վերցրած պայմանագրային այս պարտավորություններին, սուլթանական կառավարությունը ոչ միայն ոչինչ չարեց կանխելու հայերի նկատմամբ հարստահարությունները ու բռնությունները, այլև ավելի ուժգին սկսեց հրահրել դրանք։ Ավելին, հայկական հարցի վերաբերյալ 16-րդ հոդվածը էլ ավելի ուժեղացրեց օսմանյան կառավարող շրջանների կարծիքն այն մասին, որ այդ հարցը թաղելու և հայ ժողովրդի ազատագրական հույսերը վերջնականապես խորտակելու համար անհրաժեշտ է վճռականորեն շեշտը դնել կայսրության քուրդ տարրի կողմից հայերին հակակշիռ ուժ ստեղծելու քաղաքականության վրա։

Սակայն քողարկելով իրենց գաղտնի մտադրությունները, սուլթանը և Բ. Դուռը համոզում էին Ներսես պատրիարքին դիմել Եվրոպա և բողոքել ոչ թե օսմանյան կառավարության, այլ քրդերի դեմ (77, էջ 151)։

Միանգամայն պարզ էր, որ այս դեպքում հայկական հարցի կապակցությամբ կառավարությունը որոշակիորեն իր ուսերից կգցեր պատասխանատվությունը Եվրոպայի առջև, իսկ մյուս կողմից ավելի կխորացներ հայ-քրդական հակամարտությունը։

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ժողովուրդը իր ծանր կացության բարվոքման և ազատագրության հույսը կապել էր գլխավորապես Ռուսաստանի հետ, թուրքական կառավարությունն աշխատում էր ի չիք դարձնել այն Մեծ Բրիտանիայի օգնությամբ, որի շահերը այդ հարցում կատարելապես համընկնում էին Բ. Դռան շահերի հետ։

1878 թ. մայիսի 18-ին ստորագրվեց թուրք-անգլիական պայմանագիր, որտեղ Անգլիան խոստանում էր Բեռլինի առաջիկա կոնգրեսում հօգուտ Թուրքիայի վերանայել Սան Ստեֆանոյի պայմանագրի կետերը, ինչպես նաև պարտավորություն էր վերցնում օգնել Օսմանյան կայսրությանը նրա ասիական տիրապետությունների անձեռնմխելիությունը պահպանելու գործում։ Փոխարենը Լոնդոնը իրավունք էր ստանում «ժամանակավոր օգտագործման համար» օկուպացնել Կիպրոսը։

Այսպիսով, Անգլիան, սուլթանի ենթադրությամբ, քրդերի հետ միասին պետք է դառնար պատնեշ արևմտահայության ազատագրական ձգտումների դեմ։ Նշելով, որ Կիպրոսը հայերի արյան գինն է, Գր. Արծրունին գրում էր. «Երևում է, որ թե՛ Թուրքիայի և թե՛ Անգլիայի համար հայերը և Հայաստանը աչքի փուշ են դարձել։ Նրանց գաղտնի դաշնագրությունը նրա մեջն էր կայանում, որ հայերին ոչնչացնեին Հայաստանի մեջ, աքսորեին հայերին Հայաստանից» (112, 1879 թ., № 6)։

1878 թ. Բեռլինի վեհաժողովը էլ ավելի բարդացրեց «հայկական հարցը»։ Օգտվելով արևմտահայության քսանամյա բողոքներից, սուլթանական կառավարությունը մի ճարպիկ քայլով Արևմտյան Հայաստանի գավառների հարստահարությունների ու բռնությունների պատասխանատվությունը բարդեց քրդերի ու չերքեզների վրա, որի հետևանքով հայկական հարցին վերաբերող 61-րդ հոդվածը եվրոպական դիվանագետների կողմից խմբագրվեց այդ իմաստով։

Ստացվում էր այնպես, որ 61-րդ հոդվածի համաձայն Թուրքիան ոչ թե իր վրա էր վերցնում հայկական հարցի պատասխանատվությունը, այլ ըստ էության դառնում էր երրորդ

կողմ, որը եվրոպական տերությունների առջև «երաշխավորում» էր հայերի ապահովությունը ոչ թե իր իսկ գործադրած բռնություններից ու հալածանքներից, այլ քրդերից։ Բ. Դուրը այսպիսով զերծ էր մնում ամեն տեսակ մեղադրանքներից։

Դժվար չէ կռահել, որ 61-րդ հոդվածը, որի հետ արևմտահայությունը զուր հույսեր էր կապում, գալիս էր էլ ավելի սրելու և թշնամական անհաշտ բնույթ հաղորդելու հայ-քրդական հարաբերություններին։ Դրանում պարզ երևում էր բրիտանական դիվանագիտության մասնակցությունը։

Հակոբ Շահպազյանը այդ առթիվ գրում էր, որ 61-րդ հոդվածը «...նկատվեցավ ի նպաստ հայերու՝ բայց Եվրոպայի դիվանագիտական մեկ խաղն էր դա, ռուսո-թուրք պատերազմեն հետո Թուրքիայի բաղդը իրենց ձեռքի մեջ առնելու համար՝ ազգ ազգի դեմ հանելով։ Այս հոդվածեն հետո՝ արծարծվեցան մոխրի տակ թաղված կրոնական, ազգային, տնտեսական և քաղաքական կայծերը, հրդեհելու համար ամբողջ Թուրքիան, որու մեկ ավերակն ալ եղան հայկական կոտորածները։ Եվրոպան ասով՝ քուրդն ու չերքեսը հանեց քաղաքական ասպարեզը» (116, էջ 156)։

Բեռլինի վեհաժողովից հետո սուլթանի քրդական քաղաքականությունն ավելի որոշակի դարձավ։ Քրդական առաջնորդներին ցույց տալու համար, որ իր համակրանքը նրանց կողմն է, և որ կառավարությունը հայերի նկատմամբ նրանց տալիս է գործողությունների ազատություն, սուլթանը պաշտոնապես վերացրեց Հայաստան բառը, այն փոխարինելով Քուրդիստանով։ Կոստանդնուպոլսի Ներսես պատրիարքին Աբդուլ Համիդի անունից պահանջ ուղարկվեց, որ պաշտոնական գրագրության մեջ այլևս չգործածվի Հայաստան բառը, քանի որ այդպիսի անունով երկիր գոյություն չունի (110, 1880 թ. № 84)։

Աբդուլ Համիդի օրինակին անմիջապես հետևեցին անգլիացիները։ «Լավ հայտնի է,— գրում է Ն. Ադոնցը,— որ հայերը միշտ հակված էին դեպի Ռուսաստանը և հույսը դրել էին նրա օգնության վրա թուրքերի լծից ու բռնակալական իշխանությունից ազատագրվելու հարցում։ Հայերի շրջանում նման ռուսասիրական միտումը, որն աճում և զարգանում էր դարերի ընթացքում, Անգլիային թվում էր անհամատեղելի Ասիայում նրա շահերի հետ։ Քանի որ Անգլիան եկավ այն հետևության, որ հայերի ռուսական կողմնորոշումը անշրջելի է ու վերջնա-

կան, նա իր համակրանքն ու օգնությունը տրամադրեց քրդերին, նրանց հակադրելով հայերին, հանձինս որոնց նա տեսնում էր Ռուսաստանի դաշնակիցների ու համախոհների նրա դեպի Անդրկովկաս առաջխաղացման մեջ։ Քրդստանի վերածման դաղափարը քաղաքական մարմնի՝ Ռուսաստանի դեմ արգելափակոց ստեղծելու նպատակով, պատկանում է հյուպատոս Պալդրեյլին» (217, էջ 62)։

Բրիտանական կառավարության գլուխ կանգնած պահպանողական կուսակցությունը, որդեգրելով բացահայտ թուրքապաշտպան քաղաքականություն նաև ի հեճուկս Ռուսաստանի, որի համար Փոքր Ասիայում հայերը հանդիսանում էին քաղաքական հենարան, նույնպես իր պաշտոնական գրագրության մեջ և քարտեզներում ջնջեց Հայաստան բառը և այն փոխարինեց Քրդստանով (67, էջ 34)։ Անգլիացիները Էրզրումում իրենց հյուպատոսին սկսեցին անվանել «Քրդստանի հյուպատոս»։ Նրանք սկսեցին ի լուր աշխարհի հայտարարել, որ «չկա Հայաստան, այլ կա Քուրդիստան։ Այն երկիրը, որ դուք անվանում եք իբրև հայաբնակ, նա Քուրդիստան է, ազգաբնակության մեծամասնությունը քուրդ» (112, 1878 թ. № 189)։

Այդ առիթով ռուսական «Գոլոս» թերթը գրում էր. «Հայերի և Հայաստանի մասին Անգլիայում տարօրինակ կարծիք է կազմվել։ ...Որ Հայաստանը ոչ թե երկիր է, այլ աշխարհագրական տերմին, որը չունի ոչ բնական սահմաններ, ոչ ցեղային մեծամասնություն...» (112, 1878 թ., № 110)։ Հայերը զարմացած էին, տեսնելով, որ Հայաստանի նկատմամբ թուրքական մոտեցումը հավանության է արժանանում անգլիացիների կողմից։ Նրանք ստիպված էին իրենց պատրիարքի միջոցով բարձրաձայն բողոք հայտնել աշխարհակալ պետության կողմից նման թեթևամիտ քայլի դեմ, որը չի կարող ոչ մի համակրանք ունենալ փոքր ժողովուրդների և ճնշված երկրների ճակատագրի վերաբերյալ թուրքական տեսակետի նկատմամբ։

Ռուսաստանը ևս, ընդօրինակելով իր ախոյանին, ինքն էլ սկսեց իրագործել քրդասիրական քաղաքականություն։ Ռուսական որոշ քաղաքագետներ, ըստ երևույթին հույս ունեին այդ ճանապարհով Անգլիային զրկել քրդերի աջակցությունից։ Խրախուսվելով եվրոպական այս մեծազոր պետությունների որդեգրած վերոհիշյալ դիրքորոշումից, սուլթանը և նրա կա-

ռավարությունը հայ ժողովրդի դեմ ծավալեցին բազմաճակատ մի գրոհ։ Օսմանյան կառավարող շրջանների քաղաքականության այս գիծը մեծ վեզիր Քյամիլ փաշան ձևակերպում էր հետևյալ կերպ. «Հիմա, այսօր գոնե, Անգլիո շահերն կը պահանջեն, որ Փոքր Ասիոյ մեջ մենք և Անգլիա Հայաստան բառը ոչ միայն չենք ճանչեր, այլ այդ անունը հնչող կզակները պետք է չախչախենք, մեր ունեցած երկիրները ազատ մնան օտարին միջամտութենեն և միջամտության ամեն առիթներեն, ուստի այդ սուրբ նպատակին համար պետք է և պետական իրավունքը կպահանջե, որ որևիցե կասկածելի տարր անհետ ընենք, որպեսզի ապագայն ապահովենք. ուրեմն այդ գլուխ հանելու համար բան չի պակասիլ մեզ, ամեն գործիք պատրաստ ունինք՝ քուրդ, չերքեզ, կուսակալ, դատավոր, հարկահան, ուտիկան, վերջապես ամենայն ինչ. կրոնական պատերազմ մը կը հայտարարենք և դյուրին պատերազմ այնպիսի ազգի մը դեմ, որ ոչ զենք ունի, ոչ զինավորություն և ոչ պաշտպան. երբ ընդհակառակն, մենք զենք էլ ունինք, զինվորություն էլ, աշխարհիս ամենամեծ տերության մեկը և ամենեն հարուստը մեզ զինակից է և մեր Ասիական աշխարքին երաշխավոր։ Եվ եթե այդ հայ ազգը բնաջինջ լինի և քրիստոնյա Եվրոպա կրոնակից մը փնտրե և չի գտնե Տաճկական Ասիոյ մեջ, կը թողու զմեզ հանգիստ և այն ատեն կը զբաղինք ներքին գործերով և բարեկարգությամբ» (143, 1879 թ., № 6—8, էջ 204—205)։

Այս հրեշավոր ծրագրի իրականացման առաջին էտապում Արևմտյան Հայաստանում ամենուրեք ծայր առան քուրդ բեկերի ու աղաների կողմից հալածանքներ, սպանություններ, կողոպուտներ և այլն։ Պատերազմի ժամանակ կառավարությունը քրդերին բաժանել էր 20 000 կատարելագործված մարտինի տիպի հրացաններ, որոնք պատերազմից հետո հետ չվերցվեցին նրանցից (393), որպեսզի այդ զենքը օգտագործվի հայ բնակչության դեմ։

Մինչդեռ, երբ մի խումբ հայեր ներկայացան Վանի կուսակալին և խնդրեցին, որ իրենց 50 հրացան տա, որպեսզի պաշտպանվեն Արճեշի և Արծկեի շրջակայքում գործող քուրդ ավազակապետից, վալին հեգնանքով պատասխանեց. «Զարմանք, որ քանի մ'ալ թնդանոթ չեք ուզեր» (85, 1889 թ., օգոստոս, էջ 6)։

Քրդական ավազակախմբերը Արևմտյան Հայաստանում գնալով շատանում էին։ Դրանց ահից Արևմտյան Հայաստանի տնտեսական կյանքը, հատկապես առևտուրն ու երկրագործությունը, լրիվ անդամալուծվել էր։

Այդ առթիվ Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» հանդեսը գրում էր. «Զափազանցություն չէ ասել, որ բոլոր կողմանս պաշարման վիճակի մեջ է։ Կտրված են ամեն հաղորդակցություն ընդ մեջ Բաղեշի, Մշոյ և Խլաթայ» (85, 1889 թ., օգոստոս, էջ 6)։

1878 թ. դեկտեմբերի 21-ին անգլիացի հյուպատոս կապիտան Տրոտտերը Էրզրումից գրում էր, որ ամբողջ շրջանում այժմ քրիստոնյաների վիճակը «ավելի վատ է, քան երբևիցե վերջին տարիների ընթացքում» (392, էջ 8)։

Անգլիական պաշտոնական հրատարակություն «Կապույտ գրքերը» չնայած իրենց թուրքապաշտպան գծին, լի էին հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների փաստերով։ Այդ հրատարակությունները բազմաթիվ փաստեր էին պարունակում նախ թուրքական իշխանությունների բացահայտ թողտվության ու մեղսակցության մասին։ Նշվում էր, օրինակ, որ թուրք աստիճանավորները, դատավորները, ոստիկանությունը և այլն «փոխանակ խանգարելու քրդերին, որպեսզի նրանք չհարստահարեն ժողովրդին, հաճախ իրենք ևս դառնում էին այդ բոլորի մասնակից» (392, էջ 57)։

Արդեն շատերի համար էր պարզ դարձել, որ կառավարության կողմից արևմտահայության նկատմամբ գործադրվող բռնությունների ու հալածանքների նպատակն է նրա մոտ խեղդել ազգային վերածննդի վերելք ապրող զգացումները և նրանց բացահայտ համակրանքը Ռուսաստանի նկատմամբ։

«1877—1878 թթ. պատերազմից հետո,— գրում է Վ. Ա. Գորդլևսկին,— Թուրքիայում հայերի վիճակի մեջ նկատվեց կտրուկ շրջադարձ. նրանց մոտ ուժեղացավ ազգային ինքնագիտակցությունը։ Զգալով ճնշել ազգային շարժումը հայերի շրջանում, թուրքական իշխանությունները սկսեցին ավելի ուժգին կերպով քրդերին գրգռել հայերի դեմ, և ահա ժամանակ առ ժամանակ տեղի էր ունենում վայրենի ջարդ. Բ. Դուռը խրախուսում էր կոտորածներն ու ջարդերը, դրանք համարելով

անվրեպ միջոց իրեն ատելի քրիստոնյա տարրի թուլացման համար» (243, էջ 127)։

Անդրադառնալով այդ նույն հարցին ռուս զինվորական Ա. Մ. Կոլյուբակինը գրում էր. «Շատերը Կ. Պոլսում անհրաժեշտ էին համարում հայերի շարժումը ճնշել ամենավճռական ձևերով։ Մյուս կողմից մահմեդական բնակչությունը ևս, ինչպես թուրքերը, այնպես էլ քրդերը, որոնք հրահրվում էին ֆանատիկոս հոգևորականության և զանազան մութ տարրերի կողմից... ծայրահեղորեն գրգռվում էր հայերի դեմ։ Վերջիններիս վերագրվում էին տարբեր, միանգամայն անհավատալի մտադրություններ՝ մահմեդականների գլխովին ջարդ կամ նրանց քրիստոնեացում, կանանց առևանգում և այլն» (269, էջ 122)։

Հայ ժողովրդի արթնացող ինքնագիտակցության և ազգային վերածննդի գաղափարները խեղդելու համար ջարդերի քաղաքականությանը դիմելուց բացի սուլթանական կառավարությունը արգելեց կամ ցրեց հայկական նորաստեղծ զանազան ընկերությունները, ձերբակալեց և աքսորեց նրանց ղեկավարներին, իր հսկողությունը սահմանեց հայկական դպրոցների, հրատարակությունների և առհասարակ արևմտահայության ներքին կյանքի վրա։

Արևմտյան Հայաստանում օրենք հասկացությունը, որ առաջ ևս բացակայում էր, ամբողջապես փոխարինվեց քմահաճ կամքով (իդարեի քեյֆիե)։ Հայերը դուրս մնացին օրենքի հովանավորությունից։ Նրանք հայտարարվեցին պետության թշնամիներ և դավաճաններ։ Արդեն 70-ական թվականների վերջերին թուրքական բանտերը լեփ-լեցուն էին հայերով։ Հազարավոր հայեր աքսորվեցին Արաբիայի և Լիբիայի անապատները, որտեղից ոչ ոք ընդհանրապես հետ չէր վերադառնում։ Իր սև գործն էր կատարում նաև թուրք խուժանը, կողոպտելով ու հրկիզելով հայերի տները, խանութները, շուկաները, որոնք սովորաբար ուղեկցվում էին ահավոր ջարդերով։ Ընդ որում, ինչպես միշտ, խուժանը և կառավարությունը գործում էին համատեղ, իշխանությունները իրենք էին հրահրում քաղաքային ամբոխի ու տականքների գազանային կրքերը և արյունարբու բնազդները։ Միաժամանակ շարունակելով իր նախորդների գիծը, թուրքական կառավարությունը վերջնականապես ջարդը դարձրեց իր քաղաքական սիստեմի բաղկացուցիչ մասը։

Այս պայմաններում սուլթանը մատների արանքով էր նա-

յում առանձին վայրերում բռնկող քրդական հակակառավարական ելույթներին, դրանք համարելով լեռներում ազատ ապրող այդ ժողովրդի չարաճճիություններ։ Երբ Թուրք զինվորները զինված բախումներ էին ունենում ապստամբ քրդերի հետ և սպանում էին նրանց, վալիները հանդիմանում էին իրենց հրամանատարներին, թե «ինչպես հանդգնեցար այդչափ քուրդ դյուցազուններ սպանել» (85, 1889 թ., օգոստոս, էջ 6)։

Արդեն ասվեց, որ Բեռլինի կոնգրեսում առաջ քաշվեց Արևմտյան Հայաստանում վարչական բարենորոգումներ իրականացնելու հարցը։ Սակայն ցույց տալու համար, որ Արևմտյան Հայաստանի տարածքում ոչ մի տեղ հայերը մեծամասնություն չեն կազմում, և այդ փաստարկումներով «միայն» հայերի համար բարենորոգումների անհրաժեշտությունը հերքելու նպատակով 1877—1878 թթ. պատերազմից հետո սուլթանը երկրի կառուցվածքը ենթարկեց էական փոփոխության, «որի նպատակն էր նահանգներում քրիստոնյաներին և մահմեդականներին տեղաբաշխել մի այնպիսի ձևով, որպեսզի առաջինները ոչ մի տեղ չկազմեն մեծամասնություն» (269, էջ 63)։

Արևմտահայությունը շուտ և հեշտությամբ չըմբռնեց սուլթանական կառավարության քաղաքականության այդ խարդախ բայլի իմաստը։ Նա դեռ շարունակում էր իր նախկին քաղաքականությունը՝ կառավարությանը բողոքում էր քրդական ավազակների, աղաների ու բեյերի բռնությունների դեմ կամ աշխատում դրա վրա հրավիրել եվրոպական տերությունների ուշադրությունը։ Շատերն էլ հույս էին կապում «նոր օսմանների» և նրանց սահմանադրական ծրագրերի հետ, ենթադրելով, որ դրանք վերջ կտան կառավարության որդեգրած հայահալած քաղաքականությանը։ Թեև կային նաև ողջախոհ մարդիկ, որոնք, միդհատյան սահմանադրությունը խաբեություն անվանելով, կանխատեսում էին, որ «այն օրը, երբ երիտասարդ Թուրքերը տեր դառնան կայսրության և իրենց օրով ծագի ընդհանուր պատերազմ, անոնց առաջին գործը պիտի լինի տաճկահայությունը բնաջնջել՝ միատարր Թրքություն հաստատելու համար, որպեսզի Ռուսիա բալկաններու օրթոդոքս կամ սլավ ժողովուրդներու ազատագրության գործը ի գլուխ հանելե վերջ՝ Կովկասի հայության սահմանակից և կրոնակից Թրքահայությունը նաև ազատագրելու պատրվակներ չստեղծե՝ ասիական Տաճկաստանն ևս անդամահատելու միտումով» (47, էջ 105)։

* * *

Սոսկալի երաշտի հետևանքով 1879—1880 թթ. ձմռանը Արևմտյան Հայաստանի և Քրդստանի ողջ բնակչությունը մատնվեց քաղցի։ Այս աղետին ավելացավ նաև համաճարակը, որը խլեց տասնյակ հազարավոր կյանքեր։

Հայ ժողովրդի արևելյան հատվածը եղբայրական օգնության ձեռք մեկնեց արևմտահայությանը, նրան հատկացնելով դրամ, սննդամթերք, հագուստ և այլն։ Հայաստանի երկու հատվածներում ստեղծվեցին «սովելոց հանձնաժողովներ», բարեգործական կոմիտեներ և այլն, որոնք իրենց ուժերի ներածին չափ օգնություն էին ցույց տալիս աղետյալներին։

Խրիմյան Հայրիկը իր 1880 թ. օգոստոսի 8-ի թվակիր նամակում գրում էր, որ «...ընդհանուր Վասպուրականի գավառներուն մեջ 40 հազարեն ավելի քուրդ մեռած է և մնացյալը ևս իբրև կիսակենդան դիակներ կը շրջին և կերթան հետզհետե դեպի գերեզման» (12, էջ 202)։

«Մշակ» թերթի տվյալներով 1879—1880 թթ. ձմռանը մոտ 80 հազար քրդեր սովամահ եղան (112, 1880 թ., № 189)։ Այդ մղձավանջային ձմռանը հայ ժողովուրդը չզլացավ նաև օգնել քուրդ գյուղացիությանը, որը ոչ մի տեղից օգնության հույս չունենալով, անելանելի վիճակի մեջ էր։

Բաֆֆին «Մշակում» գրում էր. «...մի քանի քուրդ ցեղեր հավասար օժանդակություն էին ստանում հայոց մասնաժողովներից, որոնք Հայաստանի բոլոր քաղաքներում կազմված էին սովատանջներին օգնելու նպատակով» (112, 1880 թ. № 168)։

Կոստանդնուպոլսի պատրիարք Ներսես Վարժապետյանին ուղղված հաշվետվությունից երևում է, որ Վանի բարեգործական կոմիտեն իր հավաքած 500 000 ֆրանկի քառորդ մասը բաժանել է ասորի, հույն, թուրք և քուրդ սովյալներին (270, № 23)։ «Մշակը» ևս հաստատելով այդ փաստը, գրում է, որ հայերը քրդերին հատկացրին բարեգործական ընկերությունից ստացած դրամի և մթերքների ավելի քան քառորդ մասը (112, 1880 թ., № 113)։

Վանի նահանգի քուրդ սովյալ բնակչությանը օգնություն հասցնելու գործում հատկապես եռանդուն ջանքեր էր գործադրում Խրիմյան Հայրիկը (58, էջ 44—47)։

Ընդհանուր տնտեսական քայքայումը, սովը, թուրքական

հարկային աստիճանավորների՝ թեհսիլդարների սահմանած կամայական հարկերը, գռփումները, բռնագանձումներն ու բռնությունները, տեղական իշխանությունների ավազակային գործողությունները, ցեղային առաջնորդների և անկշտում վաշխառուների չարաշահումներն ու սանձարձակությունները, ամեն տեսակ վայրենաբարո արարքները և այլն աննախադեպ շիկացրել էին մթնոլորտը։ Առանձին շրջաններում ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա ժողովուրդները ընդվզում էին։

Հատկանշական է, որ քուրդ գյուղացիության հետ համատեղ քրդական ֆեոդալական ավագանին և աշիրեթային քրդերը ևս սկսել էին դժգոհել, հաճախ մասնակից դառնալով հակակառավարական հուզումներին։ Հատկապես նրանք դժգոհում էին, որ թուրքական վարչությունը փորձում է սահմանափակել իրենց իրավունքները, բաժին ստանալ իրենց եկամուտներից և այլն։ Ֆեոդալները ցանկանում էին, որպեսզի «քուրդ ռայայի ողջ վաստակը մնա իրենց և ոչ թե մտնի պետական գանձարան» (269, էջ 85)։ «Ոչխարի հարկը,— գրում էր Ա. Մ. Կոլյուբակինը,— որը կազմում է Քրդստանում . գանձարանի եկամուտների ամենաէական մասը... ցեղային քրդերի կողմից վճարվում է ծայրահեղ անբարեխիղճ կերպով։ ...Հարկերից խուսափելու համար քրդական վերնախավը շատ հաճախ թուրքական կառավարությունից թաքցնում էր իր ռեալ ունեցվածքը և եկամուտների չափը։ Ըստ մեր ունեցած հավաստի տեղեկությունների, Արաղայի դաշտի Բերկրի կազայում ապրող քրդերը ունեն ավելի քան 80 000 գլուխ ոչխար, մինչդեռ հարկ են վճարում 10 000 գլխի համար» (269, էջ 92)։

Քրդական ցեղային ավագանու դժգոհությունը շատ հաճախ դրսևորվում էր հակակառավարական ելույթների ձևով։ Այսպես, 1878 թ. աշնանը Վանի, Մուշի և Բիթլիսի շրջաններում սկսվեց մոթկանլի, ռաշքոթանլի և սալիքի ցեղերի հակակառավարական ապստամբություն, որն ընդգրկում էր բավականին լայն տարածք, ներառյալ նաև Բոհթանի և Հաքյարիի շրջանները։ Շարժումը գլխավորում էին Բադրխանի որդիները՝ Օսման և Հուսեին բեյերը։

Հատկանշական է, որ շարժմանը հարեցին նաև եզիդները, ինչպես նաև Հաքյարիի ասորիները։ Շրջակա հայ բնակչությու-

նը ևս պաշտպանեց այդ ապստամբությունը, ամբողջապես պարենավորելով ապստամբներին (7, էջ 459)։

Կառավարությունը Ֆերիկ Թաբան փաշայի հրամանատարությամբ 15 հազարանոց բանակ ուղարկեց ապստամբների դեմ և մեծ դժվարությամբ ճնշեց շարժումը (334)։ Նման ապըստամբությունները եզակի չէին։

Իհարկե այդ շարժումների ժամանակ քուրդ զանգվածների և քրդական ավատատերերի ձգտումները բնավ միատեսակ չէին։ Քրդական ավատական վերնախավը աշխատում էր իրենից վանել սոցիալական շարժումների սլաքը, ժողովրդի դժգոհությունն ուղղելով Թուրքական վարչության կողմը։ Շատ հաճախ քրդական ավատատերերը փորձում էին նույնիսկ օգտվել սոցիալական այդ շարժումներից, իրենց կախումը կառավարությունից վերացնելու, քուրդ և հայ գյուղացիությանն անարգել շահագործելու և նրանցից գանձված հարկերը յուրացնելու համար։ Առանձին ավատատերեր աշխատում էին սոցիալական շարժումներն օգտագործել նաև իրենց անջատողական նպատակների համար։

Սուլթանական կառավարության համար առաջնակարգ կարևորություն ունեցող խնդիր էր արևմտահայության ազգային ինքնագիտակցության վերելքը խաթարելը, որովհետև եվրոպական դիվանագիտության երկչոտ, սակայն հայկական բարենորոգումների մասին հաճախակի հիշեցումները 1879—1880 թթ. ուղեկցվում էին հայ հայդուկային շարժման վերելքով։ Արևելյան Հայաստանում կազմակերպված կամավորական խմբերը պարբերաբար սկսել էին անցնել սահմանը և գնալ Երկիր՝ արևմտահայության ազատագրական շարժմանը նպաստ բերելու համար։ Բ. Դուռը փաստեր ուներ, որ առանձին քրդական ցեղեր ոչ միայն աջակցում են հայ կամավորական ջոկատներին, այլև հաճախ միանում են նրանց։ «Մշակը» հենվելով ռուսական «Գոլոս» թերթի հաղորդագրության վրա, այդ առթիվ գրում էր. «Ռուսաց սահմաններից 500 ձիավոր հայ կամավորներ անցել են Թուրքիա և նրանց հետ մինչև անգամ քուրդ ցեղերը սկսել են միանալ» (112, 1880 թ., № 158)։

1879 թ. սուլթանը Արևմտյան Հայաստան գործուղեց Արդուլ Համիդի հավատարիմ դրածոներից մեկին՝ Բեքիր Սամի փաշային։ Պաշտոնապես նրա առաքելությանը վերագրում էին Փոքր Ասիայի արևելյան նահանգներում հարստահարությունը-

ները կանխելու նպատակ։ Իրականում նրա խնդիրն էր հետաքրքրել և պարզել Հայաստանում հեղափոխական տարրերի առկայությունը և բարենորոգումների գծով եվրոպական կոմիսարների գալու նախօրյակին միջոցներ ձեռնարկել, որպեսզի կանխվի հայոց հավաքական կամքը։

Վանի շրջանում այս փաշան քրդերի ժողովներ գումարեց, նրանց համոզելով հայերին վտարել և գրավել նրանց բնակավայրերը։ Միաժամանակ Կարինի և Վանի ճանապարհներին խրախուսում էր քրդական ավազակապետերին (78, էջ 44)։

Այս դրդռիչ քաղաքականության հետևանքով Արևմտյան Հայաստանում սկսվեցին սոսկալի հարստահարություններ։ Բեքիր Սամի փաշան ամեն կերպ աշխատում էր քրդական վերնախավին համոզել, որ «հայերն են իրենց թշնամիները, որոնք եվրոպացիների միջոցով ձգտում են իշխանություն ձեռք բերել նրանց, այսինքն՝ քրդերի վրա» (77, էջ 325)։

Իր կառավարությանը հղած 1879 թ. նոյեմբերի 19-ի հեռագրում Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան Լայարդը հաղորդում էր, որ Բեքիր Սամի փաշան առատորեն շքանշաններ, պատվո սրեր և դրամ է բաժանում այնպիսի քրդական պետերի, որոնք «առավել արժանի են պարանի» (393, № 4, էջ 151)։

XIX դարի 70-ական թվականների վերջին քրդական նոր շարժման կենտրոն դարձան Հաքյարիի և Նոուչեի շրջանները։ Շարժման ղեկավարությունն իր ձեռքը վերցրեց 50-ամյա շեյխ Օբեյդուլլան, որի ազդեցությունը, որպես քրդերի հոգևոր առաջնորդի, տարածվում էր Արևմտյան Հայաստանից ու Իրաքյան Քրդստանից մինչև Իրանական Քրդստան ու Ատրպատական։ Նրա այդ հսկայական ազդեցության պատճառներից մեկն այն էր, որ քրդերը նրան համարում էին «խալիֆների օրինական ժառանգորդ» (150, էջ 164—165)։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իր շուրջը համախմբելով մեծաթիվ քրդական ուժեր, շեյխը եռանդուն մասնակցություն ցուցաբերեց պատերազմին, հանդես գալով հօգուտ Օսմանյան կայսրության։

1880 թ. Մեքքայից իր ժառանգական կալվածքը՝ Շամդինան[15] վերադառնալուց հետո նկատելով, որ ամբողջ քրդությունը ապստամբում է, շեյխը որոշեց օգտվել առիթից։ Նա ծրա-

գրում էր կառավարության դեմ ապստամբության ճանապարհով իր տիրապետության ներքո միավորել բոլոր քրդական ցեղերին և հնարավորության դեպքում դառնալ Քրդստանի և Արևմտյան Հայաստանի մի շարք նահանգների լիիրավ տերը։ Այս լայնահուն փառասիրական նպատակներին հասնելու համար Օբեյդուլլան աշխատում էր հանդես գալ որպես քրդական զանգվածների «ազգային» ձգտումների ներկայացուցիչ։ Իրականում որպես խոշոր ավատատեր և խոշոր հողային սեփականատեր, Օբեյդուլլան մյուս ավատատերերի նման կողոպտում ու հարստահարում էր իր հպատակության տակ գտնվող գյուղացիությանը, դրանք լինեին հայ, քուրդ թե ասորի։ Մասնավորապես Հաքյարիի և Նոուչեի շրջաններում նա անսահմանափակ տիրակալ էր։ Այդ շրջանների հսկայական հողատարածություններում գտնվող ծխախոտի պլանտացիաների մեծ մասը շեյխինն էր, որի մի մասը նա ժառանգել էր իր հորից՝ շեյխ Թայից, իր հերթին ընդարձակելով տիրույթները և իրեն ենթակա գյուղերի թիվը հասցնելով 200-ի (247, էջ 52)։ Նա իրավամբ համարվում էր քուրդ խոշորագույն հողատերերից մեկը։

Շամդինանի շեյխերի մասին ասում էին, որ «նրանք հեռացել են կրոնի ճշմարիտ ուղուց և այժմ ոչ այնքան կրոնական առաջնորդներ են, որքան աշխարհիկ տիրակալներ» (452)։

Թուրքական աստիճանավոր Խուրշիդ էֆենդին նման կալվածատեր-ավատատերերի մասին գրում էր, որ նրանք «վարժվել են իրենց կառավարման ներքո գտնվող կալվածքները համարել որպես սեփական ստացվածք» (33, էջ 210)։

Շեյխը մեծապես շահագրգռված էր անարգել արտահանել ու վաճառել իր ծխախոտը, այդ պատճառով նա ամենադաժան պայքար էր մղում ճանապարհների վրա գործող ավազակախմբերի դեմ և առհասարակ աշխատում էր վերացնել այն բոլոր արգելքները, որոնք կասեցնում էին իր առևտուրը։ Այդպիսի արգելքներից մեկն էր նաև ֆրանսիական «Ռեժի դե թաբաք Օտտոման» ընկերությունը, որի ձեռքում էր թուրքական ծխախոտի գնման և վաճառման մենաշնորհը և որի ստեղծած կապանքներից շեյխը աշխատում էր ամեն կերպ ազատվել։

Սակայն ամենակարևորն այն էր, որ Օբեյդուլլան բնավ ցանկություն չուներ իր կալվածքներից ստացած եկամուտները կիսել կառավարության հետ։ Թեև թուրքական վարչությունը ըստ էության ոչ մի ազդեցություն չուներ նրա տիրապետու-

թյան ներքո գտնվող շրջաններում և տեղական բնակչությունից հարկերը գանձում էր հենց ինքը՝ շեյխը և իր մարդիկ, սակայն նա այնուհանդերձ պարտավոր էր որոշակի գումար մուծել սուլթանական գանձարան։ Մայոր Տրոտտերը գրում էր, որ «...շեյխ Արեյբրուլախի՝ խռովության այդ գլխավոր ղեկավարի, ազդեցությունն այնպիսին է, որ շրջակայքում մի քանի մղոն տարածության վրա նրան, և ոչ թե թուրքական կառավարությանն են քրդերն ու քրիստոնյաները մուծում հարկեր» (395, էջ 193)։

Անմիջապես Օբեյդուլլայի շուրջը համախմբվեցին քրդական ազդեցիկ ցեղերի առաջնորդները (Բոհթանի, Բիթլիսի, Ռևանդուզի և այլն), որոնք նույնպես հիմքեր ունեին դժգոհ լինելու թուրքական կառավարությունից, մանավանդ որ վերջինս քայլ առ քայլ սահմանափակում էր հարկերի գանձման բնագավառում նրանց իրավունքներն ու արտոնությունները և զրկում իրենց «անկախ» վիճակից։

Օսմանյան կառավարությունը անմիջապես կռահեց, որ Քրդստանում և Արևմտյան Հայաստանում իրեն լուրջ բարդություններ են սպասվում։ Վանի մուֆտիին կարգադրվեց անհապաղ հանդիպել Օբեյդուլլայի հետ և փորձել համոզել նրան հետ կանգնելու իր մտադրություններից, խոստանալով լրիվ բավարարել նրա «օրինական պահանջները» (335)։

Մուֆտիի հետ հանդիպման ընթացքում շեյխը քրդական զգվածների դժգոհության և հուզումների ամբողջ պատասխանատվությունը ճարպկորեն բարդեց կառավարության վրա, հայտարարելով, որ հակառակ շարիաթի, ոչ ոք ուշադրություն չի դարձնում թուրքական վարչության շարաշահումների վրա և որ «կառավարման ներկա պայմաններում կյանքը պարզապես դառնում է անիմաստ»։

Այս տեղեկությունները հաղորդող ռուսական զինվորական գործիչ գեներալ-մայոր Զելենոյը ավելացնում էր, որ «օգտվելով Թուրքիայի ներկայիս թուլությունից և ենթադրելով, որ վերջինս գնում է դեպի վերջնական քայքայում, շեյխը մտադրվել է անջատվել Թուրքիայից և իր համար ձեռք բերել լրիվ անկախություն» (335)։

Ո՞չ թանկարժեք նվերներն ու շքանշանները, որոնք թափվում էին շեյխի վրա, ո՞չ սուլթանի տված առատ խոստումները չսասանեցին նրա մտադրությունները։

Արդեն 1878 թ. վերջին համառորեն լուրեր էին շրջում, որ Օբեյդուլլան նախապատրաստվում է քրդերի հակաթուրքական խոշոր ապստամբություն հրահրել, որի նպատակն է լինելու քրդական անկախ պետության ստեղծումը (155)։ Խոսվում էր նաև այն մասին, որ շեյխը ձեռք է բերել հակաթուրքական տրամադրություններ ունեցող Մեքքայի շերիֆի և Եգիպտոսի խեդիվ Իսմայիլի աջակցության խոստումը։ Դիարբեքիրում ռուսական հյուպատոսը իր հերթին տեղեկացնում էր, որ Օբեյդուլլան հանդես է գալիս «միջազգության վահաբիի դերում» (156)։

Նա նկատի ուներ Արաբիայի ավատատերերի վահաբիթական շարժումը, որը շեշտված հակաթուրքական ուղղվածություն ուներ և որը պահանջում էր չճանաչել սուլթանին որպես համայն մահմեդականության գերագույն խալիֆ և վերադառնալ իսլամի սկզբնավորման ժամանակաշրջանի «մաքուր շարիաթին»։ Ռուսական հյուպատոսը շեշտում էր, որ Օբեյդուլլան մտադիր է վահաբիների նման ռեֆորմի ենթարկել ուղղափառ իսլամը, և իր ստեղծած գաղափարախոսության շուրջը համախմբելով քրդերին, նրանց ոտքի հանել սուլթան-խալիֆի դեմ։

Այդ լուրերի մեջ առավել հետաքրքիրն այն էր, որ Օբեյդուլլային աջակցում էր նաև թուրքական «հին կուսակցությունը» (156)։ Խոսքը վերաբերում էր միդհատյան սահմանադրության հակառակորդ հետադիմական կղերապետական տարրերին։

Իր առաջիկա շարժման նկատմամբ Ռուսաստանի դիրքորոշումը պարզելու նպատակով Օբեյդուլլան 1879 թ. հոկտեմբերին Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի մոտ ուղարկեց իր ներկայացուցիչ Յուսուֆ աղային, այնուհետև՝ շեյխ Սայիդ Մոհամմեդ Սայիդին, որոնք ռուսական դիվանագետին շարադրեցին շեյխի տեսակետները և խնդրեցին ռուսական կառավարության աջակցությունը (336)։

Ընդ որում, Օբեյդուլլան ռուսական կառավարությանն առաջարկում էր վերանայել իր քրդական քաղաքականությունը և այսուհետև քրդերին դիտել որպես Փոքր Ասիայում Ռուսաստանի հիմնական հենարանի։ Ակնարկվում էր նաև, որ քրդերը անհրաժեշտ են գտնում, որ Պետերբուրգի կաբինետը քրդական հարցը հայկական հարցի նման միջազգային դիվանագիտության ասպարեզ հաներ։

Սակայն ցարական կառավարությունը մերժեց Օբեյդուլլային աջակցություն ցույց տալու առաջարկը։ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Ա. Բ. Լոբանով-Ռոստովսկուն գրած իր պաշտոնական հաղորդագրությունում Կ. Կամսարականը նշում էր, որ Ռուսաստանի շահերի տեսակետից խիստ վտանգավոր է շեյխի մտահղացումներին ընդառաջ գնալը։ Եվ որ Ռուսաստանը հետևելով իր ավանդական քաղաքականությանը, Փոքր Ասիայում պետք է շարունակի հենվել ոչ թե քրդական տարրի, այլ քրիստոնյա բնակչության վրա (157)։

Հայազգի դիվանագետի այս տեսակետը իր ազգի նկատմամբ բնավ էլ զգացմունքային դրսևորում չէր։ Բանն այն էր, որ թեև ցարական դիվանագիտությունը դեմ չէր օգտագործելու «քրդական խաղաքարտը» Մերձավոր արևելքի իր քաղաքական կոմբինացիաներում, սակայն տվյալ դեպքում դրա նպատակահարմարությունը Պետերբուրգին թվում էր անցանկալի։ Ցարական դիվանագիտությունը անհերքելի փաստեր ուներ այն մասին, որ Լոնդոնը իր քաղաքական գործակալության միջոցով արդեն հասցրել է համաձայնության գալ Օբեյդուլլայի հետ և փորձում է քրդական այդ շարժման լծակները ամբողջապես վերցնել իր ձեռքը։

Իսկապես, Անգլիան հենց սկզբից մեծ ուշադրությամբ հետևում էր շեյխ Օբեյդուլլայի տրամադրություններին և նրա գործունեությանը, մտադիր լինելով հասունացող քրդական շարժումն ուղղել այնպիսի հունով, որ համապատասխաներ Մերձավոր արևելքում բրիտանական շահերին։ Անգլիացի հետախույզ Տրոտտերը անկեղծորեն խոստովանում էր, որ հաշվի առնելով Օբեյդուլլայի հսկայական ազդեցությունը թուրքական և իրանական Քրդստանում, անգլիացիները ջանում էին օգտագործել նրա փառասիրական մտադրությունները (327, էջ 4)։

Ինչպես հայտնի է, XIX դ. վերջին քառորդին բրիտանական քաղաքականությունը Մերձավոր և Միջին արևելքում հասել էր աննախընթաց ակտիվության։ Միաժամանակ ծայրահեղորեն սրվել էին անգլո-ռուսական հարաբերությունները։ Այս երկու տերությունների միջև քաղաքական տարաձայնություններն ուղեկցվում էին տնտեսական սուր մրցակցությամբ։ Անգլիան մասնավորապես աշխատում էր իր հսկողության տակ պահել Տրապիզոն—Էրզրում—Թավրիզ առևտրական ճանապարհը և նրա միջոցով Օսմանյան կայսրությունում և Իրանում ռուսա-

կան առևտրին մահացու հարված հասցնել։ Առևտրական այդ ուղին կենսական նշանակություն ուներ Անգլիայի համար նաև այն պատճառով, որ Եգիպտոսը դեռ նվաճված չէր, իսկ Սուեզի ջրանցքով բեռների փոխադրումները դեռևս, ինչպես հարկն է, կարգավորված չէին։ «Կոստանդնուպոլիսը և հատկապես Տրապիզոնը,— գրում էր Կ. Մարքսը,— Ասիական Թուրքիայում հանդիսանում են ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Թուրքեստանի ու Պարսկաստանի հետ քարավանային առևտրի գլխավոր կենտրոններ։ Եվ այդ առևտուրն... արագորեն ընդարձակվում է։ Հունական և հայկական առևտրականները վերոհիշյալ երկու քաղաքներից ներմուծում են մեծ քանակությամբ անգլիական գործարանային ապրանքներ, որոնք շնորհիվ իրենց ցածր գների արագորեն դուրս են մղում ասիական հարեմների տնային արդյունաբերության արտադրանքները» (147, էջ 12)։

Բեռլինի կոնգրեսով նախատեսված հայկական բարենորոգումները վերահսկելու պատրվակի տակ Արևմտյան Հայաստանում և Քրդստանում վխտում էին անգլիական զինվորականներ, «զբոսաշրջիկներ», «ճանապարհորդներ», միսիոներներ և այլն, որոնք առավելապես զբաղվում էին ռազմաքաղաքական հետախուզական գործունեությամբ (237)։

Համոզված լինելով, որ հայ ժողովրդի քաղաքական հակումները Ռուսաստանի կողմն են, իսկ վերջինս էլ հայերին դիտում է որպես Օսմանյան կայսրության արևելյան շրջաններում իր հիմնական հենարանը, անգլիացիները որոշել էին հենվել քրդերի վրա։ Կ. Կամսարականը դա բացատրում էր նաև նրանով, որ Անգլիան իր ռազմական նպատակների համար (157) մտադիր էր օգտվել քրդական տարրի ծառայությունից՝ անտարակույս ուղղված Ռուսաստանի դեմ։

Առհասարակ այս շրջանում բրիտանական դիվանագիտությունը փորձում էր ի դեմս քրդական ավատատերերի «ազգային ձգտումների» հակակշիռ ստեղծել հայկական ազատագրական շարժման դեմ։

Շեյխ Օբեյդուլլայի այն հայտարարությունը, թե «ներկայումս քրդական առաջնորդները ցանկանում են ստեղծել միավորման և անկախության հիմքի վրա խարսխված մի Քրդստան» (408, էջ 16), միանգամայն համապատասխանում էր Լոնդոնի շահերին, որովհետև դրա իրականացման դեպքում նախ կբա-

ցառվեր Ռուսաստանի կողմից հայկական հարցի բարձրացումը և ապա՝ Արևմտյան Հայաստանում տիրապետող կդառնար անգլիական ազդեցությունը։ Մեծ Բրիտանիան առհասարակ քրդերի մեջ տեսնում էր այն ուժը, այն զինված տարրը, որը պետք է հիմք հանդիսանար Ռուսաստանի առաջխաղացման դեմ պատնեշ կանգնեցնելու համար (77, էջ 109)։

Քաղաքական այս գիծը կենսագործելու համար, ինչպես տեսնում ենք, Նենգ Ալբիոնը մի ձեռքով շեփորում էր հայկական բարենորոգումների իրականացման հույժ անհրաժեշտությունը և ի լուր աշխարհի ազդարարում Անգլիայի շահագրգռվածությունը դրանց իրականացման մեջ, իսկ մյուս ձեռքով աշխատում էր քրդերի միջոցով դաշունահար անել այդ բարեփոփոխությունների ծրագիրը և առհասարակ հայկական հարցը։

1879 թ. Կոստանդնուպոլսում անգլիական դեսպան լորդ Դաֆերիի հանձնարարությամբ Վանում անգլիական փոխհյուպատոս կապիտան Կլեյտոնը Հաքյարիում այցելեց շեյխ Օբեյդուլլային և բանակցություններ վարեց նրա հետ, նույնիսկ ձեռք բերելով անգլիական իշխանություններին ուղղված շեյխի հատուկ ուղերձը, որն Անգլիային իրավունք էր տալիս միջամտելու քրդերի գործերին (265, էջ 45)։ Այս այցելությանը անմիջապես հաջորդեց անգլիական զենքի և դրամի մատակարարումը շեյխին (357)։

Ավելի ուշ, տեղեկանալով, որ նեստորական ասորիների հոգևոր առաջնորդ Մար Շիմունի և Վանի հայ բնակչության ներկայացուցիչների միջև տեղի են ունենում բանակցություններ, որոնց ընթացքում Մար Շիմունը առաջարկում է, որ հայերն ու նեստորականները առանց հապաղելու միավորվեն և հարկ եղած դեպքում հակահարված տան «քրիստոնյաների թշնամիներին», այսինքն Օբեյդուլլայի շարժման մասնակիցներին, անգլիացիները լրջորեն անհանգստացան։ Բրիտանական կառավարությունը երկյուղ էր կրում, որ նեստորական ասորիները ևս հայերի նման ամբողջապես կընկնեն Ռուսաստանի ազդեցության տակ և այնժամ Արևմտյան Հայաստանում բրիտանական դիրքերին անկասելի հարված կհասցվի։

Մեծ ջանքերի գնով անգլիացիներին հաջողվեց Մար Շիմունին համոզել հրաժարվել այդ մտադրությունից։ Ավելին, նրանք կարողացան համոզել ասորիների հոգևոր առաջնորդին բանակցությունների մեջ մտնել Օբեյդուլլայի հետ։ Այդ առթիվ

Կ. Կամսարականը Վանից 1881 թ. փետրվարի 13-ին մի զեկուցագիր է հղում Կ. Պոլսում դեսպան Նովիկովին, որով հայտնում է, որ Մար Շիմունի հետ երկարատև նամակագրությունից հետո Օբեյդուլլան նրա աթոռանիստ քաղաքից է ուղարկել նեստորական մի մաթրանի (եպիսկոպոսի)։ Այդ կապակցությամբ Մար Շիմունը անմիջապես ասորիների առաջնորդների (մելիքների) խորհուրդ գումարեց, որտեղ հայտարարեց, որ Օբեյդուլլան առաջարկում է քրդերի և ասորիների միջև զինական դաշինք կնքել։ Մելիքները, որոնց մեծ մասը ռուսական կողմնորոշում ուներ, կտրականապես հրաժարվեցին համագործակցել Օբեյդուլլայի հետ և իրենց հերթին առաջարկեցին միանալ հայերին, հաշվի առնելով «քրիստոնյաների վրա քրդերի և թուրքական կառավարության կողմից կախված վտանգը»։ Հենց տեղում մելիքները Բաշկալեի մոտ գտնվող ս. Պետրոս վանքի վանահայր Հովհաննես վարդապետին ուղղված մի նամակ կազմեցին, որպեսզի նա իր հերթին այն հղի Վանի հայոց արքեպիսկոպոսին։ Նամակում առաջարկվում էր հայ-ասորական դաշինք կնքել։ Բացի այդ, նամակի հեղինակները հավաստիացնում էին, որ անհրաժեշտության դեպքում ասորիները 15 հազարանոց մի զոկատ կհանեն, եթե հայերը նրանց հատկացնեն 1000 «Հենրի Մարտինի» սիստեմի հրացան։

Այսպիսով, անգլիացիների ջանքերը հայերի և ասորիների միջև սեպ խրելու և արևմտահայության դեմ ուղղված քուրդ-ասորական դաշինք ստեղծելու ուղղությամբ, որն իր սուր ծայրով պետք է ուղղված լիներ Արևմտյան Հայաստանում Ռուսաստանի քաղաքական շահերի դեմ, ձախողվեցին։

Ինչ վերաբերում է օսմանյան կառավարությանը, ապա վերջինս նախ փորձում էր կանխել Օբեյդուլլայի կողմից նախապատրաստվող շարժման հակակառավարական ուղղվածությունը, իսկ անհաջողության դեպքում գեթ այդ շարժմանը հաղորդել իր համար առավել շահավետ ընթացք (337)։

Կոստանդնուպոլսից ռուսական դեսպան Նովիկովը հայտնում էր, որ նախապատրաստվող քրդական ապստամբության դեմ պայքարելու բավարար շափով ուժեր չունենալով, սուլթանական կառավարությունը նախընտրում է շեյխին սիրաշահելու քաղաքականությունը (159)։ Այդ նպատակով 1880 թ. գարնանը Հաքյարի՝ Օբեյդուլլայի մոտ է գործուղվում սուլթան Աբդուլ Համիդի համհարզ, գնդապետ Բահրի բեյը, որը ռուսական դի-

տորդների տեղեկությունների համաձայն շեյխին է հանձնել սուլթանի նվերը՝ սուր և շքանշան, ինչպես նաև հայտնել, որ կառավարությունը նրան թոշակ է նշանակել։

Այդ նույն հաղորդագրությունում նշվում է, որ նախազգուշական նպատակներով հրամայված է Էրզրումից, Էրզինջանից, Մոսուլից, Դիարբեքիրից և Վանից դեպի Հաքյարի զորքեր շարժել այն դեպքում, եթե «շեյխը համարձակվեր ապստամբել կառավարության դեմ» (159)։

Ինչպես հայտնի է, 1880 թ. ամռանը եվրոպական վեց պետությունների կողմից Բ. Դռանը հանձնվեց հավաքական մի հուշագիր, որտեղ պահանջվում էր անհապաղ կենսագործել Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը և Արևմտյան Հայաստանում իրագործել խոստացված բարենորոգումները։ Հուշագիրը վերստին գալիս էր հիշեցնելու, որ Սան Ստեֆանոյի պայմանագրի ստորագրումից և Բեռլինի կոնգրեսից հետո հայկական հարցը դադարել էր Օսմանյան կայսրության ներքին հարց հանդիսանալուց և ձեռք էր բերել միջազգային բնույթ։ Դա չէր կարող մեծ երկյուղ չներշնչել սուլթանին և նրա կառավարությանը, որոնք չէին ցանկանում, որ կայսրության արևելյան մասը ևս արժանանար Բուլղարիայի ճակատագրին։ Սուլթանն անշուշտ հասկանում էր, որ հայկական հարցը և բարենորոգումների խնդիրը մի այնպիսի խաղաքարտ է, որ հաճախ է օգտագործվելու մեծ տերությունների կողմից Թուրքիայի գործերին միջամտելու համար։ Իսկ դա անխուսափելիորեն կհանգեցներ նոր տերիտորիաների կորստի, գուցեև սկիզբ կդրվեր կայսրության վերջնական բաժանմանը։

Սուլթանական կառավարության համար հույժ կարևոր անհրաժեշտություն դարձավ քրդերի մոտ փարատել այն տեսակետը, որ հայերը վայելում են Եվրոպայի հովանավորությունը և կարող են ստիպել իրենց օրենքներ հրապարակել։ Թուրք պաշտոնեությունը ենթադրում էր, որ «հենց որ քրդերը վերջնականապես այդ բանին հավատան, նրանք անհապաղ կմիանան հայերի հետ» (112, 1882 թ., № 11)։

Սուլթանին մեծապես մտահոգում էր այն, որ հայկական հարցը կարող է անդրադառնալ նաև կայսրության այլ, մասնավորապես ոչ թուրք ժողովուրդների վրա։ Այս տեսակետից Հաքյարիում Օբեյդուլլայի գլխավորությամբ տեղի ունեցող

խմորումները կենդանի օրինակ էին նման մտավախություններ համար։

Կոստանդնուպոլսի կառավարությունը ստեղծված վիճակից դուրս գալու համար որոշեց դարձյալ օգտագործել իր զինանոցի բազմիցս փորձված զենքը՝ երևան բերել հայ-քրդական հակամարտությունը։ Այսինքն, Օբեյդուլլայի շարժումն ուղղեր մի կողմից՝ հայ ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումներին մահացու հարված հասցնելու, հայկական հարցին Եվրոպայի միջամտությունը կանխելու, իսկ մյուս կողմից՝ քրդական շարժումը չլատելու, իր նախանշած հունից շեղելու և ի վերջո այն սրատելու ու ոչնչացնելու համար։

Այսպիսով, Օբեյդուլլայի շարժումը սուլթանական կառավարության համար կարծես թե չարիքից վերածվում էր բարիքի։ Լեոն այդ առթիվ նշում է, որ «Թուրքական կառավարությունը չէր վախենում այդ շարժումներից, ընդհակառակը, խրախուսում էր, որովհետև կարծում էր այդպիսով ստեղծել մի քրդական միություն, որ քաղաքական ուժով գործիք կդառնար իր ձեռքում, իսկ անկախության գաղափարը հեշտ կարելի էր մոռացության տալ...» (70, էջ 117)։

Նշված քաղաքականությունը հատկապես շեշտված ձևով դրսևորվեց մեծ տերությունների Օսմանյան կայսրությանը հավաքական հուշագիր ներկայացնելուց հետո։ Ի դեպ, ի պատասխան այդ հուշագրի, Բ. Դուռը նախ հայտարարեց, որ հայերն ասիական Թուրքիայի ոչ մի վայրում ազգաբնակչության մեծամասնություն չեն կազմում, հետևաբար նրանց համար բարեփոխումներ իրականացնելը միանգամայն անիմաստ է։ Սակայն այս փաստարկները մերժվելուց հետո մեծ տերություններ ճնշման ներքո Կ. Պոլիսը ստիպված էր ընտրել այլ ուղի՝ խուսանավելու ու խոստումներ տալու ուղին։ Այդ առթիվ Գր. Արծրունին գրում էր. «Բ. Դուռը Հայաստանում ռեֆորմներ մտցնելու համար չորս ամիս ժամանակ է պահանջել Եվրոպայից։ Այդ չորս ամսվա ընթացքում նա ժամանակ կվաստակի, քուրդերը կավերեն Հայաստանը, կոչնչացնեն հայերին և ահա այն ժամանակ հայոց խնդիրը ինքնիրեն կվճռվի, որովհետև Թուրքաց Հայաստանի հայերը բոլորն էլ ջնջված կլինեն» (112, 1880 թ., № 112)։

1880 թ. դեսպանական հավաքական հուշագիրը, ինչպես նաև հայկական բարենորոգումներին եվրոպական միջամտու-

թյունը անարդյունք եղավ։ Ավելին, դրա հետևանքներն ուղղակի ողբերգական եղան հայ ժողովրդի համար, որովհետև այսուհետև հայերի բնաջնջումը, նրանց ունեզրկումը, հայրենիքից բռնի վտարումը դարձավ Թուրքական քաղաքականության անկյունաքարը, քաղաքական մի հրեշավոր ձեռնարկ, որի գործնական իրականացմանը սուլթանական կառավարությունը ծրագրում էր մասնակից դարձնել նաև քրդական ավատական վերնախավին և նրա ղեկավարած բանդաներին։ Այդ առթիվ Լեոն գրում է. «Եվ նա երկու ձեռքով բռնում էր 1880 թվականին ծայր տված քրդական շարժումը։ Կ. Պոլսի Թուրք մամուլը հրճվանքի մեջ էր, Եվրոպային սպառնում էր քրդական շարժումով և բոլորովին հարկավոր չհամարելով որևէ գաղտնապահություն, հայտարարում էր բացարձակ կերպով, թե Թուրքիան կոչնչացնե 61-րդ հոդվածը քրդերի նիզակներով, թե հայերը պիտի լռեն, իրենց համար առանձին պահանջներ չպիտի անեն, ապա թե ոչ՝ նրանց դեմ կկանգնեցվի ամբողջ միացած քրդությունը» (67, էջ 35)։

Նույնիսկ Թուրքանպաստ անգլիական «Կապույտ գրքերում» նշվում էր. «...կառավարությունը, կարծես, մտահոգված է միայն մեկ ցանկությամբ՝ զսպել հայերին քրդերին խրախուսելու միջոցով։ Նա այդ վերջիններին բաժանում է «Մարտինի» տիպի հրացաններ, շարունակելով արգելել հայերին կրելու զենք նույնիսկ անձնական ինքնապաշտպանության նպատակով» (395, էջ 288, 292)։

Բաֆֆին «Քրդական միությունն» վերնագրով հոդվածում գրում էր. «Բեռլինի կոնգրեսի վճիռները Հունաստանի և Ջեռնոգորիայի վերաբերությամբ կողմնակի կերպով մերժելու և Եվրոպական պետությունների պահանջմունքների առջև դժվարություններ հարուցելու համար Բ. Դուռը ստեղծեց ալբանական միությունը։ Իսկ հայկական խնդիրը իր խանձարուրի մեջ խեղդելու համար նա աշխատում է այժմ կազմել մի քրդական միություն»։ Բաֆֆին «Քրդական միության» նախաձեռնողներից մեկին համարում էր Կ. Պոլսում անգլիական դեսպան Լայարդին, իսկ ընդհանուր առմամբ այդ գաղափարը համարում էր Բիքոնսֆիլդի մինիստրության ծնունդը (139, էջ 108, 114, 116)։

Այն կարծիքը, որ Բ. Դուռը հայկական հարցը փակելու համար աշխատում էր քրդական միություն ստեղծել, բաժանում

էր նաև ռուսական մամուլը։ «Մշակը», օրինակ, արտատպել էր «Գոլոս» լրագրից վերցված մի թղթակցություն, որտեղ նշվում էր, որ «քրդական լիգան հնարված է Բեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածը անզոր անելու նպատակով» (112, 1880 թ., № 158)։

Այդ հանգամանքը չէր թաքցնում նույնիսկ թուրքական մամուլը։ Այսպես, Կոստանդնուպոլսի պաշտոնական «Լ'Օսմանլի» թերթը գրում էր, որ «Քրդստանի բնակիչները չափազանց շփոթված են «հայկական հարցից», որ զարթեցնում է Եվրոպան բարենորոգությունների անունով։ Եվ հենց որ քրդերը կտեսնեն, որ նրանց կամենում են Արևելյան Ռումելիայի բնակիչների վիճակին ենթարկել, նրանք իսկույն կկազմեն իրենց լիգան, ոտքի կանգնելով ինչպես մի մարդ։ Քրդերի մի մասը թափառական կյանք է վարում, նրանց բնակարանները և կայքը իրենց ձիերի մեջքին են։ Ուրեմն, նրանց ոտքի կանգնեցնելու համար բավական է հրամայել նրանց ձի նստել»,— ցինիկորեն եզրակացնում էր հոդվածագիրը (112, 1880 թ., 166)։

Սուլթանական նահանգական պաշտոնյաները իրենց հերթին բորբոքում էին առանց այն էլ բոցավառվող կրքերը։ Այսպես, Բաշկալեի ադլիյեի (դատարան) նախագահ Հաջի Մուստաֆա էֆենդին հայտարարում էր, որ վեց նահանգներում բնակվում են գլխավորապես երեք ազգեր՝ հայեր, քրդեր և ասորիներ։ Քրդերին բոլորովին դուրս են թողել բարենորոգումների ծրագրից, «բոլոր իրավունքները տալով միայն այդ մնացած երկու քրիստոնյա ազգերին և այս չափազանց վիրավորական և անհանդուրժելի լինելով քրդերի համար, նրանք էլ բնականաբար որոշել են հենց սկզբից զենքը ձեռքին արգելել այդ բարենորոգումների ներմուծումը պետության նշված մասերը» (114, 1906 թ., 6, էջ 13—14)։

Ուշագրավ է, որ սուլթանական կառավարության մտահղացած այս ծրագրերի մասին որոշ քուրդ ցեղապետեր տեղյակ պահեցին հայերին։ Այսպես, հայտնի քրդական առաջնորդ Հուսեին աղան Արսեն Թոխմախյանին հայտնում է, որ Օբեյդուլլայի շարժումը «պատրաստվեց հայոց դեմ, հայոց խնդիրը ջնջելու համար և ցույց տալու Եվրոպային, որ քրդերը մի զինվորական ուժ են կազմում։ Որ այդ ուղղությամբ «շատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են» (59, էջ 50—51)։

Այսպիսով, թուրքական քաղաքականության ներքին զբաղմունքները և դրդապատճառները միանգամայն պարզ էին։ Սուլթանին անհրաժեշտ էր Եվրոպային ցույց տալ մի խրտվիլակ, և այդ դերում նա ցանկանում էր ծառայեցնել «քրդական լիդան»։

Օսմանյան կառավարությունը, որի ավանդական քաղաքականությունը քրդերի տարանջատումն ու բաժանումն էր, այժմ աշխատում էր միավորել նրանց և ուղղել հայ ժողովրդի դեմ։

Այդ նպատակին հասնելու համար կառավարությունը դիմում էր բազմապիսի միջոցների։ Նա բորբոքում էր քրդերի կրոնական ֆանատիկոսությունը, մեծարում ու շոյում էր նրանց, խրախուսում էր հայերին պատկանող հողերի բռնագրավումները և այլն։

Սուլթանը սկսեց Արևմտյան Հայաստան ուղարկել մոլլաների և սեյիդների, որոնք մզկիթներում բորբոքում էին քրդական զանգվածների կրոնական ատելությունը հայերի դեմ։ Այնուհետև նա բարձր կարգի շքանշաններ ու զինվորական կոչումներ սկսեց շնորհել քուրդ ցեղապետերին։ Այսպես, օրինակ, սուլթանը Բադրխանի որդուն՝ Բահրի բեյին սուլթանական գվարդիայի հրամանատարի աստիճան և երկրորդ կարգի «Մեջիդիե» շքանշան, ինչպես նաև ֆերիկի (գեներալի) կոչում շնորհեց, նրան ուղարկելով Արևմտյան Հայաստան «հատուկ հանձնարարությամբ» (112, 1880 թ., № 158)։

Քրդերի շրջանում հայկական հարցը թուրքական գործակալությունը բացատրում էր այնպես, թե իբր հայերն ուզում են իրենց համար թագավորություն ստեղծել և ստրկացնել քրդերին։ Այս վտանգից ազատվելու մի ճանապարհ ունեն քրդերը՝ կոտորել հայերին (67, էջ 36)։

Քրդերին հայերի դեմ գրգռելու նպատակով աշխատում էին նաև հավատացնել նրանց, որ հայերը «ֆրանկներու կդիմեն և անոնցմե զորք ու ստակ կուզեն, որ քրդերը ջնջեն, ուստի իրենց պահպանության համար իրենք պետք է զենք առնեն և հայոց դիմադրեն» (112, 1880 թ., № 135)։ «Լ' Օսմանլին» նույնիսկ գրում էր, որ հայերը դիտավորություն ունեն քրդերի մեջ տարածել քրիստոնեությունը և քուրդ երեխաներին ներգրավել հայոց դպրոցները։ «Բուլղարները,— ասվում էր այդ հոդվածում,— թեև ապստամբվում էին թուրքերի դեմ և սպանում էին թուրքերին, բայց հայերը նրանցից վտանգավոր են, որով-

հետև կուլտուրական ճանապարհով կամենում են կլանել քրդերին» (112, 1880 թ., № 166)։

Թուրքական մամուլի տարբեր օրգաններ միաբերան դատապարտում էին հայերին, որոնք իբր թե հարստահարում են «խեղճ» քրդերին և այլն։ Սուլթանական կառավարության սարքած ամենախոշոր պրովոկացիաներից մեկը թերևս հետևյալն էր. Բ. Դուռը դեռ չէր տվել եվրոպական դեսպանների հավաքական նոտայի պատասխանը բարենորոգումների մասին, երբ Կոստանդնուպոլսում հայտնվեցին ինչ-որ քուրդ պատվիրակներ, «իբր շեյխ Իբադուլլահի կողմից ուղարկված, բայց իսկապես Թուրքաց մայրաքաղաքի մեջ սարքված, որոնք ներկայանալով Աբեդին փաշային, պահանջում էին քրդերի և Քրդստանի համար ինքնավարություն» (112, 1880 թ., № 168)։

Բաֆֆին հայտնում է, որ Օբեյդուլլան այդ ժամանակ գտնվում էր Իրանում և ամենևին տեղեկություն չուներ, որ մայրաքաղաքում իր անունից բանակցություններ են վարում (139, էջ 117)։

Քիչ ավելի ուշ պարզվեց, որ «քրդական լիգայի» ծրագրողը հենց ինքը Աբեդին փաշան էր, որը նաև «ալբանական միության» հեղինակն էր։

Կարծես հմուտ դիրիժորի ցուցումով վերոհիշյալ «քրդական ցույցից» հետո Թուրքական մամուլը կտրուկ փոխեց քրդերի հասցեին իր որդեգրած ոճը։ Այժմ արդեն ձեռնտու չէր նրանց կուլտուրական, զարգացած և խաղաղասեր ժողովուրդ ներկայացնելը։ Պետք էր նրանց ներկայացնել որպես անգութ գազաններ, որպես բարբարոս ֆանատիկոսներ, որոնք պատրաստ են մի րոպեում ոչնչացնել հայերին, եթե հարց բարձրացվի նրանց անկախության կամ ինքնավարության մասին։

Սուլթանական կառավարությունն աշխատում էր նաև շեշտել, որ եթե ինքը բարենորոգումների հարցում գնա մահմեդականների կամքին հակառակ, ապա կարող է տեղիք տալ քրիստոնյա բնակչության խոշոր կոտորածի, որի համար Բ. Դուռը դժվարանում է իրեն պատասխանատու համարել։

Բաֆֆին «Մշակի» էջերում գրում էր, որ այդ բոլորը խաբեություն է, որովհետև մահմեդականներն ասիական Թուրքիայում նույնքան ճնշված, նույնքան հարստահարված են անկարգ կառավարությունից, որքան քրիստոնյաները, և որ քրդական զանգվածները բնավ տեղեկություն չունեն Թուրքական դի-

վանագիտության այդ մեքենայությունների մասին (112, 1880 թ., № 168)։ «Որքան հայկական լեռների գայլերը տեղեկություն ունեն այդ բոլոր բանակցությունների մասին,— գրում էր Բաֆֆին,— նույնքան տեղեկություն ունի քուրդ ժողովուրդը։ Այդ բոլորը խոսվում, շինվում, սարքվում են Կ. Պոլսում» (112, 1880 թ. № 168)։

Իհարկե, վերջին հաշվով, սուլթանին բնավ ձեռնտու չէր «քրդական միության» գործնական իրագործումը, այսինքն քրդերի համախմբումը։ Նրան պարզապես անհրաժեշտ էր հայ ժողովրդի նկատմամբ քրդական ավատական վերնախավի խըժդրժություններին և բռնություններին տալ քաղաքական կերպարանք և դրանով իսկ ձախողել հայկական բարենորոգումների խնդիրը։

Կառավարությունն անհրաժեշտ էր գտնում նաև քրդերին թույլ չտալ հասկանալու, որ հայկական բարենորոգումները ոչ պակաս օգտավետ են նաև քուրդ ժողովրդի համար։

Հայ ժողովրդի դեմ նյութվող այդ ահավոր դավի օրերին Աբդուլ Համիդ II-ը համոզում էր Ներսես Վարժապետյան պատրիարքին, աշխատելով նրան հավատացնել, որ կառավարությունը շահագրգռված է հայկական բարենորոգումների շուտափույթ իրականացման համար։ Սուլթանի լկտիությունը հասավ այն աստիճանի, որ նա պատրիարքին հայտարարեց, թե ինքը իրավունք է շնորհում, որ հայերը փայատիրական հիմունքներով ընկերություն կազմեն՝ Հայաստանում ճանապարհներ, երկաթուղի, գործարաններ և այլն կառուցելու համար։ Որ Տրապիզոնի մոտ գտնվող Թիզե նավահանգիստը ինքը նվիրում է այդ ընկերությանը՝ իբրև ապագա «ինքնօրեն Հայաստանի համար Պոլսո հետ ուղղակի հաղորդակցության մի որոշ հենակետ», թե ինքը արտոնել է պատրիարքին գործածել հայկական զինադրոշմը իր պաշտոնական նամակների ճակատին և թե «ի մի բան՝ մեծ, երջանիկ ապագա է խոստացված հայ ազգին, յորում նա պիտի մոռանա իր անցյալ բոլոր ցավերն ու վիշտերը» (114, 1906 թ., № 6, էջ 16)։

Անձամբ ինքը, շեյխ Օբեյդուլլան, քաջ գիտակցելով օսմանյան կառավարության շահագրգռվածությունը քրդերին օգտագործելու հարցում որպես հայերին և հայկական հարցին հակազդող ուժի, իր հերթին աշխատում էր այդ շահագրգռվածությունն օգտագործել հօգուտ իր քաղաքական նպատակների։

1880 թ. հուլիսի վերջին Շամդինանում տեղի ունեցած քրդական առաջնորդների հավաքում նա հայտարարում էր, «Եթե մինչև այժմ Բ. Դուռը ամեն կերպ աջակցում է քրդերին, ապա դա արվում է Անատոլիայում նրանց քրիստոնեական տարրերին հակազդելու նպատակով, և եթե այստեղ հայերը ոչնչացվեն, ապա այդ դեպքում քրդերը կկորցնեն իրենց նշանակությունը թուրքական կառավարության աչքում» (150, էջ 228)։

Սակայն շեյխ Օբեյդուլլայի շարժման ընթացքում թուրքական կառավարության հրահրումով մի շարք քրդական առաջնորդներ այնուամենայնիվ հայերի մասնակի ջարդեր կազմակերպեցին, դրանով իսկ թաղելով շեյխի ծրագրած քաղաքական գործի բարոյական մասը։ Այդ էր պատճառը, որ և՛ հայերը, և՛ ասորիները սկզբից ևեթ կասկածանքով վերաբերվեցին Օբեյդուլլայի շարժմանը և չցանկացան համագործակցել նրա հետ (394, էջ 53—54)։

1880 թ. օգոստոսի սկզբին Ների գյուղում տեղի ունեցավ մի խորհրդակցություն, որին մասնակցում էին Օսմանյան կայսրության և Իրանի համարյա բոլոր քրդական ցեղերի ամենաազդեցիկ հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները։

Խորհրդակցությունում Օբեյդուլլան հանդես եկավ ճառով, որն աչքի էր ընկնում իր հակաթուրքական ուղղվածությամբ։ Մասնավորապես նա նշում էր, որ օսմանները իրենց իշխանությունը ձեռք են բերել անօրինական ճանապարհով, որովհետև ըստ շարիաթի սուլթանը պետք է սերված լինի Մուհամմեդ մարգարեի սերնդից, իսկ քանի որ դա այդպես չէ, հետևաբար օսմանների գերակայությունը մահմեդական աշխարհի նկատմամբ անօրինական է։ Թուրքերին մեղադրելով նաև հավատուրացության մեջ, նա հայտարարեց, որ իրենց 400—500-ամյա գոյության ընթացքում օսմանները հրաժարվեցին շարիաթից և օրենքներն ընդունեցին գյավուրներից[16]։

Օբեյդուլլան փայփայում էր «անկախ Քրդստան» ստեղծելու գաղափարը, որը նա մտադիր էր իրականացնել երկու փուլով։ «Քանի որ Քրդստանի մի մասը պատկանում է Պարսկաստանին, ապա պատերազմ սկսելով թույլ կողմի դեմ, մենք կազատագրենք մեր եղբայրներին և տեր դառնալով այնպիսի հարուստ և բարեբեր երկրի, ինչպիսին Ատրպատականն է, մենք անսպառ աղբյուր կունենանք պատերազմելու համար մեր

մյուս թշնամու՝ օսմանների հետ»,— հայտարարում էր Օբեյդուլլան Ներիի խորհրդաժողովում (150, էջ 230)։

1880 թ. սեպտեմբերին Օբեյդուլլայի ջոկատները ներխուժեցին Իրան։ Արշավանքի նախօրյակին շեյխը հատուկ հրամանագիր (ֆերվա) հրապարակեց, որտեղ կարգադրում էր բոլոր քրդերին չկողոպտել ու չկոտորել հայերին ու ասորիներին, որ բոլոր քրիստոնյաները իրենց տների վրա կախեն կապույտ դրոշներ, որպեսզի արշավող բանակը նրանց չվնասի։ Սակայն, չնայած այս նախազգուշական միջոցներին, Օբեյդուլլայի արշավանքը Իրանում ուղեկցվեց տեղական քրիստոնյա (հայ, ասորի) և մահմեդական (պարսիկ, նստակյաց քրդեր) բնակչության ահավոր կոտորածներով ու կողոպուտով։

Թևև Սիմեոն Չիլինկիրյանը[17], որը Օբեյդուլլայի «բանակում» ստացել էր սարդարի (հրամանատարի) կոչում և մեծ լիազորություններ ուներ, աշխատում էր կանխել քրիստոնյաների կոտորածն ու կողոպուտը (114, 1906 թ., № 8, էջ 12—13), սակայն այդ երևույթը դարձել էր անդեկավարելի և այլևս անկարելի էր այն կանխել։

Ի վերջո Օբեյդուլլայի արշավանքը Իրան ավարտվեց կատարյալ ձախողմամբ։ Այդ շարժման անհաջողությունը ևս մեկ անգամ գալիս էր ապացուցելու, որ քրդերի կողմից ինքնուրույն պետականության ստեղծման, անկախություն ձեռք բերելու և միասնության ձգտումները դեռևս անիրականալի երազանքներ էին։ Մեկնաբանելով այդ հանգամանքը, Պ. Ի. Ավերյանովը գրում էր. «Քրդերի մոտ ազգային ինքնագիտակցություն գոյություն չունի. նրանց մոտ բացակայում է հայրենասիրությունը քրդական-ազգային իմաստով. առկա է միայն սերը ազատության նկատմամբ և կապվածությունը իրենց ցեղապետին և երկրի այն կտորին, որի վրա բնակվում է ցեղը։ Առանձին անձանց փորձերն անկախ քրդական պետություն ստեղծելու ուղղությամբ հաջողություն չեն ունեցել, մնալով որպես զուտ տեղական երևույթ և չեն ընդգրկել ամբողջ Քրդստանը։ Ազգային այն գաղափարները, հանուն որոնց գործել են Բադրխանը, Եզդանշիրը, Օբեյդուլլան և մյուս նշանավոր քրդերը, անզոր գտնվեցին ողջ քուրդ ժողովրդին ներգրավելու և բարձրացնելու համար» (150, էջ 292).

1880 թ. նոյեմբերին Օբեյդուլլայի ջոկատներն Իրանում հիմնականում արդեն ջախջախված էին։ Շահական կառավա-

ությունը Բ. Դռնից համառորեն պահանջում էր ձերբակալել և պատժել շեյխին։

Սակայն 1882 թ. օգոստոսին լուրեր տարածվեցին Կոստանդնուպոլսից շեյխի փախուստի մասին։ Նա վաճառականի հագուստով և կեղծ անցագրով նստեց ռուսական մի նավ և մեկնեց Փոթի, այնտեղից էլ Թիֆլիս, Երևան, Իգդիր, Բայազետ, Ալաշկերտ քաղաքներով հասավ Հաքյարի։

Փախուստից հետո Օբեյդուլլան պատվիրեց. «...իր մարդոց, որ հայոց հետ լավ վարվեն և թե քուրդերուն հայոց հետ թշնամաբար վարվիլը մինչև այժմ սխալ քաղաքականությամբ եղած է» (112, 1882 թ., № 216)։ Սա ցույց չի տալի՞ս արդյոք, որ «Օբեյդուլլան գուցե վերատին որոճում էր ազատ Քուրդիստանի համար պայքարի նոր, թերևս հայ-քրդական դաշնակցության և նման այլ մտահղացումներով շաղախված ծրագրեր...» (91, էջ 233)։

Այս տեսակետը հաստատում էր նաև հետևյալ փաստը. ապստամբության անհաջողությունից հետո Ալաշկերտի շեյխ Խալիֆին գրած նամակում Օբեյդուլլան նշում էր, որ ապստամբությունը նախապատրաստելիս ինքը հիմնական ուշադրությունը դարձնում էր քրդերի վրա, հույս ունենալով բացարձակապես նրանց օգնությամբ ստեղծել քրդական պետություն։ Մինչդեռ որոշ քրդական առաջնորդների կողմից թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ մեծապես վնաս հասցրեց շարժմանը։ «...Այնուամենայնիվ,— գրում էր Օբեյդուլլան,— ես ավելի շատ հավատում եմ հայերին, քան պարսիկներին և Թուրքերին։ Մեզ համար ավելի լավ է միավորվել հայերի հետ, քան պարսիկների և Թուրքերի, քանի որ պարսիկները մեզ ատում են, իսկ Թուրքը ցանկանում է մեզ վերածել իր քաղաքականության գործիքի»։ «Եղբայր իմ,— շարունակում էր շեյխը,— ես խնդրում եմ քեզ, որպեսզի դու դադարեցնես հայերի նկատմամբ հալածանքները և անբարյացակամ վերաբերմունքը։ Մենք քրդերս ապրում ենք հայերի մեջ, թող նրանք Թուրքական կառավարության նկատմամբ վերաբերվեն ինչպես ցանկանում են, բայց դու մի լսիր և մի հավատա ոչ ոքի, որովհետև վերջին փորձը համոզեց ինձ, որ մենք Թուրքերի ձեռքին խաղալիք ենք և ոչինչ ավելի» (260, 1880 թ., № 343։ 110, 1880 թ., № 98։ Ցիտված է ըստ 247, էջ 90—91)։

Օրեյդուլլայի փախուստից հետո նրա վարքագիծը, հատկապես նրա կապերը Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի հետ[18], համոզեց սուլթանին, որ Օրեյդուլլան այն մարդը չէ, որին կարելի է ցանկացած ձևով օգտագործել երկրի արևելքում իր քաղաքական կոմբինացիաների, հատկապես հայ ժողովրդի վրա ճնշում գործադրելու համար։

Այդ պատճառով մայրաքաղաքից բարձրագույն հրաման եկավ՝ ձերբակալել շեյխին և աքսորել Մեքքա՝ «թե ի պատիժ իր ծրագիրներու գործադրություն չը դնելուն և թե ի գոհունակություն արտաքին ազդեցություններու» (116, էջ 158)։

Սուլթան Աբդուլ Համիդ II-ը իրեն հատուկ դաժանությամբ և տմարդի վարվեց շեյխի հետ։ Նրա կանանոցը հանձնեց թուրք ասկյարների քմահաճույքին, իսկ շեյխին առանց շեյխական հագուստի աքսորեց։ 1883 թ. Օրեյդուլլան աքսորի ճանապարհին անսպասելի «վախճանվեց» սուլթանի գաղտնի գործակալների ձեռքով (112, 1882 թ. № 244)։ Այս ևս «անհնազանդների, խռովարարների, օրենքից դուրս հռչակվածների» (ֆերմանի) հետ հաշվեհարդար տեսնելու տիպիկ թուրքական ձևերից էր։ Այսպիսով, շեյխ Օրեյդուլլայի շարժումը ևս, նախորդ քրդական շարժումների նման ավարտվեց պարտությամբ։

«XIX դ. 30—80-ական թվականների քրդական շարժումների գլխավոր առանձնահատկությունն այն է,— գրում է Մ. Սաղարևը,— որ, չնայած իրենց մասսայականությանը և թափին, նրանք հիմնականում հանդիսանում էին ավատական շարժումներ թե՛ իրենց ղեկավարության և թե՛ վերջնական նպատակների առումով։ Ապստամբություններին մասնակցող ցեղերի շարքային անդամները ինքնուրույն կերպով հանդես չէին գալիս իրենց դասակարգային պահանջներով։ Իսկ ցեղային վերնախավը ձգտում էր ստեղծել անկախ իշխանություններ, որոնցում նա կկարողանար կառավարել միանգամայն ինքնուրույն կերպով և ոչ մեկի հետ չկիսելով իր եկամուտները, շահագործել քոչվոր և նստակյաց երկրագործ բնակչությանը (նշանակալից չափով քրիստոնյա)։ Այստեղից էլ և բխում են XIX դ. քրդական շարժումների բոլոր բացասական կողմերը, որոնք պայմանավորում են նրանց վերջնական ձախողումը. դրանցից են, օրինակ, ապստամբների անկայունությունը, նրանց պատրաստակամությունը բավարարվելու առաջին հաջողու-

թյուններով, ավատական վերնախավի հակումը դեպի կաշառքը, խոստումները, իշխանությունների և կապիտալիստական տերությունների գործակալության հետ համաձայնության գալը, կույր ֆանատիկոսությունն ու դաժանությունը, որը ոչ հազվադեպ դրսևորվում էր քրիստոնյա փոքրամասնությունների նկատմամբ և դժվարացնում հարստահարողների հանդեպ պայքարի միասնական ճակատի ստեղծումը։ Այս կամ այն չափով այդ թերությունները հատկանշական էին քրդերի բոլոր թվարկված ապստամբությունների համար։

Քրդական շարժումներն ըստ իրենց գաղափարախոսության, բնույթի ու շարժիչ ուժերի, նկատի առնելով այն ժամանակվա Քրդստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացման մակարդակը, դժվար թե կարելի է որակել որպես ազգային շարժումներ։ Դա չի կարելի ասել նույնիսկ Օբեյդուլլայի հանդես գալու մասին, թեև այդ ժամանակ դրված էր բոլոր քրդական ցեղերի դաշինքի և անկախ Քրդստան ստեղծելու հարցը» (274, էջ 142—143)։

Շեյխ Օբեյդուլլան ձգտում էր հայկական հարցի օրինակով քրդական խնդիրը ևս բարձրացնել միջազգային դիվանագիտության աստիճանի։ Դրա դրդապատճառը ոչ միայն անկախ Քրդստանի գաղափարի իրագործումն էր, այլև այն մտահոգությունը, որ հայկական հարցի լուծումից քրդերը կտուժեն։ Այսպիսով, Օբեյդուլլան աշխատում էր հայկական հարցին հակադրել քրդականը, չգիտակցելով, որ Արևմտյան Հայաստանում և Քրդստանում դրանք անխզելիորեն կապված են միմյանց հետ։

Դասակարգային սահմանափակվածությունը, ֆեոդալամիապետական նացիոնալիզմը, կրոնական ֆանատիկոսությունը, հողատեր-ավատատիրոջ իրենց շահերը թույլ չէին տալիս, որպեսզի Օբեյդուլլան և քրդական մյուս ղեկավարները գիտակցեն հայ, ասորի և մյուս ժողովուրդների հետ դաշինքի մեջ մտնելու անհրաժեշտությունը՝ ապահովելու համար այդ ժողովուրդների համատեղ ելույթը ատելի օսմանյան լծի դեմ։ Դա պատահական չէր, որովհետև իրականում Օբեյդուլլան, ինչպես և քրդական մյուս ղեկավարները, որոնք համարյա անընդհատ ապստամբում էին օսմանյան կառավարության դեմ, հետապնդում էին լոկ նեղ դասակարգային շահեր։ Չպետք է մոռանալ, որ Արևմտյան Հայաստանի և Քրդստանի մեծագույն մասում տեղական բնակչությունից հարկերը գանձում էին ոչ թե

Թուրքական վարչության, այլ նահանգական իշխանությունների կողմից նշանակված կապալառու-վարձակալները։ Որպես կանոն, այդ դերում հանդես էին գալիս քրդական շեյխերը, ցեղային առաջնորդները և այլք, այլ կերպ ասած՝ քրդական ֆեոդալական դասակարգի ներկայացուցիչները։ Պարտավորվելով հավաքած հարկերից սուլթանական գանձարան մուծել որոշակի գումար, նրանք կողոպտում էին «իրենց» գյուղացիներին, նրանցից վերցնելով ոչ միայն օրենքով սահմանված չափով, այլև այնքան, որքան իրենք էին ցանկանում։ Շատ հաճախ այդ կապալառու-վարձակալներն ամբողջապես յուրացնելով հարկերից ստացվող գումարը, հրաժարվում էին սուլթանին հատկացնել նրա բաժինը։ Որպես կանոն, այդպիսի դեպքերում նրանք «ապստամբում» էին կառավարության դեմ, փորձելով այդ շարժումները ներկայացնել որպես «ազատագրական», որպես անկախություն ձեռք բերելու, քրդական բեյլիք ստեղծելու համար մղվող պայքար և այլն։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանի և Քրդստանի նահանգների մի զգալի մասում քուրդ գյուղացիությունը պետության կողմից կողոպտվում էր ոչ թե անմիջականորեն, այլ տեղական քրդական ավատական վերնախավի կողմից։ Հետևաբար, քրդական գյուղացիական զանգվածների շարժումները կրում էին ոչ թե ազգային, այլ հակաֆեոդալական բնույթ։ Սակայն, քանի որ ֆեոդալներն աշխատում էին իրենցից վանել այդ շարժումները և այն ուղղել կառավարության դեմ, որի հետ իրենք ևս գտնվում էին կոնֆլիկտի մեջ «իրենց» գյուղացիությունից կողոպտված արդյունքները նրա հետ չկիսելու պատճառով, հետևաբար հենց նրանք էլ հանդես էին գալիս «ազգային ձգտումների» կրողի դերում։

Առհասարակ XIX դարի կեսերից սկսած ֆեոդալական անջատողականությունը քրդական իրականության մեջ հիմնականում ֆեոդալամիապետական ազգայնականության միտումներ ուներ։

Այդ նույն կերպ շեյխ Օբեյդուլլան և քրդական մյուս ֆեոդալները փորձում էին իրենց նկատմամբ ժողովրդի մոտ կուտակված դժգոհությունը շեղել դեպի սուլթանական կառավարության և թուրքական վարչության կողմը, պրոպագանդելով այն միտքը, որ հենց նրանք են քրդերի սոցիալական ծանր վիճակի պատճառը և որ անկախ քրդական պետության ստեղ-

ծումը միակ երաշխիքն է քուրդ ընչազուրկ տարրի բարեկեցության համար։

Այսպիսով, XIX դարի 50—80-ական թվականների քրդական շարժումները հիմնականում ֆեոդալական շարժումներ էին թե՛ դրանք ծնող պատճառներով և թե՛ վերջնական նպատակներով։

Շեյխ Օբեյդուլլայի շարժման ձախողումից հետո սուլթանական կառավարությունը քրդերի նկատմամբ իր որդեգրած քաղաքականության մեջ էական փոփոխություններ չմտցրեց։ Սակայն նկատի առնելով նրանց շրջանում առկա տրամադրությունները, նա ավելի լայնորեն սկսեց օգտագործել խուսանավելու գործելակերպը։

Այսպես, կառավարությունը ծրագրեց Բաշկալեում և մի շարք այլ վայրերում քրդերի համար բացել «մահմեդական դպրոցներ»՝ նրանց ֆանատիկոսության թույնով ներարկելու, օսմանյան «հայրենիքին» հավատարմության գաղափարներ ներշնչելու և քրդությանը հանուն Թուրքիայի պանիսլամիստական նպատակներին ծառայեցնելու համար։

80-ական թվականներին Աբդուլ Համիդը «համախմբում էր քրդական շեյխերին պանիսլամիզմի, խալիֆայության շուրջը։ Նպատակն էր նրանց օտարացնել ազգային ինքնուրույնության գաղափարին և համախմբել իսլամի շուրջը» (77, էջ 409)։ Միաժամանակ կառավարության կողմից առաջ քաշվեցին մի շարք ցեղապետեր, որոնք կոչված էին հնազանդության մեջ պահելու իրենց ցեղակիցներին և կանխելու քրդերի հակակառավարական ելույթները։ Սուլթանի կողմից, օրինակ, Հաքյարիի «համայն քրդերի առաջնորդ» նշանակվեց Օբեյդուլլայի ազգականներից մեկը՝ շեյխ Նուրուլլան, որն այդ շնորհին արժանանալու դիմաց պարտավոր էր հլու-հնազանդ ծառայել կառավարությանը։

Մյուս կողմից Բ. Դուռը սկսեց ավելի հետևողականորեն քրդական տարբեր ցեղերի միջև երկպառակություններ և թշնամանք բորբոքել։ Այսպես, 1884 թ. Մուշի մութեսարիֆը գժտեցրեց հիշյալ սանջակի երկու խոշոր՝ հասանանլի և ջիբրան ցեղերին, միտումնավոր առաջին ցեղի մի քրդի նշանակելով ջիբրան աշիրեթի մյուդիրի պաշտոնում։ Այդ միջադեպը երկու ցեղերի միջև կատաղի զինված ընդհարում առաջ բերեց, որի հետևանքով երկուստեք մարդկային և նյութական խոշոր կորուստներ եղան։

Շատ հաճախ անհնազանդ քրդական ցեղերին խաղաղեցնելու նպատակով բանակի և ոստիկանության հետ մեկտեղ կառավարությունն օգտագործում էր էթնիկական այլ տարրերի՝ չեչենների, լեզգիների, օսերի և այլ լեռնական ժողովուրդների (269, էջ 80—81)։

Սակայն նախկինի պես կառավարության քաղաքականության անկյունաքարը հայ-քրդական հարաբերությունների սրումն էր, որովհետև թուրքական քաղաքական գործիչներից շատերի մոտ համոզմունք էր դարձել այն մտայնությունը, որ «Հայ-քրդական դաշնակցությունը կարող է իրենցից խլել Ասիան» (112, 1882 թ. № 11)։

Արևմտահայ գործիչները նախկինի պես անվհատ շարունակում էին հայ-քրդական հարաբերությունների կնճռոտ հարցն ինչ-որ ճանապարհով լուծելու ուղիներ որոնել։ Ընդ որում, այս փուլում նրանցից ավելի շատերն էին տարբերում քրդական ավատատերերին քուրդ ժողովրդից։ Նրանց կարծիքով հայ-քրդական հարաբերությունների սրման պատճառը ֆեոդալիզմն էր։ Նրանք գտնում էին, որ բավական է այն վերացնել, անմիջապես կվերանան նաև երկու հարևան ժողովուրդների հակամարտության պատճառները։

Այդ գործիչների շրջանում կրկին վերելք ապրեց քրդերի մեջ լուսավորություն տարածելու շարժումը, որն այդ ճանապարհով պետք է թուլացներ ավատատերերի ու հոգևորականության ազդեցությունը, խաթարեր թուրքերի կողմից նրանց շրջանում մահմեդական ֆանատիկոսության քարոզչությունն ու հայերի նկատմամբ ատելության պրոպագանդումը, ավելի գիտակից դարձներ և ներգրավեր ընդհանուր հակաթուրքական պայքարի մեջ։ Խնդիր էր դրվում նաև բացատրել քրդերին, որ նրանք ազգային-ռասայական տեսակետից տարբերվում են թուրքերից։

Հայ մտավորականության այդ ներկայացուցիչները գտնում էին նաև, որ հայերը ոչ թե պետք է զենքով կռիվ մղեն քրդերի դեմ, այլ նրանց վրա ներգործեն կուլտուրական միջոցներով, որ միայն այդ ճանապարհով է հնարավոր կանխել քրդերի՝ թուրքական կառավարության ձեռքում հակահայ գործիք դառնալու վտանգը։ Այդ գործիչները գիտակցում էին, որ Արևմտյան Հայաստանում հայերի և քրդերի անջատումն ան-

կարելի է, ուստի պետք է ջանալ նրանց մերձեցնել կենցաղով, մշակույթով, և համադրելով նրանց շահերը՝ միացյալ ուժերով դիմագրավել օսմանյան բռնատիրական լծին։ Նրանք համոզված էին, որ Թուրքական արհավիրքին դիմագրավելու միակ ճանապարհը հայերի ու քրդերի միավորումն է, հակառակ դեպքում վաղ թե ուշ երկու ժողովուրդներն էլ օսմանյան պետության զոհը կդառնան։ Ի դեպ, այս տեսակետի համոզված կողմնակիցն էր նաև Մկրտիչ Խրիմյանը (32, էջ 212)։

«Մշակը» ևս գտնում էր, որ Արևմտյան Հայաստանի ազատագրության խնդիրն անմիջականորեն կապված է հայ և քուրդ ժողովուրդների համատեղ պայքարի հետ։ «Հայաստանի թե՛ հայ, թե՛ տորի, և թե՛ քուրդ ազգաբնակչությունները,— գրում էր Գրիգոր Արծրունին,— վերջապես սկսում են հասկանալ, թե բոլորն էլ հայաստանցի են, թե բոլորի շահերը նույնն են, թե ճնշումը, որ նրանց վրա գործում է Թուրքիան, հավասարապես ամենքի վրա է ծանրանում, թե լինելու ինքնավարությունը հավասարապես Հայաստանի բոլոր բնակիչներին նոր կյանք պետք է շնորհի» (112, 1880 թ. № 62)։

1880-ական թվականներին Արևմտյան Հայաստանի տարբեր գավառներում հայ գործիչները մի շարք ընկերություններ կազմակերպեցին, որոնք իրենց առջև խնդիր էին դրել դպրոցներ բացել քուրդ երեխաների համար։ Դրանցից հիշատակության արժանի են, օրինակ, Դիարբեքիրի նահանգում «Դպրոցական արևելյան» և «Խիզանի» ընկերությունները, որոնց ջանքերով քրդական դպրոցներ բացվեցին Մուշի, Բիթլիսի և Ալաշկերտի շրջաններում (119, էջ 15—16)։ «Ազգանվեր հայուհեաց» ընկերությունը Քղի քաղաքում մի դպրոց բացեց, որտեղ ուսանելու համար դիմել էին ավելի քան 100 քրդուհիներ (112, 1880 թ. № 211)։ Այնուհետև Կոստանդնուպոլսում կազմվեցին կրթական ընկերություններ, որոնց նպատակն էր քրդաբնակ վայրերում հայերեն լեզվով դպրոցներ բացելը։ Դրանցից հատկապես աչքի էր ընկնում «Դպրոցասիրաց ընկերությունը», որի նպատակն էր մասնավորապես Խիզանի և Սղերդի քուրդ բնակչության շրջանում լուսավորություն տարածել (47, էջ 113)։

Այն ջանքերը, որոնք հայ իրականության մեջ գործադրվել են նշված ուղղությամբ, դժբախտաբար փաստերի պատճառով մնում են աղոտ։ Սակայն մի բան ակնհայտ է, որ «...ոչ մի ազգ քուրդ ժողովրդի լուսավորության ասպարեզում այնքան

գործ չի կատարել, այդ ուղղությամբ այնքան չի մտահոգվել, որքան հայ ժողովուրդը» (119, էջ 18)։

Քրդերի շրջանում հայ գործիչների կատարած լուսավորչական աշխատանքը գնահատելիս պետք է նկատի ունենալ այն հանգամանքը, որ ընդհուպ մինչև XX դարի սկիզբը Մերձավոր արևելքի քրդաբնակ ողջ տարածքում գոյություն չուներ և ոչ մի քրդական դպրոց, լույս չէին տեսնում քրդերեն գրքեր, պարբերականներ և այլն։

Ճիշտ է, XIX դարի 80-ական թվականներին հայ իրականության մեջ եղան մարդիկ, որոնք գտնում էին, որ «քրդին պետք է պատժել, որ քրդի հետ չի կարելի այլ լեզու բանեցնել», սակայն այս մտայնությունը բնորոշ էր շատ քչերին։ Որոշ տարածում ուներ նաև այն տեսակետը, որ շարիքից փրկվելու համար պետք է քրդերի շրջանում քրիստոնեություն տարածել։ Այսպես, «Մշակը» գրում էր. «Վաղուց է արդեն, որ հայերը կարող էին իրենց դպրոցների մեջ ասորի, քուրդ, եզիդի և այլ ցեղերի զավակներին ընդունել, ազդել նրանց վրա բարոյապես, տարածել քրիստոնեությունը մահմեդական փոքրիկ ցեղերի մեջ...» (112, 1880 թ., № 162)։

«Հայերը և քրդերը» հոդվածում Գր. Արծրունին այդ հարցը դնում է ավելի շեշտված ձևով. «...հայերը դարձյալ ոչինչ ջանք չեն անում քրիստոնեությունը և քաղաքակրթությունը տարածելու իրանց ճնշողների մեջ, որպեսզի քաղաքակրթեն նրանց, մեղմացնեն նրանց բարքն ու վարքը և, այսպիսով, ապագայում ապահովացնեն իրանց սեփական խաղաղ գոյությունը...» «Հայոց ազգությունը,— շարունակում է նա,— անընդունակ հանդիսացավ հայացնել քուրդ բարբարոս ավազակներին» (112, 1880 թ., № 184)։

Սակայն քրդերի շրջանում քրիստոնեությունը տարածելու այս առաջարկները, ինչպես և պետք էր սպասել, թերթային հոդվածներից այն կողմ չանցան։ Իրավացի չէ Լեոն, երբ գրում է. «Բայց ցավն այն էր, որ հայ ազգայնականները հայ-քրդական բարեկամությունն այն մտքով չէին հասկանում, թե երկու դարավոր դրացի ազգերը համահավասար անդամներ պիտի լինեն այն մերձեցման մեջ, թե պիտի հարգվեն ազգային առանձնահատուկ արժեքները։ Ո՛չ, քրդերին ենթարկում էին հայկական կուլտուրային՝ նրանց այս միջոցով ապազգայնացնելու, հայերի հետ ձուլելու համար» (67, էջ 36)։ Համենայն

դեպս նրա այս թեզը՝ որը կազմում է հայ ժողովրդի պատմության հարցերի նկատմամբ Լեոյի որոշ նիհիլիստական տեսակետների բաղկացուցիչ մասը, չի ապացուցվում համապատասխան փաստարկումներով։

Քուրդ ժողովրդին լուսավորելու, այդ ճանապարհով քաղաքականապես ավելի հասուն դարձնելու և սուլթանական բռնակալության դեմ պայքարի հանելու հայ գործիչների փորձերը հենց սկզբից դատապարտված էին ձախողման։ Որքան էլ որ ջանք ու եռանդ գործադրեին, հայ գործիչներն ի վիճակի չէին քուրդ ժողովրդին բարձրացնել մինչև ավատական կարգերի դեմ ապստամբության անհրաժեշտության գիտակցման մակարդակի։ Եթե արևմտահայության քաղաքական ձգտումները, որոնք հետևանք էին արդեն ձևավորված և դեպի հետագա զարգացում գնացող հայ բուրժուազիայի առկայության, և որոնց պատճառով հայկական շարժումը ազգային-բուրժուական շարժման բնույթ էր կրում ընդդեմ ֆեոդալական միահեծանության, ապա քրդերի մոտ դեռ բացակայում էին այդ գաղափարները։

Նշված ժամանակաշրջանում եղան նաև հայ գործիչներ, որոնք ամբողջապես իրենց նվիրեցին հայ-քրդական լարված հարաբերությունների մեղմացմանը։ Դրանցից էր, օրինակ, Մշո դաշտի Հակոբ Սարկավագը, որը շեյխի տարազ հագնելով բազմիցս այցելել է քրդական շրջանները, քարոզելով հայ-քրդական եղբայրություն (127, էջ 266)։ Նա պնդում էր, որ Կուկունյանի «արշավանքը» ոչ մի դրական հետևանք չի կարող ունենալ հայ ժողովրդի համար։ Դա Կուկունյանի և նրա համախոհների կողմից դիտվեց իբրև դավաճանություն, և նա ու իր «մարդիկ» դավադրաբար սպանեցին Հակոբ սարկավագին և «կորցրեցին» նրա դիակը (127, էջ 420)։

Այսպիսով, հայ-քրդական մերձեցման ճանապարհին գոյություն ունեցած բազում դժվարություններին ու արգելքներին ավելանում էր նաև որոշ հայ գործիչների նեղմիտ մտայնությունը։

Եվ այսպես, հայ-քրդական հարաբերությունների վերաբերյալ հայ իրականության մեջ իրար էին բախվում երկու հակընդդեմ տրամաբանություններ։

Անտարակույս նեղ, այլամերժ գիծը բացասական դեր է խաղացել երկու հարևան ժողովուրդների միջև հարաբերությունների նորմալացման և թուրքական լծի դեմ մեկ ընդհա-

նուր ճակատ կազմելու գործում։ Ա. Ալպոյաճյանը իրավացիորեն նկատում է. «Հայ և քուրդ ժողովուրդներու միջև եթե հասկացողություն մը ստեղծված ըլլար, թե մեր և թե անոնց ճակատագիրը տարբեր հանգամանք կը ստանար» (48, Ա. Ալպոյաճյանի գրած ներածությունը, էջ VIII)։

Անշուշտ քուրդ ժողովրդի մեջ ևս կային մարդիկ, որոնք գիտակցում էին, որ սուլթանական կառավարությունն է երկու հարևան ժողովուրդների միջև թշնամանք բորբոքողը։ Դրա ապացույցն է նաև քրդական հարուստ ժողովրդական բանահյուսությունը, որտեղ բազմիցս արծարծվում է այդ միտքը։ Այդ մասին հետաքրքիր տվյալներ է բերում նաև Ա. Թոխմախյանը, որի հետ զրույցի ժամանակ հայտնի ցեղապետ Հուսեին աղան հայտարարում է. «Քրդերը շարագործ ձեռքերում միմիայն գործիքներ են. կտրեցեք այդ ձեռները և քրդերը կը մնան հայերի մշտնջենավոր բարեկամները» (59, էջ 52)։

Շարունակելով զարգացնել իր միտքը, Հուսեին աղան հայտնում է այն կարծիքը, որ հայկական հարցը լուծելու համար հայերը չպետք է եվրոպական տերություններից «ողորմություն հայցեն», որովհետև «եվրոպական տէրութեանց վրայ յույս դնելու համար ևս դարձեալ ոյժ է հարկաւոր։ Իմ կարծեօքս, նա միայն իրաւունք ունի յոյս դնել օտար ույժի վերայ, երբ ինքն էլ ույժ ունի։ Փոխատվութեան դրամագլուխը հաւատում են ոչ թե անձնաւորութեան, այլ նորա ստացուածքին կարողութեան»։ «Խելքս բոլորովին չէ հասնում,— շարունակում է նա,— թէ առանց արիւնի և զէնքի գործ առաջ գնայ, յաղթութիւն լինի»։ Նա գտնում է, որ «հայերը իւրեանց յոյսը պիտի դնէին գլխաւորապէս իւրեանց վերայ և հետեւաբար քրդերի և ասորիների վերայ. դա մի բնական դաշնակցութիւն է, որովհետև հայոց խնդիրը միևնույն քրդերի և ասորիների խնդիրն է, որքան որ հայերը քրդերի և ասորիների զարգացման համար աշխատեն, այնքան էլ իւրեանց գործին կօգնեն» (59, էջ 55—57)։

Քրդերի և ասորիների շրջանում ուսումնարաններ բաց անելը Հուսեին աղան համարում էր ուղղակի հայերի պարտականությունը (59, էջ 57)։

Սակայն դժբախտաբար այս կերպ մտածող քուրդ ֆեոդալների թիվը մեծ չէր։ Դժբախտությունն այն էր, որ քրդերը դեռ չունեին մամուլ, հրատարակություններ և այլն, և այս կամ այն

անհատի տեսակետները չէին կարող դառնալ հանրության սեփականություն։ Մյուս կողմից՝ քրդական զանգվածների ծայրահեղ հետամնացությունը, նրա կրոնական նախապաշարմունքները, թուրքերի կողմից բորբոքվող ազգային և կրոնական մոլեռանդությունը, ցեղային աշիրեթական կարգերի առկայությունը և այլ գործոններ թույլ չէին տալիս, որ քուրդ ժողովուրդը հասկանա, թե ինչ նպատակներ է հետապնդում օսմանյան կառավարությունը, թշնամանք սերմանելով հայ և քուրդ ժողովուրդների միջև և ինչ հետևանքներ կունենա այդ քաղաքականությունը երկու դրացի ժողովուրդների պատմական ճակատագրի համար։

XIX դարի 80-ական թվականներին այդ դրությունից փրկություն գտնելու հույսով արևմտահայությունը հայցում էր եվրոպական պետությունների պաշտպանությունը, հատկապես խանդավառ հույսեր կապելով բարենորոգումների հետ։ Սակայն, դրա հետ միաժամանակ գնալով ավելի մեծ թիվ էին կազմում ժողովրդի ծոցից դուրս եկած մարդիկ, որոնք գտնում էին, որ օսմանյան կառավարության հայահալած քաղաքականությանը դիմագրավելու միակ ճանապարհը զինված ինքնապաշտպանությունն է, որն Արևմտյան Հայաստանում բալկանյան երկրների օրինակով ընդունեց հայդուկային, ֆիդայական կռիվների բնույթ։

Ինքնապաշտպանության այդ ձևը թեև անխուսափելիորեն սրելու էր հայ-քրդական հակամարտությունը, սակայն ստեղծված իրադրության պայմաններում դա թուրքական բռնատիրության դեմ պայքարելու միակ միջոցն էր։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՆՈՐ ՓՈՒԼԸ ԵՎ ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XIX Դ. ՎԵՐՋԻՆ ԵՎ XX Դ. ՍԿԶԲԻՆ

XIX դ. 80-ական թվականներին Թուրքական կառավարությունը էլ ավելի ուժեղացրեց արևմտահայության սոցիալական և ազգային ճնշումը։ Այդ քաղաքականության իրագործման ձևերը բազմաթիվ էին, որոնցից մեկն էր նաև հայերի ունեզրկումը հողային հափշտակումների ճանապարհով։ Թուրքական վարչության հետ միաժամանակ այդ խնդիրը, սուլթան Աբդուլ Համիդի մտահղացմամբ, իրագործելու էր նաև քրդական ավատական վերնախավը։ Կառավարությունը երաշխավորում էր, որ հայերի հողերն ու ունեցվածքը բռնագրավելու և նրանց հալածանքների ենթարկելու համար քրդական բեկերը, աղաները և այլն ոչ մի պատիժ չեն կրի։ Իշխանությունների հորդորներով քրդական բազմաթիվ աշիրեթներ զանգվածորեն լեռներից սկսեցին իջնել դաշտավայրերը և հաստատվել հայկական գյուղերում։ Հայերին պատկանող հողերը, արոտատեղիները և այլն հետզհետե անցնում էին քուրդ ավատատերերի ձեռքը։ «Թափու դայիրեսի» հողային վարչությունը կառավարությունից հրահանգ ուներ՝ ամեն կերպ աջակցել քրդական ավատատերերին հայ գյուղացիության հողերը սեփականացնելու գործում։ Մայրաքաղաքից Արևմտյան Հայաստան եկած Թուրք պաշտոնյաներից մեկը խոստովանում էր, որ այդ գործը կատարված է «Կոստանդնուպոլսե եկած հրամաններու համեմատ» (85, 1890 թ., 1—15 դեկտեմբերի)։

Վրթանես Փափազյանը, որը 1887 թ. այցելել էր Արևմտյան Հայաստան, այնտեղից գրում էր. «Ամբողջ Վասպուրականի հողերի 3/4 մասը պատկանում է... տաճիկների և քուրդ

աղաների, որոնց մշակող մարաբաներն են գյուղի բնակիչները այն պայմանով, որ բերքի տասանորդը կառավարության տալուց հետո՝ մնացյալը կիսվի տիրոջ և մարաբայի մեջ։

Սակայն պիտի տեսնել, թե ինչպես հողատերը անդադար խմբերով գալիս է իր մարաբայի տունը իջնում, ուտում, խմում, տանում, ընծաների խոստումներ առնում... Վա՜յ այն մարաբային, որ չտա իր քուրդ հողատիրոջ ուզածը» (142, էջ 422)։ Արևմտյան Հայաստանում հարստահարությունները, բռնությունները, կամայական հարկադանձումները հասել էին աննախընթաց չափերի։ «Գավառներում կառավարությունը սանձից արձակել էր քրդերին, իսկ հայերին դրել էր օրենքից դուրս, անտանելի վիճակի մեջ» (67, էջ 55)։

Նկարագրելով արևմտահայության վիճակը, Լոնդոնում հրատարակվող «Հայաստան» հանդեսը գրում էր. «Այն պահուն, ուր Ափրիկեի գերեվաճառության ջնջման խնդիրն ընդհանուր ուշադրության առարկա եղած է, անկարելի է ուշադրություն չհրավիրել Հայաստանի տառապանքներուն վրա, ուր գերություն ամեն օր ի գործ կը դրվի ի վնաս քրիստոնյա ժողովրդի մը՝ մահմետական պեյերու և աղաներու ձեռքով» (85, 1889 թ., 1—15 մայիսի)։

80-ական թթ. երկրորդ կեսին հայ գյուղացիների նկատմամբ իր չարագործություններով հատկապես հայտնի էր քուրդ ցեղապետ Մուսա բեյը՝ Մշո դաշտի «ժանտախտը»։ Նրա քստրմների «գործերը» աղմկալի հռչակ էին ստացել, նույնիսկ գրավելով եվրոպական տերությունների ուշադրությունը։

Բ. Դուռը ստիպված էր Մուսա բեյին ձերբակալել և դատի տալ։ Հենց մայրաքաղաքում տեղի ունեցած այդ դատը իրականում դատաստանական խեղկատակություն էր, որովհետև դատից առաջ սուլթանը անգլիական դեսպանին հայտարարել էր, թե Մուսա բեյն անմեղ է։ Իսկ Աբդուլ Համիդի լիազորը աշխատում էր համոզել Կոստանդնուպոլսում ռուսական դեսպանին, թե հայերը սուլթանի մյուս հպատակների հետ օգտվում են նույն իրավունքներից և լիակատար իրավահավասար հպատակներ են, թե ամենահարուստ դրամատերի տերերը և բարձրագույն աստիճանավորներից շատերը հայեր են, և թե սուլթանը նրանցից միշտ ջերմագին շնորհակալական հեռագրեր է ստանում, և թե հայերի իրավազրկության և քրդերի չարագործությունների մասին լուրերը խիստ չափազանցված են, և

մայրաքաղաք կանչված Մուսա բեյին որևէ խնդրով հնարավոր չէ մեղադրել (32, էջ 61)։

Համիդյան արդարադատությունը, այսպիսով, անմեղ հռչակեց Մուսա բեյին և ազատ արձակեց։ Այդ դատից հետո «Եվրոպայի ընդհանուր կարծիքն էր, թե... հայերն այլևս ոչինչ սպասելիք չեն կարող ունենալ Թուրք կառավարությունից, որ նրանք օրենքից դուրս են դրված» (67, էջ 57)։

Նույնիսկ գերմանական մամուլը, որն աչքի էր ընկնում իր Թուրքապաշտպան դիրքով, հավանություն չտվեց սուլթանի այդ քայլին, գտնելով, որ Մուսա բեյի անպարտ արձակումը քաղաքական մեծ հետևանքներ կունենա, նախ, որ Գլադստոնի կառավարությունը առիթը չի կորցնի այդ միջադեպը իր շահերի օգտին ծառայեցնելու համար և ապա՝ դա ջուր կլցնի Ռուսաստանի ջրաղացին։ «Երբ հայ ժողովուրդն Թուրքիո կողմանե արդարության և իրավանց ամենայն հույսն կորսնցնելու ըլլա և իր խիղճն վրեժխնդրություն աղաղակելու ըլլա, այն ատեն Ռուսիո ծոցը ինքը զինքը ձգե պիտի զձարն յուր ազատարարն կոչելով»,— գրում էր գերմանական Թերթերից մեկը (85, 1890 Թ. հունվարի 1—15)։ Նրան արձագանքելով Ֆրանկֆուրտում հրատարակվող մեկ այլ Թերթ գրում էր. «Ոչ ոք պետք է զարմանա, եթե հայք արդարությունն այնչափ ի զորու փնտրելն հետո, ուրիշ տեղ դիմեն իրենց օգնություն և պաշտպանություն խնդրելու համար» (85, 1890 Թ. հունվարի 1—15)։

Եվրոպայի միջամտությունը Մուսա բեյի դատին սուլթանին էլ ավելի գրգռեց հայերի դեմ։ Կառավարությունը նրանց ներկայացնում էր որպես «դավաճան», «օտարներին ծախված ազգ» և այլն։ Թուրքիայում Ռուսաստանի ռազմական գործակալներից մեկը տեղեկացնում էր իր ղեկավարությանը, որ Թուրքական կառավարության կողմից մշակվել է մի մանրազնին ծրագիր, ըստ որի նախատեսվում է հայ ժողովրդին զրկել օրենքի հովանավորությունից, նրան հասցնել այնպիսի տնտեսական հյուծվածության, որը ստիպեր նրանց փախչել հայրենիքից, պարբերաբար կազմակերպել հայերի զանգվածային ջարդեր, գյուղացիներին դարձնել հողազուրկ՝ նրանց հողերի բռնի զավթման ճանապարհով և այլն (338)։

Այս քաղաքականության մյուս երեսը լինելու էր քրդական ավատատերերին այդ ծրագրի իրագործմանը մասնակից դարձնելը։

Օսմանյան կառավարության և քրդական ավատատերերի բռնություններից պաշտպանվելու և նրանց կամայականություններին դիմադրավելու համար մի շարք շրջաններում (Վան, Մուշ, Սասուն, Խնուս, Բուլանըխ-Մանազկերտ և այլն) սկսվեցին հայ գյուղացիության ինքնաբուխ, տարերային ինքնապաշտպանական կռիվներ։ Շատ հաճախ հայկական զինված խմբերը պաշտպանում էին նաև ռայա քրդերին։ «Այդ իսկ պատճառով,— գրում է Բաֆֆին,— քրդերից շատերը միացած են հայերի հետ և ավելի բարվոք են համարում կռվել ընդհանուր թշնամու դեմ, քան թե վնասել հայերին, որոնցից միշտ օգնություն և հավատարմություն են վայելած» (139, էջ 126)։

1881 թ. Էրզրումում կազմակերպվեց «Պաշտպան հայրենյաց» գաղտնի ընկերությունը, որն իր առջև խնդիր էր դրել պայքարել թուրք հարստահարիչների, ինչպես նաև քրդական բեկերի ու չերքեզ ֆեոդալների բռնությունների դեմ, օգտագործելով պայքարի հայդուկային-հեղափոխական եղանակները (91)։ Շատերին էր համակում այն համոզմունքը, որ անպատիժ բռնությունների և սանձարձակ անիշխանության դեմ թըղթե բողոքն անզոր է, պետք է դիմել զենքի։

Այս շրջանում հայ ազատագրական մտքի ու ոգորումների վրա հսկայական ներգործություն ունեցավ բուլղար ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը և անկախության ձեռք բերումը։ Շփվելով Անատոլիա աքսորված բուլղար հեղափոխականների հետ, հայ ժողովրդի մոտ ավելի ու ավելի էր ամրապընդվում այն գաղափարը, որ օսմանյան լծից ազատագրումը հնարավոր է միայն զենքի միջոցով։

Կառավարությունը ենթադրում էր, թե ըմբոստության այդ ոգին հրահրվում ու գալիս է դրսից, հատկապես Ռուսաստանից՝ կովկասահայության միջոցով։

Մինչդեռ արևմտահայության ազգային-ազատագրական շարժումը միանգամայն ինքնաբուխ էր և դրսից ներմուծված գաղափարների արդյունք չէր։ «Հայ բնակչության ծանր վիճակը,— գրում էր ռուս զինվորական Ռ. Ի. Տերմենը,— մշտական ճնշումը, որի տակ նա գտնվում է, իրավազրկությունը, հայերի նկատմամբ թուրքական կառավարության գործադրած անարդարությունները հայկական հասարակությանը նախապատրաստեցին հեղափոխական գաղափարների ընկալմանը։ Ամենուրեք ձևավորվում էին դժգոհ տարրեր, որոնց շրջանում արտասահ-

մանից եկած հեղափոխականները գտնում էին կենդանի արձագանք» (325, էջ 75)։ Բաֆֆին նշում էր, որ «բռնակալը ինքն է պատրաստում իր համար թշնամիներ... Եթե Թուրքը այսպես չվարվեր մեզ հետ, մենք մինչև անգամ կսիրեինք նրան, թող նա մեր մեջից և արյունից լիներ» (137, էջ 254)։

Գրիգոր Զոհրապը գրում էր, որ «տաճիկ կառավարությունն առաջին անգամ հայերուն վրա չէ, որ ի գործ դրավ շարդի քաղաքականությունը, այլ հելլեններուն, սերբերուն, բոսնիակներուն, բուլղարներուն համար ալ ըրավ նույնը... Այս պատմական փաստը չգիտնալ, կնշանակե կոտորածները հայ հեղափոխական շարժումներուն վերագրել» (4, 1910 թ., № 205)։

XIX դարի վերջին քառորդին հայ ժողովրդի ազատագրական շարժումները Թուրքական լծի դեմ ժողովրդական, հեղափոխական-դեմոկրատական շարժումներ էին, որոնց հիմնական շարժիչ ուժը գյուղացիությունն էր։ Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի նպատակն էր տարբեր ազգությունների բնական ձգտումը՝ «պոկվել ամբողջությունից և անկախ գոյությամբ բնազդաբար որոնել սոցիալական ավելի բարձր զարգացման ուղի» (99, էջ 55)։ Ընդ որում, եվրոպական տերությունների միջամտությունը հայկական հարցին, անկախ այդ տերությունների հետապնդած իմպերիալիստական նպատակներից, է՛լ ավելի էր խթանում հայ ազգային-ազատագրական շարժումը, որովհետև «...դիվանագիտությունը տվյալ դեպքում մի վառվող տաշեղ է նետում դարերի անարդարությունից և շահագործումից լեռան չափ դիզված բոցավառ նյութի մեջ» (99, էջ 55)։

Արևմտյան Հայաստանում հայ ազգային-ազատագրական շարժումները առաջ եկան ոչ թե ազգային կուսակցությունների հրապարակ գալու հետևանքով, ինչպես պնդում են պատմության Թուրք կեղծարարները, այլ ընդհակառակը, այդ կուսակցությունները կազմվեցին հիշյալ շարժումների հետևանքով։

Սուլթանական կառավարությունն անշուշտ գիտակցում էր, որ հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումները միանգամայն համընկնում են կայսրության մյուս ճնշված ժողովուրդների (այդ թվում նաև քուրդ, ասորի և այլն) պայքարի հետ՝ նույն բռնատիրության և Թուրքական ավատական վարչակարգի դեմ։ Այդ պատճառով նա երկյուղ ուներ, որ որոշակի

պայմաններում հայ և քուրդ ժողովուրդների միջև կարող են ստեղծվել համագործակցության եզրեր։

Հատկապես հայ ազգային կուսակցությունների երևան գալուց հետո սուլթան Աբդուլ Համիդ II-ի և նրա կառավարության համար ուղղակի մղձավանջ դարձավ երկրի արևելքում հայերի, քրդերի և ասորիների միավորման և գահի դեմ համատեղ ապստամբություն բարձրացնելու գաղափարը։ Այդ երկյուղների համար իրական հիմքեր կային, որովհետև թուրքական կառավարությանը հայտնի էր նորաստեղծ հայկական քաղաքական կուսակցությունների ծրագրերն Արևմտյան Հայաստանում բնակվող մյուս ժողովուրդների նկատմամբ։ Այսպես, հնչակյան կուսակցության ծրագրում ասվում էր, որ անհրաժեշտ է «վաստակել հայ ժողովրդին վիճակակից, Հայաստանի այն բնակիչների, որպիսիք են ասորիները, քրդերը, համակրությունը դեպի հեղափոխական գործը և նրանց աջակցությունն այդ գործում, որը միաժամանակ հայտնվում է նաև նրանց, իբրև նույն բրոնակալության տակ ճնշված ժողովրդի, ազատության գործը»։ Հնչակյան կուսակցության «ամենաջերմ իղձն» էր «ընդհանուր անկախ դաշնակցություն, նման Զվիցերիո դրության, բոլոր փոքրիկ ազգերի Արևելքում, երբ դրանց մնացածներն ալ ազատված կը լինեն թուրքական լծից» (62, էջ 129)։

Քիչ ավելի ուշ, 1890 թ. կազմակերպված դաշնակցական կուսակցության ծրագրում ևս նշվում էր, որ հիշյալ կուսակցությունը անընդհատ զինված պայքար պետք է մղի թուրքական կառավարության դեմ, նաև այն ընդհանուր պայմանների դեմ, «որոնցմե նեղված են միևնույն ժամանակ թե՛ հայ և թե՛ օտար տարրերը՝ ասորիներ, եզիտիներ, քրդերի մեկ մասը, խաղաղ թուրքեր և այլն։ Այս ուղղությունը, իր ընդհանուր նշանակությունից զատ, կարող է եթե ոչ միացնել, գոնե չեզոքացնել օտար տարրերի ընդդիմադրական ուժը» (62, էջ 135)։

Անշուշտ թուրքական կառավարությունը միջոցներ ձեռնարկում էր այս դրացի ժողովուրդների համախմբման հնարավորությունը վիժեցնելու համար։ Այդ նույն նպատակով ուժեղացվեց նաև Ռուսաստանի սահմանների մոտ տեղակայված բանակային 4-րդ կորպուսը, որպես սպառնալիք Էրզրումի, Վանի, Խարբերդի և այլ վայրերի հայերի ու Հաքյարիի քրդերի համար (269, էջ 89)։

Սուլթանական կառավարությունն իր նահանգական պաշ-

տոնեության միջոցով ծրագրված ձևով ձգտում էր հայերին հուսահատության գիրկը նետել և ընկճել բարոյական ոգին։ «Մյուս տարիներ քրդերն առանձին կգործեին,— գրում էր Մարսելի «Արմենիա» թերթը,— իսկ այժմ կառավարության օժանդակությամբ կգործեն և անոր պատրաստած ծրագրով առաջ կընթանան» (23, 1890 թ., № 14)։

Սակայն այս միջոցառումները բավարար չէին։ Անհրաժեշտ էր գտնել նպատակին հասնելու ավելի շոշափելի և գործուն միջոցներ։ Այսպիսով ծնվեց տխրահռչակ Համիդիե գնդերի կազմակերպման գաղափարը, որը հղացել էր հայակուլ Շաքիր փաշան։

1890 թ. նոյեմբերին Թուրքական թերթերում պաշտոնական կառավարական հաղորդում հրապարակվեց քրդական ռազմական կազմակերպություն ստեղծելու մասին, որն ի պատիվ սուլթան Աբդուլ Համիդի կոչվում էր Համիդիե։ Համիդիե գնդերի կազմակերպման գործը հանձնարարվեց Արևմտյան Հայաստանում տեղակայված չորրորդ բանակի մուշիր (մարշալ) Զեքի փաշային (290, էջ 11)։ Ռուսական դիտորդները, որոնք բնականաբար ուշիուշով հետևում էին Ռուսաստանի սահմանակից շրջաններում ստեղծվող ռազմական այս կազմակերպության ընթացքին, գտնում էին, որ «վերջին ժամանակներս գործ ունենալով հայկական հարցի հետ, բնական է, որ թուրքական վարչությունը վախենում է որևէ կտրուկ միջոցառումների հետևանքով իր դեմ զինել նաև քրդերին։ Հայերի, եզիդիների, նեստորականների (ասորիների։— Վ. Բ.) և ղզլբաշների կողմից թուրքերի նկատմամբ համընդհանուր և խոր ատելության պայմաններում թուրքերի հետ դավանակից սուննի քրդերը այնուամենայնիվ հանդիսանում են քաղաքական առումով Քրդստանի[19] առավել բարեհույս բնակչությունը։ Միայն քրդերի շրջանում է, որ Փոքր Ասիայի արևելքում թուրքերը կարող են իրենց համար փնտրել հենարան» (150, էջ 250)։

Համիդիե գնդերի կազմակերպման գաղափարի իրագործումը հեշտանում էր նրանով, որ քրդական ավատական վերնախավը թուրքական պետականության և տիրապետող ազգի վերնախավի նման հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը ընկալում էր որպես իր շահերի դեմ ուղղված շարժում։

Միաժամանակ ենթադրելով, որ շարժումը հրահրվում է Ռուսաստանի կողմից, քրդական ավատատերերի մոտ ուժեղա-

ցան նաև հակառուսական տրամադրությունները։ Հենց դա նկատի ունի Ա. Կարցովը, երբ գրում է. «Հայկական հուզումները մեզնից վանում են քրդերին» (267, էջ 41)։

Քրդերի այս տրամադրությունները արհեստականորեն ու մշտապես հրահրվում էին կառավարության կողմից։ «Աբդուլ Համիդ քյուրտերուն մեջ տարածել տվավ,— գրում էր Փարիզում հրատարակվող «Անահիտ» հանդեսը,— թե հայերը Ռուսիո հետ համաձայնելով, մտադիր են քյուրտերը ջարդել» (14, 1900 թ., № 1—5, էջ 132)։ Համիդիե գնդերի կազմակերպման հրամանագիրը հրապարակվելուց հետո սուլթանը քրդական ավազանու նկատմամբ սկսեց վարել էլ ավելի շեշտված ափրաշահելու քաղաքականություն։ Նրա հրամանով Արևմտյան Հայաստանի և Քրդստանի բոլոր ազդեցիկ քուրդ ցեղապետերը հրավիրվեցին մայրաքաղաք, որտեղ Աբդուլ Համիդը և նրա մարդիկ բարձր պատիվներ և պատվանշաններ շռայլելով բոլորին, հորդորում էին նրանց զինել աշիրեթներին, միավորել նրանց համիդիե գնդերի մեջ, խոստանալով ռոճիկ, զենք, ռազմամթերք, համազգեստ և այլն (245, էջ 18)։ Համիդիե գնդերի մեջ ընդգրկված քրդերին հատկացվում էին նաև հողակտորներ, զինվոր տրամադրած ընտանիքները ազատվում էին համարյա բոլոր հարկերից և տուրքերից (266, էջ 18), զինվորներն օգտվում էին կառավարության հովանավորությունից և ստանում օրենքի առջև անձեռնմխելիության իրավունք և այլն։

Առհասարակ քրդերի համար ատելի էր երկարատև ծառայությունը կանոնավոր հետևակում՝ նիզամում։ Իսկ այժմ նրանք ծառայելու էին աշիրեթային քրդերի կենցաղին յուրահատուկ. համապատասխան գնդերում։ Ամենագայթակղիչ հանգամանքներից մեկն էլ այն էր, որ համիդիե գնդերում նրանք իրենց ծառայությունն անց էին կացնելու ոչ թե որտեղ պատահեր, այլ իրենց հայրենի վայրերում։

1892 թ. Կոստանդնուպոլսում և 6-րդ բանակային կորպուսի կենտրոն Բաղդադում բացվեցին այսպես կոչված «ցեղերի համար դպրոցներ» («աշիրեթ մաքթաբլերի»), որոնք թեև կառավարության կողմից հրամցվում էին իբրև քրդերի շրջանում լուսավորություն տարածելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառում, սակայն իրականում այդ դպրոցների նպատակն էր համիդիե գնդերն ապահովել գրագետ սպաներով (423, էջ 182)։ Այդ դպրոցները կոչված էին նաև քրդերին և արաբներին Թուր-

թիայի նկատմամբ հավատարիմ հպատակության զգացում նե-
րարկել (290, էջ 11)։ Առհասարակ քրդերով բնակեցված շըր-
ջաններում զինվորական դպրոցներ բաց անելու նպատակով
սուլթանը միայն իր սեփական միջոցներից հատկացրեց ութ
միլիոն թուրքական լիրա (245, էջ 21)։

Թեև թուրքական պաշտոնական մամուլը հայտարարում էր,
թե իբր կառավարության նպատակն է «քոչվոր քրդերին մտցնել
քաղաքակրթության ընդերքի մեջ և կարգապահ դարձնել նրանց
հորդաները» (280, էջ 163), սակայն իրականում ռազմական
այդ կազմակերպության օգնությամբ սուլթանը մտադիր էր
ճախճախել հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումը
և վերջ տալ հայկական հարցին՝ Օսմանյան կայսրության գորդ-
յան այդ հանգույցին։ «Որքան և այս ձեռնարկությունը քո-
ղարկվում էր պատերազմական ընդհանուր նկատառումնե-
րով,— նշում է Լեոն,— ոչ ոքի համար գաղտնիք չէր մնում, որ
համիդիե գնդերի կազմակերպման ամենագլխավոր, եթե ոչ
միակ, շարժառիթն է նրանց միջոցով հայերին զսպելը» (67,
էջ 103)։

Կոստանդնուպոլսի Խորեն Աշըգյան պատրիարքը Մակար
Կաթողիկոսին գրած նամակում հայտնում էր, որ դեռևս 1889 թ.
սուլթանը իր այդ մտադրության մասին հայտարարել է.
«...անհնարին է ինձ զիջանել տալ զինքնօրէնութիւն զոր հայք
երազեն, և ոչ միայն ինձ՝ այլ և ամենեցուն, որ զկնի իմ գա-
լոց են սուլթանք նզով դնեմ ի վերայ չտալ հայոց այնպիսի
ինչ, այլ մանաւանդ զչնչումն բովանդակ իսլամութեան յերե-
սաց երկրի ուխտ դնեմ պատերազմել ընդդէմ անկախութեան
հայոց» (71, էջ 193)։

Վերոհիշյալ տեսակետը հաստատվում էր նաև Թուրքիայի
ներքին իրադրությանը և առհասարակ մերձավորարևելյան
հարցերին քաջ գիտակ ռուսական դիվանագիտական և ռազմա-
քաղաքական այնպիսի գործիչների կողմից, ինչպիսիք էին Էրզ-
րումում գլխավոր հյուպատոս Ա. Դեննեսը, գեներալ Պ. Ի.
Ավերյանովը, Ռ. Ի. Տերմենը, Վ. Ֆ. Մինորսկին և շատ ուրիշ-
ներ։

Այսպես, Ա. Դեննեսը գրում էր, որ համիդիե գնդերի կազ-
մակերպման նպատակն է քրդերին օգտագործել կայսրության
արևելյան նահանգներում քրիստոնյա բնակչության ազատա-
գրական ձգտումները ճնշելու համար (161)։ Այդ նույն միտքը

Վ. Ֆ. Մինորսկու մոտ գտնում ենք հետևյալ ձևակերպումը. «...քրդերը Թուրքերի կողմից ընտրվեցին որպես կոպիտ գործիք՝ հայ ազգային շարժմանը հակազդելու համար» (290, էջ 11)։

Այս տեսակետի հետ համակարծիք էին նաև անգլիական ու ֆրանսիական քաղաքական գործիչներն ու դիտորդները։ Օրինակ, Վ. Գլադստոնը 1895 թ. հուլիսի 26-ին Ջեստերում տեղի ունեցած միտինգի ժամանակ արտասանած ճառում հայտարարել էր. «Սուլթանը և Կ. Պոլսի կառավարությունը ֆորմալ ձևով հավաքագրեցին ոչ մի ռազմական կարգապահություն չունեցող մարդկանց, նրանցից կազմեցին կեղծ հեծելազորային գնդեր և այնուհետև արձակեցին նրանց, լիազորելով սուլթանական զինվորների դերում քայքայել ու ոչնչացնել հայ բնակչությանը» (312, էջ 161)։

Իսկ ֆրանսիացի Լյուդովիկ Քոնթանտոնը գտնում էր, որ սուլթանական կառավարության կողմից լայնորեն պրոպագանդվող այն տեսակետը, թե իբր համիդիե գնդերի ստեղծման հիմնական նպատակն է երկրի պաշտպանունակության ուժեղացումը, չի համապատասխանում իրականությանը։ Նրա կարծիքով այդ գնդերը ստեղծվում էին բացառապես հայերին հալածանքների ենթարկելու համար (406, էջ 49—50)։

«Սահմանների պաշտպանության պատրվակի տակ քրդական «համիդիե» գնդերի ձևավորումը ըստ էության հանդիսանում էր հայ քրիստոնյաների կողոպուտի պաշտոնական կազմակերպություն»,— եզրակացնում է նա (270, էջ 26)։ Այդ նույն տեսակետն է հայտնում նաև Կոստանդնուպոլսում ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը (413, էջ 72—73)։

Ժամանակակից անգլիացի պատմաբան Էդմոնդ Թեյլորը գրում է. «Դեռևս 1891 թ. սուլթանը թույլ տվեց քրդական ցեղերին օգտագործել որպես օժանդակ ոստիկանական ուժ՝ հուզումները (հայկական։— Վ. Բ.) ճնշելու համար... նրանց ուղարկումը դեպի հայկական շրջանները՝ հեղափոխական ազգայնականներին հետապնդելու համար, հոսալի միջոց էր կրոնական և ռասայական պատերազմ սանձազերծելու համար» (476, էջ 156)։

Ժամանակակից Թուրք հեղինակ Ալթան Դելիորմանի այն պնդումը, թե սուլթանը համիդիե գնդերն ստեղծել էր Սասունի 15 հազար մահմեդական բնակչությանը հայ «կոմիտեական-

ներից» պաշտպանելու համար (409, էջ 34), նույնպես հաստատում է այն փաստը, որ այդ ռազմական կազմակերպության ստեղծման հիմնական նպատակներից մեկը հայ ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարն էր։ Այդ նույն կարծիքին է նաև մեկ այլ ժամանակակից թուրք պատմաբան Այ-հան Յալչինը (491)։ Համիդիե գնդերի կազմակերպումը հակասում էր ոչ միայն Բեռլինի դաշնագրի 61-րդ կետի ոգուն, այլ նույնիսկ այն սկզբունքներին, որոնք դրված էին Գյուլհանեի հաթթը-շերիֆի (1839 թ.) և հաթթը-հումայունի (1856 թ.) հիմքում, որովհետև այդ երկու ակտերն էլ ազդարարում էին կայսրության ոչ մահմեդականների իրավունքները մահմեդականների իրավունքների հետ հավասարեցնելու սկզբունքները։ Բացի այդ, ռազմական տեսակետից կազմակերպելով քրդերին, սուլթանը միաժամանակ արգելում էր հայ ազգաբնակչությանը զենք կրել։ Սա պետության կողմից բացարձակ թշնամություն էր հայ տարրի դեմ։

Արդուլ Համիդ II-ը համիդիե գնդերի հետ մեծ հույսեր էր կապում նաև հայերին տնտեսապես հյուծելու և հայ ազգային-ազատագրական շարժումը իր տնտեսական հենքից զրկելու առումով։ Պատահական չէ, որ իշխանությունները հայկական գյուղերում հետևողականորեն տեղակայում էին համիդիե գնդեր, որոնք, ինչպես նշում էին ռուս դիտորդները, «օգտվելով վարչության պաշտպանությունից այնտեղ դատ ու դատաստան էին տեսնում, և, բացի այդ, դրամով վարկավորելով մշտապես կարիքի մեջ գտնվող հայերին (փհարկե որպես երաշխիք ունենալով նրանց անասունները, տները ու բերքը), աստիճանաբար դառնում էին այդ գյուղերի տերերը՝ աղաներ, որոնց համար հայերը կատարում էին ամեն տեսակ աշխատանքներ, իրենց աղջիկներին տալիս էին նրանց, հատկացնում էին լավագույն նժույգները և այնուամենայնիվ չէին կարող ազատվել հարկերի բեռից» (162)։ Պատահական չէ, որ հենց այս շրջանում ավելացավ նաև քուրդ հարկահավաքների՝ մյուլթեզիմների թիվը, որոնք լայնորեն սկսեցին զբաղվել վաշխառությամբ, պարտքերի ոստայնի մեջ խճճելով հայ գյուղացիությանը և ի վերջո դառնալով նրանց հողերի տերը (74, էջ 66—67)։

Ֆրանսիացի գիտնական Ֆրեդերիկ Մակլերը նշում է, որ համիդիե գնդերի ստեղծման նպատակներից մեկն էլ հետևյալն էր. խափանել Առաջավոր Ասիայի երկու ավտոխտոն (բնիկ։—

վ. Բ.) ժողովուրդների՝ հայերի և քրդերի մերձեցման բնականոն պրոցեսը (444, էջ 152)։

Համիդիե ռազմական կազմակերպությունը կոչված էր պահպանել և, եթե հնարավոր լիներ, նաև ամրապնդել ֆեոդալական կարգերը, «որոնք իրենց հերթին դանդաղեցնում էին դեմոկրատական տարրերի ու բանվոր դասակարգի աճը և համախմբումը, նորից արգելակում ազատագրական պայքարը» (63, էջ 49)։

Կայսրության մեջ բնակվող առանձին ազգությունների ազգային-հեղափոխական շարժման դեմ պայքարում Աբդուլ Համիդի կառավարությունը մշտապես դիմում էր մի ազգին մյուսի դեմ գրգռելու քաղաքականությանը։ «Այդ ճանապարհով սուլթանը ձգտում էր, մի կողմից, փոխադարձ պայքարի մեջ հյուծել իր հպատակների հեղափոխական եռանդը, իսկ մյուս կողմից, կանխել ազգությունների միավորման հնարավորությունը համատեղ ելույթի համար ընդդեմ բոլորին ճնշող բռնատիրական վարչակարգի։ Այլ կերպ ասած, քրդերը կարող էին ոչ միայն հայկական վտանգը խեղդել, այլև խեղդվել՝ բոլորովին անվնաս դառնալու աստիճան» (128, էջ 158)։

Այսպիսով, քրդական ավատական վերնախավը և աշիրեթային ցեղերի զգալի մասը կապվելով համիդյան վարչաձևի հետ և ընկղմվելով թուրքական հետադիմության մեջ, պատրաստի գործիք դարձան սուլթանական կառավարության ձեռքում կոտորածներով լուծելու հայկական հարցը։

Թուրքական կառավարող շրջանները հույս ունեին «անպաշտպան հայ բնակչության հաշվին «գոհացնել» քրդական ֆեոդալներին, իսկ քրդական ժողովրդական զանգվածների դրժգոհությունն ուղղել հայերի դեմ ազգային և կրոնական պայքարի հունով» (273, էջ 24)։

Համիդիե գնդերի միջոցով օսմանյան կառավարությունը մտադիր էր նաև ուժեղացնել Ռուսաստանի և Իրանի հետ կայսրության սահմանների պաշտպանությունը (245) և սահմանամերձ երկրամասերից դուրս մղելով իր համար անբարեհույս հայ բնակչությանը, այդ շրջանները բնակեցնել մահմեդականներով։

Թուրքական կառավարության այս ծրագրին Գերմանիան հավանություն տվեց։ Պատահական չէ, որ գերմանական իմպերիալիզմը ֆինանսավորում էր համիդիե գնդերի կազմակեր-

պումը (49, 1906 թ. հ. 6, էջ 14)։ Անգլիան ևս կենսականորեն շահագրգռված էր արևմտահայությանը Ռուսաստանից հեռու պահելու հարցում։

Այդ պատճառով նա ևս պաշտպանեց համիդիե գնդերի ստեղծման ծրագիրը։ Սակայն բրիտանական կառավարությունը մտադիր էր սուլթանին համոզել, որ նախ՝ այդ գնդերը կազմակերպվեն անգլիական ձևով և ապա՝ նրանց սպայական կազմը բաղկացած լիներ անգլիացիներից։

Այդ առաջարկը Կոստանդնուպոլիսը մերժեց, որովհետև «հայերին կողոպտելու հարցը բացառելու դեպքում քուրդ-թուրքական հակամարտությունը շատ ավելի ուժեղ էր, քան քուրդ-թուրքական մերձակցությունը, ուստի, բնականաբար, սուլթանական իշխանությունը ավելի նպատակահարմար էր համարում հայկական վիլայեթներում ունենալ թեկուզ վատ կազմակերպված բարեկամ, քան լավ կազմակերպված թշնամի» (109, էջ 182)։

Թուրքական կառավարությունը համիդիե գնդերը դիտում էր նաև որպես հուսալի միջոց քրդերին վերջնականապես թուրքական պետականությանը ենթարկելու և կամաց-կամաց նրանց թուրքերի հետ ձուլելու համար։ Թեև XIX դ. վերջերին քրդական ցեղերը արտաքուստ թվում էր հնազանդեցված էին կառավարությանը, սակայն ժամանակ առ ժամանակ տեղի էին ունենում քրդական մեծ ու փոքր հուզումներ, որոնք ճնշելու համար կառավարությունը ստիպված էր պարբերաբար ռազմական պատժիչ արշավանքներ կազմակերպել։ Դա Թուրքիայի զինված ուժերի նշանակալից մասը պահում էր մշտական լարվածության վիճակում, բայց ըստ էության ոչ մի ցանկալի արդյունք չէր տալիս։ Թուրքերի իշխանությունը աշիրեթային քրդերի նկատմամբ մնում էր խաբուսիկ, որովհետև խաղաղ ժամանակ նրանք հրաժարվում էին հարկեր մուծել, բանակին զինակոչիկներ հատկացնել, իսկ պատերազմների ժամանակ թուրքական բանակի պարտություններին վերաբերվում էին համարյա անտարբերությամբ (150, էջ 241—242)։

Սուլթանը ենթադրում էր, որ համիդիե գնդերի մեջ քրդերի ծառայությունը կնպաստի նրանց մերձեցմանը տիրապետող ժողովրդին, կտրվորեցնի ենթարկվել տեղական վարչությանը, կնպաստի նրանց կողմից թուրքերեն լեզվի յուրացմանը և այլն։ Ա. Մ. Կոլյուբակինը նշում էր, որ Արևմտյան Հա-

յաստանի որոշ մասերում նկատվում է քրդերի ասիմիլյացիոն թուրքացում։ «Թուրքերի կողմից քուրդ ժողովրդի այդ կլանումը առայժմս տեղի է ունենում բավականին դանդաղ կերպով, սակայն այնուհանդերձ այն անկասկած գոյություն ունի և վերջին ժամանակներս ձեռք է բերում խոշոր հաջողություններ» (269, էջ 180—181)։

Մի խոսքով, կառավարության ծրագրած վերոհիշյալ քաղաքականությունը կարելի է ձևակերպել այսպես. «Ամենից առաջ մեզ անհրաժեշտ է այնտեղ՝ Փոքր Ասիայում, ձուլել քրդերին» (423, էջ 223—225։ 456, էջ 14—15)։

Համիդիե գնդերի կազմակերպումով ենթադրվում էր նաև թուլացնել խոշոր և անհնազանդ աշիրեթներին, տրոհել ու մանրացնել դրանք։ Այդ նպատակին հասնելու համար որպես հրամանատարներ առաջ էին քաշում ազդեցություն չունեցող, աննշան մարդկանց։ Սրա հետևանքը լինում էր այն, որ քրդական առաջնորդները շատանում էին և ուժեղանում էր նրանց ներքին հակամարտությունը։ Այնուհետև քրդերի քաղաքական անկախության ձգտումները փոխարինվում էին իրենց փոքր աշիրեթի «անկախությամբ» և քրդական տարրերը այս մանր արտոնությունների մեջ, սուլթանի մտայնությամբ, գտնելու էին իրենց քաղաքական բաղձանքների գոհացումը (128, էջ 157)։

Պետք է նշել սակայն, որ կառավարության վերոհիշյալ քաղաքականությունը դարձավ երկսայրի սուր, որովհետև բազմաթիվ անհնազանդ ցեղեր, ստանալով սեփական ռազմական կազմակերպություն, դարձան էլ ավելի անկախ ու ինքնագլուխ, հաճախ հրաժարվելով կառավարությանը հարկեր մուծել (301, էջ 68)։

Համիդիեների կազմակերպման քաղաքականությունը սկզբից ևեթ տվեց նաև որոշ ճեղքվածքներ։ Ոչ բոլոր ցեղերն էին, որ կամովին ընդգրկվեցին այդ գնդերի մեջ։ Մի շարք շրջաններում կառավարությունը նույնիսկ ստիպված էր դիմել բռնի ուժի և ահաբեկման քաղաքականության, որի հետևանքով հաճախ տեղի էին ունենում զինված ընդհարումներ (245, էջ 22, 25)։ Օրինակ, դերսիմցիներին ընկճելու համար սուլթանը հրամայեց հսկայական քանակությամբ նավթ տեղափոխել Դերսիմ և լրիվ հրդեհելով այնտեղի անտառները, տեղի բնակիչներին զրկեց դիմադրելու հնարավորությունից։ Միայն դրա-

նից հետո մի շարք ցեղապետեր մտան Համիդիե ալայիների (գնդեր) մեջ, սակայն ամբողջությամբ վերցրած Դերսիմը կըրկին անընկճելի մնաց (48, էջ 94—96)։ Թուրք-իրանական սահմանամերձ շրջանների մի շարք քրդական ցեղեր Համիդիե գնդերի մեջ չմտնելու համար տեղափոխվեցին Իրան (163)։

Խոսելով այն մասին, որ Թուրքերն աշխատում էին մեծամեծ պաշտոնների խոստումներով և դրամով կաշառել քրդերին և նրանց քաշել համիսլամության ցանցի մեջ, «Անահիտ» հանդեսը գրում էր. «Համիտական շքեղ և լայնատարած դրոշակն անգամ չէ հաջողած քյուրտն ամբողջապես իր տակ առնուլ։ Շատ մը աշիրաթներ բնավ չեն ճանչցած զայն, մեկ քանիսը անվանական հպատակություն մը միայն ցույց տված են, իսկ անոնք՝ որոնց մասին կը կարծուի թե երդվյալ հպատակներ են դարձած, ասոնք ալ շարունակ կը հալածվին իրենց հարևան աշիրեթներեն...

Իսկ Արածանիի հովտի բնակիչները դեռ այսօր հրացանովը կը խոսին իրենց գերդաստանի այն անդամներուն հետ, որոնք Պոլիս երթալով և Համիդիե դառնալով դավաճան հանդիսացան իրենց ազատության» (14, 1901 թ. № 3)։

Համիդիե ռազմական կազմակերպության ստեղծումից հետո ողջ Արևմտյան Հայաստանի տարածքում այն սկսեց կատարել ռազմաստիկանական ֆունկցիա։ Հայ բնակչության նկատմամբ բռնությունները, կողոպուտը ու թալանը ընդունեց անլսելի մեծ թափ ու ծավալ։

Զրի աշխատանքի սիստեմը, ապօրինի տուրքերը, բռնաբարումները, հափշտակումներն ու ամեն տեսակ կամայականությունները այդ պայմաններում դարձան սովորական երևույթ։ Հատկապես այն բանից հետո, երբ սուլթանական կառավարությունը քրդական ավատատերերին ամբողջովին հանձնեց հայ բնակչությունից հարկեր գանձելու իրավունքը, վերջինիս վիճակը ուղղակի դարձավ դժոխային։ «Երեկ ծառա ու հովիվ եղող մը, երբ հարյուրապետության կբարձրանա, ոչ միայն հայը, այլ իր հայրն ալ կսպաննե»,— գրում էր «Անահիտ» ամսագիրը (14, 1901 թ. № 3)։

Համիդիե գնդերի հրամանատարներից արևմտահայության նկատմամբ իր գործադրած բռնություններով հատկապես մեծ հռչակ ստացավ Քյոռ Հուսեին փաշան։ «Ինչ որ Համիդն էր

ամբողջ Թուրքիայի համար, նույնն էլ Հուսեինն էր Էրզրումի, Վանի և Բիթլիսի նահանգների համար» (19, էջ 8)։

Էրզրումում անգլիական հյուպատոս Չարլզ Հեմփսոնը փետրվարի 28-ին Կոստանդնուպոլսի անգլիական դեսպանին հաղորդում էր, որ քրդերից շատերը բացարձակ ասում են, թե «իրենք նշանակված են հայերին զապելու համար և որ իրենք երաշխիքներ են ստացել, թե իրենց դատական պատասխանատվության պետք է չենթարկեն քրիստոնյաներին հարստահարելու համար» (396, էջ 23)։ Քրդերին դիմադրելը «հավասարազոր էր սուլթանի դեմ խռովությանը» (312, էջ 161)։ Տեղական դատարաններին հրամայված էր քննության չառնել հայ ազգաբնակչության նկատմամբ բռնություններ գործադրած համիդիե գնդերի սպաների և զինվորների գործերը (470, էջ 373)։

Էրզրումի կուսակալ Հասան խայրի փաշան իր մոտ հրավիրելով նահանգի քուրդ ցեղապետերին և սուլթանի անունից նրանց բաժանելով պատվո նշաններ ու դրամական պարգևներ, ինչպես նաև հաղորդելով սուլթանի գոհունակությունը կայսրությանը մատուցած նրանց ծառայությունների համար «վնասակար տարրը ջնջելու» գործում, ծանոթացնում է ներքին գործերի մինիստրի շրջաբերականին՝ հայերի նկատմամբ բռնություններ գործադրելու եղանակների մասին։ Այնտեղ հրահանգ էր տրվում կողոպտել ու սպանել բոլոր հարուստ հայերին, կրթված դասին և ընդհանրապես ազդեցիկ մարդկանց, որպեսզի ժողովուրդը մատնվի անկարողության։

Քրդերին կարգադրվում էր բացի սովորական մեթոդներից (կողոպուտ, սպանություն, առևանգումներ և այլն) օգտագործել նաև այլ մեթոդներ. միշտ նեղել հայերին, ընչին և մինչև իսկ երևակայական պատճառներով դատ բանալ նրանց դեմ, դատապարտել բանտարկության և աքսորի։ Դատարաններին հրահանգված էր բոլոր պարագաներում պաշտպանել քրդերին, դրա համար որպես կռվան ծառայեցնելով հայերի «հեղափոխական տրամադրությունները սուլթանի իշխանությունը տապալելու համար» (85, 1891 թ., 1—15 փետրվարի)։

Բասրայում ռուս հյուպատոս Կ. Վ. Իվանովը գրում էր, որ Թուրքիայում ընդունվել է հատուկ օրենք այն մասին, ըստ որի համիդիե գնդերը չեն ենթարկվելու քաղաքացիական դատարանի իրավասությանը։ Այսպիսով, եզրակացնում է նա, քրդական տարրի հովանավորությունը ի վնաս հայկականի Թուրքա-

կան դատարանը դարձնում է գործիք հայերին հալածելու համար և խրախուսում է քրդերի գիշատիչ բնազդները։ Համընդհանուր ավարառությունները վերջ տալու համար ևս թուրքական իշխանությունները ոչինչ չեն ձեռնարկում։ Այս պարագաներում երկրամասում առաջադիմությունը բոլոր առումներով ուղղակի դառնում է անհնարին։

Անգլիացի հրապարակախոս Է.Դիլոնը Արևմտյան Հայաստան կատարած իր ճանապարհորդությունից հետո եկել էր այն եզրակացության, որ «հայկական նահանգներում սահմանվել է կառավարման գաղանային մի սիստեմ, որի համեմատ Ամերիկայի հարավային նահանգների ստրկատիրական սիստեմի դաժանությունները թվում են աննշան չարաշահումներ» (305, էջ 329)։

Տարօրինակն այն էր, որ քրդական ավատատերերի բռնություններից պաշտպանվելու համար արևմտահայությունը իր հույսը պետք է դներ թուրքական օրենքի վրա, որի օժանդակությամբ էին կազմակերպվում այդ բռնությունները։

Համիդիեների գործադրած անսանձ բռնությունների, կամայականությունների ու կողոպուտների հետևանքներից մեկը եղավ հարազատ վայրերից հայ բնակչության արտագաղթի նոր հոսքը։ Հազարավոր մարդիկ չնչին գներով իրենց հողն ու ինչքը վաճառելով քրդերին, ստիպված էին փախչել Ռուսաստան, Իրան և այլ երկրներ (164)։

Համիդիե գնդերի ստեղծումից հետո հայ-քրդական հարաբերությունները բնականաբար ծայրահեղորեն սրվեցին։

1891 թվականից տեղական իշխանությունները հայերին հրահրում էին բացահայտ ելույթ ունենալ, որպեսզի այնուհետև նրանց մեղադրելով հեղափոխականության մեջ, զանգվածորեն հալածանքների ենթարկեն։ Հայ բնակչության օրինական ինքնապաշտպանության ցանկացած փորձ թուրքական իշխանությունները դիտում էին որպես հանցանք և նոր հալածանքների առիթ տալիս։

Առաջին հարվածն ուղղվեց աղատատենչ Սասունի դեմ, որը դիտվում էր որպես կայսրության համար քաղաքական վտանգի միջնաբերդ։ Սասունի ոգին վարակիչ էր դառնում ողջ արևմտահայության համար։

Հայտնի է, որ սոցիալական շարժումները տվորական երևույթ էին Օսմանյան կայսրությունում։ Սակայն, եթե դրանք

կազմակերպում էին հայերը, անպայման դրանց տրվում էր քաղաքական երանգ և դիտվում էր որպես քաղաքական ընդվզում։ Այդպես տեղի ունեցավ նաև Սասունում։ Օսմանյան կառավարությունը հորինեց «հայկական ապստամբության» վարկած։ Այսպիսով, համընդհանուր շարդ կազմակերպելու պատրվակը գտնվել էր, մնում էր անցնել գործի։

Կառավարության հրահանգով Բիթլիսի կուսակալ Թահսին փաշան հորդորում էր քրդական ցեղապետերին ու շեյխերին, որպեսզի նրանք աշիրեթներին ոտքի հանեն Սասունի դեմ։ Սրբազան պատերազմի պատգամներով լցված քրդական ցեղապետերը, որոնք արդեն վաղուց չէին կարողանում հանդուրժել, որ իրենց «իրավունքները» չեն տարածվում Սասունի վրա, սկսեցին շարժվել դեպի Տալվորիկ, Անտոթ և Ծովասար։ 1891—1894 թթ. ընթացքում սասունցիները համառորեն դիմադրում էին։ Սակայն 1894 թ. ամռանը հուսահատության հասած Սասունի բնակչությունը բարձրացրեց ապստամբության դրոշը։ Անմիջապես հաջորդեց սուլթանի բարձրագույն հրամանը՝ Սասունում ոչինչ և ոչ ոքի չխնայել։

Աբդուլ Համիդը 4-րդ զորաբանակի մուշիր Զեքի փաշային հրամայեց կազմակերպել Սասունի ապստամբությունը ճնշելու գործը։ Բիթլիսում հրավիրվեց հատուկ խորհրդակցություն օսմանյան բարձրաստիճան կառավարական և զինվորական ներկայացուցիչների ու 17 քրդական ազդեցիկ ցեղապետերի մասնակցությամբ (93։ 114, 1894 թ., № 10, հոկտեմբեր, էջ 1596)։

Զեքի փաշայի 12 հազարանոց բանակին միանալու համար կառավարությունը Դիարբեքիրից Սասուն ուղարկեց Օսման փաշայի երեք հազարանոց կորպուսը, Բիթլիսի կուսակալ Հասան Թահսին փաշայի տրամադրության տակ եղած բոլոր զորքերը, Գենջի նահանգապետ Մուստաֆա փաշայի, Ֆերիկ Աբդուլլա փաշայի զորքերը և այլն։ Սասուն ուղարկվեցին կառավարական զորքեր նաև Մուշից, Էրզրումից, Խարբերդից, անգամ Հալեպից ու Բաղդադից։ Սրանց էին միանալու նաև համիդիե գնդերը Բեհաեդդին փաշայի, Մահմադ էլ Աղասիի և այլ հրամանատարների գլխավորությամբ (7, էջ 435։ 216)։ Սասունը լինելու էր այն փորձաքարը, որտեղ փորձության էր ենթարկվելու համիդիե գնդերի մարտունակությունը և նրանց նվիրվածությունը սուլթանին։ Քուրդ տարրի կրոնական ֆանա-

տիկոսությունը բորբոքելու համար կառավարությունը հարկ համարեց Սասուն ուղարկել նաև մոլեռանդ շեյխերի։

Սասունի վրա լեռնացող այս ահարկու վտանգի պայմաններում հայ գործիչները քրդերի հետ փոխադարձ ըմբռնման եղրեր գտնելու եռանդուն փորձեր էին անում, թեկուզ և նրանց չեզոք դիրքն ապահովելու համար։ Հնչակյան կուսակցության մի շարք գործիչներ՝ Դամադյանը, Ռուբեն Շիշմանյանը (Տերզնկացի քեռին) և ուրիշներ քրդերի շրջանում քարոզում էին հայ և քուրդ ժողովուրդների մերձեցման և թուրքերին համատեղ դիմադրություն ցույց տալու անհրաժեշտության մասին, աշխատելով նրանց համոզել, որ հայկական ազատագրական շարժումն ուղղված չէ դարավոր հարևան քուրդ ժողովրդի դեմ։ Նրանք կապեր էին հաստատում նաև Եվրոպայում գործող այն քուրդ վտարանդիների հետ, որոնք նույնպես հակված էին հայերի հետ համագործակցության գաղափարին (206, էջ 202—203)։

Սակայն, դժբախտաբար, այդ փորձերը ոչ մի արդյունք չտվեցին։ Սուլթանը կարողացել էր քանդել «...հայ և քուրդ համերաշխ միությունը, որ պահված էր այդ լեռներուն վրա» (7, էջ 435)։

Սասունում սկսվեց հայաջինջ փոթորիկը։ Թուրքական բանակը գործում էր առաջնորդվելով ենիչերիների ավանդույթներով։ Բանակի գազանությունները եզրափակում էին թուրքական խուժանը և աշիրեթները։ Քրդական առաջնորդներից իրենց գազանություններով հատկապես աչքի ընկան Խալիլ աղան, Քյոռ Սլեման աղան և ուրիշներ (29)։

Սասունի բնակչությունը սրի քաշվեց ու կողոպտվեց, բազմաթիվ գյուղեր քանդվեցին ու հրո ճարակ դարձան (275)։ Անգլիացի դիտորդներից մեկը վկայում էր, որ Սասունում «...հայերը ջարդվեցին առանց հասակի ու սեռի խտրության» (7, էջ 435)։

Կոստանդնուպոլսում բրիտանական դեսպանության գլխավոր դրագման Ադամ Բլոկը իր 1894 թ. դեկտեմբերի 25-ի հեռագրում նշում է, որ Սասունի ջարդի կազմակերպմանը անմիջականորեն մասնակցել են սուլթանը, չորրորդ զորաբանակի հրամանատար մարշալ Զեքի փաշան, սուլթանի առաջին քարտուղար Սուրիա փաշան և իր վայրենաբարո վարքով մեծ հռչակ ձեռք բերած Աբդուլլա փաշան (486, էջ 146—147)։

Թեև սասունցիների դեմ ուղարկված էր կանոնավոր բանակ[20], որն իր տրամադրության տակ ուներ նաև հրետանի, սակայն սուլթանական կառավարությունը տեղի ունեցած ջարդի համար ամբողջ պատասխանատվությունը բարդեց քրդերի վրա։ Հետաքննություն անցկացնելու նպատակով Սասուն ժամանած եվրոպական ներկայացուցիչներին հայտարարեցին, որ կանոնավոր զորքեր չեն ուղարկվել Սասուն, որ իբր այնտեղ հայերի ջարդը տեղի է ունեցել բացառապես քրդերի կողմից։ Մինչդեռ հայերը եվրոպական ներկայացուցիչներին հայտարարում էին, որ «ջարդ ընողները ավելի զորքերն էին քան թե քյուրտերը» (29, էջ 65)։

Հայերի հերոսական դիմադրությունը Սասունում սասանեց համիդիե ջոկատներին։ «Այդ սարսափները առաջ բերեցին նույնիսկ քուրդ ավազակապետերի սարսուռը» (250, էջ 7)։ Մեծ կորուստներ տալով, նրանք նույնիսկ կասկածեցին, որ կառավարությունը իրենց դիտավորյալ է կոտորել տալիս (57, էջ 92)։

Ինչպես հայտնի է, Կոստանդնուպոլսում գտնվող եվրոպական դեսպանները իրենց կառավարություններից հրահանգ էին ստացել համատեղ մշակել բարենորոգումների ծրագիր, որն իրականացվելու էր Էրզրումի, Բիթլիսի, Վանի, Սըվասի, Մամուրեթ էլ Ազիզի և Դիարբեքիրի հայկական վեց նահանգներում։ Այդ ծրագիրը Բ. Դռանը հանձնվեց 1895 թ. մայիսին, որի պատճառով և ստացավ «մայիսյան ռեֆորմներ» անունը։ Եվրոպական դեսպանները իրենց այդ ծրագրում հաշվի էին առել, որ առանց քրդական ավատական վերնախավին, համիդիե գնդերին և աշիրեթներին զսպելու, Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացումը անհնարին կլինի։

Դեսպանների հիշատակագրի 9-րդ գլուխը կոչվում էր «վերահսկողություն քրդերի վրա»։ Այնտեղ նշվում էր. «Թափառական քրդերին կառավարելու համար յուրաքանչյուր վիլայեթում վալին պետք է ունենա իր ձեռքի տակ մեկ աշիրեթ-մեմսուրի (մեկ պաշտոնյա), որի գործը պետք է լինի հսկել քուրդ ցեղերի վրա, այդ պաշտոնյան պետք է իրավունք ունենա ձերբակալել ավազակներին և ուրիշ չարագործներին ու պահանջել, որ նրանց ենթարկեն սովորական դատարաններին։ Նա պետք է ունենա իր ձեռքի տակ մի բավարար պահակախումբ և կարող է, հարկավոր դեպքում, պահանջել տեղական ոստիկանության աջակցությունը։ Նրա իշխանության տակ դըր-

ված պաշտոնյաների մի որոշ թիվ պետք է ուղեկցի ամեն մի ցեղին՝ նրանց տարեկան քոչի ժամանակ։

Նրանք պետք է գործադրեն ոստիկանական իրավասություն, բանտարկեն բոլոր շարագործներին և հանձնեն նրանց սովորական դատարաններին։ Թափառական ցեղերի արոտատեղերի և բանակատեղերի սահմանները պետք է ճշտությամբ որոշված լինեն։ Այդ քոչերը չպետք է պատճառ դառնան զրկանքի ենթարկելու այն գավառների բնակիչներին, որտեղով անցնում են թափառական ցեղերը և կամ ժամանակավորապես գրավում։ Եթե նրանք որևէ շարագործություն անեն գյուղացիների սեփականության դեմ կամ որևէ զրկանք հասցնեն գյուղացիներին, այդ օրից սկսած կարգելվի նրանց որևէ տեղափոխություն կամ քոչ։

Այն կանոնները, որոնք գոյություն ունեն զենք կրելու վերաբերմամբ, խստիվ պետք է գործադրվեն բոլոր քուրդ ցեղերի մեջ, լինեն նրանք հաստատուն, թե թափառական։ Ջանքեր պետք է արվեն պատվաստելու նստակյաց կյանքի սկզբունքները քոչվոր ազգաբնակչությանը, ընտելացնել նրանց երկրագործության, և այդ նպատակով որոշ հողեր պետք է հատկացնել նրանց այնպիսի տեղերում, ուր նրանց հաստատվելը չի կարող որևէ վնաս հասցնել նստակյաց ազգաբնակչության բարեկեցությանն և խաղաղությանը։ Ընտրողական և քաղաքացիական իրավունքները չպետք է պատկանեն այն անձանց, որոնք ոչ նստակյաց ազգաբնակչության մասն են կազմում, կամ որոնք հաստատված չեն մշտական և մնայուն կերպով մի որևէ նահիայի հողի վրա» (87, էջ 143)։

Արդուլ Համիդը սակայն գործն այնպես էր ներկայացնում, որ իբր ինքը չի ցանկանում սահմանափակվել իր կայսրության միայն մի մասում, այսինքն հայկական վեց վիլայեթներում վարչական բարենորոգումներ իրականացնելով, այլ դրանք ցանկանում է տարածել նաև կայսրության բոլոր մյուս վիլայեթների վրա (87, էջ 148—149)։

Սա նշանակում էր, որ սուլթանը հայկական հարցի դեմ դարձրացնում է «քրդական հարցը» ի չիք դարձնելու և՛ մեկի, և՛ մյուսի լուծումը։ «Անկասկած,— գրում էր Վանում ռուսական փոխհյուպատոս Վ. Տ. Մաևսկին,— Թուրքիայի համար միանգամայն ձեռնտու էր քրդերի շարժումը հակադրել հայկական շարժմանը. կարելի է բերել մի քանի փաստեր, որոնք

ապացուցում են, որ թուրքական իշխանությունները... օգտվում էին քրդերի այդ հանդիպակած շարժումից» (279, էջ 165)։

Հունգարացի արևելագետ, թուրքոֆիլ Ա. Վամբերին վկայում է, որ դեռևս 1889 թ. հոկտեմբերի 22-ին իր հետ ունեցած զրույցի ժամանակ սուլթան Աբդուլ Համիդը հայտարարել է, որ եվրոպական տերությունները «կարող են իմ գլուխն անջատել մարմնից, բայց երբեք Հայաստանը իմ կայսրությունից... Ի՞նչ է հայկական հարցը. բավական է մեկ հարված, որպեսզի ջախջախվի ողջ շարժումը» (486, էջ 145—146)։

Ինչպես հայտնի է, 1894—1896 թթ. Արևմտյան Հայաստանում տեղի ունեցան հայերի զանգվածային ջարդեր, որոնց ընթացքում թուրքական յաթաղանին զոհ գնացին ավելի քան 300 հազար հայեր։ Այդ ջարդերը կատարեցին դասական եղանակով. Արևմտյան Հայաստանի տարածքում տիրում էր անիշխանությունը, կաշառակերությունն ու տեռորը։ Ժողովուրդը բարելավումներ էր պահանջում։ Իշխանությունները ոչինչ չէին ձեռնարկում։ Հանդես եկան քաղաքական կազմակերպություններ, որոնք ի պատասխան իշխանությունների անգործության դիմեցին տեռորի։ Դրան հետևեց իշխանությունների ռեակցիան, «որոնք մարդկանց պահանջներից ազատվելու համար, որոշում են ազատվել հենց մարդկանցից» (486, էջ 176)։ Նկատի ունենալով ջարդերն իրականացնելու մեթոդները, եվրոպացիներն այն անվանել են «իսկական մարդասպան»։ Ջարդերի կազմակերպիչը թուրքական կառավարությունն էր, իսկ իրագործողները կառավարական զորքերը, համիդիե գնդերը և քրդական աշիրեթային ցեղերը։ Առհասարակ ջարդերի ժամանակ քրդական ավատական վերնախավը սերտորեն համագործակցեց թուրքական զինվորական իշխանությունների հետ։ Սասունի դեպքերը հետաքննելու համար նշանակված օտարերկրյա հյուպատոսական ներկայացուցիչների հավաքական հուշագրում բազմաթիվ փաստեր կան այդ մասին։ Նշվում էր նաև, որ ֆանատիկոս շեյխերը ջարդերի նախօրյակին և ընթացքում Սասունում ակտիվորեն վարել են հակահայկական կրոնական և շովինիստական ագիտացիա, քարոզել, որ գյավուրներ կոտորելը աստվածահաճո գործ է, որ դրան հավանություն է տալիս նաև սուլթան-խալիֆը և այլն (165)։

Փաստեր կան նաև, որ ջարդերի ժամանակ պատասխանատվությունն ամբողջապես քրդերի վրա բարդելու նպատակով,

Թուրքական զորքերը շատ հաճախ գործում էին քրդական տարազով (398, էջ 100)։ Ջարդի օրերին սուլթանը և իր կառավարությունը քրդերին ներշնչում էին, որ բնաջնջելով հայությանը, նրանք կարող են դառնալ և՛ Քրդստանի, և՛ Արևմտյան Հայաստանի լիիրավ տեր (128, էջ 159)։

1895 թ. հոկտեմբերի 20-ին, երբ Կոստանդնուպոլսում տեղի էր ունենում հայերի արյունոտ ջարդ, Աբդուլ Համիդը վավերացրեց մայիսյան բարենորոգումները, դրանց իրագործումը հանձնարարելով Շաքիր փաշային, որն այդ բարենորոգումները հասկանում էր որպես հայերի զանգվածային ջարդերի կազմակերպում։ Մաղթելով այդ բարենորոգումների նախագիծը, ռուս դիվանագետ Ռ. Ի. Տերմենը գրում էր, որ «...Թուրքիան ցանկանում է ոչ թե բարելավել քրիստոնյաների կենցաղը, այլ ոչնչացնել նրանց» (325, էջ 89)։

Ինչ վերաբերում է եվրոպական երեք դեսպաններին, ապա նրանք սուլթանի կողմից բարենորոգումների վավերացումից հետո իրենց գործը ավարտված համարեցին, այլևս չհետևելով դրանց իրականացմանը։ Առհասարակ եվրոպական մեծ տերությունները հանցավոր անտարբերություն դրսևորեցին արևմտահայության զանգվածային ջարդերի նկատմամբ։ Ֆրանսիացի հետազոտող Իվ Տերնոնը իրավացիորեն նկատում է, որ Աբդուլ Համիդ II-ը 1894—1896 թթ. հայերին կոտորելու իր ծրագիրն իրականացրեց, երբ համոզվեց, որ եվրոպական տերությունների միջամտությունը չի կարող բողոքներից, բանավոր սպառնալիքներից և զոհերի նկատմամբ համակրանք արտահայտող ուղերձներից այն կողմ անցնել։ «Չնայած Հայաստանի կոտորածներից սարսափած հասարակական կարծիքի ճնշմանը,— գրում է նա,— անգլիական և ֆրանսիական կառավարությունները դերադասեցին շարունակել Օսմանյան կայսրության ամբողջականությունը պահպանելու քաղաքականությունը և անլուծելի հայտարարեցին հայկական հարցը։ Մինչդեռ, միակ իրավացի անելիքը մեծ պետությունների կոլեկտիվ միջամտությունն էր այն ձևով, ինչ ձևով որ հնարավոր դարձավ Բալկանյան պետությունների ազատագրությունը կամ երաշխիքների ստացումը Լիբանանում» (478, էջ 115—116)։

Եթե 1894 թվականից մինչև 1896 թ. անգլիացիները հանդես էին գալիս հօգուտ հայկական վիլայեթներում բարենորոգումների իրականացման, ապա 1896 թվականից որոշելով, որ

դրանց կենսագործումը ձեռնտու է Ռուսաստանին, որը Արևմտյան Հայաստանը կվերածի իր ազդեցության գոտու, բրիտանական դիվանագիտությունը նույնպես պասսիվ դիրք գրավեց բարենորոգումների ծրագրի և առհասարակ հայկական հարցի նկատմամբ։

Սուլթանական լծի դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ բացահայտորեն թշնամական դիրք էր գրավել ամերիկյան իմպերիալիզմը։ Քաղաքական այս գիծը ԱՄՆ-ի կառավարությունը հատկապես աշխատում էր իրագործել Օսմանյան կայսրության տարածքում գործող բազմաթիվ միսիոներների միջոցով։ Ամերիկյան միսիոներները երեսպաշտորեն իրենց ձևացնելով որպես հայ ժողովրդի «բարեկամներ», գործնականում թռուցիկներ ու հոդվածներ էին գրում հայ ազատագրական շարժման դեմ, քարոզելով «հնազանդություն ճակատագրին», այսինքն իրենց ստրկական վիճակի հավերժացում։

1893 թ. ամերիկյան բողոքականների «Գոնկրեկաշընարիստ» թերթը դեկտեմբերի 28-ի համարում հողորդում էր, որ հայ բողոքականները չքաջալերեն հայ հեղափոխական շարժումները։ Բոստոնի «Թրանսքրիպթ» թերթում հնչակյան Ռուբեն խանազատը տիպված հանդես եկավ մի բաց նամակով, որը կրում էր հետևյալ խորագիրը՝ «Հայ ժողովրդի թշվառությունից օգտվող կեղծավոր ամերիկյան միսիոներներին»։ Իսկ ամերիկյան բողոքական միսիոներների պարագլուխ Սայրս Համլինին հայկական թերթերը անվանեցին «մոլլա» (32, էջ 179—180)։

Միսիոներների գործունեությունը նպաստում էր նաև Արևմտյան Հայաստանի հայաթափ լինելուն։ Վրթ. Փափազյանը գրում էր, որ նրանք ոչ միայն ազատ իրավունք էին տալիս «պաշտոնեից անելու ամեն կեղտոտություններ, ոչ միայն զրկում էին ժողովրդին խոսելու և քննադատելու իրավունքից, այլև սառեցնելով նրան հայրենիքից, ավելի խորն էին մղում մոլեռանդության մեջ։ ...Բողոքականությունը,— շարունակում է Վրթ. Փափազյանը,— մի անբարոյականեցուցիչ, ազգությունից և հայրենիքից սառեցնող մի այնպիսի ոստայն է, որից հանելու պիտի աշխատել ընկած հայերին այն ջանքով, ինչ ջանքով որ մենք կռվում ենք հարստահարությունների դեմ» (142, էջ 505, 507—508)։

Հիրավի, արևմտյան մեծ պետությունների և ցարական

Ռուսաստանի հանցավոր անտարբերության պատճառով էր, որ Օսմանյան կայսրության մեջ տիրող անիշխանությունը ի վերջո վերածվեց ջարդի։

Գերմանական գիշատիչ իմպերիալիզմը, որն 90-ական թվականներին պատրաստվում էր թռիչք գործել դեպի Արևելք, բացեիբաց ձեռնոց նետելով իր հիմնական իմպերիալիստական մրցակիցներին, և աննախընթաց ակտիվացրել էր իր քաղաքականությունը Օսմանյան կայսրությունում, ինչպես հայտնի է որդեգրել էր սուլթանի ներքին և արտաքին քաղաքականությանն անվերապահորեն նեցուկ հանդիսանալու գիծը։ Գերմանիան ոչ միայն խրախուսում էր հայկական ջարդերը, այլև լրիվ հավանություն էր տալիս այդ գործում քրդերին լայնորեն օգտագործելու թուրքական քաղաքականությանը։ Հայերի և Հայաստանի նկատմամբ ռուսական ազդեցությանը հակազդելու նպատակով, Գերմանիան, որի համար գաղտնիք չէր, որ հայ ժողովուրդը իր փրկության հույսը կապում է Ռուսաստանի հետ, որոշեց հենվել քրդերի վրա, դրանով իսկ լիակատար համերաշխություն դրսևորելով սուլթանի «քրդական» քաղաքականության հետ։

Գերմանական գործակալությունը քրդերի շրջանում պրոպագանդում էր այն տեսակետը, որ Բաղդադի երկաթուղու շինարարության ավարտից հետո քրդերի համար այլևս ոչ մի անհրաժեշտություն չի լինի հետապնդելու «վերացական քրդական ազատ պետություն ստեղծելու գաղափարը», որովհետև նոր պայմաններում նրանք ձեռք կբերեն «երջանկություն և բարեկեցություն» (488, № 35—38։ 4, էջ 53—54)։

Այլ կերպ ասած, գերմանական իմպերիալիզմը քուրդ ժողովրդին խոստանում էր թուրքական ստրկությունը փոխարինել գերմանականով։

Դաշնակցական կուսակցությունը, խորամուխ չլինելով Արևելքում Գերմանիայի հետապնդած գաղութակալական նպատակների մեջ, Բաղդադի երկաթուղու շինարարության կապակցությամբ մեծ հույսեր էր կապում Բեռլինի հետ։ Այսպես, Բուլղարիայում հրատարակվող դաշնակցական «Ռազմիկ» թերթը տպագրեց դոկտոր Ռայնոլդի հոդվածը, որտեղ ասվում էր. «Միակ հույսը Պաղտատի երկաթուղիին ծրագրին լուրջ իրագործումն է, որ կրնա հայերուն փրկություն ըլլալ» (125, 1906 թ. № 18)։

Եվ դաշնակցությունը հավատում ու պրոպագանդում էր Բաղդադի երկաթուղու «հայանպաստ» հետևանքների մասին այս անհիմն տեսակետը։

Իմպերիալիստական տերությունների վերոհիշյալ քաղաքականությունը բնականաբար Աբդուլ Համիդ II-ին մղում էր ավելի համարձակ ու վճռական իրագործել հայ ժողովրդի նկատմամբ իր ջարդարարական քաղաքականությունը։

Քրդական մի շարք ցեղերի 90-ական թվականների հայկական ջարդերին մասնակցելը Ռ. Ի. Տերմենը բացատրում է նրանով, որ «բազմաթիվ քրդական պետեր գիտակցում էին, որ հայերի ոչնչացումը իր հետ կբերի հողագործության և արդյունաբերության լրիվ անկում, որի պատճառով նրանք ոչ միայն չէին կոտորում իրենց շրջաններում ապրող հայերին, այլ հակառակը, նրանց պաշտպանում էին զինվորական քրդերից» (325, էջ 51)։ Սակայն այս տեսակետը, ճշմարտություն պարունակելով հանդերձ, աչքի է ընկնում միակողմանիությամբ։ Վ. Ֆ. Մինորսկու կարծիքով ջարդերի ժամանակ մի շարք քրդական ցեղեր չցանկացան կատարել սուլթանի հրամանը այն պատճառով, որ դրա մեջ տեսնում էին միայն կառավարության շահը։ «Պետք է նկատի ունենալ,— նշում է նա,— որ քրդերի մոտ երբեք չի եղել թուրքական հայրենասիրություն» (290, էջ 30)։

Արևմտահայության զանգվածային ջարդերի հետևանքով արևմտահայ ազգային-ազատագրական շարժմանը ծանր հարված հասցվեց։ Այն բախվելով քուրդ ժողովրդի զանգվածային դիմադրությանը, ի վիճակի չեղավ շոշափելի արդյունքներ ձեռք բերել։ 90-ական թվականների ջարդերից հետո հայ իրականության մեջ ավելի արմատավորվեց այն տեսակետը, որ արևմտահայության ազգային-ազատագրական շարժման դեմ այսուհետև ամենավճռական ձևով հանդես է գալու ոչ միայն օսմանյան բռնակալ կառավարությունը, այլև քրդական ավատական դասակարգը, ցեղային ավագանին, համիդիե գնդերը, աշիրեթային քրդերը և խաբված քուրդ գյուղացիության մի մասը, որոնց ներշնչել էին, որ հայ ժողովրդի ազատագրական շարժումը հակասում է իրենց ազգային շահերին։

Այնուհետև հայկական հարցն էլ ավելի սրվեց, որովհետև մեծ պետություններն ավելի լայնորեն սկսեցին օգտագործել այն Մերձավոր արևելքում իրենց քաղաքական շահերի օգտին։

Հայկական հարցի այսպես կոչված «ինտերնացիոնալացումը» էլ ավելի ուժեղացրեց իմպերիալիստական տերությունների ախոյանությունը և սրեց նրանց առճակատումը աշխարհը բաժանելու և վերաբաժանելու համար մղված պայքարում։ Այն ոչինչ չտվեց հայ ժողովրդին բացի նոր տառապանքներից և իմպերիալիստական քաղաքականության հորձանուտում խաղալիք դառնալուց։

Սուլթանական կառավարությունը նաև ձգտում էր ոչ միայն շախշախել հայ ազգային-ազատագրական շարժումը, այլև Արևմտյան Հայաստանից դուրս մղել հայկական բուրժուազիային և ուղի հարթել թուրք ազգային բուրժուազիայի զարգացման համար, որն ի վիճակի չէր խաղաղ մրցակցությամբ հաղթող դուրս գալ տնտեսապես ուժեղ հայկական բուրժուազիայի նկատմամբ։ «Այդ շարդերի հետևանքով կենտրոնական նահանգների համարյա ողջ առևտուրը և վերամշակող արդյունաբերությունը, որոնք մինչ այդ գտնվում էին հայերի ձեռքում, անցան բուն թուրքական բուրժուազիային» (231, էջ 58)։ Ռ. Տերմենը ևս նշում էր, որ 90-ական թվականների հայկական շարդերից հետո «սկսվեց հայերի ոչնչացումը տնտեսական ճանապարհով, դանդաղ, աննկատ, բայց և համառ կերպով։ ...Բազմաթիվ մանր, հազիվ նշմարելի միջոցառումներ սիստեմատիկորեն քայքայում են հայերի կենսական ուժերը և նրանք կործանվում են տնտեսական դանդաղ մահով, իսկ նրանց փոխարեն և ի հաշիվ նրանց հարստանում ու ծաղկում են մահմեդականները» (325, էջ 51)։

90-ական թթ. շարդերի ընթացքում «նոր օսմանների» ժառանգորդները՝ երիտթուրքերը ևս գտնում էին, որ հայերի զանգվածային շարդերը կթուլացնեն հայ բուրժուազիային և ուղի կհարթեն թուրք բուրժուազիայի ասպարեզ գալու համար։ Պատահական չէ, որ երիտթուրքական հոսանքներից մեկը, որի ղեկավարն էր Մուրադ բեյը, աշխատում էր արդարացնել սուլթանական իշխանությունների գործողությունները հայերի նկատմամբ (221, էջ 60)։ Նույն երիտթուրքերը շարդերի շրջանում վախենալով հայկական հեղափոխական շարժման վերելքից մանիֆեստ հրապարակեցին, որտեղ կոչ էր արվում ոչ թե տապալել սուլթանական բռնատիրությունը, այլ բարեփոխումներ իրականացնել (440, էջ 45)։

Այլ կերպ ասած, կրկին հայ ժողովուրդը մնաց մեն-մենակ թուրքական յաթաղանի և քրդական ավատատերերի նիզակների առջև։ Այդ պարագաներում, որպես շարյաց փոքրագույն, վերջնական օրակարգի առաջնահերթ խնդիր էր դառնում քրդերի հետ համագործակցության եզրեր գտնելու հարցը։ Առանձին անհատներ նույնիսկ որոշեցին մեկնել Կոստանդնուպոլիս ու Եվրոպա, այնտեղ հանդիպել քրդական ազգայնականների հետ և «փրոփականտ մղել ի նպաստ քյուրտերուն մոտենալու, և անհրաժեշտ զենք հայթայթելով՝ անոնց հետ համագործակցություն առաջ բերելով միացյալ ճակատ ապահովելու» (29, էջ 74—76)։

Հատկապես մեծ ուշադրություն էր դարձվում ազդեցիկ ցեղապետերի հետ ընդհանուր լեզու գտնելու գործին, որովհետև «իսկապես, քուրդ բնակչության շրջանում անհանգիստ տարրերին սանձելու համար տեղական բեկի կամ շեյխի հեղինակությունը միշտ ուներ և այժմս էլ դեռևս ունի ավելի մեծ նշանակություն, քան որևէ կայմակամի կամ մյուդիրի երբեմն միանգամայն ձևական իշխանությունը» (279, էջ 146)։

1898 թ. օգոստոսին Վանում դատավարության ժամանակ հնչակյան Փարամազը (Մաթևոս Սարգսյան) թուրքական դատարանին հայտարարեց. «Մեր պահանջն է՝ Հայաստանի ազգաբնակությունը, այսինքն հայ, քուրդ, թուրք, արաբ, լազ, չերքեզ, ասորի, եզիդի, մինչև անգամ մութրուպ-գնչուն իր քվեով ընտրի իր կառավարիչը և կառավարվի իրենց կարգված մարդկանցով և օրենքներով, որը բարօրության հասնելու կարճ ճանապարհն է։ Մենք պահանջում ենք Հայաստանը իր մեջ ապրող ամբողջ ազգաբնակության համար» (140, էջ 30)։ Հետևաբար Լեոյի այն տեսակետը, որ հայ իրականության մեջ անտեսվում էր քրդական հարցը, չի համապատասխանում իրականությանը։ Նա գրում է. «Միանգամայն անտես էր արվում քրդական հարցը, որ կյանքի ու մահվան հարց էր հայերի համար դարերից ի վեր։ Հայ հեղափոխական նացիոնալիզմն էր, որ իր արհամարանքը դեպի այս հարցը տարածում էր մինչև այնտեղ, որ պատերազմ էր հայտարարում քուրդ ժողովրդին» (70, էջ 65)։

Թեև 90-ական թվականներին քրդական ավատական վերնախավը սուլթանական կառավարության ձեռքում գործիք դարձավ հայկական հարցը ջարդերով լուծելու համար, բայց գտնը-

վեցին նաև առանձին ցեղապետեր, և նույնիսկ ամբողջ ցեղեր, որոնք ոչ միայն չմասնակցեցին կոտորածներին, այլև շատ հաճախ հայերին նույնիսկ վերցրին իրենց պաշտպանության տակ։ Օրինակ, Մուստաֆա աղան, որին ենթարկվում էին Ջեզիրեից հյուսիս մինչև Առնոս լեռան լանջերն ընկած քրդական ցեղերը, թեև սուլթանից ստացավ համիդիե փաշայի տիտղոս և հայերի շարդերին մասնակցելու հրավեր, սակայն 1896 թ. աշնանը, կոտորածների ժամանակ, այդ շրջանի հայերին իր հետ տարավ Ջեզիրեի կողմերը՝ իր ձմեռանոցը, նրանց փրկելով շարդերից (6, էջ 11—12)։ Նույն կերպ վարվեց նաև Մոկսի քրդերի ցեղապետ Մուրթուլլա (Մեհտուլլա) բեյը։ Նրա շնորհիվ շարդերի ժամանակ փրկվեց Մոկսի մոտ 10 000 հայ բնակչություն։ Մուրթուլլա բեյը հայտարարում էր, որ «Մոկսը Թուրքի կոտորածի տեղը չէ»։ Շեյխերը նրան «գյավուր» էին անվանում, ասելով, որ եթե հարմար պահ գտնի, քրիստոնյա պիտի դառնա (114, 1903 թ., № 12, էջ 84—85)։

Վերջապես քրդերի մասնակցությունը հայկական շարդերին ուժգին հարված էր նաև քրդական ազատագրական շարժմանը։ «Այդ արյունոտ իրադարձությունները ծանր հարված հասցրին ոչ միայն հայ, այլ վերջին հաշվով նաև քրդական ազատագրական շարժմանը, քանի որ, նախ, քրդերը շեղվեցին իրենց գլխավոր ազգային խնդրից՝ Թուրքական լծի դեմ պայքարից, իսկ երկրորդ, իմպերիալիստական տերությունները ստացան լրացուցիչ պատրվակ Փոքր Ասիայի արևելքում ակտիվորեն միջամտելու համար ազգամիջյան կոնֆլիկտներին» (274, էջ 147)։ Վանի նահանգում ևս հայերի մի ստվար զանգված ապաստան գտավ քրդերի մոտ (279, էջ 179—180)։ Տարոնի դաշտի գյուղերում քրդական մի շարք ցեղեր հրաժարվեցին կոտորածներին մասնակցելուց (127, էջ 587)։ Իրենց տիրապետություններում հայերի շարդ թույլ չտվեցին նաև Հուսեին փաշան Ադիլջևազում, Հաջի խանը Նորդուզում, Իբրահիմ փաշան Շեհրիվերանում և շատ այլ ցեղապետեր։ Հայերի շարդին չմասնակցեցին նաև Սինջարի եզիդները, ինչպես նաև Բոհթանի, Խիզանի, Ջեզիրեի և մի շարք այլ վայրերի քրդական ցեղերը (14, 1900 թ., 1—5, էջ 132)։

Ինչ վերաբերում է Դերսիմի ղզլբաշներին, ապա վերջիններս ոչ միայն հրաժարվեցին օգնել Զեյթունի դեմ ուղարկված Թուրքական բանակին, այլև դիմադրություն ցույց տվեցին

նրան։ Նույն դերսիմցիների աջակցության շնորհիվ Մալաթիայի հայությունը հաջողությամբ պաշտպանվեց հարձակումներից (32, էջ 212—213)։

Պարզաբանելով դերսիմցիների և դերսիմաբնակ հայերի և քրդերի բարեկամական հարաբերությունների պատճառները, անգլիացի Լինչը գրում էր. «Ամբողջ Մերձավոր արևելքում ղզլբաշներ ամոթալի անունով նշավակված դերսիմցիները չարացած էին Թուրքական կառավարության փորձերից իրենց տիրապետող դավանանքը պարտադրելու պատճառով։ Կառավարության նկատմամբ նրանք տածում են խուլ ատելություն։ Իսկ դեպի քրիստոնյաները նրանց ձգում է ընդհանուր հակամարտությունը գոյություն ունեցող կարգերի հետ և հարգանքը քրիստոնեական կրոնի նկատմամբ» (276, էջ 538)։

Ի դեպ, դերսիմաբնակ հայերը ևս իրենց ղզլբաշ հարևանների նման ապավինում էին զենքին, որովհետև ինչպես իրենք էին ասում «...մենք ատ հիքմաթը (կառավարությունը։— Վ. Բ.) ցինք ծանցնար, ցունքի անի անօրէն ա, դատաստան էնել ցի գիտա. մենք մինակ սիլահը (զենքը։— Վ. Բ.) կծանցնանք» (16, էջ 69)։

Առանձին վայրերում քրդական ցեղերը ոչ միայն չեզոք դիրք գրավեցին հայերի նկատմամբ կամ աջակցություն ցույց տվեցին նրանց, այլև նրանց հետ համատեղ զենքը ձեռքներին հանդես եկան կառավարական զորքերի և համիդիե գնդերի դեմ։

Բացի նշված հանգամանքներից, չարդերին մասնակցելու դիմաց սուլթանի՝ քրդերին տրված խոստումների մեծագույն մասը մնացել էր անկատար։ Ավելին, Թուրքական պաշտոնյաները նույնիսկ սկսել էին հայերին կողոպտված գույքը վերադարձնելու պատրվակով կողոպտել կողոպտողներին (117, էջ 38)։

Չարդերից հետո քրդերից շատերը հասկացան, որ Թուրքական կառավարությունն ի վերջո սպառնում է իրենց ևս։ Այս միտքը անխուսափելիորեն նրանց մղելու էր դեպի համագործակցության գաղափարը հայ ժողովրդի հետ։ Արտահայտելով այդ տրամադրությունները, Վանում ռուսական հյուպատոս Թումանովին գրում էր. «Հայերի և քրդերի միջև բարեկամություն գոյություն չունի, սակայն երկոստեք ունեցած ատելու-

թյունը Թուրքերի նկատմամբ ժամանակի ընթացքում կարող է նրանց միավորել. այդպիսի հաշտեցման և դաշինքի մասին ոչ մեկ անգամ է, որ հարց է բարձրացվում ինչպես քրդերի, այնպես էլ հայերի կողմից» (166)։

Ռուսական դիվանագետներից անկախ այդ նույն տեսակետը հայտնում էր նաև ֆրանսիացի Լ. Քոնթանսոնը։ Նրա կարծիքով քրդերը սպառնում էին «Ասիական Թուրքիայում օտտոմանյան կառավարությանը պատճառել ամենալուրջ դժվարություններ», որովհետև «քրդական և հայկական հարցերը կապված են միմյանց հետ», իսկ դա, նրա կարծիքով, առաջ կբերեր նոր ճգնաժամ և պետությունների միջամտություն (406, էջ 120—121, 192)։

Ճիշտ է, քուրդ ժողովրդի մի խոշոր զանգվածի մասնակցությունը հայկական ջարդերին տևական ժամանակով հետաձգում էր հաշտության ու դաշինքի հնարավորությունը, սակայն այդ դաղափարը մնում էր ուժի մեջ։

90-ական թվականների ջարդերի շրջանում ցարական Ռուսաստանը Արևմտյան Հայաստանում հայ ազգային-ազատագրական շարժումների նկատմամբ որդեգրել էր բացասական դիրքորոշում։ Ըստ այնմ էլ ցարիզմը հայ-թուրքական և հայ-քրդական հարաբերությունների հարցը համարում էր զուտ «տեղական» հարց կամ Օսմանյան կայսրության ներքին գործ (167)։

Վախենալով, որ հայկական հարցի ծանրության կենտրոնը Թուրքիայից կարող է տեղափոխվել Ռուսաստան, Անդրկովկասում ցարիզմի ներկայացուցիչ Գոլիցինը հրամայեց բոլոր միջոցներով արգելք հանդիսանալ Արևմտյան Հայաստանից հայ բնակչության արտագաղթին դեպի Անդրկովկաս (340)։ Մեկնաբանելով այդ քաղաքականության ներքին դրդապատճառները, Ռոզա Լյուքսեմբուրգը գրում էր. «Ռուսաստանի շահն այժմ պահանջում է, որ Թուրքը տեր մնա իրեն կազմալուծող բացիլներին՝ քրիստոնյա ազգերին, և որ նրանք էլ իրենց հերթին մնան Թուրքերի լծի տակ և Ռուսաստանից կախյալ, մինչև հասնի իր պլաններն իրագործելու նպաստավոր պահը՝ շարժվել դեպի Կոստանդնուպոլիս» (99, էջ 64)։

Առաջնորդվելով այս նկատառումներով, 1897 թ. ռուսական ցարիզմը փակեց ռուս-թուրքական սահմանը, արգելելով արև-

մրտահայությանը գաղթել դեպի Արևելյան Հայաստան և առհասարակ Կովկաս։

Ռուսաստանի հարևանությամբ հայկական պետականության ստեղծումը ցարիզմը դիտում էր որպես մեծագույն վտանգ իր քաղաքական շահերին։ Այդ պատճառով 90-ական թվականներին նրա վերաբերմունքը բացասական էր Օսմանյան կայսրությունում հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ։ Այդ թեզը Լոբանով-Ռոստովսկին ձևակերպում էր հետևյալ կերպ. «Ռուսաստանը թույլ չի տա մեկ այլ Բուլղարիայի ստեղծումը. Հայաստանը նրան պետք է առանց հայերի» (230, մաս 1, էջ 25)։

Բացի այդ Ռուսաստանի ծանր ֆինանսական վիճակը և Հեռավոր արևելքում ծավալվող քաղաքական դեպքերը ստիպում էին նրան սպառնալից դիրք չբռնել սուլթանական կառավարության նկատմամբ։ Վերոհիշյալ հանգամանքների բերումով Ռուսաստանը առաջին անգամ ժամանակավորապես հրաժարվեց Օսմանյան կայսրության քրիստոնյաներին հովանավորելու իր ավանդական դերից։

Ինչ վերաբերում է Մեծ Բրիտանիային և Ֆրանսիային, ապա սրանք ևս հայկական ջարդերի կապակցությամբ սահմանափակվեցին լոկ դեմարշերով, Թուրքական կառավարությունից «պահանջելով» իրականացնել խոստացված բարենորոգումները հայկական վիլայեթներում, ընդ որում, այդ հարցում չդրսևորելով ոչ մի հետևողականություն։

Հատկանշական է նաև, որ եթե 90-ական թվականների սկզբին սուլթանը եվրոպական դեսպաններին հավաստիացնում էր, որ միջոցներ կձեռնարկի քրդերին զսպելու համար, նրանցից պատանդներ կվերցնի, մասնակիորեն կզինաթափի համիդիե գնդերի մեջ ընդգրկված աշիրեթներին, նրանց կենթարկի ընդհանուր քաղաքացիական դատարաններին և այլն, ապա 1896 թ. վերջին, երբ Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային ջարդը արդեն դարձել էր փաստ, սուլթանը լկտիաբար դեսպաններին հայտարարեց, որ «քուրդը միշտ եղել է տեր, իսկ հայը ծառա, հետևաբար տերությունների կողմից պահանջվող բարեփոխությունները անիրականալի են» (329, էջ 31)։ Ավելին, նա համարձակություն ունեցավ մերժել դեսպանների պահանջը՝ Էրզրումի, Բիթլիսի և Վանի վիլայեթների հայ բնակչության դահիճ, հայդերանլի ցեղի առաջնորդ Հուսեին փաշային դատի տալ։

Հակառակը, նա պարգևատրեց նրան Լիաքաթ ոսկե մեդալով։ Սուլթանական պարգևների ու շքանշանների արժանացան նաև շարդերի ժամանակ «աչքի ընկած» այնպիսի քուրդ ֆեոդալներ, ինչպիսիք էին Էմին փաշան, Հաջի Թեյմուր փաշան, Դարվազ խանը և ուրիշներ, (168) որոնց անմարդկային արաքները սարսափի ճիչ էին առաջ բերում եվրոպական թերթերի ընթերցողների մոտ։

Ի պատասխան եվրոպական դեսպանների հավաքական և անհատական դեմարշերի, նրանց պահանջների՝ «հանուն քաղաքակրթության» անհապաղ դադարեցնելու շարդերը և պատժելու մեղավորներին, թուրքական դիվանագիտությունը լայնորեն օգտագործում էր իր ավանդական «փափուկ բարձը», բնավ շառարկելով, համաձայնվելով դեսպանների ասածների հետ, բայց և ոչինչ չանելով և նախկինի պես շարունակելով իր արյունոտ գործը։

Իրենց հեղափոխականներ հորջորջող երիտթուրքերը ևս հանդես եկան շարդերն արդարացնող փաստաբանների դերում։ Օրինակ, իթթիհադի օրգան «Մեշվերեթ» թերթը զայրանում էր Սպաղանքի հայության կոտորածի առթիվ եվրոպական մամուլի հայտարարած բողոքի համար և հարց էր տալիս թե ինչո՞ւ Անգլիան և Ֆրանսիան կարող են Աֆրիկայում սպանություններ կատարել, իսկ քրդերը և թուրքերը չեն կարող իրենց իմացած ձևով դատաստան տեսնել հայ «ավազակների» հետ (32, էջ 226)։

90-ական թվականների շարդերից հետո օսմանյան կառավարությունը բռնագրավում էր երկրից փախած տասնյակ հազարավոր հայերի հողերը, շարժական և անշարժ գույքը և դրանք հանձնում քրդական ավատատերերին՝ սեփականության իրավունքով։ Հայ գյուղացիների և հողի այլ սեփականատերերի համատարած հողազրկումը հանգեցրեց քրդական աղաների և բեկերի, շեյխերի ու ցեղային առաջնորդների նոր տիրույթների առաջանալուն։ Ա. Տատիշչևը նշում էր, որ թուրքական կառավարությունը հետևողականորեն ձգտում էր հայերից վերցնել հողերը հօգուտ քրդերի (257, էջ 60)։

Վերոհիշյալ քաղաքականության հետևանքով հայ բնակչության կախումը քրդական ավատատերերից էլ ավելի ուժեղացավ։ Կառավարության հովանավորությունից օգտվող «նոր հողատերերի» վարքագիծը հիշեցնում էր դերբեյությունների ժամանակաշրջանը։ Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան

Ի. Ա. Զինովևը նշում էր, որ քրդական աղաներն ու բեկերը հայ գյուղացիությանը վերաբերվում էին ինչպես իրենց ստրուկների (169)։ Այդ նույնը վկայում էր նաև անգլիացի Լինչը. «Այդ քրդերի, մանր չինովնիկների ու քաղցած զափթիեների շրջանում հայ հողագործները կյանքի ու մահու միջև մշտապես մազից են կախված։ Ժամանակ առ ժամանակ որևէ փառամոլ չինովնիկ հնարում է «հեղափոխություն» և գյուղը վեր է ածվում այնպիսի սարսափների ասպարեզի, որից սառչում է արյունը» (276, էջ 331)։

Կառավարության թողտվությամբ քոչվոր քուրդ ցեղերը շարունակում էին թափանցել այն շրջանները, որոնք մինչ այդ բնակեցված էին բացառապես հայերով։ Դրա հետևանքով գնալով իջնում էր հիշյալ շրջանների հայ բնակչության տեսակարար կշիռը հօգուտ մահմեդական քոչվոր բնակչության (484, էջ 132)։

Վերոհիշյալ քաղաքականության նպատակներից մեկն էր նաև հարված հասցնել հայ հեղափոխական աճող շարժմանը։ Վկայելով այդ մասին Ռ. Ի. Տերմենը գրում էր, որ «կառավարությունը ձգտում է քրդերին բնակեցնել հայերի մեջ հեղափոխական պրոպագանդային հակազդելու համար» (325, էջ 60)։ Բշարե Խալիլը[21], որը դարձել էր պատուհաս հայ գյուղացիության համար և որի ձեռքով կառավարությունը հաշվեհարդար էր տեսնում հայ ազատագրական շարժման մասնակիցների հետ, արժանանում էր սուլթանական շքանշանների (326 1913 թ. 26 հուլիսի)։

Սանձարձակ համիդիե գնդերը այլևս չէին սահմանափակվում լոկ հայ գյուղացիության կողոպուտով։ Նրանք կողոպտում և բռնություններ էին գործադրում նաև նստակյաց (ռայաթ) քուրդ և թուրք բնակչության նկատմամբ։ Ռ. Բեկգուլյանցը գրում էր, որ Մուշի հովտի գլխավոր ավազակներ Մուսա բեկը, Կասըմ բեկը և ուրիշներ «հավասարապես կողոպտում էին ինչպես իրենց ցեղակիցներին, այնպես էլ հայերին» (225, էջ 32)։

Խոսելով այն մասին, որ համիդիեների արարքները մեծ դժգոհություն էին առաջ բերում նաև թուրք բնակչության շրջանում, գերմանական «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի թղթակիցը գրում էր. «Ես երբեք չպիտի զարմանամ, եթե թուրքերը այնտեղ դիմեն ինքնապաշտպանության» (14, 1900 թ.,

1—5, էջ 115)։ 1900 թ. գարնանը Վասպուրականի շրջանում հարյուրավոր թուրք գյուղացիների ստորագրություններով մի հանրագիր ուղարկվեց տեղի վալիին որպես բողոք համիդիեների վայրագությունների դեմ (40)։ Սակայն կառավարությունը շուտափույթ կերպով փակեց այդ հարցը, հայտարարելով, որ ինքը չի ուզում լսել նրանց դեմ որևէ բողոք։ Վանի թուրքերը պատրաստեցին նաև Բ. Դռանն ուղղված մի հանրագրություն, որով պահանջում էին կամ անմիջական գոհացում և ապագա ապահովության երաշխիք և կամ իրենց բնակության վայրերից գաղթելու հնարավորություն տալ։ Հայդերանցի աշիրեթապետեր, համիդիե միրալայ (գնդապետ) Քյոռ Հուսեին փաշան, Հաջի Թեյմուր փաշան և Էմին փաշան տեսնելով, որ խնդիրը բարդանում է, որոշեցին հանգստացնել թուրքերին, խոստանալով, որ նրանց ձեռք չեն տա։

Համիդիեների այս խժդժությունները կատարվում էին թուրքական իշխանությունների աչքի առջև։ Դրանք հատկապես հովանավորում էր մուշիր Զեքի փաշան, որին ժողովուրդը մականվանել էր Հայաստանի դահիճ։

Վերջինս ջարդարար ու կողոպտիչ համիդիե հրամանատարների նկատմամբ ոչ մի պատժիչ միջոցառում չէր ձեռնարկում, որովհետև կողոպուտների պատկառելի մասը մտնում էր իր գրպանը։ Սակայն գործը դրանով չէր սահմանափակվում։ Ռուսական դիտորդները գրում էին, որ «քրդերի կողմից էրզինգան (որտեղ գտնվում էր Զեքի փաշայի ռազմակայանը) ուղարկվող դրամական նվերները, այնտեղից ճանապարհվում են նաև Բոսֆոր, փաշաների և ավելի վերև գտնվող մարդկանց տները» (162)։

Այսպիսով, Արևմտյան Հայաստանում ամենուրեք իշխում էր բիրտ ու վայրենի ուժը, անիշխանությունն ու քաոսը։ Խոսք անգամ չէր կարող լինել անձի, գույքի անվտանգության, առավել ևս պատվի ապահովության մասին։ Այն բոլոր նահանգները, ուր ոտք էին դնում համիդիե գնդերը, կարճ ժամանակում վեր էին ածվում ավերակների։ Նրանց ավերիչ արարքներին չէին կարողանում դիմադրավել նույնիսկ կայսրության արաբական նահանգների ռազմաշունչ բեդվին ցեղերը։ Եվրոպական դիվանագետների հաղորդումների համաձայն բեդվինները կառավարությունից պահանջում էին Մոսուլի և Հալեպի նահանգներից քրդերին հեռացնել և տեղափոխել այլ վայրեր, հակա-

ռակ դեպքում սպառնում էին դիմել կտրուկ միջոցների (170։ 171)։

Քանի որ տեղական իշխանությունները վախենում էին համիդիեներից և աշխատում էին հնարավորին չափ գործ չունենալ նրանց հետ, կառավարությունն աստիճանաբար կորցնում էր իր հսկողությունը նրանց նկատմամբ (325, էջ 54)։

Այն շրջաններում, ուր տեղակայված էին համիդիե գնդեր, առևտուրը ճանապարհների վտանգավոր լինելու պատճառով, համարյա խպառ դադարել էր։ Մի շարք վայրերում հուսահատության եզրին հասած տեղական բնակչության և համիդիե գնդերի միջև սկսվեցին զինված ընդհարումներ։ Այսպես, 1900 թ. արաբական շամմար ցեղը զինված հակահարված տվեց Իբրահիմ փաշայի համիդիե գնդերին։ Այս և նման դեպքերը մեծապես անհանգստացրին կառավարությանը։ Վերջապես 1900 թ. ամռանը Վանի նահանգի թուրքերն ու ոչ աշիրեթային քրդերը մի խնդրագիր ներկայացրին տեղի ռուսական հյուպատոսին, որտեղ ասվում էր, որ համիդիե գնդերի գործադրած բռնություններից ու կողոպուտներից իրենք արդարություն են փնտրում «ռուսաց շահնշահի մոտ», որովհետև «մեր կառավարությունը ոչ կը հարցնե, ոչ կը փնտրե և ոչ իսկ մեզ տերություն կընե»։ Այնուհետև նշվում էր, որ եթե ռուսական կառավարությունը «մեր ներկա թշվառ վիճակի մեջ մեզ օգնելու, մեր վրա հսկելու և մեզ այս թշվառությունից և անձուկ վիճակից ազատելու կամք հայտնի, մենք բոլորս էլ նրա դրոշի տակ կմտնենք և հպատակ կդառնանք» (41)։

Սակայն այս բոլորից առավել թուրքական կառավարությանը անհանգստացնում էր այն, որ 90-ական թվականների հայերի ջարդից հետո Արևմտյան Հայաստանից ստացվող եկամուտները խիստ պակասել էին։ Հատկապես գանձարանը մեծ վնասներ էր կրում աղնամի (անասունների համար գանձվող հարկի) բերած եկամուտների կտրուկ կրճատման պատճառով։ Բանն այն էր, որ ջարդերից հետո հայկական գյուղերում փաստորեն այլևս անասուններ համարյա չէին մնացել, որովհետև նրանց մեծ մասը քշել-տարել էին քուրդև թուրք ավատատերերը։ Այդ պատճառով քրդական ավատատերերին պատկանող հոտերը անհամեմատ աճել էին։ Եվ թեև սովորաբար կառավարության սահմանած տուրքերը միշտ նպատակ ունեին ճնշել քրիստոնյա տարրը, սակայն սնանկացած կառա-

վարությունը որոշեց դիպչել նաև քրդերին և նրանցից հավաքել այդ տուրքը։ 1900 թ. գարնանը կառավարությունը պաշտոնյաներ ուղարկեց գավառները, որոնք սակայն ձեռնունայն վերադարձան, հանդիպելով քրդերի կատաղի դիմադրությանը։ 1904 թ. Բ. Դուռը ստիպված այդ հարցի վերաբերյալ հատուկ օրենք ընդունեց, որն ուղղակի գրգռեց քուրդ ցեղապետերին ու ֆեոդալներին, որովհետև ամեն մի խոշոր անասունի համար կառավարությունը պահանջում էր վճարել 10 ղուրուշ, իսկ մինչ այդ նրանք այդպիսի հարկ չէին վճարում։ Ընդ որում, կառավարությունը սկսեց քուրդ բնակչությունից գանձել նաև հնուց մասամբ գանձված տուրքերը։

Դա առաջ բերեց քրդերի ըմբոստությունը։ Ըմբոստացան նույնիսկ «ամենահավատարիմ» համարվող համիդիե գնդերի հրամանատարները։ Առանձին վայրերում ապստամբած քրդերը ոչնչացրին բավական թվով կառավարական զորքեր և ժանդարմների (12, 1913 թ. 6 նոյեմբերի, № 246)։ Բոհթանի, Խիզանի, Ջեզիրեի, Սինջարի քրդերը պահանջում էին, որ իրենց գավառների պաշտոնյաները և հատկապես դատավորները քրդեր լինեն։

Կառավարությունը մի պահ ցանկացավ զորքեր ուղարկել ապստամբած քրդերի դեմ, սակայն, երբ տեսավ, որ հարցը կարող է ընդունել ծանր կերպարանք, ընկրկեց և «գործը անուշի կապեց»։

Այս դեպքերը, սակայն, համոզեցին սուլթանական կառավարությանը, որ եթե նա փորձի բռնության և ուժի դիմել թեկուզ և իր վեհապետական իրավունքները գործադրելու համար, առաջինը ապստամբության դրոշը կպարզեն այն քուրդ բեյերը, որոնք, թվում էր, սուլթանի ամենահավատարիմ հպատակներն են, և սուլթանը կարծում էր, թե պաշտոններ և շքանշաններ շռայլելով ինքը ամբողջապես «գնել է» այդ ֆեոդալներին։

Աբդուլ Համիդին թվում էր նաև, որ ինքը արդեն կայունացրել է իր դիրքերը Արևմտյան Հայաստանում և, ամենակարևորը, հայ ժողովուրդը սարսափից կորցրել է դիմադրելու ընդունակությունը և հնազանդվել իր կամքին, որ «համիդիեները հանդես են գալիս որպես սուլթանական կարգադրությունների հավատարիմ կատարողներ, որ պետությունները լվացին իրենց ձեռքերը և այլևս չեն պատրաստվում լրջորեն պաշտպանել իրենց «հավատակիցներին»։ Իրականում, հակառակը, հար-

յուր հաղարավոր հայեր դարձան Թուրքական պետության անհաշտ և ոխերիմ թշնամիներ (273, էջ 72)։

Այս շրջանում քրդական շարժման և հայ-քրդական հարաբերությունների մեջ նշմարվում են նոր երևույթներ։ Նախ, 90-ական թվականների վերջերին առաջին անգամ Թուրքիայում երևան են գալիս քուրդ «քաղաքական հանցագործներ»։ Քրդերի մեջ խմորվում էր որոշակի շարժում։ Կոստանդնուպոլսում և Անատոլիայում 1897 թ. տեղի է ունենում քրդերի ձերբակալություններ և քրդերի հանդեպ քաղաքական դատ, որտեղ մի քանի քուրդ ղեկավարներ ամբաստանվում էին իբրև իրենց ցեղակիցների գրգռողներ Թուրքական կառավարության դեմ (38, ա)։

Քուրդ ազգայնականների կողմից 1898 թվականից արտասահմանում (սկզբում Կահիրեում, իսկ ապա Ժնևում և այլն) հրատարակվող «Քրդստան» թերթը,[22] որն արտահայտում էր սթափ մտածող քրդական նոր մտավորականության խոհերը, հանդես էր գալիս քուրդ ժողովրդի՝ հայերի նկատմամբ բռնած խելահեղ դիրքի դեմ և պահանջում էր հայ ժողովրդի հետ համերաշխություն հաստատել և այլն։

«Քրդստանը» առաջ էր քաշում նաև քաղաքական խնդիրներ։ Նա կոչ էր անում դիմադրել Թուրքական կառավարության քուրդ տարրը բաժան-բաժան անելու քաղաքականությանը։ Թերթի հրատարակիչ Աբդուրրահման Բադրխանը իր հոդվածներում աշխատում էր փաստերով ապացուցել, որ քուրդ ժողովրդի հետամնացության ու խավարի միակ պատճառը Թուրքական կառավարությունն է և որ նրան ձեռնտու է քրդերի նման վիճակը (14, 1900 թ., № 1—5, էջ 138—139)։ Երբ Փարիզում հրատարակվող «Անահիտ» ամսագիրը իր թղթակցի միջոցով դիմեց Աբդուրրահման Բադրխանին, խնդրելով պարզաբանել իր թերթի ուղղությունը, վերջինս պատասխանեց. «... գիտեմ, թե քյուրտերուն և հայերուն շահը միևնույնն է, և ասոր համար է, որ ես միշտ ուզած եմ լրագրիս միջոցով ջնջել այն ատելությունը, որ գոյացած է այս երկու ժողովուրդներու միջև... «Քյուրտիստանի» մեջ քրդերեն լեզվով հրատարակված հոդվածները ատոր վկա են։ ... Ամեն տեսակ զոհողություն պիտի ընեմ ջնջելու համար այն ատելությունը զոր Աբդուլ Համիդ այս երկու ժողովուրդներու միջև դրած է...» (14, 1900 թ., № 1—5, էջ 138—139)։

«Քրդստանը» գտնում էր, որ Փոքր Ասիայում քրդերը թուրքերից կատարելապես տարբեր մի ազգություն են։ (112, 1898 թ., № 117, 4 հուլիսի)։ Սա թուրքական կառավարության համար ծայրահեղ վտանգավոր մի հարցադրում էր, որովհետև դարեր շարունակ թուրքերը փորձում էին ներշնչել քրդերին, որ նրանք ինքնուրույն ազգություն չեն և նույն կրոնն են դավանում։ Անդրադառնալով այդ հարցին գերմանական հետախույզ Վալդեմար Բելկը, որը «Ֆրանկֆուրտեր ցայտունգ» թերթի թղթակցի անվան տակ շրջում էր Արևմտյան Հայաստանում, գրում էր. «Ի՞նչ պիտի պատահեր, եթե մի օր քրդերը մտածեին, թե իրենք իսկապես իրանական ցեղից են և որ թուրանական թուրքերի հետ բացարձակապես ոչ մի ազգակցություն չունեն»։ Նրա կարծիքով քրդերի մոտ ազգայնական զգացման արթնացումը և թուրքական իշխանության լուծը թոթափելու ցանկությունը գրգռելու համար դեռևս պակասում էր մի դրդիչ գործոն, դուցեև մի անձ, որը կարող էր ամեն բոպե հայտնվել և միացնել իրար դեմ թշնամացած ժողովուրդներին (14, 1900 թ., № 1—5, էջ 115)։

Հետաքրքիրն այն է, որ «Քրդստանը» դրսևորելով իր քաղաքական համակրանքը դեպի Մեծ Բրիտանիան, այնուհանդերձ, քրդերի ապագա բարօրության հույսը չէր դնում եվրոպական և ոչ մի տերության վրա, այլ միայն քրդերի և նրանց «դրացի հայերի նիզակակցության» վրա։ Ուստի նա «ամեն ճիգ ի գործ կդնե քյուրտի և հայու մեջ թուրքի մինչև հիմակ սերմանած ատելությունը արմատախիլ ընելու և զանոնք բնակակցի բարեկամական և բաղդակցի շահակցական կապերով միմյանց շաղկապելու» (14,1900 թ., № 1—5, էջ 139)։

«Քրդստանի» արծարծած այս գաղափարները լայն արձագանք էին գտնում քրդական զանգվածների շրջանում։ Թերթի համարներից մեկում տպագրվել էր ջեզիրեցի մոլլա Սալեհ ստորագրությամբ մի թղթակցություն, որի մեջ ասվում էր, որ սուլթանը «ամբողջ քյուրտերը հայերու դեմ կհանե, անոնց վրա հարձակել կուտա։ Մենք հիմակ այլևս կհասկնանք, որ հայը կնեղվի և իր տանջանքներեն կհեծկլտա, և այժմ թագավորի նպատակն ալ կհասկնանք։ Ան կուզե, որ մենք միշտ հայերու հետ կռված մնանք։ Բայց թող այլևս ուշքի գա և հավատացած լինի, որ մենք այսուհետև մեր պատվո վրա երդված... բարեկամություն պիտի ընենք անոնց հետ։ Մենք կըմբռնենք, որ

մեր ամբողջ չարյաց պատճառը «պալատի» պառակտիչ և նեռ հոգիներն են» (14, 1900 թ., 1—5, էջ 140)։

Քրդերի ազգային ինքնագիտակցության արթնացումը և հատկապես «Քրդստան» թերթի բարձրացրած գաղափարները մեծ ոգևորությամբ ընդունվեցին հայկական շրջաններում։ «Անահիտը», օրինակ, գրում էր. «Եթե անոնք (հայերը և քրդերը։— Վ. Բ.), որ նույն բռնության տակն են, իրարու հետ չհամաձայնին, որո՞ւ հետ պիտի համաձայնին։ ... Անհրաժեշտ է, որ քյուրտ և հայ թերթերը ուսումնասիրություններով և հոդվածներով սկսին երկու դրացի ցեղերը իրարու ճանչցնել՝ իրենց «իրական» գույնով և «իրական» շահերով ջանան բառնալ այն արյունոտ գժտությունները, որոնք Թուրք բռնապետության շահերուն միայն օգտակար եղած են մինչև ցարդ։ Այս ուղղությամբ ջանքերը շատ ավելի գործնական ու ապահով են քրդա-հայկական կռիվը բառնալու, քան հայ հեղափոխական խումբերու հակաքուրդ հարձակումները։ Հայը պետք է իր բոլոր միջոցներ, զենք, ուժ, դրամ, խելք դարձնե միակ թշնամիին, Թուրք ռեժիմին դեմ, միակ նպատակին՝ ազգային-ազատագրության համար» (14, 1900 թ., № 1—5, էջ 132, 133)։

«Անահիտը» այն համոզմունքն էր հայտնում, որ «... քյուրտը չէ հայուն բուն թշնամին։ Հայու թշնամին Թուրք բռնապետական ռեժիմն է, որուն հավասարապես գերի են քյուրտը և հայը» (14, 1900 թ., № 1—5, էջ 132)։

Այս մտայնությունը բնորոշ էր հայկական մամուլի մեծ մասին։ 1898 թ. դաշնակցական «Դրոշակը» հայատառ քրդերեն և հայերեն հրատարակեց «Կոչ քրդերին» վերտառությամբ մի անստորագիր հոդված[23], որտեղ հեղինակը քուրդ ժողովրդի դժբախտությունների պատճառ համարում էր օսմանյան կառավարությանը։ Նա հորդորում էր քրդերին, որ «իբրև միևնույն երկրի զավակ» պարտավոր են «բարեկամաբար ապրիլ հայերուն հետ», որ «հայերը ձեզի ամեն կերպով աջակցելու կազմ պատրաստ են։ Համերաշխության ու համաձայնության մեջ մի թերանաք...» (39, էջ 67—68)։ «Երկու հազար տարի հայերուն հետ մեկտեղ կապրիք,— ասվում էր կոչում,— անոնք ձեր բարեկամներն ու դրացիներն են։ ...Միացեք, ձեր միակ փրկությունը զենքի ուժով միայն պիտի ըլլայ, այսինքն ապստամբությունով» (39, էջ 67—68)։ Եվ այսպես, եթե նախկինում հայ-քրդական համերաշխություն հաստատելու միտքը հղացվել և

քննարկման առարկա էր եղել գլխավորապես միայն հայերի մոտ, ապա XIX դարի վերջին այդ գաղափարը հող գտավ նաև սուլթանական կառավարության նկատմամբ ընդդիմադիր տրամադրություններ ունեցող առանձին քուրդ գործիչների մոտ։

Բուն երկրում ևս հայ-քրդական հարաբերությունների մեջ սկսեցին նշմարվել նոր երևույթներ։ Համոզվելով, որ հայ ազգային-ազատագրական պայքարը ուղղված է ոչ թե քուրդ ժողովրդի, այլ թուրքական կառավարության դեմ, շատերը և նույնիսկ առանձին քրդական ցեղապետեր սկսեցին օգնել հայ հեղափոխականներին՝ Կովկասից և Իրանից զենք և գրականություն տեղափոխելու Արևմտյան Հայաստան։ Ռուսական զինվորական դիտորդները այն կարծիքին էին, որ «բազմաթիվ քրդական բեկեր մերձեցում են փնտրում հայերի հետ, որպեսզի օգտվեն նրանց ուժից» (341)։ Ալի բեյ Հայդերանլին, Շամդինանի և Արաղայի գավառի աշիրեթապետեր Մուստաֆա բեկը, Արճեշ-Ադիլջևազի Ալի բեկը, Խնուսի, Մանազկերտի և Վարդոյի ջիբրան աշիրեթի առաջնորդները և բազմաթիվ այլ ցեղապետեր, ոչ միայն արգելք չէին հանդիսանում որպեսզի իրենց հողերով զենք և գաղտնի գրականություն տեղափոխվի հայերի համար, այլև թույլ էին տալիս, որ իրենց ցեղի մարդիկ ևս մասնակցեն այդ գործին (341)։

Քրդական որոշ առաջնորդների տրամադրությունների փոփոխվելու մասին է վկայում նաև հետևյալ փաստը։ Շեյխ Օրեյդուլլայի որդու՝ շեյխ Մահմադ Սդղի հետ դաշնակցական Մալխասի բանակցությունների ժամանակ, որի նպատակն էր ձեռք բերել շեյխի աջակցությունը, որպեսզի նա իր հեղինակությամբ որոշ պայմաններ ստեղծի հայ ֆիդայիների և սահմանամերձ աշիրեթների միջև զենքի և հեղափոխական գրականության տեղափոխումը հեշտացնելու համար, շեյխը հայտարարեց. «...Թուրքը կսպանե, քուրդն է մեղավոր։ Կառավարությունը կհալածե, դարձյալ քուրդն է մեղավոր։ Չկա գեղություն մը, որուն հեղինակը քուրդը չինի, և չկա զուլում մը, որուն ենթակա հայը չինի... Գիտենք, որ այս հողին վրա դուք այնչափ հին եք, որչափ մենք և նորեկը թուրքն է, որու հանդեպ երկուքս սիրալիր տրամադրություն մը ունենալու պատճառ չունինք։ Մեր հողամասը ընդարձակ է, լայն ու լայն կբավե մեր երկուքին ալ։ Սկսելով Բաշգալայեն ու Նորտուզեն մինչև

Մոսուլ մերն է, վերն ալ՝ ձերը։ Ահա այս բանի մասին է, որ պետք է մտածենք մենք» (103, էջ 210)։

Քրդական ցեղերի շրջանում նկատվող դժգոհությունը, նրանց հակակառավարական տրամադրությունները և հայերի հետ մերձենալու առանձին փորձերը լրջորեն անհանգստացրին սուլթանական կառավարությանը։ Վերջինս փորձեց այդ վտանգավոր երևույթները արմատախիլ անել հայ ժողովրդին քրդերի դեմ տրամադրելու իր հին քաղաքականությունն օգտագործելու միջոցով, քրդերին հայտարարելով օսմանյան կառավարության և հայերի «ընդհանուր թշնամի» (40, էջ 81—82)։ Այդ կապակցությամբ Արշակ Չոպանյանը հանդես եկավ մի հոդվածով, որտեղ գրում էր. «Այդ անիշխանական կացությունը, զոր Հայաստանի մեջ կտեսնեք, կրկնություն է երևույթի մը, որ արդեն տեղի ունեցած է Հունաստան, Սուրիա, Պուլկարիա, և այժմ նմանապես կհայտնվի Մակեդոնիո մեջ... Միշտ Թուրք կառավարությունն է եղած, որ մահմեդական հասարակությունները քրիստոնյա հասարակությանց վրա արձակած է։ Ան է, որ շարդերուն հրամանը տված է։ ...Քյուրտերը ուրիշ բան չեն եղած և չեն միշտ, բայց եթե գործիքներ Թուրք կառավարության ձեռքը, որ միակ հանցավորն է» (14, 1900 թ., № 3, էջ 88—89)։

Հայ և քուրդ ժողովուրդների մերձեցման միտումները խափանելու նպատակով սուլթանական կառավարությունը տենդորեն նոր պրովոկացիա էր նախապատրաստում։ 1903 թվականից Թուրքական դավերի թիրախ դարձավ Սասունը։ Սակայն այս անգամ քրդերին ոտքի հանելու ուղղությամբ կառավարության ձեռնարկած փորձերը կատարյալ ձախողման մատնվեցին։ Մի շարք աշիրեթներ հայտարարեցին. «Ասկե առաջ ալ մեզի դրդեցիք այդպիսի բան մի ընելու, սակայն երբ եվրոպացի քննիչներ եկան, ամբողջ պատասխանատվությունը մեր վրա ձգեցիք, իբր թե ինքնագլուխ ըրած ըլլայինք այդ գործը։ Ու եթե հայերու ցուցմունքը չըլլար՝ թե քրդերը չէին, այլ զորքը, եվրոպացին այժմ մեզ ջնջած կըլլար» (42, էջ 98)։

Նույն 1903 թ. աշնանը Ստամբուլի կառավարությունը որոշեց անհնազանդ Սասունը դատարկել հայերից և այն բնակեցնել Ռուսաստանից Թուրքիա տեղափոխված մահմեդական վերաբնակիչներով՝ մուհաջիրներով։ Սակայն կառավարության համար միանգամայն անսպասելի կերպով պարզվեց, որ այն նույն քրդական ցեղերը, որոնց հաջողվել էր 90-ական թվականներին հրա-

հրել հայերի դեմ և դարձնել ջարդերի ակտիվ մասնակիցներ, լի են կառավարության որոշմանը դիմադրելու պատրաստվող հայերին օգնություն ցույց տալու վճռականությամբ։ (173)։

Անդրադառնալով 1903 թ. Սասունում թուրքական դավերի ձախողմանը, էրզրումում անգլիական հյուպատոսը գրում էր. «Մի նոր գիծ է մուտք գործել ընդհանուր դրության մեջ վերջին ամիսների ընթացքում. դա քրդերի աշխատակցությունն է հայերի հետ։ Հայտնի է, որ եթե թուրք կառավարությունը այս ամառ հրաժարվեց Սասունի վրա հարձակվելու մտքից, դրա պատճառներից մեկն էր քրդերի անսպասելի դիրքը, որոնք մերժեցին իրենց աջակցությունը առաջարկված հարձակման համար» (44, էջ 173)։ Այս անհաջողությունը սակայն չվհատեցրեց սուլթանական կառավարությանը։ Նա կրկին նախապատրաստություններ էր տեսնում Սասունում ջարդ կազմակերպելու համար։ Բոլոր այն ցեղապետերը, որոնց նկատմամբ կասկածներ կային, որ գաղտնի կապեր են պահպանում Սասունի հայ ֆիդայիների հետ, ձերբակալվեցին և բանտերը նետվեցին։ Միաժամանակ կրոնամոլ, ինչպես նաև արյունարբու ու անսանձ քրդական տարրերից կազմակերպվեց «Ջանբեզար» անունով տեռորիստական մի կազմակերպություն, որի խնդիրն էր անհնազանդ համիդիեների և առհասարակ կառավարության կամքին չենթարկվող քրդերի զինաթափումն ու ահաբեկումը։

1904 թ. հունվարին թուրքական զորքերը կրկին շարժվեցին դեպի Սասուն։ Սասունը պաշարվեց և խաղաղ ու անզեն բնակչությունը կոտորվեց։ Սուլթանը որոշել էր վերջնականապես իրականացնել «Սասունը առանց հայերի» իր վաղեմի մտահղացումը։

Թեև, ի վերջո, կառավարությանը հաջողվեց այս անգամ ևս զգալի թվով համիդիե գնդերի և զինված աշիրեթների ոտքի հանել սասունցիների դեմ (320։ 129), սակայն այնուամենայնիվ վճռական դերը պատկանում էր կառավարական զորքերին։ «Քրդերը չէին Սասունի ոճրագործությունների գլխավոր հեղինակները,— գրում էր «Մուրճը»,— այլ կարգ ու կանոնի ենթակա և օրենքի պահանջմանց հպատակ կանոնավոր բանակը։ Ջարդը կատարվում էր ոչ թե քրդերի նահապետական շեշխաններով (հին հրացան։— Վ. Բ.), այլ նորահնար ու կատարելագործված պետական հրացաններով ու թնդանոթներով» (114, 1905 թ., № 8, էջ 93)։

Սասունցիներն աշխատում էին հնարավորին չափ խուսափել քրդերի հետ բախումներից։ Անդրանիկը, որն այդ օրերին գտնվում էր մարտնչող սասունցիների շարքերում, կարգադրում էր «քրդերի հետ գործ չունենալ և անոնց բարեկամությունը շահիլ», արծարծել միության գաղափարը, արթնացնել նրանց միտքը իրենց կեղեքող կառավարության ու բեկերի դեմ, բացատրել հայերի հետ նաև քուրդ աշխատավորության շահերի պաշտպանության համար մղած պայքարի էությունը։

Մասամբ նման կարգադրությունների, մասամբ էլ կառավարության հանդեպ ունեցած իրենց դժգոհության, մի շարք համիդիե գնդեր հրաժարվեցին սասունցիների դեմ կռվի մեջ մտնելուց (128, էջ 173)։

Ավերելով Սասունը, կառավարությունն այդ անհնազանդ երկրամասի մի շարք վայրերում՝ Տափիկում, Սեմալում, Տալվորիկում և Գելիգուզանում զորանոցներ կառուցեց, ապագայում բացառելու համար հայ գյուղացիության նոր ըմբոստությունները։

Եվրոպական դիվանագիտությունը Սասունում կատարված ոճրի հանդեպ այս անգամ ևս մնաց սառն ու անտարբեր։ Միայն առանձին գործիչներ հանդես եկան ջարդը դատապարտող հայտարարություններով։ Օրինակ, Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեն հայտարարեց, որ Թուրքիայում շարունակվում է պահպանվել մի այնպիսի վարչություն, «որի հանդեպ ապստամբությունը հանդիսանում է միակ ապաստանը հուսահատված ազգաբնակչության համար» (43, էջ 79)։ Իսկ Ֆրանսիս դը Պրեսանսեն ֆրանսիական պառլամենտում հայտարարեց. «Նրանք (սասունցիները։— Վ. Բ.) չուզեցին նահատակվել, ինչպես 1894-ին, առանց գեթ փորձելու իրենց պաշտպանելու և բողոքելու։ Նրանք պաշտպանվեցին ապրիլ ամսից ի վեր առանց տանելու հաղթանակը, որ անհնարին էր...» (43, էջ 79)։

Եվրոպական մյուս մայրաքաղաքներում ևս արված «հայանպաստ» նման հայտարարություններն անշուշտ ոչնչով չէին կարող մեղմել Սասունի արյունոտ ողբերգությունը։

1905 թ.՝ «Ասիայի զարթոնքի» դարաշրջանում, ռուսական հեղափոխության ազդեցության ներքո, ինչպես Արևելքի մյուս երկրներում, այնպես էլ Թուրքիայում սկսվեցին ազգային-

ազատագրական և սոցիալական բնույթի շարժումներ արդուլ-համիդյան բռնակալական վարչակարգի դեմ։ Ազգային և սոցիալական ճնշման դեմ պայքարը հատկապես լայն թափ ընդունեց Արևմտյան Հայաստանում, Բալկաններում և կայսրության արաբական վիլայեթներում։

Մշտական տնտեսական տագնապը, սովը, հարաճուն տուրքերը, հարկահանության դժնդակ համակարգը, պաշտոնյաների բռնությունները ու հարստահարությունները և այլ գործոններ ի վերջո իրենց կրավորական վիճակից դուրս հանեցին նաև մահմեդականներին և դրդեցին հանդես գալ կառավարության դեմ։

Արևմտյան Հայաստանում և Քրդստանում բռնկեցին մի շարք քրդական ապստամբություններ, որոնք հիմնականում կրում էին խոշոր ֆեոդալների անջատվողական շարժումների բնույթ։ Միևնույն ժամանակ առանձին դեպքերում շեշտված ձևով դրսևորվում էին սոցիալական պայքարի նշանները։

Սուլթանական կառավարության համար այս շարժումներն առավել սպառնալից բնույթ էին ընդունում այն պատճառով, որ հաճախ բռնակալության դեմ պայքարը միավորում էր տարբեր ժողովուրդների։ Այսպես, 1905 թ. աշնանը հակակառավարական ապստամբության դրոշը կրկին բարձրացրեց Դերսիմը (326, 1905 թ., 7 հոկտեմբերի)։ Շրջակա հայ բնակչությունը միացավ ապստամբներին, նրանց հետ համատեղ զինված դիմադրություն ցույց տալով կառավարական պատժիչ զորամասերին։ 1905 թ. վերջին և 1906 թ. սկզբին քրդական ցեղերի ապստամբություններ բռնկեցին Դիարբեքիրում, Բայազետում, Բիթլիսում և Էրզրումում։ Այս ապստամբությունները ևս աջակցություն գտան հայ բնակչության կողմից (174)։ Թուրք-իրանական սահմանամերձ շրջաններում տեղի ունեցան քրդական բնակչության հարձակումներ թուրք զինվորների վրա (342)։ Կառավարության ծանր հարկային լծից ազատվելու համար քրդերը զանգվածորեն սկսեցին տեղափոխվել Իրան։ Ստամբուլում 1906 թ. ապրիլին Բադրխանների ընտանիքի անդամները սպանեցին մայրաքաղաքի ոստիկանապետ, մարդկային կերպարանքով հրեշ Ռեդվան փաշային։ Հետաքննությունից պարզվեց, որ ահաբեկիչները և մի խումբ քրդական ազդեցիկ առաջնորդներ, մահափորձ էին նախապատրաստում նաև անձամբ Արդուլ Համիդի դեմ։ Սարսափահար սուլթանը անագորույն դաժանությամբ պատժեց դավադրության մասնակիցներին, նրանց աքսորելով

Լիբիայի անապատները՝ այնտեղ ճաշակելու թուրքական բանտերի այլանդակություններն ու սարսափները (175)։ Հետաքննությունից պարզվեց նաև, որ քրդական առաջնորդները գաղտնի մշակում են քաղաքական պահանջներ, մասնավորապես նպատակ ունենալով հասնել նրան, որ լրիվ վերացվի կառավարության և տեղական իշխանությունների միջամտությունը ցեղերի ներքին գործերին և Քրդստանը ձեռք բերի ներքին ինքնավարություն։

Հուզումներ սկսվեցին նաև Կենտրոնական Անատոլիայի թուրքական բնակչության շրջանում։ 1905 թ. առանձին վայրերում քրդերը արաբների հետ համատեղ պայքարի ելան։ Կայսրության արևելյան և արևմտյան վիլայեթների բնակչությունը փորձեր էր անում համատեղ և միաժամանակ ապստամբել և այլն։

Ավելի հաճախակի էր դառնում նաև ապստամբ քրդական ցեղերի համագործակցությունը հայ բնակչության հետ։ Հատկապես սերտ համագործակցություն էր ստեղծվել հայերի և բակուրի, հասանանլի, եզնանի, միրանի, դուդերի, ալանի և այլ աշիրեթների միջև։ Վասպուրականում եզիդները Ջահանգիր աղայի գլխավորությամբ հայերի հետ համատեղ զինված ընդհարումներ ունեցան կառավարական զորքերի հետ։

Քրդական հակակառավարական շարժումներն ավելի ուժգին թափ ընդունեցին 1907—1908 թթ.։ Այդ շրջանում իր գագաթնակետին հասավ միլլի ցեղի ամենազոր առաջնորդ Իբրահիմ փաշայի ապստամբությունը, որը սկսվել էր դեռևս 1901 թ.։ Գերմանացի ճանապարհորդ Վիդեմանը, որը 1903 թ. այցելել էր Վերանշեհիր՝ Իբրահիմ փաշայի աթոռանիստը, գրում էր, որ նրա ազդեցությունը տարածվում է մի ընդարձակ շրջանի վրա, որը եռանկյունի է կազմում Դիարբեքիրից մինչև Ջեզիրե, Մարդին և Վերանշեհիր։ Վիդեմանը հայտնում է, որ «այն ժամանակ նրան իրավամբ անվանում էին Քրդստանի չթագադրված թագավոր» (488, № 3, էջ 35—37)։

Ճիշտ է, Իբրահիմ փաշան պայքարում էր թուրքական կառավարության դեմ ոչ թե հանուն քուրդ ժողովրդի շահերի, այլ հետապնդելով անձնական հարստացման ու իր իշխանությունը ցեղերին պարտադրելու նպատակներ, և նրա շարժումը կրում էր հետադիմական բնույթ, որն ուղեկցվում էր շրջակա բնակչության, հատկապես Դիարբեքիրի նահանգի հայերի անխնա

կողոպուտներով, սակայն այնուհանդերձ այն խարխլում էր սուլթանի իշխանությունը Դիարբեքիրի, Հալեպի, Ուրֆայի, Մարդինի և Դերիրքի նահանգներում։

1907 թ. աշնանը կրկին ապստամբեց Դերսիմը։ Այս անգամ ևս տեղի հայերը միացան ապստամբներին։ Կառավարությունը հրամայեց մինչև վերջին մարդը բնաջնջել Դերսիմի բնակչությանը (233, էջ 14—15)։ Հնչակյան գործիչ Ղումրիկյանի և Դերսիմի ապստամբների առաջնորդ շեյխ սեյիդ Իբրահիմի միջև համաձայնություն կայացավ, ըստ որի հայերը պետք է դերսիմցիների համար հայթայթեին պարեն, զենք, ռազմամթերք և այլն, բացի այդ Դերսիմ մտցնեին որոշ քանակությամբ հայկական մարտական ուժեր։ Իսկ սեյիդ Իբրահիմը պարտավորվում էր ոչ միայն ոտքի հանել իր ազդեցության տակ գտնվող ցեղերին, այլև աշխատեր այլ ցեղերի ևս մասնակից դարձնել հակաթուրքական ապստամբությանը (131, էջ 36)։

Թեև պայմանավորվածության համաձայն հնչակյան կուսակցությունը որոշ քանակությամբ զենք հատկացրեց դերսիմցիներին, սակայն ամբողջությամբ վերցրած ծրագիրը չիրագործվեց դրամական միջոցներ չունենալու պատճառով։

Եզիդներին զինվորագրելու օրենքի հրապարակումից հետո 1907 թ. ոստիկանությունն ու բանակը ձեռնամուխ եղան եզիդ երիտասարդների բռնի զինակոչմանը։ Եզիդները, որոնք չէին ցանկանում ծառայել թուրքական բանակում, զանգվածորեն թաքնվում էին հարևան հայկական գյուղերում (112, 1907 թ., № 124)։

Ավելի հաճախակի էին դառնում այն դեպքերը, երբ հայ և քուրդ գյուղացիությունը համատեղ հանդես էր գալիս իրենց հարստահարող ու կողոպտող բեկերի ու աղաների դեմ։ Ռուս դիտորդներից մեկը հայտնում էր, որ 1907 թ. հայ գյուղացիները 48 ժամ շարունակ Վանի վիլայեթի Շատախի շրջանում կռվում էին քուրդ ավազակների դեմ, որոնք քշել տարել էին ռայաթ քրդերին պատկանող մեծ քանակությամբ անասուններ։ Հետ խլելով այդ անասունները, հայերը դրանք հանձնեցին տերերին՝ քուրդ գյուղացիներին (343)։

Հայ և քուրդ գյուղացիության համագործակցության նման դեպքերը բազմաթիվ էին։ Հետաքրքրական փաստ է, որ 1908 թ. սկզբներին Դերջանի շրջանի գյուղերի քուրդ բնակչության մի մասը անդամագրվել էր հնչակյան կուսակցությանը։ Այդ վտան-

գավոր երևույթի առաջն առնելու համար կառավարությունը ձեռնամուխ եղավ այդ քրդերի, ինչպես նաև հիշյալ շրջանի հնչակյան գործիչների զանգվածային ձերբակալություններին (32, էջ 56)։

1907 թ. Բայբուրդի սանջակում մոտ չորս հազար քրդեր հարձակվեցին թուրքական գյուղերի վրա և ավերեցին դրանք (112, 1907 թ. № 127)։ 1906—1907 թթ. և 1908 թ. սկզբին խոշոր հակակառավարական ելույթներ տեղի ունեցան Էրզրումում, Բիթլիսում, Կաստամոնիում և այլ քաղաքներում, որոնց մասնակցում էին հայեր, թուրքեր, քրդեր, հույներ և այլն (389, էջ 819—820)։ Էրզրումում կազմակերպվեց «Միլլեթ մեջլիսի», որը ղեկավարելու էր մահմեդականների շարժումը (49, 1906 թ., 6, էջ 12)։ Կառավարական զորքերը հրաժարվեցին ապստամբների վրա կրակ բաց անել, հայտարարելով, որ իրենք «պատրաստ են կյանքի գնով պաշտպանելու հայրենիքը, բայց իրենց եղբայրների վրա չեն կարող զենք բարձրացնել» (176)։

Էրզրումի բնակչության առաջին մասսայական ելույթներից հետո կառավարությունը փորձեց հայերին ներկայացնել որպես դրդիչներ ու հրահրիչներ, թշնամանք սերմանելու համար նրանց ու մահմեդականների միջև։ Բայց ապարդյուն։ Այդ առթիվ «Դրոշակը» գրում էր. «Սև օրեր են գալիս Աբդուլ Համիդի համար... Ամբողջ Փոքր Ասիան ասես բռնվել է հեղափոխական խմորման տենդով։ Բաժակը լցվում է, բոլոր ժողովուրդներն են այժմ ըմբոստանում սովի ու բռնության ռեժիմի դեմ։ Եվ բոլոր ժողովուրդների դեմ է ուղղված սուլթանական ներկա հակադարձ շարժումը, ներկա ռեակցիան։ Անցա՜վ ժամանակը, երբ նա մեն-մենակ հայ փոքրաթիվ ժողովուրդն էր տեսնում իր դեմ ծառացած և երբ նա... խեղդում էր ընդ երկար հայ ըմբոստումները արյան հեղեղի մեջ... Այսօր արդեն նա ստիպված է արշավել նույն դահիճի դերով իր հավատակից մուսուլմանների դեմ։ Եվ մասսայի դեմ... Մինչև օրս տաճիկ ու քուրդ անհատներ էին այդ արշավանքի առարկան, նրանց ուժը խորտակվում էր հեշտությամբ, առանց աղմուկի, մութ, խորհրդավոր անկյուններում, նրանք գնում էին հանգստանալու կամ հեռավայրերում կամ թե Բոսֆորի անդունդներում» (45)։

Քրդերի մասնակցությունը հակակառավարական շարժումներին դիտելով որպես մահացու սպառնալիք, կառավարությունը դրանց դեմ ձեռնարկեց ամենավճռական միջոցներ, սկսած

դեպի ապստամբության օջախները բանակներ շարժելուց, վերջացրած մայրաքաղաքից քուրդ ազգայնականների վտարումով, որոնք մեղադրվում էին հակակառավարական գործունեության մեջ (179)։ Սուլթանի հրամանով 1907 թ. ապրիլին Ստամբուլում փակվեց նաև, այսպես կոչված, ցեղերի դպրոցը՝ «Աշիրեթ մեքթեբի հումայունու» (415, էջ 979), որի նպատակը թեև համիդիե գնդերի համար սպաներ պատրաստելն էր, սակայն, փաստորեն, այն վեր էր ածվել քուրդ ազգայնականների գործունեության կարևորագույն կենտրոնի։

Եթե քրդական աշխատավոր զանգվածը, գիտակցելով իր վիճակի անելանելիությունը, հարևան ժողովուրդների հետ համատեղ ընդվզում էր իրեն հարստահարողների դեմ, եթե քրդական առանձին գործիչներ թեքվում էին դեպի հայերի հետ համագործակցելու նոր գաղափարները, ապա քուրդ ավատատերերը, աշիրեթապետերը, աղաներն ու բեկերը, սուլթանիզմի այդ սոցիալական հենարաններից մեկը, ավելի սերտորեն էին միանում թուրքական իշխանությունների և հարստահարիչ բյուրոկրատիայի հետ։ Նրանք կատաղորեն պաշտպանում էին «խալիֆի սրբազան իրավունքները», արշավում էին «խառնակիչ ու հեղափոխական» հորջորջված հայ զանգվածների դեմ, ամեն կերպ ձգտում էին հրահրել ազգային ատելություն, ընդառաջ գնալով թուրքական կառավարող վերնախավի ձգտումներին՝ արևմտահայության դեմ նոր դավեր կազմակերպելու համար։

Քրդական ավատական դասակարգը սեհարյուրակայինի դեր էր խաղում մահմեդական ժողովուրդների սոցիալական շարժումները ճնշելու համար, որովհետև «Ասիայի զարթոնքի» շրջանում թուրք և քուրդ ժողովուրդները ևս ապստամբում էին։ Երիտթուրքական կուսակցության էրզրումի բջիջին պատկանող մի սպա, փաստեր բերելով քրդական աղաների ու բեկերի խրժդրժությունների մասին ոչ միայն հայերի, այլև հենց քուրդ հասարակ ժողովրդի նկատմամբ, գրում էր. «Սուլթան Համիդի մանրանկարն եղող ցեղապետերեն ու անոնց անընդհատ ընդհարումներեն զզված ու հոգնած է մանավանդ հասարակ, աղքատ ժողովուրդը։ Չի զզվիր ու չի հոգնիր միայն ինքը՝ Աբդուլ Համիդը։ ...Վարիներն ու խղճի տեր անձերը քանի՜-քանի անգամ գրեցին պետք եղած տեղը, որ քյուրտերի դրությունը կարոտ է բարելավման։ Բայց Պոլիսը լռեցուց այդ խղճամիտ

մարդիկը, նկատելով՝ որ անոնք կը հայհոյեն Համիդիէ բարեկամական կազմակերպության դեմ։ Կարճ՝ երկրին մեջ ապահովություն չկա։ Հողը անմշակ, ժողովուրդը աղքատ, ամեն կողմ ավերակ։ Յուրաքանչյուր ցեղապետ, ամենևին բանի տեղ չդնելով կառավարության գոյությունը, երկիրը կայրե ու կը մրկե այնպիսի բռնակալությամբ մը, որ ախ քաշել կուտա նույնիսկ հին դերեբեյություններու ետևեն...» (49, 1908 թ., № 2, էջ 12—13)։

1907 թ. Էրզրումում և այլ վայրերում հեղափոխական դեպքերի կապակցությամբ հայ և թուրք ժողովուրդների միջև ևս նկատելով համերաշխության ու բարեկամական կապերի դրսևորումներ, սուլթանական կառավարությունը դիմեց պրովոկացիոն միջոցների, մասնավորապես հրապարակ նետելով այսպես կոչված «հայ-քրդական միության» առասպելը։ Թուրք բնակչության շրջանում սուլթանի գործակալությունը լուրեր էր տարածում, թե հայ հեղափոխականների և քուրդ ցեղապետերի միջև նամակագրություն է սկսվել «ազատ Հայաստան» և «ազատ Քրդստան» ստեղծելու վերաբերյալ, իբր հայ հեղափոխականների նամակը Էրզրումի վալիի ձեռքն է ընկել և այլն (49, 1907 թ. № 18, էջ 11—13)։

Այս առասպելը հերյուրված էր այն նպատակով, որ նախ՝ սուլթանական բռնակալությունը ատելություն ու թշնամություն սերմանի հայ և թուրք ժողովուրդների միջև և ապա՝ պատրվակ ունենա նոր, անողորմ հալածանքներ և ջարդեր ձեռնարկել հայ բնակչության դեմ և անհրաժեշտության դեպքում ճնշել նաև քրդական անհնազանդ տարրերին, որոնք «մեծեն-պզտիկը, ամենքը գիտեն կառավարության ինչ ապրանք ըլլալը» (49, 1908 թ., № 2, էջ 12)։

1907 թ. և 1908 թ. սկզբներին Արևմտյան Հայաստանում տեղի էին ունենում հայ բնակչության դեմ ուղղված կառավարական զորքերի և քրդական համիդիեների խժդժություններ։ Ամենուրեք տիրում էր բիրտ ուժի սարսափը։ Վասպուրականի, Բաղեշի, Սասունի և այլ շրջաններում կողոպուտներն ուղեկցվում էին հայերի մասնակի ջարդերով (344)։

Ամենայն հայոց կաթողիկոս Խրիմյան Հայրիկը 1907 թ. Նիկոլայ II-ին հղած նամակում գրում էր, որ վերջին տասը տարիների ընթացքում սպանված, ձերբակալված, աքսորված, սովից մահացած, բռնի իսլամացած հայերի թիվը չի գիջում,

այլն գերազանցում է 1895—1896 թթ. սահմանի շարդի ժամանակ հայերի ունեցած կորուստների թվին (236, էջ 183)։

Աննախընթաց չափերի հասան նաև հողային բռնագրավումները։ Հայկական գյուղերի ամբողջ վարելահողերը անցան թուրդ և թուրք բեկերի ձեռքը, որոնք, օգտվելով հայերի իրավազուրկ վիճակից, աշխատում էին ավելի ու ավելի ընդարձակել իրենց կալվածքները։ Կառավարությունը վաճառում էր երկրից արտագաղթած կամ փախստական հայերի հողերը և կալվածքները, նրանց «պարտքերը մարելու» պատրվակի տակ։ Թուրքական երկրագործական բանկը իր հերթին զանազան մեքենայություններով հայ գյուղացիության ձեռքից խլում էր հողերը և դրանք տրամադրում թուրք կամ քուրդ պաշտոնյաներին։

1907 թ. սուլթանական իշխանությունները ձեռնամուխ եղան նաև հայկական եկեղեցապատկան հողերի բռնագրավմանը։ Քրդական ավատատերերի կողմից դա ընկալվեց որպես հայերի նկատմամբ նոր բռնությունների և ավարառությունների թույլտվություն։ Այս շրջանում հայ բնակչության համար իսկական պատուհաս դարձավ համիդիե հրամանատար Քյազիմ բեյը (178)։ Համիդիեների և չերքեզ մուհաջիրների սանձարձակությունները ու վայրագությունները Բիթլիսի վիլայեթում հասան այնպիսի չափերի, որ 1907 թ. հունիսին Ռուսաստանի, Անգլիայի և Ֆրանսիայի դեսպանները դիմեցին դիվանագիտական միջամտության Բ. Դռան առջև։ Վերջինս թեև ստիպված եղավ Բիթլիս ուղարկել մի հանձնաժողով համիդիե զորքերի հրամանատար գեներալ-լեյտենանտ (Ֆերիկ) Ահմեդ փաշայի գլխավորությամբ, սակայն նա ստիպեց համիդիե զորամասերի հրամանատարներին իրեն հատկացնել մի կլորիկ կաշառք գործը հարթելու համար։ Այն ստանալուց հետո նրա հանձնաժողովը իր զեկուցագրում գրեց, որ հայերի բողոքները կեղծ են, իսկ նրանք, որոնք ավելի համառ գտնվեցին, Ահմեդ փաշան նետեց բանտերը, այնտեղ փտելու համար (179)։

Ահմեդ փաշայի հանձնաժողովի միակ հոգսը քրդերի ավարառությունները մահմեդական բնակչության շրջանում կանխելը եղավ։ Առհասարակ Ստամբուլը հրահանգում էր իր տեղական իշխանություններին՝ ամեն կերպ աշխատել, որպեսզի համիդիեների ավարառություններն ու բռնությունները սահմանափակվեն լոկ հայ բնակչության շրջանակներում։

Արևմտյան Հայաստանի բոլոր նահանգներում հայերը

զանգվածորեն աղքատանում էին։ Երկրամասի ծայրահեղ քայքայումը չէր կարող չազդել նաև աշխատավոր քրդերի վիճակի վրա։ Վանի վիլայեթում, օրինակ, գյուղերի մեծ մասը քանդվեց ու ավերվեց, իսկ նրանց բնակիչները՝ և՛ հայեր, և՛ քրդեր, զրկվեցին գոյության ամեն մի միջոցից (326, 1907 թ., 11 հոկտեմբերի)։ Հայ բնակչության տնտեսական քայքայումը որոշ առումով դիպչում էր նաև քուրդ ավատատերերի շահերին։ Բանն այն էր, որ համոզվելով, որ այդ բոլորի հետևանքով գանձարանի եկամուտները շեշտակի նվազում են, կառավարությունը սկսեց Արևմտյան Հայաստանի տարբեր շրջաններում տեղավորել մեծ թվով չերքեզների։ Քրդական աշիրեթապետերը անմիջապես հասկացան, որ բնավ ձեռնտու չէ իրենց տիրապետության ներքո գտնվող շրջաններում մահմեդական չերքեզ բնակչություն ունենալ, որին կողոպտելը խիստ դժվար խնդիր էր։ Այդ պատճառով նրանք սկսեցին դիմումներ հղել կառավարությանը, որ նա այդ շրջաններից հեռացնի չերքեզներին և հետ վերադարձնի հայ բնակչությանը (325, էջ 57)։

Խոսելով Արևմտյան Հայաստանում տիրող վիճակի մասին Վանում ամերիկյան միսիոներ դոկտոր Ռեյնոլդը նշում էր. «Հայերի բնաջինջ լինելը աղքատությունից և ճնշումից տեղի է ունենում այնպիսի նկատելի չափերով, որ 10—15 տարուց հետո հայկական հարցը Թուրքիայում կկորցնի ամեն մի իմաստ» (316, 1905 թ., 10 հուլիսի)։

1907 թ. «Մշակը» ևս դառնությամբ գրում էր. «Այնտեղ, ուր հայը տասնյակ տարի առաջ հոծ բազմություն էր կազմում, այժմ այլևս իբրև մեծամասնություն կազմել չի կարողանում։ Այս նպատակն իրագործելու համար Թուրք կառավարությունը, ի մեջ այլ միջոցների, մեծ խմբերով տարեցտարի մահմեդական գաղթականներ է տեղավորում հայկական նահանգներում։ Թե որքան եռանդով է առաջ տարվում այս քաղաքականությունը, շատ լավ երևում է հետևյալ փաստից. Էրզրումի վիլայեթ մինչև հիմա հասել են 9000 մահմեդական գաղթականներ, որոնց 8000-ը գաղթականաց հանձնաժողովի ջանքերով բնակեցրած է Մուշի, Բուլանըքի, Տերջանի, Նամերվանի և Ալաշկերտի կողմերում։ ... Նույնը սիստեմաբար գործադրվում է մյուս վիլայեթներում։ Բացի այդ հայի ոչ կյանքը և ոչ գույքն է ապահովված կամ պաշտոնական և կամ արհեստով ավազակներից» (112, 1907·, № 101)։

Այսպիսով, XIX դարի վերջին և XX դարի սկզբին քրդական շարժումները, որոնք թեև առանձին վայրերում հանդես եկան հայկական շարժումների հետ միահյուսված, այնուամենայնիվ չհանգեցրին հայ ազգային-ազատագրական շարժման հետ ձուլվելուն։ Երկու հարևան ժողովուրդների միջև սուլթանիզմի դեմ միասնական ճակատ կազմելուն արգելք հանդիսացան գլխավորապես սուլթանական կառավարությունը և քրդական ավատական դասակարգը, որը քրդերի շրջանում նահապետական ցեղային և ավատական հարաբերությունների տիրապետության պայմաններում կարողացավ քուրդ ժողովրդի մեծ մասին տանել իր հետևից և տարանջատել նրան նույն բռնատիրության կողմից հարստահարվող մյուս ժողովուրդներից։

Քրդական աղաներն ու բեկերը շահագրգռված չէին դաշինքի մեջ մտնել հայ ժողովրդի և հայ ազգային-ազատագրական շարժումների հետ, որովհետև նրանց հարստության ամենաառատահոս աղբյուրը հայ բնակչությունն էր և առաջին հերթին գյուղական բնակչությունը։ Նրանց դասակարգային շահերը անհարիր էին օսմանյան բռնապետության տապալման և Թուրքիայում ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման ու հեղափոխության հետ, որովհետև բռնակալության տապալումը «կնշանակեր նրանց արքայական զանազան շնորհների փոշիացումը, որովհետև քիչ թե շատ իրական մի սահմանադրություն սանձ կդներ այդ գիշատիչների անհագ ու վայրագ ախորժակներին։ Բացի այդ՝ սահմանադրական ռեժիմը զինաթափ կաներ քուրդ աշիրեթապետերին, քրդության այդ զսպանակներին ոչ միայն մյուս խաղաղ, աշխատավոր տարրերի առաջ, այլև հենց իրանց՝ քուրդ ռայաների առաջ, որոնց շահագործում են ու տանջում...։ ... Մի ցնորք է, խելահեղ ցնորք, տքնել քուրդ ֆեոդալներին լծելու մի այնպիսի գործի, խանդավառելու նրանց մի այնպիսի գաղափարով, որը տրամագծորեն հակասում է նրանց կենսական շահերին» (49, 1907 թ., № 6—18, էջ 1—2)։

Հայկական շրջաններում նշվում էր նաև, որ «այս վիճակին մեջ «անապատի քարոզ» կդառնար՝ ազատություն ճառել մարդոց՝ որոնք գոհ էին իրենց հատուկ ազատութենեն» (54, էջ 194)։

Սուլթանական բռնապետության դեմ ազատագրական պայքարի ճանապարհին հայ-քրդական համագործակցություն ստեղ-

ծելու դժվարություններից մեկն էլ այն էր, որ քուրդ ժողովուրդը մի նույնատարր ու միաձույլ ամբողջություն չէր կազմում։ «Արդ, ո՞ր աշիրեթի հետ պիտի դաշնակցեք և որի՞ անկախության շենքի հիմնաքարերը պիտի դնեք։— Հարց էր տալիս «Երկրի ձայնը» և ինքն էլ պատասխանում։—Մեկի հետ բարեկամությունն ու դաշնակցությունը մյուսների ոխերիմ թշնամությունը պիտի զինե ձեզ դեմ» (49, 1907 թ., № 6—18, էջ 1—2)։

Մյուս դժվարությունն այն էր, որ թեև ցեղապետերի ու ցեղի շարքային անդամների շահերը նույնը չէին, այլ միանգամայն հակոտնյա, սակայն քաղաքականապես, տնտեսապես և կուլտուրապես հետամնաց, սնոտիապաշտ ու ավանդապահ, անգրագետ ու ադաթներով ղեկավարվող քուրդ զանգվածը որպես միակ հեղինակություն ընդունում էր լոկ իր ցեղապետին, որին նա ենթարկվում էր անվերապահորեն և առանց վարանելու։ Ռայան կամ ցեղի շարքային անդամը զրկված էր օբյեկտիվ կամքով իր բախտը և ապագան որոշելու հնարավորությունից։ Իսկ քանի որ, ինչպես նշվեց վերևում, ցեղապետերի՝ ասել է քրդական ավատական վերնախավի, շահերին չէր համապատասխանում դաշինքը հայ ազգային-ազատագրական շարժման հետ, հետևաբար համագործակցության փորձերն էլ ավարտվելու էին կատարյալ ձախողմամբ։

Քրդական ավատական վերնախավը, այսպիսով, կարողացավ քուրդ ժողովրդի մի զգալի հատվածին տանել իր հետևից և տարանջատել նրան նույն բռնապետության կողմից հարստահարվող մյուս ժողովուրդներից։

«Բայց միթե քրդությունը,— գրում էր «Երկրի ձայնը»,— իր ամբողջության մեջ դատապարտված է հեղափոխության համար մի բացասական երևույթ, հասարակական անարժեք դասակարգ մնալու. չէ որ քուրդ ռայան շահ ունի իր ցեղապետի անսահմանափակ իրավունքները ջախջախելով՝ իր մարդկային տարրական իրավունքները հաստատելու և գործադրելու։ Քուրդ ռայան կհեղափոխականանա միայն այն ժամանակ, երբ... ցեղապետի մեջ կտեսնե ոչ թե կուռքը, պահապան հրեշտակը, այլ թշնամին, իր բաղդավորության դահիճը» (49, 1907 թ., № 6—8, էջ 1—2)։

Այսպիսով, քուրդ ժողովրդին արևմտահայության ազատագրական պայքարին զինակից դարձնելու հանգամանքը դժվա-

բանում էր նրանով, որ հակամարտ ցեղախմբերի բաժանված քրդերը չունեին հավաքական գոյության հեռանկար, որը իրենց հակադրեր Թուրքերին, և շահերի նույնության հիմքի վրա բարեկամ ու դինակից դարձներ հայ ազատագրական շարժմանը։

Այսպես թե այնպես, չնայած արևմտահայ գործիչների և բաղաքական կուսակցությունների, մասամբ նաև քուրդ առանձին գործիչների ջանքերին, XIX դարի 90-ական թթ. և XX դարի սկզբին հնարավոր չեղավ իրագործել հայ և քուրդ ժողովուրդների դաշինքն ընդդեմ օսմանյան բռնապետության և Աբդուլ Համիդ II-ի «զուլումի» վարչակարգի։ Քրդական առանձին ցեղերի հակաթուրքական, հակակառավարական շարժումները (առանձին բացառություններով) աջակցություն չգտան ոչ միայն արևմտահայության, այլ նույնիսկ քրդական մյուս ցեղերի կողմից։ Իր հերթին արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը ևս մեկուսացած մնաց դրացի քուրդ ժողովրդի ազատագրական պայքարից։ Դա ծանր հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի պատմական ճակատագրի վրա։ Դրանից մեծապես տուժեց նաև քուրդ ժողովուրդը։

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՐԻՏԹՈՒՐՔԵՐԻ ԵՎ ԻԹԹԻԼՅԱՖԱԿԱՆՆԵՐԻ* ՏԻՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ

Դեռևս 1907 թ. դեկտեմբերին Օսմանյան կայսրության բոլոր բուրժուահեղափոխական կազմակերպությունների Փարիզում գումարված ընդհանուր կոնգրեսում, որը հայտնի է որպես երիտթուրքական II համագումար, իթթիհադականները** հայտարարում էին. «Կայսրության բոլոր ազգերը հաջորդաբար զոհ եղան Աբդուլ Համիդի եղեռնագործ կատաղության, անիկա հաջորդաբար մղեց զանոնք մեկը մյուսի դեմ, գրգռելով և արծարծելով արհեստական ատելություն՝ ցեղերուն ու կրոններուն միջև. Թուրք, հայ, հույն, պուլկար, վալաք, ալպանացի, արաբ, հրեա, տրուզ, քուրդ, տեսան հալածանք, աքսոր, տարագրություն և ջարդ, իսկ հայկական կոտորածները, իբրև պսակ բոլոր անցյալ եղեռնագործություններուն, արժանացուցին իրենց հեղինակը, որ տակավին իր ոճրագործությունը կը շարունակե Արաբիո մեջ մեծ մարդասպան և կարմիր սուլթան անուններուն» (45, էջ 2)։ Կոնգրեսի լոզունգ հռչակվեց «Կեցցե համերաշխությունը ցարդ անմիաբան ազգերուն» (45, էջ 4)։

«Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության կողմից բարձրաձայն հայտարարված այս խոսքերը չէին կարող ոգևորություն առաջ չբերել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների մոտ։

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումը և 1876 թ. սահմանադրության վերականգնումը ի թիվս թուրքական բռնատիրու-

---

* «Հյուրրիյեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության հետևորդներ։

** Երիտթուրքական «Իթթիհադ վե թերաքքը» («Միություն և առաջադիմություն») կուսակցության հետևորդներ։

-թյան լուծը ճաշակած մյուս ժողովուրդների, վարդագույն հույսեր արթնացրեց նաև այդ բռնատիրության տևական հարվածները կրած հայ ժողովրդի մոտ, որը ենթադրում էր, թե երիտթուրքական «հեղափոխությունը» գալիս է փրկության ու ազատության ճանապարհ բացելու իր առջև։

Հայ ազգային կուսակցությունները և առաջին հերթին դաշնակցական կուսակցությունը, որն անցել էր իթթիհադի հետ սերտ ու սիստեմատիկ համագործակցության, արբեցուցիչ նիրհի մեջ ընկածի պես երևակայում էին, թե սուլթանական բռնապետության մղձավանջը այլևս ցնդել ու անէացել է։

Դաշնակցության պարագլուխներից Միքայել Վարանդյանը խոստովանում էր. «Բերկրանքով ընդունեցինք օսմանյան սահմանադրությունը. ոչ մի անջատական ձգտում, ոչ մի խոսք եվրոպական միջամտության, 61-րդ հոդվածի մասին։ Դաղրեցուցինք Բրո-Արմենիան ու եվրոպական պրոպագանդը, լծվելով մեր իսլամ դրացիներու հետ, ընդհանուր ուժերով սատարելու ողջ կայսրության հառաջադիմության և բարօրության» (134, էջ 9)։

Ցնծությունը հատկապես մեծ էր Արևմտյան Հայաստանում։ Ամենուրեք տեղի էին ունենում «տիեզերական եղբայրակցության» ցույցեր։ Քրդերն ու թուրքերը իրենց հարգանքն էին մատուցում բռնապետության դեմ պայքարում ընկած հայ մարտիկների հիշատակին։ «... Բաղեշի մեջ թուրքերն ու քուրդերն ուխտի գացին Սասնո հայ հերոս Սերոբ Աղբյուրի գերեզմանին, զոր ծաղիկներով զարդարեցին։ Վանա մեջ հայեր ու թուրքեր խառն մթինկներ կազմեցին ու պանծացուցին հայ ֆեդայիները... Կարնո մեջ հայք փառավորեցին թուրք հեղափոխականները, զանոնք, որ քաջարար մերժեր էին անձնական տուրքը (վերկիի շահսի)... պաշտոնանկ ընել տվել էին Ելտզի հլու գործիք վալին, զարկեր էին ոստիկանապետը ու գլխավոր դատավորը» (30, 1909 թ. № 3732)։ Իսկ Ստամբուլի նորաբաց մեջլիսում հայ և թուրք պատգամավորները մի շարք հարցերի կապակցությամբ միասնական տեսակետ էին պաշտպանում (469, էջ 71)։

Նման երևույթները արևմտահայությանը տեղիք էին տալիս մտածելու, որ հայ-քրդական, ինչպես նաև հայ-թուրքական հարաբերությունները թևակոխում են անցյալում իր նմանը չունեցող միանգամայն նոր ու հուսադրող փուլ։ «Բյուզանդիոն» թերթի խմբագիր Բյուզանդ Քեչեյանը իր թերթում հրատարակեց

«Հայերն ու քուրդերը» վերնագրով մի հոդված, որտեղ գրում էր. «Հիմա, սահմանադրական դրության մեջ, հայոց քաղաքականությունը պիտի ըլլա եղբոր պես ապրիլ քուրդերուն հետ, փորձով ցույց տալու համար, թե խաղաղության և օրինավորության մեջ ապրելով շատ ավելի դյուրին է կանոնավոր ապրուստ մը ապահովել։ ...Քուրդերը ...սրամիտ ցեղ մ'են, իսկույն կըմբռնեն փոփոխված պարագաներուն նշանակությունը, կամ հովին ուստի փչելը, և երբ տեսնեն որ սահմանադրական լուսամիտ ու լրջամիտ կառավարություն մը անմեղ ժողովուրդ մը չարդելու, չարշարելու միտումը չունի այլևս, ու միտքը դրած է պահպանել երկրին հանդարտությունը, քուրդերը չեն ուշանար այս նոր հանգամանքներուն հարմարելու, և հայերն ալ ամեն շահ ունին քուրդերուն հետ հարմարելու ամեն կերպով և ամեն առթիվ» (30, 1908 թ., № 3, 6 օգոստոսի)։

Հայ ժողովուրդն աշխատում էր քրդերի հետ հարաբերությունների հարցում թույլ չտալ այնպիսի միջադեպեր, որոնք օգտագործվեին հետադիմության կողմից հայ-քրդական հարաբերությունները սրելու համար։ Այսպես, երբ Եգիպտոսում հրատարակվող «Արև» թերթում տպագրվեց մի հոդված, որտեղ առաջարկվում էր, որ Թուրքիայում վերստին գործունեություն ծավալած «Միացյալ ընկերությունը» իր ձեռքը վերցնի քրդերի ուսման ու կրթության գործը և «քաղաքակրթի» նրանց, «Մշակն» անմիջապես հանդես եկավ մի հոդվածով, որի հեղինակն էր Հ. Առաքելյանը, որտեղ ասվում էր. «Այդպիսի մի հորդոր և առաջարկ մենք գտնում ենք ներկա պայմանների մեջ ոչ խելացի և ռացիոնալ, անգործնական։ Նախ, նա պարունակում է իր մեջ թաքնված շովինիստական ցանկություն՝ հայացնել քյուրդերին. դա մի անմիտ, վնասակար ցանկություն է. թողեք քյուրդերը զարգանան իրանք՝ իրանց սեփական դպրոցներում, իրանց սեփական լեզվով, թողեք նրանք ստեղծեն իրանց համար գիր, իրանք տնօրինեն իրանց կուլտուրական վիճակը։ Հայերը կարող են միայն, իբրև բարի դրացիներ, իբրև միևնույն երկրի քաղաքացիներ, նյութական աջակցություն ցույց տալ իրանց նվերներով քյուրտերին, երբ սրանք կձեռնարկեն դպրոցներ բանալ, կամ օգնել նրանց իրանց խորհուրդներով՝ կազմակերպել դպրոցական գործը (112, 1908 թ. № 202)։

Ինչպես նշվեց վերևում, արդեն XIX դ. վերջից քրդական

իրականության մեջ առկա էր ազգայնական հոսանքը, որի ձևավորման գործում կարևոր դեր էր խաղացել «Քրդստան» թերթը։ Քուրդ ազգայնականները, ճիշտ է դեռևս ոչ ակտիվորեն, սակայն արդեն որոշակի մասնակցություն ունեին սուլթանական ինքնակալության դեմ ուղղված բուրժուահեղափոխական շարժմանը։ Քուրդ ժողովրդի ապագայի համար հույսեր կապելով այդ շարժման հետ, քրդական ազգայնական գործիչները մասնակցեցին նաև 1902 թ. և 1907 թ. Փարիզի երիտթուրքական կոնգրեսներին (461, էջ 92)։

Պատահական չէ, որ 1908 թ. հեղաշրջումից հետո քրդական ազգայնական հոսանքի պարագլուխները՝ Էմին Ալի Բադրխանը, Շերիֆ փաշան, Ահմեդ Դուլ Կաֆիլ փաշան և ուրիշներ, որոնց հալածել ու աքսորել էր Աբդուլ Համիդը, անմիջապես ազատ արձակվեցին։ Թուրքիայի նոր կառավարիչները գրկաբաց ընդունեցին նաև աքսորից վերադարձած շեյխ Օբեյդուլլայի որդուն՝ Աբդուլ Ղադերին, նրան դարձնելով նույնիսկ օսմանյան սենատի անդամ։

Քրդական ազգայնական հոսանքի այս ներկայացուցիչները ընդունեցին երիտթուրքերին ու նրանց վարչակարգը, աջակցեցին նրան, հույս ունենալով, որ նա ընդառաջ կգնա իրենց ձգտումներին և կպաշտպանի քուրդ ազգայնականների պահանջները, որոնք հանգում էին հետևյալին. Օսմանյան կայսրության տարածքում քրդերի համար ստանալ ինքնավարություն և ձեռք բերել մի այնպիսի ստատուս, որը ճանաչեր քրդերի ազգային առանձնահատկությունները (401, էջ 681։ 294, էջ 284)։

1908 թ. աշնանը Ստամբուլում Էմին Ալի Բադրխանը, Շերիֆ փաշան և Աբդուլ Ղադերը հիմնադրեցին «Թաալի վե թերաքքը Քուրդիստան» (Քրդստանի ծաղկում և առաջադիմություն) ակումբը, Աբդուլ Ղադերի նախաձեռնությամբ ստեղծվեց «Քուրդ թաավուն վե թերաքքը ջամիաթի» (Քրդական փոխօգնության և առաջադիմության ընկերություն) կազմակերպությունը, որոնք ունեին ինչպես կուլտուր-լուսավորչական, այնպես էլ քրդերի շրջանում արդյունաբերական-առևտրական գործունեությանը զարկ տալու նպատակներ։ Հիշյալ ընկերությունները իրենցից ներկայացնում էին ոչ մեծ խմբակներ, ունենալով չափազանց հեղհեղուկ և անորոշ քաղաքական ծրագրեր։

Քրդական ազգայնականները լույս ընծայեցին «Քյուրտ

թեավուն վե թերաքը ղազեթեսի» («Քրդական փոխօգնություն և առաջադիմություն») լրագիրը։ Քրդական ակումբներ հիմնվեցին նաև Մուշում, Բիթլիսում, Էրզրումում, Բաղդադում, Մոսուլում, Դիարբեքիրում և այլուր, որոնք նրանց կազմակերպիչ քուրդ ազգայնականները անվանում էին «Իթթիհադ վե թերաքքիի» տեղական ակումբներ։ Ավելի ուշ, 1913 թ. հիմնադրվեց «Խիվիա քուրդ» («Քրդական միավորում») ընկերությունը, որը հրատարակեց «Ռոժե քուրդ» («Քրդի օրը») շաբաթաթերթը, այն 1914 թվականից կոչվեց «Խաթավի քուրդ» («Քրդի արև»)։

Վերոհիշյալ թերթերում Բաբանզադե Իսմայիլ Հաքքին, Սայիդ Քուրդին, Աբդուլ Ղադերը և ուրիշներ հրատարակում էին հոդվածներ քրդերի ազգային միասնության անհրաժեշտության, քրդական մշակույթը, լեզուն և կրթությունը զարգացնելու, հարազատ ազգությունը ճանաչելու և այլ հարցերի մասին (469, էջ 70)։ Այդ հոդվածներում նրանք աշխատում էին նաև մեղմացնել քրդերի շուրջ ստեղծված մթնոլորտը, որպեսզի նրանց չդիտեն որպես սուլթանի ձեռքին գործիք դարձած և հակասահմանադրական տարր, պահանջում էին, որ քրդերը ևս կառավարության կողմից հարգվեն ինչպես մյուս ազգերը և այլն։

Ամբողջությամբ վերցված հիշյալ թերթերի բովանդակությունը ընդհանուր սահմանադրական խոսքերից, մշակութային վերածննդի բաղձանքներից, քրդերին քաղաքակրթության ճանապարհի վրա դնելու ցանկություններից այն կողմ չէր անցնում։

Քրդական ազգայնական գործիչները, որոնք մինչ հեղափոխությունը իրենց պայքարի հիմնական լոզունգն էին դարձրել անկախության համար պայքարը, սահմանադրության հռչակումից հետո փոխեցին իրենց գործունեության ուղղությունը և դադարեցրին անկախության պրոպագանդան։ Նրանք Քրդստանի պրոբլեմը կապեցին սահմանադրական Թուրքիայի զարգացման հետ և վերջ տվեցին իրենց հակաթուրքական ելույթներին։

Սակայն քրդական մտավորականության ներկայացուցիչները հետևողական չգտնվեցին իրենց այդ խիստ չափավոր ծրագիրը մինչև վերջ կյանքի կոչելու համար։

Նրանք «փոխանակ նախաձեռնարկ լինելու առաջադրված

խնդիրները լուծելու, նվիրվեցին պետական և անձնական կյանքին, դարձան ծերակուտական, երեսփոխան, պաշտոնյա և սպա։ Պոլսի մեջ լսված այս մի քանի ձայները հազիվ մի տկար արձագանք տվին մի քանի նահանգներում։ Շարժումը մեռավ» (128, էջ 206)։

Առհասարակ պետք է նշել, որ քրդական առաջին ազգայնականների ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա մեծ չէր և այդ պատճառով նրանց դերը քրդական շարժման մեջ մնաց համարյա աննկատելի։ Մյուս կողմից քուրդ զանգվածը ևս իր բաղաքական հետամնացության պատճառով դեռևս պատրաստ չէր ընկալելու համազգային գաղափարները (273, էջ 147)։

Քուրդ ազգայնական ուղղությունից բացի, քրդական իրականության մեջ գոյություն ուներ նաև մեկ այլ խմբավորում, բաղկացած առավելապես պաշտոնյաներից ու սպաներից, որոնք դրեթե թրքացել էին և նախկին ռեժիմի ժամանակ մեծ մասամբ հանդես էին գալիս որպես սուլթանի հավատարիմ ծառաներ։ Սահմանադրության հռչակումից հետո, ազգային զարթոնքի վերելքի հետ, այդ գործիչների մոտ որոշ չափով նկատվեց ազգային զգացումների արթնացում, սակայն անդամագրվելով երիտթուրքական կուսակցությանը, իրենց դիրքերն ու պաշտոնները պահպանելու համար, նրանք հետևեցին իթթիհադական քաղաքականությանը։ «Քուրդ պաշտոնյաներն ու սպաները,— գրում է Ջ. Կիրակոսյանը,— որ համիդյան վարչաձևի օրգանական մասն էին, այժմ դարձել էին իթթիհադական և, բացառությամբ առանձին դեպքերի, ազգային զարթոնքին տուրք չէին տալիս, այլ հետևում էին համապետական ուղղին» (79, էջ 273)։

Այդ գործիչների մեջ առավել կարկառուն դեմք էր Բաբանզադե Իսմայիլ Հաքքին, որը Հուսեին Ջահիդի հետ հրատարակում էր իթթիհադի պաշտոնական օրգան «Թանին» թերթը, և առհասարակ իր ամբողջ կյանքով ու գործունեությամբ կապված էր թրքության հետ և «երբեմն փշրանքներ էր բաժին հանում իր պատկանած քուրդ ժողովրդին» (128, էջ 205)։

Ընդ որում, քրդական գործիչների տարբեր խմբավորումների միջև ոչ միայն գոյություն չուներ մի ընդհանուր գիծ և համաձայնեցվածություն, այլ հակառակը, նրանք հաճախ գժտվում էին և նույնիսկ պայքարում միմյանց դեմ։ Այսպես,

հեղափոխությունից անմիջապես հետո քրդական կյանքում առաջնություն ձեռք բերելու համար բաղրխանների և Ներիի ազդեցիկ առաջնորդ Սայեդի կլանների միջև սկսվեց սուր պայքար, որն ուղեկցվեց մեկը մյուսի դեմ դավեր նյութելով և այլն (294, էջ 290)։

Սակայն քրդական այս գործիչները, ինչպես նաև փոքրաթիվ քուրդ ազգայնականները, որոնք բնակվում էին առավելապես մայրաքաղաքում, ըստ էության ոչ մի ազդեցություն չունեին բուն Արևմտյան Հայաստանում և Քրդստանում բնակվող ցեղապետ-աշիրեթապետերի, առավել ևս քրդական զանգվածների վրա։ Հետևաբար, առաջվա պես քրդերի ճակատագիրը որոշում էին ոչ թե սակավաթիվ քուրդ մտավորականությունն ու պաշտոնյաները, այլ քրդական ցեղապետերը, որոնք դրության իրական տերերն էին։

Քրդական առաջին ազգայնականների ազդեցությունը ժողովրդական զանգվածների վրա մեծ չէր և նրանց դերը քրդական շարժման մեջ համարյա աննկատելի էր։ Ցեղերի շարքային անդամները իրենք քաղաքական և կուլտուրական հետամնացության պատճառով դեռևս պատրաստ չէին ընկալելու ազգային գաղափարները։

Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի և Քրդստանի ավատական վերնախավին, ապա նա երիտթուրքական հեղափոխության և սահմանադրության նկատմամբ ընդունեց շեշտված թշնամական դիրքորոշում։ «Քրդական ֆեոդալները,— գրում է Հ. Ալբեկը,— որոնք հանդիսանում էին Աբդուլ Համիդի բռնապետական միապետության հենարանը, հեղափոխության հաղթանակի վերաբերյալ լուրը դիմավորեցին անսքող թշնամանքով, կանխազգալով մոտալուտ ժամանակներում իրենց ինքնակամության վախճանը» (221, էջ 113)։

Քրդական ավատատերերը, որոնց համար ծանր էր հրաժարվել իրենց ավանդական «իրավունքներից», որոնց գուրգուրել ու հովանավորել էր նախկին վարչակարգը և որոնց թվում էր, թե նոր կարգերը մահաբեր են իրենց համար, սկսեցին բողոքել, սպառնալ։

Ռուսական դիտորդները հայտնում էին, որ քրդական ցեղապետերը «հրաժարվում են ենթարկվել նոր վարչակարգին, իսկ համիդիե գնդերը, շարունակելով կողոպտել ժողովրդին, զինված դիմադրություն են ցույց տալիս հարկահավաքներին,

հայտարարելով, որ չեն ճանաչում ներկա կառավարությանը» (180)։

Ստամբուլում անգլիական դեսպան Ջերալդ Լոուդերը հաղորդում էր Ֆորին օֆիսին, որ այն ժամանակ, երբ կայսրության ժողովուրդները տոնում էին սահմանադրության վերականգնումը, քրդական բեյերն ու աղաները դժգոհություն էին դրսևորում հեղափոխության հաղթանակի նկատմամբ։ Բացատրելով դրա պատճառները նա գրում էր. «Նրանք հիանալի գիտեն, որ նոր վարչակարգը վերջ կդնի անօրինականությանն ու անիշխանությանը, որի պայմաններում նրանց համար հեշտ էր իրենց ցեղակիցներին պահել հնազանդության մեջ և հարբսահարել անպաշտպան հայերին» (399, էջ 253)։ «Դրոշակը» գրում էր. «Ահա վանդեական ոռնոց է լսվում և հայկական բարձրավանդակից... Քրդերն են... Ոչ, իհարկե, քուրդ ժողովուրդը, այլ այն հացկատակ ու հանցագործ դասակարգը, որը սովորել է դարերից ի վեր անպատիժ զավթել հպատակ «ռայայի» արյուն-քրտինք աշխատանքը... Ինչպե՞ս նա հաշտվի այն սարսափելի իրողության հետ՝ որ այսուհետև գրված օրենքը պիտի արգելե նրան՝ ապրել թալանով, հափշտակությամբ, որ նա պիտի սկսե ընտելանալ հալալ, ստեղծագործ աշխատանքի... Դա մի անլուր բռնություն է նրա «նվիրական», վաղուց հետև սրբագործված իրավունքների վրա, դա մի սոսկալի հեղաշրջումն է նրա կենցաղի, հոգեբանության, նրա բովանդակ աշխարհայեցողության մեջ... Եվ նա էլ բողոքում է, սպառնում է» (46, էջ 113)։

Անդրադառնալով Արևմտյան Հայաստանի վիճակի մասին նույնիսկ երիտթուրքական «Շուրայի ումմեթ» թերթը խոստովանում էր, որ այնտեղ «տերեպելությունը ցարդ կշարունակվի», որ «աշիրեթներ գտնված տեղուանք կարգապահութեան և անդորրութեան հետքն իսկ չկայ։ ...Շատ մը գավառակներու գայմագամներ, եթե այնտեղի աշիրեթներու պետերուն քմահաճույքին համեմատ չշարժեին, ոչ միայն իրենց պաշտոնը, այլև իրենց կյանքն իսկ չէին կրնար պահել։ Այնպիսի տեղերե ոչ՝ զորք, ոչ՝ ալ տուրք կրնար առնվիլ, և ամեն ինչ կախում ուներ աշիրեթներու պետերու շնորհներեն։ Ալ՝ այնպիսի տեղերու մեջ,— հարց էր տալիս թերթը,— կրնա՞ր երբեք խոսք ըլլալ արդարության, հավասարության և եղբայրության վրա» (30, 1909 թ. № 3, 760, 7 փետրվարի)։

1908 թ. աշնանից երիտթուրքական կառավարությունը սկսեց իրականացնել մի շարք միջոցառումներ քրդական շեյխերի ու աղալարների դիրքերը թուլացնելու և կառավարության ուժն ու ազդեցությունը քուրդ զանգվածների վրա ամրապնդելու ուղղությամբ։ Նախ, 1908 թ. սեպտեմբերին Ստամբուլը հրաման հրապարակեց համիդիե հեծելազորի զինաթափման և ցրման[24], նրանց կանոնավոր բանակի՝ նիզամի մեջ ընդգրկելու մասին (181)։ Երիտթուրքական կառավարությունն այդ քայլին դիմեց ոչ թե առաջնորդվելով համիդիե գնդերի խժդժությունները խաղաղ բնակչության նկատմամբ վերջ տալու միտումով, այլ պարզապես այն պատճառով, որ նրանք բոլորովին կորցրել էին իրենց մարտունակությունը։ Նրանց հիմնական զբաղմունքը դարձել էր խաղաղ բնակչության և հատկապես հայկական գյուղերի կողոպուտը։ Սակայն չսահմանափակվելով հայերով, համիդիե ջոկատները հարձակումներ էին գործում նաև թուրքական գյուղերի վրա, հրաժարվում էին հարկեր մուծել և այլն։ Թուրքական բանակի հրամանատարությունը բազմիցս բացասաբար էր արտահայտվել այդ գնդերի մասին, նրանց համարելով նույնիսկ ոչ թե ավազակներ, այլ ուղղակի գողեր (257, էջ 39)։

Վերոհիշյալ օրենքի հրապարակումը համիդիե գնդերի հրամանատարներն ընդունեցին մեծագույն զայրույթով (299, էջ 61)։ Ամենուրեք սկսվեցին հակակառավարական քրդական հուզումներ և ապստամբություններ։ Այդ ապստամբություններից թերևս ամենախոշորը տեղի ունեցավ 1908 թ. սեպտեմբերին միլլի ցեղի առաջնորդ Իբրահիմ փաշայի գլխավորությամբ։ Վերջինս կարողացավ իր հսկողությունը սահմանել Էրզինջանից մինչև Դեյր-էզ-Զոր ընկած լայնածավալ տարածքի վրա։ Իթթիհադը ապստամբ ցեղապետի դեմ մի խոշոր պատժիչ բանակ ուղարկեց Նեշատ փաշայի գլխավորությամբ, որը չախչախեց այդ շարժումը (323, էջ 46—48)։

Պատրվակ բերելով հայերի բողոքները համիդիե գնդերի այն հրամանատարների նկատմամբ, որոնք 90-ական թվականներին մասնակցել էին հայկական ջարդերին կամ հայերից բռնագրավել էին նրանց հողերը, երիտթուրքերը ձերբակալեցին ու դատի տվեցին քրդական այն ցեղապետերին, որոնք զբաղվում էին կողոպուտով և ապստամբություններով (183)։ Ձերբակալվեցին գրավիան ցեղի առաջնորդ Շաքիր աղան, Հու-

սեին փաշան, Խիզանի, Սպարկերտի և Մամռտանքի տիրակալ Սեյիդ Ալին, Մշո դաշտի Մուսա և Կասրմ եղբայրները, Կարճկանի Մուսա բեյը, Աղբակի Շարաֆ և Կոփ Մեհմեդ բեյերը, Նորդուզի Միր Մհեն, Խարզանի Բշարե Զաթոն և նրա եղբայր Զամիլը և բազմաթիվ այլ անձինք (3, էջ 356—357։ 13, էջ XXXI)։ Երիտթուրքական կառավարությունը սկսեց հետապնդել նաև այն ցեղերին, որոնք հրաժարվում էին հարկեր վճարել կամ չէին ցանկանում ճանաչել նոր իշխանություններին։ Հատկապես շեշտված պատժիչ քաղաքականություն իրագործվեց շաֆ, խերբի, համավենդ, արթոշի, բոհթան, սլևանի և այլ ցեղերի նկատմամբ։

Այսպիսով, երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական բեյերի ու աղալարների այն կանխատեսությունը, թե Թուրքիայում քաղաքական նոր ռեժիմի ստեղծումը կսահմանափակի իրենց իրավունքները (399, էջ 254), միանգամայն արդարացավ։

Քրդական ազդեցիկ առաջնորդների դեմ հակակշիռ ստեղծելու և նրանց դիրքերը թուլացնելու նպատակով կառավարությունը սկսեց քրդական ֆեոդալների՝ հայերից բռնագրավված հողերը վերադարձնել նախկին տերերին։ Ստամբուլը նաև ցույց տվեց իր տեղական իշխանություններին հայ բնակչության շրջանում ամեն կերպ ձեռք բերել ժողովրդականություն և դրանով իսկ ոչ միայն հակազդել քրդերին, այլև խորտակել հայերի հավատը Ռուսաստանի նկատմամբ (358)։

Երիտթուրքական կառավարության քաղաքական այս գիծը քրդական վերնախավի շրջանում առաջ բերեց խոր դժգոհություն (184)։ Արևմտյան Հայաստանի քրդական շրջաններում 1909 թ. ամեն տեղ սպասվում էր քրդական ապստամբության պոռթկում։ Համիդիե հեծելազորի մասնակի զինաթափումը և ոչ մահմեդականների զինակոչման օրենքի ընդունումը, որը հետապնդում էր քրդական անկանոն հեծելազորի ազդեցության և նշանակության նվազեցման նպատակ, վերջնականապես կատաղեցրեց քրդական ավագանուն։

Հնարավորություն չունենալով բացահայտորեն դուրս գալ կառավարության դեմ, երիտթուրքերի «քրդական» քաղաքականությունից դժգոհ Վանի, Բիթլիսի, Էրզրումի վիլայեթների բազմաթիվ ցեղապետեր իրենց աշիրեթներով անցան Իրան։

Այդպես վարվեցին, օրինակ, հայդերանլի ցեղի առաջնորդներ Հուսեին փաշան, Էմին փաշան, Հաջի Թեյմուր փաշան, Մեհմեդ Սադրկը, խոշոր ֆեոդալ Քյոռ Հուսեին փաշան, հայտնի ելուզակ Միր Մհեն, մազրիք ցեղի առաջնորդ Շերեֆ բեկը և ուրիշներ, որոնք հաստատվեցին Մակուի խանությունում, Սալմաստում և այլն, նպատակ ունենալով այնտեղից պայքարել երիտթուրքական կառավարության դեմ, կամ գոնե հրոսակային կռիվներով դժվարություններ հարուցել նրա դեմ· (345։ 359)։

Քրդական ազդեցիկ ցեղապետերի վերաբնակվելը Իրանում երիտթուրքերի դեմ թշնամաբար տրամադրեց Թուրքիայի քրդական բնակչության մեծամասնությանը (299, էջ 63—64)։ Բիթլիսում փոխհյուպատոս Շիրքովը հայտնում էր, որ ըստ իր ստացած լուրերի, քրդերը որոշել են մասսայաբար տեղափոխվել Իրան և իրանական սահմանամերձ շրջանները, որպեսզի համախմբվելով հետագայում աջակցություն ցույց տան Թուրքիայում հետադիմական շարժմանը (185)։ Երիտթուրքերի համար առավել վտանգավորն այն էր, որ Իրան տեղափոխված քրդական ցեղապետերը սկսել էին որոնել Ռուսաստանի հովանավորությունը։ Կովկասի փոխարքային ուղղված նամակում նրանք առաջարկում էին Թուրքիայում բարձրացնել քրդերի համընդհանուր ապստամբություն և Ռուսաստանի ազդեցությանը ենթարկել ողջ Քրդստանը (186)։ «Աբդուլ Համիդի նախկին հավատարիմ ծառաները՝ թուրքական քրդերը, որոնք պատրաստ էին նրա առաջին իսկ հրամանով նետվել Անդրկովկասի վրա, ի դեմս իրենց առաջնորդներ Հուսեին փաշայի, Ամիր խանի և Հաջի Թեյմուր խանի, դիմեցին Մակուի սարդար Մուրթեզա Կուլի խանին, խնդրելով նրա միջնորդությունը իրենց ռուսական հպատակության տակ ընդունելու համար» (360),— ոչ առանց հեգնանքի հայտնում էր Թավրիզում ռուսական հյուպատոսության քարտուղար Գոլուբինովը։

1910 թ. փետրվարին Մակուի սարդարը մեկնեց Երևան, այդ հարցի կապակցությամբ ռուսական իշխանությունների հետ բանակցություններ վարելու։ Սակայն կովկասյան իշխանությունները մերժեցին քրդերի առաջարկը, պատճառաբանելով, որ Ռուսաստանի կողմից նրանց հովանավորելը կարող է միջազգային անցանկալի բարդությունների տեղիք տալ, որով-

հետև դա ուղղակի միջամտություն կլինի Թուրքիայի ներքին գործերին (361։ 187)։

Վանի զինվորական շրջաններին շուտով հայտնի դարձավ, որ Իրան տեղափոխված քրդերը պատրաստվում են թուրքական կառավարությունից վրեժ լուծել և նրա դեմ ակտիվորեն պայքարել։ Մասնավորապես պարզվեց, որ Հուսեին փաշան իր ցեղակիցների միջոցով Թուրքիայում հակակառավարական բարոզչություն մղելուց բացի, համախմբում է Էրզրումի վիլայեթի քրդական մեծ ցեղերին հակասահմանադրական մի միության մեջ, որն իր տրամադրության տակ ուներ մեծ քանակությամբ զենք և դրամական միջոցներ (188)։ Թուրքական իշխանություններին հաջողվեց տեղեկանալ նաև, որ հայդերանցի աշիրեթի առաջնորդները հորդորում են Մակուի սարդարին համատեղ ուժերով գրավել Արաղայի (Կազա Բերկրի) հարուստ հովիտը, պատճառաբանելով, որ այն միշտ էլ պատկանել է Իրանին և բռնի ու անօրինական ճանապարհով է միացվել Թուրքիային (362)։ Թուրքական սահմանամերձ զինվորական իշխանությունների աչքից չէր վրիպել նաև այն հանգամանքը, որ թուրքական և իրանական քրդերի միջև նախկին սուր թշնամանքը փոխարինվել էր փոխադարձ մերձեցման ու համախմբվածության քայլերով, որ սահմանային բախումները իրանական և թուրքական քրդերի միջև միանգամայն դադարել էին և այլն (26, էջ 200—201)։

Բ. Դոան տագնապները ավելի մեծացան, երբ լուրեր տարածվեցին, որ իբր Շամդինանի շեյխ, օսմանյան սենատի անդամ Արդուլ Ղադերը, որի մասին կասկածներ կային, որ քրդական ցեղապետերի հակակառավարական ընդդիմադիր շարժման պարագլուխն է, ձգտում է միավորել բոլոր քրդական ցեղերին օսմանյան կառավարության դեմ հանդես գալու համար։ Նույնիսկ լուրեր էին պտտվում, որ նա փորձում է համաձայնության մեջ մտնել հայերի և Իրաքի ու Ջեբել Դրուզի արաբների հետ երիտթուրքական կառավարության դեմ համատեղ պայքարելու համար (363)։

Այս ամենից կարելի էր եզրակացնել, որ Թուրքիայում նախադրյալներ են ստեղծվում քրդական համընդհանուր ապըստամբության բռնկման համար։

Թեև Վանի գեներալ-նահանգապետ Բեքիր Սամի բեյը կառավարության համաձայնությամբ թուրք-իրանական սահ-

ման զորքերի համալրում ուղարկեց (364), սակայն Ստամբուլում անշուշտ հասկանում էին, որ դա բավական չէ քրդերին զսպելու համար։

Առհասարակ Արևմտյան Հայաստանի օրինակով ամեն քայլափոխում դրսևորվում էր երիտթուրքական «հեղափոխության» վերնախավային բնույթը։ Այդ պատճառով Վ. Ի. Լենինը այն անվանել է «կես հաղթություն» կամ նույնիսկ հաղթության մի փոքր մաս (1, էջ 216—217)։

Սահմանադրության հռչակումից հետո հայ գյուղացիությունը բնական մղումով ձեռնարկեց վերականգնելու իր հողային իրավունքները, այսինքն հետ ստանալու այն հողերը, որոնք բռնագրավել էին քրդական ֆեոդալները (84, էջ 48—106)։ Դա տեղիք տվեց կողմերի միջև հարաբերությունների անօրինակ սրման։ Վանում ֆրանսիական հյուպատոս Ս. Զարզեցկին 1909 թ. վկայում էր, որ հողային հարցի շուրջը հայերի և քրդերի միջև մղվում է իսկական պատերազմ (493, էջ 888)։

Թեև կառավարության կողմից չեղյալ հայտարարվեց նաև խաֆիրության տուրքը, ձրի աշխատանքը (օլամ) և այլն, սակայն այստեղ նույնպես, ինչպես և հողային հարցում, կառավարությունը հետևողական չգտնվեց, բավականանալով լոկ հանդիսավոր հանձնառություններով և հայտարարություններով։ Այս բոլորը վկայում էր, որ երիտթուրքերը չէին ձգտում գործնականում սոցիալական բարեփոխումներ իրականացնել (416, էջ 15)։

Ճիշտ է, հայ գյուղացիությունը, հույսը կտրելով կառավարությունից, առանձին վայրերում փորձում էր զենքի օգնությամբ, իր սեփական ուժերով, թոթափել խաֆիրության լուծը, սակայն բախվելով քրդական ավատատերերի զինված ջոկատների դիմադրության հետ, պարտություն էր կրում, ընկնելով ավելի ծանր ճորտային լծի տակ։ Քրդական ֆեոդալները պինդ կառչել էին խաֆիրության իրավունքին և ոչ մի կերպ չէին ցանկանում նրանից զրկվել (225, էջ 75—76)։ Նրանց այդ վարքագիծը երիտթուրքերը միայն խոսքով էին դատապարտում։ Գործնականում վարվում էր մի՛անգամայն այլ քաղաքականություն։ Երիտթուրքական պառլամենտի պատգամավորների կողմից մշակվել էր մի ծրագիր, որտեղ նախատեսվում էր բարենորոգումներ անցկացնելիս առաջնորդվել շարիաթի սկզբունքներով և անթույլատրելի համարել պետության

որևէ միջամտություն գյուղացիների և բեկերի միջև հարաբերություններին (244, էջ 249)։

Արևմտյան Հայաստանից պատրիարքարան էին ստացվում աղետաբեր հեռագրեր. «Պեկերն ու աղաները բռնի կը գրավեն հայոց ստացվածքները և դուրս կը ձգեն տերերը իրենց տուներեն, պարտեզներեն և արտերեն. ի՞նչ պիտի ըլլա ասոր վերջը» (48, էջ 392)։

Այս բոլորի հետևանքով, ինչպես հաղորդում էին ռուսական դիտորդները, հայերի և քրդերի հարաբերություններն ընդունեցին ծայրահեղորեն թշնամական բնույթ (190)։ Նրանք հայերին սպառնում էին ջարդերով և այլն (365)։

Երիտթուրքերի նշանակած Վանի վալի Յավեր փաշան ստեղծեց «խառը հանձնաժողովներ», իբր թե քրդերին հայերի հետ հաշտեցնելու և նրանց միջև հողային վեճերը լուծելու համար (191), սակայն պարզվեց, որ դա իթթիհադի հերթական խաղերից մեկն է։ Որ երիտթուրքերը ոչ միայն չեն հարթելու հայերի և քրդերի միջև գոյություն ունեցող վիճելի հարցերը, այլ հակառակը, շահագրգռված են էլ ավելի խորացնելու դրանք։ Քրդերին հայերի դեմ գրգռելու նպատակով երիտթուրքական գործակալությունը նույնիսկ լուրեր էր տարածում, որ իբր հայերը դիմել են կառավարությանը՝ առաջարկելով համատեղ գործել ընդդեմ քրդերի (48, էջ 392)։ Սա վկայում էր, որ ի սկզբանե իթթիհադը օգտագործում էր Աբդուլ Համիդի դինամոցից հանած հայ-քրդական հարաբերություններն արհեստականորեն սրելու քաղաքականությունը։

Երիտթուրքերը քայլ առ քայլ զիջումների էին գնում քրդական ավատատերերի պահանջներին։ 1909 թ. դադարեցվեց համիդիե գնդերի զինաթափման և վերակազմակերպման գործը։ Ամեն ինչ թողնվեց նախկինի պես, որովհետև երիտթուրքերն եկան այն համոզման, որ համիդիե գնդերը որոշ կազմակերպչական վերակառուցումից հետո կարող են օգտակար լինել իրենց որպես ռազմական ուժ Ռուսաստանի և Իրանի, ինչպես նաև տեղական ժողովուրդների և հատկապես հայ ժողովրդի ազգային-ազատագրական շարժման ու սոցիալական պայքարի դեմ։ Միակ կատարված փոփոխությունն այն էր, որ այսուհետև այդ գնդերը կոչվելու էին ոչ թե սուլթանի անունով, այլ «աշիրեթ խաֆիֆ սուվարի ալայլարի» («քոչվորներից կազմված հեծելազորային գնդեր») (346)։

Երիտթուրքերը սիրաշահում էին քրդական վերնախավին, բացահայտորեն թշնամական դիրք բռնելով հայ բնակչության հանդեպ։ «Տիգրանակերտեն մինչև Պարսից սահմանագլուխը,— գրել է Անդրանիկը,— 160 հազար զինված քուրդ կա։ Ժեոն թուրքերը զինաթափ չեն ըներ զանոնք և կը պահեն մեզ հարմար առիթով կոտորել տալու համար» (61, էջ 21)։

Երիտթուրքական կառավարությունն ի վերջո որոշեց հրաժարվել քրդական հարցի վերաբերյալ իր իսկ ընդունած քաղաքական գծից։ 1910 թ. մարտին ներքին գործերի մինիստրը հրաման արձակեց ագրարային հարցի լուծման հետաձգման մասին, մինչև «դրա համար նպաստավոր պահի ստեղծումը» (367)։ Թուրքական կառավարող շրջանները փաստորեն հրաժարվեցին երկրի արևելյան նահանգներում ագրարային հարցի կարգավորումից և դրանով իսկ հարթեցին «քրդական հարցը»։

Թուրքական դատարանը բանտից ազատ արձակեց Քյոռ Հուսեին փաշային և հակառակը՝ բանտարկեց նրա դեմ բողոք ներկայացրած հայերին, ամբաստանելով նրանց որպես «խռովարարներ» (112, 1909 թ., № 155)։ Իսկ Վանի կուսակալ Յավեր փաշան առաջարկեց տեղի հայոց առաջնորդարանին՝ Հուսեին փաշայի և ուրիշ ոճրագործ ցեղապետերի հետ ստորագրել մի նամակ, որ նահանգը խաղաղ է, «հայ, թուրք և քուրդ ապրում են եղբոր պես» և այլն (112, 1909 թ., № 144)։

Հայերի հավատը երիտթուրքական կառավարության նկատմամբ վերջնականապես խորտակվեց 1909 թ. մայիսին Ադանայում կազմակերպված հայկական ջարդից հետո։ Այս արյունոտ միջադեպը ոչ մի կասկած չթողեց, որ թուրքական կառավարությունը, շարունակելով իր նախորդների գիծը, ջարդը դարձնում է իր քաղաքական սիստեմի բաղկացուցիչ մասը։

1910 թվականից բոլոր Իրան տեղափոխված քրդերին կառավարությունը խոստացավ վերադարձի դեպքում ներում շնորհել, հակառակ դեպքում սպառնալով զրկել նրանց աստիճաններից ու տիտղոսներից և բռնագրավել ողջ շարժական ու անշարժ գույքը (192։ 347)։ Սկսվեց քուրդ ավատատերերի վերադարձը, որոնք իշխանությունների թողտվությամբ անմիջապես վերականգնեցին իրենց նախկին «իրավունքները»։ Ներքին գործերի մինիստրի հատուկ կարգադրությամբ այդ բեկե-

ին ու աղաներին վերադարձրեցին նույնիսկ այն հողերը, որոնք հօգուտ հայերի նրանցից բռնագրավվել էին երիտթուրքերի կառավարման սկզբնական շրջանում (19, էջ 24)։

Վերադարձից հետո քրդական աղալարներն ավելի դաժան հալածանքների էին ենթարկում հայերին (193)։ Այս անգամ արդեն թուրքական իշխանություններն էին օգնում նրանց հայերից հողերը հետ գրավելու համար։ Արևմտյան Հայաստանից Սասմրուլ էին ուղարկվում տագնապալից հեռագրեր հայերի նկատմամբ կիրառվող բռնությունների վերաբերյալ։ Վանից Ս. Օլֆերևը հաղորդում էր, որ ամենուրեք հայերին սպառնում է մեծագույն վտանգ (366)։

Հատուկ հրովարտակով կառավարությունը ներում շնորհեց նաև Արդուլ Համիդի բռնատիրության շրջանում քուրդ բեկերի կատարած բոլոր հանցանքներին։

Օսմանյան պառլամենտի պատգամավոր Վահան Փափազյանը զուր էր պահանջում քրդական զինված ջոկատների նկատմամբ կիրառել ավազակախմբերի վերաբերյալ նոր օրենքը (368)։ Նա ներքին գործերի մինիստրությանը ներկայացրեց մանրամասն մի զեկուցագիր, որտեղ առաջարկում էր անհապաղ մի շարք միջոցառումներ ձեռնարկել, որոնք, ըստ իրեն, հույժ անհրաժեշտ էին քրդերին կառավարական իշխանությանը ենթարկելու համար։ Մասնավորապես նա նշում էր, որ անհրաժեշտ է ավելացնել զորքերի թիվը Վանի վիլայեթում և թուրք-իրանական սահմանի շրջանում, իրանական կառավարությունից պահանջել անհապաղ վտարել Մակուում թաքնված քրդական ցեղապետերին և նրանց հեծյալ ջոկատներին, իսկ Թուրքիա վերադառնալուց հետո ցրել նրանց և բնակեցնել կայսրության տարբեր շրջաններում որպես հասարակ զինվորների (370)։

1909 թ. իթթիհադը Արևմտյան Հայաստան ուղարկեց մեծ թվով գործակալների՝ քրդերի և հայերի միջև երկպառակություններ և թշնամանք հրահրելու հանձնարարությամբ (469, էջ 71)։ Վանից փոխհյուպատոս Ս. Օլֆերևը Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանին տեղեկացնում էր, որ թուրքական գործակալությունը հայ-քրդական թշնամանք հրահրելու միտումով աշխատում է հայ բնակչությանը համոզել, որ քրդերի արարքները իրենց նկատմամբ «հետևանք են Ռուսաստանի դավերի»։ Այս պրոպագանդան, նշում էր ռուս դիվանագետը, նպատակ

ունի նաև խաթարել հայ բնակչության համակրանքը Ռուսաստանի նկատմամբ (369)։

Երիտթուրքական կառավարությունը անհետևողական գտնվեց նաև 1909 թ. հուլիսի 20-ին հրապարակված ոչ մահմեդականների զինվորագրության օրենքը կենսագործելու հարցում։ Ըստ այդ օրենքի պետության իսլամական տարրը այլևս իրավունք պիտի չունենար իրեն տիրապետող ազգ՝ «միլլեթի հաքիմե» հռչակելու։ 1910 թ. մարտի 1-ին երիտթուրքական պառլամենտը հաստատեց քրիստոնյաների համար զինվորական տուրքի («բեդելի ասկերի») վերացումը։ Մտցվեց համընդհանուր զինապարտություն։

Այսպիսով, Օսմանյան կայսրության պատմության մեջ առաջին անգամ կառավարությունը սկսեց բանակ զինակոչել հայերին։ Դա քրդական վերնախավի մոտ առաջ բերեց մեծ անհանգստություն ու դժգոհություն (243, էջ 128), որովհետև հայերի կողմից զենք կրելու իրավունքը վերացնում էր նրանց նկատմամբ անպատիժ գործողությունների հնարավորությունը։ Քուրդ ավատատերերը դա գնահատեցին որպես ոտնձգություն իրենց «դարավոր ադաթների» և «պատմական իրավունքների» նկատմամբ։

Էրզրումի, Մուշի և մի շարք այլ վիլայեթների աշիրեթները պահանջեցին չեղյալ հայտարարել քրիստոնյաների զինվորագրության մասին օրենքը, հակառակ դեպքում սպառնալով տհաճություններ պատճառել կառավարությանը կամ ծայրահեղ դեպքում հեռանալ Իրան և Ռուսաստան (194։ 348)։

Վերջին հաշվով քրիստոնյաների զինապարտության օրենքը ևս չծառայեց իր նպատակին, որովհետև կառավարությունը չէր ցանկանում տրել իր հարաբերությունները քրդերի հետ և առհասարակ վախենում էր մահմեդական հետադիմականների հետ առճակատման մեջ մտնելուց։

Ինչպես հայտնի է, երիտթուրքերը թուրքական ազգայնականներ էին։ Ընտրելով «Թուրքիան թուրքերի համար» կարգախոսը, նրանք հանդես էին գալիս կայսրության բոլոր ոչթուրք ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների կատաղի հակառակորդի դերում։ Անկարող լինելով տալ ազգային հարցին նպատակահարմար և բավարար լուծում, երիտասարդ թրքությունը մնում էր կաշկանդված այն նախապաշարմունքի մեջ, որ ստեղծվել էր նրանց նախահայրերի նեղմտությունից։

Այսինքն հավատում էին, թե Թուրքիայի դժբախտությունը նրա մեջ ապրող տարբեր ազգություններն են, ոչ միայն այլակրոն, ուրիշ խոսքով, ոչ-մահմեդական, այլև կրոնակից, բայց այլացեղ (օրինակ քրդերը, արաբները)։ Այդ պատճառով կուսակցությունը որոշել էր ամեն ջանք գործադրել պետությունը միատարր թուրքական դարձնելու համար (67, էջ 239)։

Իթթիհադը առանձնակի թշնամությամբ էր լցված դեպի հայ ազգային-ազատագրական շարժումը, այն դիտելով որպես կայսրության առավել վտանգավոր թշնամիներից մեկի։ Արևմտահայության նկատմամբ վերաբերմունքի հարցում երիտթուրքերի թշնամական դիրքորոշման լրջագույն պատճառներից մեկն էլ նաև այն էր, որ դեռևս թույլ, տնտեսական մրցակցության անկարող թուրքական ազգային բուրժուազիան ձգտում էր երկրի տնտեսական կյանքից դուրս մղել այլազգի, այդ թվում նաև հայ բուրժուազիային, և տիրապետող ուժ դառնալ այդ բնագավառում ևս (257)։

Օսմանյան կայսրությունում մահմեդական (թուրք, քուրդ և այլն) ու հայ բնակչության հակասությունների հիմքը տնտեսական անհավասարությունն էր։ Բանն այն է, որ «հայ բուրժուազիան որպես Թուրքիայի տնտեսության մեջ կապիտալիստական զարգացման առաջադիմության կրող՝ տնտեսական ճանապարհով քայքայում էր երկրի կյանքի հին հիմքերը։ Թուրքիայի ավատական պաշտոնակարգության տնտեսական հիմքը երբեմն և հայկական կապիտալը, ավելի ու ավելի թափանցելով նահանգները, իր քայքայիչ ընթացքով ու թուրքերի, քրդերի և այլն հետամնաց տնտեսության համար բացասական հետևանքներով, վերջիններին ամբողջապես զինեց հայերի դեմ» (230, մաս 1, էջ 283)։ Այս միտքը հաստատում է նաև Գուրկո-Կրյաժինը, որի կարծիքով թուրքերի և քրդերի թշնամական վերաբերմունքը հայերի նկատմամբ «պայմանավորվում էր գլխավորապես նրանով, որ Թուրքիայում հայկական բուրժուազիան հանդիսանում էր կապիտալիստական առաջադիմության կրող, որը քայքայում էր կյանքի հին հիմքերը և դա շատ հաճախ կատարվում էր մահմեդական բնակչության համար բավականին ցավագին ձևերով» (246, էջ 62—63)։

Բացի այդ. «Պանիսլամիզմը երիտթուրքերի համար «թանկարժեք մի զենք էր» մյուս մուսուլմանների՝ արաբների, քրդերի

և այլանացիների հետ իրենց հարաբերությունները կարգավորելու ճանապարհին։ Սա իշխանության կենտրոնացման ձգտում էր կրոնի միջոցով։ Ազգային սկզբունքն այստեղ անուժ էր և Կ. Պոլսում վերակենդանացավ «մուսուլմանական միասնության ընկերությունը», լայն գործունեություն ծավալեց «պանիսլամիստական ընկերությունը», հարյուրավոր գործակալներ բռնեցին Աֆրիկայի և Ասիայի մահմեդական երկրների ճանապարհը» (79, էջ 186—187)

Երիտթուրքական հեղաշրջումից հետո վառվռուն հույսերի ու ակնկալությունների կարճատև շրջանին փոխարինելու եկավ հուսախաբության մի դառն շրջան։ Արևմտահայությունը հասկացավ, որ երիտթուրքական վարչությունը նոր դիմակով հին բռնակալությունն է։ Իթթիհադի շովինիզմը ազգային փոքրամասնությունների և մասնավորապես հայերի նկատմամբ գնալով ուժեղանում էր։ Դա հատկապես ցայտուն դրսևորվեց 1911 թ. սեպտեմբերին Սալոնիկում տեղի ունեցած «Միություն և առաջադիմություն» կոմիտեի համաժողովում, որտեղ առաջ քաշվեց «տիրող տարրի» (միլլեթը հաքիմե) լոզունգը։ Դա նշանակում էր այսուհետև Թուրքիայում բնակվող քրիստոնյա տարրը ենթարկել մի այնպիսի վիճակի, որ այն ստիպված իսլամանա և կամ միայն անվամբ պահի իր ազգությունը (9, էջ 3)։

1910 թ. «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեում տեղի ունեցան արմատական փոփոխություններ։ Նրա մեջ մտան ծայրահեղ ազգայնական հայացքներ ունեցող մարդիկ։ Դրանցից մեկն էր, օրինակ, պանթուրքիզմի գաղափարախոսության հիմնադիր Զիա Գյոքալփը, որի քաղաքական փիլիսոփայությունը բացառում էր ազգային փոքրամասնությունների, մասնավորապես հայերի համախմբումը երիտթուրքերի քաղաքական ծրագրերի շուրջը։ Եթե քրդերի նկատմամբ պանթուրքիզմը հնարավոր էր համարում նրանց համաձուլումը, ապա ռասիստական այդ ուսմունքը հայերին դատապարտում էր ոչնչացման։ Զիա Գյոքալփի կարծիքով հայերին հնարավոր չէր համաձուլել, որովհետև վերջիններս ունեին լեզվի և կրոնի դարավոր ավանդույթներ և որոշակի ազգային ինքնատիպություն (483, էջ 190)։ Սակայն ամբողջ դժբախտությունն այն էր, որ հակառակ այդ բոլորի, դաշնակցական կուսակցությունը շարունակում էր համագոր-

ծակցել իթթիհադի հետ։ Նույնիսկ 1909 թ. Ադանայում հայերի ջարդից հետո, որի ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր երիտթուրքերի վրա, դաշնակցությունը չփոխեց իր դիրքորոշումը։ Իթթիհադն էլ իր հերթին «փաղաքշում» էր դաշնակցությունը՝ նրան շոայլելով առատ խոստումներ։

Հայկական ազգային ներքին կյանքում հակադաշնակցական հոսանքները և առհասարակ հայ ժողովուրդը բուռն կերպով դժգոհում էին իթթիհադի հետ դաշնակցության կնքած համաձայնագրի համար, մանավանդ, որ երիտթուրքական կառավարությունը հաշվի չնստելով իր հետ համագործակցող այդ կուսակցության առանձին վեհերոտ բողոքների հետ, անպատիժ էր թողնում և քաջալերում քուրդ, թուրք, չերքեզ բռնակալներին, հափշտակիչներին, կեղծարար տարրերին, որոնք անպատիժ շարունակում էին հայ բնակչության թալանը և ջարդը (62, էջ 153)։

Բոլոր փաստերը վկայում էին, որ երիտթուրքական կառավարությունը այդ ոգով համապատասխան հրահանգներ էր տվել Արևմտյան Հայաստանում իր նահանգական իշխանություններին։ 1911 թ. չորրորդ ռազմական շրջանի մուշիր Օսման փաշան Մուշի սանջակի Խասգյուղում հանդես եկավ մի պրովոկացիոն ճառով, որով նա չարամիտ հարձակումներ էր գործում հայերի դեմ, գրգռում քրդերին, թե իբր հայերը կառավարությունից պահանջում են նրանց վտարել Արևմտյան Հայաստանից և այլն։ Նա նույնիսկ հայտարարում էր, թե ինքը ճանաչում է քրդական ավատատերերի կողմից հայերի նկատմամբ գործադրվող բռնությունների օրինականությունը (195)։

Համարյա նույն օրերին երիտթուրքական հայտնի գործիչներից Ջավիդ բեյը Արևմտյան Հայաստան կատարած իր ուղևորության ժամանակ այցելեց Քյոռ Հյուսեին փաշային և նրան մատուցեց իր հարգանաց հավաստիքը։

Այդ այցելության ժամանակ նա և նրան ուղեկցող երիտթուրքական Սալոնիկի կոմիտեի անդամ Նաջի բեյը և Բիթլիսի վալի Իսմայիլ Հաքքը փաշան մի կողմից քաղաքներում ճառեր էին արտասանում ազգերի համերաշխության անհրաժեշտության մասին, իսկ մյուս կողմից քրդական ավատատերերին հրահրում էին հայ բնակչության դեմ (53)։

Նման պրովոկացիաներն, անշուշտ, ոչ մի լավ բան չէին կարող խոստանալ հայ-քրդական հարաբերությունների ջեր-

մացման ասպարեզում։ Հակառակը, դրանք վերացնում էին այդ հարաբերությունների լավացման ամեն մի հույս (54)։

Իսկ Կոստանդնուպոլսի հայոց պատրիարքարանը շարունակում էր օսմանյան կառավարությանը անընդհատ դիմումներ հղել՝ գավառներում կատարվող հարստահարությունների մասին, խնդրելով միջոցներ ձեռնարկել։ Պատրիարքարանի ֆրանսերեն հրատարակած ստվար հատորի (55) մեջ հավաքված փաստերից երևում է, որ երիտթուրքական հեղաշրջման առաջին իսկ օրերից սպանությունները, հափշտակությունները և ավերումները Արևմտյան Հայաստանում երբեք չեն դադարել։

Սակայն, անհրաժեշտ է նշել, որ երիտթուրքերի և քուրդ ազգայնականների միջև 1908 թվականից հետո հարաբերությունները դարձան ավելի սառը։ Երիտթուրքական կառավարությունը կասկածանքով էր վերաբերվում իր նկատմամբ քուրդ ազգայնականների կրավորական դիրքին և այդ պատճառով ուշիուշով հետևում էր նրանց տրամադրություններին, որպեսզի վտանգի նշաններ երևալուն պես անմիջապես խեղդի ու ոչնչացնի նրանց։ Արժե հիշատակել, օրինակ, որ 1911 թ. պրովոկացիոն կերպով քրդերին մեղադրելով անկախ իշխանություն (բեյլիք) ստեղծելու դիտավորության մեջ, երիտթուրքերը ցրեցին քրդական կազմակերպությունները, փակեցին «Քյուրտ թեավյուն վե թերաքի ղազեթեսի» թերթը և ձերբակալեցին մի շարք ազդեցիկ քուրդ ղեկավարների։

Շատերը ստիպված եղան արտագաղթել արտասահման։ Սրանք այն առաջին դեպքերն էին, որոնք գալիս էին վկայելու, որ թուրք բուրժուական ազգայնականները ևս ֆեոդալակալվածատիրական շրջանների նման կատաղի թշնամի էին ոչ թուրք ժողովուրդների ազգային զգացումների զարթոնքին և բոլոր ճնշված ժողովուրդների ազգային վերածննդի համոզված ախոյաններ էին։

1911 թ. սեպտեմբերին բռնկած իտալո-թուրքական պատերազմը և Թուրքիայի ջախջախիչ պարտությունը երիտթուրքերին դրեց ծանր վիճակի մեջ։ «Հյուրրիեթ վե իթթիֆյաֆ» («Ազատություն և համաձայնություն») կուսակցության հակաթթիհադական այդ ընդդիմադիր ճակատի գործունեության ակտիվացումն առանց այն էլ սասանում էր երիտթուրքերի իշխանության հիմքերը։ Դրությունը բարդանում էր նաև այն

պատճառով, որ թուրքական զորքերը ծանր մարտեր էին մղում Եմենում և Ասիրում՝ Իմամ Յահյայի, Սեյիդ Իդրիսի և Զեյդիտյան շեյխերի ինքնավարական-անջատողական շարժման դեմ։ Այրանիայում բռնկել էր ապստամբություն, հուզումներ էին տեղի ունենում Իրանա-Թուրքական սահմանագլխի քրդական ցեղերի շրջանում և այլն։

Այս պարագաներում երիտթուրքական կառավարությունն էլ ավելի շեշտված ձևով էր սիրաշահում քրդերի առաջնորդներին, որովհետև նրանք իրեն անհրաժեշտ թնդանոթի միս էին տրամադրում տրիպոլիտանական պատերազմի ճակատներում և Իրանի նկատմամբ քաղաքականությունն իրականացնելիս, որը 1912 թ. ամռանը փակուղու մեջ էր (26)։ Այսպես, 1911 թ. նոյեմբերի 28-ին օսմանյան մեջլիսի դեպուտատ Գր. Զոհրապը մեծ վեզիր Սայիդ փաշային ներկայացրեց մի խընդրագիր, որտեղ նշում էր, որ «քուրդ բռնակալներից հարկ վերցնելու պատրվակով հայերից գանձված դրամների համար, թեև քրեական օրենսգրքի 130-րդ հոդվածով պատիժ է նախատեսվում, սակայն մեծամասնաբար մահմեդականներից կազմված դատարանը այդ գանձումներին տալիս է շինծու օրինականություն, դրանք համարելով քուրդ բռնակալներից հայերի վարձած հողերի հարկ։ Ահա այսպիսի ստահոդ մեկնաբանությամբ փորձում են կոծկել այդ ահավոր անօրինականությունը և հայերի հողը բաշխելով քրդերին շարիաթական դատարաններ կողմից սեփականագրեր են տալիս վերջիններիս» (133, էջ 7)։

Հայ գործիչները զուր փորձեր էին անում կառավարությանը ստիպելու, որպեսզի նա վերջ տա քրդական վերնախավի նկատմամբ իր կիրառած երկդիմի քաղաքականությանը։ Իսկ նա դիմեց հին ու փորձված մեթոդին՝ սկսեց սրել թշնամանքը նրանց ու հայերի միջև։ Կրկին առաջ քաշվեց «վիճելի» հողերի հարցը։ Վանի, Էրզրումի և մի շարք այլ վիլայեթներում սկսվեցին հայերի մասնակի ջարդեր։ Երիտթուրքական իշխանությունները ոչ միայն չէին փորձում կանխել այդ ջարդերը, այլև անամոթաբար «սեթևեթում» էին ջարդարար ֆեոդալների հետ։ Սկսվեց հայ և ասորի բնակչության խուճապահար փախուստը դեպի Իրան (371։ 261, էջ 11)։

1912 թ. հուլիսին երիտթուրքերի հակառակորդ «Հյուրրիեթ վե իթթիլյաֆ» («Ազատություն և համաձայնություն»)

կուսակցությանը հաջողվեց իթթիհադականներին հեռացնել իշխանությունից և կառավարման ղեկը վերցնել իր ձեռքը։ Նոր կառավարությունը հայտարարեց, որ ինքը միջոցներ է ձեռնարկելու հայերի և քրդերի միջև հողային վեճերը լուծելու և Արևմտյան Հայաստանում անօրինականություններին վերջ տալու համար։ Ի լրացումն այս հայտարարության, 1912 թ. սեպտեմբերին իթթիլյաֆական կառավարության մինիստրների խորհուրդը որոշեց գնել այսպես կոչված «վիճելի» հողերը և դրանք անվարձահատույց բաշխել հողազուրկ հայ գյուղացիությանը (196։ 286, էջ 231)։

Սակայն այս միջոցառումը, որն ավելի շուտ պրոպագանդիստական նշանակություն ուներ, սկզբից ևեթ դատապարտված էր ձախողման, որովհետև նախ՝ այդ նպատակի համար մի չնչին գումար էր հատկացվելու՝ ընդամենը 100 հազար լիրա, որը պետք է դատարկ գանձարանից ֆինանսների մինիստրությունը ինչ-որ ձևով հայթայթեր և ապա՝ այն հանդիպելու էր քրդական ավատատերերի կատաղի դիմադրությանը, որոնք ապառնում էին զենքի դիմել իրենց «իրավունքները» պաշտպանելու համար։ Առանձին վայրերում քրդական ջոկատների ու կառավարական զորքերի միջև նույնիսկ զինված ընդհարումներ տեղի ունեցան։

«Վիճելի» հողերի հարցը լուծելու իթթիլյաֆական կառավարության այս փորձը քրդական ավատական դասակարգը մեկնաբանեց որպես իր նկատմամբ թշնամական քայլ։ Ցեղերի շրջանում ավատատերերը լուրեր տարածեցին, թբր նոր կառավարությունը հանդես է գալու հայերի պաշտպանության օգտին ի վնաս քրդերի։ Իրականում «իթթիլյաֆականները չէին ցանկանում (և չէին էլ կարող) ձեռնարկել գործուն միջոցներ քրդերին հայերի հետ հաշտեցնելու համար և գործնականում միշտ պաշտպանում էին քրդական վերնախավին» (273, էջ 204)։

Իսկապես, վախենալով, որ ավատատերերի ելույթները ի վերջո կարող են վերածվել քրդական հակակառավարական համընդհանուր շարժման, իթթիլյաֆական կաբինետը 1912 թ. վերջին վերջնականապես հրաժարվեց իր մտահղացած հողային ռեֆորմի իրագործումից։ Այդ քայլը ոչ միայն կառավարության մտավախության հետևանք էր, որ քրդական ավատական դասը կարող էր իր նկատմամբ թշնամական առճակատ-

ման դիրք դրավել, այլև առավելապես այն կարևոր հանգամանքի, որ Թուրքական բուրժուազիան դեռևս ամուր կապով կապված էր ավատական դասակարգի հետ։ Սա էր այն հիմնական զսպանակը, որն ընթացք էր տալիս և՛ իթթիհադականների, և՛ իթթիլյաֆականների գործելակերպին ու նրանց ներքին քաղաքականությանը։ Առկա էին նաև միջազգային-քաղաքական բնույթի այլևայլ գործոններ։ Նախ, 1912 թվականից սկսած եվրոպական պետությունները և մանավանդ Ռուսաստանը կրկին սկսեցին բարձրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու հարցը։ Դա անխուսափելիորեն կարող էր առաջ բերել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի նոր վերելք, որն ի չիք դարձնելու համար կառավարությունը չուներ այլ միջոց, քան քրդերին որպես հակազդող ուժ օգտագործելուց։ Բացի այդ, 1912 թ. Ռուսաստանի սահմանակից քրդական որոշ ցեղերի մոտ որոշակիորեն նկատվում էր ռուսական իշխանությունների հետ կապ հաստատելու ձգտում։

Ռուսական հյուպատոս Ս. Օլֆերևը նկատում էր, որ հենց այդ պատճառով Թուրքերը «պատրաստ են ամեն տեսակի զիջումների ու զոհողությունների գնալու», որպեսզի վերստին քրդերին տրամադրեն ռուսների դեմ (197)։

Եվ վերջապես, 1912 թ. Արևմտյան Հայաստանում և Քրդստանում տեղի էին ունենում քրդական հակակառավարական հուզումներ։ Բազմաթիվ շրջաններում քրդերը չէին ճանաչում Թուրքական իշխանություններին, հրաժարվում էին հարկեր մուծել, զինակոչիկներ տրամադրել և այլն։

Դժգոհության պատճառներից մեկն էլ այն էր, որ Բալկանյան պատերազմի ժամանակ իթթիլյաֆական կառավարությունը առաջին անգամ կանոնավոր զորքերի շարքում քրդերին օգտագործեց իբրև զինվորներ, այն էլ Փոքր Ասիայից դուրս և մեծ թվով։

1912 թ. դեկտեմբերի 8-ին Բ. Դուռը մի անգամ ևս քննության ենթարկեց Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ մտցնելու հարցը։

Քննարկման նպատակը եվրոպական պետությունների միջամտությունը կանխելն էր։ Քննարկմանը ներկա մի շարք հայ գործիչներ, առաջադրեցին որոշակի պահանջներ. կայսրության հայաբնակ վիլայեթները այսուհետև անվանել Հայաս-

տան, բարեփոխել հարկային սիստեմը, վերացնել խաֆիրության տուրքը, ցրել համիդիե գնդերը, վարչական հաստատություններում թուրքերենի հետ օրինական համարել նաև հայերենը ու քրդերենը և այլն (84, էջ 213—214)։ Հատկապես վերջին պահանջը ցնցող ներգործություն ունեցավ կառավարության անդամների վրա, որովհետև հայերը փաստորեն պահանջում էին իրավունքներ տալ նաև քրդերին, մինչդեռ, ինչպես նշվեց վերևում, օսմանյան քաղաքականության անկյունաքարը հայերին և քրդերին միմյանց հակադրելն էր։

Այս փաստը նույնպես վկայում էր, որ հայկական շրջաններում քաջ գիտակցում էին, որ բարենորոգումները կարելի էր լիովին իրական դարձնել քուրդ ժողովուրդի բարյացակամությամբ միայն։

Բացառությամբ հարկային սիստեմը բարեփոխելու և խաֆիրության տուրքը վերացնելու խոստումից, հայերի առաջ քաշած մնացած բոլոր պահանջները կտրականապես մերժվեցին։

Այս միջադեպից հետո իթթիլյաֆական կաբինետը տեղական իշխանություններին հրահանգ տվեց՝ հայ բնակչության դեմ ուժեղացնել քրդական ավատատերերի զինված բանդաների խժդժությունները, ամենուրեք կազմակերպել քրդերի բողոքի շարժումներ և ելույթներ հայկական բարենորոգումների դեմ (198)։

Բ. Դոան դրդմամբ սենատոր Աբդուլ Ղադերը[25] կառավարությանը ներկայացրեց «ինքնավար Քրդստանի» մի նախագիծ, որի նպատակն էր հակակշիռ ստեղծել հայկական բարենորոգումներին (350)։ «Քրդական ինքնօրենության պահանջները կքաջալերվեն այժմ, հանդեպ հայկական բարենորոգության կամ երաշխավորյալ ապահովության հարցին»,— գրում էր «Բյուզանդիոնը» (30, 1913, № 5039)։

Ստամբուլը Արևմտյան Հայաստանի քաղաքականապես առավել զարգացած կենտրոնի՝ Վանի կուսակալ նշանակեց ծագումով քուրդ Իզզեթ բեյին, որը մեկնելով իր պաշտոնավայրը իրեն ընկերակից վերցրեց Աբդուլ Ղադերի որդիներից մեկին, որպեսզի համատեղ ջանքերով իրագործեն կառավարության կողմից իրենց հանձնարարված քաղաքականությունը

(199), որն իրագործվում էր նաև հայկական մյուս նահանգներում։ Այսպես, Բիթլիսի վիլայեթում տեղական իշխանություններն «աշխատում էին ավելի ու ավելի իրենց կողմը գրավել քրդերին ու նրանց շեյխերին և հայտնի քուրդ կողոպտիչներին խոստանում էին մուդիրների և գայմագամների պաշտոններ» (200)։

Կոստանդնուպոլսի հայոց պատրիարք Հովհաննես Արշարունին կառավարությանն ու արդարադատության մինիստրին ուղղակի ամբաստանում էր թաքրիր-բողոքներով, որոնցում նկարագրվում էին քուրդ ավատատերերի գործադրած բռնությունները հայ բնակչության նկատմամբ։

Ռուսական դեսպան Մ. Գիրսը արտաքին գործերի մինիստր Դ. Սազոնովին ուղղված իր հաղորդագրության մեջ գրում էր. «Կ. Պոլսում հայկական պատրիարքությանը և համայնքին հուղել են Թուրքիայի արևելյան վիլայեթներից վերջերս ստացված տեղեկություններն այն մասին, որ քրդերն ուժեղացրել են հայերի կողոպուտներն ու սպանությունները։ Հոգևորականների պատվիրակությունը պատրիարքի գլխավորությամբ շտապեց մեծ վեզիրին և մյուս մինիստրներին ներկայացնել ամենաեռանդագին դիմումներ, խնդրելով, որ Բ. Դուռն շտապ պաշտպանի հայերին» (87, էջ 149—150)։

Սակայն կառավարությունը ծայրաստիճան անտարբերությամբ վերաբերվեց պատրիարքի բողոքներին, հայերի նկատմամբ բռնությունները համարելով «ընդհանուր բնույթի հանցագործություն և համարյա թե սովորական բան» (286, էջ 175—176)։ «Բ. Դռանը ուղղված պատրիարքի վճռական դիմումների ապարդյունությունը,— գրում էր Մ. Գիրսը մեկ այլ առիթով,— նրան հարկադրել է տեղի տալ հայկական համայնքի համառ պահանջներին և խնդրել պաշտոնաթողություն։ Դա Բ. Դռան վրա ճնշում գործադրելու այն վերջին միջոցն է, որին դիմել է հայոց պատրիարքը» (286, էջ 231)։

Թուրքական մամուլը ծուռ հայելու մեջ էր ներկայացնում պատրիարք Արշարունու բողոքները քրդերի հարստահարությունների մասին, դա ևս օգտագործելով հայ-քրդական հակամարտությունը սրելու նպատակներին։ «Օսմանյան լոյտի» խմբագրի հետ հարցազրույցի ժամանակ պատրիարքը ստիպված եղավ հետևյալ հայտարարությունն անելու. «Իմ խոսքերս հոռի մեկնություն տրվեցան։ Ես չդատապարտեցի քյուրդ

ամբողջ ժողովուրդն անխտիր, այլ քյուրտերուն այն մասը, որ ծանոթ է իր եղեռնական շահատակություններով, ի վնաս հայ խաղաղիկ ու աշխատավոր մասին, այսինքն ցեղապետները, ավատապետերն ու քյուրտ ավազակախումբերը։ Ո՞վ չի գիտեր թե քյուրտ ժողովրդին մեջ կա դասակարգ մը, որ իր աշխատության պտուղով ապրելով իբր հողագործ, հայ աշխատավոր ժողովուրդին պես նույն տխուր վիճակին ենթարկված է, ավատապետներուն, պեյերուն ու աղաներուն երկաթյա միևնույն լուծին տակ կգտնվի, սա տարբերությամբ, որ քյուրտ գյուղացին տնտեսապես ու ընկերային տեսակետով միայն կտառապի, իսկ հայ գյուղացին կտառապի թե՛ տնտեսապես, թե՛ ընկերային տեսակետով և թե՛ քաղաքականապես։ Ինչպե՞ս որ մենք բնավ չծածկեցինք մեր զզվանքն հանդեպ քյուրտ մյութեկալիպեներուն, և զանոնք շարունակ ձաղկած ու դատապարտած ենք, նույնպես բնավ չենք ծածկած մեր համակրությունն հանդեպ քյուրտ հարստահարյալներուն։ Ասոր համոզվելու համար բավական է ակնարկ մը նետել հայ մամուլին վրա, որ միշտ պաշտպանած է աշխատավոր ու խաղաղ քյուրտերը։ Այս պայմաններուն մեջ, ես ինչպե՞ս կրնայի զանազանություն դնել քյուրտերուն ու հայերուն միջև, և անարգության սյունին գամել քյուրտ ազգն ամբողջությամբ» (30, 1913 թ. № 5040)։

Ինչպե՞ս տեսնում ենք արևմտահայության հոգևոր առաջնորդը ևս գտնում էր, որ հայ-քրդական հարաբերությունների լարվածությունը ոչ միայն ազգային կամ կրոնական հակասությունների արդյունք է, այլ դասակարգային խնդիր, ինչպես նաև թուրքական կառավարության կողմից արհեստականորեն հրահրվող քաղաքական նպատակներ հետապնդող հարց։

Վերոհիշյալ տեսակետը հաստատում էին նաև եվրոպական գործիչները և մամուլի օրգանները։ Այսպես, ռուս դիտորդներից մեկը գրում էր, որ «հայերի պայքարը քրդական ճնշող տիրապետության դեմ հայ գյուղացիության պայքար չէ քուրդ գյուղացիության դեմ, այլ պայքար է քուրդ բեկերի դեմ, որոնց թուրքական կառավարությունը խրախուսում է դիմելու զանազան անչափավոր արարքների հայերին իրենց հայրենիքից վտարելու համար» (341)։

Վ. Մինորսկին այդ նույն հարցի առթիվ արտահայտվում

էր հետևյալ կերպ. «Եթե վերցվի ներկայիս թուրքական անիշխանությունն ու անօրինականությունը, ապա պատճառներ չկան, որ հայերն ու քրդերը, այդ դարավոր հարևանները, միմյանց հետ չկարողանան մշակել modus vivendi-ն այնպես, որպեսզի քրդական անասնապահությունը լրացնի հայկական արհեստներին ու հողագործությանը» (290, էջ 40)։

Հայ գործիչներից Անդրանիկի կարծիքով «այս բոլոր ցեղերը (իմա՝ քրդական։— Վ. Բ.) այն ժամանակ կմիանան մեզի հետ, երբ սուլթանական գաղանային ռեժիմը երկրեն վերանա. և շա՜տ շուտով պիտի միանան ու մեզի հետ երկիրը պաշտպանեն ապագա թշնամիներու դեմ։ Այսօր մենք մենակ ենք իրրև կռվող և կը տանջվինք անոնց ձեռքը. վաղն ալ, երբ երկիրը մեր աշխատանքով և արյունով բարեփոխվի, պիտի միանան մեզի և հավասար իրավունքի տեր դառնան, ինչպես իրենք ալ կըսեն» (53, էջ 164)։

Ֆրանսիական «Questions Diplomatiques et Coloniales» հանդեսը նկատում էր, որ Թուրքիայում «լուրջ վարչություն» լինելու դեպքում հայերն ու քրդերը կկարողանային ապրել կատարյալ համաձայնությամբ։ Իր այս թեզը հաստատելու համար հանդեսը բերում էր հետևյալ ուշագրավ փաստը. 90-ական թվականներին մոտ յոթ հազար քրդեր ստիպված էին թողնել իրենց բնակավայրերը և գաղթել ԱՄՆ։ Այստեղ նրանք սերտ հարաբերությունների մեջ էին Արևմտյան Հայաստանից գաղթած երեսուն հազարանոց հայ գաղութի հետ։ Մոլեռանդ և բարբարոս բնաջնջները ամերիկյան հողի վրա աներևութացան, ինչու համար այս լավ դրացիությունը կարելի չպիտի լինի, ինչպես երբեմն, հայրենի հողի վրա։ Թերթը գտնում էր, որ այդ երկու ժողովուրդները ամբողջացնում են իրար, որովհետև եթե մեկը ուժն է, ապա մյուսը իմացականությունը։ «Եթե ցարդ զիրար խողխոխեցին, երրորդի մը շահուն համար էր՝ որ զանոնք կծրարեր ատելության մեջ, մատնելու համար զանոնք բնաջնջումի» (30, 1913 թ., № 4960)։

Վերոհիշյալ բոլոր փաստերը եկան վերջնականապես համոզելու արևմտահայությանը, որ սահմանադրական Թուրքիան ևս չի ցանկանում լուծել ազգային և սոցիալ-տնտեսական բազում հրատապ խնդիրները, այլ հակառակը, արհեստականորեն ստեղծում է ազգամիջյան հակամարտ ու թշնամական մի մթնոլորտ։ Որ ոչ միայն իթթիհադականները, այլև իրենց

Օսմանյան կայսրության տարբեր ժողովուրդների ապակենտրոնացման կողմնակից հորջորջող իթթիլյաֆականները հետապնդում են ազգայնամոլ ծրագրեր և մասնավորապես աշխատում են քրդական տարրի միջոցով «մաքրազարդել երկրամասը հայերից» (201)։

Այս պայմաններում արևմտահայությունը ստիպված էր կրկին ապավինել մեծ պետությունների խոստումներին Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ իրականացնելու վերաբերյալ, մասնավորապես հույսը կապելով Ռուսաստանի հետ։

Այդ առթիվ «Մշակը» գրում էր. «Ամբողջ հայ ազգաբնակչությունը աչք է դարձրել դեպի Ռուսաստանը, դեպի նրանից սպասվող փրկությունը։ Դարերի կյանք ունի այդ հույսը» (112, 1913 թ., № 89)։

Այս շրջանում լոբանովյան «Հայաստանը առանց հայերի» ձևակերպմանը փոխարինելու էր եկել «հայերով դեպի հարավ շարժվելու» քաղաքական նոր կարգախոսը։ Ցարական կառավարությունը այլևս հրաժարվում էր այն «ապուշ քաղաքականությունից, որին կպած էր 1890-ական թթ. հայկական ճգնաժամից ի վեր» (67, էջ 243)։ «Ահա արդեն մի քանի ամիս է,— գրում էր Լյուդովիկ Քոնթանսոնը,— ինչ Ռուսաստանը փոխել է իր վերաբերմունքը հայերի նկատմամբ... Քսան տարի առաջ նա համարում էր նրանց հեղափոխականներ։ Այժմ հայերը հետաքրքրություն են ներկայացնում որպես Փոքր Ասիա տանող ճանապարհի առաջապահներ» (270, էջ 43—44)։

Ցարական կառավարությունը Կովկասի փոխարքա Վորոնցով-Դաշկովի միջոցով հայտարարում էր, որ «հայկական հարցը մենք ինքներս ստեղծեցինք մեր չմտածված միջամտությամբ հայերի կրոնական ու ազգային գաղափարներին... Հայերի մոտ ոչ մի սեպարատիզմ գոյություն չունի» (246, էջ 77)։

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին ցարիզմը արևմտահայությանն արդեն դիտում էր ոչ թե որպես «վտանգավոր ու անհանգիստ տարրի», այլ որպես դաշնակցի՝ Թուրքիայի դեմ։

Ռուսաստանի այս նոր քաղաքական գծի իրականացման հնարավորությունները մեծանում էին նրանով, որ ոչ միայն արևմտահայության ճնշող մեծամասնությունը, այլև նախկի-

նում լորանովյան հակահայ քաղաքականության հետևանքով հակառուսական դիրքորոշում ունեցող հայկական ազգային կուսակցությունները բարենորոգումների իրականացման միակ հույսը կապել էին Ռուսաստանի հետ։ Համակրանքը դեպի հյուսիսային հսկան կրկին մտել էր հայ բուրժուազիայի և մտավորականության մեջ, որոնք ընդամենը մի քանի տարի առաջ թշնամական առճակատման դիրքերում էին գտնվում ցարիզմի հետ։ Կոստանդնուպոլսում դեսպան Գիրսը ոգևորությամբ տեղեկացնում էր իր ղեկավարությանը. «Վանի, Բայազետի, Բիթլիսի, Էրզրումի և Տրապիզոնի մեր հյուպատոսները միաձայն վկայում են, որ ներկայումս բոլոր հայերը, առանց կուսակցությունների խտրության, համակրում են Ռուսաստանին» (87, էջ 152)։

Ի դեպ, 1912 թ. վախենալով, որ արևմտահայության շրջանում իսպառ կկորցնի իր ազդեցությունը, նաև համոզվելով, որ սխալ է իր դիրքորոշումը, դաշնակցական կուսակցությունը որոշեց խզել իր կապերը «Միություն և առաջադիմություն» կուսակցության հետ։ Նրա այդ որոշումը պաշտոնապես հաստատվեց քիչ ավելի ուշ, 1913 թ. օգոստոսի 17-ին, դաշնակցական կուսակցության 7-րդ համագումարում։

Բ. Դռան առջև վերստին բարձրացնելով բարենորոգումների խնդիրը և առհասարակ հայկական հարցը, ցարական կառավարությունը ոչ միայն մտադիր էր քաղաքական ճնշում գործադրել Թուրքիայի վրա և հող նախապատրաստել Արևմտյան Հայաստանի նկատմամբ իր վաղեմի նվաճողական պլանների իրագործման համար, այլև հուսալի պատնեշ կառուցել թուրքերի պանիսլամիստական և պանթուրքիստական նկրտումների դեմ։ Դա պարզորոշ երևում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստր Դ. Սազանովի՝ Մինիստրների խորհրդին հասցեագրված զեկուցագրի մեջ, որտեղ մասնավորապես ասվում էր. «Եթե գերմանացիներին և թուրքերին անհրաժեշտ է Հայաստանը առանց հայերի, եթե նրանց անհրաժեշտ է հայկական սեպի ոչնչացումը, եթե նրանք ցանկանում են վերացնել այն պատնեշը, որը գոյություն ունի մեր մահմեդականների և քրդերի ու թուրքերի միջև, ապա Ռուսաստանի խնդիրն է, ինչ գնով էլ որ լինի, վերականգնել պատնեշը թուր-

քերի ու քրդերի և մեր թաթարների միջև» (230, մաս II, էջ 418)։

Այստեղ տեղին է նշել, որ թեև վերջին տասը տարիների ընթացքում Ռուսաստանը անընդմեջ հարաբերություններ էր հաստատել քրդերի հետ, սակայն ի վերջո նա բացասական դիրքորոշում դրսևորեց նրանց նկատմամբ, գտնելով, որ քրդերը սերտ կապերով, այդ թվում նաև կրոնական, կապված են Թուրքերի հետ և քաղաքական իրադրությունը Արևմտյան Հայաստանում և հայ-քրդական հարաբերությունների վիճակը այնպիսին է, որ քրդերին մերձենալու դեպքում Ռուսաստանը անխուսափելիորեն կկորցնի հայերին և հայկական խաղաքարտը։ Պետերբուրգում քրդերին «ակնհայտորեն չէին վստահում և հույս չէին դնում նրանց աջակցության վրա» (273, էջ 242)։

Ընդ որում, «Բ. Դոան հետ հայկական հարցի առթիվ բանակցությունների ժամանակ ռուսական դիվանագիտությունը քրդական պրոբլեմը շոշափում էր միայն այնքանով, որքանով դա անհրաժեշտ էր ապահովելու հայերի ազգային շահերն ու անվտանգությունը հայկական վիլայեթներում» (273, էջ 245)։

Ռուսաստանի ձգտումը՝ հայկական հարցը իր մենաշնորհը դարձնել և ի վերջո Արևմտյան Հայաստանը նվաճել, հանդիպում էր իր մրցակիցների և առաջին հերթին Գերմանիայի դիմադրությանը։ Գերմանական իմպերիալիզմը, ելնելով Մերձավոր արևելքում իր տնտեսական և քաղաքական շահերից, վճռականորեն հանդես էր գալիս հայկական հարցը հատկապես Ռուսաստանի օգնությամբ լուծելու դեմ։ Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանի հարցում անգլո-գերմանական հակամարտության փոխարեն գոյություն ուներ ռուս-գերմանական հակամարտություն, որովհետև Գերմանիան այն կարծիքին էր, որ հայ ժողովուրդն ամեն տեղ՝ Ռուսաստանում թե Թուրքիայում, ռուսական քաղաքականության և ռուսական շահերի կույր գործիք է։ Պանգերմանիստների կարծիքով «Թուրքիան տնտեսական և քաղաքական առումով կկորցներ իր կենսունակությունը հենց որ զրկվեր Հայաստանից, հատկապես եթե նա կորցներ այն հօգուտ Ռուսաստանի» (313, էջ 62)։ Պաուլ Ռոհռբախի կարծիքով անհրաժեշտ էր հայերին տեղահանել Արևմտյան Հայաստանից և վերաբնակեցնել Բաղդադի երկաթուղու գոտում, իսկ

ազատված հողերում բնակեցնել մահմեդականներ, որպեսզի Ռուսաստանը զրկվի սահմանակից շրջաններում քրիստոնյա բնակչության իր հենարանից (467, էջ 391—392)։

Գերմանիան օսմանյան կառավարության առջև Ռուսաստանին ներկայացնում էր որպես նրա անողոք թշնամու, որը մոլեգնաբար ձգտում էր կործանել թուրքական իշխանությունն Ասիայում, ինչպես այն արեց Եվրոպայում (412, հ. 38, 15333—15334)։

Պաուլ Ռոհռբախը «Գերմանա-ասիական ընկերության» նիստում լկտիորեն հայտարարում էր, որ Գերմանիան չպետք է արգելք հանդիսանա քրդերի կողմից հայերի ոչնչացմանը, քանի որ նա շահագրգռված է Հայաստանը խաղաղեցնելու մեջ, որի կորստի դեպքում Թուրքիան կդադարի գոյություն ունենալուց (152, էջ 44)։

Գերմանիայի պետական քարտուղարի տեղակալ Ցիմերմանը գտնում էր, որ հայ ժողովուրդը հանդիսանում է Թուրքիայի թույության աղբյուրը (278, էջ 119)։

Միևնույն ժամանակ գերմանական դիվանագիտությունը պրովոկացիոն ձևով նախազգուշացնում էր Բ. Դռանը, որ եթե Ռուսաստանը հանդես գա ի պաշտպանություն արևմտահայերի, այնժամ Գերմանիան իր հերթին միջոցներ կձեռնարկի պաշտպանելու իր շահերը Անատոլիայում և կգրավի այն շրջանները, որոնցով անցնում է Բաղդադի երկաթուղին (112, 1913 թ. № 94)։

Բեռլինի գլխավոր թրքասեր օրգանը՝ «Բեռլիներ թագեբլատ» թերթը, հրատարակեց խմբագրական մի հոդված «Այսուհետև Թուրքիայի պարտականությունները» վերնագրով, որտեղ հոդվածագիրը նախազգուշացնում էր. «Երբ Բ. Դուռը անհոգ գտնվի խիստ և ազդու միջոցներով շատ մոտ ատենն վերջ տալու Հայաստանի մեջ տիրող անիշխանության, այն ատեն էջմիածնի կաթողիկոսը, որ Ռուսիո հովանավորությանը տակ կապրի, երբ հարմար առիթով դիմում ընե, կամ երբ Կովկասեն սարբվելիք քրդական հարձակում մը տեղի ունենա, հավանական է, որ ռուս զորքերը քալեն դեպի վեց նահանգները։ Կ. Պոլսոյ մեջ պետք է պատասխանեն այն հարցումին, թե անկե վերջը ռուս զորքերը նույն տեղեն ո՞վ պիտի վտարե» (30, 1913 թ. № 5138)։

Հայկական բարենորոգումների խնդիրը ձախողելու նպա-

տակով Գերմանիան անմիջապես հայկական հարցին հակադրեց «քրդական հարցը»։ Պետական քարտուղար Յագովը հայտարարեց, որ բարենորոգումների հարցը իրեն թվում է բավական փափուկ և եթե պետությունները ենթադրում են հանդես գալ հայերի պաշտպանության օգտին, ապա «չի կարելի մոռանալ նաև քրդերի շահերի մասին» (316, էջ 45)։ Տվյալ դեպքում ելույթ ունենալով քուրդ ժողովրդի շահերի «պաշտպանության» օգտին, Գերմանիան իրականում դարձյալ պաշտպանում էր Թուրքիային (230, մաս I, էջ 282)։

Թեև Անգլիան և Ֆրանսիան կողմնակից էին հայկական բարենորոգումների իրականացմանը, սակայն այդ հարցում նրանք չէին դրսևորում որևէ հետևողականություն ու շահագրգռվածություն։ Անգլիայի միակ մտահոգությունն էր թույլ չտալ, որ Ռուսաստանը միանձնյա կերպով հիմնավորվի Արևմտյան Հայաստանում։ Ֆրանսիան գտնում էր, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացումը շարյաց փոքրագույնն է, որ միայն այդ ճանապարհով կարելի կլինի կանխել այդ երկրամասի գրավումը Ռուսաստանի կողմից։ Լյուդովիկ Քոնթանսոնի կարծիքով ռուսների Հայաստանը գրավելուց հետո անգլիացիները անմիջապես կնվաճեն արաբական երկրները, իսկ Գերմանիան կգրավի Անատոլիան կամ Փոքր Ասիայի մի մասը։ Այդ պատճառով նա գտնում էր, որ անհրաժեշտ է իրականացնել հայերին խոստացված բարենորոգումները։

Քոնթանսոնի կարծիքով միայն այդ ճանապարհով կարելի կլինի կանխել Թուրքիայի բաժանումը մեծ պետությունների միջև (270, էջ 40—41)։ «Այժմ չի կարելի լռության մատնել, ինչպես դա եղել էր մինչև այժմ, այն զայրացուցիչ գործերը, որոնք տեղի են ունենում Արևելքում։ Բարձրանում է հայկական հարցի սպառնալի արյունոտ հրացոլքը։ Բայց բացի հայկական հարցից գոյություն ունի նաև սիրիական, կամ ավելի ճիշտ արաբական հարց»,— գրում էր Քոնթանսոնը (270, էջ 9—10)։

Այսպիսով, Ֆրանսիայի ամբողջ մտահոգությունը այն էր, որ Արևմտյան Հայաստանը մնա թուրքական տիրապետության ներքո։ Այդ հանգամանքը, ոչ առանց հրճվանքի, հաստատում էր նաև «Ժեոն Թյուրք» թերթի Փարիզի թղթակիցը (112, 1913 թ. № 54)։ Սակայն ֆրանսիական դիվանագիտությունը բարե-

նորոգումների հարցը անմիջականորեն կապում էր հայ-քրդական հարցի հետ։ Արևմտյան Հայաստանում Ֆրանսիայի հյուպատոս Զարզեցկին, որը համոզված ռուսատյաց էր և միաժամանակ ֆրանսիական դիվանագիտության ավանդական թուրքոֆիլ գծի հետևորդ, գտնում էր, որ եթե Արևմտյան Հայաստանում շուտափույթ կերպով բարենորոգումների ծրագիրը չիրականացվի, ապա անխուսափելիորեն տեղի կունենա Փոքր Ասիայի արևելյան նահանգների, այսինքն Արևմտյան Հայաստանի գրավում Ռուսաստանի կողմից (493)։

Ինչպես հայտնի է, օգտվելով բալկանյան պատերազմում իթթիլյաֆական կառավարության կրած պարտությունից, երիտթուրքերը 1913 թ. հունվարի 10-ին պետական հեղաշրջում արեցին և իշխանության ղեկը կրկին վերցրին իրենց ձեռքը։ Թուրքիայում հաստատվեց երիտթուրքական եռապետության՝ Էնվերի, Թալեաթի և Ջեմալի ռազմական դիկտատուրան։

Բալկանյան պատերազմում կրած ծանր պարտությունից հետո թուրքական կառավարող շրջաններում տիրապետող մտայնություն դարձավ «Անատոլիան վտանգի մեջ է» (30, 1912 թ. № 907) կարգախոսը, առաջին հերթին նկատի ունենալով հայ ժողովրդի ազատագրական ոգորումները և Ռուսաստանի բաղաքականության ակտիվացումը Արևմտյան Հայաստանի նկատմամբ։

Թուրքիան ավելի վճռականորեն էր ֆր հայացքը Արևմուտքից դարձնում դեպի Արևելք (43, էջ 74—75)։

Բալկանյան պատերազմը հանդիսացավ այն պատմական դարձակետը, որի հետևանքով պանթուրքիստական նախնական ակադեմիական շարժումը վերածվեց քաղաքական շարժման և իթթիհադի պաշտոնական գաղափարախոսության։ Ազգայնականության, շովինիզմի և հարձակողական ռևանշիզմի ոգին Թուրքիայում դարձավ չափազանց ազդեցիկ գործոն։ «Հսկայական ու սարսափելի թափորները ցերեկը դրոշներով և գիշերը բոցավառ ջահերով և գինովի աղաղակներով կը շրջեին Պոլսի պողոտաները» (50, էջ 128)։

Երիտթուրքերի աչքին հայկական բարենորոգումները ուրիշ բան չէին, եթե ոչ «ռուսական իմպերիալիզմի պատրաստած մեկ նոր հարվածը բալկանյանից հետո»։ Հետևաբար բարենորոգումների հարցը նույնացվում էր կայսրության համար

Արևմտյան Հայաստանի կորստի հետ, և այդ պատճառով տրիումվիրատն անում էր ամեն ինչ դրանք ձախողելու համար։

Նախ Ջեմալ փաշան իր մոտ հրավիրեց դաշնակցական գործիչներից մեկին՝ Վարդգեսին և նրան ասաց հետևյալը. «Եթե դուք պնդեք եվրոպական կոնտրոլի մասին, մենք ստիպված պիտի լինենք ընդունել։ Բայց դրա արդյունքը այն կլինի, որ վեց վիլայեթների մահմեդական ազգաբնակչությունը ոտքի կկանգնի և 3—4 հարյուր հազար հայեր կկոտորվեն։ Եվ հավանական է,— ավելացնում է նա,— որ ռուսները առիթից օգտվելով կգան ու կգրավեն այդ նահանգները» (33, էջ 191, 192)։

Իսկ Թալեաթ փաշան օսմանյան պառլամենտի հայ պատգամավորներին առաջարկում էր «օգնել Թուրքերին՝ վերջացնելու հայկական հարցը»։ Նա համոզում էր նրանց, որ «ավելի լավ է վճռել այդ խնդիրը Թուրքերի և հայերի անմիջական բանակցություններով», որ ռուսներին չպետք է հավատալ, որովհետև նրանք հարաբերությունների մեջ են նաև քրդերի հետ։ Նա «խորհուրդ էր տալիս» նաև չդիմել եվրոպական պետությունների միջամտությանը (87, էջ 266)։

Գիրսը Ստամբուլից 1913 Թ. հոկտեմբերի 16-ին Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին հաղորդում էր, որ «ընդհանրապես երիտասարդ Թուրքերն աշխատում են Թաղել հայկական հարցը, համարելով այն Թուրքիայի ներկա դրության համար ամենավտանգավոր հարցերից մեկը» (87, էջ 285)։ ԵրիտԹուրքական կառավարությունը փորձում էր զանազան քաշքշուկների միջոցով կամ ի չիք դարձնել բարենորոգումները և կամ առաջ քաշել «բարենորոգումներ ընդհանուր պետության համար» տխրահռչակ տեսակետը։ «Թասֆիրի էֆքյար» երիտԹուրքական Թերթի խմբագիրը 1913 Թ. մայիսի 10-ին հրապարակած մի հոդվածում մթամիտ ձևանալով գրում էր, որ ինքը չի կարող հասկանալ, Թե հայերը ինչու են Անատոլիայի արևելյան նահանգների համար առանձին բարենորոգումներ, առանձին հսկողություն և առանձին ապահովություն պահանջում, որ եթե կատարվեն բարենորոգումներ, դրանք պետք է վերաբերեն և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Անատոլիային (20, 1913 Թ. № 5041)։ Այս նույն ոգով նյութեր էին հրատարակում նաև Թուրքական մյուս Թերթերը։

Կառավարությանը մեծագույն երկյուղ էր ներշնչում նաև

այն, որ Արևմտյան Հայաստանում բարենորոգումների իրականացման հետևանքով կարող էր ռեալ հող նախապատրաստվել հայ-քրդական դաշնակցության համար։ «Իթթիհադի տեսակետով Ռումելիի կորուստն ետք Անատոլուի մեջ բարենորոգումներու գործադրությունը օտարներու ձեռքով կը նշանակեր նաև կորուստը «արևելյան նահանգներուն», քանի որ հայերը գտնելով հանգիստ վիճակ մը և բարգավաճելով օր մը պիտի բարձրացնեին ապստամբության դրոշը և ինքնուրույնություն պիտի հռչակեին, թերևս քյուրտերու գործակցությամբ, ահա մղձավանջը Իթթիհադին» (9, էջ 7)։ Էրզրումում ռուսական գլխավոր հյուպատոս Ադամովը Կոստանդնուպոլսում ռուսական դեսպան Գիրսին գրած 1913 թ. հոկտեմբերի 26-ի տեղեկագրում հայտնում էր, որ «Թուրքական կառավարությունը, որը վաղուց ի վեր կասկածանքով էր վերաբերվում հայ-քրդական բարեկամությանը և չէր դադարեցնում միջոցներ ձեռնարկել մեկ ժողովրդին մյուսի դեմ գրգռելու համար, այժմ, քրդերի շրջանում դրսևորվող շարժման կապակցությամբ, հատուկ ջանքեր է գործադրում, որպեսզի այդ շարժման սլաքը ուղղի հայերի դեմ» (236, էջ 265—266)։

Բարենորոգումների կապակցությամբ Թուրքական մամուլը («Թասվիրի էֆքյար», «Թանին», «Բեյամ» և շովինիստական մոլուցքով տոգորված մի շարք այլ թերթեր) միաբերան կրկնում էր. «Քոնթրոլ չենք ընդունում»։ Մահմեդական բնակչությանը հայերի դեմ գրգռելու համար այդ թերթերը տպագրում էին պրովոկացիոն հոդվածներ, թե իբր հայերի նպատակն է կործանել Օսմանյան կայսրությունը և ստեղծել Հայկական կայսրություն, որ գավառներում հայ առաջնորդարանների սրահների մեջ կախված է Տիգրան Մեծի ժամանակվա հայոց պետության քարտեզը։ Միաժամանակ նշվում էր, որ «Անատոլիան Թուրքերի վերջին հայրենիքն է, ալ անկե անդին երթալիք տեղ չունին» (30, 1913 թ., № 5200)։

Թուրքական պաշտոնական մամուլը և կառավարությունը առաջ քաշեցին նաև այն թեզը, որ հայերի պահանջները ուղղակի սպառնալիք են քրդերի շահերին։ «Բյուզանդիոնը» ստիպված էր հերքել այդ պրովոկացիան. «...Հայերը չեն պահանջեր բան մը, որ քյուրտ ժողովրդին համար վնասաբեր ըլլա, որովհետև ոչ մեկ քյուրտ օրինավորապես կրնա ըսել, թե կյանքի, պատվի, ինչքի ապահովության պահանջումն իրենց

համար վնասաբեր կնկատե։ Հայ աշխատավոր ժողովրդին շահերն հար և նման են քյուրտ աշխատավոր ժողովրդին շահերուն, և եթե գանգատող մը կա, քյուրտ թե հայ ժողովուրդը շահագործող ավատապետներու փոքրիկ խմբակը կրնայ ըլլալ, որուն ապօրեն շահերուն կարելի է զոհել քանի մը միլիոն ժողովրդի հանգիստն և Օսմանեան տերութեան գոյութիւնն իր արևելեան գավառներուն մեջ» (30, 1913 թ. № 4946)։

Հայկական բարենորոգումների կատաղի հակառակորդներից մեկը՝ Թուրք գրող, պատմաբան, լրագրող Մեվլան Զադե Ռիֆաաթը, բարենորոգումները «չուրը գցելու» համար կանգ չէր առնում պատմութիւնն անհեթեթութեան ու զավեշտի հասցնելու կեղծարարութեան առջև։ Նա ճգնում էր «ապացուցել», որ հայերը «պարզապես քրիստոնյա քրդեր են», որ նրանք ծագել են քրդերից և որպես էթնիկական նույնութիւն պետք է միասին ապրեն։ Սրանով ուզում էր ասել, որ հայերը պետք է հրաժարվեն բարենորոգումներից։

Արշակ Աղպոյանցը ստիպված էր «Բյուզանդիոնում» հանդես գալ «Հայ և քյուրտ ցեղագրական հարաբերութիւններ» խորագրով հոդվածով (30, 1913 թ. № 4952—4953), որտեղ նա բացահայտեց Մեվլան Զադեի «տեսութեան» քմածին, փիտութեան հետ ոչ մի առնչութիւն չունեցող բնույթը և նրա վտանգավոր քաղաքական միտումը։

Երիտթուրքական կառավարութիւնը, սակայն, բարենորոգումները ձախողելու ամենագործուն միջոցը շարունակում էր համարել հայ-քրդական հակամարտութեան խորացումը և քրդերին հայերի դեմ հրահրելը։ Այդ առթիվ «Մշակը» գրում էր, որ Բ. Դուռը հայկական արդարացի հարցը քնեցնելու համար ձեռք է առել էլի իր սիրած ու հին սիստեմը՝ մի կողմից հայերին աստիճանաբար ճնշելով և մյուս կողմից քրդերին խոստումներ շռայլելով (112, 1913 թ. № 82)։ Վանում ծառայող ժանդարմները գրգռում էին քրդերին. «Ո՞ր օրվան եք սպասում, ինչո՞ւ չեք կոտորում այս քյաֆիրներին, որոնք Ռումելիում մեր պետութեան հիմքերը քանդեցին» (112, 1913 թ. № 88)։ Ոմն Աթեշ բեյի հեղինակութեամբ լույս տեսավ մի գրքույկ «Խաջընկար» (դավաճաններ) վերնագրով, որտեղ ասվում էր, թե Օսմանյան կայսրութեան անկման պատճառը քրիստոնյաներն են, թե հայերը դավաճաններ են և պետք է զսպել ու սանձահարել նրանց։ Գրքույկը հազարավոր օրինակներով գաղտնի

տարածվում էր մահմեդական բնակչության մեջ (112, 1913, № 93)։

«Իֆհամ» թերթում ոմն Ֆերիդ բեյ հրապարակեց մի հոդված հայկական բարենորոգումների մասին, որտեղ հիշեցնում էր հայերին, թե նախկինում ևս հայկական խնդիր հարուցելու ձեռնարկումները ինչպիսի «աղետալի ձախողումների և պարտությունների» մատնեց իրենց։ Հոդվածում ակնարկվում էր, որ այդ բոլորը պարունակում է հայերի համար աննախատեսելի հետևանքներ։ Նոր շարդերի սպառնալիքներ էին տեղում նաև մյուս թերթերը (30, 1912 թ. № 4917)։ Իսկ Բրուսայի մուֆտին հրապարակեց մի պրոկլամացիա, որտեղ նա բացահայտ կոչ էր անում ջիհադ՝ սրբազան պատերազմ հայտարարել հայերին և սրի քաշել նրանց (457)։

Արևմտյան Հայաստանով ճանապարհորդած ռուս լրագրող Տ. Օլգենինը «Անհետացող Հայաստանը» հոդվածում գրել է, որ հայ ժողովրդի գլխին կախված է ահավոր վտանգ, որ մահմեդական բնակչության, գլխավորապես քրդերի, շրջանում նկատվում է սաստիկ գրգռվածություն։ Ամենուրեք գումարվում են ժողովներ և բացահայտ ու համարձակ խոսում հայերին կոտորելու անհրաժեշտության մասին (229, 1913 թ. № 54)։

Բարենորոգումների նկատմամբ դիրքորոշման հարցում քրդական իրականության մեջ միասնական տեսակետ գոյություն չուներ։ Տարբեր խմբավորումներ և նույնիսկ անհատ գործիչներ հանդես էին գալիս տարբեր տեսակետներով։ Ոմանք կողմնակից էին բարենորոգումների իրականացման, դրանք բարիք համարելով նաև քուրդ ժողովրդի համար, մյուսները գտնում էին, որ ի հակակշիռ հայերի համար իրագործվող բարենորոգումների անհրաժեշտ է ստեղծել անկախ քրդական պետություն՝ Բեյլիք, մեկ այլ խումբ անհրաժեշտ էր համարում ճնշում գործադրել կառավարության վրա, որպեսզի նա հրաժարվի բարենորոգումներ իրականացնելուց և այլն (202)

Այս շրջանում կազմակերպված ու ձևավորված շարժումներ ու ծրագրված որևէ միասնական գաղափար քրդերի շրջանում դեռևս գոյություն չուներ։ Քրդերի քաղաքական ձգտումները մնում էին բոլորովին նախնական վիճակի մեջ, անձև ու անկազմակերպ։ Չկային քաղաքական կուսակցություններ։ Մի-

այն առանձին անհատներ կամ խմբեր, օգտվելով լոկ իրենց հասարակական ազդեցիկ դիրքից, կարողանում էին իրենց շուրջը համախմբել ոչ մեծ թվով կողմնակիցների և նրանց թելադրել իրենց տեսակետները։ Քրդական իրականության մեջ բուրժուազիայի բացակայությունը ևս ամեն քայլափոխին իրեն զգացնել էր տալիս։

1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո քրդական շրջաններում ազգայնական շարժումը գնալով ավելի էր արմատավորվում։ Տարբեր վայրերում բացվում էին ակումբներ, ստեղծվում զանազան ընկերություններ և այլն։ Ազգայնական հոսանքի հետևորդների մեջ զգալի թիվ էր կազմում քուրդ սովորող երիտասարդությունը, իսկ նրանց միավորող կենտրոնն էր Ստամբուլի քրդական ակումբը։

Հիշյալ հոսանքի ղեկավարությունը լրագրական զանազան հոդվածներով աշխատում էր պաշտպանել քուրդ տարրի իրավունքները, դառնալ նրա քաղաքական ու տնտեսական պահանջների արտահայտիչը, զանազան ճանապարհներով աշխատում էր քրդերի շրջանում ստեղծել մի կազմակերպություն, որն ապագայում իրենց գործունեության հիմնաքարը լիներ և այլն։

Հայերի օրինակով քուրդ ազգայնականները «Քրդստանի» համար պահանջում էին վարչական ինքնավարություն, հարկերի կրճատում և հարկահավաքման համակարգի կարգավորում, քրդական ազգային բանակի ստեղծում «Քրդստանի» սահմանների պաշտպանության համար։ Նրանք պահանջում էին նաև ստեղծել տեղական քրդական վարչություն, բացել քրդական դպրոցներ, քրդերին լայնորեն առաջ քաշել սպայական և վարչական աստիճանավորների պաշտոնների համար և այլն (485, էջ 182)։

Սակայն քրդական ազգայնական հոսանքը ևս միատարր չէր։ Նրա տարբեր գործիչներ քուրդ ժողովրդի ապագա քաղաքական զարգացման խնդիրները պատկերացնում էին տարբեր ձևով։ Այսպես, «Կոմալի Քրդստան» («Քրդստան ընկերություն») կազմակերպությունը ոչ միայն զբաղվում էր քաղաքական ագիտացիայով, այլև ձեռնամուխ էր եղել քրդական ցեղերին զենք մատակարարելու գործին (273, էջ 215)։ Առանձին ազգայնական գործիչներ հանդես էին գալիս երիտթուրքական կառավարության քննադատությամբ։ Օրինակ, 1914 թ. ապրիլին գեներալ Շերիֆ փաշան «Մաշրութիեթ» թերթում

հրապարակեց «Քրդական ապստամբությունները և նրանց պատճառները» խորագրով մի հոդված, որտեղ սուր քննադատության էր ենթարկում երիտթուրքերին հայկական ջարդեր կազմակերպելու համար, որոնց նպատակը, ըստ նրա, Եվրոպայի աչքում քրդերին վարկաբեկելն էր (492, էջ 182)։

Շերիֆ փաշայի քաղաքական համակրանքը Անտանտի երկրների կողմն էր, և նրա կարծիքով միայն այդ երկրներն էին ի վիճակի ազատագրելու Քրդստանը (471)։

Քրդական ազգայնական գործիչներից շատերը դատապարտում էին քուրդ աղաների ու բեկերի վայրենի արարքները, կողոպուտներն ու ավարառությունները և համերաշխություն էին քարոզում դրացի ազգերի և գլխավորապես հայերի հետ։ Նրանք գտնում էին, որ իրենց նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է հայերի օժանդակությունն ու աջակցությունը։ Այդ գործակցությանը նրանք կարևոր նշանակություն էին տալիս, գտնելով, որ հայերը քաղաքականապես ավելի հասունացած են, մինչդեռ քուրդ ժողովուրդը տակավին նոր է սկսում ոտք դնել քաղաքական հողի վրա։

Այս նկատառումները դրդապատճառ եղան, որպեսզի քուրդ ազգայնականները Ստամբուլում բանակցությունների մեջ մտնեն դաշնակցական կուսակցության հետ, առաջ քաշելով հետևյալ գլխավոր պահանջները. ա) չանջատվել Օսմանյան կայսրությունից, բ) չստեղծել առանձին հայկական շրջաններ, գ) պետական զանազան ֆունկցիաների ընտրության մեջ չպահանջել հավասար ընտրական սկզբունք և դ) ընդունել այդ խմբի իշխանությունը ապագա Քրդստանի նկատմամբ (28, 1913 թ. № 125)։

Սակայն այս բանակցություններն ավարտվեցին ձախողմամբ, որովհետև քրդական ազգայնականների առաջ քաշած պահանջները հակասում էին արևմտահայության քաղաքական իդեալներին։ Նրանք նույնպես ժխտում էին Արևմտյան Հայաստանի գոյությունը, այն անվանելով «պապերից ժառանգած Քրդստան» (112, 1913 թ. № 246)։

Ազգայնական հոսանքի մեծ մասի ցանկությունը Օսմանյան կայսրությունից անբաժան անկախ Քրդստան ստեղծելն էր։ Այդ էր պատճառը, որ նշված հոսանքի գործիչների մեծ մասը հանդես էր գալիս երիտթուրքական վարչակարգի պաշտպանության դիրքերում։

Պետք է սակայն նշել, որ քրդական ազգայնական հոսանքին պատկանող դեմքերը դեռևս բարոյական մեծ ազդեցություն ձեռք չէին բերել քրդական զանգվածների մեջ։ «Քաղաքական ասպարեզում քրդական ազգայնականության նվաճումները ավելի քան համեստ էին»,— գրում է Մ. Ս. Լազարևը։

Քրդական մտավորականությունը կրթված հասարակության «չափազանց բարակ շերտ էր» և չուներ կայուն կապեր քրդական հասարակության հիմնական դասակարգերի ու շերտերի հետ և նկատելի ազդեցություն ժողովրդական զանգվածների վրա։ Բացի այդ, մտավորականության շրջանում ծայրահեղ կենսունակ գտնվեցին ավատական երկպառակությունների մնացուկները, որը խանգարեց նրանց համաձայնեցված քաղաքական ծրագիր մշակել (274, էջ 151)։

Չնայած այս բոլորին, հայ իրականության մեջ ավելի հեռատես գործիչները ողջունեցին քրդական ազգայնական հոսանքի ծնունդը։ «Մշակը», օրինակ, գրում էր. «Ինչ էլ որ լինի, անաչառ աչքով դիտելիս չենք կարող չընդունել քրդական ազգայնության զարթնումը որպես մի առաջադեմ քայլ, մի էտապ, որից պիտի անցնեն հետզհետե հրապարակի վրա առաջ եկող նոր ազգությունները, որոնք առաջ և դեռ այժմ էլ շարունակում են ապրել ցեղական կյանքով։

Որքան էլ որ այդ զարթնումը լինի կրոնական, ֆանատիկ և ծուռ մտորումներով շաղախված, սակայն աստիճանական էվոլյուցիայով նա կմաքրվի, կզտվի և կդառնա պրոգրեսի նոր ֆակտոր հայերին բնակակից և քույր ազգության՝ քրդության կյանքում։ Չէ որ մեր ազգային զգացումի զարթնումն էլ դեռ 70 տարի առաջ նույնքան համեմված էր կրոնական ֆանատիկ և ծուռ ըմբռնումներով։ Իսկ այսո՞ր...» (112, 1913 թ., № 246)։

Ընդհանուր առմամբ հայկական բարենորոգումների խնդիրը քրդական շրջաններում, հատկապես ավատական վերնախավի մոտ, առաջ էր բերել խոր տագնապի զգացում։ Նրա ներկայացուցիչները կոչ էին անում ապստամբել կառավարության դեմ և նրան ստիպել ընթացք չտալ հայկական բարենորոգումներին, ստեղծել բեյլիք և նրա մեջ մտցնել նաև Արևմտյան Հայաստանի հողերը։

Այսպես, քրդական առաջնորդներից մեկը, օսմանյան սենատի անդամ Աբդուլ Ղադերը «Իգդամ» թերթում հրատարա-

կած իր հոդվածում հայերի բարենորոգումներ պահանջելու պատճառը վերագրում էր «օտարի մատին»։ Նա սպառնում էր, որ միակողմանի բարենորոգումներ իրականացնելու դեպքում քրդերի «կրոնական նվիրական զգացումները կվիրավորվեն»։ Նա նույնիսկ բողոքում էր Թուրք լրագրող Ալի Քեմալ բեյի դեմ, որը նույն թերթում տպագրված իր հոդվածներում հիշատակում էր Հայաստան բառը, նրան կշտամբելով, որ դրանով նա «լավ տպավորություն մը չի գործեր» (30, 1913 թ., № 5134)։

Արդուլ Ղադերի հետ «Օսմանիշեր լոյտ» թերթի անցկացրած հարցազրույցի ժամանակ նա հայտարարեց. «Եթե քուրտերը ուզեին, արդեն շատոնց բնաջինջ ըրած կըլլային հայերը»։ Նույնիսկ «Օսմանիշեր լոյտը» գրում էր, որ Աբդուլ Ղադերի այս հայտարարությունը «ապշություն պատճառած է» իր թղթակցին և ավելացնում, որ տպագրելով այդ հարցազրույցը թերթը համամիտ չէ նրա հայտնած տեսակետների հետ (30, 1913 թ. № 5038)։

Աբդուլ Ղադերի այդ պրովոկացիոն հայտարարությունը ցնցող ազդեցություն ունեցավ հայկական շրջաններում։ «Բյուզանդիոնի» խմբագիր Բյուզանդ Քեչյանը դառնությամբ գրում էր. «Երբ քյուրտ շեյխ մը, ան ալ Պոլիս ապրող ծերակուտական շեյխ մը, այս խոսովիչ լեզվով կխոսի, ալ ինչ կսպասենք, որ ըսեն ու ընեն տեղվոյն վրա գտնվող... քյուրտ ցեղապետները, էշրաֆները, մյութեղալիպները, հրոսակապետները» (30, 1913 թ. № 5041)։

Արդուլ Ղադերի հայտարարություններից և գործելակերպից պարզորոշ երևում է, որ նա շեյխական և ավատական կարգերի վերահաստատման համոզված կողմնակից էր։ Քրդական իրականության մեջ այս հոսանքը քաղաքականապես նոր հասունացող քրդության համար կատարելապես կրոնական ու ավատապետական ձգտումների արտահայտիչ էր։

1913 թ. Արդուլ Ղադերը բանակցություններ վարեց դաշնակցական կուսակցության հետ «որոշ կետերի շուրջը համաձայնության գալու» նպատակով։ Այդ բանակցությունների ընթացքում նա առաջադրեց հետևյալ պահանջները. ճանաչել իր իշխանությունը Շամդինանի սահմաններից դուրս, այսինքն հայկական վիլայեթների վրա, համաձայնվել, որ հայերը զինվորական իշխանություն չունենան ապագա ինքնավար երկրի

մեջ և բավականաչափ լոկ քաղաքացիական իշխանության ֆունկցիաներով (28, 1913 թ. № 124)։ Այս առաջարկները հասկանալի պատճառներով դաշնակցական կուսակցությունը կտրականապես մերժեց (25)։

Հիշյալ հոսանքին պատկանող առավել աչքի ընկնող դեմքերն էին Աբդուլրեզակ Բադրխանը, շեյխ Թաան, Իսմայիլ աղա Սըմկոն և ուրիշներ։ Սրանց քաղաքական պահանջը քրդական բեյլիք ստեղծելն էր։ Աբդուլրեզակը, օրինակ, գտնում էր, որ իրանական և թուրքական քրդերի շրջանում Օսմանյան կայսրության հեղինակությունը սասանվել է։ Նա ծրագրում էր օգտվել դրանից, ինչպես նաև Բալկանյան պատերազմում թուրքերի կրած պարտությունից և միավորելով քրդերին ստեղծել ինքնավար Քրդստան, դրա տակ հասկանալով նաև Արևմտյան Հայաստանի տարածքը։ Նրա կարծիքով հայկական բարենորոգումների իրագործումը ուղղակի սպառնալիք կարող էր հանդիսանալ ոչ միայն բեյլիք ստեղծելու ճանապարհին, այլև առհասարակ քրդական անկախության համար։ Այս հոսանքի ներկայացուցիչները հանդես էին գալիս հայկական բարենորոգումների դեմ, որովհետև դրանց իրագործման դեպքում կասմանափակվեին քրդական ավատական վերնախավի կողմից հայ գյուղացիության շահագործման հնարավորությունները։

Աբդուլրեզակի հրապարակած կոչերից մեկում ասվում էր. «Երբ հայերին տրվելիք ինքնավարությունը վավերացվի, դրանից վերջ քրդերը ուրիշ բան չեն կարող անել, եթե ոչ նստել ու լաց լինել»։ «Եթե մենք այժմյանից չկարողանանք ապահովել մեր իրավունքներն ու դատի հաջողությունը,— շարունակում էր Աբդուլրեզակը,— ահա գուշակում եմ, որ Եվրոպայի ծրագրած հայկական առանձնաշնորհների իրականացման մեջ՝ առաջին քայլը պիտի լինի մեր ունեցած զենքերի հավաքումը, սեյիդների, շեյխերի, ուլեմաների, բեկերի և աղաների բնաջնջումը» (112, 1913 թ. № 246)։ Ահա թե ինչն էր անհանգստացնում Աբդուլրեզակին և քրդական ավատական վերնախավի մյուս ներկայացուցիչներին։

Աբդուլրեզակը կոչ էր անում հայերին «ռայա-ստրուկ չլինելու համար զինվել և արյան գնով պաշտպանել քրդական ազգությունն ու հայրենիքը»։ Նա առաջարկում էր համախմբվել իր կազմակերպած «Քրդստան» խմբակի շուրջը և

իրականացնել հետևյալ խնդիրները. վոնդել վիլայեթների, լիվաների, կազաների և գյուղախմբերի օսմանյան պաշտոնյաներին և նրանց փոխարեն նշանակել քրդերից ընտրված պաշտոնյաներ. ստեղծել Քրդստանի ժամանակավոր կառավարություն և պատվիրակություն ուղարկել Եվրոպա դիվանագիտական շրջանների և դեսպանաժողովների մոտ դիմումներ անելու համար (28, 1913 թ., № 129)։

Տեղյակ լինելով, որ Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանը նվաճողական նպատակներ ունի և այդ պատճառով հանդես է գալիս հայկական բարենորոգումների և առհասարակ հայկական հարցի պաշտպանի դերում, Արդուրրեզակը և նրա համախոհները անհրաժեշտ էին համարում շահել Ռուսաստանի համակրանքը և ստանալ նրա աջակցությունը։

Արդուրրեզակը Վանում ռուսական փոխհյուպատոս Ս. Օլֆերևին հորդորում էր. «Ռուսաստանի համար որպես հարևան ավելի ձեռնտու է ունենալ քրդերին, քան թե կասկածելի հայերին» (204)։ Ռուսաստանի կողմից իր ծրագրին աջակցություն ցույց չտալու դեպքում նա սպառնում էր դիմել մեկ այլ մեծ եվրոպական տերության և խնդրել նրա հովանավորությունը, ինչպես նաև օգնությունը՝ հակակշիռ ստեղծելու համար Արևմտյան Հայաստանի նկատմամբ Ռուսաստանի հովանավորության քաղաքականությանը (205)։

Ռուսական դիվանագետների և քաղաքական գործիչների մեջ գտնվեցին մարդիկ, որոնք իրենց կառավարությանը առաջարկեցին Արևմտյան Հայաստանում հենվել ոչ թե հայերի, այլ քրդերի վրա։ Այսպես, օրինակ, նույն Ս. Օլֆերևը գտնում էր, որ Ռուսաստանի շահերի տեսակետից ավելի գերադասելի է ինքնավար Քրդստանը, քան ինքնավար Հայաստանը։ Իսկ Խոյում փոխհյուպատոս Չիրկովի կարծիքով Արդուրրեզակի պահանջներին ընդառաջ չգնալու դեպքում ոչ մի երաշխիք չկար, որ քրդերը ոչ հեռու ապագայում չեն ընկնի Ռուսաստանի մրցակիցների Գերմանիայի կամ Անգլիայի ազդեցության տակ (372)։

Ցարական կառավարությունը սակայն ոչ մի վստահություն չտածեց Արդուրրեզակի ծրագրերի նկատմամբ, դրանք համարելով թուրքական նենգության արդյունք, իսկ իրեն՝ թուրքական էմիսար, պրովոկատոր և արկածախնդիր։ Բացի այդ, Արևմտյան Հայաստանի նկատմամբ իր քաղաքականությունն

իրագործելիս Ռուսաստանը նախապատվությունը տալիս էր հայերին (273, էջ 234)։

Իհարկե, Աբդուլրեզակը միակը չէր իր դիրքավորման մեջ։ Հայդերան ցեղի առաջնորդ Քյոռ Հուսեին փաշան, որը նույնպես հայկական բարենորոգումների իրականացման կատաղի հակառակորդներից էր, քրդերին կոչ էր անում ապստամբել «Քրդստանում (իմա՝ Արևմտյան Հայաստանում։— Վ. Բ.) Ռուսաստանի հովանավորությամբ ինքնավար շրջան ստեղծելու դեմ» (207)։ Հայկական բարենորոգումները խաթարելու և Արևմտյան Հայաստանի տարածքում քրդական բեյլիք ստեղծելու պահանջով հանդես էին գալիս նաև հայտնի ավազակներ Կարճկանի Մուսա բեյը, զիլյան ցեղի առաջնորդ Սելիմ փաշան, իսկ մազրիկ ցեղի ցեղապետ Շարաֆ բեյը «հայկական ինքնավարությունը», այսինքն բարենորոգումները, իրականացնելու դեպքում սպառնում էր հայերի ջարդերով (84, էջ 257)։

Նման գրգռիչ ելույթները անհանգստացնում էին արևմտահայությանը։ Բազմաթիվ գործիչներ փորձում էին բացատրել քուրդ զանգվածներին, որ հայկական բարենորոգումները կարող են բարիք հանդիսանալ նաև քուրդ ժողովրդի համար։ Այսպես, Լոնդոնի «Թայմս» թերթում Պողոս Նուբար փաշան հանդես եկավ հատուկ հոդվածով, որտեղ շեշտում էր, որ բարենորոգումները իրագործվելու դեպքում շահում է ոչ միայն քրիստոնյա բնակչությունը, այլև մահմեդական։ «Այդ բարենորոգումները,— գրում է նա,— քրիստոնյաներուն և իսլամներուն պիտի շնորհեն հավասար արդարություն, անդորրություն և կյանքի ու ինչքի ապահովություն, ինչ որ թույլ պիտի տա ամենուն ալ բարձրանալ և զարգանալ»։ Թուրքական կառավարության և քրդական ավատատերերի կողմից տարածվող շարամիտ ու գրգռիչ լուրերը հերքելու և դրանց հակահարված տալու նպատակով Պողոս Նուբարը նորից և հստակորեն ձևակերպեց հայերի պահանջները։ «Հայերը չեն պահանջեր ո՛չ անջատում, ո՛չ անկախություն, ո՛չ քաղաքական ինքնավարություն, ինչ որ հայկական նահանգներուն ազգագրական և աշխարհագրական պայմաններուն մեջ ցնորք մը միայն կհամարենք, այլ կպահանջեն միայն Բեռլինի դաշնագրին 61-րդ հոդվածով խոստացված և մեծ տերությանց դեսպաններուն 11 մայիսի 1895-ի հիշատակագրին մեջ բանաձևած բարենորոգումներուն ծրագրին գործադրումը» (30, 1913 թ., № 5043)։

Բացի այդ, քուրդ ժողովուրդը, առանձին բացառություններով, չկարողացավ հասկանալ, որ Արևմտյան Հայաստանում իրականացվելիք բարենորոգումները միանգամայն համապատասխանում են իր շահերին, որպեսզի ըստ այնմ էլ պաշտպան կանգներ այդ բարենորոգումներին։

Անդրադառնալով այդ հարցին, քուրդ պատմաբան Քեմալ Մազհար Ահմեդը նշում է. «Հայերի արդարացի ազգային-ազատագրական պայքարը տարբեր պայմաններով և տարբեր ժամանակաշրջաններում այս կամ այն կերպ հակասել է քուրդ անշատականների քաղաքական ծրագրերին» (499, էջ 52)։ Քրդական տարբեր խավերի դիրքորոշումը հայ ազգային շարժումից սահմանազատվելու ուղղությամբ նա բացատրում է սոցիալական և քաղաքական պատճառներով։ Սոցիալական պատճառը, նրա կարծիքով, այն էր, որ «քուրդ մտավորականը Հայաստանի անկախության պայմաններում կարժեքազրկվեր, գյուղացին կկորցներ իր հողը, մինչդեռ կալվածատերերն ու մյուս աղաները ձգտում էին պահպանել իրենց դիրքերը» (499, էջ 265)։ Քաղաքական պատճառն այն էր, որ քրդական ազգայնականների ու ավատատերերի միջև մի կողմից, և հայ ազգային կուսակցությունների միջև մյուս կողմից, գոյություն ունեին հակասություններ տարածքային հարցերի շուրջ, այսինքն վեճը գնում էր այն մասին, թե այս կամ այն երկրամասը կամ քաղաքը պետք է համարել Հայաստանի՞ թե Քրդստանի մեջ մտնող երկրամաս։

Այսպիսով, քրդական ավատական դասակարգի ընդդիմադիր տրամադրությունները մի շարք հարցերի, հատկապես հայկական բարենորոգումների նկատմամբ առաջ բերեցին քուրդ ժողովրդի ազատագրական շարժման քաղաքական նպատակի վրիպում։

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին քրդական իրականության մեջ առկա էր նաև բադրխանների տոհմի շարժումը, որի նպատակն էր միավորել քրդական ցեղերին՝ ի նպաստ միացյալ ուժով բադրխանների հին իշխանության կամ «հին Քրդստանի» վերականգնման։

Օգտվելով քաղաքական հանցագործների ներման մասին սահմանադրության հռչակումից հետո կառավարության հրապարակած օրենքից, բադրխանների ընտանիքից Հասան, Սու-

լեյման, Քեմալ բեյերը և Հուսեին փաշան վերադարձան Բոհթան, Ջեզիրե, Սղերդ, Գենջ և այլուր ու սկսեցին հակաթուրքական քարոզչություն տանել։

1912 թ. Քղիում (Էրզրումի վիլայեթ) ձերբակալվեց նրանց քարոզիչը, որի մոտ գտնված փաստաթղթերից կառավարությունը իմացավ նրանց շարժման նպատակների մասին, որոնք էին՝ իրենց շուրջը միավորել Դիարբեքիրի, Մոսուլի և Բիթլիսի վիլայեթների ողջ քուրդ բնակչությանը և ապստամբություն բարձրացնել։

«Մշակի» տվյալներով բաղրխանները փորձում էին կապի մեջ մտնել «դրացի մեծ պետության»՝ Ռուսաստանի հետ, նրանից ռազմական, նյութական և բարոյական օգնություն ստանալու միտումով (112, 1913 թ. № 191)։ Նրանք Ջեզիրեում մի ժողով գումարեցին, որտեղ որոշեցին իրանական սահմանից Վանով զենք փոխադրել, դադարեցնել պետությանը հարկեր վճարելը և միանալ հայերի հետ։

Սակայն Դիարբեքիրի վիլայեթից բացի, որտեղ իրենց ազդեցությունը համեմատաբար մեծ էր, նրանք մյուս վիլայեթներում ակնառու ազդեցություն չունեցան։ Չիրականացավ նաև հայերի հետ միավորվելու նրանց նպատակը։ Միակ աչքի ընկնող ցույցը կառավարության դեմ այն եղավ, որ մի քանի գավառներում՝ Ջեզիրեում, Բոհթանում, Սղերդում, Միդիաթում և այլուր ըմբոստացած քրդերը թույլ չտվեցին կառավարական պաշտոնյաներին մուտք գործել իրենց շրջանները աղեամ (ոչխարի տուրք), աշար (տասանորդ) և արազիե (հողային) տուրքերը գանձելու համար։

Կառավարությունը կտրուկ միջոցների դիմեց շարժումը արագորեն խեղդելու համար և թնդանոթներով ավերեց ու քանդեց ապստամբ գյուղերը (112, 1913 թ. № 191)։

Դրանից հետո շարժման ամենագլխավոր դեմքերից մեկը՝ Հուսեին փաշան, անձամբ շրջում էր և համոզում ժողովրդին՝ հպատակվել կառավարությանը։

Ի դեպ, այս շարժումը մեկ անգամ ևս ցույց տվեց, որ քրդական ցեղերի մեջ դեռևս շատ զորեղ են միմյանց նկատմամբ եղած ցեղային հակակրանքն ու ատելությունը։ 1913 թ. Հուսեին փաշան մահացավ։ Նույն թվականին Ալաշկերտում բաղրխանների ակտիվ գործիչներից մեկը՝ Նադիր բեյը, սպանվեց կառավարության կողմից։ Բաղրխանների ազդե-

ցիկ ընտանիքին սիրաշահելու և այդ ճանապարհով նրանց հակակառավարական ծրագիրը խափանելու միտումով իթթիհադը մինչ այդ հալածական Հասան բեկ Բադրխանին ընտրեց Դիարբեքիրի նահանգային ժողովի անդամ (28, 1913 թ. № 126)։ Այսպիսով, այս շարժումը ևս մնաց ամուլ չհանգեցնելով որևէ արդյունքի։

Սակայն այդ շարժումները Թուրքական կառավարությանը բավականին երկյուղ էին ներշնչում, որովհետև երկրի ծայրարևելքում հայկական ազատագրական շարժման զարգացման և քրդերի ազգային գիտակցության զարթոնքի հետևանքով Թուրքական կառավարությունը կարող էր այդ ծայրագավառներում կորցնել իր տիրապետությունը, մանավանդ որ Արևմտյան Հայաստանի նահանգները մեծ մասամբ բնակեցված էին հայերով ու քրդերով և Թուրք բնակչությունն այնտեղ փոքրամասնություն էր կազմում։

Այս պայմաններում երիտԹուրքական կառավարության համար համեմատաբար բարեհույս ու վստահելի տարրը դարձյալ մնում էին քրդերը, որոնց օգնությամբ իթթիհադը մտադիր էր զսպել հայերի քաղաքական ձգտումները։ Եվ այսպես, կառավարությունն աշխատում էր խեղդել քրդական խմորվող շարժումը, բայց այնպես, որ քրդերը և հատկապես քրդական ավատական դասակարգը չրաժանվի իրենից։ ԵրիտԹուրքերն աշխատում էին Թույլ չտալ, որ քրդերի մեջ արթնանան ազգային զգացումները, որ նրանք օսմանյան պետականության հետ կապված մնան, որպեսզի հնարավոր լինի օգտագործել նրանց ուժը ի շահ Թուրքական պետության (28, 1913 թ. 130)։

Երբ 1913 թ. Վանի իշխանությունները հայ-քրդական հակասություններն ուժեղացնելու նպատակով հայ քաղաքական կուսակցություններին առաջարկեցին աջակցել իրենց քրդերի դեմ պայքարում, նույնպիսի առաջարկություն արեցին նաև քրդերին, որպեսզի վերջիններս օգնեն իրենց հայկական շարժումները ջախջախելու համար (326, 1914 թ. 24 ապրիլի։ 373, 372, էջ 9—18)։

Նույն նպատակով նրանք միտումնավոր կերպով արգելք էին հանդիսանում քուրդ զանգվածների շրջանում լուսավորության տարածմանը։ Սակայն քրդերին սիրաշահելու համար երիտԹուրքական կառավարությունը 1913 թ. որոշեց քրդաբնակ մի շարք շրջաններում դպրոցներ բացել։

Այդ առթիվ ռուս հյուպատոսները գրում էին. «Մինչև վերջին ժամանակներս քրդական հարցի նկատմամբ լրիվ արհամարհանքով վերաբերվող թուրքերը... այժմ տենդորեն ձեռնարկել են Վանի շրջանի քրդերի մեջ դպրոցներ արմատավորելու գործը։ Պատերազմի հետևանքով դատարկված թուրքական գանձարանում գտնվեց 17500 լիրա՝ Վանի մոտ Արտամեդ գյուղում քրդերի համար անմիջապես դպրոց բաց անելու համար, որը նախատեսված է 1000 աշակերտի համար։ Բացի այդ ֆինանսավորված է 2500 թուրքական լիրա՝ հեռավոր քրդական գյուղերում ոչ մեծ տարրական դպրոցներ բաց անելու համար...» (374)։

Իթթիհադը հույս ուներ իր այս «դպրոցաշինական» քաղաքականությամբ ուժեղացնել կառավարության ազդեցությունը քրդերի վրա և քուրդ երիտասարդությանը օսմանյան հայրենիքին նվիրվածության զգացումներ ներարկել։

Հատկանշական է նաև, որ գերմանացիների մոտ ևս հանկարծակի հետաքրքրություն ծնվեց քրդերի լուսավորության գործի նկատմամբ։ Մոսուլում գերմանական փոխհյուպատոս Գոլդշտեյնը ժամանելով Վան աշխատում էր հավատացնել տեղի քրդերին, որ Բեռլինը մեծագույն ուշադրությամբ է վերաբերվում նրանց կուլտուրական մակարդակի բարձրացման գործին։ Նա խոստանում էր, որ մոտ ապագայում Վանում գերմանական հյուպատոսություն բացելուց հետո նահանգում քուրդ երեխաների համար կբացվեն նաև դպրոցներ, իսկ առավել ընդունակ աշակերտները կուղարկվեն Գերմանիա ձրի կրթություն ստանալու համար (374)։

1913 թ. համաշխարհային պատերազմի նախապատրաստվող գերմանական դիվանագիտությունը չափազանց կարևոր նշանակություն էր տալիս Թուրքիայի քրիստոնյա բնակչությանը Ռուսաստանի կողմից հովանավորելու հնարավորությունից զրկելուն։ Բեռլինը հրահանգ էր իջեցրել Թուրքիայում գործող գերմանական գործակալությանը եռանդուն աշխատանք ծավալել հատկապես հայերի շրջանում։

Այդ նպատակով Անատոլիա և Արևմտյան Հայաստան ուղարկվեց նաև գաղտնի մի հանձնաժողով, որը հետևողականորեն անց էր կացնում ոչ պաշտոնական մարդահամար, տեղեկություններ էր հավաքում հայերի քաղաքական տրամադրությունների, տնտեսական վիճակի մասին և այլն։ Գերմա-

նացիները կեղծավորաբար սկսեցին հայերին անվանել «Արևելքում արևմտյան մշակույթի գլխավոր տարածողներ» և այլն։ Սակայն այդ կեղծ համարտակությունների ետևում կանգնած էր գերմանական իմպերիալիստական շրջանների ձգտումը՝ լուծել հայկական հարցը իրենց քաղաքական շահերի տեսանկյունից (322, էջ 102—103)։

Գերմանական քաղաքականության մեջ նորը նաև այն էր, որ ի տարբերություն նախորդ շրջանի, երբ գերմանացիներն աշխատում էին քրդերին հակադրել հայերին, այժմ փորձեր էին կատարվում միավորել ու համախմբել Արևմտյան Հայաստանում մեծամասնություն կազմող այդ երկու էթնիկական խմբերին։ Թեև այդ քաղաքականությունը գոյություն ունեցող հայ-քրդական հակամարտության պատճառով հեռանկար չուներ, սակայն ցարական դիվանագիտությունը լրջորեն անհանգստացած էր։ Մինիստրների խորհրդի նախագահ Վ. Կոկովցովը արտաքին գործերի մինիստր Դ. Սազոնովին ուղղված հրահանգում շեշտում էր, որ ոչ մի դեպքում չպետք է ձեռքից բաց թողնել հայերին հովանավորելու նախաձեռնությունը (375)։ Իսկ արտաքին գործերի մինիստրության խոսափող «Նովոյե վրեմյա» թերթը տագնապով գրում էր, որ գերմանացիները աշխատում են միմյանց հետ հաշտեցնել քրդերին և հայերին ու նրանց վերածել իրենց նպատակներն իրագործելու գործիքի։ Թերթի կարծիքով դա իր մեջ մեծագույն սպառնալիք էր պարունակում ռուսական շահերի համար (295, 1913 թ., 9 (22) սեպտեմբերի)։

Նույնիսկ Անտանտի գծով Ռուսաստանի դաշնակից Ֆրանսիան, որն անհանգստացած էր դեպի Մերձավոր ու Միջին արևելք իր ախոյանի առաջխաղացման ձգտումներով, հայ-քրդական հարցի մասին առաջ էր քաշում մի այնպիսի տեսակետ, որը հեռու չէր գերմանականից և նպատակ ուներ «խփել Ռուսաստանի հայկական խաղաքարտը»։

Այսպես, օրինակ, «Bulletin du comité de l'Asie Française» հանդեսը գրում էր, որ հոգ տանելով Հայաստանում բարենորոգումներ մտցնելու մասին, չպետք է նկատի ունենալ միայն հայ տարրը։ Այն փաստը, որ շարունակ խոսում են հայկական հարցի մասին, հայկական բարենորոգումների մասին, երբեք չհիշելով քրդերին, խորապես վիրավորում է վերջիններիս ազգային ու կրոնական ինքնասիրությունը և

նրանց հանգեցնում այն մտքին, որ այդ ռեֆորմների միակ նպատակը հայերին հպատակեցնելն է իրենց... Այնուհետև հանդեսը գրում էր, որ ռուսները պետք է Ատրպատական մըտնեն և քրդերի ու հայերի պահանջներն անմիջապես բավարարեն։ Որ «համենայն դեպս չկա իսկական հայոց հարց, այլ կա միայն քուրդ-հայկական հարց, որը հասունացել է և իր անհետաձգելի լուծումն է պահանջում» (112, 1914 թ., № 109)։

Անշուշտ, իմպերիալիստական պետությունների նման կարգի ելույթները խրախուսում էին երիտթուրքական կառավարությանը։

Սակայն ամբողջ դժվարությունն այն էր, որ չնայած քրդական ավատատերերին սիրաշահելու քաղաքականությանը, 1913 թ. քրդերի հակակառավարական ելույթները բնավ չէին դադարում։ Այսպես, ապրիլ-մայիս ամիսներին Վան-Սերայ-Բաշկալայի շրջանում քրդական արթուշ (արթոշ) և գրավիան ցեղերը կատաղի զինված բախումներ ունեցան կառավարական զորքերի հետ (362, էջ 9։ 352)։ Առավել հուժկու հակակառավարական ապստամբություն բռնկեց Յուսուֆ Քյամիլ Բադրխանի գլխավորությամբ, որն ընդգրկեց Ռեդվանի, Միդիադի, Ջեզիրեի շրջանները, հասնելով մինչև Տիգրիսի ափերը (208)։

Թեև թուրքական իշխանությունները փորձեցին քրդերի հակակառավարական շարժումն ուղղել հայերի դեմ և դա մասամբ նրանց հաջողվեց, (209) սակայն, ընդհանուր առմամբ, այդ քաղաքականությունը որոշակի արդյունքներ չտվեց։ Ապըստամբած քրդերը հայտարարեցին, որ իրենք չեն վնասելու հայերին և քրիստոնյա մյուս ժողովուրդներին, որովհետև իրենց շարժումը բացառապես ուղղված է թուրքական կառավարության դեմ (210։ 263, էջ 40)։

Երիտթուրքական կառավարող շրջանները լրջորեն հաշիվ էին տալիս իրենց, թե ինչ հետևանքներ կարող են ունենալ նման շարժումները։ Մանավանդ որ նրանց տրամադրության տակ տեղեկություններ կային, որ ռուս-թուրքական սահմանամերձ շրջանների քրդերը փորձում են կապերի մեջ մտնել ռուսական իշխանությունների հետ։ Բուլանըխում նույնիսկ կազմվել էր մի հանրագրություն, որի տակ ստորագրել էին վեց հազարից ավելի քրդեր, ռուսական կառավարությանը խնդրելով

իրենց վերցնել իր հովանավորության տակ (30, 1913 թ., № 4977)։

Այս բոլորը Ստամբուլին ստիպեց Արևմտյան Հայաստան և Քրդստան գործուղել իթթիհադական հայտնի գործիչներ Նազիմ բեյին և Ֆեյզի բեյին (211), որոնք համարվում էին քրդական հարցի դիտակներ և բազմիցս «Միություն և առաջադիմություն» կուսակցության կենտրոնական կոմիտեի կարգադրությամբ «հատուկ հանձնարարություններով» աշխատել էին քրդերի շրջանում։

Ըստ երևույթին նրանց առաքելության հետևանքով վերջին ծայր առան քուրդ բեկերի կողմից հայերի հողերի բռնազրավումները։ Աղաներն աշխատում էին սպանություններով, կողոպուտներով, հրկիզումներով ու բռնաբարություններով սարսափեցնել հայերին։ Որպես այս բոլորի հետևանք, կրկին սկսվեց հայերի զանգվածային արտագաղթը դեպի Իրան, Ռուսաստան, ԱՄՆ և այլ երկրներ (264, էջ 6—7)։ Բիթլիսում ռուսական հյուպատոս Շիրկովը 1913 թ. մայիսի 13-ին Ստամբուլում ռուսական դեսպանին հեռագրում էր, որ քրդական ավատատերերը տեռորի են ենթարկում հայ և ասորի բնակչությանը, որ քրիստոնյաների վիճակը անտանելի է, որ անհրաժեշտ է կախաղան բարձրացնել խիղանցի Կարանլի Մամեին, էրունցի Մեհմեդ էմինին, Զատոն Բշարին և ուրիշների։ Որ առանց այդ միջոցի վիլայեթի հանգստությունը չի վերականգնվի (227, էջ 26—27)։

Ճիշտ է, առանձին վայրերում հայերին հաջողվում էր ինքնապաշտպանություն կազմակերպել կամ վերացնել առավել սանձարձակ աղաներին ու բեկերին[26], սակայն, հասկանալի է, դրանով հնարավոր չէր կանխել արևմտահայության գլխին կախված մահացու սպառնալիքը։

Այն վայրերում, որտեղ քրդական շարժումները հակակառավարական բնույթ էին կրում, իշխանությունները վճռականորեն ճնշում էին դրանք։ Այսպես, 1913 թ. օգոստոսին թուրքական բանակը պատժիչ արշավանք կազմակերպեց դեպի Ջեղիրե՝ իլալի ցեղի դեմ, որն ապստամբել էր և հրաժարվում էր ենթարկվել թուրքական իշխանությանը։ Տեղի ունեցան կատաղի մարտեր։ Թվով 15 գյուղեր ավերվեցին և այրվեցին։ Այդ նույն ժամանակ Դիարբեքիրի վալի Իսմայիլ Հաքքը փաշան քրդերի դեմ պատժիչ գործողություններ ծավալեց իր նա-

հանգում։ Կառավարությանը հարկեր մուծելուց հրաժարված ռաման աշիրեթի առաջնորդ Օմեր բեյին հնազանդեցնելու նպատակով նա պատանդ վերցրեց նրա 11-ամյա եղբորը (264, էջ 4—5)։ Զորքեր ուղարկվեցին նաև Սինջարի եզիդիների դեմ, որոնք հրետանիով քանդեցին ու ավերեցին բազմաթիվ գյուղեր։ Շամդինանի շեյխ Թաային մեղադրելով Ռուսաստանի և Թուրքիայի միջև երկակի քաղաքական խաղ խաղալու մեջ, իշխանությունները պատժիչ գործողություններ ծավալեցին նաև նրա դեմ (264, էջ 4—5)։ Բոհթանի շրջանում քրդերի և կառավարական զորքերի միջև տեղի ունեցան արյունոտ ընդհարումներ։ Չդիմանալով կանոնավոր բանակի ճնշմանը, քրդերը ստիպված էին բարձրանալ դեպի անմատչելի լեռները, իրենց հետ տանելով նաև ընտանիքներն ու գույքը։ Զորքերը թնդանոթներով ավերում ու հողին էին հավասարեցնում քրդական գյուղերը, բռնություններ գործադրում բնակչության նկատմամբ, բռնագրավում նրանց անասունները, բռնաբարում կանանց և այլն (112, 1913 թ. 206)։

Միևնույն ժամանակ եվրոպական դիվանագիտությանը մոլորության մեջ գցելու համար, որ իբր կառավարությունը արդեն ձեռնամուխ է եղել «հայկական բարենորոգումների» իրականացմանը, Թուրքական իշխանությունները սկսեցին հալածել մի շարք հայտնի քուրդ ավազակապետերի։

Կատարելով կառավարության հրամանը, Վանի նորընտիր կուսակալ Թահսին բեյը ոչնչացրեց գրավի ցեղի առաջնորդ Շաքիր աղային և նրա գործակից, հայտնի ավազակապետ Միր Մհեին, որը հայ, Թուրք և քուրդ գյուղացիության գլխին պատուհաս էր։

1913 թ. ամռանը բանակային և ժանդարմական զորամասերը չախչախեցին Էրզրումի և Էրզինջանի շրջաններում գործող քրդական բանդաները, իսկ սեպտեմբերին ոչնչացրեցին Շաքիր աղայի որդիներ Լեզգիի և Աբուբեքիրի բանդաները (264, էջ 1—3)։ Սակայն այդ պատժիչ գործողությունները ցուցադրական բնույթ էին կրում և շուտով դադարեցվեցին (212)։

Ինչպես հայտնի է 1914 թ. հունվարի 26-ին Ստամբուլում հաստատվեց հայկական բարենորոգումների վերաբերյալ նախնական համաձայնագիրը։ Ռուսաստանը գնում էր որոշակի զիջումների, բարենորոգումների հարցում հրաժարվելով մի շարք պահանջներից, որոնց համար նա նախկինում համա-

որին պայքարում էր։ Համաձայնագիրը նախատեսում էր լոկ հայերի իրավունքների որոշ երաշխիքներ՝ տեղական իշխանությունների և քրդական ավատատերերի կամայականություններից (317, էջ 423)։

Չնայած Ռուսաստանը ի վիճակի չեղավ Թուրքիային պարտադրել բարենորոգումների սկզբնական տարբերակը, ռուսական դիվանագիտությունն այնուամենայնիվ գտավ, որ ձեռք է բերել կարևոր հաղթանակ, որ համենայնդեպս, հայկական հարցը մնում է ուժի մեջ և շարունակում է ունենալ «կապիտալ նշանակություն» որպես Անատոլիայի այդ մասի նկատմամբ մեր (ցարիզմի։— Վ. Բ.) կողմից ներկայացված հայտ (287, էջ 157)։

Բնականաբար բարենորոգումների հրապարակված ծրագիրը չէր կարող բավարարել արևմտահայությանը։ Վերջինս հուսախաբ լինելով եվրոպական պետությունների տված և այդպես էլ չիրագործած խոստումներից, շարունակում էր ուղիներ որոնել իր անձի և գույքի ապահովության երաշխիքներ ձեռք բերելու համար։ Այս պարագաներում շարունակվում էին հայ ազգային կուսակցությունների և անհատ գործիչների համագործակցման փորձերը քրդական ազգայնականների և հակաթուրքական տրամադրություններ ունեցող առանձին անձանց հետ։ Կրկին հրատապ նշանակություն էր ձեռք բերել քրդերի հետ հակակառավարական դաշինքի մեջ մտնելու գաղափարը։ Այս շրջանում, երբ քրդական ազգայնական հոսանքը դնալով դառնում էր ավելի ստվարաթիվ ու կազմակերպված, նրա ներկայացուցիչներից ոմանք հասկանում էին, որ քուրդ ժողովուրդը իր ազգային իղձերի իրականացման ճանապարհին հայերի օժանդակության կարիքն ունի, որ հայերը քաղաքականապես արդեն բավականին հասունացած են, մինչդեռ քուրդ ժողովուրդը տակավին նոր է սկսում ոտք դնել քաղաքական հասունացման շեմին։

1913 թ. Բիթլիսի շրջանի ազդեցիկ քուրդ առաջնորդներից մեկը՝ մոլլա Սելիմը, մեկնեց Մշո սուրբ Կարապետ վանք և այնտեղ տեսակցելով հայ գործիչների հետ, շեյխ Սեյիդ Ալիի[27] անունից առաջարկեց հայերի և քրդերի միություն։ Նախնական խորհրդակցություններից հետո նույն շեյխ Սեյիդ Ալիի հանձնարարական նամակով մոլլա Սելիմը երկրորդ անգամ հանդիպեց Տարոնի դաշնակցական գործիչներ Վարդան վարդապետի,

Կորյունի և Ռուբենի հետ ու հետևյալ առաջարկներն արեց. երկիրը պատկանում է հայերին և քրդերին, նրանք էլ պետք է կառավարեն այն։ Ընդունվեց նաև քաղաքական մի որոշում՝ քրդերի և հայերի միացյալ ուժերով արևելյան նահանգները հռչակել անկախ (128, էջ 211—212)։

1914 թ. երիտթուրքական կառավարությունը, որը նախապատրաստվում էր մասնակցել առաջիկա պատերազմին և այդ կապակցությամբ սպառազինություններն ավելացնելու քաղաքականություն էր վարում, ամբողջ երկրով մեկ ավելացրեց ու ծանրացրեց հարկային լուծը։ «Անատոլուի ժողովրդին տուրքերը թե կավելնան տարվե տարի, և թե ավելի ճշտիվ կհավաքվին կգանձվին»,— գրում էր «Բյուզանդիոնը» (30, 1914 թ. № 5, 306)։

Արևմտյան Հայաստանի բնակչության համար հատկապես ծանր էր աղնամը։ Սրա գանձումը, որն ուղեկցվում էր ժանդարմական զորամասերի և զինվորականների կամայականություններով, բնակչության շրջանում առաջ էր բերում խոր դժգոհություն։ Մի շարք վայրերում տարերային հուզումներ սկսվեցին։ Դժգոհության շարժումը առանձնակի թափով դրսևորվեց Բիթլիսի վիլայեթում։ Այս վիլայեթը զբաղեցնում էր 29. 850 քառ. կմ և ուներ մոտ 400 հազար բնակչություն (278, էջ 115—130։ 30, 1914 թ., № 5, 309)։ Վիլայեթում կար երեք միլիոն գլուխ ոչխար։ Միանգամայն պարզ է, որ աղնամի բարձրացումը ուղղակի հարված էր այդ վիլայեթի աշխատավոր բնակչությանը։

Կառավարությունը բարձրացրեց նաև ռազմական հարկերն ու տուրքերը։ Ընդ որում, Բիթլիսի վալին պահանջեց անհապաղ վճարել նախորդ տարիների պարտքերը և զինակոչիկներ ուղարկել բանակում ծառայելու համար։

Օգտվելով բնակչության դժգոհությունից, 1914 թ. գարնանը Բիթլիսի շրջանում մոլլա Սելիմը սկսեց ապստամբության նախապատրաստություններ տեսնել։ Նա նամակով դիմեց Կոստանդնուպոլսի հայ պատրիարքին, որով հայտնում էր, որ քրդական ապստամբությունն ուղղվելու է բացառապես երիտթուրքերի դեմ (112, 1914 թ. № 64)։ Բիթլիսի վալին ապստամբների դեմ ժանդարմների մի ջոկատ ուղարկեց, որը սակայն դեռ ապստամբներին չհանդիպած փախուստի դիմեց։ Կառավարությունը ստիպված էր կանոնավոր զորքեր դուրս բերել։

Սակայն վերջիններս նույնպես ի վիճակի չեղան խեղդելու դեռ չծավալված շարժումը։ Ապստամբները գրավեցին Բիթլիսը և պահանջեցին, որ թուրքական վարչությունը հեռանա քաղաքից (214)։ Բիթլիսի վալին և տեղական վարչության ատենավորները փախուստի դիմեցին (469, էջ 73)։

Դեպքերին ականատես ավստրիացի Վոլֆարտը վկայում է, որ թեև թուրքական զորքերի տրամադրության տակ թնդանոթներ և գնդացիրներ կային, նրանք Բիթլիսի մոտ պարտություն կրեցին վատ զինված քրդերից և անկանոն ու խուճապահար նահանջելով քաղաք, փակվեցին ամրոցում, դրանով իսկ դրսևորելով իրենց լրիվ անկարողությունն ու վախկոտությունը (354)։

Երիտթուրքական կառավարությունը Բիթլիսի ապստամբությունը հայտարարեց զուտ հետադիմական շարժում, որն ուղղված է սահմանադրության դեմ և որի նպատակն է շարիաթի վերականգնումը։ Իթթիհադը այդ ապստամբությունը գնահատեց նաև որպես կառավարության բարենորոգիչ մտադրությունների, այսինքն հայկական բարենորոգումների դեմ ուղղված մի շարժում։ Դրանում բարենորոգումների նախագիծը ստորագրած մեծ պետություններին համոզելու համար ապստամբների մեջ սողոսկած թուրքական գործակալները[28] հանգերգում էին. «Մենք գյավուրական ռեֆորմներ չենք ուզում» (28)։

Իսկ «Իգդամ» թերթը, շողոքորթելով եվրոպական տերություններին, վերամբարձ ոճով գրում էր. «Մեր հիմնական նպատակն է Եվրոպայի հիմակուան պահանջումներուն համաձայն վերանորոգվիլ, գործերնիս կանոնավորել և վարչական անիվն ուրիշ ատեններու պես ոչ թե նորոգել, այլ վերաշինել» (30, 1914 թ. № 5, 311)։

Հայկական մամուլը հակասական կարծիքներ էր հայտնում այդ ապստամբության ու նրա նպատակների մասին։ «Մշակը» օրինակ, գրում էր, որ այն հայկական բարենորոգումների ճանապարհին արհեստականորեն սարքված խոչընդոտներից է։ Թերթի կարծիքով քրդական այդ շարժումն ուղղված էր հայերի դեմ (112, 1914 թ., № 64)։ Սակայն նույն «Մշակը» հայտնում էր նաև տրամաբանորեն հակառակ կարծիքներ։ Այսպես, Բ. Նավասարդյանի հոդվածում նշվում էր, որ Բիթլիսի քրդերի շարժումը ապստամբություն է երիտթուրքերի դեմ և ոչ թե

ուղղված է բարենորոգումների դեմ և կամ նպատակ ունի հարուցնել հայկական ջարդեր։ Հոդվածագիրը գտնում էր, որ այսուհետև ևս պետք է արծարծել հայ-քրդական մերձեցման հարցը (112, 1914 թ., 76) Իսկ «Մշակի» խմբագիր Հ. Առաքելյանը «Քրդստանի գաղափարը» վերնագրով հոդվածում գրում էր, որ Բիթլիսի ապստամբությունը քաղաքական բնույթ է կրում, և նրա շարժառիթը, ոչ թե ալան-թալանն է, ոչ թե կրոնական մոլեռանդությունն է, ինչպես եղել է մինչև այժմ, այլ «Քրդստան» գաղափարի իրագործումը, որ քուրդ ժողովրդի մոտ սկսել է զարթնել ազգայնական ձգտումը։ Եվրոպական կրթություն ստացած մի խումբ քրդեր մտահղացել են միացնել քրդական ցեղերը ի մի ազգություն, ի մի քաղաքական մարմին և ստեղծել ինքնավար Քրդստան և որ Բիթլիսի ապստամբական հուզումները այդ ձգտման ազդանշաններն են և կարապետները (112, 1914 թ., № 76)։

Անդրադառնալով Բիթլիսի ապստամբությանը «Բյուզանդիոնը» գրում էր. «Թրքական կարգ մը թերթեր այնպես ցույց տվին, որ քրդական այս շարժումներն ուղղված են հայկական բարենորոգմանց դեմ, բայց սխալ է այդ ենթադրությունը. ընդհակառակն քյուրտ ապստամբներն հայերուն հանդեպ շատ բարյացկամորեն վերաբերվեցան, հանդիպած հայ գյուղերուն նշանավոր վնաս մը չտվին... Շարժման արտաքին նպատակն էր շերիաթ պահանջել, ճիշտ Կ. Պոլսո «շերիաթճիներուն» նման... որովհետև քյուրտ տգետ ժողովուրդը անկարող է ըմբռնել կառավարության դեմ շարժման այլ նպատակ» (30, 1914 թ., № 5, 330)։

Հայտնի պանթուրքիստ Ահմեդ Աղաևը շանթ ու կրակ էր թափում Բիթլիսի ապստամբ քրդերի գլխին, որոնք նրա կարծիքով իրենց «անվայել» վարքագծով խոչընդոտ են հանդիսանում կառավարության առջև կանգնած պատմական առաքելության՝ պանթուրքիզմի իրագործման ճանապարհին։ Մոլլա Սելիմին հռչակելով տգետ մի ֆանատիկոս, նա նրան մեղադրում էր, որ ուրիշի ձեռքում դարձել է մի պարզ գործիք։ Այնուհետև մոլի շովինիստն ու պանթուրքիստը Թուրքիայի և արտասահմանի հասարակական կարծիքը մոլորության մեջ գցելու նպատակով Բիթլիսի քրդական ապստամբությունը ներկայացնում էր որպես հայկական բարենորոգումների և առհասարակ կառավարության առաջադիմական քայլերի դեմ

ուղղված հետադիմական մի շարժում։ Որ քրդերին ապստամբության մղողը առաջադիմության նկատմամբ նրանց ունեցած երկյուղն է և «բարենորոգմանց դեմ ատելությունը» (30, 1914 թ. № 5, 310)։

Պանթուրքիստը հայկական բարենորոգումների պաշտպա՞ն. դա զավեշտական էր։

Վանի ռուսական փոխհյուպատոս Օլֆերևը և Բիթլիսի փոխհյուպատոս Շիրկովը հաղորդում էին, որ ապստամբած քրդերը կապի մեջ են տեղի հայերի հետ, բանակցում են համատեղ հանդես գալու համար (355)։

Տեղյակ լինելով, որ քրդերի և հայերի միջև գոյություն ունի ինչ-որ համաձայնություն և նպատակ ունենալով գժտեցնել կողմերին, թուրքական բանակի հրամանատար Իհսան փաշան, որին հանձնարարված էր ճնշել ապստամբությունը, դիմեց մի պրովոկացիոն քայլի։ Նա առաջարկեց Մուշի ազգային ղեկավարներին կառավարությունից զենք ստանալ, կամավորական վաշտեր կազմել և կռվել ապստամբների դեմ (30, 1914 թ. № 318)։ Սակայն այդ պրովոկացիան ավարտվեց կատարյալ ձախողմամբ։ Իհսան փաշային հաջողվեց հայերին բաժանել ընդամենը 150 մաուզեր (30, 1914 թ., № 308)։ Ընդ որում, Տարոնի ղեկավարները անմիջապես գաղտնի սուրհանդակ ուղարկեցին Սեյիդ Ալիի մոտ, հայտնելով նրան, որ եթե ցույցի համար հայ կամավորական խմբեր կազմվեն, նայլ բան չմտածի, որովհետև հայերը հավատարիմ պիտի մնան ստորագրված պայմանագրին (128, էջ 214)։

Բիթլիսի շուրջը կենտրոնացնելով Մուշից, Դիարբեքիրից և Վանից բերված մեծ քանակությամբ զորքեր, թուրքական բանակը անցավ հարձակման։ Քրդերը կատաղի ու անձնուրաց դիմադրություն էին ցույց տալիս։ Սակայն, չդիմանալով կառավարական խոշոր ուժերի գրոհին, խուճապի մատնվեցին և նահանջեցին։ 1914 թ. ապրիլ-մայիս ամիսների ընթացքում թուրքական իշխանությունները անողոք հալածանքների էին ենթարկում քրդերին։ Ռազմադաշտային դատարանները հարյուրավոր մարդկանց դատապարտեցին գնդակահարության ու կախաղանի։ Իհսան փաշայի հրամանով բազմաթիվ քրդական գյուղեր, որոնց բնակչությունը մասնակցել էր ապստամբությանը, ջնջվեցին երկրի երեսից (377)։ Ապստամբության ղե-

կավարներից միայն մոլլա Սելիմին հաջողվեց ապաստան գտնել ռուսական հյուպատոսարանում[29]։

Այդ հանգամանքը Թուրքական կառավարությունն օգտագործեց, որպեսզի հայտարարի, որ քրդերը «զանազան թելադրությանց ու գրգռությանց զոհ գնացած են» (30, 1914 թ., № 5, 333, 5, 355), այսինքն ապստամբել են Ռուսաստանի հրահրումով։

Ապստամբության ղեկավարներին ձերբակալելուց հետո Բիթլիսի արտակարգ դատարանը անմիջապես վճիռ կայացրեց և նրանց բոլորին, այդ թվում նաև Սեյիդ Ալիին, նրա որդուն՝ Սյուլհեդդինին ու նրանց մերձավոր զինակիցներին, թվով 14 հոգու, ապրիլի 23-ին և 26-ին կախաղան բարձրացրեցին, իսկ 45 հոգու ձերբակալեցին և բանտարկեցին Տրապիզոնի և Սինոպի բանտերում (192)։

Երիտթուրքական պաշտոնաթերթ «Թանինը» քուրդ ապըստամբների դատավճռի առթիվ գրում էր. «Այս կերպով իրենց պատիժը կգտնեն սարքիչներն ու թելադրիչներն ապստամբական այն շարժումին, որ այս փափուկ ժամանակներում մեջ կրնար ցավալի հետևանքներ ունենալ տերության ու ազգին համար» (30, 1914 թ., № 5, 333)։

Իսկ Ռ. Բեկգուլյանցի հետ զրույցի ժամանակ Թահսին փաշան հայտարարել էր. «Քրդերը դաժանորեն պատժվեցին հարևան պետության հետ բարեկամություն ունենալու և ավելորդ երազանքների համար... Քրդերը մահմեդականներ են և պետք է որ դա հիշեին։ Իսկ քանի որ նրանք սկսել էին մոռանալ այդ, ապա դաժանորեն հատուցեցին» (225, էջ 76—77)։

Զափազանց հետաքրքիր է «Թանին» թերթի թղթակցի հարցազրույցը Կոստանդնուպոլսի պատրիարք Զավեն Եվդյանի հետ Բիթլիսի ապստամբության մասին։ Թղթակցի այն հարցին, թե արդյոք պատրիարքի կարծիքով այդ ապստամբությունը դրսի միջամտության արդյունք չէ, պատրիարքը չարահեգնորեն և խայթիչ պատասխանել է. «Ճիշտ է գրգռություն մը ու թելադրություն մը կա, բայց չեմ կրնար ըսել, թե այն դուրսե՞ն է, թե ներսեն»։

Իսկ այն հարցին, թե «դեպքին շարժառիթն ի՞նչ է», պատրիարքը մանվածապատ պատասխանել է համենայնդեպս չկրկնելով ապստամբության վերաբերյալ կառավարության վարկածը. «Ամեն պարագայի մեջ բան մը կա, որուն ապըս-

տամբները հավատք ընծայած են, որովհետև շատ դժվար չէ հասկնալ, թե Բաղեշը գրավելով կառավարություն պիտի չկրնայ կազմվիլ և դահլիճը պիտի չկրնայ տապալիլ»։

Այն հարցին, թե «կկարծե՞ք, որ տուրքերուն խնդիրները պատճառ մը եղած ըլլան», նա պատասխանել է՝ «հավանական է... ոչխարի տուրքը կարելի է որ ծանր գա, վասնզի դրամ չունին։ ... Մեր տեղեկությանց նայելով աշիրեթները գրգռվեր են կառավարության դեմ» (30, 1914 թ., № 5, 308)։

Ինչպես տեսնում ենք պատրիարքը ոչ մի խոսք չի ասում հայկական բարենորոգումների դեմ ապստամբության ուղղվածության մասին։ Անտարակույս, 1914 թ. Բիթլիսի քրդական ապստամբությունը թուրք ժողովրդի հակաթուրքական պայքարի աչքի ընկնող դրվագներից մեկն է։ Միաժամանակ այն հայ-քրդական համագործակցության և երկու հարևան ժողովուրդների կողմից թուրքական լծի դեմ ընդվզելու ուշագրավ փորձերից է։

Ճիշտ է, ապստամբությունն ընթացավ կրոնական լոզունգների ներքո, շարիաթը վերականգնելու նշանաբանով, սակայն հայտնի է, որ Արևելքում սոցիալական և քաղաքական շարժումների մեծ մասը ընթանում էր կրոնական քողի տակ։ Այն, որ Բիթլիսի ապստամբությունը մեկուսացված, զուտ տեղական բնույթ ունեցող և, հետևաբար, պատահական երևույթ չէր, վկայում է այն փաստը, որ նրա հետ միաժամանակ, համարյա նույն օրերին, քրդական հակակառավարական հուզումներ ու խլրտումներ էին տեղի ունենում նաև Վանի, Դիարբեքիրի, Էրզրումի և Մոսուլի վիլայեթներում (112, 1914 թ., № 64)։

Երիտթուրքական կառավարությունը ապստամբությունը հեշտությամբ ճնշեց, որովհետև նախ՝ շարժումը չհասցրեց արձագանք գտնել քրդական լայն զանգվածների շրջանում և ապա՝ այն թույլ կազմակերպված, նույնիսկ տարերային բնույթ էր կրում։ Ապստամբությունը չուներ հստակ ձևակերպված նպատակներ։ Նրա առաջնորդները, պատկանելով ավատական դասակարգին, այսինքն լինելով շահագործողներ, ի վիճակի չէին իրենց հետևից տանելու զանգվածներին։ Ապստամբությանը մասնակից քրդական ավատատերերի մեջ գտնվեցին դավաճաններ։ Ռուսաստանը, որի շահերին համապատասխանում էր քրդերի հակակառավարական այդ ելույթը, գործնականում ոչ մի աջակցություն ցույց չտվեց ապստամբներին։

Վերջապես հայ և քուրդ ժողովուրդների միջև անվստահության մթնոլորտը, որը համաշխարհային պատերազմի նախօրյակին ավելի էր թանձրանում իթթիհադի պրովոկացիոն քայլերի շնորհիվ, թույլ չտվեց, որ հայերը ևս մասնակցեն քրդերի հակակառավարական այդ ելույթին։ Ապստամբության ղեկավարների հետ կապ հաստատած հայ գործիչներն ըստ էության ոչ մի աշխատանք չէին տարել հայ բնակչության մեջ, որի հետևանքով նույնիսկ Բիթլիսի հայությունը բացարձակապես անտեղյակ էր ապստամբության նպատակներին։ Ավելին, ենթադրելով, որ դա կառավարության կողմից հրահրված քրդերի սովորական հակահայկական ելույթ է, Բիթլիսի և նրա շրջակա գյուղերի հայ բնակիչներից շատերը պատրաստվում էին դիմադրության կամ ապաստան էին փնտրում ռուսական հյուպատոսարանում։

Բիթլիսում տեղի ունեցած այդ կարճատև, բայց և իր բնույթով վտանգավոր իրադարձությունը ցնցող տպավորություն գործեց երիտթուրքական կառավարության վրա։ Իթթիհադը գիտեր, որ պատերազմը ուր որ է կպայթի, իսկ քրդերին նա մտադիր էր այդ պատերազմում լայնորեն օգտագործել որպես թնդանոթի միս։ Թիկունքի կայունության առումով խիստ վտանգավոր էր հայ-քրդական համագործակցության այն փաստը, որը տեղի էր ունեցել Բիթլիսում։ Այդ պատճառով իթթիհադը դարձյալ ատամները կրճտացնելով «գործը անուշի էր կապում» և «շոյում» քրդերին։ Իր հերթին, քրդական մի շարք ազդեցիկ դեմքեր, օրինակ, տենատոր Աբդուլ Ղադերը, շեյխ Թահան, Բիթլիսի մուֆտի Աբդուլ Մեջիդը, օսմանյան պառլամենտի նախկին երեսփոխան Ֆեզի էֆենդին, Գենջի երեսփոխան Մեհմեդ Էմինը և բազմաթիվ շեյխեր ու աշիրեթապետեր կառավարության նկատմամբ իրենց չեզոքությունը ցուցադրելու նպատակով, ապստամբությունը ճնշվելուց հետո սկսեցին հեռագրեր ուղարկել Բ. Դռանը, որոնցում հայտնում էին իրենց հավատարմության հավաստիքը։ Նրանք գրում էին, թե իբր Բիթլիսում օտարների թելադրանքով առաջ եկած «ցավալի կացությունը» «քրդերի ընդհանուր պարսավանքի առարկա» է և որ շեյխերը, բեկերն ու աղաները և բոլոր աշիրեթները կատարելապես հավատարիմ են խալիֆայությանը (30, 1914 թ., 5, 208)։

Արևմտյան Հայաստանի զանազան անկյուններից խորին հպատակության զեղումներով գրված այդ հեռագրերի հետ միաժամանակ կառավարական թերթերը խմբովին սկսեցին ընդարձակ առաջնորդող հոդվածներ տպագրել ի պաշտպանություն «ճիշտ է, դեռևս տգետ, բայց և ասպետական ոգի ունեցող քրդերի մասին, որոնք անսահման նվիրված են խալիֆին և օսմանյան կառավարությանը» (112, 1914 թ., № 75)։

Դարձյալ օգտագործելով թուրքական ավանդական «փափուկ բարձը», «Թասֆիրի էֆքյարը» իր խմբագրականում գրում էր, թե ըստ էության Բիթլիսի դեպքերը չի կարելի գնահատել որպես ապստամբություն։ «Քյուրտերն, որ ի բնե ուշիմ և սկզբունքով հայրենասեր են, հայրենիքին վնաս չեն հասցներ և այդ տեսակ անպատշաճ արարքներու համամիտ գտնվելու ստիճանեն շատ վեր են։ Կրոնքի և հայրենիքի կապերն իրենց կյանքին գլխավոր կապերը կնկատեն և այդ արժեքավոր ու բաշարի հայրենակիցները շատ հեռու են հայրենիքը վտանգի ենթարկելիք և իսլամության վնասելիք ընթացքներե» (30, 1914 թ. № 5, 308)։

Սակայն 1914 թ. գարնանը բռնկվեց բարզանցի քրդերի ապստամբությունը։ Շեյխ Բարզանին հաջողվեց կառավարության դեմ հանել ավելի քան 500 քրդական գյուղեր։ Քրդերին միացան նաև ասորիները։ Տեղի ունեցած արյունահեղ ու անհավասար մարտերում ապստամբները պարտություն կրեցին և ստիպված էին անցնել Իրան, թուրք ասկյարների վրեժխնդրությունից փրկություն գտնելու համար (378)։

Այսպիսով, երիտթուրքական կառավարության առջև կանգնած էր կարևոր խնդիր. անհապաղ «քրդական հարցի» վերաբերյալ մշակել ծրագիր՝ առաջիկա պատերազմի ժամանակ քուրդ ժողովրդին որպես ռազմական ուժ օգտագործելու և թիկունքը ապահովելու համար։ Ուստի երիտթուրքական կոմիտեն որոշեց հատուկ խորհրդակցություն գումարել, որը բացառապես նվիրված էր լինելու քրդական հարցին։ Դա ըստ էության «Իթթիհադ վե թերաքքը» կուսակցության կենտրոնական կոմիտեի արտակարգ նիստ էր։ Այն տեղի ունեցավ 1914 թ. մարտի 22-ին։ Որոշվեց քրդական առաջնորդներին կառավարության հետ ավելի սերտ կապերով կապելու համար նրանց դրամական նպաստներ հատկացնել, շնորհել զանազան պաշ-

տոններ, մի քանիսին ընտրել պառլամենտի պատգամավորներ, սենատորներ նշանակել և այլն (285, էջ 297—298)։

Իթթիհադը որոշեց նաև քրդական վերնախավի օգնությամբ քուրդ ժողովրդին պատերազմի բոցերի մեջ նետել հանուն իր պանթուրքիստական նվաճողական ցնորքների իրականացման։

Ի դեպ, երիտթուրքական տրիումվիրատը որոշեց նաև արևմտահայության ցեղասպանության իր հրեշավոր ծրագիրն իրականացնելուց առաջ փորձել նրան սին խոստումներով գայթակղեցնելու ճանապարհով կամավոր պատերազմի սպանդի մեջ նետել։

Զորքերի ռազմականացման հուն օրերին, երբ Էրզրումում դաշնակցության ութերորդ ընդհանուր ժողովը 1914 թ. օգոստոսին պատերազմի վերաբերյալ իր դիրքորոշումն էր ամփոփում, Ստամբուլից Էրզրում ժամանեցին երիտթուրքական կուսակցության երեք ներկայացուցիչներ՝ Նաշի բեյը, Բուխար էդ Դինը և Հիլմի բեյը, դաշնակցության ղեկավարների հետ վերոհիշյալ հարցի առթիվ բանակցելու։ Նրանք դաշնակցությանն առաջարկեցին հակառուսական լայն պրոպագանդա մղել կովկասահայության և Իրանի հայ բնակչության շրջանում, կազմակերպել կամավորական խմբեր՝ ռուսների դեմ կռվելու համար և այլն։ Այս բոլորի փոխարեն նրանք խոստանում էին «կտոր մը դեռ չզարնված արջի մորթիեն» (50, էջ 139), այսինքն ապագա «Ինքնավար Հայաստանին» տալ Կարսի շրջանը, Երևանի նահանգը, Գանձակի նահանգի մի մասը, ինչպես նաև Վանի, Բիթլիսի վիլայեթները և Էրզրումի վիլայեթի մի մասը (3, էջ 74)։

Սա անօրինակ լկտիություն էր։ Հայ ժողովրդի ցեղասպանությունը մտահղացած իթթիհադը նրան առաջարկում էր ազգային օջախի ստեղծում։ Դաշնակցական կուսակցությունը, որն արդեն ճաշակել է երիտթուրքերի հետ համագործակցության պտուղները, այս անգամ առանց վարանելու մերժեց վերոհիշյալ առաջարկները։ 1914 թ. հուլիսին Հ. Հ. դաշնակցության 8-րդ ընդհանուր ժողովը Էրզրումում այդ ոգով ընդունեց համապատասխան որոշում։ Միաժամանակ որոշվեց զինել հայ ժողովրդին։

Ի միջի այլոց, հայ ժողովրդին Ռուսաստանի դեմ ոտքի

հանելու փորձ արեց նաև Գերմանիան։ Ստամբուլում գերմանական դեսպանատունը դիմեց պատրիարքին և հայ ազդեցիկ գործիչներին, նշելով, որ հայ ժողովրդի համար հասել է վճռական ժամը և որ պատերազմի ընթացքում հայերը պետք է պահեն իրենց որպես Օսմանյան կայսրության հավատարիմ քաղաքացիներ (381, էջ 80)։

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմը բռնկվելուց հետո երիտթուրքական կառավարությանը հաջողվեց մոլորեցնել թուրդ ժողովրդի մի մասին, նրան կարողացավ ներարկել կրոնական մոլեռանդության թույն և օգտագործելով իր գործակալությանը՝ հանձինս քրդական ցեղային-ավատական վերնախավի, այդ ժողովրդի առանձին հատվածներին ոտքի հանեց հայ ժողովրդի դեմ։

Վերջաբան

1914 թ. վրա հասած համաշխարհային պատերազմի փոթորիկը հօդս ցնդեցրեց կիսատ ու անկատար հայկական բարենորոգումները։ Հարձակողական նվաճողականության ոգով տոգորված թուրքական իմպերիալիզմը իր գաղութատիրական տենչանքներին հագուրդ տալու համար նետվեց աշխարհամարտի մեջ, ձգտելով ընդարձակել Օսմանյան կայսրության գաղութային տիրույթները, կենսագործել թուրք կառավարող շրջանների փայփայած «մեծ թուրքական կայսրություն» ստեղծելու պանթուրքիստական ծրագիրը և ջախջախել Օսմանյան կայսրության ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումները։

Պանթուրքիզմի ագրեսիվ գաղափարախոսության գործնական իրականացման ճանապարհին իթթիհադը ամենալուրջ խոչընդոտներից մեկն էր համարում «հայկական սեպը», որը հաղթահարելու համար ծրագրվել էր բնաջնջել սկզբում արևմտահայությանը, իսկ ապա, հաղթանակի դեպքում, նաև Արևելյան Հայաստանի հայ ազգաբնակչությանը։

Մարդկության պատմության մեջ աննախադեպ ապրիլյան եղեռնը կազմակերպելիս իթթիհադը հիմնականում գործի դրեց կառավարական վստահելի մեքենան և բանակը։ Սակայն նրան հաջողվեց հայ ժողովրդի ցեղասպանության հրեշավոր ծրագիրն իրագործելու համար որպես գործիք ծառայեցնել նաև թուրք, քուրդ և մահմեդական այլ ժողովուրդների նշանակալից զանգվածների և բանտերից ազատած քրեական հանցագործների։ Մասնավորապես քրդական ավատատերերը, ցեղապետերը և նրանց ենթակա աշիրեթները դարձան երիտթուրքական

կառավարության մարդակուլ ծրագրի իրականացման մեղսակիցներ։

Առաջին համաշխարհային պատերազմը սկսվելուց հետո քրդերին պատերազմի մեջ ներգրավելու նպատակով երիտթուրքական կառավարությունը շռայլ խոստումներ էր տալիս՝ բավարարել նրանց ազգային ձգտումները և պատերազմի ավարտից հետո ինքնավարություն տալ։ Իթթիհադը ներշնչում էր քրդերին, որ նրանց հայրենասիրական պարտքն է հանդես գալ Թուրքիայի ներքին ու արտաքին թշնամիների դեմ։ Իսկապես, իր քաղաքական ու սոցիալ-տնտեսական հետամնացության, կրոնական և տոհմացեղային նախապաշարմունքների, ցեղապետերին, շեյխերին ու բեկերին կույր հնազանդության, ապագայի առումով իր ազգային նպատակների պարզ գիտակցությունը չունենալու, թուրքական պետության մեքենայությունների, իմպերիալիստական տերությունների դավերի և այլ պատճառների հետևանքով պատերազմի ժամանակ մահմեդական կրոնը դավանող քուրդ զանգվածը ընդհանուր առմամբ հանդես եկավ թուրքական պետության կողմից, պատերազմական ճակատներում առատորեն արյուն թափելով ոչ թե հանուն իր ազգային շահերի, այլ թուրքական բուրժուազիայի և ավատական դասակարգի շահերի։ Հետագայում հայերի ցեղասպանության պատասխանատվությունը Իթթիհադից հեռացնելու համար, Թալեաթը փորձում էր ողջ պատասխանատվությունը բարդել քրդերի վրա, հայկական կոտորածը ներկայացնելով որպես հայերի ու քրդերի ռասայական հակամարտության արդյունք։

Ճշմարտությունը պահանջում է սակայն նշել, որ քիչ չէին նաև այն դեպքերը, երբ քուրդ ժողովրդի առանձին հատվածներ և հեռատես ու գիտակից անհատներ, որոնք զերծ էին մնացել թուրքական վերնախավի սերմանած մահմեդական մոլեռանդության, ազգային ատելության և ամենատարբեր շովինիստական գաղափարախոսությունների թույնից, որոնց քաղաքական մտածողությունը առաջ էր գնացել ավատական ու ցեղային գաղափարախոսության մակարդակից, որոնք ճիշտ էին ընկալել հայկական ջարդերի պատճառներն ու նպատակները, կամ պարզապես արյան արբունքի մեջ նրանց խիղճը կարողացել էր մնալ անխաթար, ոչ միայն չմասնակցեցին հայկական ջարդերին, այլև վտանգի ենթարկելով իրենց կյանքը,

եղբայրական օգնության ձեռք մեկնեցին նրանց, ապաստան տալով հայկական խոշոր հավաքականությունների կամ առանձին խմբերի, որոնք փրկվեցին թուրքական յաթաղանից։

1915 թ. սեպտեմբերին թուրքական բանակի գեներալ, քրդական ծագում ունեցող Շերիֆ փաշան նամակով դիմեց «Ժուռնալ դե Ժնև» ամսագրի խմբագրությանը, որտեղ նա արտահայտում էր իր զայրույթը այն մեթոդների նկատմամբ, որ կիրառում էր «Միություն և առաջադիմություն» կոմիտեն հայկական ջարդերն իրագործելիս։ Նա գրում էր, որ իթթիհադականների վարմունքը իր վայրենությամբ գերազանցեց Չինգիզ խանի ու Լենկ Թեմուրի բարբարոսություններին։ «Եթե գոյություն ունի մի ժողովուրդ,— գրում էր Շերիֆ փաշան,— որը մեծ ծառայություններ է մատուցել Թուրքիային շնորհիվ իր միջավայրից դուրս եկած պետական գործիչների և տաղանդավոր աստիճանավորների, և որոնց մտավոր ընդունակությունները դրսևորվել են բոլոր բնագավառներում՝ առևտրի, արդյունաբերության, գիտության ու արվեստների մեջ, ապա դա հայ ժողովուրդն է։ ...Այդ ազգի բազմաթիվ մեծ մարդիկ պատիվ կբերեին Արևմուտքի ցանկացած երկրին»։

Այնուհետև Շերիֆ փաշան գրում էր, որ մարդու սիրտը արյամբ է լցվում տեսնելով, որ «այդքան առատորեն օժտված ժողովուրդը, որը կարող էր որպես կենարար սպեղանի օգնել Օսմանյան կայսրության վերակենդանացմանը, մեր աչքի առջև անհետանում է պատմությունից»։ Նա իր զայրույթն էր արտահայտում հայ ժողովրդի դահիճների նկատմամբ և իր անսահման կարեկցությունը հանդեպ նրանց զոհերը (236, էջ 357—358)։

Առկա են բազմաթիվ փաստեր և վկայություններ այն մասին, որ 1915—1918 թթ. ջարդերից փրկված զգալի քանակությամբ հայեր մինչև օրս ծպտված ապրում են Արևմտյան Հայաստանի քուրդ բնակչություն ունեցող տարբեր շրջաններում[30], կառավարությունից խնամքով թաքցնելով իրենց ազգային պատկանելությունը, բայց և հավատարիմ մնալով իրենց ազգային ավանդույթներին (367։ 430)։

Հայ և քուրդ ժողովուրդների ռասայական հակամարտության թուրքական հորինվածքը բազմիցս հերքվել է իրենց պատմության ճգնաժամային պահերին երկու դրացի ժողովուրդների միմյանց նկատմամբ դրսևորած բարեկամության

բաղմապիսի այլ դրվագներով ևս։ Հատկանշական է, որ 1915 թ. արյունոտ եղեռնի օրերին, երբ Պողոս Նուբար փաշան Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դելկասեին հուշագիր ներկայացրեց, նրանում հայկական հարցի լուծման հետ միաժամանակ առաջարկվում էր ստեղծել նաև ինքնավար Քրդստան (229, էջ 138)։ 1915 թ. դեկտեմբերին նույնպիսի առաջարկով հանդես է եկել նաև ռուսահայ գործիչ Յա. Խ. Զավրիևը, որը մեծ պետություններին ներկայացրած իր նախագծում առաջարկում էր Թուրքիայի արևելքում ստեղծել ոչ միայն ինքնավար Հայաստան, այլև ինքնավար Քրդստան (309, № 52, 56, 59, 62—67, 88)։

Հայկական եղեռնը մեծ դաս եղավ նաև քուրդ ժողովրդի համար։ Արդեն 1915 թ. վերջերից այդ ժողովրդի առանձին հեռատես գործիչներ նախազգացին, որ թուրքական յաթաղանը հայերին կոտորելուց հետո, ի վերջո պետք է շրջվի իրենց դեմ ևս, որ պանթուրքիզմի մոլուցքով տարված երիտթուրքերը մտադիր են վերացնել ոչ միայն Թուրքիայի և Թուրանի՝ թրքախոս ժողովուրդներով բնակեցված երկրների միջև եղած «հայկական սեպը», այլև «քրդական պատնեշը»։ Ընդ որում, այդ նպատակի իրագործման ճանապարհին, եթե հայ ժողովուրդը իթթիհադի կողմից դատապարտված էր առավելապես ֆիզիկական բնաջնջման, ապա քրդերը պետք է ենթարկվեին համաձուլման ու թուրքացման, թեև, ինչպես ցույց տվեցին հետագա իրադարձությունները, չէր բացառվում նաև քրդական խոշոր զանգվածների ոչնչացումը։ Քուրդ գործիչ Ջիլադեթ Ալի Բադրխանը 1933 թ. Մուստաֆա Քեմալին ուղղված իր բաց նամակում գրում էր. «Ըստ երիտթուրքերի ծրագրերի, քրդերը դատվում էին ոչ թե ոչնչացվողների, այլ այն ժողովուրդների թվում, որոնք ենթակա էին համաձուլման» (390, էջ 4)։

Հայ ժողովրդի ցեղասպանության հետևանքով արևմտահայությունը բնաջնջվեց և դուրս մղվեց իր դարավոր հայրենիքից։ Արևմտյան Հայաստանը հայաթափ անելուց հետո թուրքական տիրապետող վերնախավը անմիջականորեն ձեռնամուխ եղավ նաև քրդական հարցի «լուծմանը», որի նպատակն էր թույլ չտալ, որ հայերից դատարկված նահանգներում կազմվի քրդական մեծամասնություն։ Այսպիսով, թուրքական պետության համար օրակարգի անհետաձգելի հարց էր դառնում նաև «քրդական կնճռի» լուծումը, որը հասկացվում էր որպես քուրդ

ժողովրդի համաձուլում թուրքական զանգվածի մեջ։ Այդ ծրագրի բաղկացուցիչ մասերն էին նաև քրդական զանգվածների բռնի տեղահանությունները և մասնակի ջարդերը։

Արդեն 1916 թ. Արևմտյան Հայաստանից և Քրդստանից Անատոլիայի խորքերը տեղահանվեցին տասնյակ հազարավոր քրդեր։ Այդ միջոցառման կարևորագույն նպատակներից մեկն էր նաև խոչընդոտել ու խաթարել քրդերի ապագա քաղաքական համախմբումն ու միավորումը։ Ընդ որում, այդ տեղահանությունները, ելնելով ունեցած փորձից, կատարվում էին այնպիսի ձևերով, որպեսզի ճանապարհներին հիվանդությունների, քաղցի և բռնությունների հետևանքով ոչնչանան հնարավորին չափ շատ մարդիկ։ Այլ կերպ ասած, տեղական իշխանություններին թելադրվում էր քրդերին կոտորել ճիշտ հայերին ոչնչացնելու ձևով։ Գոյություն ունեն հավաստի տվյալներ այն մասին, որ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ընդհանուր առմամբ տեղահանվեցին ավելի քան 700 հազար քրդեր, որոնց մոտ կեսը զոհվեց ճանապարհներին կամ ոչնչացվեց թուրքական բանակի ու ոստիկանության կողմից (480, էջ 9։ 469, էջ 76, 81)։

Իսկ մի շարք շրջաններում, որտեղ քրդերը աչքի էին ընկել իրենց «անհանգիստ վարքագծով», իթթիհադը որոշեց չդիմել տեղահանության տակտիկային, այլ պարզապես կանոնավոր բանակի միջոցով կոտորեց քուրդ բնակչությանը։

Երիտթուրքերը քրդերի նկատմամբ բնաջնջման այդ նույն քաղաքականությունը իրագործում էին նաև ռազմաճակատում, անխնա և միտումնավոր կերպով նրանց լցնելով պատերազմի հսկա մսաղացի մեջ։ Այս տեսակետից խիստ հատկանշական է հետևյալ փաստը. Սարիղամիշի ճակատամարտից հետո վերադառնալով Ստամբուլ, երիտթուրքական եռապետության անդամ, ռազմական մինիստր Էնվեր փաշան իթթիհադի կենտրոնական կոմիտեի նիստում հայտարարեց. «Թեև Սարիղամիշի ճակատամարտում մենք արտաքնապես պարտվեցինք, սակայն իրականում հաղթական էինք, որովհետև Սարիղամիշի անտառներից մինչև Էրզրում ձգվող ճանապարհների վրա թողեցինք մի քանի տասնյակ հազար քուրդ երիտասարդների դիակներ»։

Առաջին համաշխարհային պատերազմի ամբողջ ընթացքում իթթիհադական պաշտոնեության և սպայության հանգերգն

էր՝ «սկզբում կոտորել հայերին, իսկ այնուհետև հույներին և քրդերին»:

Անտարակույս 1914—1918 թթ. քուրդ ժողովուրդը մեծապես տուժեց նաև պատերազմի ընդհանուր արհավիրքների հետևանքով։ Սակայն, չնայած իր գործադրած բոլոր ջանքերին, երիտթուրքական կառավարությունն այնուամենայնիվ ի վիճակի չեղավ Քրդստանի և Արևմտյան Հայաստանի տարածքում բնաջնջել քրդերին, ինչպես դա հաջողվել էր անել հայերի նկատմամբ։

Քեմալականները սկզբնական շրջանում չէին խորշում սիրաշահել քրդերին։ Հույների և Հայաստանի դեմ պատերազմին մասնակցություն բերելու դիմաց նրանց խոստացել էին նույնիսկ Թուրքիայի հարավում հատկացնել մի որոշ տարածք (219, էջ 393)։ Այս դայթակղիչ խոստումների հետևանքով բազմաթիվ ականավոր քուրդ գործիչներ անցան Մուստաֆա Քեմալի կողմը և իրենց աջակցությունը բերեցին քեմալական շարժմանը։ Քեմալականների համար կենսական կարևորություն ունեցող խնդիր էր Հայաստանի և Քրդստանի տարածքների պահպանումը Թուրքական պետության շրջանակներում։ Դա հույժ կարևոր նշանակություն ունեցող գործ էր, որովհետև ինչպես հայերը, նույնպես և քրդերը իրենց օրինական պահանջներն էին ներկայացնում Արևմտյան Հայաստանի և Քրդստանի նկատմամբ։

Վերսալի կոնֆերանսում, գլխավորելով Թուրքական պատգամավորությունը, Շերիֆ փաշան իր վրայից հանեց Թուրքական պատգամավորի լիազորությունները և իրեն հայտարարելով Քրդստանի ներկայացուցիչ, բանակցություններ սկսեց Իրանի արտաքին գործերի մինիստրի հետ Իրանի հովանու ներքո Քրդստանի անկախության հռչակման վերաբերյալ։ Այնուհետև քրդերի անունից նա խաղաղության կոնֆերանսին երկու հուշագիր ներկայացրեց քրդերի պահանջների մասին (1919 թ. մարտի 22-ին և 1920 թ. մարտի 1-ին) «ամբողջական ու միասնական Քրդստանի» քարտեզով։ Շերիֆ փաշան բանակցություններ էր վարում նաև դաշնակցական պատգամավորության հետ, որի հետ համատեղ 1919 թ. դեկտեմբերի 20-ին հայտարարություն արեց խաղաղության կոնֆերանսին (239, էջ 44—45)։

1920 թ. Սևրի դաշնագրի մեջ մտցնելով հատուկ կետ Անտանտի հովանավորության ներքո ինքնավար Հայաստանի

և Քրդստանի ստեղծման մասին, իմպերիալիստական տերությունները հայ և քուրդ ժողովուրդներին շռայլում էին սին խոստումներ նրանց ազգային օջախը ստեղծելու և ազգային ինքնուրույնության դարավոր իղձը իրականացնելու վերաբերյալ։

1923 թ. Լոզանի կոնֆերանսում ամբողջ մերկությամբ բացահայտվեց իմպերիալիստական այս խաբեությունը։ Հայ և քուրդ ժողովուրդները կրկին ապրեցին դառն հուսախաբություն։

Հայտնի է, որ 1923 թ. Թուրքիայում հանրապետություն հռչակվելուց հետո քեմալականները ազգային փոքրամասնությունների նկատմամբ ընդունեցին բացահայտ շովինիստական դիրքորոշում, վարելով նույն «արյան ու երկաթի» քաղաքականությունը, ինչպես արյունոտ սուլթանի և իթթիհադականների օրոք։

Իսլամական համերաշխության շրջանակներում, որն օգտագործեց Մուստաֆա Քեմալը, քրդերը ակտիվորեն մասնակցեցին այսպես կոչված «անկախության համար պատերազմին», խաբվելով քեմալականների տված շռայլ խոստումներից։ Սակայն մի քանի տարի անց նրանք հասկացան, որ հանրապետական Թուրքիայի կառավարությունը մտադիր չէ իրագործել Թուրքիայի համար դժվարին ժամանակներում քրդերին տված իր խոստումները և այդ պատճառով ապստամբեցին կենտրոնական կառավարության դեմ։ Դրան հետևեցին սոսկալի հետապնդումներն ու համընդհանուր տեռորը։

Թուրքական ազգային բուրժուազիան երիտթուրքերից ժառանգեց ոչ միայն պանթուրքիզմը, այլև պետության ոչ թուրք ժողովուրդներին ճնշելու քաղաքականությունը։ «Իր կառավարման տարիներին Մուստաֆա Քեմալը քրդերին կոտորում էր այնպիսի դաժանությամբ, ինչպես սուլթանի թուրքերը կոտորում էին հույներին, հայերին և բուլղարներին։ Նրա ուղարկած «Անկախության տրիբունալները» կախում էին, գնդակահարում, բանտարկում հազարավոր անմեղ մարդկանց» (80, էջ 326)։ Այսպես կոչված «ժողովրդական տները» («հալք էվլերի») ոչ այլ ինչ էին, եթե ոչ երիտթուրքերի ժամանակ գոյություն ունեցող «թուրք օջախները»։ Դրանք «դեպի ազգային փոքրամասնությունները ատելություն սերմանելու, նրանց գոյությունը

բացառելու ոգով պրոպագանդիստական լայն գործունեություն էին ծավալել երիտասարդ սերնդի շրջանում (18, էջ 16)։

1919 թ. թուրք ազգայնականները արյան մեջ խեղդեցին հակաքեմալական քրդական առաջին շարժումը։ Այնուհետև դրան հետևեցին մի շարք այլ արյունոտ հաշվեհարդարներ։

Մուստաֆա Քեմալը կտրականապես մերժում էր հայերի և քրդերի անկախության իրավունքը (222, էջ 212)։ Դեռևս մինչև հանրապետության հռչակումը Բալըքեսիրի, Այդնի, Ադանայի, Տրապիզոնի բուրժուազգայնական կազմակերպությունների համագումարներում, ինչպես նաև 1919 թ. Էրզրումի և Սըվասի կոնգրեսներում, վերջապես թուրքական պառլամենտում ընդունված «Ազգայ'ն ուխտում» տարբեր առիթներով շեշտվում էր այդ հանգամանքը։ Հատկապես 1919 թ. հուլիսի 10—23-ը տեղի ունեցած Էրզրումի կոնգրեսում արևելյան վիլայեթների բոլոր մահմեդականներին Մուստաֆա Քեմալը հայտարարեց «միասնական ազգ», այսպիսով ժխտելով քուրդ ժողովրդի գոյությունը և նրա անկախության պահանջը։

«Արտահայտելով և պաշտպանելով թուրքական և մասնավորապես անատոլիական բուրժուազիայի շահերը քեմալականները հենց սկզբից հանդես էին գալիս քրդական ազատագրական շարժման դեմ։ ...Օտարերկրյա ինտերվենցիայի պայմաններում իշխանությունները չէին կարող քրդերի դեմ մղել բացահայտ և լայն պայքար, և այդ էտապում նրանց խնդիրն էր ոչ թե քրդական շարժման ճնշումը, այլ այն, որպեսզի ավատատերերին օգտագործեն հայերի ազատագրական շարժման դեմ» (239, էջ 45—46)։

Լոզանի կոնֆերանսում Թուրքիայի «երկրորդ մարդը» հորջորջված Իսմեթ Իննյունն ուղղակի հայտարարեց. «Քրդերը բոլորովին չեն տարբերվում թուրքերից, և խոսելով տարբեր լեզուներով, այդ երկու ժողովուրդները կազմում են միասնական զանգված ռասայի, հավատի և բարքերի առումով» (391, էջ 33։ 460, էջ 32—34)։ Նրան ձայնակցելով 1923 թ. Բուրսայում արտասանած ճառում Քեմալ Աթաթուրքը հայտարարում էր, որ հայերին ազգային օջախ տալու պահանջների մասին «մենք նույնիսկ չենք էլ խոսի...» (387, էջ 68)։

1923 թ. հուլիսի 24-ին ստորագրված Լոզանի պայմանագիրը վերջնականապես չեղյալ հայտարարեց այն պարտավո-

ությունները, որն իր վրա էր վերցրել նախորդ կառավարությունը։ Հայերի և քրդերի համար ազգային օջախ ստեղծելու մասին Լոզանի կոնֆերանսում Թուրքական հետադիմության և իմպերիալիստական տերությունների միջև ստեղծված «սրտագին» համաձայնությունը կոպիտ կերպով ոտնահարում էր Թուրքիայի ազգային փոքրամասնությունների իրավունքները։ Շահերի միասնության հողի վրա համաձայնության գալով քեմալականների հետ, իմպերիալիստական պետությունները հեշտությամբ մոռացության մատնեցին Սևրի պայմանագրով հայերին և քրդերին տված իրենց լայնահուն խոստումները, դրանով իսկ աջակցելով Թուրք բուրժուական ազգայնականներին իրենց տիրապետության տակ պահելու և յուրացնելու Արևմտյան Հայաստանն ու Քրդստանը։

Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա դրա լուծման համար Թուրքական կառավարող շրջանները գտան ամենապարզ և հեշտ ձևը. նրանք իսպառ ժխտեցին Թուրքիայում քուրդ ժողովրդի առկայությունը, քրդերին պարզապես հռչակելով «վեռնային Թուրքեր» և հետևողականորեն վարելով նրանց Թուրքացնելու քաղաքականություն։

1924 Թ. հանրապետական սահմանադրությունը Թուրքիայում բնակվող բոլոր քաղաքացիներին, անկախ նրանց ազգությունից, հայտարարում էր Թուրք։ Սահմանադրության 88-րդ հոդվածում ասվում էր, որ «Թուրքիայի ժողովուրդը առանց կրոնի և ցեղի խտրության, քաղաքացիական տեսակետից կոչվում է Թուրք» (482)։

Հանրապետական Թուրքիայի շովինիստական և համաձուլման քաղաքականությանը քուրդ ժողովուրդը պատասխանեց ազատագրական պայքարով։ Այս նոր էտապում այդ պայքարը թե գաղափարապես ու քաղաքականապես և թե կազմակերպչական առումով ավելի հասուն էր։ Այն վկայում էր, թե որքան խոշոր առաջընթաց է տեղի ունեցել քուրդ ժողովրդի ազգային ինքնագիտակցության զգացման մեջ։ 20—30-ական թվականներին տեղի ունեցան քրդական մի շարք զանգվածային ապստամբություններ, որոնք ցնցեցին Թուրքիայի բուրժուակալվածատիրական կարգերի հիմքերը։ 1925 Թ. պայթեց շեյխ Սայիդի ապստամբությունը։ 1927 Թ. հունիսին Թուրքիայի ազգային մեծ ժողովը օրենք ընդունեց քրդերին երկրի արևելյան վիլայեթներից տեղահանելու և արևմտյան վիլայեթներ

տեղափոխելու վերաբերյալ։ Այդ օրենքի համաձայն շեյխ Սա-
յիդի ապստամբությանը մասնակցած մի քանի հազար քրդերի
բռնի տեղահանեցին դեպի արևմուտք։

1927 և 1930 թթ. ապստամբեցին Իգդիր-Բայազետի շրջանի
քրդերը։ Այդ ապստամբությունը կազմակերպել էր 1927 թ.
ստեղծված քրդական ազգայնական «Խոյբուն» կազմակերպու-
թյունը, որը, ի դեպ, համագործակցում էր դաշնակցական կու-
սակցության հետ (422, էջ 53—54)։ «Խոյբունը» գլխավորում
էին բուրդ ժողովրդի շրջանում մեծ հեղինակություն վայելող
այնպիսի գործիչներ, ինչպիսիք էին Իհսան Նուրին, Ջալադաթ
և Քամուրան Բադրխանները, Մամդուխ Սալիմը, Կադրի Ջալիլ
փաշան, Հասան Խաջոն և այլք։

1930 թ. ամռանը ապստամբեցին Վանա լճի շրջանի քրդ-
երը։ 1930—1931 թթ. քրդական հուժկու ապստամբություն
բռնկեց Արարատ լեռան շրջանում։ Այդ ապստամբությունը
ճնշելուց հետո լեռան փեշերին թուրքերը կանգնեցրին մի հու-
շատախտակ, որի վրա գրված էր. «Այստեղ թաղված է քրդա-
կան անկախության գաղափարը» (390, էջ 19)։ Իզուր չէ, որ
թուրքական «Վաքթ» թերթը 1925 թ. մայիսին գրում էր. «Այն-
տեղ, որտեղ հայտնվում է թուրքական սվինը, քրդական հարցը
դադարում է գոյություն ունենալուց» (460, էջ 23)։

Բռնի ուժի հետ միաժամանակ, թուրքական կառավարող
շրջանները 30-ական թվականներին ընդունեցին մի շարք
օրենքներ, որոնք կոչված էին քրդերի մեջ մեռցնելու ազգա-
յին արժանապատվության ու ինքնագիտակցության, ինչպես
նաև ազգային պատկանելիության զգացումները, որոնց նպա-
տակն էր համաձուլել և թուրքացնել բուրդ զանգվածներին։ Այդ
օրենքներից մեկը արգելում էր նաև քրդերեն գիրն ու գրակա-
նությունը, քրդական տարազի կրումը և այլն։ Քրդերեն գրքե-
րը բռնագրավվեցին և այրվեցին։ «Քուրդ» և «Քրդստան» բա-
ները հանվեցին բոլոր դասագրքերից։ Այսուհետև դասագրքե-
րում քրդերի մասին խոսվում էր որպես «լեռնային թուրքերի»։

Թուրքական բուրժուական ազգայնականները քրդական
շարժումների նկատմամբ գաղանային հաշվեհարդարները իրա-
գործում էին «իմպերիալիզմի գործակալության» դեմ պայքա-
րի հնարովի նշանաբանի ներքո և «վայրենի ժողովրդին բռնի
ճանապարհով քաղաքակրթելու» պատրվակի տակ։ Անկարայի

կառավարությունը փորձում էր համաշխարհային հասարակական կարծիքը մոլորության մեջ գցել, պնդելով, թե իբր լինելով հետամնաց ու հետադիմական, քրդերը կատարում էին իմպերիալիստների կամքը, իբր նրանց ապստամբությունները կրոնական մոլեռանդության արդյունք են, հակահեղափոխական խռովություններ, որոնք ուղղված են քեմալական հեղափոխության դեմ, որ դրանք հայ «կոմիտաջիների գրգռություններին» հետևանքով բռնկված ապստամբություններ են կամ «բանդիտական շարժումներ» և այլն։ Իրականում այդ շարժումները քուրդ ժողովրդի հուսահատ փորձերն էին դիմադրավելու կառավարության կողմից իրագործվող ազգային ճնշման և սոցիալական հարստահարությունների քաղաքականությանը։ Այդ ապստամբությունների ժամանակ, անշուշտ, քուրդ ժողովուրդը փայփայում էր նաև թուրքական լծից ազատագրվելու հույսեր։

Թուրքիայի ազգային փոքրամասնությունների ազատաբաղձ ձգտումների դեմ պայքարելու նպատակով քեմալականները շատ հաճախ հակակառավարական շարժումները մեկնաբանում էին որպես կրոնական ռեակցիա Թուրքիայում կատարվող վարչակարգի աշխարհականացման նկատմամբ։ Այդ նույն նպատակն էր հետապնդում նաև մի շարք օրենսդրական ակտերի ընդունումը։ Այսպես, օրինակ, 1932 թ. ամռանը մեջլիսը օրինագիծ նախապատրաստեց նստակեցության մասին, որը հիմնականում ուղղված էր քրդերի դեմ։ Բայց նրանում կային հոդվածներ, որոնք վերաբերում էին նաև հայերին, հույներին, հրեաներին և այլոց (18, էջ 19)։ Ըստ 1934 թ. մեջլիսի ընդունած օրենքի, ներքին գործերի մինիստրը իրավունք էր ստանում փոխել տարբեր ժողովուրդների բնակավայրերը, առաջնորդվելով այն սկզբունքով, թե այս կամ այն ժողովուրդը որքանով է «ընտելացել» թուրքական մշակույթին (235)։

1936 թ. մեջլիսի նիստում Քեմալ Աթաթուրքը շեշտեց, որ երկրի առջև կանգնած բոլոր պրոբլեմներից թերևս ամենակարևորը քրդականն է։ Եվ ըստ այնմ նա կոչ արեց՝ «մեկ անգամ ընդմիշտ վերջ տալ դրան» (422, էջ 59)։ Չանցած երկու տարի, 1938 թ. ամռանը ներքին գործերի մինիստր Ջելալ Բայարը հայտարարեց, որ Թուրքիայում արդեն գոյություն չունի քրդական պրոբլեմ (436, էջ 83)։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին թուրքական կառավարող շրջանները, պատրաստվելով որպես ֆա-

շիտական Գերմանիայի դաշնակից պատերազմի մեջ մտնել, աշխատում էին թիկունքն ապահովել անբարեհույս քրդական տարրից (143, էջ 397)։ Ամենուրեք ծայր առան «կասկածելի» քրդերի «մաքրազարդումներ»։ Բացի այդ, 1942 թ. նոյեմբերին Թուրքական մեջլիսն ընդունեց հարկային մի նոր օրենք՝ ունեցվածքային հարկ (varlik vergisi), որն առավելապես ուղղված էր ազգային փոքրամասնությունների, այդ թվում նաև քրդերի դեմ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո Թուրքիայի կառավարող շրջանները հետևողականորեն շարունակում էին ազգային փոքրամասնությունների իրավունքները ոտնահարելու, նրանց ճնշելու, համաձուլելու, դասակարգային և ազգային ինքնագիտակցության պրոցեսը արգելակելու քաղաքականությունը։

Թուրք ազգայնականները հետպատերազմյան շրջանում ևս հանդերգում էին, որ բուրդ ժողովուրդ գոյություն չունի։ «Սոն պոստա» թուրքական թերթը, օրինակ, գրում էր. «Թուրքիայում երբեք չի եղել քրդական փոքրամասնություն՝ ո՛չ նստակյաց, ո՛չ բոշվոր, ո՛չ դիտակից, ո՛չ էլ անդիտակից» (18, էջ 22)։

1960 թ. մայիսի 27-ի ռազմական հեղաշրջումից և Բայար-Մենդերեսի տիրապետության տապալումից հետո 1961 թ. Թուրքիայում ընդունվեց նոր սահմանադրություն, որը փոխարինելու էր գալիս 1924 թ. սահմանադրությանը։ Սակայն այն ևս ամբողջապես ներծծված էր ազգային փոքրամասնությունների նկատմամբ շովինիզմի թույնով։ Նրա 54-րդ հոդվածը Թուրքիայի բոլոր բաղաքացիներին հռչակում էր «անխառն» թուրք, որպես թուրանական մի ցեղ կամ թուրք օղուզների մի ճյուղ (220, էջ 312)։ Այն բաղաքացիները, որոնք հանդես կգային այդ ազգայնական տեսակետին հակասող հայացքներով, ըստ 1961 թ. սահմանադրության, ենթակա էին պատժի (31, էջ 256)։ Սա անշուշտ մեկ անգամ ևս վկայում էր այն մասին, որ ազգային փոքրամասնությունների հարցում Թուրքիայում գործում է հաջորդականության սկզբունքը։

Քրդերին մեղադրելով «անջատողական, պառակտիչ ձգտումներ» ունենալու մեջ, թուրքական բանակը, ժանդարմերիան և «կոմանդոս» պատժիչ զորամասերը պարբերաբար դաժան հաշվեհարդարներ էին տեսնում այդ ժողովրդի հետ։ Դրանք իրենց ձևերով ու մեթոդներով հիշեցնում էին Օսմանյան կայ-

սրբության շրջանում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված բիրտ ու սանձարձակ կամայականությունները և գազանային կոտորածները։ Փաստերը վկայում են, որ բնավ չի փոխվել նաև ժամանակակից պանթուրքիստների մարտնչող ազգայնական և շովինիստական մտայնությունը և նրանց օգտագործած միջոցները։ Այսպես, օրինակ, հայտնի ռասիստ-պանթուրքիստ Նիհալ Ատսըզը Թուրքիայի քրդերին սպառնում էր հայերի նկատմամբ կիրառված գենոցիդով։ «Դեռևս Թուրք ազգի գլխին փորձանքներ չփաթաթած, իրենք ևս անհետ չկորած, Թող հեռանան գնան,— գրում է նա։— Հարցնելու եք Թե ո՞ւր։ Թող գնան ուր որ կուզեն։ Թող գնան Իրան, Պակիստան, Հնդկաստան կամ Բարզանու մոտ։ Թող դիմեն ՄԱԿ-ին և իրենց համար հող պահանջեն Ամերիկայում։ Այն մասին, Թե Թուրք ցեղը որքան համբերող է, բայց զայրանալու դեպքում Թե ինչպես չի կարելի կանգնել նրա առաջ ինչպես առյուծի, Թող հարցնեն իրենց ցեղակից հայերին, իմանան ու զգաստանան» (31, էջ 268։ 311, էջ 38)։

Թուրքական աջ մամուլը և պանթուրքիստները նույնիսկ առաջարկում էին «Միջին Ասիայից Թուրքալեզու զինված ժողովուրդներ բերել և բնակեցնել քրդերի մեջ» (31, էջ 268)։

Ներկայումս Թուրքական հրատարակություններում ընդունված է Արևմտյան Հայաստանի և Քրդստանի տարածքը անվանել ոչ Թե իրենց պատմական-իրական անվանումով, այլ ոչինչ չասող Արևելք բառով։

1965 Թ. Թուրքիայում ընդունվեց օրենք քաղաքական կուսակցությունների մասին, որն արգելում է ստեղծել «ազգային փոքրամասնություններին համախմբող, ինչպես նաև ռեգիոնալ կուսակցություններ»։ Միանգամայն հասկանալի է, որ այդ և նման օրենքները կոչված են արգելակել քրդերի և մյուս ազգային փոքրամասնությունների դասակարգային ու ազգային ինքնագիտակցության ձևավորման պրոցեսը (311, էջ 40)։

Ներկայումս քրդերի նկատմամբ իրականացվող հալածանքները և ձերբակալությունները ուղեկցվում են հակակոմունիստական կամպանիայով, Թե իբր «կոմունիստները գրգռում են քրդերին, ուզում են երկիրը բաժան-բաժան անել» (31, էջ 267։ 328)։

1980 Թ. սեպտեմբերի 12-ի զինվորական հեղաշրջումից

հետո Թուրքական իշխանությունները քուրդ բնակչության դեմ սանձազերծեցին զանգվածային տեռորի քաղաքականություն։ Ինքնավարության, ազգային ինքնության մասին քրդերի հարցադրումները Թուրքական զինվորականները դիմավորում են սվիններով, կախաղաններով, դատական պրոցեսները հաջորդում են մեկը մյուսին։ Մեկ քրդերին հռչակում են «լեռնարնակ Թուրքեր», մեկ՝ «բարբառով խոսող» Թուրքեր։ Վերջին ձևակերպումը կրկնեց Թուրքիայի նախկին պրեզիդենտ Քենան Էվրենը, արհամարելով և՛ պատմության, և՛ լեզվագիտության, և՛ ազգագրության գիտական հիմքերը։ Քրդերին համարելով Միջին Ասիայից եկած Թուրքական ցեղերի ճյուղավորումներից մեկը, նա ոտնահարեց բոլոր տարրական ճշմարտությունները։

1981 թ. մայիսի 28-ին Ամասիա քաղաքում Աթաթուրքի հուշարձանի բացման արարողության ժամանակ արտասանած ճառում Էվրենը «... սպառնում էր քրդերին, լազերին, ալևիներին և այլոց, որոնք իրենց Թուրք չեն համարում և նույնիսկ կգործակցեն հայ ահաբեկիչներու հետ» (76, 7 հունիսի 1981թ.)։

Քենան Էվրենը հայտարարել է, թե «Թուրքիայի դեմ օգտագործվում են միջազգային կոմունիզմի հորինած այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են հայկական և քրդական պրոբլեմները»։ «Որոշ հայեր արտասահմանում վերածվել են միջազգային կոմունիզմի խամաճիկների,— հայտարարում է նա։— Ինչ վերաբերում է քրդական հարցին, ապա Թուրքիայում Թուրքերի և քրդերի միջև սեգրեգացիա երբեք չի եղել։ Նրանցից ոմանք երբեմն դարձել են հակապետական օբյեկտ արտասահմանից կատարվող հրահրումների հետևանքով» (80, էջ 421—422)։

«Քուրդ ժողովրդի ծաղիկ երիտասարդությանը կախում են, գնդակահարում, ոչնչացնում միայն այն բանի համար, որ նրանք դիտակցել և կռվում են սեփական հայրենիքի գաղափարի համար» (80, էջ 424)։

Մեր օրերում Թուրքիայում քրդերի ազգային հալածանքների, շահագործման և բռնի Թուրքացման քաղաքականությունը բախվում է քուրդ ժողովրդական զանգվածների աճող դիմադրության հետ։ Այն ուղղված է ինչպես Թուրքական բուրժուազիայի, այնպես էլ տեղական ավատական-ցեղային վերնախավի դեմ։ Այդ շարժմանը իրենց գործուն մասնակցությունն են բերում քուրդ ժողովրդի ամենատարբեր խավերը։

Ինչպես տեսնում ենք, վերին աստիճանի բարդ ու հակա-

սական է եղել հայ և քուրդ ժողովուրդների անցած պատմական ուղին։ Մարդկության նորագույն պատմության նախաշեմին բոլոր ճնշված և իրավազուրկ ժողովուրդների պատմական ճակատագրում տեղի ունեցան արմատական տեղաշարժեր և բախտորոշ նշանակություն ունեցող իրադարձություններ։

Հայ ժողովուրդը ևս կարողացավ կերտել իր նորոգ հայրենիքը՝ Խորհրդային Սոցիալիստական Հայաստանը։ Խորհրդային Միությունում, այդ թվում նաև Խորհրդային Հայաստանում բնակվող քրդերը ևս ստացան զարգանալու և բարգավաճելու մեծ հնարավորություններ և այժմ նրանք հսկայական նվաճումներ են ձեռք բերել տնտեսական և կուլտուրական շինարարության բնագավառում։

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քուրդ ժողովրդի պատմության հարցերին քաշատեղյակ ռուս գինվորական Բենդենդրը իրավացիորեն նշում է, որ «քրդական ցեղի տարածումը այն երկրամասի սահմաններից շատ հեռու, որը ծառայել է որպես այդ ժողովրդի ձևավորման օջրան, խիստ դժվարացնում է Քրդստան աշխարհագրական հասկացության որոշումը» (226, էջ 1)։

Դրականության մեջ Քրդստան հասկացությունը գործածվել և մեր օրերում էլ գործածվում է ոչ որպես որոշակի քաղաքական սահմաններ ունեցող պետական կազմավորման իմաստով, այլ որպես աշխարհագրական մի տարածք, ուր բնակվել է քրդական էթնոսը։ Դա առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ քուրդ ժողովրդին, իր անցած պատմական զարգացման ընթացքում, ոչ մի անգամ չի հաջողվել ստեղծել սեփական պետականություն։ Քրդստանի տարածական չափերը տարբեր ժամանակներում և տարբեր հետազոտողների կողմից նկատի են առնվել տարբեր մոտեցումներով։ XIX դարում, առաջնորդվելով իրենց որդեգրած հակահայ քաղաքականության շահերով, Թուրքական կառավարող շրջանները Արևմտյան Հայաստանը սկսեցին անվանել Քրդստան։ Անգլիական քաղաքագետները, որոնք մտահոգված էին արևմտահայության ռուսասիրական ձգտումների բուռն վերելքից, սիրով ընդօրինակեցին Թուրքական դիվանագիտության այդ հնարքը։

Արևմտյան Հայաստանի և Քրդստանի աշխարհագրական սահմանները նշելիս, դժվարությունը հիմնականում կայանում է նրանում, որ այսպես կոչված Թուրքական Քրդստանում բնակվում էր հայերի նշանակալի զանգված, իսկ Արևմտյան Հայաստանում ապրում էին զգալի քանակությամբ քրդեր։ Մինչհեղափոխական գրականության մեջ այն հողերը, որոնք գտնվում էին Վանա լճի ավազանից հյուսիս և հյուսիս-արևմուտք, սովորաբար անվանել են Արևմտյան Հայաստան, երբեմն էլ Թուրքահայաստան (որն ի դեպ անընդունելի տերմին է), Հայկական վիլայեթներ, երբեմն նաև «Մեծ Հայաստան»։ Իսկ այն տարածքները, որոնք տարածվում էին այդ լճից հարավ և հարավ-արևմուտք կոչվել են Թուրքական Քրդստան (273, էջ 25)։

Սևրի պայմանագրով Հայաստանի և Քրդստանի սահմանները որոշելիս Անտանտի իմպերիալիստները Քրդստանի կազմի մեջ են մտցրել նաև մի շարք նահանգներ՝ օրինակ, Խարբերդի և Դիարբեքիրի (Տիգրանակերտ), որոնք և՛ աշխարհագրական, և՛ էթնիկական տեսակետից Հայկական լեռնաշխարհի և Հայաստանի անբաժանելի մասն են (տե՛ս 481)։ Անդրադառնալով Քրդստա-

նի աշխարհագրական տեղակայման հարցին, անվանի պատմաբան Ն. Ադոնցը գրում է. «Հայտնի է, որ Քրդստանը գտնվում է Տիգրիս և ոչ թե Եփրատ գետի արևելյան մասում և տարածվում է մինչև Զագրոսյան լեռները և այնուհետև Պարսկաստան՝ մինչև Արդելան նահանգը։ Իսկ Եփրատից արևելք, Ֆրանսիական սահմանի (նկատի ունի Սևրի պայմանագրով նախագծված սահմանը։— Վ. Բ.) երկայնությամբ, որն անցնում է Ուրֆայի և Մարդինի վրայով, գտնվում է ոչ թե Քրդստանը, այլ Աբգարյան թագավորների հնագույն երկիրը՝ Ուրֆա կամ Եդեսիա կենտրոնով։ Այն գրավում էր պատվավոր տեղ վաղ քրիստոնեության տարեգրության մեջ։ Նույնիսկ այժմ, ունենալով տարասեռ բնակչություն, այն չի կարող համարվել Քրդստան» (217, էջ 20)։

Առաջնորդվելով պատմական, էթնիկական, տնտեսական, մշակութային և այլ գործոններով, քուրդ ժողովրդի բնօրրան պետք է համարել աշխարհագրական այն տարածքը, որն իր մեջ ընդգրկում է ժամանակակից Իրաքյան և Իրանական Քրդստանի տարածքը, ներառյալ նաև Լորեստանի հարթությունները։ Հենց այս շրջաններից էլ XV—XVI դարերից սկսած տեղի է ունեցել քրդական ցեղերի ներհոսքը դեպի Արևմտյան Հայաստան։

Ն. Ադոնցի կարծիքով, ելնելով քրդերի բնակեցման ազգագրական սահմաններից, Քրդստան աշխարհագրական հասկացության մեջ պետք է մտցնել Զագրոս լեռնաշղթայի երկարությամբ ընկած ողջ լայնածավալ բարձրավանդակը, Ուրմիա լճից ու Բոհթան գետից սկսած, ներառյալ նաև Լորեստանի հարթությունները և Տիգրիսին հարող հովիտները արևմուտքում և Դիզֆուլի հարթությունները արևելքում (217, էջ 59, 61)։

2. Ռայա կամ ռայաթ տերմինը բառացիորեն նշանակում է անասունների հոտ, իսկ բառի լայն առումով նպատակ (245, էջ 15)։

3. Միջին դարերում եզիդիներին անվանում էին նաև դասեճի։

4. Քյաֆիր արաբերեն բառ է, նշանակում է անհավատ, անաստված։ Այսպես էին մահմեդականներն անվանում բոլոր ոչ մահմեդականներին։

5. Ֆելա բառով իբրև նախատական, արհամարհական ածական քուրդ աղաները և բեկերը անվանում էին մարաբա հայերին։ Ամեն աղա ուներ բազմաթիվ ֆելաներ, կամ միևնույնն է թե ստրուկ, ճորտ ընտանիքներ։

6. Դերսիմը հայկական բարձրավանդակի անբաժանելի մասն էր։ Այն ընկած է Եփրատի արևելյան կողմում և Կամախի հարավային մասում։ Դերսիմի մեջ էին մտնում Խոզաթի, Զարսանջակի և Ջմշկածագի շրջանները։ Ունենալով լեռնային և դժվարամատույց դիրք, Դերսիմը համարվում էր անառիկ մի ամրոց։ Դերսիմում, հայերի կողքին բնակվում էր ալի-իլլահի (ալևի) դավանանքին հարող բնակչություն։ Նրանք իրենց անվանում էին «ճշմարտության մարդիկ» (տե՛ս 298։ 165։ 166)։ Թուրքերը նրանց կոչում էին զզլբաշ, իսկ հայերը՝ տուժիկ։ Նրանք խմբավորված էին գլխավորապես հետևյալ վայրերում. դժվարամատչելի լեռնային Դերսիմի շրջանում, Մուրադ (Արածանի) գետի հովտում Էրզինգյանի և Խարբերդի միջև, Բինգյոլ-դաղ լեռների հարավում՝ Վարդո կաղայում։ Ոչ մեծ թվով զզլբաշներ էին ցրված նաև Էրզրումի, Մուշի, Խնուսի, Ճապաղջրի, Արաբկիրի, Մալաթիայի և Մարաշի շրջաններում։ Դերսիմցիներն ապրում էին հարևան մահմեդական քրդերից առանձնացած և անընդհատ պայքարում էին իրենց անկախությունը պահելու համար։

Ղզլբաշները դավանում էին մի կրոն, որը տարբերվում է ինչպես քրիստոնեությունից, այնպես էլ մահմեդականությունից։ Նրանց կրոնը, ըստ էության, քրիստոնեության, մանիքեականության և շիականության մի յուրատեսակ համաձուլում էր։ Մի շարք հետազոտողներ ղզլբաշներին սխալմամբ համարել են քրդեր։ Ն. Ադոնցը, օրինակ, գտնում է, որ ղզլբաշները աղանդավորական մի համայնք են, որը կազմվել է պավլիկյան շարժման հետևանքով։ Նրա կարծիքով տուժիկ հայկական անվան տակ պետք է հասկանալ աղանդավոր, իսկ Դերսիմ անվանումը պետք է մեկնաբանել որպես «աղանդավորների երկիր» (Դյուզ հնագույն Դյուրզ անվանումից, այստեղից էլ Դյուրզաանա և համապատասխանաբար Դյուրիսիմ արաբական ձևը)։ «Պավլիկյան շարժման աղանդավորները,— գրում է Ն. Ադոնցը,— գրավում էին մի տարածք, որն ընկած էր Դերսիմի լեռներից մինչև Խարբերդ հասնող տարածությունների միջև։ Բյուզանդիայի ճնշման տակ նրանցից ոմանք միացան պաշտոնական եկեղեցուն և մինչև օրս ապրում են Ակնի (Էգինի) տարածքում ոմանք կամ քաղքեդոնական հայեր անվան տակ» (217, էջ 16)։ Ն. Ադոնցը նկատում է նաև, որ ղզլբաշների ավանդույթներն ու սովորությունները նրանց ավելի են կապում քրիստոնյաների հետ, քան մահմեդականների։ Ղզլբաշների «...աղդային խառնվածքը և խաղաղասեր բարքերը նրանց ուժգին կերպով տարբերում են քրդերից։ Ոչ մի հիմք չկա դրանց, մասամբ քրիստոնյա տարրերին, քրդական ծագում վերագրելը»,— եզրակացնում է Ն. Ադոնցը (217, էջ 16)։

Հատկանշական է, որ Դերսիմի ղզլբաշների ներքին կյանքը և նրանց հակակառավարական շարժումները XVI դարից սկսած գնում էին ուրույն ուղիներով, միանգամայն անջատ Օսմանյան կայսրության քրդական զանգվածների շարժումներից։

7. Գ. Սրվանձտյանցը «Հնոց և նորոցում» բերում է «Քեշն Պոլս» գրույցը, որը ժողովրդական հերոսապատումներից մեկի գրառումն է։

8. 1844 թ. Մատթեոս եպիսկոպոս Զուհրաբյանը ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք, այդ պաշտոնում մնալով մինչև 1848 թ.։

9. Վարկած կա այն մասին, որ Բաղրխանին իր Ջեզիրեի Օրագ ամրոցում ձերբակալել են Վանի հայերը և հանձնել Օսման փաշային (տե՛ս 7, էջ 458)։

10. Բաղրխանը մահացավ Դամասկոսում 1868 թ. աքսորում գտնվելու ժամանակ (տե՛ս 469, էջ 60)։

11. Սեյիդներ էին անվանում Մուհամմեդ մարգարեի դուստր՝ Ֆաթիմայի և նրա փեսա Ալիի հետնորդներին։

12. Առավել հայտնի դերվիշական միաբանություններ էին Նաքշբանդի, Կադիրի և Ռեֆայի միաբանությունները։

13. Օրինակ, երբ միջնադարյան արյունախանձ կռիվների ժամանակ քրդերը սպանում էին միմյանց, հաճախ չկարողանալով իրենց թշնամիներից վերցնել արյան դին, նրանք այն բռնի կերպով վերցնում էին հայերից (տե՛ս 38, էջ 62)։

14. «Վանդոյժը» տպագրվեց Կ. Պոլսում 1877 թ. հունվարին, սակայն կառավարության հրամանով այն արգելվեց վաճառել։

15. Եամդինանը Վասպուրականի նահանգի Աղբակի շրջանի մեջ մտնող գյուղաքաղաք էր։

16. Օբեյդուլլան ըստ երևույթին նկատի ուներ 1856 թ. «Հաթթը-Հումայունը» և Թանզիմաթի այլ բարեփոխումները, որոնք որոշ չափով սահմանափակել էին քուրդ ավատատերերի իշխանությունը։

17. Գրականության մեջ տեղ գտած այն տեսակետը, թե Սիմեոն Զիլինկիրյանը ինքն էր ազդել Օբեյդուլլայի վրա, որպեսզի վերջինս քրիստոնյաներին շարդելու հրաման չարձակի, մեր կարծիքով հարցի նկատմամբ միակողմանի ու խիստ սահմանափակ մոտեցում է։

18. Օսմանյան կառավարության դեմ առաջիկա պայքարում Ռուսաստանի աջակցությունը ստանալու նպատակով, իր փախուստից հետո Օբեյդուլլան ոմն Ալի Ղասեմ օղլու միջոցով բանակցություններ վարեց Կ. Կամսարականի հետ։ Սակայն ռուսական դիվանագիտական շրջանները առաջվա պես հավատ չընծայեցին շեյխի առաջարկություններին (տե՛ս 160)։

19. Նկատի ունի նաև Արևմտյան Հայաստանը։

20. Սասունի շարքը կազմակերպելու իր «ծառայությունների» համար մուշի Զեքի Փաշան ստացավ «Նիշանի իմթյազ» շքանշանը (275, էջ 102)։

21. Բշարե խալիլի զոհերից էր նաև հայդուկային շարժման մասնակից Աղբյուր Սերոբը։ Այդ ֆեոդալի չարագործություններին վերջ տվեց Անդրանիկը։

22. Նրա առաջին հրատարակիչն էր Բադրխանների ընտանիքից Միդհատ բեկը, այնուհետև նրա եղբայրը՝ Արդուրրահմանը։

23. Դատելով նրանում առաջ քաշված խնդիրներից, կարելի է ենթադրել, որ «կոշի» հեղինակն էր «Քրդստան» թերթի հրատարակիչ Արդուրրահման Բադրխանը։

24. Հատկանշական է, որ քեմալականները ևս չվերացրին համիդիե գնդերը, նպատակ ունենալով օգտագործել դրանք իրենց նվաճողական նպատակների համար։ Համիդիեների հիմնական զանգվածը կենտրոնացված էր արևելյան ճակատում, որի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան մտադիր էր նրանց օգտագործել Հայաստանի դեմ զավթողական պատերազմում, Անդրկովկասի ժողովուրդների դեմ ագրեսիայում, ինչպես նաև քրդերին հնազանդեցնելու գործում (տե՛ս 238, էջ 55)։

25. 1919 թ. Ստամբուլում տեղի ունեցավ «Քրդստանի վերածնության ընկերության» («Քուրդիստան թեալի ջեմիեթի») նիստը, որի նախագահն էր Արդուլ Ղադերը։ Նիստում ընկերության անդամ երիտքրդերը պահանջեցին որոշում ընդունել Քրդստանի անկախությունը հռչակելու և նրա տարածքից բոլոր օտարերկրյա, այդ թվում նաև թուրքական զորքերի վտարման մասին։ Սակայն Արդուլ Ղադերը կտրուկ հանդես եկավ այդ առաջարկի դեմ, գտնելով, որ քրդական շարժմանը սաղական չէ թուրքերի համար այդպիսի դժվարին պահին հանդես գալ նրանց դեմ։ Ավելին, նա պնդեց, որ անհրաժեշտ է օգնություն ցույց տալ թուրքերին և ընկերության երիտասարդ անդամներին խորհուրդ տվեց մեկնել Արևմտյան Հայաստան և այնտեղ պայքար մղել հայկական ազգային պետություն ստեղծելու փորձերի դեմ, հավաստիացնելով, որ սուլթանը կկատարի իր խոստումը քրդերին ինքնավարություն տալու վերաբերյալ (տե՛ս 238, էջ 44։ 411, էջ 120—121)։

26. Օրինակ, Վանի շրջանում հայ հայդուկները սպանեցին Կարճկանի Մուսա բեյին, որը կոտորել էր մեծ թվով հայերի և անլուր հարստահարությունների էր ենթարկում հայ գյուղացիությանը։

27. Սելիդ Ալին Խիդանի նշանավոր շեյխերից էր։ Նա 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ արևմտահայության նկատմամբ իր խժդժություններով հոչակ ձեռք բերած շեյխ Զալալեդդինի թոռն էր։ Մինչև երիտթուրքական հեղաշրջումը շեյխ Սելիդ Ալին ևս խիստ թշնամական վերաբերմունք ուներ հայերի նկատմամբ և կառավարությանը օգնում էր հայ հեղափոխական շարժումները խեղդելու գործում։ Սակայն երիտթուրքական հեղաշրջումից հետո նրա մոտ ի հայտ եկան հակակառավարական տրամադրություններ։ 1911 թ. շեյխ Սելիդ Ալին հանդես եկավ որպես «այս հողը մեր հողն է» («էվ խուլլի-խուլլի յամալեա») շարժման կազմակերպիչներից մեկը։ Նա գտնում էր, որ թուրքերը բնավ ի վիճակի չեն կառավարելու Արևմտյան Հայաստանում և Քրդստանում (տե՛ս 213)։

28. Թուրքական գործակալներից մեկն էլ ապստամբներին դավաճանած շեյխ Ռաշիդն էր, շեյխ Սելիդ Ալիի եղբայրը։

29. Մոլլա Սելիմը Բիթլիսի ռուսական հյուպատոսարանում մնաց մինչև համաշխարհային պատերազմի սկսվելը։ Պատերազմը բռնկելուց հետո թուրքերը խախտեցին դիպլոմատիական ներկայացուցիչների անձեռնմխելիության իրավունքը, մտան հյուպատոսարան և ձերբակալելով մոլլա Սելիմին՝ կախեցին Բիթլիսի քաղաքային հրապարակում։

30. «Ժամանակակից Թուրքիա» տեղեկատուում նշվում է, որ ներկայումս Թուրքիայում «հայերը, ինչպես և մյուս ազգային փոքրամասնությունները, հանախ թաքցնում են իրենց ազգային պատկանելիությունը» (տե՛ս 60, էջ 35)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

ՀԽՍՀ ՊԿՊԱ— Պետական կենտրոնական պատմական արխիվ։
Մատենադ.— Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան)։

АВПР — Архив внешней политики России.
АКАК—«Акты, собранные Кавказской археографической комиссией».
ЗКОИРГО —«Записки Кавказского отделения Императорского Русского географического общества».
ИИРГО — «Известия императорского русского географического общества».
ИКОИРГО —«Известия Кавказского отдела Императорского русского географического общества».
ИШКВО —«Известия штаба Кавказского военного округа».
КСИНА — Краткие сообщения института Народов Азии АН СССР.
МОЭИ — Международные отношения в эпоху империализма.
СГТСМА —«Сборник географических, топографических и статистических материалов по Азии».
СС — Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой.
ССМВМФ —«Сборник сведений и материалов по ведомству министерства финансов».
ЦГВИА — Центральный государственный военно-исторический архив.
ЦГИА Груз. ССР—Центральный государственный исторический архив Груз. ССР.

JRGS — "Journal of the Royal Geographical Society".
RCAJ —Royal Central Asian Journal.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Լենին Վ. Ի., Երկերի լիակատար ժողովածու, 5-րդ հրատ., հ. 17։
2. Աբովյան Խ., Քրդեր և եզիդիներ, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 8, Ե., 1958։
3. Ա-Դ«, Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Ե., 1912։
4. «Ազատամարտ» թերթ, Կ. Պոլիս։
5. Ազգային տեսություն։ Արևելյան խնդիրը և հայերը (ա. տ. և հ. թ.)։
6. Ագիդյան Մ., Հերոսական Շատախի Արմաշտ գյուղը, Բեյրութ, 1974։
7. Այպոյանեան Ա., Պատմական Հայաստանի սահմանները, Գահիրէ, 1950։
8. Այպոյանեան Ա., Պատմութիւն Եւդոկիոյ Հայոց, Գահիրէ, 1952։
9. Ակունի Ս., Միլիոն մը հայերու շարդի ամբողջական պատմությունը (1914—1918), Կ. Պոլիս, 1921։
10. Ահնյան Հ., Հայոց հայրիկ, Թավրիզ, 1929։
11. Այրարատեան քրդերեն և հայերեն («Ալիֆպեհիլ գուրմանջի ու արմենի»), Կ. Պոլիս, 1860։
12. Ամենայն հայոց հայրիկ, Պոսթըն, 1957։
13. Այվազովսքի Դաբրիել, Պատմութիւն օսմանեան պետութեան, Վենետիկ, 1841։
14. «Անահիտ», ամսագիր, Փարիզ։
15. Անասյան Հ., Թուրքական տիրապետությունը Հայաստանում XVII դարում, ՀԽՍՀ ԳԱ «Տեղեկագիր», № 5, 1951։
16. Անդրանիկ, Տերսիմ. Ճանապարհորդություն և տեղագրություն, Թիֆլիս, 1901։
17. Առաքելյան Հ., Քրդերը իրենց տանը։ «Ազգագրական հանդես», Թիֆլիս, № 2, Դիրք Դ, 1898։
18. Ավանեսով Ս. Ս., Թուրքիայի կառավարող շրջանների ազգային քաղաքականության մի քանի հարցերի շուրջ, ՀԽՍՀ ԳԱ տեղեկագիր (հասարակական գիտություններ), № 7, 1964։
19. Աստրան, Ճիվաղը։ Քյոռ Հյուսեին փաշա քուրդը, Թիֆլիս, 1911։
20. «Արարատ», ամսագիր, Վաղարշապատ, № 3, 1889։
21. «Արծուի Վասպուրական», Կ. Պոլիս։
22. «Արծագանք», Թերթ, Թիֆլիս։
23. «Արմենիա», Թերթ, Մարսել։
24. «Արշալույս Արարատյան», Թերթ, Զմյուռնիա։

25. «Արօր», 1910, № 6—7, էջ 177—187։
26. Բայբուրդյան Վ. Ա., Թուրք-իրանական հարաբերությունները (1900—1914), Ե., ԳԱ հրատարակչություն, 1974։
27. «Բարենորոգումները Հայաստանում։ Ժողովածու դիպլոմատիքական դոկումենտների», Թիֆլիս, 1915։
28. «Բաքվի ձայն», թերթ, Բաքու։
29. Բդեան Սարգիս և Միսակ, Հարազատ պատմութիւն Տարօնոյ, Գահիրէ, 1962։
30. «Բյուզանդիոն», թերթ, Կ. Պոլիս։
31. Գալստյան Հ. Հ., Քրդական հարցի արտացոլումը ժամանակակից թուրքական մամուլում։ «Մերձավոր և Միջին արևելքի երկրներ և ժողովուրդներ», VII, Քրդագիտություն, Ե., ԳԱ հրատարակչություն, 1975։
32. Գանգրունի Հ., Հայ հեղափոխությունը օսմանյան բռնատիրության դեմ, Բեյրութ, 1973։
33. Գարո Արմեն, Ապրված օրեր, Պեյրութ, 1948։
34. Գյուղալյան Գ., Խրիմյան Հայրիկ, Պեյրութ, 1954։
35. Գուշակյան Թ., Խրիմյան հայրիկ, Փարիզ, (ա. թ.)։
36. Դավրիժեցի Առաքել, Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, սակս դիպուածոց Հայաստանեայց և գաւառին Արարատայ և մասին Գողթան գաւառի սկսեալ ի ՌԾԱ թուականին հայոց մինչ ի ՌՃԺԱ թ., Վաղարշապատ, 1896։
37. «Դիւան հայոց պատմութեան», գիրք ժ, Թիֆլիս, 1912։
38. Դիվան հայոց պատմության։ Հարստահարություններ Տաճկահայաստանում։ Վավերագրեր 1801—1888, հատ. ԺԳ, Թիֆլիս, 1893։
38ա. «Դրօշակ», թերթ, ժնև, 1899 թ., № 2։
39. «Դրօշակ», 1901, № 4 (115)։
40. «Դրօշակ», 1901, № 5 (116)։
41. «Դրօշակ», 1901, № 7 (118)։
42. «Դրօշակ» 1903, № 7։
43. «Դրօշակ» 1904, № 6 (147)։
44. «Դրօշակ», 1904, № 11 (152)։
45. «Դրօշակ», 1908, № 9 (189)։
46. «Դրօշակ», 1908, № 10 (196), օգոստոս։
47. Երամեան Հ., Ցուշարձան Վան-Վասպուրականի, հ. հ. Ա, Բ, Աղեքսանդրիա, 1929։
48. Երեւանեան Գ. Ս., Պատմութիւն Զարսանեցագի հայոց, Պէյրութ, 1956։
49. «Երկրի ձայնը», Թիֆլիս։
50. Զարեանդ, Ինչ կը ծրագրեն Թուրքերը՝ Միացյալ անկախ Թուրանիա։ Ա. տ., 1926։
51. Զաքարիա Սարկավագ, Պատմութիւն, հատ. 1, Վաղարշապատ, 1870։
52. Զեյթունի գործերը Քիւրտիսթանի եւ Մուշի վանորէից եւ վարժարաններու վիճակը, Կ. Պոլիս, 1869։
53. Զօրավար Անդրանիկ և իր պատերազմները, գրեց Արսեն Մարմարյան, Կ. Պոլիս, 1920։
54. «Զօրավար Սմբատի հուշերը», Ա հատոր (1900—1914), Փարիզ, (ա. թ.)։

55. Զուլալյան Մ. Կ., Արևմտյան Հայաստանը XVI—XVIII դարերում, Երևան, ԳԱ հրատարակչություն, 1980։
56. Զուլալյան Մ. Կ., Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրության մեջ, Ե., ԳԱ հրատարակչություն, 1966.
57. Թասոյան Կ., Ժողովրդական շարժումները Սասունում, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1966։
58. Թերզիպաշեան Ա., Արծիվը իր բոյնին մէջ, Փարիզ, 1938։
59. Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտները, հատ. Գ., Թիֆլիս, 1882։
60. «Ժամանակակից Թուրքիան» (տեղեկատու), Ե., 1967։
61. Ժամկոչյան Ա., Զորավար Անդրանիկ կը պատասխանէ իր հակառակորդներուն, Փարիզ, 1945։
62. Իսմիրլյան Կ., Հայ ժողովրդի քաղաքական նկատագիրը անցյալին և ներկայիս, Պէյրութ, 1964։
63. Ինճիճյան Հ. Դ., Օսմանյան կայսրության անկումը, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1984։
64. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. Ա, Վենետիկ, 1806։
65. Ինճիճեան Ղ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, հատ. Ե, Վենետիկ, 1804։
66. «Լայսեր լուսատու» (Զրույց ըռոնի), Կ. Պոլիս, 1866։
67. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925։
68. Լեո, Երկերի ժողովածու, հատ. 3, Ե., 1969։
69. Լեո, Երկերի ժողովածու, հատ. 4, Ե., 1984։
70. Լեո, Թուրքահայ լեղափոխութեան դաղափարաբանությունը, հ. Ա, Փարիզ, 1934։
71. Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1915։
72. Հայոց պատմություն, հատ. 3, Ե., 1964։
73. Լիւլեճեան Լ., Հայ և թուրք յարաբերութիւնները. Տերսիմի քուրտերը։ «Պայքար» օրաթերթ, 14 մարտի 1923 թ.։
74. Խաչակ Գ., Հարկերը Տաճկաստանում, ուսումնասիրության մի փորձ, Բաքու, 1903։
75. Խրիմյան Հայրիկ, «Ծրագիր բարենորոգմանց»։ Ամբողջական երկեր, Նյու Յորք, 1929։
76. «Կանչ», թերթ, Բեյրութ։
77. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 70-ական թթ.), Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1978։
78. Կիրակոսյան Ջ. Ս., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (XIX դ. 80-ական թթ.), Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1980։
79. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 1, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1982.
80. Կիրակոսյան Ջ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ, գիրք 2, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1983։
81. Կոստանդյան Է. Ա., Գարեգին Սրվանձտյանց (կյանքը և գործունեությունը), Ե., ԳԱ հրատարակչություն, 1979։

82. Հակոբյան Թ. Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե., Երևանի համալսարանի հրատարակչություն, 1968։
83. Համբարյան Ա. Ս., Ազգային հարաբերությունները Արևմտյան Հայաստանում (1856—1914), Ե., ԳԱ հրատարակչություն, 1965։
84. Համբարյան Ա. Ս., Երիտթուրքերի ազգային և հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Ե., ԳԱ հրատարակչություն, 1979։
85. «Հայաստան», թերթ, Լոնդոն։ 1889 օգոստոս, էջ 6։
86. «Հայաստան», թերթ, Կ. Պոլիս։
87. Հայաստանը միջազգային դիվանագիտության և խորհրդային արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828—1923), պրոֆ. Ջ. Ս. Կիրակոսյանի խմբագրությամբ, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1972։
88. Հայելի գործոց և աշխատութեանց Տիգրանեան, Կ. Պոլիս, 1864։
89. Հայ ժողովրդի պատմություն, ԳԱ հրատ., հատ. 4, Ե., 1972։
90. «Հայտարար գիր լրոյ», Կ. Պոլիս։
91. Հովհաննիսյան Ռ. Փ., Արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները և Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, Ե., ԳԱ հրատարակչություն, 1965։
92. Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Պէյրութ, 1958։
93. ՀԽՍՀ ՊԿՊԱ, ֆ. 56, գ. 145, թ. 19—20։
94. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթ. 219, վավ. 130։
95. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), Գալուստ Տեր-Մկրտչյանի արխիվ, թղթ. 16, վավ. 7։
96. ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտ (Մատենադարան), ֆոնդ Կաթողիկոսական դիվան, թղթ. 219, վավ. 136, 152, 157 և շարունակությունը։
97. Զախարեան Հ., Պատմութիւն Բալահովիտի հնուց մինչեւ մեր օրերը, Պէյրութ, 1974։
98. Ղազարյան Հ., Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական կացությունը 1800—1870 թթ., Ե., ԳԱ հրատարակչություն, 1967։
99. Ղարիբջանյան Գ., Կարլ Լիբկնեխտը և Ռոզա Լյուքսեմբուրգը հայ ժողովրդի մասին, Ե., «Հայաստան» հրատարակչություն, 1971։
100. Ղուկասյան Վ. Գ. Պոլսահայ մամուլի և հրապարակախոսության սկզբնավորումը, Ե., ԳԱ հրատարակչություն, 1975։
101. Ճանկուլեան Հ., Ցիշատակներ հայկական ճգնաժամեն, Պոլիս, 1913։
102. Ճերահեան Լ., Ժամանակակից ընդարձակ քննական պատմութիւն հայոց, հատ., Ա, Մարսէյլ, 1933։
103. Մալխաս, Ապրումներ, Բեյրութ, 1956։
104. Մանանդյան Հ., Երկեր, հատ. Գ, Ե., 1977։
105. «Մանզումէ», թերթ, Կ. Պոլիս, 1912, 11/24 սեպտեմբերի, № 2629։

106. «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» (կազմեց Վ. Ա. Հակոբյան), հատ. 1, Ե., 1951։
107. «Մանր ժամանակագրություններ XIII—XVIII դդ.» (կազմեց Վ. Ա. Հակոբյան), հատ. 2, Ե., 1956։
108. «Մասիս», լրագիր, Կ. Պոլիս։
109. Մարկոսյան Ս., Արևմտահայության վիճակը 19-րդ դ. վերջերին, Ե., 1968։
110. «Մեղու Հայաստանի» լրագիր, Թիֆլիս։
111. Մեսրոպ Լ., Քուրդիստան և քուրդերը (ակնարկ), Փարիզ, 1957։
112. «Մշակ», լրագիր, Թիֆլիս։
113. Մոմճեան Հ., Հայ լեռուն քուրդ բերնի մեջ և փոխադարձաբար, Պէյրութ, 1950։
114. «Մուրճ», ամսագիր, Թիֆլիս։
115. Ներսիսյան Մ. Դ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնակալության դեմ 1850—1870 թթ., Ե., 1955։
116. Շահպազեան Հ., Քիւրդո-հայ պատմութիւն, Կ. Պոլիս, 1911։
117. Շէմոտ Մ. Տ., Քրդերը Տաճկաց-Հայաստանում (ազգագրական նյութեր), հ. Ա, Ս�պԲ, 1905։
118. Չամչյան Մ., Պատմութիւն հայոց հ. Դ, Վենետիկ, 1784։
119. Չալանի Կ., Հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության պատմությունից, Ե., 1965։
120. Չիլինկիրյան Ե., Ցիշատակներ Բաղէշի առաջնորդութենէս, Երուսաղեմ, 1925։
121. Չորմիսյան Լ., Համապատկեր արևմտահայոց մեկ դարու պատմութեան, Բ հատ., Պէյրութ, 1974։
122. Պարոնյան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 11։
123. Պէրպէրեան Ա., Պատմութիւն հայոց, Կ. Պոլիս, 1871։
124. Պողոսյան Հ. Մ., Սասունի պատմություն, Ե., «Հայաստան», 1985։
125. «Ռազմիկ», լրագիր, Վարնա։
126. Ռեկլյու Էլիզե, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893։
127. Սասունի Կ., Պատմութիւն Տարօնի աշխարհի, Պէյրութ, 1956։
128. Սասունի Կ., Քյուրտ ազգային շարժումները և հայ-քրտական հարաբերությունները (ԺԹ դարեն մինչև մեր օրերը), Պէյրութ, 1969։
129. Սասուն-Մուշի կռիվները 1904-ին, Ժնև, 1906։
130. Սերոբյան Մ., Հայկական հարցը և անոր փուլերը, Բեյրութ, 1937։
131. Սյուրմելյան Դ., Երզնկա, Դահիրե, 1947։
132. Սրվանձտյանց Դ., Հնոց և նորոց, Կ. Պոլիս, 1874։
133. «Վավերագրական նյութեր արևմտահայերի մասին», ՀԽՍՀ ԳԱ հասարակական գիտությունների գիտական ինֆորմացիայի սեկտոր, № 2, 1983։
134. Վարանդյան Մ., Հ. Հ. Դաշնակցության պատմություն, հատ.,Բ, Դահիրե, 1950։
135. Վարանդյան Մ., Հայկական շարժման նախապատմութիւնը, հ. Բ, Ժընև, 1912։
136. Վարդանյան Հ. Դ., Արևմտահայերի ազատագրության հարցը և հայ հասա-

բական-քաղաքական հոսանքները XIX դարի վերջին քառորդում, Ե., 1967։
137. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1962։
138. Բաֆֆի, Երկերի ժողովածու, հ., 9, Ե., 1964։
139. Բաֆֆի, Տաճկահայք (հայոց հարցը), Վիեննա, 1913։
140. Փարամազի Ճառը, Շիքակո, 1919։
141. Փափազյան Հ. Դ., Օտար տիրապետությունը Արարատյան երկրում (ԺԷ դար), ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, 1977, № 1։
142. Փափազյան Վրթ., Նամակներ Թուրքաց Հայաստանից, Երկերի ժողովածու, հատ., 5, Ե., 1959։
143. «Փորձ» ամսագիր, Թիֆլիս։
144. Քոնթանսոն դը Լյուդովիկ, Հայկական հարցին վերջին փուլերը, Կ. Պոլիս, (ա. թ.)։
145. Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին. Թուրքական աղբյուրներ, հ. Դ. Ե., ԳԱ հրատարակչություն, 1972։
146. Ֆէրուհխան Բարունակ Պեյի, ճանապարհորդութիւն ի Բաբելոն ընդ Հայաստան յամի տեառն 1847, յԱրմաշ, 1876։
147. Маркс К., Энгельс Ф., Сочинения, изд. 2-ое, том 9, М., 1957.
148. Маркс К., Энгельс Ф., Сочинения, т. 10.
149. Маркс К. и Энгельс Ф., Сочинения, т. 21.
150. Аверьянов П. И., Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Современное политическое положение турецких, персидских и русских курдов. Исторический очерк, Тифлис, 1900.
151. Аверьянов П. И., Этнографический и военно-политический обзор азиатских владений оттоманской империи, СПБ, 1912.
152. Аветян А. С., Германский империализм на Ближнем Востоке, М., 1966.
153. АВПР, СПБ главный архив, I—9, оп. 8, 1827.
154. АВПР, ф. «Политархив», 1866—1870 г.г., д. 4, л.л. 96—97.
155. АВПР, ф. 40, оп. 528а, д. 1202, л. 4.
156. АВПР, ф. 30, оп. 517, д. 1798, л.л. 31—32.
157. АВПР, ф. 30, оп. 517, д. 15656, л.л. 5—8. Донесение К. П. Камсаракана А. Б. Лобанову-Ростовскому от 6 октября 1879 г.
158. АВПР, ф. 30, д. 15656, л. 7. Донесение российского вице-консула в Ване послу в Константинополе от 6 октября 1879 г.
159. АВПР, СПБ главный архив, 1—9, оп. 8, 1889 г., д. 29, л.л. 15—16.
160. АВПР, ф. 30, д. 1568, л. 34.
161. АВПР, ф. 30, оп. 517, д. 1571, л. 5.
162. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1907 г., д. 4087, л.л. 76—79.
163. АВПР, «Политархив», 1889—1894 гг.
164. АВПР, ф. «Политархив», 1889—1894 г.г., д. 1630, л. 187.
165. АВПР, ф. «Канцелярия МИД», 1895 г., д. 26, т. II, л.л. 505—506.

166. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1901 г., д. 1587, л. 6.
167. АВПР, ф. «Политархив», 1894, д. 33, л.л. 116—118.
168. АВПР, «Посольство в Константинополе», 1897, д. 3516, л.л. 1—4, 9, 11, 12.
169. АВПР, ф. «Канцелярия МИД», 1898 г., д. 26, л.л. 491—492.
170. АВПР, ф. «Политархив», 1901 г., д. 1000, л.л. 212—213.
171. АВПР, ф. «Канцелярия МИД», 1900 г., д. 28, л.л. 24—27.
172. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1907 г., д. 4087, л.л. 80—81.
173. АВПР, ф. «Политархив», 1903 г., д. 1639, л.л. 139—141.
174. АВПР, ф. «Политархив», 1905 г., д. 539, л. 41.
175. АВПР, ф. «Канцелярия МИД», 1908 г., д. 38, л.л. 176—177.
176. АВПР, ф. «Политархив», 1908 г., д. 1642, л. 35.
177. АВПР, ф. «Канцелярия МИД», 1908 г., д. 38, л.л. 177—178.
178. АВПР, ф. «Канцелярия МИД», 1908 г., д. 34, л. 469.
179. АВПР, ф. «Политархив», 1907 г., д. 79, л. 126, д. 641, л. 275. 1908 г., д. 542, л. 52.
180. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1909 г., д. 2677, л. 15—17.
181. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1908 г., д. 1595, л. 76.
182. АВПР, ф. «Политархив», 1908 г., д. 542, оп. 482, л. 65.
183. АВПР, ф. «Политархив», 1908 г., д. 1644, оп. 482, л. 83. Д. 716, л. 135.
184. АВПР, ф. «Политархив», 1910 г., д. 1039, л. 59.
185. АВПР, ф. «Политархив», д. 544, оп. 482, л. 10 об.
186. АВПР, ф. «Канцелярия МИД», 1910 г., д. 149, л. 15—17.
187. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1907—1913 г.г., д. 3572, л. 11—12.
188. АВПР, ф. «Канцелярия МИД», 1919 г., д. 33, л. 118—119, 123.
189. АВПР, ф. «Политархив», 1908 г., д. 542, оп. 482, л. 65.
190. АВПР, ф. «Политархив», 1908 г., д. 542, оп. 482, л. 65.
191. АВПР, ф. «Политархив», 1909 г., д. 717, л. 52—53.
193. АВПР, ф. «Политархив», 1910 г., д. 718, оп. 482, л. 60.
194. АВПР, ф. «Канцелярия МИД», 1910 г., д. 33, л. 118—119, 123.
195. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1911 г., д. 1602, л. 60—69.
196. АВПР, ф. «Политархив», 1911—1914 г.г., д. 179, л. 64—65.
197. АВПР, ф. «Персидский стол», 1912 г., д. 1207, л. 99.
198. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912 г., д. 1404, л. 124—126.
199. АВПР, ф. «Миссия в Персии», 1912 г., д. 79, л. 63—65.
200. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912 г., д. 1404, л. 109.
201. АВПР, ф. «Политархив», 1912—1913 г.г., д. 546, л. 140—141.
202. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1913—1914 г.г., д. 3573, л. 309—310.

203. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912 г., д. 1404, л. 124—126.
204. АВПР, ф. «Политархив», 1911—1914 г.г., д. 719, оп. 482, л. 50—51.
205. АВПР, ф. «Миссия в Персии», 1913 г., д. 69, л. 172.
206. АВПР, ф. «Миссия в Персии», 1913 г., д. 69, л. 169—170.
207. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1913 г., д. 1605, л. 134—135.
208. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1913 г.г., д. 3573, л. 247.
209. АВПР, ф. «Политархив», 1912—1914 г.г., д. 546, л. 140—141.
210. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1914 г.г., д. 3573, л. 83.
211. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1913 г., д. 2684, л. 89—90.
212. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1914 г., д. 1606, л. 19—21.
213. АВПР, ф. «Персидский стол», 1911 г., д. 1204, л. 134.
214. АВПР, ф. «Посольство в Константинополе», 1912—1914 г.г., д. 3573, л. 340.
215. Аграрный строй Османской империи XV—XVII в.в. Документы и материалы. Составление, перевод и комментарии А. С. Тверетиновой, М., 1963.
216. Адамов А., Ирак Арабский. (Бассорский вилайет в его прошлом и настоящем), СПб, 1912.
217. Адонц Н., Из истории армянского вопроса. «АН Арм. ССР. Центр научной информации по общественным наукам. Научно-информационный бюллетень. Арменоведение за рубежом, серия 111, № 7 (72).
218. Акты Кавказской археографической комиссии, том XI, док. № 351, 479.
219. Акопов Г. Б., Курды и курдский вопрос в турецкой историографии». «Страны и народы Ближнего и Среднего Востока», том V, Турция, Е., 1970.
220. Акопов Г. Б., Критический обзор версий туранийско-турецкого происхождения курдов. «Вестник общественных наук АН Арм. ССР», 1966, № 4.
221. Алиев Г. З. Турция в период правления младотурок (1908—1918 гг.), М., 1972.
222. Аралов С. И., Воспоминания советского дипломата, М., 1960.
223. Асратян М. А., Политика турецких правящих кругов по отношению к курдскому населению (1924—1939),—«Краткие сообщения Института народов Азии», М., 1961.
224. Бартольд В. В., Мусульманский мир. Сочинения, т. VI, М., 1966.
225. Бекгулянц Р. (Северянин), По Турецкой Армении. Впечатления от поездки летом 1914 г., Ростов на Дону, 1914.

226. (Бензенгр), Записка о Курдистане, ген. штаба капитана Бензенгра, «Сборник географических, топографических и статистических материалов по Азии, вып. 84, СПб, 1911.
227. Березин И. Н., Езиды,—«Магазин землевладения и путешествий», т. III, М., 1854.
228. Березин И., Современная Турция,—«Отечественные записки», СПБ, 1856, № 2.
229. «Биржевые ведомости», газета.
230. Борьян Б. А., Армения, международная дипломатия и СССР, ч. I, М.—Л., 1928.
231. Вакс Л., Очерки истории национально-буржуазных революций на Востоке (1905—1914), М.—Л., 1931.
232. Вильчевский О. Л., Мукринские курды. (Этнографические очерки). «Переднеазиатский этнографический сборник», т. I, М., 1958.
233. «Восстание в Дерсиме», ИШКВО, 1908, № 23.
234. (Гамазов М.) От Босфора до Персидского залива. Из записок, веденных во время четырехлетнего путешествия демаркационной комиссии по Турции и Персии, «Время», СПб, 1861, т. VI, № 11.
235. Гасратян М. А., Политика турецких правящих кругов по отношению к курдскому населению (1924—1939), КСИНА, т. 30, 1964.
236. Геноцид армян в Османской империи. Сборник документов и материалов под редакцией проф. М. Г. Нерсисяна, Е., 1982.
237. Географические заметки о Малой Азии полк. Вильсона, собранные во время путешествия 1879—1882 г.г., сообщенные в марте 1884 г. Королевскому Географическому обществу. СГТСМА, вып. II, СПб, 1884.
238. Гисаров М. А., Курдский вопрос в Турции (от начала кемалистского движения до Лозаннской конференции). «Страны и народы Ближнего и Среднего Востока», VII, курдоведение, Е., 1975.
239. Гордлевский В. А., Избранные сочинения, Т. 3, М., 1962.
240. Гордлевский В. А., Из жизни курдов, ИКОРГО, кн. 22, вып. 4, 1914.
241. Гордлевский В. А., Из религиозной жизни кызылбашей Малой Азии, «Новый Восток», 1922, № 1.
242. Гордлевский В. А., Из религиозных исканий в Малой Азии. Кызылбаши. «Русская мысль», 1916, № 11.
243. Гордлевский В. А., Силуэты Турции. «Избранные сочинения», т. III, М., 1962.
244. Горцев, Младотурки и рабочий вопрос, «Современник», СПб, кн. IV, 1912, апрель.
245. Грязнов Ф. Ф., Курды и курдская конница. ИШКВО, Тифлис, 1907, № 20.
246. Гурко-Кряжин., История революции в Турции, М., 1923.
247. Джалиле Джалил, Восстание курдов 1880 г., М., 1966.

248. Джалиле Джалил, Курды Османской империи в первой половине XIX в., М., 1973.
249. Джемаль-паша, Записки, 1913—1919, Тифлис, 1923.
250. Диллон Эм., Положение дел в Турецкой Армении. В кн. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896.
251. Диттель В., Очерк путешествия по Востоку с 1842 по 1845 гг., Курды и Бедр-хан-бек,—«Библиотека для чтения», 1849, ч. 95, отд. I, май-июль.
252. Дулина Н. А., Османская империя в международных отношениях (30—40-ые годы XIX в.), М., 1980.
253. (Жобер А.), Курдистан,—«Северный архив», 1826, ч. 22, № XIV.
254. Записка по вопросу об организации изучения Ближнего Востока консула в Басре К. В. Иванова. «Материалы по изучению Востока», вып. I, СПб, 1909.
255. (Зеленый А. С., Сысоев В. М.), Пояснительная записка к карте распределения армянского населения в Турецкой Армении и Курдистане по казам и данным соч. V. Cuinet, "La Turquie d'Asie", 1890—1894, «Сборник материалов по Азии», 1895, вып. LXII.
256. Ибрагимбейли Хаджи Мурад, Кавказ в Крымской войне 1853—1856 гг., М., 1971.
257. Инджикян О. Г., Буржуазия Османской империи, Е., 1977.
258. Иоаннисян А. Р., Иосиф Эмин, Е., 1945.
259. История стран зарубежной Азии в средние века, М., 1970.
260. «Кавказ», газета, Тифлис.
261. Кавказский военный округ. «Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой», № 23—24, Тифлис, 1912.
262. Кавказский военный округ. «Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой», № 47, Тифлис, 1913 г.
263. Кавказский военный округ. «Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой», № 42, Тифлис, 1913 г.
264. Кавказский военный округ. «Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой», № 57, Тифлис, 1913 г.
265. Камсаракан К. П., Вторжение шейха Обейд-Уллы в Персию в 1880 г., СГТСМА, вып. XI, СПб, 1884.
266. Карнаухов М., Кавказ, Турция и Персия. Военно-статистический очерк, Тифлис, 1908.
267. Карцов А., Заметки о курдах, Тифлис, 1896.
268. Кишмишев С. О., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПб, 1884.
269. Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Турции, т. I, ч. I, СПб, 1888.
270. Контансон Людовик де, Реформы в Азиатской Турции. Армянский вопрос, М., 1914.
271. Краткий обзор путешествия Г. И. Радде в Турецкую Армению в

1867 г. ИИРГО, 1868, том IV.
272. Культурные начинания у курдов. Штаб Кавказского военного округа. «Сводка сведений о сопредельных странах, добытых разведкой», № 40, Тифлис, 1913 г.
273. Лазарев М. С., Курдский вопрос (1891—1917), М., 1972.
274. Лазарев М. С., Курдская проблема.—«Национальные процессы в странах Ближнего и Среднего Востока», М., 1970.
275. Лазарев Як. Д., Причины бедствий армян в Турции и ответственность за разорение Сасуна, Тифлис, 1895.
276. Линч Х. Ф. Б., Армения. Путевые очерки и этюды, том II, Тифлис, 1910.
277. (Лихутин М.), Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. Из записок о военных действиях Эриванского отряда, СПб, 1863.
278. Лойко Л. П., Битлисский вилайет. «Известия МИД», СПб, 1913, кн. 2.
279. Маевский В. Т., Ванский вилайет. Военно-статистическое описание. Тифлис, 1901.
280. Малькольм Макколь, Ответственность Англии перед Арменией. В книге: «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 году», М., 1896.
281. Малама Я. Д., Несториане и округ Хеккяри. ИКОИРГО, т. II, 1873—1874.
282. Малама Я. Д., Описание Эрзерумского вилайета, СПб, 1874.
283. «Материалы для географии Азиатской Турции и Персии. Путевой журнал Е. И. Чирикова, русского комиссара-посредника по турецко-персидскому разграничению 1849—1852 гг.», ЗКОИРГО, кн. IX, Тифлис, 1875.
284. «Материалы для описания русско-турецкой войны 1877—1878 гг. на Кавказско-Малоазиатском театре», т. IV.
285. «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств. 1878—1917 гг.», серия III, т. II.
286. «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878—1917 гг.», серия II, 1900—1913, т. 20, ч. II, М., 1940.
287. «Международные отношения в эпоху империализма. Документы из архивов царского и временного правительств, 1878—1917 гг.», серия III, т. I, М.—Л., 1931.
288. Ментешашвили А. М., Курды, М., 1984.
289. Миллер А. Ф., Краткая история Турции, М., 1948.
290 Минорский В. Ф., Курды. Заметки и впечатления, Петроград, 1915.
291. (Минорский В. Ф.), Отчет о поездке в Макинское ханство драгомана ген. консульства в Азербайджане Минорского, в октябре

1905 г. «Материалы по изучению Востока», вып. I, СПб, 1909.
292. Мольтке Г., Письма о событиях и приключениях в Турции от 1835 до 1839 г., СПб, 1877.
293. «Народы Турции. Двадцать лет пребывания среди болгар, греков, албанцев и армян». Перевод с английского, т. I, СПб, 1879.
294. Никитин В., Курды. Пер. с франц., М., 1964.
295. «Новое время».
296. «Новое обозрение», № 3739, 14 ноября, 1894.
297. Новичев А. Д., История Турции, т. III, часть II, Л., 1973.
298. Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны, М.—Л., 1937.
299. «Об отношениях курдов в Азиатской Турции к турецкому правительству». «Сборник главного управления Генерального штаба», вып. II, СПб, февраль, 1910 г.
300. О торговле Турецкого Курдистана. ССМВМФ, т. II, 1865, № 6.
301. Отчет о поездке по Азиатской Турции ген. штаба подполковника Томилова в 1904 году, ч. I, СПб, 1907.
302. [Папазян А. А.], «Джихан-нюма» и «Фезлеке» Кятиба Челеби как источник по истории Армении, (XVII век), Предисловие, перевод и комментарии А. А. Папазяна, Е., 1973.
303. Петрушевский И. А., Азербайджан в XVI—XVII в.в. «Сборник статей по истории Азербайджана», вып. I, Баку, 1949.
304. Погорелов М., Курдский вопрос,—«Война и революция», 1925, кн. 3—5.
305. «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896.
306. Потто В., Кавказская война, т. IV, вып. II, СПб, 1889.
307. Пужулат, Курдистан, Малатия и Гафис-паша, пер. с немец., вырезка, 1899, № 76.
308. Путешествие по Курдистану Д. Тейлора, бывшего консула в Диарбекире. ИКОИРГО, 1873, т. II.
309. «Раздел Азиатской Турции (по секретным документам б. министерства иностранных дел»), под ред. Е. А. Адамова, М. 1924.
310. Раймон Ксавьер, Курды и страна, ими обитаемая,—«Сын отечества», СПб, 1839, № 12.
311. Рогушин А. А., К вопросу о «проблеме Востока в Турции», «Страны и народы Ближнего и Среднего Востока», VII, курдоведение, Е., 1975.
312. Ролен-Жекмен М. Г., Армения, армяне и трактаты. В кн.: «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1897.
313. Рорбах П., Война и германская политика, М., 1915.
314. «Санкт-Петербургские ведомости».

315. Саркисян Е. К., Аграрная политика Османского правительства в Западной Армении, Е., 1957.
316. Сборник дипломатических документов Министерства иностранных дел. Реформы в Армении. 26 ноября 1913 г.—10 мая 1914 г.», Пг., 1915.
317. «Сборник договоров России с другими государствами, 1856—1917», М., 1952.
318. Сванидзе М. Х., Административный строй и провинциальное правление Османской империи в XVI в. «Вопросы истории Ближнего Востока», Тб., 1963, (на груз. яз.).
319. «Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне», под ред. проф. Ю. В. Ключникова и проф. А. В. Сабанина, М., 1927.
320. Смирнов К., События в Сасуне весной 1904 г. ИШКВО, 1904, № 5—6.
321. Сон Э. Б., О курдах и их стране. Урмия, 1917.
322. Степанян С. С., Армения в политике империалистической Германии, Е., 1975.
323. Счастье и смерть Ибрагима паши. (Эпизод из сражений курдов в Малой Азии). Пер. с немец. Н. Каблицкого, ИШКВО, 1909 г., 2-я треть, № 26.
324. Тверитинова А. С., К вопросу о крестьянстве и крестьянском землепользовании в Османской империи (XV—XVI в.в.),—«Ученые записки института востоковедения», т. XVII, 1959.
325. Термен Р. И., Отчет о полевой поездке 1907 г. в Ванском, Битлисском и Диарбекирском вилайетах, Тифлис, 1909.
326. «Тифлисский листок», газета.
327. Троттер, Малоазиатские курды. ИКОИРГО, т. VII, Тифлис, 1882—1883.
328. Трубецкой В. В., Роль оседло-кочевых племен Ирана в период нового времени. «Очерки новой истории Ирана», М., 1978.
329. Убичини, Изображение современного состояния Турции в географическом, статистическом отношениях, СПб, 1854.
330. Фадеева И. Е., Мидхат-паша, жизнь и деятельность, М., 1977.
331. Халфин Н. А., Борьба за Курдистан. (Курдский вопрос в международных отношениях XIX в.), М., 1963.
332. Хуршид-Эфенди, Сияхэт-намэ-и худуд. Описание путешествия по турецко-персидской границе, СПб, 1877.
333. ЦГВИА, ф. 38, оп. 30/286, д. 58, л. 2—3.
334. ЦГВИА, ф. 450, оп. 1, д. 97, л. 3—4а.
335. ЦГВИА, ф. 450, д. 98, л. 16об.
336. ЦГВИА, ф. 450, д. 98, л. 28—29.
337. ЦГВИА, ф. 450, д. 98, л. 16.
338. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7716, л. 554.
339. ЦГВИА, ф. 450, д. 109, л. 29.

340. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 6593, л. 35—36, 62.
341. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7716, л. 558.
342. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 1003, л. 2—3.
343. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 991, л. 557.
344. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 1028, л. 203—205.
345. ЦГВИА, ф. 2000, д. 7692, л. 6.
346. ЦГВИА, ф. 2000, д. 7716, л. 31.
347. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 3778, л. 351—351 об.
348. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 3829, л. 20 а.
349. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 7716, л. 369—369 об, 377—379, 390.
350. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 991, л. 555—556.
351. ЦГВИА, ф. 2000 с. оп. 1, д. 991, л. 557.
352. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 7413, л. 290.
353. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 772, л. 294—295, 320.
354. ЦГВИА, ф. 2000, оп. 1, д. 991, л. 525.
355. ЦГВИА, ф. 2000 с, оп. 1, д. 991, л. 417—430.
356. ЦГИА Груз. ССР, ф. 1087, оп. 1, д. 442, л. 24.
357. ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 10, л. 52—53.
358. ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 51, 113.
359. ЦГИА Груз. СССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 6.
360. ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 78.
361. ЦГИА Груз. ССР, ф. 15, д. 299, л. 78—79.
362. ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 34.
363. ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 112—113.
364. ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 36—37.
365. ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 133.
366. ЦГИА Груз. ССР, ф. 521, д. 492, л. 133.
367. ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, л. 112—113.
368. ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 1, д 802, л. 51—52.
369. ЦГИА Груз. ССР, ф. 13, оп. 1, д. 802, л. 114.
370. ЦГИА Груз. ССР, ф. 521, оп. 2, д. 492, т. 86—87.
371. ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 363, л. 14—15.
372. ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 372, л. 129—133.
373. ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 163.
374. ЦГИА Груз. ССР, ф. 15, оп. 1, д. 371, л. 163—164.
375. ЦГИА Груз. ССР, ф. 113, д. 1011, л. 1.
376. ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, л. 45—50.
377. ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, л. 63—64.
378. ЦГИА Груз. ССР, ф. 85, д. 149, л. 45—50.
379. Чихачев П. А., Письма о Турции, М., 1960.
380. Шараф-хан ибн Шамсаддин Бидлиси, Шараф-наме, т. 1, М., 1967.
381. Эрцбергер М., Германия и Антанта. Мемуары. М.—Пг., 1923.

382. "A chronicle of the Early Safawis being the Ahsanút- tawarikh of Hasan-i Rumlu", trans. and ed. by C. N. Seddon, Baroda, 1934.
383. Ainsworth W. F., Travels and Researches in Asia Minor, Mesopotamia, Chaldea and Armenia, vol. 1, London, 1842.
384. Al-Dhabit Sh. S., International relations and boundary treatises between Irag and Iran, Baghdad, 1966.
385. Araste R., Man and Society in Iran, Leyden, 1970.
386. Arfa Hassan, The Kurds: A historical and political study, London-New York-Toronto, 1966.
387. Atatürkün söylev ve demeçleri, cilt 2, Ankara, 1946.
388. Babinger Fr., Shejch Bedr-ed-din, der Sohn des Richters von Simaw. Ein Beitrag zur Geschichte des Sektenwesens im altosmanischen Reich, Berlin-Leipzig, 1921.
389. Basmadjian, Le mouvement revolutionnaire en Asie Mineure. "Revue du monde musulman", Paris, 1908, no. 4.
390. Bedirhan Ciladet, Türkiye Cumhuriet reisi Mustafa Kemal pasa hazretlerine açik mektub, 1933. (Անբար. այբուբ.).
391. Blau J., La problème Kurde, Brusseles, 1963.
392. "Blue book", Turkey, 1879, no. 10.
393. "Blue book" (Great Britain, Parliament. Stationary office), Correspondence, respecting the Turkey and the Persia. A century of diplomatic blue books, Ed. by H. Temperley and Lilian M. Penson, Turkey, 1880, no. 71.
394. "Blue book", Turkey, 1881, no. 5.
395. "Blue book", 1881, no. 6.
396. "Blue book", Turkey, 1892, no. 1.
397. Brant J., Notes on a journey through a part of Kurdistan in the summer of 1838, —JRGS, vol. X, pt. 3, 1841.
398. Bravley E. A., Hodgetts Round about Armenia, London, 1896.
399. "British Documents on the Origins of the war 1898-1914", vol. 5, London, 1933.
400. Brown E. G., A history of Persian literary in modern times A. D. 1502-1924, Cambridge, 1924.
401. Burchard B., Zu einigen Problemen dter Geschichte der Kurdischen Nationalbewegung.
402. Burgess, A brief notice respecting the trade of the Norths provinces of Persia. "The Portfolio", London, 1836, vol. X.
403. Chéréf-nâmeh ou histoire des Kourdes par Chéréf, prince de Bidlis, vol. 2, 1 éme, SPB, 1868.
404. "Chéréf-nâmeh ou fastes de la nation Kourde par Chéréf-Ouddine", t. 1, 2 éme, SPB, 1868.
405. Cholet dte, Arménie, Kurdistan et Mésopotamie, Paris, 1892.
406. Contenson L. de, Chrétiens et Musulmans. Voyages et études, Paris, 1901.
407. "Correspondence respecting the demarcation of the frontiers bet-

ween Turkey and Persia. Presented to both Houses of Parliament", London, 1865.
408. "Correspondence respecting the Turkish (Kurdish) invasion of Persia", -"Blue book Turkey", 1881, no. 5.
409. Deliorman Altan, "Turklere Karsi Ermeni Komitecileri", Istanbul, 1973.
410. "Denge Kurdistan", Paris, 1949, no. 3-4, sept. -octomb.
411. Dersimi Nuri. Kürdistan tarihinde Dersim, Halep, 1952.
412. "Die grosse Politik der Europäischen Kabinette, 1871-1914", Berlin, 1926.
413. "Documents diplomatiques français, 1871-1914", Paris, 1-ère série (1871-1907), vol. 11.
414. Elphinstone W. G., Kurds and Kurdish Question, PCAJ, vol. 35, january, London, 1948, part 1.
415. Ergin O., Türkiyede maarif tarihi, cilt3, Istanbul, 1941-1942.
416. Feros Ahmad, The young Turks. The committee of Union and Progress in Turkish politics, 1908-1914, Oxford, 1919.
417. "Fezleke-i tarih", c. 1, Istanbul, 1869.
418. Fraser J. B., Travels in Koordistan, Mesopotamia. Including an Account of Parts of those Countries Hitherto Unvisited by Europeans, London, 1840, vol. 2.
419. Garzou Jean-Marie. Un Genocide exemplaire, Armenie 1915, Paris, 1975.
420. Gavan S. S., Kurdistan: divided nation of the Middle East, London, 1958.
412. Gentizon P., Mustapha Kemal ou L'Orient en marche, Paris, 1929.
422. Ghassemlou A. R., Kurdistan and the Kurds, Prague, 1965.
423. Greagh J., Armenians, koords and turks, vol. 1-2, London, 1880.
424. Grenard'a M. F., Une secte religieuse d'Asie Mineure. Les kysyl-bâchs. "Journal asiatique ou recueil de mémoires d'extraits et de notices relatifs à la philosophie, aux langues et a la litérature des peuples orientaux", mai-juin, 1904.
425. Hammer J., Histoire de l'Empire Ottoman, vol. 4, Paris, 1835.
426. Hammer J., Histoire de l'Empire Ottoman, vol. 13, Paris, 1839.
427. Harris J. R. and Harris H. B., Armenian massacres, 1897.
428. Heidborn A., Les finances Ottomanes, Vienne-Leipzig, 1912.
429. Hinz Walter, Irans aufstieg zum nationalstaat im 15 Jahrhundert, Berlin, 1936.
430. Huteroth W. D., Bergnomaden und Jaylabauren im mittleren Kurdischen Taurus, Marburg, 1959.
431. Islam Ansiklopedisi, 6, Istanbul, 1955.
432. Jaubert P. A., Voyage en Arménie et la Perse, Paris, 1821.
433. Joseph J., The Nestorians and their Muslim Neighbours, Princeton, 1961.
434. Jouquiere de la Histoire de l'Empire Ottoman, t. 1, Paris, 1914.

435. Juchereau-de Saint-Denys, A l'histoire de l'Empire Ottoman depuis 1792 jusqu'en 1844, t. 4, Paris, 1844.
436. Kimhe J., Seven Fallen Pillars, London, 1950.
437. Kinneir J. M., Journey throug Asia Minor, Armenia and Kurdistan in the years 1813 and 1814, London, 1818.
438. Kirzioglu M. Fahrettin, Her bakimdan Türk olan kürtler, 1, Bölüm, Ankara, 1964.
439. Koçaş Sadi, Senatör, Tarih boyunca Ermeniler ve Türk-Ermeni ilişkileri, ikinci baski, Ankara, 1967.
440. Kuran A. B., Inkilap tarihimiz ve jön türkler, Istanbul, 1945.
441. "La Situation desArméniens en Turquie, expose'e par des documents", 1908-1912, 1-9.
442. Layard A., Discoveries in the Ruins of Nineveh and Babylon, vol 1, London, 1853.
443. Layard A., Nineveh and its Remains, London, 1849, vol. 1.
444. Macler Fr., Les arméniens en Turquie, —"Revue du monde musulman", 1913, septembre.
445. Minorsky V., Kurden, —"Encyklopaedie des Islam", Bd. 2, Leiden-Leipzig, 1927.
446. Melingen Frederic /Osman Seyfi Bey/, La Turquie sous le regne d'Abdul-Aziz /1862-1867/, Paris, 1868.
447. Moltke Helmuth von, Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839, Berlin, 1841.
448. Moukbil Bey M., La Campagne de Perse 1514, Paris, 1928.
449. Müller-Simonis P., Vom Kaukasus zum Persischen Meerbusen, Durch Armenien, Kurdistan und Mesopotamien, Mainz, 1897.
450. Mueller Simonis, L'Armenie, le Kurdistan et la Mesopotamie, Paris, 1892.
451. Müneccim başi tarihi, Istanbul, 1858.
452. Nicitine V., Les Kurdes raconte's par eux-mêmes, —"L'Asie francaise", Paris, 1925, no. 231.
453. Norman G. B., Armenia and the campaign of 1877, London, 1879.
454. Nurettin Pakyürek, Komünistler, çicarciler ve biz, "Yeni Istanbul", 28.6.1967.
455. Othman S., Participation des Kurdes dans le massacre des Armeniens 1915. Critique socialiste, Paris, 1982, no. 44.
456. "Pense'es et souvenirs de l'ex-sultan Abdul-Hamid".
457. "Pour les Peuples d'Orient", 1913, no. 7.
458. Poujoulat M. B., Voyage dans l'Asie Mineure, en Mesopotamie, a Palmyre, en Syrie, en Palestine et en Egipte, Paris, t. 1, 1840, t. 2, 1841.
459. Precis historique de la guerre des Turks contre les Russes. Par Vassif-effendi. Traduit par P. A. Causin de Perceval, Paris, 1820.
460. Rambout L., Les Kurdes et le droit, Paris, 1947.

461. Ramsaur E. E., The Young Turks. Prelude to the Revolution of 1908, New York, 1957.
462. Rawlinson H. C., Notes on a journey from Tabriz Trough Persian Kurdistan to the ruins of Takhti-Soleiman and from thence by Zenjan and Tarom to Gilan in oktober and november 1838, with a memoir on the site of the Athropatenian Ekbatana, —JRGS, vol. 10, 1841.
463. RCAJ, London, 1944, vol. LXXX.
464. Reclus E., Nouvelle Geographie Universelle, t. 9, l'Asie Anterieure, Paris, 1844.
465. Resim A., Resimli ve haritali Osmanli tarihi, c. 4, Istanbul, 1328 /1910/.
466. Rich C. J., Narrative of a residence in Koordistan, vol. 1, London, 1836.
467. Rohrbach P., Die anatolische Bahn. Sonderabdruck aus den Preußischen Jahrbüchern. Band 110, 3Heft, Berlin, 1902.
468. "Royal Central Asian Journal", London, 1944, vol. LXXX.
469. Safrastian A., Kurds and Kurdistan, London, 1948.
470. Said paşanin hatirati, Istanbul, 1323, c. 2.
471. Sherif pasha. Memorandum on the claims of the kurd people, Paris, 1919.
472. Soane E. B., To Mesopotamia and Kurdistan in disguise, London, 1912.
473. Suréya Bedirkhan, The case of Kurdistan against Turkey, Princeton New York, 1928.
474. Sykes P. M., The Kurdish Tribes of the Ottoman Empire. "Journal of the Royal Anthropological Institute of Great Britain and Ireland London, 1900.
475. "Tableau ge'néral de l'Empire Ottoman". Par M. de M. D'Ohsson, Paris, 1824, VII.
476. Taylor E., The Fossil Monarchies, London, 1967.
477. "Tarih", cilt3, Istanbul, 1933.
478. Ternon Ives, Les Arméniens, histoire d'un ge'nocide. Paris. 1977.
479. "The life and adventures of Joseph Emin, an Armenian. Written in English by himself", London, 1792.
480. "The Massacres of Kurds in Turkey", Cairo, 1928.
481. Treaty of peace with Turkey Signed at Sèvres, August 10, 1920. The Frontier between Armenia and Turkey. As decided by President Woodrow Wilson, November 22, 1920, London, 1920.
482. "Türkiye Cumhuriyeti Devlet yilligi, cilt, 4, Istanbul, 1929.
483. Uriel Heyd, Foundation of Turkish Nationalism, London, 1950.
484. "Verhandlungen der Gesselschaft für Erdkunde", Berlin, 1900, Band 27.
485. Waheed A., The Kurds and Their Country. A History of the Kurdish people (from Earliest Times to Present), Lahore, 1955.

486. Walker J. Christopher, Armenia. The Survival of a Nation, New York, 1980.
487. Watson R. G., A History of Persia from the beginning of the 19 Century to the year 1858, London, 1866.
488. Wiedemann M., Ibrahim Paschas Glück und Ende, -"Asien", 1908.
489. Wigram W., The Assyrians and their Neighbour's, London, 1929.
490. Xavier Hommaire de Hell, Voyage en Turquie et en Perse exe'cuté par l'ordre du gouvernement Français pendant les anneés 1846-1848, Paris 1854, vol. 2.
491. Yalcin Ayhan, Belgelerin işiginda Türk-Ermeni Meselesinin içyüzü, Istanbul, 1975.
492. Yung E., La revolte arabe, vol. 1, Paris, 1924-1925.
493. Zarzecki S., La question kurdo-arménienne, —"La revue de Paris", 11, Apr. 15, 1914.

494. Մուհամմադ Ամին Զաքի, Խուլասաթ թարիխ ալ-քուրդ ուա-Քուրդիսթան մին ակդամ ալ-ու'սուսուր աթ-թարիխիա հաթա ալ-'ան, ալ-Կահիրա, 1939 (արաբ. լեզ.)։

495. Լութֆի, Թարիխ-ե Լութֆի, ջելդ-ե 8, Էսթանբուլ, 1328 (արաբատառ թուրքերեն)։

496. Էհսան Նուրի, Թարիխ-ե բիշե-ե նեժադի-ե քուրդ, Թեհրան, 1322 (պարսկերեն)։

497. Սասդեդդին, Թաշ-օլ-թավարիխ, ջելդ-ե 2, Էսթանբուլ, 1281 (արաբատառ թուրքերեն)։

498. Բաշիդ Ցասանմի, Քուրդ վե փեյվասթեդի-ե նեժադի վե թարիխի-ե ու աղ նեշարիաթ-ե մոջամե նաշերե-ե քեթաբ, շոմարե-ե 9։ (Պարսկերեն)։

499. Քամալ Մուդդհար Ահմադ, Քուրդիսթան ֆի սանավաթ ալ-հարբ ալ-ա'լամիա ալ-ուլա, Բաղդադ, 1977։

500. Ֆերիդուն Ադամյաթ, Ամիր Քաբիր վե Իրան, Թեհրան, 1906 (Պարսկերեն)։

501. Ֆերիդուն բեք, Մաջմուե-ե մոնշայաթ-ե ալ-սալաթին, ջելդ-ե 1, Էսթանբուլ, (ա. թ.), (արաբատառ թուրքերեն)։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան 3

Գլուխ առաջին— Հայ-քրդական հարաբերությունների սոցիալ-տնտեսական և քաղաքական գործոնները 8

Գլուխ երկրորդ— XIX դարի առաջին կեսի քրդական շարժումները և հայ-քրդական հարաբերությունները 67

Գլուխ երրորդ— Թանզիմաթի երկրորդ շրջանը և հայ-քրդական հարաբերությունների նոր փուլը 118

Գլուխ չորրորդ— Հայ-քրդական հարաբերությունները 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի և շեյխ Օբեյդուլլայի շարժման ժամանակ 148

Գլուխ հինգերորդ— Հայ ազատագրական շարժման նոր փուլը և հայ-քրդական հարաբերությունները XIX դ. վերջին XX դ. սկզբին 199

Գլուխ վեցերորդ— Հայ-քրդական հարաբերությունները երիտթուրքերի և իթթիլյաֆականների տիրապետության շրջանում 254

Վերջաբան 318

Ծանոթագրություններ 333

Համառոտագրությունների ցանկ 338

Օգտագործված գրականության ցանկ 339

Վաճան Առաքելի Բայբուրդյան

ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ XIX ԴԱՐՈՒՄ ԵՎ XX ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Ваан Аракели Байбурдян

АРМЯНО-КУРДСКИЕ ОТНОШЕНИЯ В ОСМАНСКОЙ ИМПЕРИИ В XIX и В НАЧАЛЕ XX ВЕКОВ

(На армянском языке)
Ереван «Айастан» 1989

Հրատ. խմբագիր՝ Ն. Հ. Դերիգորյան
Նկարիչ՝ Հ. Փ. Սապոնջյան
Գեղ. խմբագիր՝ Ս. Ս. Մկրտչյան
Տեխն. խմբագիր՝ Հ. Ց. Վարդանյան
Վերատեսող սրբագրիչ՝ Լ. Ս. Գևորգյան

ИБ 5005

Հանձնված է շարվածքի 16. 05. 1989 թ.։ Ստորագրված է տպագրության 19. 12. 1989 թ.։ ՎՖ 00 172։ Ֆորմատ 84×108 1/32։ Թուղթ տպագր. № 1։ Տառատեսակ՝ «Գրքի սովորական»։ Տպագրություն՝ բարձր։ 18,9 պայմ. տպագր. մամ., 18,33 հրատ. մամ.։ Տպաքանակ՝ 4200։ Պատվեր՝ 1449։ Գինը 2ռ. 20 կոպ.։

«Հայաստան» հրատարակչություն, Երևան— 9, Իսահակյան 28։

Издательство «Айастан», Ереван-9, ул. А. Исаакяна, 28.

ՀԽՍՀ հրատարակչությունների պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆկոմբինատ, Երևան—9, Տերյան 91։

Полиграфкомбинат им. Акопа Мегапарта Госкомитета Арм. ССР по делам издательств, полиграфии и книжной торговли. Ереван-9, ул. Теряна, 91.

৭৫৫৮.৭২
F-26